ԳԵՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԵՈՐԳԵԱՆ

ԿԻՆԸ ՆՈՐ ՈՒԽՏԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2017

ԿԻՆԸ ՆՈՐ ՈՒԽՏԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2017

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Օտար աղբիւրներից մէջբերումներ անելիս դրանք գրքում ներկայացրել եմ հայերէն թարգմանութեամբ:

Կազմի վրայ՝ Կեռան թագուհու Աւետարանի մանրանկարը (ԺԳ դար), որտեղ պատկերուած են Լեւոն Գ թագաւորը եւ Կեռան թագուհին զաւակների հետ. վերեւում՝ «Բարեխօսութիւն»:
Մանրանկարչի անունն անյայտ է:

ISBN: 1-944242-72-5
ISBN13: 978-1-944242-72-5

«Կինը Նոր Ուխտի Եկեղեցում»
Բոլոր իրաւունքները վերապահուած են:
Հեղինակային իրաւունք © 2017 Գէորգ սրկ. Գէորգեան
Փրովիդընս, Ռոդ Այլընդ, ԱՄՆ

Copyright © 2017 Deacon Gevork Gevorkian.
All rights reserved.
Providence, Rhode Island, U.S.A.

Տպագրուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու Խօսք / **7**

Քրիստոնէական ֆէմինիզմը / **9**

Գլխաշոր գործածելու խորհրդաբանութիւնը / **26**

Կանանց քահանայագործելու խնդիրը / **133**

Կարելի՞ է արդեօք հաղորդուել դաշտանի ընթացքում / **156**

«Կինը թող երկնչի իր մարդուց» / **181**

«Կանայք թող լուռ մնան եկեղեցում» / **190**

Յղիութեան արհեստական վիժեցման յանցանքը / **200**

Մխիթարութիւն մօրը՝ վիժուածքի եւ մահացած նորածնի վշտի առթիւ / **226**

Յորդոր ամուլ եւ անզաւակ կանանց / **231**

Պէտք չէ տրտնջալ բազմազաւակութեան համար / **255**

Այլափառների հետ խառնամուսնութեան խնդիրը / **259**

Երանելի Յովհան Ոսկեբերան հայրապետի յորդորը կանանց (թարգմ.՝ Գ. սրկ. Գէորգեան) / **282**

Բարեպաշտ կնոջ նկարագիրն Աստուածաշնչում / **286**

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հազարաւոր էջեր են գրուել կնոջ դերի եւ առաքելութեան մասին ու դեռ պէտք է գրուեն, բայց խնդիրը դրանով աւելի արդիական դառնալու միտումներ է դրսեւորում, քան վերջնական պատասխան տալիս: Թւում է, թէ կնոջ դերն Աստուածաշնչում նսեմացուած է, ստուերուած եւ չի համապատասխանում ֆէմինիստական արդի մօտեցումներին, սակայն դա միայն առաջին հայեացքից է այդպէս: Այսօր հրատարակւում են Աստուածաշունչ գրքեր, ուր սեռային տարբերութիւնները միտումնաւոր կերպով հարթուած են ներկայացւում: Այնտեղ որոշ դէպքերում արական եւ իգական սեռերը տարբերակուած չեն. փոխարէնը օգտագործւում է չէզոք սեռը (հայերէնում դեռեւս մաշտոցեան ժամանակներից սկսած քերականական սեռերը՝ արական, իգական եւ չէզոք, կիրառութիւն չեն ունեցել՝ կորցնելով իրենց իմաստները):

Աստուածաշունչ մատեանում՝ սկզբից մինչեւ Յայտնութեան գիրքը, կինը հանդէս է գալիս գրեթէ ամէն տեղ: Առաջին մարգարէական համարում կարդում ենք. «**Թշնամութիւն պիտի դնեմ քո** (օձի) **եւ այդ կնոջ միջեւ, քո սերնդի ու նրա սերնդի միջեւ: Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը**» (Ծննդ. Գ. 15): Աւետարանական փրկագործութեան մասին այս մարգարէութիւնն իրականութիւն դարձաւ Աստուածամօր՝ սբ. Մարիամի միջոցով: Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Յարութեան փրկարար աւետիսը դարձեալ տրուեց կանանց. «**Հրեշտակը խօսեց ու կանանց ասաց. «Դուք մի՛ վախեցէք, գիտեմ, որ փնտռում էք Յիսուսին, որ խաչուեց: Նա այստեղ չէ, քանի որ յարութիւն առաւ, ինչպէս ինքն էր ասել. եկէ՛ք, տեսէ՛ք այն տեղը, ուր պառկած էր: Եւ իսկոյն գնացէ՛ք, ասացէ՛ք նրա աշակերտներին, թէ յարութիւն առաւ**» (Մատթ. ԻԸ. 5-7): Հայ միջնադարեան արուեստում յաճախ հանդիպող «Ննջումն Աստուածամօր» մանրանկարներում, որպէս կանոն, Աստուածամօր դագաղի մօտ ներկայացուած են լինում առաքեալները. վերեւում Գաբրիէլ

հրեշտակապետն է (որը տարիներ առաջ Ծննդեան աւետիսն էր բերել Մարիամին), իսկ դագաղի ներքեւում ոմն Սոփոնիայի կտրուած ձեռքերն են, յանդգնել էր հարձակուել թափօրի, մանաւանդ սբ. Մարիամի դագաղի[1] վրայ: Բնականօրէն, հեղինակը զուգահեռներ է անցկացնում վերոյիշեալ դրուագի եւ Յիսուսի ձերբակալման միջեւ: Գեթսեմանիում Պետրոսն է սրով կտրում Մաղքոսի ականջը, իսկ այստեղ հրեշտակն է կտրում անօրէնի ձեռքերը:

Նման խիստ վերաբերմունք կնոջ հանդէպ աներեւակայելի է, եւ պնդել, թէ Աստուածաշունչը, մանաւանդ՝ Նոր Կտակարանը, նսեմացուած է ներկայացնում կնոջ կերպարը, իրականութեանը չի համապատասխանում: Մեր եկեղեցում Պասկի արարողութեան ժամանակ՝ փոխադարձ խոստումների պահին, համաձայն աւետարանական պատգամների, փեսայից պահանջւում է տէր կանգնել իր ապագայ կնոջը, իսկ հարսից՝ հնազանդ լինել ապագայ ամուսնուն: Հազարաւոր տարիներ հայ ընտանիքը, հաւատարիմ մնալով այս աստուածադիր պատգամներին, կայուն է պահել իր հիմքերը եւ երբէք չի կանգնել ընտանեկան լուրջ հարցերի առջեւ:

Այո՛, Պօղոս առաքեալի հրահանգներն այսօր էլ կիրառելի են, որոնք միակ լուծումն են ժամանակակից աշխարհում՝ ընտանիքի կայունութեան եւ պահպանման համար: Հէնց այս առումով էլ ողջունելի է բարեշնորհ Գէորգ սարկաւագ Գէորգեանի նախաձեռնած այս նոր հրատարակութիւնը, ուր ամենայն մանրամասնութեամբ եւ խորութեամբ վերլուծւում ու ներկայացւում են ինչպէս վերը թուարկուած, այնպէս էլ մի շարք ուրիշ խնդիրներ՝ տալով ամենակարեւոր խորհուրդներն ու համապատասխան լուծումները:

Իրօք, աւետարանական պատուիրանները, մանաւանդ Պօղոս առաքեալի թելադրութիւնները եկեղեցացած կենցաղի, ընտանիքի եւ այրկին յարաբերութիւնների վերաբերեալ, ժամանակ չեն ճանաչում, քանզի «**Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան**» (Եբր. ԺԳ. 8): Ամէն:

Ղեւոնդ աւագ քահանայ Մայիլեան

Սբ. Զատիկ

Ս. Էջմիածին, 16.04.2017 թ.

Տե՛ս, օրինակ, «Ննջումն Աստուածամօր», ծաղկող. Ծերուն, Աւետարան, 1391 թ., Ոստան։

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՖԷՄԻՆԻԶՄԸ

Ֆէմինիստական շարժումն առաջացաւ 17-րդ դարում ու հետզհետէ սաստկացաւ եւ յատկապէս ուժեղացաւ 1960-ականներին։ Ֆէմինիզմի պատմութեան մէջ առանձնացնում են երեք շրջան կամ փուլ, որոնցից ամէն մէկին բնորոշ են իւրայատուկ նպատակներ։ Նախկինում գոյութիւն ունէին ֆէմինիզմի երեք ուղղութիւններ՝ ազատական-բարեկարգչական (լիբերալ-ռեֆորմիստական), ընկերվարական (սոցիալիստական) եւ արմատական (ռադիկալ)։ Կանանց իրաւունքների պայքարի համար հիմք էր հանդիսացել ազատական-բարեկարգչական փիլիսոփայական աւանդոյթը, որի ներկայացուցիչներն էին յայտնի փիլիսոփաներ, մասոնական օթեակների անդամ Ջոն Լոկն ու Ժան Ժակ Ռուսոն։ Բաւական մեծ ազդեցութիւն է թողել նաեւ երազային ընկերվարութիւնը (ուտոպիական սոցիալիզմը), որի հետեւորդներն էին Շ. Ֆուրյէն, Ա. Սեն-Սիմոնը եւ Ռ. Օուէնը, որոնց եւ պատկանում է «ֆէմինիզմ»[1] անուանման մկրտումը։ Ներկայումս այս երեք ուղղութիւններն այնքան էլ արտայայտուած չեն։ Փոխարէնը հիմա առաջացել են կրօնական եւ ազգային ֆէմինիզմի այնպիսի հոսքեր, որոնց միջոցով կնոջ դրութիւնը վերլուծւում է ոչ միայն սեռի տեսանկիւնից, այլեւ ազգութեան ու կրօնի դասակարգումների։ Ֆէմինիզմի սկզբնաւորումից եւ 60-ականների՝ սեռային յեղափոխութիւնից յետոյ, երբ խօսքը վերաբերում էր աւանդական բարոյականութեան եւ աւանդական ընտանիքի կառուցուածքին, շատ բան փոխուեց աշխարհում։ Մենք հասկանում ենք, թէ այսօր քրիստոնէական աշխարհի մտածողութեան

1 Իգականութիւն, ֆրանսերէն՝ feminisme, լատիներէն՝ femina - կին բառից։

մէջ ֆէմինիստական փիլիսոփայութիւնից եւ աճող գլոբալացումից կամ համաշխարհայնացումից տարբեր ծայրայեղութիւններ են ներթափանցել: Ֆէմինիզմը միայն կանանց իրաւունքների խնդիրը չէ այսօր, այլ մի համապարփակ մարտահրաւէր է մեր ողջ ուղղափառ հաւատքին: Մեր ժամանակներում առաջանում է ֆէմինիզմի աստուածաբանութեան խնդիրը, որը կարելի է համեմատել չորրորդ դարի արիոսականութեան յարձակումների հետ: Ֆէմինիզմը մարտահրաւէրներ է ստեղծում ընդդէմ մեր աւանդական պատկերացումների՝ մարդու բնութեան, հայրական իշխանութիւնից ազատագրութեան, ամուսնու ու կնոջ յարաբերութիւնների, ընտանիքի պատշաճ եւ աստուածապաշտ գործունէութեան, հոգեւոր կեանքում իշխանութեան դիրք գրաւելու, կանանց քահանայագործելու, ինչպէս նաեւ յղիութեան արհեստական վիժեցման պահանջների եւ ազատութեան, ոչ օրինաւոր ամուսնութեան սեռական ազատ կենակցութեան, միասեռականութեան օրինականացման եւ այլ հարցերում: Այս աշխատասիրութեամբ փորձել ենք շօշափել որոշ հովուական հարցեր, որոնք այսօր բարձրացնում է ժամանակակից ֆէմինիզմը, որոնք այնքա՜ն են ներմուծուել մեր մշակոյթի մէջ, որ մենք պէտք չէ զարմանանք, թէ այսօր դրանք իրենց ազդեցութիւնն են թողնում նաեւ եկեղեցում: Ֆէմինիստական երկխօսութիւնը եկեղեցիներում անխուսափելի է դառնում, եւ մենք արդէն կարող ենք նկատել, թէ որքան շատ յօդուածներ կան այսօր կանանց իրաւունքների վերաբերեալ, կանանց քահանայագործութեան, արհեստական վիժեցման պահանջների մասին, եւ այլն... Հնարաւոր է, որ այդ երկխօսութիւնը նաեւ օգուտ բերի քրիստոնեայ տղամարդկանց ու կանանց, քանի որ դա կարող է յստակացնել սեռերի մասին բոլոր կարծիքները՝ Քրիստոսի ճշմարտութեան եւ Աւետարանների յայտնութեան լոյսի ներքոյ:

Գոյութիւն ունեն երկու հիմնական ոլորտներ, որտեղ կրօնական ֆէմինիստները ձգտում են փոխել սեռային դերերը՝ կանանց

դերը եկեղեցում եւ կանանց դերն ամուսնութեան մէջ։ Ֆէմինիստական շարժումները վերջին ժամանակներում քրիստոնէական եկեղեցուն առաջադրում են «կանանց քահանայագործութեան» խնդիրը։ Նրանք սխալմամբ կարծում են, թէ եկեղեցու արական նուիրապետութիւնն անհաւասարութիւն է ստեղծում։ Հետեւաբար, լուծումն այն է, թէ պէտք է ազատուել տղամարդկանց եւ կանանց միջեւ դերերի տարբերութիւններից։ Կանայք պէտք է ձեռնադրուեն, զբաղեցնեն երիցական պաշտօններ եւ իշխեն միւսների վրայ եկեղեցում։ Ֆէմինիզմի պատճառած դաժանագոյն վնասն ընտանիքի քայքայումն ու ընտանեկան սուրբ արժէքների ոչնչացումն է։ Այստեղից է առաջանում սեռային կեղծ հաւասարութիւն, երբ անընդմէջ սահմանւում են ամէն տեսակի այլասերումներ, որոնք այժմ ընտանիքի քայքայման պատճառ են դառնում։ Սա՛ է պատճառը, որ կանանց դերի մասին թիւր կարծիքներ են տարածւում նաեւ եկեղեցում։

Արմատական հոգեւոր ֆէմինիզմը սոցիալական լուրջ խնդիրների աղբիւրը համարում է հայրիշխանութիւնը։ Որոշ օտարերկրեայ հետազօտողներ արդէն սկսել են խօսել սեռի չէզոքացման մասին։ Ըստ ընկերաբանների (սոցիոլոգների)՝ արդէն սկսել է «biarhata», այսինքն՝ երկու սեռերի գերակայութեան դարաշրջանը՝ ի տարբերութիւն «matriarchy»՝ մայրիշխանութեան կամ «patriarchy»՝ հայրիշխանութեան։ Ֆէմինիզմը խորը բարոյական եւ հոգեկան ախտաբանութիւն (պաթոլոգիա) է։ Իրօք, այսօրուայ կանայք դառնում են աւելի համարձակ, իսկ տղամարդիկ, ընդհակառակը, դառնում են իգաբարոյ։ Կարծես թէ այսօր կանայք ու տղամարդիկ դերերով փոխուել են։ Որպէս հետեւանք՝ մենք հանդիպում ենք կանանց մասնակի տղամարդանալու, ու տղամարդկանց մասնակի կնանալու հոգեբանութեանը։

Փիլիսոփայութեան ամենաարդիական հարցերից մէկն այս աշխարհում «գենդերային հաւասարութեան» հարցն է։ Աշխարհիկ միտքը մարդու ունեցած բարձր արժէքների մասին յանգել է այն

եզրակացութեանը, թէ բոլոր մարդիկ երկրի վրայ հաւասար են։ Բայց հաւասարութեան գաղափարի սխալ ընկալումը, իր հերթին, վերջին տարիներին խթանել է ֆէմինիստական շարժումը, որն ամէն ինչում, բառիս բուն իմաստով, ջանում է հասնել կանանց ու տղամարդկանց կեղծ հաւասարութեանը։ Այս աշխարհի պատկերացումներն ու վերաբերմունքը նախանձելի յամառութեամբ ներթափանցում էին եկեղեցի՝ ամբողջ իր պատմութեան ընթացքում։ Եւ այն իրականութիւնը, թէ եկեղեցին դեռեւս լիովին չի ընդունել ֆէմինիզմի գաղափարախօսութիւնը, պէտք է շնորհակալ լինել Աստուածաշնչի վարդապետութեանն ու սրբազան Աւանդութեանը, ինչպէս նաեւ մարդկութեան զարգացման պատմութեանը։ Պատահական չէ, որ ֆէմինիստական շարժման աճն աշխարհում միեւնոյն ժամանակ համընկել է եկեղեցում քահանայի պաշտօնը գրաւելու՝ կանանց պահանջի աճի հետ։ Կանայք այսօր տեսնում ու հասկանում են, թէ շատ առումներով իրենք ունեն նոյն հնարաւորութիւնները, որոնք ունեն տղամարդիկ եւ՛ հոգեւոր, եւ՛ մտաւոր, եւ՛ ֆինանսական տեսակէտով։ Արդէն այսօր չկայ տղամարդու հանդէպ այն մեքենայական ենթակայութիւնը, որ բնական արտայայտութիւնն էր անցեալ մշակոյթի, երբ կինը չէր կարող ապրել անկախ իր ամուսնուց։ Ու հէնց դրա համար էլ կինն ունի զարմանալի ունակութիւններ, ինչպէս, օրինակ, գիտակցական հնազանդութիւն իր ամուսնու հանդէպ։ Եւ այսպիսով իր կեանքում գործնականօրէն դրսեւորում է եկեղեցու հնազանդութիւնը Տէր Քրիստոսի հանդէպ։ Սակայն, ցաւօք, այս հնարաւորութիւնը մեր ժամանակներում շատերի մօտ կա՛մ չի նկատւում, կա՛մ էլ բոլորովին անտեսւում է։

Ֆէմինիստներից շատերը կարծում են, թէ իրենց սեփական մարմինների հետ կարող են վարուել այնպէս, ինչպէս կը ցանկանան։ Եւ հետեւաբար, ունեն նաեւ ամէն «իրաւունք» ազատ ընտրելու անբարոյականութիւնը կամ արհեստական վիժեցումը։ Մենք մեզ քրիստոնեայ կոչելով՝ շատ անգամ անտեսում ենք այն փաստը, թէ մեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են, ու մենք այլեւս մեր տէրը չենք,

քանի որ Քրիստոս մեզ գնեց Իր թանկագին արեան հեղմամբ (տե՛ս Ա. Կորն 6, 20-21)։ Մեր սեփական մարմինը պատկանում է Աստծուն, ու մեր պատասխանատուութիւնն է պաշտել եւ փառաբանել մեր Արարչին ու Փրկչին՝ մեր մարմիններում, եւ խուսափել այնպիսի բաներից, որոնք կարող են վնաս հասցնել կամ այլասերել մեզ կամ ուրիշներին, այդ թւում՝ նաեւ չծնուած երեխաներին։ Յայտնի է, թէ շատ ֆէմինիստուհիներ մերժում են քրիստոնէութիւնը՝ այն փոխարինելով այն հեթանոսական չաստուածների պաշտամունքով կամ եսապաշտութեամբ։ Երբեմն պնդում են, թէ քրիստոնեայ են, բայց ստեղծում են իրենց երեւակայական թիւր պատկերացումներն Աստծու մասին եւ հետեւելով իրենց սեփական խղճին կամ նմանութեանը՝ երկրպագում են արարչութեանը՝ Արարչի փոխարէն։ Աստուածաշունչը խստիւ դատապարտում է նման կռապաշտութիւնը, որը վերջին հաշուով կործանարար է բոլոր նրանց համար, ովքեր այդպէս են վարւում։ Երբ ֆէմինիզմի ջատագովները արդարացնում են նման գործունէութիւնը, նպատակայարմար է խօսել հերիտիկոսութեան, անհաւատութեան կամ հաւատուրացութեան մասին։

Արդեո՞ք Աստուածաշունչն անդրադառնում է ֆէմինիզմին։ Ժամանակակից ֆէմինիզմի հայեցակարգ չի եղել այն ժամանակ, երբ գրուել է Աստուածաշունչը, բայց դա չի նշանակում, թէ Աստուածաշունչը ոչինչ չունի ասելու ֆէմինիզմի հիմնական հարցերի շուրջ։ Նոյնիսկ այն ժամանակ, երբ Սուրբ Գիրքը, կարծես թէ լռում է այն բանի մասին, որն ազդեցութիւն ունի մեր վրայ այսօր, կան հաստատուած յաւիտենական սկզբունքներ, որոնք խօսում են խնդրոյ առարկայի մասին։ Նախ, մենք պէտք է սահմանենք ֆէմինիզմը, քանի որ այն կարող է ունենալ տարբեր իմաստներ, տարբեր մարդկանց խմբերի համար։ Հիմնականում, ֆէմինիզմը մի փիլիսոփայութիւն է, որը պաշտպանում է կանանց ու տղամարդկանց, սոցիալական, քաղաքական, տնտեսական եւ այլն հաւասար իրաւունքները։ Ֆէմինիզմն ի սկզբանէ դրական

շարժում էր եւ ուղղուած էր լուծելու կանանց հիմնարար այն իրաւունքները, որոնք Աստուած մտադիր է տալու իւրաքանչիւր մարդու։ Վաղ ֆէմինիստ տեսաբանները պայքարելով հասան բաւական մեծ յաջողութիւնների։ Սակայն այսօրուայ ֆէմինիզմը շատ աւելի առաջ է անցել իր պահանջներով։ Աւելի արմատական ու ծայրայեղական ֆէմինիստները գործնականօրէն ձգտում են այսօր տապալել արական գերիշխանութեան ցանկացած հետք՝ եկեղեցում եւ հասարակութեան մէջ ամուսինների ու իրենց կանանց աստուածաշնչեան դերերի առումով։ Ժխտում են տղամարդկանց ու կանանց որեւէ տարբերութիւն, պաշտպանում են վիժեցման պահանջը, աջակցում են իգամոլութեան, այսինքն՝ լեսբիների շարժմանը, խեղաթիւրում են Աստուածաշնչի վարդապետութիւնը տղամարդու ու կանանց վերաբերեալ։ Ժամանակակից ռազմատենչ ֆէմինիզմը կանանց իրական անհաւասարութեան խնդիրներին կեղծ լուծումներ է առաջարկում այս մեղսալի հասարակութեան մէջ։ Ֆէմինիզմը կանանց կոչ է անում հակառակուել այն օրէնքների դէմ, որոնք Աստուած սահմանել է մարդկութիւնը փրկելու համար՝ ձգտելով պարտադրել մարդասիրական արժէքները Աստծու խօսքի անմիջական ընդդիմութեամբ։

Ոչ բոլոր ֆէմինիստ գաղափարներն են հակասում եկեղեցու ուսմունքներին։ Ֆէմինիզմը չէ՛, որ բացայայտում է կանանց ու տղամարդկանց իրաւունքների հաւասարութիւնն ու մարդկային արժանապատուութիւնը։ Քրիստո՛ս է սա բացայայտել։ Բայց սա այլեւս միայն հաւասար իրաւունքների եւ արժանապատուութեան պայքար չէ, քանի որ ֆէմինիզմի նոր ալիքը վերանայում է «հաւասարութեան» գաղափարը՝ բոլորովին ուրիշ խնդիրներ հետապնդելով։ Ֆէմինիզմը շատ բաներ է ընդօրինակել քրիստոնէութիւնից, բայց ցաւօք, այժմ այն փորձում է խեղաթիւրել քրիստոնէական արժէքները ու կենտրոնանում է ոչնչացնելու տղամարդկանց եւ կանանց դերերի բոլոր տարբերութիւնները եւ՛ հասարակութեան մէջ, եւ՛ եկեղեցում։ Իհարկէ, ոչ բոլորն են համաձայն Սուրբ Գրքի՝ տղամարդկանց

եւ կանանց դերերի սահմանազատման բնական պահանջներին, որը նախատեսուած է Աստծու կողմից։ Եւ սա քրիստոնէական ֆէմինիզմի առաջացման պատճառներից մէկն է։ Կանանց հաւասարութեան շարժումը մետաֆիզիկական իմաստով կարող ենք դրական համարել, երբ խօսում ենք տղամարդկանց ու կանանց հաւասարութեան մասին Աստծու առաջ։ Դա, անկասկած, գոյութիւն ունի, քանի որ, ինչպէս ասում է Պօղոս առաքեալը. ***«Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցիք, Քրիստոսով զգեստաւորուեցիք. ուրեմն խտրութիւն չկայ ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի. որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս»*** *(Գաղ. 3, 27-28)։ Կինը եւ իր ամուսինը «կեանքի շնորհի» ժառանգակիցներ են ի Քրիստոս (Ա. Պետր. 3, 7)։ Նրանց «հաւասարութիւն»-ն այն է, թէ ինչպէս տղամարդիկ, այնպէս էլ կանայք ունեն նոյն յոյսը փրկութեան։ Եկեղեցին միշտ հաստատել ու հաստատում է տղամարդու ու կնոջ միջեւ հաւասարութիւնը ի Քրիստոս, քանի որ, ինչ վերաբերում է քրիստոնեայի հոգեւոր կեանքին ու փրկութեանը, տղամարդն ու կինն ունեն նոյն աշխատանքը, նոյն պայքարը, նոյն հնարաւորութիւնը, նոյն նպատակը՝ Քրիստոսին միանալու, որտեղ բոլոր գենդերային տարբերութիւնները վերանում են, քանի որ նրանք այլեւս կորցնում են իրենց իմաստը։ Յիսուս Քրիստոս բացատրեց դա.* ***«Յիսուս պատասխանեց նրանց եւ ասաց. «Այս աշխարհի որդիները կին են առնում եւ մարդու են գնում. Իսկ նրանք, որոնք արժանի կը լինեն այն աշխարհին հասնելու եւ մեռելներից յարութիւն առնելու, ո՛չ կին են առնում եւ ո՛չ էլ մարդու են գնում, քանի որ այլեւս մեռնել անգամ չեն կարող, որովհետեւ հրեշտակների նման են եւ Աստծու որդիներ են»»*** *(Ղուկ. 20, 34-36)։ Բայց շփոթութիւնը միայն ներկայ մեր ապրելու եւ գալիք աշխարհի միջեւ է, որի մասին խօսում էր Յիսուս։ Մեր ապրելու ժամանակը թերի է եւ, ըստ Աստծու նախասահմանած բարի նպատակի, այս ընկած աշխարհում գենդերային տարբերութիւններն անհրաժեշտութիւն են, որոնք պիտի վերանան գալիք աշխարհում։*

Բայց մեր ներկայ կեանքի իրականութիւնը տեղի է ունենում այստեղ՝ մեղքի մէջ ընկած այս անկատար ու թերի աշխարհում, որտեղ անշուշտ կան բազում տարաձայնութիւններ, որոնք, սակայն, պէտք է պատշաճ կերպով հասկանալ եւ անհետացնել: Եկեղեցին պարտադիր կերպով ցոյց է տալիս սեռերի եզակիութիւնն ու առանձնայատկութիւնը: Ստանձնելով սեռերի բնական դերը, ինչպէս սահմանուած է Արարչի կողմից, եկեղեցին հաստատում է, թէ տղամարդիկ ու կանայք միմեանց լրացնում են հրաշալի ներդաշնակութեամբ: Իրենց դերերը տարբեր են, այլ ոչ թշնամական: Նրանք հարստացնում են մէկը միւսին ու դառնում մէկ ամբողջութիւն ի Քրիստոս, իսկ Սուրբ Հոգին օգնում է՝ ձեռք բերելու այն ամէնը, ինչ մարդը կորցրել է մեղքի պատճառած անկման հետեւանքով: Յաւօք, ժամանակակից ֆէմինիզմն այսօր կենտրոնանում է եւ կրօնական հաւասար «իրաւունքների», եւ սեռային սոցիալական դերակատարութեան վրայ: Սակայն հաւասարութեան գաղափարն անհնար է, քանի որ տղամարդիկ ու կանայք ծագումնաբանական ու կենսաբանական իմաստով ակնյայտօրէն տարբեր են: Այս հարցում լինել հաւասար նշանակում է լինել նոյնը: Կանայք ու տղամարդիկ ծագումնաբանական իմաստով չեն կարող հաւասար լինել, քանի որ նրանք նոյնը չեն: Տղամարդը երբէք չի ունենայ «իրաւունք» ծննդաբերելու ու կրծքով երեխայ կերակրելու, իսկ կինը երբէք չի ունենայ «իրաւունք» քահանայագործելու ուղղափառ եկեղեցիներում: Կարելի է բազմաթիւ ապացոյցներ բերել: Հետեւաբար, կնոջ ազատութիւնն իրականում ստրկութիւն է, եթէ ստիպում են նրան հրաժարուել բոլոր այն եզակի կարողութիւններից ու յատուկ յատկանիշներից, որոնք նրան կին են դարձնում: Նոյնը կարելի է ասել նաեւ տղամարդկանց համար, եթէ նրանց ազատութիւնը պահանջում է խուսափել այն ամէնից, ինչը նրանց տարբերում է կանանցից ու տղամարդ դարձնում: Ֆէմինիզմը միշտ յարում է այն պղատոնական մտքին, թէ մեր մարմինը պարզապէս վահանակ է կամ կեղեւ մեր հոգու համար ու մեր սեռային տարբերութիւնները պարզապէս մեխանիկական երեւոյթ

են։ Քրիստոնէութիւնը, միւս կողմից, ի սկզբանէ ուսուցանում է, թէ մեր մարմինն ու հոգին ի ծնէ մի ներդաշնակ միութիւն են, ու մեր ֆիզիոլոգիական տարբերութիւնները շատ աւելի խորն են, քան միայն միսն ու ոսկորը։

*Այո՛, տղամարդու եւ կնոջ միջեւ խտրականութիւն չկայ, բայց դա չի նշանակում, թէ նրանց միջեւ տարբերութիւններ չկան. տարբեր են նրանց դերերը, «**որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ ինքն է Փրկիչը այդ մարմնի։ Եւ ինչպէս եկեղեցին հնազանդւում է Քրիստոսին, նոյնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց մարդկանց ամէն ինչում**» (Եփես. 5, 23-24)։ Բայց խօսքն ամենեւին «ստրուկ» ու «տէր» յարաբերութիւնների մասին չէ։ Հնազանդութիւն նշանակում է նուիրում, հաւատարմութիւն, անսահման սէր, զոհողութիւն։ Իսկ «տէր» լինելն էլ տղամարդուց պահանջում է նախ սէր, խնամք, հոգատարութիւն ու պաշտպանութիւն։ Պօղոս առաքեալը խօսում է այդպիսի սիրոյ մասին, որը «**համբերող է, քաղցրաբարոյ է, չի նախանձում, ...չի գոռոզանում, ... իրենը չի փնտռում, ...չար բան չի խորհում...ամէն բանի դիմանում է, ամէն բանի հաւատում է, մշտապէս յոյս է տածում, ամէն բանի համբերում է։ Սէրը երբեք չի անհետանում...**» (Ա. Կորն.13, 4-8)։ Հաւատացեալ կինը, որ ձգտում է հնազանդուել Աստծուն ու քայլում է խաղաղութեան եւ շնորհի ճանապարհով, պէտք է յստակ իմանայ, թէ ունի հաւասար իրաւունքներ ու հասանելիութիւն՝ ի Քրիստոս բոլոր հոգեւոր օրհնութիւնների նկատմամբ (Գաղ. 3, 28)։ Տղամարդիկ ու կանայք ունեն աստուածաշնորհ արտօնութիւն՝ մեզ համար նախատեսուած Աստծու ծրագիրը կատարելու։ Ապստամբութիւնն այդ ծրագրի դէմ եւ ամբարտաւանութիւնը, որով անհատն իրեն աւելի բարձր է դասում, քան Աստծու Խօսքը, կը բերի ծանր հետեւանքների։ Մենք տեսնում ենք այդ հետեւանքներն այսօր, երբ ոչնչանում են ընտանիքները, ամուսինների եւ կանանց միջեւ յարաբերութիւնները, եւ ընդհանրապէս կորչում է սէրն ու յարգանքը մարդու կեանքում։*

Անկման սկզբունքները նկարագրուած են հետեւեալ տողերում. ***«Եթէ մէկը սիրում է աշխարհը, Հօր սէրը նրա մէջ չէ, քանի որ այն ամէնը, ինչ աշխարհի մէջ կայ, մարմնի ցանկութիւն է, աչքերի ցանկութիւն եւ ա՛յս կեանքի ամբարտաւանութիւն, որ Հօրից չէ, այլ՝ այս աշխարհից»*** *(Ա. Յովհ. 2, 16)։ Եւան հաւատաց ստին, թէ պտուղն ուտելն իրեն իմաստութիւն կը բերի։ Նա ցանկացաւ ու վերցրեց մի բան, որն արգելուած էր։ Սա է հիմքը ժամանակակից ֆէմինիստական շարժման։ Կանանց գայթակղում են այն ստով, թէ ֆէմինիզմը նրանց կը բերի այն ցանկալի իշխանութիւնն ու ազատութիւնը, որոնց կարծում են թէ արժանի են։ Սակայն խոստումը դատարկ է, քանի որ նախադրեալ ենթադրութիւնն արմատաւորուած է հպարտութեան ու չար բարքի վրայ, որոնց յաջորդում են կործանում եւ անկում (տե՛ս Առակ. 16, 18)։*

Վերջին տասնամեակների ընթացքում նկատւում է հասարակութեան մտահոգութեան աճը։ Հասարակութիւնն այնքան է մտահոգ քաղաքական ճշգրտութեան ու կշտամբանքի համար, եւ մարդիկ այնքան են զգայուն «նեղացած» լինելու հանդէպ, որ քաղաքավարութիւնը կորցրել է իր իմաստը։ Սակայն սա, իրօք, որեւէ նոր բան չէ, որովհետեւ աշխարհում միշտ եղել է անհաւասարութիւնը։ Ցաւալի է, բայց ճիշտ է, թէ արհեստական արգելքներն ու խոչընդոտները, որոնք ոչ մի հիմք չունեն Աստծու խօսքի մէջ, միշտ բաժանել են մարդկութեանը։ Մեղքն է պատճառը, երբ առաջանում է անհաւասարութիւն։ Մեղքն է, որ տղամարդկանց ստիպում է կանանց ստորացնելու։ Եւ մեղքն է, որ ձգտում է կեղծ լուծումներ փնտռել ու հակազդել այդ անհաւասարութիւններին։ Անհաւասարութեան միակ ճշմարիտ լուծումն է հնազանդութիւնն Աստծու Խօսքին։ Եթէ տղամարդիկ եւ կանայք ճշմարիտ կերպով ընկալեն ու հնազանդուեն Աստծու Խօսքին, ապա քրիստոնէական ֆէմինիզմը իր ճշմարիտ երեսը ցոյց կը տայ, թէ ինչ է ինքը, եւ կ՚երեւայ այն ներդաշնակութիւնը, որ Աստուած սահմանել է կանանց եւ տղամարդկանց յարաբերութիւնների միջեւ՝ հասարակութեան մէջ

եւ եկեղեցում առողջ ու փրկարար կեանք ունենալու համար։

Սեռականութեան դաշտում կան որոշ կրօնական աւանդոյթներ, որոնք փրկարար են թէ՛ տղամարդկանց եւ թէ՛ կանանց համար։ Ամուսնական կեանքը հոգեւոր իմաստով ճանապարհ է հոգու փրկութեան, եւ աւանդոյթները միջոցներ են փրկութեան։ Վստահ չենք, թէ աշխարհային նոր սեռային «ամուսնական հաւասարութեան» կարգերը, որոնք այժմ հաստատուել են, տանում են փրկութեան։ Հետեւաբար, ճշմարիտ հիմքի վրայ դրուած քրիստոնէական ընտանիքները միշտ պահպանողական են, որոնք ձգտում են վերակենդանացնել ընտանեկան նուիրապետական տնտեսութիւնը, որ գոյութիւն է ունեցել դարեր շարունակ։ Աստուծավախ քրիստոնէական ընտանիքներում նման տնտեսութիւնը երբէք չի վիրաւորել կամ նուաստացրել կնոջ դերը եկեղեցում կամ ընտանիքում։ Կանանց համարեայ բոլոր գենդերային իրաւունքներն արդէն բաւարարուել են եւրոպական քաղաքակրթութեան շրջանակներում։ Բայց դրանցից աւելի ինչ կարող է ցանկալ կինը։

Այսօր շատ սխալ կարծիք կայ, թէ քրիստոնեայ կինը յետին տեղն է զբաղեցնում կեանքում, եւ թէ կնոջն ամենափոքր տեղն է յատկացուում եկեղեցում, ընտանիքում եւ հասարակութիւնում։ Մինչդեռ Հայ Եկեղեցին միշտ էլ ունի այն տեսակէտը, թէ կինն ունի տղամարդու հետ հաւասար քաղաքական, սոցիալական եւ տնտեսական իրաւունքներ։ Դրանք հաւասարակշռուած են այն իմաստով, որ հաւասարապէս կրում են Աստծու պատկերն ու մարդկային անձի արժանապատուութիւնը։ Բայց, իհարկէ, սա չի նշանակում, թէ կինը պէտք է կատարի այն ամէնը, ինչ կատարում է տղամարդը։ Արական եւ իգական սեռերը կուրօրէն հաւասարեցնելու ձգտումը յանգեցնում է ամենաանհեթեթ ու ողբերգական հետեւանքներին։ Ընդգծելով տղամարդկանց ու կանանց հաւասարութիւնը՝ եկեղեցին պարտադիր ցոյց է տալիս սեռերի եզակիութիւնն ու առանձնայատկութիւնը։ Երջանկայիշատակ Գէորգ Ե Սուրէնեանց (Տփղիսեցի) կաթողիկոսը, ընդգծելով կանանց դերի կարեւորութիւնը, իր կոնդակում (1917

թ.) նշում է, որ Հայ Եկեղեցին մշտապէս առանձնայատուկ դեր է շնորհել կանանց, եւ պատահական չէ, որ մեր պատմութեան մէջ կան բազմաթիւ սրբուհիներ, կանայք, իշխանուհիներ, ովքեր եկեղեցիներ են կառուցել, ձեռագրեր պատուիրել, շարականներ գրել եւ այլն: Աւելի վաղ, քան Եվրոպայում, Գէորգ Ե Կաթողիկոսի կոնդակով վերականգնում է կանանց ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը. «Այս օրուանից սկսած արտօնում ենք կանացի սեռի իրաւունքների վերականգնումը համայնական գործերի մէջ: Կանացի սեռի իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի՝ տղամարդոց հետ միասին՝ մեր հանրական կեանքի ամէն մի գործի մէջ հանդէս գալու, թէ՛ ձայնատուութեան եւ թէ՛ ընտրութեան ժամանակ, իրաւատէր լինել եւ՛ ընտրելու, եւ՛ ընտրուելու. մի արտօնութիւն, որ մինչեւ այժմ այր մարդոց էր վիճակուած եւ նրանց իրաւունքն էր համարւում»[1]:

Ֆէմինիստական մի շարք ձեռնարկներում նշում է, թէ «գենդերային»-ը «սեռային»-ի նկատմամբ առաջնային է: Նոյնիսկ կենսաբանական տարբերութիւնները, օրինակ՝ սեռը, յաճախ դիտարկում է որպէս խտրականութիւնն արդարացնող միջոց: «Սեռային» ու «գենդերային» հասկացութիւնների տարբերակումը շատ է քննարկում վերջին տարիներին: Երբեմն այս հասկացութիւններն ընկալւում են որպէս հոմանիշներ: Սակայն ընկերաբաններն ու լեզուաբան մասնագէտները տարբերութիւն են դնում այս երկուսի միջեւ՝ «սեռ»-ն ընդունելով որպէս կենսաբանական հասկացութիւն, որը վերաբերում է կնոջ ու տղամարդու ֆիզիկական, ֆիզիոլոգիական ու գործառութային տարբերութիւնների յատնկանիշներին, իսկ «գենդեր»-ն իրականում աւելի լայն հասկացութիւն է, որն իր մէջ ընդգրկում է ոչ միայն տղամարդու ու կնոջ միջեւ եղած կենսաբանական տարբերութիւնները, այլեւ հասարակութեան տարբեր սոցիալական ու մշակութային բնութագրերի սեռային բաժանման ամբողջ համակարգը՝ վար-

1 http://www.sarkavagagirq.net/2012/11/genderayin-havasarutyun.html (աո 25/03/2017):

քի, դիրքի, արժէքների, դերերի ամբողջութիւնը։ Կենսաբանական տարբերութիւնները յաճախ օգտագործւում են որպէս արդարացում տղամարդու գերակայութեան եւ իշխանութեան դիրքի, ինչպէս նաեւ աւանդական ընտանեկան բարքերի ու գենդերային դերերի հաստատման համար. օրինակ՝ կնոջ՝ որպէս մօր, սնուցողի, կերակրողի ու հիմնական խնամակալի աւանդական դերը։ Ու զարմանալի չէ, որ ֆէմինիստները քննադատում են կենսաբանական նմանատիպ բացատրութիւնները, որոնք կործանարար բնոյթ կարող են ունենալ թէ՛ կնոջ, թէ՛ տղամարդու համար։ Գենդերային տարբերութիւնների կենսաբանական բացատրութեան օրինակներ են կանայք՝ որպէս հիմնական խնամակալներ, իսկ տղամարդիկ՝ ապրելու միջոց հայթայթողներ, կանայք՝ աւելի զգայուն, իսկ տղամարդիկ աւելի գործունեայ են ու բանական, որոշ աշխատանքներ աւելի համապատասխան են տղամարդկանց համար, քան կանանց եւ այլն։

Ֆէմինիզմն իր որոշակի անցանկալի դերն ունի նոր աղանդներ առաջացնելու անհեթեթ գործում։ Ֆէմինիստ ջատագովները դեռ վաղ փուլերում սովորութիւն ունէին ընտանիքն ու կրօնը ներկայացնել որպէս կանանց ու տղամարկանց հաւասարութեան թշնամի։ Ֆէմինիստական աստուածաբանութեան առաջին ալիքը սովորաբար կապում են Էլիզաբեթ Ս. Սթենթոնի (Elizabeth C. Stanton)՝ ամերիկացի երիցականուհու անուան հետ։ Նա պնդում էր, թէ աւանդական եկեղեցին տրամադրուած է կանանց դէմ, եւ եկեղեցին զոհ է գերիշխող արական կրօնավարութեան։ Նա տեսնում էր, թէ եկեղեցում ֆէմինիզմի դէմ պայքարող մի ուժ կայ։ Այդ պատճառով եկեղեցու ու կրօնի քննադատութիւնը դարձաւ քրիստոնէական ֆէմինիզմի շարժման հիմնական գաղափարախօսութիւնը։ Սթենթոնն ասում է. «Աստուածաշունչը եւ եկեղեցին եղել են մեծագոյն փորձաքար կանանց ազատագրման ճանապարհին... Եկեղեցու ուսուցման դիրքը կանանց մասին ամբողջութեամբ վերջին աստիճանի արհամարհական է ու նուաստացուցիչ... Կանանց մասին կրօնական սնահաւատութիւնը յաւէրժացնում է նրանց գերութիւնը

էլ աւելի, քան միւս բոլոր անբարենպաստ ազդեցութիւնները»[1]։ Սթենթոնն իր համախոհների հետ նոյնիսկ հրատարակեց «Կանանց Աստուածաշունչ»-ը («Woman's Bible» 1895, 1898, 2 volums), որտեղ կանանց վերաբերեալ հատուածները յագեցած են ճգնաժամային հարուստ մեկնաբանութիւններով։ «Կանանց Աստուածաշունչ»-ը հարցականի տակ է դնում «աստուածային» հաստատումը կանանց ենթակայութեան, ինչպէս նաեւ հաստատում է տղամարկանց ցանկութիւնը կրօնի շահարկումով յայտարարագրելու իրենց գերիշխանութեան իրաւունքները։ Աղօթքները, որոնք ուղղուած են Հայր Աստծուն, այստեղ հաւասարապէս ուղղուած են «երկնային Մօրը»։ Աստուածաշունչը միշտ եղել է ֆէմինիստական տեսութեան հիմնական խոչընդոտն ու գայթակղութիւնը։ Դրա համար 21-րդ դարի սկզբին խնդիր է առաջանում Աստուածաշունչը թարգմանելու ժամանակակից լեզուով, քանի որ աճում է «գենդերային չէզոք լեզուի» օգտագործման միտումն ու պահանջը, այսինքն՝ քննարկուող անհատը նշել առանց որեւէ սեռի տեսակի։ Նման առաջին Աստուածաշունչը յայտնուեց անգլերէն լեզուով, 1990 թուականին։ Այդ թարգմանութեան մէջ լեզուն չի կիրառւում Աստծու նկատմամբ։ Իսկ այլ դէպքերում թարգմանութիւնը վերաբերում է չէզոք սեռին ու չի նշում, թէ ո՞ր սեռին է ուղղուած տուեալ պատուիրանը կամ հրահանգը։ Օրինակ, երբ առաքեալները դիմում են «եղբայրներ» բառով, այստեղ օգտագործւում է «եղբայրներ ու քոյրեր» թարգմանութիւնը, կամ երբ անգլերէն լեզուով օգտագործւում է «մարդ-տղամարդ-մարդիկ» (a/the man, men) տարբերակը, ապա այստեղ օգտագործւում է «գենդերային չէզոք» թարգմանութիւնը՝ «մարդ արարած» (human being)։ Որոշ դէպքերում սա կարող է պարզապէս դերանուն լինել։ Հետեւաբար, ընտանիքը՝ որպէս եկեղեցական կառոյց, ենթակայ է նպատակային այլասերման, կանխարգելման, քայքայման եւ ոչնչացման։ Հակապատկերելով կնոջը տղամարդուն, եւ երեխաները՝

1 Bufe, Charles (ed.) The Heretic's Handbook of Quotations. Sharp Press, Tucson, AZ, 1988, pp. 121, 123, 210.

ծնողներին, ֆէմինիստական աշխոյժ միջամտութիւնը խախտում է աւանդական ընտանեկան յարաբերութիւնները։ Ֆէմինիզմը սեռերի տարաձայնութեան ու շահերի ընդդիմադիր գաղափարախօսութեան գործիք է այս խնդիրը լուծելու։ Ի դէպ, այս պայքարը հակասում է ոչ միայն տղամարդկանց, այլ հաւասարապէս կանանց շահերին։ Այս պայքարի իմաստը ոչ թէ որեւէ կոնկրետ իրաւունքների ձեռքբերումն է, այլ ինքնին, ծառայում է տարբեր սեռերի մեկուսացմանը, տանում է փոխադարձ թշնամանքի, անվստահութեան եւ ատելութեան նրանց միջեւ։ Ի լրումն տարանջատման՝ հասարակութեան մէջ սեռային շահ կարող են ստանալ միայն, թերեւս, միասեռականները։ Յաւալի է, որովհետեւ ֆէմինիստական շարժումը փորձում է խեղաթիւրել սուրբգրային ճշմարտութիւնները եւ աղաւաղել աւանդաբար մեզ համար սրբութեան արժէք ներկայացնող մի շարք հասկացութիւններ, ինչպիսիք են կին, տղամարդ, ընտանիք, եկեղեցի։ Մեղքի ճիրանների ու տիղմի մէջ թաւալուող մարդուն ժամանակակից ֆէմինիզմը կոչ է անում անձնապաշտութեան եւ աստուածուրացութեան։ Յանուն ֆէմինիզմի՝ խեղաթիւրւում է Աստուածաշունչը, եւ կանանց վերագրւում են այնպիսի իրաւունքներ, որոնց մասին նոյնիսկ խօսք էլ չկայ եւ յստակ արգելք են Աստուածաշնչում։ Ինչ ազատագրում է առաջարկում ժամանակակից ֆէմինիզմը։ Կարելի է ուղղակիօրէն ասել, թէ ֆէմինիզմի ազատագրումը պարզապէս կանանց ազատագրումն է Աստուածաշնչից։ Ամբարիշտներն արհամարհում են աստուածային իմաստութիւնն ու խրատը։ Պակասամիտ մարդը՝ լինի կին թէ տղամարդ, արհամարհելով Աստծու սահմանած պատուիրանները, չի կարող երբեւէ գտնել սէր ու խաղաղութիւն։

Իդէալական կնոջ նկարագրի բոլոր առաքինի դրսեւորումներն ու մայրութեան բարձր ու վսեմ խորհուրդը քրիստոնեայ կանայք պէտք է գտնեն Աստուածամօր կերպարում։ Եկեղեցու հայրերից մէկը մայրութիւնն աւելի բարձր էր դասում, քան քահանայութիւնը՝ ասելով, թէ աշխարհում դրանից բարձր կոչում չկայ։ Երջանկայիշատակ Գարեգին Ա Յովսէփեանց հայրապետն ասում էր, թէ

ընտանիքը նման է եկեղեցու, որի քահանան մայրն է։ Քահանայի հիմնական պարտականությունն է՝ Քրիստոսի Մարմնի եւ Արեան հաղորդությամբ կեանք բաշխելը։ Կեանք բաշխելու շնորհական այս բացառիկ յատկանիշը կնոջը դարձնում է ընտանիքի քահանայ։ Քրիստոնէութեան մէջ իւրաքանչիւր կին կոչուած է մասնակցելու մարդկութեան փրկութեանը։ Եւ ի վերջոյ, կեանք շարունակելն արդէն աստուածային նմանութիւն է, քանի որ միայն Աստուած կարող է կեանք պարգեւել։ Պօղոս առաքեալն ասում է, թէ կինը պիտի ապրի որդեծնութեան համար։ Եւ ոչ միայն զաւակ ծնելով, այլեւ նրան դաստիարակելով՝ որպէս բարեպաշտ քրիստոնեայ։ Սակայն այսօր ֆէմինիստների համար Աստուածածնին նմանուելը խորթ է, շատ դէպքերում նոյնիսկ հակասելի ու խանգարող հանգամանք է, քանի որ սբ. Աստուածամօրը նմանուելու համար հարկաւոր է ջանալ ձեռք բերելու սէր, հաւատք, հեզութիւն, հնազանդութիւն, խոնարհութիւն, զոհողութիւն, ներքին մաքրութիւն։ Իսկ ֆէմինիստական շարժումը հեռացնում է կնոջը ներքին մաքրագործումից։

Քրիստոնէութիւնը միշտ ուսուցանել է ներդաշնակութիւն ու սէր սեռերի միջեւ, իսկ այսօրուայ ֆէմինիզմը քարոզում է մրցակցութիւն ու բացառումներ. եւ ոչ մի կերպ այն չի յարմարւում աստուածաշնչեան պատկերացումների հետ տղամարդկանց ու կանանց դերի վերաբերեալ ամուսնական կեանքում եւ եկեղեցում։ Գրեթէ բոլորն էլ համամիտ են, թէ կանայք պէտք է ունենան հաւասար սոցիալական, քաղաքական, տնտեսական իրաւունքներ ու հաւասար մարդկային արժանապատուութիւն։

Այնպէս որ, ֆէմինիզմի կարիքն այլեւս չկայ, իհարկէ, եթէ չէք ցանկանում այս իրաւունքների եւ արժանապատուութեան սահմանումներին աւելացնել այնպիսի բաներ, որոնք արդարացնում են կանանց գլխաւորութիւնն ընտանիքում եւ եկեղեցում՝ քահանայագործութիւնը, Աստծու իշխանութեան մերժումը կեանքում, արհեստական վիժեցումը դեռ չծնուած երեխայի, լեզբուհիների իգամոլութեան արդարացումը, սեռական ազատ կենակցութիւնները, եւ

այլն։ Եթէ ձեզ պէտք է այդպիսի ֆէմինիզմ, ուրեմն ձեզ պէտք չէ քրիստոնէութիւնը։ Կինը չի կարող լինել ուղղափառ հաւատացեալ ու միեւնոյն ժամանակ լինել ֆէմինիստուհի, քանի որ առաջանում են շատ տարօրինակ հակասութիւններ։ Բայց, իհարկէ, կնոջը սա չի խանգարում ունենալ նոյն հիմնարար քաղաքացիական բոլոր իրաւունքները, որոնք ունի տղամարդը, եւ որոնք երաշխաւորուած են աշխարհիկ իշխանութիւնների սահմանադրութեամբ, որը եւս չի վիճարկւում Եկեղեցու կողմից։

ԳԼԽԱՇՈՐ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Քող, գլխաշոր կամ շղարշ գործածելու նշանակութեան եւ իմաստի մասին շատերը տեղեակ չեն այսօր։ Մեր ժամանակներում գլխաշոր գործածելու պարտաւորութեան թեման հաւանաբար հակասական է եւ անհասկանալի ու գրեթէ ոչ մի ուշադրութիւն չի գրաւում աստուածաբանական տեսանկիւնից։ Եկեղեցիներում այն ընկալւում է որպէս մի երեւոյթ, որ համարեայ չի քննարկւում։ Անցեալում փորձն ու աւանդոյթն այնքան էին համընդհանուր համաձայնեցուած, որ գրեթէ կարիք չի եղել լուրջ մեկնաբանութիւններ կատարել այս թեմայի մասին։ Մարդիկ սովորաբար շատ ժամանակ չեն տրամադրել գրելու այն բաների մասին, որոնց բոլորն էլ համաձայն են եղել։ Պարզապէս, բոլոր քրիստոնեաներն էլ համաձայն են եղել Պօղոս առաքեալի՝ կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլխի՝ ծածկոյթի մասին նշած այն ճշմարտութեան հետ, թէ կինը պարտաւոր է քօղով գլուխը ծածկել՝ որպէս հնազանդութեան նշան իր ամուսնու եւ Աստծու նկատմամբ։ Գլխի քօղը համատարած սովորութիւն է առաքելահաստատ եկեղեցիներում։ Հռոմէական քանդակուած գետնադամբարանների ու կառուցուածքների պատերը, հնագոյն պատմական փաստաթղթերը վկայում են, թէ կանայք հին ժամանակներում գլխաշոր են գործածել։ Դա մի համատարած երեւոյթ էր Յունաստանում, Հռոմում, Անտիոքում եւ Աֆրիկայի եկեղեցիներում։ Մինչեւ 1950 թուականը մեծ թուով քրիստոնեայ կանայք ողջ քրիստոնէական աշխարհում (լինեն ուղղափառ, բողոքական, թէ կաթողիկէ) եկեղեցի մտնելիս եւ

աղօթելիս պարտադիր կերպով գլխաշոր էին կրում։ Արեւմուտքում՝ մասնաւորապէս անգլիախօս ժողովուրդների մօտ, ներկայումս գլխաշոր գործածելու սովորութիւնը համարեայ գոյութիւն չունի։ Եկեղեցի գլխաբաց մտնելու սովորութիւնն այսօր դժբախտաբար ընդհանրացել է նաեւ մեր հայկական գաղթավայրերի շրջանակներում։ Ճիշդ է, թէ Արեւմուտքում, օրինակ ԱՄՆ-ում, գլխաշորի գործածութիւնը մեր որոշ եկեղեցիներում դեռեւս պահպանւում է, բայց միայն ձեւականօրէն՝ Սուրբ Հաղորդութեանը մօտենալու պահին, որին ոչ բոլորն են հետեւում։ Նկատելի է, որ հիմնականում գլխաշոր գործածում են միայն Արեւելքից գաղթած այն կանայք, որոնք տեղեակ են եկեղեցական կարգապահութիւնից ու վարժուած են եղել հոգեւոր կեանքին։ Կարծես թէ այսօր քօղ կրելու առաքելական հրահանգը խորթ եւ անարգական է դառնում մեր որոշ եկեղեցիներում։ Ակնյայտ է, որ այս սովորութիւնը կամաց-կամաց կորցրում է պարկեշտութեան իր խորհրդաւոր բուն իմաստն ու գործադրութեան անհրաժեշտութիւնը։ Կանանց դժկամութիւնը գլխաշորի գործածութեան հանդէպ որոշ չափով պայմանաւորուած է այն գործածելու իմաստը չհասկանալու եւ ամփութութեան հետ։ Բարեպաշտական այս սովորութեան մասին ասուած որեւէ խօսք կարող է դժգոհութիւն առաջացնել ոմանց մօտ, քանի որ այսօր շատ կանայք ընդդիմանում են աստուածային այս պատուէրին՝ ասելով, թէ այդ սովորութիւնը պատկանում էր անցեալին։ Այսպիսի ճշմարտութիւնների հանդէպ մարդկանց բացասական տրամադրութիւնները նկատի առնելով՝ որոշ եկեղեցականներ նախընտրում են բնաւ չխօսել, որպէսզի ոմանց նեղուածութիւն չպատճառեն եւ չենթարկուեն նրանց հակակրանքին։ Չհասկանալով այս աւանդոյթի խորհուրդը՝ շատերի մօտ ծագում են թիւր ըմբռնումներ ու կարծիքների տարբերութիւններ։ Մարդկանց վերաբերմունքն այս թեմայի նկատմամբ շատ տարբեր է։ Քսանմէկերորդ դարում յաճախ կարելի է լսել, թէ գլուխը քօղով ծածկելու մասին Պօղոս առաքեալի յորդորը ժամանակաւոր սովորութիւն էր

ու միայն տեղական պահանջի բնոյթ էր կրում, որը եղել է միայն առաջին դարի Կորնթոսի եկեղեցում։ Որոշ մարդիկ էլ կարծում են, թէ այս խնդիրը վերաբերում էր միայն այդ եկեղեցու անբարոյական կանանց։ Մեր հասարակութիւնում շատ կանայք ու աղջիկներ ուղղակի ամաչում են եկեղեցում գլխաշոր կրել։ Ոմանք վախենում են հասարակութեան կարծիքից, թէ ի՞նչ կասեն իրենց մասին։ Ոմանք ասում են, թէ գլխաշոր կրելը կապուած է աղջկա կոյս լինել-չլինելու հետ։ Ոմանք էլ պարզապէս բացասաբար են վերաբերւում այդ խնդրին։ Շատերն են ասում, թէ իրենք Աստծուն երկրպագում են հոգով, եւ ոչ մի նիւթական բան, միջոց կամ պայման չի կարող իրենց արգելք հանդիսանալ։ Ասում են, թէ աղօթական կեանքի տարրական փորձառութիւնն իրենց համոզում է, թէ աղօթքի իսկութիւնն ու պտուղն առընչուած չեն արտաքին դրսեւորումների հետ։ Նաեւ ասում են, թէ գլխաշոր գործածելը պատկանում է Արեւելքի հնագոյն հեթանոսական կամ իսլամական աւանդոյթին եւ այդ պատճառով ոչ մի կապ չունի Քրիստոսի եկեղեցու հետ։ Այստեղից եզրակացնում են, որ ժամանակակից քրիստոնեայ կանայք պէտք է ապրեն տեղական մշակոյթի ու պահանջի համաձայն։ Շատերը համբերատար հետեւում են այս կանոնին, քանի որ գիտեն, որ դա է ճիշդը, բայց անում են միայն «թոյլերին չգայթակղեցնելու» համար։ Ուրիշները կարծում են, թէ գլխաշոր բնաւ պէտք չէ, քանի որ քօղի փոխարէն հանդիսանում է իր ամուսինը։ Կան նաեւ այնպիսի «առաջադէմ քրիստոնեաներ», ովքեր գաղտնի հեգնանքով ծիծաղում են այդպիսի «յետամնացութեան» վրայ։ Ոմանք պնդում են, թէ Պօղոս առաքեալն իր նամակներում միայն մէկ անգամ է անդրադառնում այս թեմային, սակայն եթէ նրա այլ գրութիւններում եւս գէթ մէկ-երկու անգամ նշուած լինէր այդ մասին, ապա այն ժամանակ կարելի էր քննարկել այս խնդիրը։ Շատերն են պնդում այն ժամանակուայ մշակութային, սոցիալական ու քաղաքական միջավայրի պահանջի տարբերութիւնների վրայ, մինչ ուրիշներն ընդհանուր առմամբ սխալ են մեկնաբանում Պօղոս առաքեալի խօսքերը գլուխը քօղով ծածկելու պարտաւորութեան

մասին։ Մէկ այլ անհեթեթ տեսակէտ էլ կայ, որի մասին քարոզում է ֆէմինիստ աստուածաբան Քեթրին Բաշնելը[1]։ Նա համոզուած է, թէ նոյնիսկ Պօղոս առաքեալն ինքն է կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլխում սովորեցնում, թէ կանայք եկեղեցում եւ աղօթելիս ընդհանրապէս պէտք չէ ծածկեն իրենց գլուխները։

Պօղոս առաքեալի ուսուցումը գլխաշորի վերաբերեալ հրէական հնագոյն աւանդոյթի հաստատումը չէր։ Դա տարբերւում էր այն ժամանակներին գոյութիւն ունեցող աւանդոյթներից ու խորհրդանշում էր քրիստոնէական հաւատի կարեւորագոյն սկզբունքը։ Սովորութեան համաձայն՝ ժամանակին հրեայ թէ՛ տղամարդիկ, թէ՛ կանայք սինագոգում Աստծու առջեւ անխտիր ծածկում էին իրենց գլուխները, այլապէս նրանք չէին կարող մտնել սրբավայր։ Իսկ հեթանոս յոյները Կորնթոսում տարբեր սովորոյթներ ունէին։ Ո՛չ տղամարդիկ, ո՛չ էլ կանայք չէին ծածկում իրենց գլուխները, երբ մտնում էին իրենց հեթանոսական տաճարները։ Միայն առաջին քրիստոնէական եկեղեցում էր, որ տղամարդը գլուխը չէր ծածկում, իսկ կինը պարտաւոր էր քօղով գլուխը ծածկել։ Սա նոր սովորութիւն էր, որ պահպանւում էր միայն քրիստոնէական եկեղեցիներում։ Այն տարբերւում էր եւ՛ հրէական, եւ՛ յունական հեթանոսական սովորոյթներից։ Մի նոր աւանդոյթ էր, որի մասին խօսելով առաքեալը եկեղեցուն սովորեցնում է, թէ՝ **«Ինչ որ գրեցի ձեզ, Տիրոջ պատուիրաններն են»** (Ա. Կորն. 14, 37)։ Հետեւաբար, թող բոլորին յայտնի լինի, թէ քօղով գլուխը ծածկելը Տիրոջ պատուիրանն է։

Յաճախ կարելի է նկատել, թէ եկեղեցու հաւատացեալները գլխաշորի մասին յիշեցնում են եկեղեցում գլխաբաց գտնուող կանանց՝ ասելով, թէ այս սովորութիւնը մեր նախնիների պարկեշտութեան ու համեստութեան նշանն էր եւ իրենց ապրած դարերի յատուկ միջավայրի աւանդոյթը, բայց ծածկոյթի բուն խորհուրդը, իմաստն ու էութիւնը շատերի համար այդպէս էլ մնում

1 Bushnell, Katharine (1921). God's Word to Women. Minneapolis, MN: Christians for Biblical Equality.

է անբացատրելի։ Սուրբ Գիրքը ներկայացնում է մի քանի պատճառներ կնոջ այս պարտաւորութեան համար։ Այդ պատճառների մասին Պօղոս առաքեալը խօսում է կորնթացիներին ուղղուած իր առաջին նամակում (Ա. Կորն. 11, 1-16)՝ համարելով, թէ սա այն աւանդոյթներից է, որ մեր Տէրը պատուիրել է ու վստահել իրեն, որպէսզի դա յայտնի եկեղեցուն։

Ուրեմն, նախ կարդանք կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլխի 1-16-րդ համարները, որտեղ Պօղոս առաքեալը խօսում է գլխաշոր կրելու կնոջ պարտաւորութեան մասին։ Ապա այդ հատուածից առանձնացնելով 16 պարբերութիւն՝ մանրամասնօրէն կը վերլուծենք գլխաշոր գործածելու պարտաւորութեան գլխաւոր պատճառները։

[1]Նմանուեցէ՛ք ինձ, ինչպէս որ ես՝ Քրիստոսին։

[2]Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամէն ինչում եւ պահում էք աւանդած բաները, ինչպէս որ աւանդեցի ձեզ։

[3]Ուզում եմ, որ դուք իմանաք, թէ ամէն մարդու գլուխը Քրիստոս է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած։

[4]Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը։

[5]Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը. որովհետեւ այնպէս է համարւում, թէ իբր գլուխն ածիլուած լինի.

[6]Քանզի, եթէ կինը քօղով չի ծածկւում, թող կտրի իր մազերը։ Իսկ եթէ ամօթ է կնոջ համար մազը կտրել կամ ածիլել, թող քօղով ծածկուի։

[7]Պէտք չէ, որ տղամարդն իր գլուխը ծածկի, որովհետեւ նա պատկերն ու փառքն է Աստծու, իսկ կինը ի՛ր մարդու փառքն է.

[8]Որովհետեւ ոչ թէ մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց.

[9]Քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար։

[10]Դրա համար կինը պարտաւոր է քօղ դնել գլխին հրեշտակների

պատճառով:

[11]Բայց կինն առանց մարդու եւ մարդն առանց կնոջ չկան ի Տէր.

[12]Որովհետեւ, ինչպէս որ կինը մարդուց է, այնպէս եւ մարդը՝ կնոջ միջոցով, եւ ամէն ինչ՝ Աստծուց:

[13]Եւ դուք ինքնե՞րդ դատեցէք. վայե՞լ է կին արարածին գլխաբաց աղօթքի կանգնել Աստծու առաջ:

[14]Եւ բնութիւնն իսկ չի՞ ուսուցանում ձեզ, որ, եթէ մարդը երկար մազերով է, դա անարգանք է իրեն.

[15]Բայց կինը, եթէ երկար մազերով է, դա պատիւ է իրեն, որովհետեւ մազերը քօղի փոխարէն են տրուած նրան:

[16]Իսկ եթէ մէկն ուզում է առարկել, մենք չունենք այդպիսի սովորութիւն, ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները:

Ա. Կորնթացիներին 11, 1-16

«Նմանուեցէ՛ք ինձ, ինչպէս որ ես՝ Քրիստոսին: Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամէն ինչում եւ պահում էք աւանդած բաները, ինչպէս որ աւանդեցի ձեզ» (Ա. Կորն. 11, 1-2):

*Պօղոս առաքեալը, սկսելով գլուխը քօղով ծածկելու թեման, նախ կոչ է անում նմանուել իրեն, ինչպէս որ ինքը՝ Քրիստոսին: Յետոյ առաքեալն սկսում է գովել կորնթացիներին, քանի որ նրանք յիշում էին ու պահում այն յանձնարարութիւններն ու աւանդոյթները, որոնք նա սկզբից փոխանցել էր նրանց՝ եւ գրաւոր, եւ բանաւոր: Բանաւոր պատուիրանների թւում էին նաեւ այն աւանդոյթները, որոնք Պօղոս առաքեալը յիշատակում էր իր նամակում. «**Դրա համար ձեզ մօտ ուղարկեցի Տիմոթէոսին, որ իմ սիրելի որդին է եւ հաւատարիմ՝ ի Տէր, որպէսզի յիշեցնի ձեզ իմ ճանապարհներն ի Քրիստոս Յիսուս, ինչպէս որ ամենուրեք ուսուցանում եմ բոլոր եկեղեցիներում**» (Ա. Կորն. 4, 17): Այլ կերպ*

ասած, առաքեալն ամենուրեք սովորեցնում է միայն նոյն ուսմունքը, որն ամբողջութեամբ մերժում է այն մարդկանց թերի կարծիքը, ովքեր հաւատում են, թէ առաքեալի նամակում յիշատակուած գլուխը քօղով ծածկելու յորդորը, միայն մէկ անգամ նշուած լինելով, անբաւարար է այդ սովորութիւնը պահելու համար: Զարմանալի չէ, որ Պօղոս առաքեալը կողոսացիներին ուղղուած նամակում գրում է. ***«Եւ երբ այս թուղթն ընթերցուի ձեզ մօտ, այնպէս արէք, որ լաւոդիկեցիների եկեղեցում էլ ընթերցուի. եւ լաւոդիկեցիներին ուղարկուած թուղթն էլ դո՛ւք ընթերցէք»*** *(Կող. 4, 16): Հետեւաբար, կարեւոր չէ, թէ քանի անգամ է առաքեալը լուսաբանում այս կամ այն թեման, քանի որ այն ժամանակներում առաքեալի բոլոր նամակները փոխանցւում էին եկեղեցուց եկեղեցի, եւ իւրաքանչիւր եկեղեցի հնարաւորութիւն ունէր ծանօթանալու Պօղոս առաքեալի ուսմունքներին: Իսկ թեսաղոնիկեցիներին դիմելով՝ Պօղոս առաքեալը գրում է հետեւեալը.* ***«Ահա թէ ինչու մենք շարունակ գոհութիւն ենք տալիս Աստծուն նրա համար, որ, մեզնից Աստծու խօսքի լուրն առնելով, այն ընդունեցիք ոչ որպէս մարդկանց խօսք, այլ՝ ճշմարտապէս, որպէս Աստծու խօսք, որ ներգործում է նաեւ ձեր՝ հաւատացեալներիդ մէջ»*** *(Ա. Թես. 2, 13): Այսինքն՝ ամէն ինչ, որ խօսում է Պօղոս առաքեալը, ճշմարտապէս Աստծու խօսքն է ու պնդել հակառակը, իհարկէ, անհեթեթութիւն է, ինչպէս որ անհեթեթութիւն է այն ենթադրութիւնը, թէ Պօղոս առաքեալի մատնանշած գլուխը քօղով գլուխը ծածկելու աւանդոյթը Քրիստոսի եկեղեցում կախում ունէր իր ժամանակների մշակութային սովորոյթներից ու բարքերից: Նոյնիսկ այսօր որոշ մարդիկ թիւրիմացաբար կարծում են, թէ Պօղոս առաքեալը հիմնւում է միայն իր անձնական կարծիքի վրայ, երբ խօսում է այս սովորութեան մասին: Նրանք կարծում են, թէ առաքեալը մտադրութիւն չունէր, որ այդ սովորութիւնը շարունակուէր ընդհանրական եկեղեցում, այլ մնար միայն Կորնթոսում՝ որպէս տեղական սովորութիւն: Բայց այս կարծիքը չի համապատասխանում Պօղոս առաքեալի մտածումներին: Ի վերջոյ,*

Պօղոս առաքեալն էր, որ վիճում էր Պետրոս առաքեալի հետ՝ փոխելու հրէական աւանդոյթները քրիստոնէական եկեղեցիներում (տե՛ս Գաղ. 2, 11-21)։ Նա, վկայակոչելով իր առաքելական իշխանութիւնը, եկեղեցուն յիշեցնում է. **«Յայտնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, թէ այն Աւետարանը, որ ես ձեզ աւետարանեցի, մարդկային Աւետարան չէ. քանզի ես մարդուց չառայ այն, ոչ էլ որեւէ մէկից սովորեցի, այլ՝ Յիսուս Քրիստոսի յայտնութիւնից»** (Գաղ. 1, 11-12)։ Իսկ մեր Տէր Յիսուս Քրիստոս զգուշացնում էր, որ մենք հնազանդուենք Իրեն ու կատարենք Իր պատուիրանները. **«Ով որ այս պատուիրաններից, փոքրերի՛ց անգամ մի բան կը ջնջի եւ մարդկանց այդպէ՛ս կ՚ուսուցանի, երկնքի արքայութեան մէջ փոքր պիտի համարուի. իսկ ո՛վ կը կատարի եւ կ՚ուսուցանի, երկնքի արքայութեան մէջ նա մեծ պիտի համարուի»** (Մատթ. 5, 19)։

Պօղոս առաքեալը գովում է կորնթացիներին՝ աւանդութիւնները պահելու համար. **«Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամէն ինչում եւ պահում էք աւանդած բաները, ինչպէս որ աւանդեցի ձեզ»**։ Բայց մեր օրերում «աւանդութիւն» բառը, յատկապէս ոչ ուղղափառ եկեղեցիներում, վատ իմաստ ունի։ Այս խնդիրը նոյնիսկ Յիսուսի օրերում է եղել։ Նա ստիպուած էր յանդիմանել փարիսեցիներին եւ օրէնսգէտներին, քանի որ նրանք արհամարհում էին Աստծու պատուիրանը՝ իրենց մարդահնար, պատուիրուած աւանդութեան համար (տե՛ս Մատթ. 15, 1-9։ Մարկ. 7, 1-13)։ Պօղոս առաքեալն զգուշացնում է կողոսացիներին՝ խօսելով նրանց դէմ, ովքեր գրաւում էին ճարտարամտութեամբ ու սնոտի խաբէութեամբ ստիպում էին նրանց հետեւել մարդկային աւանդութեանը, այլ ոչ թէ Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեանը (Կող. 2, 8)։ Նա հրաման է տալիս քրիստոնեաներին՝ հաստատուն մնալ ու պինդ պահել այն աւանդութիւնները, որոնք սովորեցին, ու հեռու մնալ ամէն մի եղբօրից, ով չի ապրում ընդունուած առաքելական աւանդութեան համաձայն (տե՛ս Բ. Թես. 2, 15։ 3, 6)։ «Աւանդութիւն» բառն առաքեալն օգտագործում է այնպիսի ուսմունքներ նկարագրելու համար,

*ինչպիսիք են գլխաշորի գործածումը, Տիրոջ Վերջին ընթրիքը (Ա. Կորն. 11, 23), Քրիստոսի մահը, թաղումն ու յարութիւնը (Ա. Կորն. 15, 3)։ Ուստի գլխաշոր գործածելու վարդապետութիւնն աննշան եւ խորթ սովորութիւն չէ։ Այն առաքելական աւանդութիւն է, որը չի կարելի անտեսել։ Բայց մեր օրերում եկեղեցում աւելի ու աւելի շատ են սկսում արմատաւորուել այն միտումները, որոնք նպատակ ունեն նմանուելու այս մեղսալի աշխարհին, եւ ուղղուած են ընդօրինակելու այս աշխարհի կերպարանքն իր չար սովորութիւններով։ Կրօնական դաստիարակութեան պակասը եւ մեր եկեղեցու ու ժողովրդի պատմութեան մասին թոյլ եւ աղօտ ծանօթութիւնն առաջնահերթ պատճառներ են հանդիսանում քրիստոնէական աւանդոյթներից հրաժարուելու համար։ Այն քրիստոնեաները (լինի կին թէ տղամարդ), ովքեր վիճաբանում են այս եւ այլ հոգեւոր աւանդոյթների դէմ, հաւանաբար անգէտ եւ անտեղեակ են, թէ ժամանակակից աշխարհի մշակութային ու բարոյական արժէքների համակարգի ազդեցութիւնն ինչ աստիճանի են վարակել իրենց միտքն ու խորհրդածումները, հաւատն ու կենցաղավարութիւնը։ Նախնի քրիստոնեաները հաւատում էին, թէ Աստուած ընտրել է իրենց, որպէսզի լինեն աշխարհի լոյսը (տե՛ս Մատթ. 5, 14)։ Սա նշանակում էր չհամակերպուել այս աշխարհի չար սովորութիւններին եւ իրենց հիմքում դրուած չարակամ սկզբունքներին ու դիւահնար արժէքներին։ Ուստի նախնի քրիստոնեաները լաւ էին հասկանում Պօղոս առաքեալի հետեւեալ խօսքը, թէ՝ «**Այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանուէք**» (Հռոմ. 12, 2)։ Առաքելական այս հրամանը կարծես թէ անտեսւում է այսօր շատ քրիստոնեաների կողմից, երբ նրանց համոզեն, օրինակ, թէ քօղով գլուխը ծածկելը կարեւոր բան չէ այսօր, քանի որ կան շատ աւելի կարեւոր խնդիրներ, քան այսպիսի մանրուքների մասին խորհել ու խօսել։ Այսօր ակնյայտ է, թէ աշխարհիկ մշակոյթի հզօր ազդեցութեան տակ շատ քրիստոնեաներ նախընտրում են նուազագոյն դիմադրութեան ճանապարհը՝ կերպարանակից դառնալով այս աշխարհին։ Պօղոս առաքեալն ասում է, թէ մենք պէտք*

է ոչ թէ ընդօրինակենք այս աշխարհի կերպարանքը, այլ նմանուենք իրեն, ինչպէս ինքն է ջանում նմանուել Յիսուս Քրիստոսին: Աշխարհին նմանուելը մահ է առաջ բերում, իսկ Տիրոջը նմանուելն ուղղորդում է փրկարար կեանքի: Զարմանալի չէ, որ Պօղոսը առաքեալը Կորնթոսի եկեղեցուն գրում էր, թէ սէրն առ Աստուած ապաշխարութիւն է առաջ բերում փրկութեան համար, իսկ աշխարհասիրութիւնը մահ է առաջ բերում (տե՛ս Բ. Կորն. 7, 10):

*Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն այսպէս է մեկնաբանում Պօղոս առաքեալի խօսքը. «**Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամէն ինչում**»: «Երբ մեղքի գոյութիւնն անկասկածելի է, այդ ժամանակ առաքեալը խստօրէն յանդիմանում է ու նախատում, իսկ երբ մեղքի գոյութիւնն առարկելի է, ապա սկզբից ապացուցում է ու յետոյ յանդիմանում: Խօսելով անառարկելի մեղքի մասին՝ ցոյց է տալիս նրա կարեւորութիւնը, իսկ խօսելով կասկածելի մեղքի մասին՝ ապացուցում է մեղաւորութեան վաւերականութիւնը... Այսպիսով, ամբողջովին աւարտելով խօսքն այս ամէնի մասին՝ անցնում է մէկ այլ մեղքի: Ո՞րն էր այդ մեղքը: Կանայք գլխաբաց աղօթում էին ու մարգարէանում, քանի որ այն ժամանակ մարգարէանում էին նաեւ կանայք, իսկ տղամարդիկ, նմանուելով իմաստասիրութիւն ուսումնասիրողներին, երկարացնում էին իրենց մազերը եւ ծածկում իրենց գլուխները, երբ աղօթում ու մարգարէանում էին՝ երկու դէպքում էլ հետեւելով հեթանոսական օրէնքին: Առաքեալը, գտնուելով կորնթացիների մօտ, արդէն խրատել էր նրանց այս թեմայի վերաբերեալ, բայց քանի որ ոմանք հնազանդուեցին իրեն, իսկ ոմանք էլ անհնազանդ գտնուեցին, նա նորից գրաւոր կերպով, որպէս իմաստուն բժիշկ, յանդիմանական խօսքով ուղղում է մեղքը: Իսկ այն, որ անձամբ էր խրատում այս մասին, երեւում է իր ճառի սկզբից: Իսկապէս, գրութեան մէջ այս մասին սկզբում ոչ մի բան չասելով, այլ խորհելով ուրիշ մեղքերի մասին՝ նա յանկարծ ասում է. «**Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամէն ինչում եւ պահում էք աւանդած բաները, ինչպէս որ աւանդեցի ձեզ**»: Ակնյայտ է, թէ*

նրանց, ովքեր հնազանդուեցին իրեն, գովում է, իսկ ուրիշներին, որոնք անհնազանդ գտնուեցին, ուղղում է հետեւեալ խօսքերով. **«Իսկ եթէ մէկն ուզում է առարկել, մենք չունենք այդպիսի սովորութիւն, ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները»** (Ա. Կորն. 11, 16)։ Եթէ առաքեալը նախատէր բոլորին՝ ինչպէս հնազանդներին, այնպէս էլ անհնազանդներին, ապա առաջինների մէջ կը բորբոքէր զայրոյթը, իսկ վերջինների մէջ կ՚ամրապնդէր ամփոփութիւնը։ Բայց հիմա ոմանց գովելով ու սատարելով եւ ուրիշներին նախատելով՝ նա քաջալերում է առաջիններին, իսկ վերջիններին ամօթով է թողնում։ Թէեւ նախատինքն ինքնին կարող է ազդեցիկ լինել, բայց աւելի արդիւնաւէտ է լինում, երբ զուգորդուած է լինում պիտանի գովասանքով։ Այդ պատճառով էլ նա սկսում է ոչ թէ նախատինքով, այլ գովելով։ Ի դէպ, մեծ գովասանքով ասում է. **«Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամէն ինչում»**։ Այսպէս է սովորաբար հանդէս գալիս Պօղոսը, երբ փոքր ինչ արժանիքների համար վարձատրում է մեծ գովասանքներով, եւ սա անում է ոչ շողոքորթութեամբ. քա՛ւ լիցի։ Կարո՞ղ էր արդեօք շողոքորթութիւն անել նա, ով երբէք չի փնտռել փող, փառք կամ էլ նման որեւէ բան, այլ ամէն ինչում միայն նկատի է ունեցել նրանց փրկութիւնը։ Այս պատճառով ամրապնդում է գովասանքով. **«Գովում եմ ձեզ, որ յիշում էք ինձ ամէն ինչում»**։ Ինչ է «ամէն ինչում» ասուածը։ Նա խօսում էր միայն մազերը չերկարացնելու եւ գլուխը չծածկելու մասին, բայց, ինչպէս ասել էի, ամրապնդում է գովասանքով, որպէսզի նրանց աւելի ջանասէր դարձնի։ Ասում է. **«Յիշում էք ինձ ամէն ինչում եւ պահում էք աւանդած բաները, ինչպէս որ աւանդեցի ձեզ»**։ Հետեւաբար, նա դեռ սկզբից նրանց շատ բաներով էր խրատում ոչ գրաւոր կերպով, ինչպէս որ յայտնում է այս մասին շատ այլ տեղերում։ Բայց սկզբից նա թողել էր միայն նրանց աւանդութիւնը, իսկ հիմա աւելացնում է նաեւ պատճառը։ Այսպիսով, նա էլ աւելի է ամրապնդում հնազանդներին եւ յանդիմանում անհնազանդների հպարտութիւնը։ Չի ասում,

*թէ դուք հնազանդուեցիք, իսկ միւսները չհնազանդուեցին, բայց բառացիօրէն չարտայայտուելով այս մասին՝ այնուհետեւ ակնարկում է իր յետագայ խրատներում։ «**Ուզում եմ, որ դուք իմանաք, թէ ամէն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած**» (Ա. Կորն. 11, 3)։ Սա է պատճառը»[1]։*

*Այսպիսով, ամփոփելով կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլխի առաջին երկու նախադասութիւնները՝ ուզում ենք նորից յիշեցնել, թէ ամէն բան, ինչ որ այստեղ խօսում է Պօղոս առաքեալը, Աստծու ճշմարիտ խօսքն է։ Այլապէս, հակառակն ասելը փորձ է՝ վարկաբեկելու Սուրբ Գրքի իսկութիւնը։ Կորնթացիներն արդէն անցեալում բաւական բաներ էին սովորել Պօղոս առաքեալից, բայց առաքեալը ցանկանում է յիշեցնել քրիստոնէական աւանդութիւնները եւ աւելացնել նոր գիտելիքներ, քանի որ ասում է. «**Ուզում եմ, որ դուք իմանաք...**»։ Եւ յետոյ նա յայտարարում է. «**Ինչ որ գրեցի ձեզ, Տիրոջ պատուիրաններն են**» (Ա. Կորն. 14, 37)։ Եթէ նա ցանկանում է, որ եկեղեցին նոր բան իմանայ, ուրեմն որքա՜ն կարեւոր էր իր համար, որ Տիրոջ այս պատուիրանը կատարուի։ Իսկ ո՞րն էր այն պատուիրանը, որ Տէրը վստահել էր առաքեալին աւետարանելու, եւ որո՞նք են այն հիմնական պատճառները՝ եկեղեցում եւ աղօթելիս գլուխը քօղով ծածկելու։ Առաքեալն իր պատճառաբանութիւնն սկսում է հետեւեալ խօսքերով. «**Ամէն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած**» (Ա. Կորն. 11, 3)։*

«Ուզում եմ, որ դուք իմանաք, թէ ամէն մարդու գլուխը Քրիստոս է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած» *(Ա. Կորն. 11, 3)։*

1 Свт. Иоанн Златоуст, Толкования на 1 Кор. 11:1-2.
Տե՛ս http://bible.optina.ru/new:1kor:11:02 (առ 29/03/2017)։

*Սրանք են Աստծու անջնջելի տնօրինութեան երեք մեծագոյն սկզբունքները, որ ընդհանուր հատուածում կարելի է ասել առաքեալի հիմնական թեզն է: Բայց շատ անգամներ այս հատուածը սխալ է օգտագործւում: Յաճախ այն մեկնաբանւում է որպէս արական սեռի գերազանցութեան ապացոյց: Եւ այդ պատճառով, գրութիւնը կորցնում է իր կարեւոր աստուածաբանական սկզբունքը, որին առաքեալն ուզում է յայտնել: Գլխաշորի գործածումը շատ աւելի խորը իմաստ ունի: Ինչո՞ւ է կինը պարտաւոր քօղով իր գլուխը ծածկել: Եկեղեցում Սուրբ Պատարագի ժամանակ կինն աղօթքի է կանգնում Սուրբ Հաղորդութեան ներկայութեան առջեւ: Քօղը կանանց հանդիսաւոր ծիսական զգեստաւորումն է եկեղեցում, որ խորհրդանշում է ուղղափառ հաւատացեալի հաւատն առ Քրիստոսի մարմնացումը, երբ Սուրբ Հաղորդութեան սրբագործութեամբ եկեղեցին մարմնաւորում է Քրիստոսի խորհրդաւոր Մարմինը: Պէտք է հաշուի առնել, որ կորնթացիներին ուղղուած նամակի 11-րդ գլուխը Սուրբ Հաղորդութեան խորհրդի մասին է՝ այն առումով, որ գրութեան այդ գլուխն ընդհանրապէս կենտրոնանում է Սուրբ Պատարագի՝ Հաղորդութեան խորհրդի վրայ: Մասնաւորապէս, գլխաշոր գործածելու պարտաւորութեան պատճառներին հետեւող Ա. Կորն. 11-րդ գլխի 17-34-րդ հատուածներն ամբողջութեամբ Սուրբ Հաղորդութեան մասին են: Պօղոս առաքեալը, ասելով «**ամէն մարդու**[1] **գլուխը Քրիստոսն է**», յայտնում է, թէ Քրիստոս եկաւ այր մարդու բնութիւնն ու կերպարանքը վերցնելով, եւ այս պատճառով տղամարդը դարձաւ Քրիստոսի «ֆիզիկական ներկայացուցիչը»: Առաքեալն առաջ է քաշում մարմնաւորման գաղափարը: Նա ասում*

1 Այստեղ՝ «մարդը» ասելով պէտք է հասկանալ՝ տղամարդը: Գրաբար բնագրում «մարդ» բառի փոխարէն գրուած է «առն» եւ «այր», որ թարգմանւում է «այր մարդը» կամ «տղամարդը»: «Կամիմ զի գիտիցէք դուք, եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոս է, և գլուխ կնոջ՝ այր, և գլուխ Քրիստոսի՝ Աստուած»: Արեւմտահայերէն թարգմանութիւնն էլ նշում է «այր մարդը»: «Բայց կ'ուզեմ որ գիտնաք թէ ամէն այր մարդու գլուխը Քրիստոսն է ու կնոջ գլուխը՝ այր մարդը եւ Քիստոսի գլուխը՝ Աստուած»:

է, թէ Քրիստոս մարմնացաւ ու մարդացաւ՝ վերցնելով այր մարդու բնութիւնը։ Եւ քանի որ դա այդպէս է, ապա տղամարդը դառնում է Քրիստոսի «ֆիզիկական ներկայացուցիչը» (յատկապէս եթէ նա հանդիսանում է որպէս ամուսին)։ Իսկ երբ առաքեալն ասում է «կնոջ գլուխը՝ մարդը», չի ասում, թէ ամուսինը գերազանց է իր կնոջից։ Այստեղ նա ուզում է ասել, որ եթէ ամուսինը Քրիստոսի մարմնացման «ֆիզիկական ներկայացուցիչն» է, ապա նրա կինը «ֆիզիկական ներկայացուցիչն» է Քրիստոսի Հարսի, այսինքն՝ Եկեղեցու։ Պօղոս առաքեալը, երբ ասում է «այր մարդը», նկատի ունի կնոջ եւ երկրային ամուսնուն, եւ Քրիստոսին։ Այս պատճառով կանայք իրենց վրայ են վերցնում Քրիստոսի Եկեղեցու խորհրդանշանական դերը։ Նրանց համար, ովքեր չգիտեն այս սկզբունքները, դժուար է հասկանալ ծածկոյթի խորհուրդը ու ճշմարտապէս գնահատել հսկայական կապը այդ խորհուրդի եւ Աստծու տիրապետական տնօրինութեան միջեւ։

*Ինչ է նշանակում «գլուխ»-ն ընդհանրապէս։ Սբ. Գրիգոր Տաթեւացին ասում է. «Առաջին՝ գլուխը պատուական մասն է՝ ներքին եւ արտաքին զգայութիւններով զարդարուած։ Երկրորդ, տէր եւ իշխան է բոլոր անդամներին, ինչպէս թագաւորը բոլոր հնազանդուածներին։ Երրորդ, եթէ անդամներից մէկը կորչի, գլուխը չի մեռնի. իսկ գլխի կորչելուց կենդանին կը մեռնի։ Դրա համար էլ պատուական է բոլոր անդամներից։ Չորրորդ, կենդանութիւնը, զգայութիւնը եւ ուսումը նրանից է հեղուում ողջ մարմնին, դրա համար էլ կոչւում է գլուխ, քանի որ նրանից է գալիս կեանքի, զգայութեան, կերակրի, ուսման առատ հոսումը, եւ իջնելով ոռոգում է մարմինը։ Սա մարմնապէս. դրա համար թագը դնում են գլխին։ Այսպէս եւ մարտիրոսների հոգեւոր պսակը գլխին էր իջնում, ինչպէս քառասուն մանուկներինը, Ղեւոնդեաններինը եւ շատ այլոց։ Գլուխ նշանակում է Քրիստոս, որովհետեւ «**ամէն տղամարդու գլուխը Քրիստոս է**», որովհետեւ Նրանից է իջնում շնորհների առատ հոսումը մեզ վրայ, ըստ այնմ՝ «**Ինչպէս իւղը, որ իջնում է Ահարոնի գլխի ու մօրուքի վրայ**» (Սաղմ.*

132, 2)։ Գլուխներ են եկեղեցում առաքեալները, մարգարէները, վարդապետները, նոյնպէս էլ նրանց փոխանորդները։ Սրանք են ընդունում զանազան շնորհների ու պսակների պատիւը. յետոյ նրանց ձեռքով՝ ամբողջ ժողովուրդը»[1]։ Եկեղեցում գլուխը քօղով ծածկած կինը ներկայացնում է Աստծու ժողովուրդը (եւ՛ տղամարկանց, եւ՛ կանանց), խորհրդանշում է մարտիրոսների հնազանդութեան հոգեւոր պսակը, շնորհների ու պսակների պատիւը։ Ընդունելով սբ. Աստուածածնի պատկերի նմանութիւնը՝ Քրիստոսի հետ թագակից է դառնում նաեւ կինը։

Պօղոս առաքեալը բացայայտում է գլխաւորութեան ու հնազանդութեան սկզբունքները քրիստոնէական ընտանիքներում եւ եկեղեցում։ Ամուսինն իր կնոջ գլուխն է։ Քրիստոս գլուխն է ամուսնու։ Հայր Աստուած՝ Քրիստոսի գլուխն է։ Մենք տեսնում ենք, թէ միայն Հայր Աստուած ենթակայ չէ՝ «գլուխ» ունենալու։ Իսկ, ըստ Աստծու տիրապետական տնօրինութեան գերակայութեան ու դիրքի, ամէն ոք գտնւում է հոգեւոր նուիրապետութեան եւ իշխանութեան որոշակի փուլում, որպէսզի ամէն բան լինի կարգով ու կանոնով եւ չլինի անիշխանութիւն կամ անկարգութիւն։

*Ինչ վերաբերում է շնորհաբաշխութեանը, պատուիրանապահութեանն ու փրկութեանը, ապա տղամարդկանց ու կանանց միջեւ ոչ մի տարբերութիւն չկայ (տե՛ս Գաղ. 3, 27-29)։ Նոյնպէս ամուսնական իրաւունքի առջեւ կինը հաւասար է տղամարդուն, թէեւ պիտի հաշուի առնել, որ հասարակարգը նահապետական է։ Կինն ու ամուսինը համատեղ «**կեանքի շնորհի ժառանգակիցներ**» են ի Քրիստոս (Ա. Պետր. 3, 7)։ Նրանց «հաւասարութիւնն» այն է, թէ տղամարդիկ ու կանայք ունեն փրկութեան նոյն յոյսը։ Սակայն նոյն հատուածում Պետրոս առաքեալը, կանանց կոչելով «դիւրաբեկ անօթ» կամ «տկար անօթ», ցոյց է տալիս, թէ տղամարդկանց ու կանանց միջեւ այնուամենայնիւ կայ մի էական տարբերութիւն։ Այնպէս որ*

1 Սբ. Գրիգոր Տաթեւացի, «Երգ Երգոցի մեկնութիւնը», Անկիւնաքար, Երեւան, 2007, էջ 61։

Աստուածաշունչը երբէք չի հաստատում, թէ տղամարդկանց ու կանանց միջեւ կայ հաւասարութիւն բոլոր ոլորտներում: Աստուած Նոր Կտակարանում արդէն եօթն անգամ պատուիրում է, որ կանայք հնազանդ լինեն իրենց ամուսիններին (տե՛ս Եփես. 5, 22-24: Եփես. 5, 33: Ա. Կորն. 11, 3: Տիտ. 2, 4-5: Ա. Տիմ. 2, 12: Ա. Պետր. 3, 1): Եթէ կինն ամէն ինչում հաւասար է տղամարդուն, ապա ինչպէ՞ս հնարաւոր կը լինի կատարել հետեւեալ պատուիրանը. «**Եւ ես թոյլ չեմ տալիս, որ կին արարածը ուսուցանի կամ էլ խօսքով իշխի տղամարդու վրայ, այլ թող լուռ մնայ**» (Ա. Տիմ. 2, 12): Ինչո՞ւ է Աստուած Եւային արարել՝ լինելու իր ամուսնու «օգնական»-ը, եւ ինչո՞ւ նրան հրամայեց՝ «**քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ**» (Ծննդ. 3, 16): Այստեղ, եբրայերէնից թարգմանուած՝ «իշխի» բառն այն նոյն բառն է, որ նշւում է Եսայու մարգարէութեան 40-րդ գլխի 10-րդ ու Զաքարիայի մարգարէութեան 6-րդ գլխի 13-րդ համարներում, երբ խօսւում է Յիսուս Քրիստոսի՝ Աստծու գալիք թագաւորութիւնում ժողովրդների հանդէպ «իշխանութեան» ու «տիրապետութեան» նուիրապետութեան մասին: Մենք չենք կարող ասել, թէ այս պատուիրանն արտացոլում է միայն այն ժամանակուայ ժողովրդների տեղական մշակութային պատկերացումները: Ինչո՞ւ է կանանց պատուիրուած ծածկել իրենց գլուխները, եթէ պիտի լինէր տղամարդկանց ու կանանց հաւասարութիւն: Ինչո՞ւ Սառան՝ Աբրահամի կինը, ամուսնու գերակայութեանը հնազանդուելով, ու նրան իր «տէր»-ը կոչելով, դարձաւ օրինակ բոլոր քրիստոնեայ կանանց համար (տե՛ս Ա. Պետր. 3, 1-7): Ինչո՞ւ Եւան նոյն կերպով Ադամի հետ չպատժուեց, եթէ տղամարդն ու կինն ամէն ինչում ստեղծուել են հաւասար: Հասկանալի է, թէ պատիժը որոշուել էր՝ իւրաքանչիւրի այն դերի համապատասխան, որի համար նրանք ստեղծուել էին: Հէնց այս պատճառով հրամայուած է, որ կանայք իրենց մէջ զարգացնեն որոշ յատկութիւններ, իսկ տղամարդիկ՝ բոլորովին տարբեր (տե՛ս Ա. Պետր. 3, 4-7): Տղամարդկանց ու կանանց հոգեւոր հաւասարութիւնն ի Քրիստոս ընդհանրապէս չի նշանակում, թէ նրանց

*յարաբերութիւնների միջեւ պէտք է բացակայի գլխաւորութիւնը։ Գլխաւորութեան, ենթակայութեան, միմեանց հնազանդութեան թեմաները կազմում են սուրբ գրութիւնների հիմնական սկզբունքը։ «Ծննդոց» գրքում կարդում ենք, թէ Աստուած ասաց. «**Մարդ**[1] **ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ**» (Ծննդ. 1, 26)։ Այս բառերը ցոյց են տալիս, թէ առաջին մարդը՝ Ադամը, ստեղծուեց Աստծու կերպարանքով ու նմանութեամբ։ Իսկ այն հատուածում, որտեղ պատմում է մարդկութեան ցեղի՝ արուի եւ էգի արարչութեան մասին, «մեր կերպարանքով» բառերն արդէն չեն հանդիպում։ «**Եւ Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց**» (Ծննդ. 1, 27)։ Բնութեամբ տղամարդն ու կինը հաւասար են ստեղծուած, բայց ծագմամբ որոշակի անհաւասարութիւն է լինում, ինչը բնական է զուտ աստուածաշնչեան տարբերակով ու ծագումնաբանական իմաստով։ Տղամարդն ստեղծուած էր Աստծու կերպարանքով, կինը՝ տղամարդու կերպարանքով։ Ուստի կինն Աստծու պատկերն է, քանի որ ստեղծուած է տղամարդու կերպարանքով (իհարկէ ոչ բացարձակ արտաքին նմանութեամբ), որն Աստծու պատկերն է (տե՛ս Ծննդ. 1, 27)։ Նոր Կտակարանում ասւում է, թէ Եդեմում մեղք գործեց Ադամը, եւ ոչ թէ Եւան։ Այստեղից էլ գործածութեան մէջ է «ադամական մեղք» արտայայտութիւնը՝ նկատի ունենալով նախածնողների՝ Ադամի ու Եւայի անհնազանդութիւնը աստուածային միակ պատուիրանին, թէեւ առաջին անհնազանդը եղաւ Եւան եւ ապա՝ Ադամը։ Այսպէս, Եւան ինքնաբերաբար համարւում է Ադամին կից՝ որպէս թէ ներառնուած «Ադամի մէջ»։ Աստուած Իր ուխտը կնքեց ամբողջ ժողովրդի՝ տղամարդկանց եւ կանանց հետ, թէեւ այդ ուխտի նշանը՝ թլփատութիւնը, բացառապէս միայն տղամարդկանց մարմնի վրայ էր գործադրւում։ Իհարկէ, կանայք ինքնաբերաբար տղամարդկանց կից էին համարւում։ Այդպէս էլ, «**մէկ առ մէկ հաշուառման ենթարկեցէք իսրայէլացի ամբողջ ժողովրդին**»*

1 Եբրայերէն՝ Ադամ։

*Տիրոջ պատուիրանը Սինայի անապատում՝ վկայութեան խորանում, ներառում էր միայն «արական սեռի բոլոր մարդկանց», այն էլ՝ «**քսան տարեկան եւ աւելի բարձր տարիք ունեցող**»-ներին (Թուեր 1, 2-3: 26, 2). կանայք, երեխաներն ու ծերերը նոյնպէս այդ հասարակութեան անդամներն էին, բայց նրանք ինքնաբերաբար հաշուառւում էին արական սեռին կից՝ որպէս թէ «նրանց մէջ են»: Նմանապէս, Քրիստոս Ինքը տեսանելի պատկերն է աներեւոյթ Աստծու (տե՛ս Կող. 1, 15): Իսկ Քրիստոսի նախապատկերն էր Ադամը: Ինչպէս Տէր Աստուած Ադամի կողոսկրից արարեց Եւային, այդպէս էլ եկեղեցին ծնունդ առաւ խաչեալ Քրիստոսի խոցուած կողից: Այն փաստը, թէ Եւան անմիջականօրէն ստեղծուեց Աստծու պատկերով, յուշում է, թէ եկեղեցին նոյնպէս այդկերպ ստեղծուեց Աստծու պատկերով՝ անկախ Քրիստոսի հետ մեր ունեցած յարաբերութիւններից: Ամբողջ «Ծննդոց» գրքի 2-րդ գլխում Ադամը յաճախ կոչւում է «մարդ» (տե՛ս Ծնն. 2, 7-8. 15-16. 18. 19-20. 22), իսկ «Ծննդոց»-ի 3-րդ գլխի, 22-24-րդ համարներում կարդում ենք, թէ Տէր Աստուած բերկրութեան դրախտից արտաքսեց միայն Ադամին: Ակնյայտ է, թէ Եդեմից արտաքսուեց նաեւ Եւան, բայց այդ մասին չի խօսւում, քանի որ նա որպէս թէ ներառնուած է «Ադամի մէջ»: Հռոմէացիներին ուղղուած նամակում Պօղոս առաքեալը խօսում է Ադամի յանցանքի մասին՝ ասելով. «**Մէկի յանցանքով շատեր մեռան**» (Հռոմ. 5, 14-15), բայց մի ուրիշ տեղ նոյն առաքեալն ասում է. «**Եւ Ադա՛մը չխաբուեց, այլ կի՛նը խաբուեց եւ յանցանք գործեց**» (Ա. Տիմ. 2, 14): Այստեղ Եւան է մեղաւորը, իսկ հռոմէացիներին ուղղուած ամակում Ադամն է հիմնական մեղաւորը: Այնպէս որ, նրանք երկուսով մեղք գործեցին, բայց հռոմէացիներին ուղղուած նամակում Եւայի մասին յստակ ոչ մի բան նշուած չէ, քանի որ նա ընգրկուած է «Ադամի մէջ»: Սակայն, ի հակադրութիւն սրան, նոյն օրինակով, մենք պիտի կենդանանանք Քրիստոսով (Ա. Կորն. 15, 21-23), որպէսզի Նրա արդարութեամբ մենք էլ արդարանանք:*

«Կնոջ գլուխը մարդն է». նշանակում է, թէ նրանք կապուած

են մի այնպիսի կապով, որի դէպքում թէ՛ գլուխը՝ տղամարդը, թէ՛ մարմինը՝ կինը, պէտք է փոխադարձ սիրեն ու յարգեն միմեանց: Ամուսնու գլխաւորութիւնը չի նշանակում գերազանցութիւն կամ բռնակալութիւն: Ամուսինը պէտք չէ դառնայ բռնապետ: Նրա վրայ դրուած է մեծ պատասխանատուութիւն: Ամուսինը պէտք է ճանաչի իր ենթակայութիւնը Քրիստոսին, իսկ նրա կինը՝ իր ենթակայութիւնն ամուսնուն: Սա է գլխաւորութեան սկզբունքը: Ամուսինն իր ընտանիքում որոշում կայացնողն է, բայց նա նաեւ պատասխանատու է իր կնոջ եւ երեխաների հոգեւոր, մտային ու նիւթական բարեկեցութեան համար: Գլխաւորութեան կարգը գերազանցութեան կարգ չէ, այլ խնդիր է իշխանութեան: Եթէ գլխաւորութիւնն այդքա՜ն անհրաժեշտ եւ օգտակար է աստուածային Հայր-Որդի յարաբերութիւնների միջեւ՝ ըստ մարդեղութեան խորհրդի, ապա որքան աւելի դա կարեւոր եւ անհրաժեշտ է մարդկային հասարակութեան յարաբերութիւնների միջեւ: Ամուսինն ու կինը միայն այն ժամանակ են վայելում Աստծու օրհնութիւնները, երբ իրենց կեանքի ընթացքում ենթարկւում են գլխաւորութեան այն դիրքորոշմանը, որն Աստուած կարգել է նրանց բարեկեցութեան համար: Որպէսզի աւելի լաւ հասկանանք գլխաւորութեան իմաստն ու արժէքը ամուսնու եւ կնոջ յարաբերութիւններում, փորձենք հասկանալ Աստծու եւ Քրիստոսի յարաբերութիւնները: Ինչպէս որ գլխի քօղը ոչ մի կապ չունի տղամարդկանց գերազանցութեան ու գերիշխանութեան հետ, այնպէս էլ կանանց՝ արական սեռին բռնի իշխանութեան ենթարկուելու հետ: Առաջին հերթին, քօղի գործածումը խորհրդանշում է մեր հաւատը Քրիստոսի մարմնացման նկատմամբ, եւ Նրա իրական ներկայութիւնը Սուրբ Հաղորդութեան մէջ: Եւ երկրորդ, այն խորհրդանշում է կնոջ հնազանդութիւնն իր ամուսնուն, հրեշտակներին ու Քրիստոսին:

Քրիստոնէութիւնը կնոջը վեր հանեց աւելի բարձր հեղինակութեան: Շեշտելով տղամարդու գլխաւորող դերը՝ միեւնոյն ժամանակ այն չի նսեմացնում կնոջ դերը: Երկու սեռերի միջեւ կա-

նայք շատ աւելի «փառայեղ» են տղամարդկանցից՝ իրենց արտաքին գեղեցկութեամբ, դիւրազգացութեամբ ու վայելչութեամբ: Եթէ ուշադիր կարդանք «Ծննդոց» գրքի առաջին գլուխները, ապա կարելի է տեսնել, թէ տղամարդն ստեղծուեց դրսի անյայտութիւնից՝ երկրի փոշուց, իսկ կինը դուրս բերուեց ներսից՝ տղամարդու խորհրդաւոր կողոսկրից, եւ արարուեց դրախտի պարտէզում: Սա առաւել վեր է, քան փոշուց ստեղծուելը: Տղամարդը ստեղծուեց պարտէզից դուրս (տե՛ս Ծնն. 1, 8), որի համար ասում են կինը մի «դրախտային» արարչութիւն է: Դեռեւս հին ժամանակներում կնոջ մազերը համարւում էին իր փառքն ու պատիւը (տե՛ս Երգ. 6, 5): Բացի դրանից՝ կանանց շնորհուած է մայրութեան յատուկ պարգեւը: Աստուածաշունչն ասում է, թէ Աստուած Ինքն է ստեղծում կենդանի մարդկային հոգի մօր որովայնում, երբ նա յղիանում է (Սաղմ. 138, 13-16): Այսպիսով կնոջ մարմինը դառնում է Աստծու արարչական զօրութիւնների մի սրբազան անօթ:

Եւան առաջինն ասաց «Աստուած» բառը: Աստծուն երախտագիտութեան առաջին օրհերգութիւնը կատարեց կինը՝ Մովսէսի քոյր Մարիամը. «**Մարիամ մարգարէն՝ Ահարոնի քոյրը, իր ձեռքն առաւ թմբուկը, եւ բոլոր կանայք գնացին նրա յետեւից՝ թմբուկ խփելով ու պարելով: Առջեւից գնում էր Մարիամն ու ասում. «Օրհնենք Տիրոջը, քանզի նա փառքով է փառաւորուած. նա երիվարներն ու հեծեալներին ծովը թափեց»**» (Ելք 15, 20-21): Զմուռս կրող կանայք առաջինն արժանացան մեծագոյն պատուին՝ Տիրոջ յարութեան վկաները դառնալու: Նրանք իրենց սիրով ու հաւատով յաղթահարելով վախը՝ գիշերն այցելում են Տիրոջ գերեզմանը: Եւ Փրկչի հանդէպ այդ սէրն ու նուիրուածութիւնն արժանանում են աւելի մեծ պատուի՝ առաջին անգամ տեսնելու Յիսուսին Իր յարութիւնից յետոյ: Նրանք այդ մեծագոյն հրաշքի մասին պատմեցին միւս աշակերտներին: Նրանք առաքեալների համար որպէս առաջին առաքեալներ եղան, քանի որ առաքեալը նա է, ով առաքուած է Տիրոջ կողմից՝ աւետարանելու Քրիստոսի յարութեան եւ Քրիստոսով

փրկութեան մասին բարի լուրը։ Մենք գիտենք քրիստոնէութիւնը տարածած կանանց բարձր արժէքը, որոնք զարմացնում էին իրենց սիրով, խորը հաւատով եւ ողջախոհութեամբ։ Աւետարանների մանրակրկիտ ընթերցումը ցոյց է տալիս, թէ ոչ մի կին չի եղել մասնակից՝ հալածելու մեր Փրկչին Իր երկրային կեանքի ընթացքում։ Որքա՜ն շատ էին ատելութիւնը, հայհոյանքը, հերիւրանքը, վնասակար յետապնդումները Յիսուսի դէմ։ Այս ամէնը մեր Փրկչին Գողգոթա բերեց։ Բայց այս ամէնում որեւէ կին ներգրաւուած չէր։ Ոչ մի կին երբէք չհայհոյեց Յիսուսին։ Փարիսեցիներն ու դպիրները, իմանալով սուրբ գրութիւնների իւրաքանչիւր տառը, չէին ընդունում Յիսուսին՝ որպէս Մեսիայի։ Սակայն մի պարզ սամարացի կին հաւատաց Քրիստոսին եւ յետոյ քաղաքի բոլոր բնակիչներին սկսեց քարոզել Նրա մասին։ Շատ դէպքերում կանանց հոգեւոր ըմբռնման պարգեւը շատ աւելի խորն է եւ գործնական՝ համեմատած այն նոյն կարողութիւնների հետ, որոնք վայելում էին տղամարդիկ։ Օրինակ՝ համեմատենք Տիրոջ զրոյցը Նիկոդէմոսի ու սամարացի կնոջ հետ, որոնք արձանագրուած են Յովհաննէսի աւետարանի 3-րդ եւ 4-րդ գլուխներում։ Տղամարդը չի հասկանում, թէ ինչ է ասում իրեն Յիսուսը։ Նա չի ըմբռնում Տիրոջ խօսքերի տրամաբանութեան խորը իմաստը։ Իսկ սամարացի կինը, ընդհակառակը, Տիրոջ բոլոր ասուածներն ըմբռնում է անմիջապէս, եւ անգամ պատասխանում է Տիրոջը նոյն իսկ հոգեւոր լեզուով։ Արդեօք մեծ պատիւ չէ՞ սա։ Որքա՜ն շատ է Աւետարանը բարձրացնում կնոջ դէրը։ Տղամարդիկ յաճախ լրջօրէն չէին հասկանում իրենց Տիրոջը։ Խաչելութիւնից առաջ նրանք կարծում էին, թէ Յիսուս եկաւ յաղթելու հռոմէացիներին եւ այդպիսով այստեղ՝ երկրի վրայ, անմիջապէս հաստատելու Աստծու Արքայութիւնը։ Նրանք խնդրում էին, որպէսզի Յիսուս ցոյց տայ Հօրը՝ ցանկանալով տեսնել մօտաւորապէս նոյն յայտնութիւնը, ինչ որ տրուած էր Մովսէսին։ Նրանց գիտակցութեանը հասու չէր այն իրողութիւնը, որ Նա եւ Իր վերահաս մահն են այդ յայտնութիւնը, որ այնքան խիստ ցանկանում էին տեսնել։ Սակայն Տիրոջ մահուան

իմաստը հասկանալի էր մի կնոջը, ով օծում էր Նրա մարմինը մինչեւ Նրա մահն ու թաղումը: Սրանք էին այն կանայք, որոնք առաջինը գիտակցեցին Տիրոջ յարութիւնը այն դէպքում, երբ արական սեռի աշակերտների համար կանանց պատմած խօսքերը բարբաջանք էին թւում եւ որոշ արհամարհանքով էլ ծիծաղում էին նրանց վրայ: Ուշադրութիւն դարձրէք կանանց այն խոնարհութեանը, որը նշւում է Աւետարաններում: Տանջալից մահուան դատապարտութեան վճռական պահերին աշխարհի Փրկչին փորձում է օգնել կարեկցանքով ու համակրանքով լցուած մի հեթանոս կին՝ Պիղատոսի կինը: Պիղատոսը մի մարդ էր, ով քաղաքական շահերի համար, Տիրոջը մահուան դատապարտեց եւ միւս դատապարտողներին հաւանութիւն տուեց: Բայց նրա կինը, երազում (որը յստակ արտացոլումն էր իր ենթագիտակցական հասկացողութեան) տեսաւ, թէ Յիսուս Աստծու արդարն է[1]: Երկար տարիներ վանական կեանքում սխրագործութիւններ կատարելուց յետոյ Մակար Մեծը աղօթքի ժամանակ լսում է հետեւեալը. «Մակա՛ր, դու դեռ չես հասել այն կատարելութեան, ինչպէս այն երկու կանայք են, որ ապրում են քաղաքում»[2]: Այսօր կարելի է նկատել, թէ կանանց շրջանում զգալիօրէն աւելի շատ հաւատացեալներ կան, քան տղամարդկանց: Այս մասին կարելի է հեշտութեամբ համոզուել, եթէ մտնենք եցանկացած եկեղեցի պաշտամունքի ժամանակ:

Միայն քրիստոնէութիւնն է, որ Աստծու առջեւ ու հոգեւոր աշխարհում հռչակում է տղամարդկանց եւ կանանց հաւասարութիւն: Նկարագրելով քրիստոնէական յարաբերութիւնները՝ Պօղոս առաքեալը նշում է. ***«Խտրութիւն չկայ ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ո՛չ ազատի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի. որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս»*** *(Գաղ. 3, 28): Հետեւաբար, հաւատքի*

1 Պիղատոսի կինն ուղերձ է յղում նրան՝ խնդրելով, որ նա Յիսուսին մահուան չդատապարտի՝ ասելով. «Քո եւ այդ արդարի միջեւ ոչինչ չկայ, որովհետեւ այսօր երազումս նրա պատճառով գլխովս շատ բաներ անցան» (Մատթ. 27, 19):

2 Տե՛ս http://days.pravoslavie.ru/Life/life247.htm (առ 17/03/2017):

կեանքում չկան արտաքին տարբերութիւններ տղամարդկանց ու կանանց միջեւ: Սակայն հաւասարութիւնն ի Քրիստոս չի նշանակում մարմնաւոր հաւասարութիւն: Ճիշդ է, Քրիստոսով խտրականութիւն չկայ տղամարդու ու կնոջ միջեւ, սակայն կինն ու տղամարդը նոյնը չեն: Կնոջ ու տղամարդու իրաւունքներին անդրադառնալիս պէտք է նշել, թէ կայ շփոթութիւն այս առումով: Եկեղեցին խօսում է կնոջ ու տղամարդու դերակատարութեան տարբերութեան մասին, սակայն սա պէտք չէ ընկալուի որպէս կնոջ իրաւունքների սահմանափակում: Իրաւունքները հաւասար են բոլոր առաքինի գործերում, բայց նրանց դերակատարութիւնը տարբեր է: Կան բաներ, որ կինը երբէք չի կարող անել տղամարդու փոխարէն, եւ կան բաներ, որ տղամարդը երբէք չի կարող իրագործել կնոջ փոխարէն: Այո՛, շնորհաբաշխման եւ փրկութեան իմաստով, ըստ էութեան, չկայ ո՛չ սեռային եւ ո՛չ էլ ազգային պատկանելիութիւն: Այդ բոլոր տարբերութիւնները Քրիստոսով այլեւս չկան, բայց ապրելով այս երկրի վրայ՝ մարդիկ շարունակում են մնալ եղական[1] ու դեռեւս ունեն սեռի, տարիքի, ազգային եւ այլ տարբերութիւններ: Ակնյայտ է, թէ մենք պէտք չէ բացարձակացնենք հաւատացեալների իրավիճակը եւ հաւատանք, թէ իրենք արդէն իսկ հասել են հոգու, մարմնի եւ մտքի կատարելութեանը: Մինչեւ յաւիտենականութեան անցումը, մարդու մարմինը պիտի ունենայ որոշակի առանձնայատկութիւններ, եւ այդ յատկանիշների վրայ է Պօղոս առաքեալն ուզում գրաւել կորնթացիների ուշադրութիւնը՝ խօսելով կանանց՝ գլխի ծածկոյթի պարտաւորութեան մասին: Նա կոչ չի անում կնոջը՝ քօղով ծածկել գլուխը որպէս «հոգեւոր մարդ» ի Քրիստոս, այլ յստակ խօսում է մարդկային մարմնի մասին, որը դեռեւս ապրում է այս իմանալի աշխարհում: Քրիստոս երբէք չէր հռչակում կամ կոչ չէր անում մարմնաւոր հաւասարութեան գաղափարը ու չէր հաւատում, թէ դա ճիշդ է: Աստուածային օրէնքներին ենթարկւում են հոգեւոր ու նիւթական աշխարհի բոլոր տարրերը, որոնք միասին կազմակերպւում են միասին մի ներդաշնակ համակարգում, որտեղ

1 Եղական - ստեղծուած, արարուած, հողանիւթ:

կան տարբեր ենթակայութիւններ: Եթէ համակարգի առանձին տարրերը չեն ուզում մնալ իրենց տեղերում եւ սկսում են պահանջել այլ տարրերի դերն ու պաշտօնը, ապա ստեղծւում է անհամաձայնութիւն եւ անհանգստութիւն, որոնք ամբողջ համակարգում ստեղծում են խանգարում ու խռովութիւն: Աստուածաշունչը երբէք չի խօսում ղեկավարների եւ ենթակաների, ծնողների եւ երեխաների, ամուսնու ու կնոջ հաւասարութեան մասին, թէեւ Աստծու առաջ բոլոր մարդիկ ունեն հաւասար իրաւունքներ: Քրիստոս երկրի վրայ հաստատեց ոչ թէ հաւասարութեան գաղափարը, այլ միասնութեան, որը ներառում ու համակարգում է համաձայնութիւն, գոհունակութիւն, միանմանութիւն՝ բայց պահպանելով անձնական ինքնութիւնը, փոխադարձ ենթակայութիւնը եւ որոշակի նուիրապետական համակարգման ներկայութիւնը: Պօղոս առաքեալը սա յստակ ցոյց է տալիս մարդկային մարմնի օրինակով: Մարմնի իւրաքանչիւր անդամ որոշակի կերպով ու նոյն իրաւունքով ենթակայ է միւս անդամներին, թէեւ ունի անհաւասար հնարաւորութիւններ: Մարմնի գործողութեան յաջողութիւնը՝ որպէս ամբողջութիւն, կախուած է ոչ թէ բոլոր անդամների գործնական հաւասար իրաւունքներից կամ համահարթեցումներից, այլ նրանց միասնութիւնից եւ համակարգուած փոխգործակցութիւնից: Տան մէջ ընտանիքում տղամարդն ու կինն ունեն իրենց յատուկ դերն ու իրաւունքները, մայրը՝ մայրական, հայրը՝ հայրական: Ինչո՞ւ պէտք է ցանկանալ, որ մայրը կատարի հօր իրաւունքները, եւ՝ հակառակը: Շինծու հաւասարութիւնն առաջնորդում է քաոսի: Ինչպէս որ Աստուածա-մայրը եկեղեցու գերագոյն սուրբն է, բայց չի համարւում Առաքեալ, այդպէս էլ թոյլատրելի չէ, որ ընտանիքում կամ եկեղեցում բոլոր անդամները հաւասար իրաւունքներ ունենան, որովհետեւ իւրաքանչիւր անդամ ունի իր առաքելութեան դերը: Ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. «Այսպէս, մարմինը մէկ անդամ չէ, այլ՝ բազում: Եթէ ոտքն ասի՝ քանի որ ձեռք չեմ, այդ մարմնից չե՛մ, դրանով չի դադարում նոյն մարմնից լինելուց: Եւ եթէ ականջն ասի՝ քանի որ

աչք չեմ, այդ մարմնից չե՛մ, դրանով չի դադարում նոյն մարմնից լինելուց. եթէ ամբողջ մարմինը աչք լինէր, ո՞ւր կը մնար ականջը. եւ եթէ ամբողջ մարմինը ականջ լինէր, ո՞ւր կը մնար հոտոտելիքը: Բայց արդ, Աստուած դրեց անդամները, նրանցից ամէն մէկը՝ մարմնի մէջ, ինչպէս որ կամեցաւ: Իսկ եթէ ամբողջը մէկ անդամ լինէր, ո՞ւր կը մնար մարմինը: Բայց արդ, բազում անդամներ կան, սակայն՝ մէկ մարմին: Աչքը չի կարող ասել ձեռքին, թէ՝ ինձ պէտք չես. եւ կամ նոյն ձեւով գլուխը՝ ոտքերին, թէ՝ ինձ պէտք չէք: Եւս առաւել, մարմնի այն անդամները, որ թւում է, թէ աւելի տկար են, կարեւորնե՛րն են. եւ նրանք, որ թւում է, թէ մարմնի համար աւելի անարգ են, առաւելագո՛յն պատիւ ենք անում նրանց. եւ մեր ամօթոյքները առաւել եւս անհրաժեշտ է պարկեշտութեամբ ծածկել: Բայց մեր պարկեշտ անդամները դա չեն պահանջում: Որովհետեւ Աստուած կազմեց մարմինը եւ նուազ պատուաւորին առաւել պատիւ տուեց, որպէսզի մարմնի մէջ բաժանումներ չլինեն, այլ որպէսզի այդ անդամները նոյն հոգը տանեն միմեանց նկատմամբ: Եւ եթէ մի որեւէ անդամ ցաւ է զգում, նրա հետ ցաւ են զգում բոլոր անդամները. եւ եթէ մի անդամը փառաւորւում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները: Արդ, դուք մարմինն էք Քրիստոսի եւ անդամները՝ նրա անդամներից» (Ա. Կորն. 12, 14-27): Այսպիսով, հաւասարութեան սկզբունքը ոչ միայն բացառւում է, այլեւ նոյնիսկ առաջարկւում է փոխկապակցուած անհաւասարութիւն: Հաւասարութեան ու ենթակայութեան յարաբերութիւնները տարբերելու անկարողութիւնը միշտ յանգեցնում է շփոթութեան եւ իրարանցման: Նման խառնաշփոթութիւն արդէն ծագել էր Կորնթոսի եկեղեցում, երբ կորնթացիները տեսնում էին միայն «հաւասար իրաւունքներ»-ի յարաբերութիւնները եւ ոչ մի նշանակութիւն չէին տալիս յարաբերութիւնների ենթակայութեանը: Սա կորնթացիներին յանգեցրել էր Սուրբ Հոգու պարգեւները ստանալու աղաւաղուած տեսակէտին (Ա. Կորն. 12, 30), երբ նրանք ենթադրում էին, թէ Սուրբ Հոգու նոյն պարգեւը հաւասարապէս

հասանելի է եւ անխտիր տրւում է բոլորին, թէեւ Աստծու կողմից իւրաքանչիւրին վիճակուած է Սուրբ Հոգու անհատական դրսեւորումը, այսինքն՝ անձնական ու եզակի պարգեւը: Իզուր չէ, որ Պօղոս առաքեալը, տեսնելով կորնթացիների շփոթութիւնը, բացականչում է. «**Միթէ բոլո՞րն էլ առաքեալներ են. միթէ բոլո՞րն էլ մարգարէներ են. միթէ բոլո՞րն էլ ուսուցանողներ են. միթէ բոլո՞րն էլ զօրութիւններ գործողներ են. միթէ բոլո՞րն էլ բժշկելու շնորհ ունեն. միթէ բոլո՞րն էլ լեզուներ են խօսում. միթէ բոլո՞րն էլ թարգմանում են**» (Ա. Կորն.12, 29): Կորնթացիներին ուղղուած նամակում Պօղոս առաքեալին չի հետաքրքրում միասնութեան ու հաւասարութեան խնդիրը, քանի որ այդ հարցերին նա արդէն իսկ դիմել էր իր այլ նամակներով: Օրինակ՝ գաղատացիներին ուղղուած նամակում նա արդէն բացատրում է պատշաճ գլխաւորութեան եւ ենթակայութեան յարաբերութիւնները:

Ինչպէ՞ս է Պօղոս առաքեալը հիմնաւորում կանանց՝ իրենց ամուսիններին հնազանդուելու գաղափարը: Առաջին հերթին գլխաւորութեան ու ենթակայութեան, հաւասարութեան ու հնազանդութեան օրինականութեամբ: Պօղոս առաքեալը ներկայացնում է Աստծու եւ Իր Օծեալի՝ Յիսուս Քրիստոսի յարաբերութիւնների օրինակով՝ ասելով, թէ «**ամէն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած**» (Ա. Կորն. 11, 3): Այսինքն՝ այն ճշմարտութիւնը, թէ կնոջ գլուխն իր ամուսինն է, առաքեալը հիմնաւորում է այն փաստով, թէ ամէն ինչում կայ որոշակի կարգաւորութիւն, որը կիրառւում է նոյնիսկ Քրիստոս Որդու եւ Հայր Աստծու յարաբերութիւնների միջեւ: Պօղոս առաքեալը հիմնւում է յաւէրժական երեւոյթների վրայ: Իրօք, Աստծու ու Քրիստոսի յարաբերութիւնները (Ա. Կորն. 11, 3), որոնց վրայ է հիմնւում առաքեալը, մնում են անփոփոխ: Մարդու ստեղծման՝ տղամարդու եւ կնոջ աստուածաշնչեան պատմութիւնն (Ա. Կորն. 11, 8-9) աներկբայելի իրականութիւն է: Ամուսնու ու կնոջ ֆիզիկական մարմնի կառուցուածքն էլ, այսինքն՝ բնութեան օրէնքները, նոյն

բանն են ասում։ Նոյնիսկ սովորութիւններն ու կանոններն են այսօր նոյնը, ինչպէս եղել են վաղ քրիստոնէական ժամանակաշրջանում։ Բայց մարդկային ընկալման համար Հայր Աստծու եւ Յիսուս Քրիստոսի հաւասարութեան ու փոխյարաբերութեան անմիջական հարցերը միանգամայն դժուար են հասկացւում։ ***«Քրիստոսի գլուխը՝ Աստուած»*** *չի նշանակում, թէ ո՞վ է աւելի մեծ. սա պարզապէս մի պայմանաւորուածութիւն է Աստծու տիրապետական տնօրինութեան մէջ։ Նմանապէս, Աստծու տնօրինութեան սկզբունքներում ամէն մարդու գլուխը Քրիստոսն է ու կնոջ գլուխը՝ մարդը։ Օրինակ՝ Աւետարանի մի շարք համարներում նշուած է Հօր եւ Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի միջեւ հաւասարութիւնը,* ***«Ես եւ Իմ Հայրը մի ենք»*** *(Յովհ.10, 30),* ***«Ով Ինձ տեսաւ, տեսաւ Հօրը»*** *(Յովհ. 14, 9), եւ այլն։ Միւս կողմից, Յիսուս Մեսիան՝Աստծու Օծեալը, յայտնուելով մարմնով, այսինքն՝ մարդանալով, Իր վարքագծով հետեւողականօրէն ընդգծում է Իր հնազանդութիւնն ու կապուածութիւնը Հայր Աստծուն ու Նրա կամքին.* ***«Իմ Հայրը մեծ է, քան ես»*** *(տե՛ս Յովհ. 14, 27։ 10, 29)։ Փիլիպեցիներին ուղղուած նամակում Պօղոս առաքեալը գրում է.* ***«Աստծուն հաւասար լինելը յափշտակութիւն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով եւ մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝ հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ մահուան՝ խաչի վրայ»*** *(Փիլ. 2, 6-8)։ Յիսուս Իր աստուածային յաւէրժական էութեամբ հաւասար է Հայր Աստծուն, սակայն Աստծու տիրապետական տնօրինութեան սկզբունքով Աստուածորդին մարդեղութեան անճառելի խորհրդով դարձաւ Քրիստոս՝ բոլոր արարածների գլուխն ու անդրանիկը*[1] *(տե՛ս Կող. 1, 15։ 2, 10. 19), որին Հայր Աստուած՝ «գլուխը Քրիստոսի», ուղարկեց աշխարհ*

1 Սա չի նշանակում, թէ Քրիստոս նոյնպէս արարած է, ինչպէս անցեալում պնդում էին արիոսական հերետիկոսները, իսկ մեր օրերում՝ Եհովայի վկաները։ Այլ այդ կերպ ցոյց է տրւում, որ Քրիստոս մարդեղութեամբ վերցրեց ադամական արարուած ու մեղաչական բնութիւնը՝ դառնալով «բոլոր արարածների անդրանիկն ու գլուխը»։

(Յովհ. 17, 3)։ Քրիստոս Ինքն է ասում. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, մարդու Որդին ինքն իրենից ոչինչ չի կարող անել, այլ անում է այն, ինչ տեսնում է, թէ Հայրը կատարում է, որովհետեւ ինչ որ Հայրն է անում, նոյնը նրա նման եւ Որդին է գործում» (Յովհ. 5, 19)։ «Որովհետեւ ես երկնքից իջայ ոչ թէ իմ կամքը կատարելու համար, այլ՝ կամքը նրա, ով ինձ ուղարկեց» (Յովհ. 6, 38)։ «Շատ բաներ ունեմ ձեր մասին խօսելու եւ դատելու։ Բայց նա, ով ինձ ուղարկեց, ճշմարիտ է. եւ ես, ինչ որ լսել եմ նրանից, ա՛յն եմ խօսում աշխարհում» (Յովհ. 8, 26)։ «Ես ինքս ինձնից ոչինչ չեմ անում, այլ՝ ինչպէս իմ Հայրն ինձ սովորեցրեց, ա՛յն եմ խօսում» (Յովհ. 8, 28)։ Հետեւաբար, վերլուծելով Յիսուսի կեանքը՝ կարող ենք նշել, թէ Յիսուսի հաւասարութիւնը Հայր Աստծուն երբէք չի հակասում Իր Հօրը հնազանդուելուն եւ Նրա կամքը կատարելուն։ Ըստ էութեան, Հօրը հաւասար լինելով՝ Նա երբէք չէր հեռանում Իր Հօրը հնազանդուելուց։ Իսկ մարդկանց վերաբերմունքը, ինչպէս Աստծու հանդէպ, այնպէս էլ միմեանց նկատմամբ, հաւասարութիւնն ու հնազանդութիւնը լաւ չեն գոյակցում իրար հետ։ Բազում օրինակներ գիտենք, երբ հաւասարութեան յարաբերութիւնները ճնշում են հնազանդուող կամ ենթարկուող դիրքում եղող յարաբերութիւններին։ Կան կանայք, որոնք պարզապէս չեն սիրում այս «հնազանդութիւն» բառը, մանաւանդ, երբ պսակադրութեան ժամանակ քահանան հարսնացուին հարցնում է, թէ մինչեւ կեանքի վերջը հնազանդութիւն խոստանո՞ւմ է իր ապագայ ամուսնուն։ Կարծես թէ կանայք նուաստացում են զգում իրենց հնազանդուողի դիրքում լինելու կարգավիճակից։ Իրենց այս դժգոհութիւնն առաջ է գալիս աստուածային ճշմարտութիւնները չընդունելու եւ դրանց չենթարկուելու ըմբոստ տրամադրութիւնից։ Այդ պատճառով էլ առարկում են, թէ գլխի քօղն այսօր անհրաժեշտ չէ կնոջ համար։ Նրանք պնդում են, թէ այս ամէնը վերաբերում էր միայն կորնթացիներին։

Պօղոս առաքեալը փորձում է վերականգնել հաւասարութեան եւ ենթակայութեան ներդաշնակութեան միջեւ յարաբերութիւննե-

*ը, որոնք ներկայացնում են որպէս արարչութեան առաջնային վարդապետութիւն։ Առաքեալը զուտ հոգեւորից անցնում է դէպի պատմական միջավայր։ Նա շատ լուրջ է վերաբերւում գլխի ծածկոյթի՝ գլխաշորի օգտագործմանը եւ ուզում էր, որ Կորնթոսի եկեղեցին ոչ մի բանով չտարբերուի բոլոր միւս եկեղեցիներից (տե՛ս Ա. Կորն. 11, 16)։ Իսկ այս սրտաբուխ ցանկութեան պատճառը հիմնուած էր «Ծննդոց» գրքում նկարագրուած առաջին երեք գլուխների իրադարձութիւնների վրայ, քանի որ անցեալում սահմանուած կանոններն ու կարգերը չեն փոխւում ո՛չ ժամանակի, ո՛չ էլ մարդկային պատկերացումների եւ երեւակայութիւնների պատճառով։ Նա շարունակում է խօսել գլխի ծածկոյթի անհրաժեշտութեան մասին՝ հիմնուելով «Ծննդոց»-ի արարչութեան պատմութեան վրայ. «**Պէտք չէ, որ տղամարդն իր գլուխը ծածկի, որովհետեւ նա պատկերն ու փառքն է Աստծու, իսկ կինը ի՛ր մարդու փառքն է, որովհետեւ ոչ թէ մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց. քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար**» (Ա. Կորն. 11, 7-9)։ «Ծննդոց» գիրքը կարելի է օգտագործել՝ փաստելու համար այն հակադիր տեսակէտը, թէ գլխի ծածկոյթը սոսկ մշակութային գործօն է։ Այն սկզբունքը, որ Պողոս առաքեալը կիրառում է, «նա (այր մարդը) պատկերն ու փառքն է Աստծու» ասելով, ցոյց է տալիս զուգահեռ ենթակայութեան յարաբերութիւնները։ Աստուած՝ որպէս Արարիչ, որ իշխում է աշխարհի բոլոր արարածների վրայ, Իր իշխանութեան որոշ մասը տուեց Իր ստեղծած տղամարդուն։ Նա Ադամին շնորհեց բուսական ու կենդանական ամբողջ աշխարհը (Ծնն. 1, 26)։ Իսկ կնոջն Աստուած ստեղծեց ամուսնու օրինակով՝ որպէս նրա օգնականը, որ սիրում է իր ամուսնուն։ Աստուած Ադամից կողոսկրից կին արարեց։ Սա Աստուածաշնչի անժխտելի յայտարարութիւնն է (Ծնն. 2, 20-23)։ Կինն օգնում է իր ամուսնուն, եւ ինչպէս նախատեսուած է Աստծու կողմից, նրանք սուրբ Պսակի խորհրդով միասին կազմում են մէկ մարմին, եւ այս իմաստով կինը դառնում է «ամուսնու փառքը»։ Եւ այսպիսի ստեղծման առաջնահերթութեան պատճառով է, որ Պողոս*

առաքեալը յայտարարում է. «**Պէտք չէ, որ տղամարդն իր գլուխը ծածկի, որովհետեւ նա պատկերն ու փառքն է Աստծու, իսկ կինը ի՛ր մարդու փառքն է**» (Ա. Կորն. 11, 7)։ Հետեւաբար, գլխաշորի գործածումը նշան է կնոջ հնազանդութեան եւ ենթակայութեան դիրքի՝ իր ամուսնու նկատմամբ։ Ամուսինն ու կինը, իրաւական իմաստով, ըստ Աստծու շնորհի, հոգեւորապէս լիովին հաւասար են, բայց շնորհը, որն Աստծու առաջ բոլորին ստիպում է հաւասար լինել, չի վերացնում այն ծագումնաբանական բնական անհաւասարութիւնը, որը վերաբերում է մարմնին։ Այս պատճառով է ասում, թէ Քրիստոսով չկայ ո՛չ արու եւ ո՛չ էգ (տե՛ս Գաղ. 3, 28), իսկ երկրի վրայ մարմնի ու սեռերի գլխաւորութիւնն ու ենթակայութիւնը դեռեւս գոյութիւն ունեն։ Ամուսինը մնում է կնոջ գլուխը, քանի դեռ նրանք մարմնի մէջ են։ Հետեւաբար, այդ ենթակայութեան նշանը պէտք է պահպանուի, քանի դեռ կինը գտնւում է մարմնում։

Երբ առաջին անգամ Ադամը տեսաւ իր կնոջը, ասաց. «**Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից**»։ Յետոյ կարդում ենք շատ տարօրինակ բառեր. «**Այդ իսկ պատճառով տղամարդը, թողնելով իր հօրն ու մօրը, պէտք է միանայ իր կնոջը, եւ երկուսը պէտք է լինեն մի մարմին**»։ Քանի որ մեղքն իր անմիջական վատ ազդեցութիւնն է թողնում սեռերի յարաբերութիւնների վրայ, մենք տեսնում ենք, թէ ինչպէս են մեղքի հետեւանքները փոխում մարդու նկատմամբ Աստծու ծրագիրը։ Աստուած, Եւային պատժելով, ասաց. «**Քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ**»։ Այնպէս որ, սկզբում ամուսինը պէտք է գնար իր կնոջ յետեւից, բայց այս ամէնն աւարտւում է նրանով, որ այժմ կինը պէտք է հետեւի իր ամուսնուն։ Ուրեմն, ինչ որ բան տեղի ունեցաւ այդ միջանկեալ ժամանակահատուածում։ Տեղի ունեցաւ այն, որ կինը կանգնեց չարի եւ բարի գիտութեան ծառի դիմաց, եւ երբ ճաշակեց արգելուած պտուղը, նա յետ գնաց իր ամուսնու մօտ ու խնդրեց նրան էլ մասնակից դառնալու իր գործած յանցանքին՝ արգելուած պտուղն ուտելուն։ Իսկ ինչո՞ւ կինը ցանկացաւ, որ ամուսինը դառնայ իրեն

մեղսակից։ Սբ. Եփրեմ Ասորին ասում է, թէ երբ անձը շատ լուրջ յանցանք է գործում, ապա հրճուանքի յարձակում է զգում, բարձր նոպայով է լցւում, իբր «ես նման չեմ ուրիշների, ես կարողացայ դա անել», եւ այլն։ Երբ մի մարդ ընկնում է այս սարսափեցնող բերկրաթմբիրի (էյֆորիայի) մէջ, իր յանցագործութեան առաջին մի քանի վայրկեաններին նա հիացմունք է ապրում, իսկ սարսափը գալիս է աւելի ուշ։ Նոյնպէս եւ այստեղ է։ Եփրեմ Ասորին ենթադրում է, թէ այն ժամանակ, երբ Եւան խախտեց Աստծու պատուիրանը, նա պարզապէս ընկաւ այդ նոյն բերկրաթմբիրի մէջ՝ զգալով, թէ իրօք իր հետ ինչ որ բան էր տեղի ունենում, եւ իրեն զգում էր ինչպէս մի աստուածուհի։ Իսկ յետոյ նա իր ամուսնու մօտ եկաւ՝ ցոյց տալու իր այդ նոր որակը։ Կարծես թէ հարցնում էր ամուսնուն, թէ ինքը սկզբում ստեղծուած էր նրա կողոսկրից, բայց հիմա դարձել է աստուածուհի ու պատրաստւում է նրան սովորեցնել կեանքի դասերը։ Եւ այսպէս կնոջ մօտ արթնանում է գերիշխանութեան ու գերակայութեան բնազդը։ Հէնց սա է մեղքը մարդկային յարաբերութիւններում։ Բայց Աստուած բուժում է այս հիւանդութիւնը՝ առաջին հերթին ասելով. **«Քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ»**։ Եւ երկրորդն այն փաստն էր, որ Ադամը պէտք էր իր կնոջն անուն դնէր, եւ կնոջն անուանեց Եւա[1]։ Իսկ ինչո՞ւ Ադամն սկզբից չանուանեց իր կնոջը. չէ՞ որ Աստուածաշունչն արդէն ասում է, թէ նա սկզբից բոլոր անասուններին անուն դրեց։ Ինչո՞ւ իր կնոջն անուն չի դնում սրանից անմիջապէս յետոյ։ Այն պատճառով, որ անուն դնելը նշանակում է ցուցաբերել իշխանութիւն ու գերակայութիւն։ Իսկ այս իշխանութիւնն իր կնոջ նկատմամբ յայտնւում է միայն մեղքի պատժից յետոյ, երբ Աստուած ամուսինների համար արդէն սահմանում է նոր յարաբերութիւններ։

Մեր նախամայր Եւայի գործած մեղքի պատճառով մարդկութիւնն ընկաւ անէծքի տակ։ Եւ այս իմաստով Եւայի շառաւիղը՝ կինը, եկեղեցի է մտնում գլխածածկ՝ իր նախամօր մեղքի պատ-

1 Այսինքն՝ կեանք պարգեւող, կենսատու՝ եբրայերէն լեզուից թարգմանուած։

ճառով։ Եւան ամաչում էր այն բանի համար, ինչ արել էր Աստծու առաջ, նաեւ Ադամի առաջ։ Լինելով այդ կնոջ պտուղը՝ երբ Քրիստոսի առաջ կանգնելիս մենք նոյնպէս ամաչում ենք մեր մեղապարտութեան համար։ Այսպիսով, կանանց խորհուրդ է տրւում նմանուել Եւային ու զարդարուել **«համեստ զարդարանքով, ակնածութեամբ եւ պարկեշտութեամբ»** (Ա. Տիմ. 2, 9), այնպէս, ինչպէս դա արեց Եւան. սկզբից ծածկուեց թզենու տերեւներով, յետոյ կաշուեղէն հանդերձով, որքան որ հնարաւոր էր ծածկելու իր ամօթոյքը։ Գոյութիւն ունի շատ յստակ կապ գլուխը ծածկելու եւ ամօթանքի միջեւ (տե՛ս Եփես. 6, 12։ 2 Թագ. 15, 30։ Երեմ. 14, 3, 4)։ Տիմոթէոսին ուղղուած առաջին նամակի 2-րդ գլխի համատեքստում խօսւում է Յիսուս Քրիստոսի խաչելութեան մասին, **«որ տուեց ինքն իրեն որպէս փրկանք բոլորի համար»**։ Այս պատճառով Պօղոս առաքեալն ուզում էր, որ եկեղեցում տղամարդիկ ու կանայք իրենց պատշաճ աստուածապաշտութեամբ ու սրբութեամբ վարուեն, յատկապէս, երբ Սուրբ Պատարագի ընթացքում Աստծու առաջ յիշում են Յիսուսի զոհաբերութիւնը։ Կանայք, խորհրդանշելով եկեղեցին, ամօթխածութեան զգացումով կանգնած են Տիրոջ խաչի առաջ։ Տղամարդիկ խորհրդանշում են Ադամին, հետեւաբար եւ՝ Յիսուս Քրիստոսին։ Պէտք է նշել, թէ գլխի ծածկոյթը չի խորհրդանշում կնոջ ստրկական վիճակը տղամարդու հանդէպ միայն այն պատճառով, որ տղամարդ է, այլ սա խորհրդանիշն է այն բանի, թէ մեր մեղքերը քօղարկւում են Քրիստոսի քաւչարար Արեամբ։ Նրա Արեամբ կենդանացանք մահուան ապականութիւնից, բայց քանի դեռ այս մարմնում ենք, ամէն օր, կամայ թէ ակամայ, մարմնի կարիքներից դրդուած ու չարից խաբուած, մեղանչում ենք։ Նաեւ ասուեց, թէ՝ **«Ով որ մեղանչի, նա էլ պիտի մեռնի»** (Եզեկ. 18, 4. 20)։ Ուրեմն Նա մեր մեղքերի պատճառով ամէն օր մարդասիրաբար մեռնում է Իր անմեղութեամբ ու մեզ կենդանացնում Իր անմահութեամբ՝ մեզ տալով փրկութեան սպեղանին՝ Իր սուրբ Մարմինն ու Արիւնը։ Ուստի, քօղով գլուխը ծածկելը հոգեւոր ազատագրման, ուրախութեան

ու խաղաղութեան խորհրդանիշն է, որ տրւում է կանանց, երբ Քրիստոսի թափուած Արիւնը քօղարկում է մեր մեղքերը: Այս պատճառով գլխաշոր գործածելը պէտք է կատարուի մեծ սիրով եւ ուրախութեամբ՝ այդկերպ ցոյց տալով, թէ որքա՜ն ենք մենք գիտակցում ու գնահատում Աստծու կատարած զոհաբերութիւնը մեզ համար: Կինն Աստծու առաջ ծածկում է իր գլուխն ամբողջ եկեղեցու փոխարէն (եւ՛ կանանց եւ՛ տղամարդկանց), որպէսզի այդպիսով յայտնի լինի, թէ որքան ենք գիտակցում ու գնահատում Քրիստոսի սէրն ու փրկագործութիւնը: Եւ այդ պատճառով գլխաշոր գործածելը զուտ տղամարդու հնարած գիւտը չէ, որպէսզի եւս մէկ անգամ ցոյց տայ իր գերազանցութիւնը կնոջ նկատմամբ:

*Կանանց խորհուրդ է տրւում գիտակցաբար նմանուել Եւային՝նրա մեղքի «ամօթխածութեամբ»: Իսկ եթէ ոմանք յամառօրէն պնդում են, թէ պարտաւոր չեն գլուխները քօղով ծածկել, ապա այդ բանի համար իրենք պէտք է «ամօթ» զգան Աստծու առաջ (Ա. Կորն. 11, 6): Այն բանի համար, որ նրանք հրաժարւում են լինել Եւայի նման (յաջորդող ապաշխարութեամբ), Աստուած այդպիսի կանանց կը նայի այնպէս, ինչպէս եթէ Եւան մնար որպէս չներուած մեղապարտ՝ ամօթ բերելով ամբողջ մարդկութեանը: Կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլխում կարելի է գտնել բազմաթիւ ակնարկներ Եւայի՝ Եդեմի պարտէզում մեղքի մէջ ընկնելու մասին: Դրանցից մէկ օրինակն այն է, որ կանայք պէտք է գլխաշոր գործածեն, նաեւ այն, որ Աստուած կաշուեղէն հանդերձներ պատրաստեց ծածկելու Ադամի եւ Եւայի մերկութիւնը, այսինքն ամօթոյքը: Պնդել, թէ բաւական է միայն մէկ բնական ծածկոյթը՝ մազերը, կը նշանակէր, թէ Եւան հրաժարուեց կաշուեղէն հանդերձից, եւ հետեւաբար, մնաց իր կատարած մեղքի մերկութեան մէջ: Հէնց այս պատճառով կանայք պէտք է գիտակցաբար գշխաշոր կրեն: Սակայն, ի տարբերութիւն կանանց, եթէ տղամարդը գլուխը ծածկում է, այդպիսով նա «**անպատուում է իր գլուխը**» (Ա. Կորն. 11, 3-4): Քրիստոս կարիք չունէր ծածկելու Իր «մեղքերը», որովհետեւ Նա մեղք չէր գործել: Այնպէս որ, տղամարդը՝*

որ պատկերն է Քրիստոսի, ծածկելով իր գլուխը, «անարգում» է Քրիստոսին ու տեսանելի կերպով ցուցադրում է, թէ Նա մեղաւոր է։ Յունարէն բառը, որ թարգմանուած է որպէս «անարգանք» կամ «անպատուութիւն», Աւետարանի որոշ մասերում կապուած է մեղքի ամօթի հետ (տե՛ս Ա. Պետր. 2. 6։ Հռոմ. 5, 5։ 9, 33։ 10, 11)։

Քաղաքացիական հաւասարութեան կարգախօսն ասում է, թէ «օրէնքի առաջ բոլոր մարդիկ հաւասար են»։ Սակայն, օրինակ, բանակում ոչ ոք չէր համարձակուի չհնազանդուել իր հրամանատարին։ Նոյնը քրիստոնէութեան մէջ է. թէեւ Քրիստոսով բոլորը հաւասար են, սակայն պէտք չէ չեղեալ համարել, օրինակ, հօր իշխանութիւնն ընտանիքում կամ քայքայել իշխանաւորների լիազօրութիւնները ժողովրդավարութեան մէջ կամ հրաժարուել եկեղեցու հովիւներին հնազանդուելուց եւ այլն։ Հետեւաբար, ամուսնացած կինը, որ քօղով ծածկում է իր գլուխը՝ ի նշան իր ամուսնուն հնազանդութեան, ամբողջ արտաքին աշխարհին կարծես հասկացնում է, թէ ինքը ենթարկւում է Աստծու կողմից սահմանուած օրէնքներին։ Եւ չի համարձակւում Աստծու շնորհն ունենալով հանդերձ՝ ոչնչացնել հնազանդութեան եւ ենթակայութեան դիրքերի սկզբունքը։ Այսպիսով, հաւատարիմ կանայք յատուկ առանձնաշնորհում ունեն ու պարտաւոր են ցուցադրել Աստծու կողմից հաստատուած ճշմարիտ յարաբերութիւնները իրենց ընտանիքներում եւ արտաքին այս մեղսալի աշխարհում, որ ձգտում է կեղծ ազատութեան՝ պայքարելով ոչնչացնել Աստծու սահմանադրած կարգերն ու օրէնքները։

Ինչո՞ւ է կանանց գլխաշոր գործածելու պատուիրանն այդքան կարեւոր նաեւ այսօր։ Արեւմուտքի քրիստոնէական եկեղեցիներում գլխաշոր կրելու պարտաւորութեան պատուիրանը կարեւոր բան չէ եւ ոչ մի արժէք չի ներկայացնում մեր օրերում։ Բայց սա չնչին խնդիր չէ, ինչպէս կարծում են ոմանք, որովհետեւ այս աննշան թուացող խնդիրն իր բուն իմաստով խորհրդանշում է Աստծու տնօրինութեան մեծագոյն սկզբունքները։ Ինչո՞ւ քրիստոնեայ ընտանիքներն ամբողջ աշխարհում այսօր քաղում են ամուսնալուծութեան բարձր

տոկոսադրոյքի հետեւանքները: Քանի որ անտեսւում է քրիստոնէական կարեւորագոյն վարդապետութեան այն սկզբունքը, որի մասին Պօղոս առաքեալը քարոզում է կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլխում: Այս սկզբունքի մերժումը յանգեցնում է նաեւ աւետարանական այլ կարեւոր պատուիրանների մերժմանը: Երբ քրիստոնեաները չեն հետեւում Աստուածաշնչի վարդապետութեանը, յատկապէս եթէ խօսքը հնազանդութեան եւ իշխանութեան մասին է, շատ աւելի հեշտ են դառնում ամուսնալուծութիւնները, բազմապսակութիւններն ու ապօրինի եւ մեղսալի արտամուսնական յարաբերութիւնները: Իհարկէ, երբ եկեղեցիները հետեւում են այս աշխարհի կերպարանքին, այս ամէնը դառնում է թոյլատրելի: Ինչո՞ւ գլխաշոր գործածելու պատուիրանը այդքան կարեւոր է եղել Պօղոս առաքեալի համար եւ այդքան կարեւոր է այսօր: Քրիստոնէական այս կարեւոր սկզբունքի համոզումը ազդում է ամուսնալուծութեան տոկոսադրոյքի վրայ: Աստուած գիտէր այս ամէնը, երբ կանանց հրամայեց հնազանդուել իրենց ամուսիններին եւ ընդունել նրանց որպէս ընտանիքի գլուխ: Եթէ կինը հնազանդուէր ամուսնու իշխանութեանը, ապա ամուսնալուծութիւնը կանխուած կը լինէր շատ ընտանիքներում: Աստուած առանց պատճառի կանանց չէր տայ այս պատուիրանը: Արդէն նշել էինք, թէ Աստուած միայն Նոր Կտակարանում եօթն անգամ պատուիրում է, որ կինը հնազանդ լինի իր ամուսնուն: Գլխաշորի գործածումը յիշեցնում է կնոջը, որ Աստուած ցանկանում է նրան հնազանդեցնել ամուսնու իշխանութեանը, իհարկէ եթէ նա աստուածամերժ չէ եւ իր կնոջը չի հեռացնում աստուածային ճշմարտութիւններից: Պօղոս առաքեալն ասում է. ***«Ուզում եմ, որ դուք իմանաք, թէ ամէն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած: Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը: Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը, որովհետեւ այնպէս է համարւում, թէ իբր գլուխն***

*ածիլուած լինի» (Կորն. 11, 3-5)։ Շատ կարեւոր է, որ կինը հնազանդ լինի իր ամուսնուն, եթէ նրանք ցանկանում են ունենալ յետագայ սերունդների աստուածապաշտ յետնորդներ։ Կնոջ հնազանդութիւնն իր ամուսնուն ամենալաւ օրինակն է իրենց երեխաների դաստիարակութեան համար։ Անհնազանդութիւնը մեղք է, որ բաժանում է մարդուն Աստծուց։ Քրիստոնեայ կնոջ գլխի քօղը՝ որպէս հնազանդութեան յիշեցում, ունի մեծ առաւելութիւններ։ Իհարկէ, պէտք չէ կարծել, թէ եկեղեցում բոլոր գլխաշոր կրողները հնազանդ են. խօսքն այդպիսիների մասին չէ։ Բայց հնազանդ կինը շատ հաւանական է աւելի երջանիկ կը լինի իր ամուսնական մնացած կեանքի ընթացքում, որովհետեւ կնոջ հնազանդութիւնն ու պարկեշտ ընթացքը իրեն աւելի գրաւիչ են դարձնում ամուսնու առաջ ու շատ աւելի արժէք է ներկայացնում Աստծու առաջ. «**Այսպէս էլ դուք, կանա՛յք, հնազա՛նդ եղէք ձեր մարդկանց, որպէսզի, եթէ նրանցից ոմանք չհնազանդուեն Խօսքին, իրենց կանանց ընթացքի շնորհիւ եւ առանց խօսքի իսկ շահուած լինեն՝ նկատի ունենալով ձեր պարկեշտ ընթացքը՝ լի երկիւղածութեամբ։ Թող ձեր արտաքի՛նը զարդարուած չլինի հիւսքերով, ոսկեհուռ վարսակալներով կամ պճնագեղ զգեստներով, այլ սրտի ներսի՛ մարդը՝ հեզ եւ հանդարտ հոգու անեղծութեամբ, ինչ որ շատ աւելի արժէք է ներկայացնում Աստծու առաջ. մի ժամանակ այսպէ՛ս էին իրենք իրենց զարդարում Աստծու վրայ յոյս դրած կանայք, որոնք հնազանդւում էին իրենց մարդկանց» (Ա. Պետր. 3, 1-5)։***

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետը, խօսելով այս (տե՛ս Ա. Կորն. 11, 3) կարեւորագոյն սկզբունքի մասին, ասում է. «Եւ այս պատճառի մասին է խօսում այն բանի համար, որ թոյլերին դարձնի աւելի ուշադիր։ Չէ՞ որ հաւատացեալը, ինչպէս որ հարկն է, իր ամուր հաւատքով կարիք չունի ո՛չ ապացոյցի, ո՛չ էլ մի պատճառի, որ իրեն է պատուիրւում, այլ բաւարարւում է միայն աւանդոյթով։ Իսկ տկարը, իմանալով նաեւ պատճառը, առաւել մեծ ջանասիրութեամբ է կատարում ասուածը եւ հնազանդւում աւելի մեծ նուիրումով։ Դրա

համար առաքեալը չէր խօսում պատճառի մասին, մինչեւ որ տեսաւ պատուիրանի խախտումը։ Իսկ ո՞րն է պատճառը։ «**Ամէն մարդու գլուխը Քրիստոս է**»։ Ուրեմն սա վերաբերում է նաեւ հեթանոսին։ Ո՛չ։ Եթէ մենք «**մարմին ենք Քրիստոսի եւ անդամներ՝ Նրա անդամներից**» (Ա. Կորն. 12, 27), եւ եթէ Քրիստոս մեր գլուխն է, ուրեմն Նա չի կարող լինել գլուխը նրանց, ովքեր Նրա մարմնի անդամակիցները չդարձան։ Հետեւաբար, «ամէն մարդու» ասուածը պէտք է հասկանալ ամէն [քրիստոնեայ] հաւատացեալի։ Տեսնո՞ւմ ես՝ ինչպէ՛ս է նա ամենուրեք ամաչեցնում լսողին՝ նշելով վերինը։ Խորհելով սիրոյ, խոնարհութեան ու բարեգործութեան մասին՝ նա ապացոյցները վերցնում է այստեղից. «Կնոջ գլուխը՝ մարդը, եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած»։ Հերետիկոսները յիշեցնում են մեզ այս խօսքերը՝ արտայայտելու համար Որդու՝ Հօր առաջ նսեմութեան գաղափարը։ Բայց իրենք իրենց հակասում են։ Եթէ կնոջ գլուխն ամուսինն է, իսկ գլուխը համագոյ է իր մարմնին, եւ եթէ Քրիստոսի գլուխն Աստուած է, ուրեմն Որդին համագոյ է Հօրը։ Բայց ասում են, թէ մենք այստեղից ուզում ենք ապացուցել տարբերութիւնը ոչ թէ ըստ էութեան, այլ Որդու ենթարկուելը Հօրը։ Ինչ ասեմ սրան։ Այն, ինչ որ երբեմն նսեմացնող բան է ասւում Նրա եւ Իր մարմնաւորման մասին, ապա դա չի նսեմացնում Աստուածութիւնը, այլ վերաբերում է Աստծու տնօրինութեանը։ Բայց ասա, ինչպէ՞ս ես դու այստեղ ապացուցում քո մտածումը։ Ասում ես՝ ինչպէս կինն է ենթարկւում իր ամուսնուն, այնպէս էլ Քրիստոս՝ Հօրը։ Հետեւաբար, ինչպէս Քրիստոս ամուսնու գլուխն է, ճիշդ այդպէ՞ս է Հայրը Որդու գլուխը։ «**Ամէն մարդու գլուխը Քրիստոս է**», - ասում է առաքեալը։ Բայց ո՞վ կարող է երբեւէ ենթադրել սա։ Եթէ ընդունենք, թէ այն առաւելութիւնը, որ Որդին ունի մեր նկատմամբ, նոյնն է, ինչ Հայրը՝ Որդու նկատմամբ, ապա մտածի՛ր, թէ դու Նրան ինչ աստիճանի ես նսեմացնում։ Այնպէս որ, պէտք չէ նոյն իմաստով ընդունել այն ամէնը, ինչ ասւում է մեր եւ Աստծու մասին։ Թէեւ նոյնն է ասւում, բայց պէտք է Աստծուն վերագրել իւրայատուկ մի այնպիսի առաւելութիւն, որը բնորոշ է

միայն Աստծուն. հակառակ դէպքում մեծ անհեթեթութիւն կը գոյանայ: Տե՛ս, որ Քրիստոսի գլուխն Աստուած է, ամուսնու գլուխը Քրիստոս է, կնոջ գլուխն ամուսինն է: Եթէ ամբողջ այս ճառում ընդունենք, թէ «գլուխ» բառը նոյն իմաստն ունի, ապա Որդին ցածր կը լինի Հօրից այնքան, որքան մենք ցածր ենք Իրենից, եւ կինը մեզանից ցածր կը լինի այնքան, որքան մենք ցածր ենք Աստծու Խօսքից: Այնպէս որ, ինչ յարաբերութիւն որ ունի Որդին Հօր նկատմամբ, այդպէս էլ մենք՝ Որդու նկատմամբ, եւ կինը՝ ամուսնու նկատմամբ: Բայց ո՞վ կարող է ենթադրել սա: Դու «գլուխ» բառը կնոջ նկատմամբ ընդունում ես մի իմաստով, իսկ ամուսնու նկատմամբ՝ այլ իմաստով, սակայն ինչո՞ւ չես ընդունում այն այլ իմաստով Քրիստոսի նկատմամբ: Պէտք է այլ իմաստով ընդունել այն նաեւ Որդու եւ Հօր նկատմամբ: Ինչպէ՞ս, ասում ես, այլ իմաստով հասկանալ դա: Սկզբնական իմաստով: Ինչպէս դու ես ասում, եթէ Պօղոսն ուզենար ցոյց տալ մէկի իշխանութիւնը ու միւսի ենթակայութիւնը, ապա անմիջապէս օրինակ կը բերէր ստրուկին ու տիրոջը, այլ ոչ թէ կնոջը, քանի որ կինը, թէեւ ենթարկւում է մեզ, բայց ենթարկւում է որպէս ազատ եւ իր արժանապատուութեամբ հաւասար: Այդպէս էլ Որդին, թէեւ հնազանդւում է Հօրը, բայց հնազանդւում է որպէս Աստուածորդի եւ Աստուած, եւ ինչպէս Հօր հանդէպ Ոդու հնազանդութիւնը աւելի մեծ է, քան մարդկանց՝ երեխաների ենթարկուածութիւնն իրենց ծնողներին, այդպէս էլ մեծ է Նրա չենթարկուածութիւնը: Եթէ Որդու յարաբերութիւնները Հօր նկատմամբ աւելի մեծ եւ աւելի կատարեալ են՝ համեմատած մարդկանց նմանօրինակ յարաբերութիւնների հետ, ապա եւ Հօր յարաբերութիւնները Որդու նկատմամբ նուազ չեն: Եթէ մենք զարմանում ենք Որդու վրայ, որ Ինքն Իրեն խոնարհեցրեց՝ **«հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ մահուան՝ խաչի վրայ»** (Փիլ. 2, 8) ու Նրան ենք վերագրում այս վեհափառ վաստակը, ուրեմն, պէտք է զարմանալ եւ Հօր վրայ, որ ծնեց այդպիսի Որդի, Ով չի ենթարկւում Նրան որպէս ստրուկ, այլ որպէս ազատ եւ որպէս խորհրդատու, իսկ խորհրդատուն ստրուկ չէ: Կրկին, երբ դու լսում

*ես «խորհրդատու» բառը, այն մի՛ ընդունիր այնպէս, իբրեւ թէ Հայրը որեւէ բանի կարիք ունի, այլ որ Որդին հաւասարապատիւ է Հօրը: Նմանապէս, ոչ ամէն ինչում օգտագործիր ամուսնու եւ կնոջ օրինակը: Այստեղ կինն արդարացիօրէն ենթարկւում է իր ամուսնուն, որովհետեւ հաւասարապատութիւնը կարող էր թշնամանք առաջացնել՝ նաեւ այն պատճառով, որ սկզբում կնոջից եղաւ գայթակղութիւնը: Նա ենթարկուած էր ոչ անմիջապէս արարչութեան ժամանակ: Երբ Աստուած նրան իր ամուսնու մօտ բերեց, Աստծուց ոչ մի նման բան նա չէր լսել: Ամուսինը նման բան չէր յայտնել նրան, բայց ասաց, թէ նա «**ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից**»: Իսկ իշխանութեան եւ ենթարկուածութեան մասին ոչինչ չէր ասում նրան: Բայց երբ Եւան չարաշահեց իր իշխանութիւնը եւ օգնականից դարձաւ գայթակղիչ եւ ամէն բան ոչնչացրեց, ապա այդ ժամանակ արդարացիօրէն լսեց այս խօսքը. «**Քո ամուսնուն պիտի ենթարկուես**» (Ծնունդ. 3, 16): Քանի որ այս մեղքը կարող էր թշնամանք առաջացնել մեր ցեղում, եւ այդ իրադարձութիւնից յետոյ չէր կարող ծառայել խաղաղութեանը, այն բանի համար, որ կինը ստեղծուել էր ամուսնուց, եւ հակառակ դրան, որ ամուսնուց ստեղծուած լինելով չխնայեց իր անդամին, եւ այդպիսով աւելի շատ պիտի բարկացնէր իր ամուսնուն, Աստուած, տեսնելով դեւի չարութիւնը, պատի պէս կանգնեց եւ այդ խօսքերի միջոցով պարսպեց նրանց: Եւ այդ որոշմամբ ոչնչացրեց թշնամանքը, որ պէտք է առաջանար գայթակղութիւնից յետոյ՝ պատնէշ դրելով այն բնական կիրքի դէմ, որ ծագում է ոխակալութեան մեղքից: Բայց Աստծու անապական էութեան մէջ նման բան չի կարելի ենթադրել: Հետեւաբար, իր մասին օրինակները կիրառիր ոչ բոլոր առումներով, այլապէս ուրիշ տեղերում էլ կ՚ընկնես բազմաթիւ մեծ սխալների մէջ: Այդպէս եւ նամակի սկզբում առաքեալն ասում է. «**Ամէն ինչ ձերն է. դուք Քրիստոսինն էք, իսկ Քրիստոս՝ Աստծունը**»(Ա. Կորն. 3, 22-23)»:*

«Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը: Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը. որովհետեւ այնպէս է համարւում, թէ իբր գլուխն ածիլուած լինի» (Ա. Կորն. 11, 4-5):

Սա նոյնպէս կապուած է Քրիստոսի մարմնացման հաւատի հետ: Այս ամէնը խորհրդանշում է այն, ինչին հաւատում են ուղղափառ քրիստոնեաները՝ Քրիստոսի մարմնացման եւ Սուրբ Հաղորդութեան խորհրդին: Առաքեալն ասում է մեզ՝ եթէ տղամարդը Սուրբ Պատարագի ընթացքում ծածկի իր գլուխը, նա անարգած կը լինի իր հոգեւոր «գլխին», որ Քրիստոս է: Այլ կերպ ասած՝ այդ տղամարդն անարգում է Քրիստոսին, քանի որ այդ ֆիզիկական արարքով յայտարարում է, թէ Քրիստոս մարմնացած չէր: Կինը, միւս կողմից, ներկայացնում է եկեղեցին, ու պարտաւոր է քօղով ծածկել իր գլուխը, եթէ հաւատում է, թէ Քրիստոս իսկապէս մարմնացաւ. նաեւ ի նշան այն բանի, որ Քրիստոս՝ որպէս Փեսայ, սրբացրեց Իր «Հարս»-ին՝ Սուրբ Եկեղեցուն: «Հարս»-ի գլխի ծածկոյթը՝ որպէս սրբութեան խորհրդանիշ, մեծարում է Քրիստոսին: Նոյնպէս էլ կինն այդ տեսանելի ֆիզիկական նշանով յարգանք է ցուցաբերում իր ամուսնուն, որովհետեւ Քրիստոս եկաւ տղամարդու կերպարանքով: Ուստի ծածկոյթը սրբութեան խորհրդանիշն է, որովհետեւ Քրիստոսի Եկեղեցին սուրբ է. իսկ կինն իր գլխաշորով ներկայացնում է եկեղեցին՝ որպէս Քրիստոսի «Հարս»-ը: Սա խորհրդանիշն է այն բանի, թէ եկեղեցին օժտուած է Քրիստոսի պաշտպանութեամբ: Սա խորհրդանիշն է նաեւ Քրիստոսի եւ եկեղեցու յարաբերութիւնների: Սա ոչ թէ յայտարարութիւն է որեւէ կնոջ սրբութեան մասին, այլ՝ Եկեղեցու: Եկեղեցում կինը պէտք է քօղով գլուխը ծածկի, որովհետեւ ծածկուած գլուխը նշան է սրբութեան: Մովսէսը Սինա լեռան վրայ քօղով ծածկում էր իր երեսը: Իսրայէլացիները տեսնում էին, թէ Մովսէսի երեսը ճառագում էր (տե՛ս Ելք 34, 34): Իսկ քրիստո-

նեայ կնոջ երեսը ճառագում է իր ամուսնու փառքով ու պատուով։ Կինը պէտք է հոգ տանի, որ այդ ճառագումը ողջախոհ ծածկոյթով թաքցուի ուրիշների համար ու տեսանելի լինի իր ամուսնուն եւ ընտանիքին։ Հետեւաբար, քողը՝ որպէս սրբութեան նշան, կնոջ համար յատուկ առանձնաշնորհում է, երբ նա մտնում է եկեղեցի՝ Աստծուն աղօթելու։ Կնոջ համար գլխին քող դնելը յիշեցումն է այն բանի, թէ Աստուած կամենում է, որ կինը հնազանդ լինի իր ամուսնուն, եթէ նրանք մէկ մարմին են դարձել սուրբ Պսակի խորհրդով։ Իհարկէ, սա չի նշանակում, թէ կինը պարզապէս ստրուկի պարտականութիւն է ստանձնում տղամարդու առաջ ու չի կարող որեւէ դիտողութիւն անել։ Բայց ընտանիքում կարող է լինել միայն մէկ գլուխ, մէկ ղեկավար. եւ Աստուած ասում է, թէ դա պէտք է լինի տղամարդը։ ***«Ուզում եմ, որ դուք իմանաք, թէ ամէն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած։ Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը։ Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը. որովհետեւ այնպէս է համարուում, թէ իբր գլուխն ածիլուած լինի»*** *(Ա. Կորն. 11, 3-5)։ Այս խօսքերի մէջ ոչ մի անհասկանալի բան չկայ։ Միայն պահանջւում է հնազանդութիւն, նոյնիսկ եթէ այդ խօսքերը անհասկանալի են ընթերցողի համար։ Պօղոս առաքեալն ասում է.* ***«Եղբայրնե՛ր, ձեզ համար այս բանը օրինակ բերեցի իմ անձով եւ Ապողոսի անձով, որպէսզի մեզնից սովորէք աւելի բան չիմանալ, քան ինչ որ կայ գրուածքներում, որպէսզի ոչ մի մարդ, աւելի քան ընկերը, չգոռոզանայ ընկերոջ վրայ»*** *(Ա. Կորն. 4, 6)։ «Աւելի բան չիմանալ, քան ինչ որ կայ գրուածքներում» արտայայտութիւնը նշանակում է սեփական երեւակայական թերամտութեամբ գրուածին չաւելացնել որեւէ նենգաւոր իմաստաբանութիւն։ Պարզապէս պէտք է հաւատալ ու վստահել Աստծուն։ Ճշմարիտ իմաստութիւնը դրսեւորւում է այն ժամանակ, երբ մենք ոչ թէ իմաստակում ենք, այլ հնազանդութեամբ կատարում ենք Աստծու խօսքը։*

*Հիմա լուսաբանենք ծածկոյթի գաղափարը ընդհանրապէս։ Իւրաքանչիւր տուն կամ ճարտարապետական կառուցուածք ունի տանիք։ Մենք հասկանում ենք, թէ տանիքը կատարում է պաշտպանիչ դեր եղանակային տարբեր պայմանների՝ անձրեւի, կարկտի, ձեան, ցրտի եւ արեւի դէմքում։ Եթէ չկայ տանիք, ուրեմն տան մէջ ապրողները ենթակայ կը լինեն ցանկացած եղանակի հիւանդագին ազդեցութիւններին, իսկ դրա հետեւանքները ակնյայտ են։ Բայց եթէ կայ տանիք, ապա մարդն իրեն ապահով է զգում, քանի որ կայ մի ծածկոց, մի պաշտպանութիւն, որը մարդուն կ՚ապահովի պաշտպանութիւն ու յարմարաւէտութիւն։ Ֆիզիկական ծածկոյթն իր մէջ կարող է կրել նաեւ փոխաբերական՝ հոգեւոր իմաստ՝ լինի բացասական թէ դրական։ Բացասական օրինակ է, երբ Եսայի մարգարէն ասում էր. «**Այս լերան վրայ պիտի փչացնի բոլոր ժողովրդների երեսը ծածկող քողը, ու բոլոր ազգերի վրայ տարածուող ծածկոցը**» (Ես. 25, 7)[1]։ Ո՞րն է այս «ծածկող քողը» ու բոլոր ազգերի վրայ «տարածուող ծածկոցը», որ Աստուած պէտք է փչացնի։ Իհարկէ, խօսքը դիւական ցանցի կամ մահուան քողի մասին է, որը բոլոր ազգերը ժառանգեցին Ադամի եւ Եւայի մեղանչումով։ Մենք բոլորս, այսօր այս նոյն քողի տակ լինելով, հեծեծում ենք եւ երկունքի ցաւի մէջ, ենթարկուելով տարբեր տառապանքների, գայթակղութիւնների, հիւանդութիւնների ու մահուան, բայց նաեւ սպասելով Տիրոջ գալստեանը, որ գայ ու փրկի մեր մարմինները մեղքից, դժոխքից, մահից ու սատանայից (Հռոմ. 8, 22-23)։ Իսկ դրական է, ինչպէս ասում է սաղմոսերգուն. «**Իր ծոցում կը պահի, կը պաշտպանի քեզ, եւ դու ապահովութիւն կ՚ունենաս նրա թեւերի հովանու տակ**» (Սաղմ. 90, 4)։ Ուրեմն, Տէրն է մեզ պաշտպանող ծածկոցն ու հոգեւոր տանիքը, որն աւելի յուսալի է, քան որեւէ այլ բան այս աշխարհում։*

Հին Կտակարանում հետաքրքիր օրինակներ կան գլխի ծածկոցի

1 Աստուածաշնչի Արեւտահայերէն թարգմանութիւններում գրուած է. «Այս լերան վրայ բոլոր ժողովուրդներուն վրայ տարածուած ծածկողցը ու բոլոր ազգերուն վրայ փռուած վարագոյրը բնաջինջ պիտի ընէ»։

մասին։ Երբ Աբրահամն ու իր կինը՝ Սառան, մեկնեցին բնակուելու Գերարա, Աբրահամն իր կին Սառայի մասին ասում էր, թէ նա իր քոյրն է։ Այդ պատճառով գերարացիների արքայ Աբիմելէքը կնութեան առաւ Սառային։ Գիշերն Աստուած Աբիմելէքին երեւաց երազում եւ ասաց, թէ նա մեռնելու է այդ կնոջ պատճառով, որովհետեւ այդ կինն ամուսին ունի։ Բայց Աբիմելէքը, որ չէր մերձեցել նրան, Տիրոջն ասաց. «Չէ՞ որ նա ասաց ինձ՝ «Իմ քոյրն է», իսկ սա ասաց ինձ՝ «Իմ եղբայրն է»։ Ես մաքուր սրտով ու արդար ձեռքով արեցի դա»։ Աստուած պատուիրեց Աբիմելէքին, որ կնոջը վերադարձնի իր ամուսնուն՝ Աբրահամին, որովհետեւ նա մարգարէ է եւ նրա աղօթքով Աբիմելէքը կենդանի կը մնայ։ Աբրահամը կարծում էր, թէ իրեն կը սպանեն իր կնոջ պատճառով ու դրա համար իր կնոջն ասաց, որ նա ասի, թէ Աբրահամն իր եղբայրն է։ Յետոյ կարդում ենք, թէ Աբիմելէքը, Սառային դիմելով, ասաց. «Ահա հազար սատեր եմ տալիս քո եղբօրը։ Այն թող պատուի վկայութիւն լինի քեզ եւ քեզ հետ գտնուող բոլոր կանանց համար։ Այսուհետեւ կը պատմես ամբողջ ճշմարտութիւնը» (Ծնն. 20, 16)։ Ինչ է նշանակում «այն թող պատուի վկայութիւն լինի» խօսքը։ Հին յունարէն, ինչպէս նաեւ արեւմտահայերէն թարգմանութիւններում այսպէս է գրուած. «Ահա՛ եղբօրդ հազար կտոր արծաթ տուի։ Ահա՛ ան քեզի աչքերու ծածկոց ըլլայ՝ բոլոր քեզի հետ եղողներուն ու բոլորին առջեւ»։ Իսկ հրէական Թորայի բնագրում գրուած է հետեւեալը. «Ահա՛ հազար կտոր արծաթ եմ տալիս քո եղբօրը։ Իսկ ինքը քեզ ծածկոց լինի բոլորի աչքերի առաջ, որոնք քեզ հետ են ու բոլորի առաջ դու արդարացուած ես»[1]։ Եթէ որոշ թարգմանութիւններ ասում են, թէ հազար կտոր արծաթը (սատերը), որ Աբիմելէքը տուել էր Աբրահամին, տուել էր ծածկոցի համար, որով Սառան, գլխին դնելով, արդարացուեց այն մարդկանց աչքերում, ովքեր եկել էին իր հետ, ապա հրէական Թորան այլ կերպ է մեկնաբանում սա, ասելով, թէ այդ ծածկոցը ինքն իսկ Աբրահամն է։ Բայց ինչո՞ւ է Աբիմելէքն ասում, թէ

1 Тора, гл. Ваера XX:15-16.

ծածկոցը լինի ի ցոյց բոլորի աչքերի։ Որովհետեւ ծածկոցը ծառայում էր որպէս տարբերանշան ժողովրդի աչքին. այսինքն՝ նշան էր այն բանի, թէ Սառան ամուսին ունի, եւ իր ամուսինն է այդ պաշտպանիչ ծածկոցը։ Բոլոր ամուսնացած կանայք պարտաւոր էին ծածկել իրենց գլուխները, բայց Սառան, Աբրահամի խնդրանքով, հանել էր իր գլխի ծածկոցը, որպէսզի ոչ ոք չմտածի, թէ ինքն Աբրահամի կինն է։

Գլխի ծածկոցը համազօր էր այսօրուայ ամուսնական մատանուն, որը իւրաքանչիւր ժամանակակից ամուսնացած կնոջ ու տղամարդու համար հանդիսանում է որպէս սուրբ Պսակի տեսանելի խորհրդանշանը։ Հետեւաբար, եթէ Սառան իր գլխին ունենար ծածկոցը, ապա Աբրահամը չէր կարող ասել, թէ Սառան իր քոյրն է։ Աբիմելէքն ասաց, թէ Սառան արդարացուած է իրենց շրջապատող բոլոր մարդկանց առաջ։ Սակայն մենք չգիտենք, թէ ի՞նչ էին խօսում մարդիկ Սառայի մասին այն ժամանակ, երբ նա հանել էր իր գլխի ծածկոցը, բայց փաստն այն է, թէ Սառան, երբ նորից ծածկեց իր գլուխը, նա արդարացուեց բոլորի առաջ։

Ուրիշ մի օրինակ է Ռեբեկայի ու Իսահակի հանդիպման պատմութիւնը։ Երբ Ռեբեկան տեսաւ Իսահակին ու հասկացաւ, թէ նա է իր ամուսինը, անմիջապէս, առանց յապաղելու, քօղով ծածկեց իր գլուխը՝ այսպիսով ճանաչելով ամուսնու իշխանութիւնն իր վրայ. **«Ռեբեկան առաւ քօղն ու գցեց իր վրայ... Իսահակը մտաւ իր մօր՝ Սառայի տունը, առաւ Ռեբեկային, և սա դարձաւ նրա կինը»** (Ծնն. 24, 63-65)։

Սողոմոնի «Երգ Երգոց»-ում կարդում ենք հետեւեալը. **«Ինձ գտան քաղաքում շրջող պահապանները, խփեցին ու վիրաւորեցին ինձ, իսկ պարիսպների պահակները քօղս հանեցին իմ վրայից»** (Երգ 5, 8)։ Հարսի ու Փեսայի յարաբերութիւնները «Երգ Երգոց»-ում խորհրդաբար ներկայացնում են Քրիստոսի ու Եկեղեցու յարաբերութիւնները։ Սողոմոն Իմաստունն ասում է, թէ պահակները հանեցին քօղը, որ պահպանում ու պաշտպանում էր քաղաքի պա-

*րիսպները։ Մինչեւ քօղը հանելը, շրջող պահապանները խփեցին եւ վիրաւորեցին Երուսաղէմի Դստերը։ Քօղը, ինչպէս տեսնում ենք, կատարում էր պաշտպանական պարտականութիւն, ինչպէս եւ բոլոր միւս ծածկոցները։ Այսօր այդ «քաղաք»-ը մեղքի ու չարութեան աշխարհն է, որտեղ մենք ապրում ենք։ Ու չար ոգիների գնդերն այս աշխարհի պահապաններն ու խնամակալներն են։ Սատանան զանազան գայթակղութիւններով եւ այս աշխարհին կերպարանակից անելու միջոցով ցանկանում է Քրիստոսի Եկեղեցուց վերացնել պաշտպանիչ նշանակութիւն ունեցող քօղը։ Եւ այնպէս է ստացւում, որ Եկեղեցու անդամներն այսօր աւելի համամիտ են դառնում այս աշխարհին, քան իրենց Տիրոջը։ Պօղոս առաքեալն ասում է. «**Սուրբ Հոգին յայտնապէս ասում է, թէ վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հաւատից եւ իրենց ուշադրութիւնը պիտի դարձնեն մոլորեցնող ոգիների վրայ եւ դեւերի վարդապետութիւնների վրայ՝ տարուած ստախօսների կեղծաւորութեամբ, որոնց խղճմտանքը խարանուած է, որոնք արգելում են ամուսնանալ եւ հեռու են պահում այն կերակուրներից, որ Աստուած ստեղծեց, որպէսզի հաւատացեալները եւ ճշմարտութեան վերահասու եղողները գոհութեամբ վայելեն**» (Ա. Տիմ. 4, 1-3)։*

Աբրահամի խնդրանքով Սառան իր վրայից հանեց քօղը, որ պահպանում էր իր հոգու պարիսպները, ու դրա համար Աբիսողոմը նրան տարաւ իր պալատը։ Ռեբեկան, երբ տեսաւ Իսահակին ու հասկացաւ, թէ նա իր տէրն է, անմիջապէս քօղով ծածկեց իր գլուխը։ Բայց Իսահակին ու Ռեբեկային պատահում է նոյն պատմութիւնը, ինչ որ պատահել էր Սառային ու Աբրահամին։ Այս երկու պատմութիւններում էլ մեզ համար ուշագրաւ իմաստ կայ։

Պօղոս առաքեալը վերոյիշեալ հատուածում (Ա. Կորն. 11, 4-5) ասում էր. «Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց...»։ Ոմանք այսօր առարկում են, թէ գլխաշորը միայն ամուսնացած կամ ծեր կանանց համար է եւ սա չի վերաբերում կոյսերին։ Երկրորդ դարի քրիստոնէութեան ջատագով Տեր-

տուղիանոսն ասում է. «Ինչ է նշանակում «ամէն կին»-ը, եթէ ոչ իւրաքանչիւր կին իւրաքանչիւր տարիքում, իւրաքանչիւր դիրքում եւ իւրաքանչիւր վիճակում. ամէն կին առանց բացառութեան... Ինչպէս որ «ամէն մարդ» արական սեռից, այդպէս էլ «երիտասարդ» տղաներին արգելուած էր գլխի ծածկոց կրել, նոյնպէս էլ կանայք՝ «ամէն կին» անուան տակ, նաեւ «կոյսերը» պարտաւոր են քող դնել»[1]: Նա պնդում է, թէ բոլոր կանայք պէտք է գլխածածկ լինեն աղօթելիս. ոչ միայն նրանք, ովքեր ամուսնացած են, այլեւ բոլոր կոյսերը: Տերտուղիանոսն ասում է. «Բայց այն տեսակէտը, որ անկարգօրէն նկատւում է բոլոր եկեղեցիներում, թէ կոյսերը պէ՞տք է արդեօք ծածկուեն, անհրաժեշտ է քննարկել, որովհետեւ նրանք, ովքեր կոյսերին թոյլ են տալիս անձեռնմխելիութիւն գլխաշոր կրելու, հանգստանում են դրանով, իսկ առաքեալը չի սահմանափակւում «կոյս» բառով, այլ ասում է «ամէն կին», որ «պարտաւոր է քող դնել գլխին»[2]: Տերտուղիանոսը նաեւ ասում էր. «Իսկ եթէ մէկը,- ասում է առաքեալը,- ուզում է առարկել, մենք չունենք այդպիսի սովորութիւն, ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները». այնպէս որ արդեո՞ք կորնթացիներն էլ հասկանում էին նրան: Ի դէպ, կորնթացի կոյսերը մինչեւ օրս ծածկում են իրենց գլուխները: Ինչ որ առաքեալները սովորեցրել էին, իրենց աշակերտները հաստատում են...»[3]: Նաեւ ասում է. «Ողջ Յունաստանում, ներառեալ նրա որոշ բարբարոս մարզերում, եկեղեցիների մեծամասնութիւնը իրենց կոյսերի գլուխները ծածկուած են պահել: Կան վայրեր այս աֆրիկեան երկնքի տակ, որտեղ այս սովորութիւնը պահպանուած է, որպէսզի աւանդոյթը չվերագրուի միայն յունական կամ բարբարոս հեթանոսութեանը: Բայց ես առաջարկել եմ (որպէս նախատիպ) այն եկեղեցիները, որոնք հիմնադրուել են առաքեալների կողմից կամ էլ առաքելական յաջորդականութեամբ... Իսկ եթէ մէկը,- ասում է առա-

1 Tertullian (A.D. 198) Ante-Nicene Fathers vol. 3, pg. 688.

2 Նոյն տեղում, pg. 687.

3 Tertullian (A.D. 198) Ante-Nicene Fathers vol. 4, pg. 32-33.

քեալը,- ուզում է առարկել, մենք չունենք այդպիսի սովորութիւն, ոչ էլ Աստծու եկեղեցիները: Այնպէս որ արդեօ՞ք կորնթացիներն էլ հասկանում են նրան: Ի դէպ, կորնթացիները մինչեւ օրս ծածկում են իրենց կոյսերի գլուխները: Ինչ որ առաքեալները սովորեցրել էին, իրենց աշակերտները հաստատում են... Ու քանի որ նրանք ծածկում են իրենց գլուխները հեթանոսների ներկայութեամբ, թող նրանք եկեղեցու բոլոր արարողութիւնների ընթացքում թաքցնեն իրենց կուսութիւնը, ինչ որ արդէն անում են եկեղեցուց դուրս: Նրանք վախենում են օտարներից, թող որ ուրեմն ահով եւ ակնածանքով կանգնեն նաեւ եղբայրների առաջ»[1]*:*

*Ուրեմն «**ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը**»: «Անպատուում է իր գլուխը» խօսքերը նշանակում է ամօթանք բերել իր վրայ: Ուրիշ թարգմանութիւններում օգտագործւում են «ամօթ», «խայտառակութիւն» կամ «անարգանք» բառերը: Արդեօք կարո՞ղ են անպատուութիւնը, ամօթանքը կամ անարգանքը գեղեցկացնել կնոջը: Անշուշտ, ո՛չ: Աւելին, Պօղոս առաքեալն ասում է, թէ կինը, երբ աղօթքի կանգնի գլխաբաց, «**այնպէս է համարւում, թէ իբր գլուխն ածիլուած լինի**»: Մէկը կարող է ասել, թէ ինչ սխալ բան կայ գլուխն ածիլուած լինելու մէջ, քանի որ ածիլուած գլուխն աւելի հեշտ է խնամել, քան տառապել մազերը յարդարելով, միշտ լուանալով եւ այլն: Որոշ քրիստոնեաներ առաքեալի հրահանգը ծածկոցի մասին մեկնաբանում են որպէս տեղական միջավայրի մշակոյթին վերաբերող մի աւանդոյթ, որ գոյութիւն ունէր Կորնթոսի եկեղեցում միայն առաջին դարի ընթացքում:*

*Ինչո՞ւ է առաքեալն ասում՝ «**իբր գլուխն ածիլուած լինի**»: Սուրբ Գրքի ժամանակակից մեկնիչները փաստում են, թէ ժամանակին Փոքր Ասիայի հեթանոսական տաճարներում գործում էր ծիսական մարմնավաճառութիւն, եւ այդ մարմնավաճառների գլուխներն*

1 Church Fathers, "On the Veiling of Virgins" (Tertullian), New Advent, chapter 2. http://www.newadvent.org/fathers/0403.htm (ստ 9/04/2017):

ածիլուած էին։ Նրանք վկայում են, թէ Կորնթոսում գլխաբաց կանայք նմանեցուում էին այդ մարմնավաճառներին։ Օրինակ՝ Աֆրոդիտէի տաճարում կային ածիլուած գլուխներով հազարից աւելի մարմնավաճառներ, որոնց արգելուած էր քօղով ծածկել գլուխները։ Եթէ մարմնավաճառը փորձէր իր գլուխը քօղով ծածկել, ընդունելով պատուական կնոջ տեսք, ապա նրան սպասում էր ծանր պատիժ։ Դժուար է այսօր յստակ ասել, թէ կա՞յ իրօք որեւէ ապացոյց այն բանի, թէ Պօղոս առաքեալն ուզում էր եկեղեցու կանանց համեմատել այն ժամանակուայ ածիլուած գլխով տաճարային մարմնավաճառների հետ, քանի որ պատմական փաստերի պակաս կայ, թէ կնոջ ածիլուած գլուխը մարմնավաճառների տարբերակիչ նշան էր, կամ թէ Կորնթոսն իսկապէս մարմնավաճառութեան կենտրոն էր։ Բայց գոյութիւն ունեն հռոմէական քանդակուած գետնադամբարանների ու կառոյցների պատերին պատկերուած մարմնավաճառների քանդակներն ու նկարները, ինչպէս նաեւ յոյն փիլիսոփայ, պատմաբան եւ աշխարհագէտ Ստրաբոնի[1] (Strabo) «Geographica» *գիրքը, որի մէջ նա վկայում է տաճարային մարմնավաճառութեան մասին, որը կիրառւում էր Կորնթոսում։ Ստրաբոնը վկայում է, թէ՝ «Աֆրոդիտէի տաճարն էլ այնքան առատ էր, որ տղամարդկանց եւ կանանց նուիրատուութիւններով ձեռք է բերել աւելի քան հազար մարմնավաճառներ՝ չաստուածուհուն ծառայելու համար։ Եւ սրանց պատճառով քաղաքը միշտ լցուած էր լինում ու դարձաւ հարուստ։ Նաւապետներն այստեղ կարող էին վատնել իրենց ամբողջ ունեցուածքը։ Ուստի ասացուածք կայ. «Դէպի Կորնթոս ճա-*

1 Ստրաբոնը (Ք.ա. 64/63 - 24 թթ.) եղել էր Կորնթոսում Ք. ա. 44 թ, ինչը հազուադէպ էր յիշատակւում այն ժամանակաշրջանում, բայց շուտով բազմաթիւ փաստեր յայտնուեցին ամբողջ Բիւզանդական կայսրութիւնում։ Գիրքը՝ որպէս լատիներէն թարգմանութիւն, առաջին անգամ յայտնուեց Արեւմտեան Եւրոպայում՝ Հռոմում, 1469-ին, իսկ առաջին յունական հրատարակութիւնները տպագրուեցին Վենետիկում 1516-ին։ Որպէս այդպիսին՝ «Geographica»-ն հնագոյն աշխարհի տեղեկատուութեան մի արժէքաւոր աղբիւր էր, յատկապէս երբ այս տեղեկատուութիւնը հաստատւում է այլ աղբիւրներով։

նապարհորդութիւնն ամէն մարդու բանը չէ»»[1]: Նոյնպէս՝ Ֆ. Ա. Բրոքհաուսի եւ Ի. Ա. Եփրոնի «Հանրագիտարանային բառարան»[2]-ում, Է. Նիւսթրեմի «Աստուածաշնչեան հանրագիտարանային բառարան»[3]-ում եւ Նիկիֆորի վարդապետի «Աստուածաշնչեան հանրագիտարան»-ում կարելի է կարդալ Կորնթոսում գտնուող սիրոյ ու գեղեցկութեան չաստուածուհի Աֆրոդիտէի՝ յայտնի հեթանոսական տաճարի եւ ծառայողների մասին: Նիւսթրեմի հանրագիտարանում գրուած է. «Հարստութիւնը քաղաքը դարձրեց բոլոր չարիքների օջախ: Աֆրոդիտէի տաճարում, որը գտնւում էր լեռան գագաթին, հազարաւոր պոռնիկներ զբաղւում էին անբարոյական կռապաշտութեամբ»: Տաճարի պոռնիկ ծիսակատարուհիների հետ յարաբերուելով՝ տղամարդիկ իրենց պաշտամունքն էին մատուցում Աֆրոդիտէին: Նրանց տարբերանշանն էր իրենց ածիլուած գլուխը, որով ճանաչւում էին Կորնթոսի փողոցներում: Բոլոր պոռնիկներն ածիլում էին իրենց գլուխները, ճիշդ այնպէս, ինչպէս մենք այսօր կարող ենք ճանաչել փողոցի մարմնավաճառներին՝ իրենց խիստ անբարոյական արտաքին պահուածքով ու անպարկեշտ զգեստներով:

Պէտք է հաշուի առնել մի այլ կարեւոր պատճառ Աստուածաշնչից: Թէեւ առաջին հայեացքից թւում է, թէ այն չի վերաբերում եկեղեցում գլխաշոր գործածելու թեմային, բայց ամէն դէպքում բացայայտում է մի շատ կարեւոր իրողութիւն այն մասին, թէ օրէնքի համաձայն՝ ե՛րբ էր կինը պարտաւոր իր գլուխը բացել Աստծու առաջ: Աւելի հաւանական է, թէ Պօղոս առաքեալը որպէս փաստ հիմնւում էր Աստուածաշնչի այդ հատուածի վրայ, այլ ոչ թէ Կորնթոսի՝ գուցէ անհասկանալի ծագում ունեցող մարմնավաճառների ածիլուած լինելու աւանդոյթի վրայ: Հին Կտակարանում Տէրը Մովսէսին տալիս է օրէնք անառակութեան մէջ կասկածուող կանանց համար

1 Strabo, Geography, Book 8, chapter 6, section 20.

2 Ф. А. Брокгауз и И. А. Ефрон, "Энциклопедический Словарь".

3 Э. Нюстрем, "Библейский Энциклопедический Словарь".

(տե՛ս Թուեր 5, 11-22)։ Առաջին հերթին քահանան անհաւատարիմ կնոջ գլխից հանում էր նրա գլխաշորը։ Կարդանք այդ հատուածը. ***«Քահանան կնոջը պիտի կանգնեցնի Տիրոջ առջեւ, հանի կնոջ գլխաշորը, նրա ձեռքը տայ մեղքը յիշեցնող ընծայաբերումը, խանդի ընծայաբերումը»*** *(Թուեր 5, 18)։ Քահանան այս նզովքը գրի է առնում, ապա գրուածը լուանում է նզովքի յանդիմանութեան ջրի մէջ, եւ երդուեցնելով ամուսնուն դաւաճանող կնոջը՝ այդ ջուրը խմել է տալիս նրան, որպէսզի նզովեալ ջուրը լցուի նրա որովայնում։ Կարծում եմ՝ սա էր գլխաւոր պատճառը, որ առաքեալն ածիլելու համեմատութիւն է անում։ Նա յիշեցնում է Աստուածաշնչի «Թուեր» գիրքը, ուր ցոյց է տրուած, թէ կինն իր գլուխը բացում էր Աստծու առաջ, երբ նա դաւաճանում էր իր ամուսնուն ու դառնում շնացող։ Նշանակում է՝ նա այլեւս իր ամուսնու իշխանութեան տակ չէր. հնազանդ չէր ո՛չ իր ամուսնուն, ո՛չ էլ Աստծուն, որ միացրել էր իրենց՝ մէկ մարմին լինելու։ Իւրաքանչիւր մարդ, ով կարդում է այս մէջբերման տողերը (Թուեր 5, 18), կարող է տեսնել, որ այստեղ նկարագրւում է, թէ ե՛րբ էր կինը գլխաբաց կանգնում Աստծու առաջ։ Կնոջ գլխի քօղը հանւում էր այն ժամանակ, երբ նրան կասկածում էին ամուսնական դաւաճանութեան մէջ։ Այն ժամանակ հնազանդութեան նշանը վերցւում էր նրա գլխից։ Իսկ եթէ հարցը կնոջ օգտին էր որոշւում, ապա ամէն բան վերականգնւում էր, ու նա նորից գլխաշոր էր կրում՝ որպէս հնազանդութեան ու հաւատարմութեան նշան։ Սա է պատճառը, որ Պօղոս առաքեալը գրում է.* ***«Ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը. որովհետեւ այնպէս է համարւում, թէ իբր գլուխն ածիլուած լինի»***։ *Այլ կերպ ասած, սա նոյնն է, եթէ այդ կինը լինէր անբարոյական։ Այսօր այս մասին չեն ուզում խօսել ու հնարում են տարբեր տեսութիւններ՝ եկեղեցուն պարտադրելով մոլորութիւն։ Նոյնն անում են նրանք, ովքեր կոչ են անում ներկայիս քրիստոնեայ կանանց սերնդին ապրել ժամանակակից մշակոյթի չարաբնոյթ կանոններով, որ պարտադրում է մեզ այս մեղքի աշխարհը։*

Եսայի մարգարէն գրում է, թէ գլխի քօղը հանելը ամօթի նշան էր, երբ խօսում է Բաբելոնի դատաստանի մասին՝ դիմելով քաղդէացիների դստերը. «**Երկա՛նք առ, ալի՛ւր աղա, դէ՛ն նետիր քօղդ, քաշի՛ր մազերդ, մերկացրո՛ւ սրունքներդ եւ անցի՛ր գետի միջով, ու թող յայտնուի քո ամօթը, թող երեւայ քո նախատինքը, քանզի քեզնից վերցնելու եմ քո իրաւունքները**» (Ես. 47, 2)։ Ամօթն ու նախատինքը ծածկոցի մերժման պատճառով շատ մեծ է լինելու, քանի որ, ինչպէս ասում է մարգարէն. «**Այն օրը եօթը կին պիտի բռնեն մի տղամարդու եւ ասեն. «Մեր հացը կ՚ուտենք եւ մեր զգեստը կը հագնենք, միայն թէ քո անունը լինի մեզ վրայ. մեր այրիութեան նախատինքը վերացրո՛ւ մեզնից»**» (Ես. 4, 1)։ Ասում է, թէ ամօթ է լինելու, որովհետեւ նրանք իրենց հացը չէին ուտում ու իրենց զգեստը չէին հագնում։ Իրենց հացը չուտելը նշանակում է, թէ շատ քրիստոնեաներ գնում էին ոչ թէ ճշմարտութեան ճանապարհով, այլ ապօրինաբար իւրացնում էին այն ծառայութիւնները, որ Աստուած չէր տուել, եւ կատարում իրենց սեփական կամքը, այլ ոչ թէ Աստծու։ Այսինքն՝ եկեղեցում իրենց ճիշդ տեղը չէին զբաղեցնում, որպէսզի Սուրբ Հոգին լիարժէք կատարէր այն գործողութիւնները, որոնք որ ցանկանում էր։ Նոյն բանը վերաբերում է կանանց զգեստներին՝ ինչպէս բառացիօրէն, այդպէս էլ հոգեւոր առումով։ Բառացիօրէն Մովսէսն ասում էր. «**Կինը տղամարդու զգեստ պէտք չէ հագնի, իսկ տղամարդն էլ կանացի զգեստ պէտք չէ հագնի, որովհետեւ քո Տէր Աստծու առջեւ պիղծ է նա, ով անում է այդ բանը**» (Երկ. Օր. 22, 5)։ Իսկ հոգեւոր առումով սա նշանակում է, թէ տղամարդու զգեստը հագնելով՝ կինն իր վրայ է վերցնում տղամարդու իշխանութիւնն ու լիազօրութիւնը՝ այդպիսով մերժելով իր ամուսնու իշխանութիւնն իր նկատմամբ։ Իսկ սա նոյնն է, թէ եկեղեցին մերժէր Տիրոջ իշխանութիւնը։ Չէ՞ որ սատանան արդէն մի անգամ ապստամբեց եւ այդպիսով իրեն դատապարտեց գեհենի յաւիտենական կրակի տանջանքներին։

Թէեւ գործնականում միայն կնոջ գլուխն է ծածկւում, բայց

իրականում Քրիստոսի գլուխը ծածկուած էր Հայր Աստծու առջեւ. եւ ամէն այր մարդու գլուխ ծածկուած էր Քրիստոսի առջեւ: Ուրեմն, ինչո՞ւ է Աստուած պահանջում, որ իրականում միայն կնոջ գլուխը ծածկուած լինի: Այս պատուիրանի մէջ իսկապէս ներառնուած է մի շատ խորհրդաւոր սկզբունք: Բոլորի գլուխները պէտք է ծածկուած լինեն Աստծու առաջ: Բայց քանի որ Քրիստոսն է իմ գլուխը, ես չեմ կարող ունենալ իմ սեփական գլուխը: Ուստի, իմ գլուխը պէտք է ծածկուած լինի, քանի որ Քրիստոս է իմ գլուխը: Աստուած նշանակել է տղամարդուն լինել իր կնոջ գլուխը: Մեր օրերում, երբ Աստծու իշխանութիւնն անծանօթ եւ անյայտ է այս աշխարհում, Տէրը պահանջում է, որ այդ ընդունուած համակարգը գործի եկեղեցում: Երբ կինը ծածկում է իր գլուխը, նա կանգնում է Աստծու առաջ՝ ըստ Քրիստոսի ու տղամարդկանց դիրքի: Տէրն ուզում է, որ կինը ծածկի իր գլուխը՝ արտայայտելու Աստծու տիրապետական տնօրինութեան կարգը երկրի վրայ: Այս իւրայատուկ արտօնութիւնը տրւում է միայն կնոջը: Կինը ծածկում է իր գլուխը ոչ թէ պարզապէս իր անձնական ինքնորոշման համար, այլ ներկայացնելու համար Քրիստոսի Խորհրդաւոր Մարմինը՝ եկեղեցին, այսինքն՝ ամբողջ հաւատաւոր ժողովուրդը: Կինը ծածկում է իր գլուխը նախ նրա համար, որ կին է. երկրորդ, ներկայացնում է նաեւ տղամարդուն Քրիստոսի առաջ եւ Քրիստոսին՝ Հայր Աստծու առաջ: Այնպէս որ, երբ կինը քօղով իր գլուխը ծածկում է Աստծու առաջ, դա նշանակն է՝ որպէս թէ Քրիստոս «ծածկում» է իր գլուխն Աստծու առաջ: Նմանապէս, երբ կինը ծածկում է իր գլուխն իր ամուսնու առաջ, դա նշանակն է՝ որպէս թէ ամուսինը ծածկուած լինի Քրիստոսի առաջ: Տղամարդն ու կինը պէտք չէ գլուխ լինեն, քանի որ Քրիստոս է գլուխը: Եթէ գլխաւորութեան կարգի մէջ մէկը գլուխը չծածկի, ապա կը լինեն երկու գլուխներ: Աստծու եւ Քրիստոսի միջեւ մէկ գլուխը պէտք է լինի «ծածկուած», այդպէս էլ պէտք է մէկ գլուխ ծածկուած լինի տղամարդու եւ կնոջ միջեւ. եւ նոյնը պէտք է լինի Քրիստոսի ու տղամարդու միջեւ: Ուրիշ խօսքերով, եթէ Աստուած է գլուխը, ապա Քրիստոսը չէ. եթէ Քրիս-

տոս է գլուխը, ապա տղամարդը չէ. եւ եթէ տղամարդն է գլուխը, ապա կինը չէ: Տէր Աստուած կոչ է անում, որ կինը, իր գլուխն Աստծու առաջ ծածկելով, ցոյց տայ աստուածային տիրապետութեան եւ այս խորհրդաւոր տնօրինութեան պայմանաւորուածութիւնն ու համակարգը: Ուստի, կանայք պարտաւոր են ունենալ հնազանդութեան նշանն իրենց գլխին: Աստուած յատկապէս պահանջում է, որ կանայք իրենց գլուխը ծածկեն եկեղեցում: Տղամարդը պարտաւոր չէ ծածկել իր գլուխը, քանի որ դա ամօթ է իր գլխի համար. չէ՞ որ նա ներկայացնում է Քրիստոսին:

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «Գուցէ մէկը կը սկսի տարակուսել եւ ինքն իրեն կը հարցնի, թէ ինչո՞ւ է մեղք, եթէ կանայք լինեն գլխաբաց, իսկ տղամարդիկ ծածկուեն: Թէ ո՞րն է այստեղ մեղքը, կարող ես տեսնել հետեւեալից: Ամուսնուն ու կնոջը տրուած են տարբեր նշաններ. մէկին՝ իշխանութիւն, միւսին՝ ենթարկուածութիւն. եւ այն, որ կինը ծածկուի, իսկ ամուսինը լինի գլխաբաց: Եթէ այդպիսիք են նշանները, ուրեմն նրանք երկուսն էլ մեղք են գործում, երբ խախտում են բարեկարգութիւնն ու Աստծու պատուիրանը, երբ ոտնահարում են սեփական սահմանները՝ ամուսինն իջնելով կնոջ նուաստացմանը, իսկ կինն իր տեսքով բարձրանալով ամուսնուց: Եթէ նրանց թոյլատրելի չէ փոխել իրենց հագուստները, այսինքն՝ կնոջը հագնել տղամարդու հագուստ, իսկ ամուսնուն հագնել կանանց հագուստ ու գլխաշոր, ինչպէս ասում է Աստուածաշունչը. «**Ոչ մի կին պէտք չէ հագնի տղամարդկանց հագուստ, եւ ոչ մի տղամարդ պէտք չէ հագնի կանանց հագուստը**» (Երկ. Օր. 22, 5), ապա առաւել եւս անթոյլատրելի է փոխանակել հագուստները: Սա օրինականացուած է մարդկանցով, թէեւ յետոյ հաստատուեց նաեւ Աստծու կողմից: Իսկ այն գալիս է բնութիւնից. այսինքն՝ որ մէկը ծածկուի, իսկ միւսը չծածկուի: Բնութիւն ասելով՝ ես նկատի ունեմ Աստծու արարչութիւնը: Հետեւաբար, եթէ դու խախտես այդ սահմանները, տե՛ս, թէ որքա՜ն վնաս կարող է առաջանալ: Մի՛ ասա ինձ, թէ այս յանցագործութիւնը չնչին

է։ Այն ինքն իրենով արդէն մեծ է, քանի որ անհնազանդութիւն է։ Նոյնիսկ եթէ լինէր չնչին, միեւնոյն է, այն մեծ է, որովհետեւ դա վերաբերում է մեծ տեսութիւնների նշանին։ Իսկ որ մեծ է, երեւում է այն փաստից, որ մարդկային ցեղում այն արտադրում է բարեկարգութիւն՝ ղեկավարողին ու ենթարկուողին պատշաճ ձեւով ներկայացնելով։ Սրան հակառակ՝ վարուողն ամէն բան մատնում է շփոթութեան, զրկում է իրեն պարգեւներից, նուաստացնում է իրեն վերեւից շնորհուած պատիւը ոչ միայն ամուսնուն, այլ նաեւ կնոջը։ Չէ՞ որ իր համար էլ մեծ պատիւ է պահպանել իր տեղը, եւ ամօթ է դուրս գալ սահմաններից։ Այդ պատճառով էլ առաքեալը երկուսի համար է խօսում. ***«Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը։ Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը. որովհետեւ այնպէս է համարուում, թէ իբր գլուխն ածիլուած լինի»*** *(Ա. Կորն.11, 4-5)։ Հին ժամանակներում, ինչպէս ասացի, եղել են տղամարդիկ, որ մարգարէանում էին, նաեւ կանայք, որ ունեցել են այդ պարգեւը։ Օրինակ՝ Փիլիպպոսի դուստրերը եւ ուրիշներ նրանցից առաջ եւ յետոյ։ Նրանց մասին հին ժամանակներում նոյնպէս մարգարէն ասում էր.* ***«Պիտի մարգարէանան, ձեր որդիներն ու ձեր դուստրերը տեսիլքներ պիտի տեսնեն»*** *(Յովհ. 2, 28)։ Պօղոս առաքեալը հրամայում է, որ տղամարդը միշտ լինի գլխաբաց՝ ասելով.* ***«Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը»***։ *Իսկ կնոջը հրամայում է ծածկուած լինել բոլոր ժամանակներում, քանի որ երբ ասում է.* ***«Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը»***, *նա այստեղ կանգ չի առնում, այլ աւելացնում է.* ***«Որովհետեւ այնպէս է համարուում, թէ իբր գլուխն ածիլուած լինի»***։ *Եթէ ածիլուած լինելը միշտ ամօթ է, ապա ակնյայտ է, թէ գլխաբաց լինելն էլ միշտ ամօթ է։ Յոյց է տալիս նաեւ հակառակ գործողութեան անպարկեշտութիւնը եւ ուժեղ յանդիմանում է, երբ*

*ասում է. «**Եթէ կինը քօղով չի ծածկուում, թող կտրի իր մազերը**»: Ասում է՝ եթէ դու հրաժարւում ես Աստծու օրէնքով հաստատուած ծածկոցից, ուրեմն հրաժարուիր նաեւ բնութեան տուածից: Բայց մէկը կարող է հարցնել, թէ ինչպէս կարող է կնոջը անպատուութիւն լինել, եթէ նա հասնում է ամուսնու պատուին: Այդպիսով մենք ասում ենք, թէ նա ոչ միայն չի հասնում, այլ նաեւ կորցնում է իր անձնական պատիւը: Ի վերջոյ, Աստծու կողմից սահմանուած օրէնքներն ու կանոնները խախտելը ու դրանք ոտնահարելը վեհացում չէ, այլ նուաստացում:*

*Ինչպէս ուրիշի ունեցուածքին ցանկացողը եւ իրեն չպատկանածը յափշտակողը ոչինչ ձեռք չի բերում, այլ ստորանում ու կորցնում է նաեւ այն, ինչ ունէր, ինչպէս, օրինակ, եղել էր դրախտում, այդպէս էլ կինն այս դէպքում իր համար ոչ միայն ձեռք չի բերում իր ամուսնու ազնուականութիւնը, այլեւ կորցնում է իր կանացի պարկեշտութիւնը: Բացի դրանից՝ միայն դա չէ, որ ամօթալի է իր համար, այլ նաեւ դա ագահութիւն է: Հետեւաբար, նշելով այն, որն անկասկած համարւում է ամօթալի՝ այս խօսքերով. «**Իսկ եթէ ամօթ է կնոջ համար մազը կտրել կամ ածիլել**», վերջապէս իր կողմից ասում է. «**Թող քօղով ծածկուի**»: Չի ասում «թող աճեցնի մազերը», այլ՝ «թող քօղով ծածկուի» ներշնչելով, թէ եւ՛ այս, եւ՛ այն խօսքերը նոյնն են: Եւ դա ապացուցում է երկու՝ օրէնքի եւ բնութեան կողմից: Ծածկոյթը եւ աճեցրած մազերը, ասում է նոյն բանն են ճիշդ այնպէս, ինչպէս նոյնն են մերկ եւ ածիլուած գլուխը, «**որովհետեւ այնպէս է համարւում, թէ իբր գլուխն ածիլուած լինի**»: Բայց մէկը կարող է հարցնել, թէ ինչպէ՞ս են նոյնը, երբ նա ունի բնական ծածկոյթ, իսկ ածիլուածը՝ դա էլ չունի: Մենք ասում ենք, որ նա, ով մերկ գլուխ ունի, իր կամքով մերժեց նաեւ բնական ծածկոյթը: Իսկ եթէ նա զուրկ չէ մազերից, ապա դա բնութեան գործն է, այլ ոչ թէ նրա: Հետեւաբար, ինչպէս ածիլուածն ունի մերկ գլուխ, այդպէս էլ նա: Այս պատճառով էլ Աստուած հրամայեց բնութեանը՝ գլուխը ծածկել մազերով, որ-*

պէսզի կինը, սովորելով բնութիւնից, ինքն էլ ծածկուի»[1]:

«Քանզի, եթէ կինը քօղով չի ծածկւում, թող կտրի իր մազերը: Իսկ եթէ ամօթ է կնոջ համար մազը կտրել կամ ածիլել, թող քօղով ծածկուի» (Ա. Կորն. 11, 6):

Այստեղ Պօղոս առաքեալը փորձում է մեզ փոխանցել աստուածաբանական կարեւոր մի սկզբունք: Եկեղեցու սովորութիւնները պատահականութեան արդիւնք չեն: Եկեղեցական բոլոր աւանդութիւնները ունեն իրենց սկզբնաւորման պատճառները: Ըստ Հին Կտակարանի՝ հրեայ տղամարդիկ ու կանայք պաշտամունքի ընթացքում ծածկում էին իրենց գլուխները, սակայն նախնի հրեայ-քրիստոնեաները փոխեցին այդ աւանդոյթը մի կարեւոր պատճառով: Նրանք ուզում էին, որ ծածկոցի տեղադրումը լինի Քրիստոսի մարմնացման խորհրդանիշը, ինչպէս արել էին շատ այլ հրէական աւանդոյթների գործադրման ընթացքում, որոնց մասին Պօղոս առաքեալն արդէն նշում է կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 14-րդ գլխում: Սրանք մարդկային մտքի հնարովի աւանդոյթներ չէին, այլ յայտնուել էին ու հաստատուել Սուրբ Հոգու ներշնչումով: Առաքեալն ասում է, թէ ամօթ է քրիստոնեայ կնոջ համար գլխաբաց կանգնել Աստծու առաջ: Նա օգտագործում է մի օրինակ, որը կապ ունի պատժի հետ: Հին ժամանակներում կանայք պէտք է իրենց գլխի մազերը հրապարակայնօրէն ածիլէին՝ որպէս անպարկեշտութեան կամ անբարոյականութեան պատժամիջոց: Դա հասարակական նուաստացման մի ձեւ էր: Այստեղ առաքեալը չի քարոզում ածիլել կնոջ գլխի մազերը, եթէ նա մերժում է ծածկոյթը, այլ պարզապէս փորձում է փոխանցել այս սկզբունքի ամբողջ լրջութիւնը: Երբ

1 Свт. Иоанн Златоуст, Толкования на 1 Кор. 11:4-5.
Տե՛ս http://bible.optina.ru/new:1kor:11:05 (առ 10/04/2017):

*քրիստոնեայ կինը հրաժարւում է քօղով ծածկուել, նա (գուցէ ոչ միտումնաւոր) ասում է, թէ Քրիստոս չի մարմնաւորուել՝ մարդկային բնութեանը միաւորելով Իր աստուածային բնութիւնը: Ճիշդ է, մեր ժամանակներում, իհարկէ, սա չէ որեւէ կնոջ մտադրութիւնը, որ հրաժարւում է Սուրբ Պատարագի ժամանակ գլխաշոր գործածելուց, բայց այն, ինչ այստեղ Պօղոս առաքեալն ասում է, եկեղեցում իւրաքանչիւր աւանդոյթ ունի խորը իմաստ: «**Քանզի, եթէ կինը քօղով չի ծածկւում, թող կտրի իր մազերը**»: Այլ կերպ ասած, ոչ մի կին չի կարող իր մազերը պահպանել, եթէ իր գլուխը ծածկուած չէ: Եթէ գլուխը ծածկուած չէ, ուրեմն պէտք է կտրի նաեւ մազերը: «**Իսկ եթէ ամօթ է կնոջ համար մազը կտրել կամ ածիլել, թող քօղով ծածկուի**»: Իսկ եթէ գլխածածկ չունի, ասում է, թող կտրի կամ ածիլի իր մազերը. այլ կերպ ասած՝ թող անբարոյականի տեսք ունենայ: Եթէ ամաչում է անբարոյականի տեսք ունենալուց, թող գլուխը քօղով ծածկի: Որքան կանայք կան, որ սխալ մեկնաբանելով Պօղոս առաքեալի խօսքերը՝ ասում են, թէ Աստուած մեզ բնական մազեր է տուել քօղի փոխարէն: Բայց ինչո՞ւ է առաքեալը տարբերութիւն դնում քօղով գլուխը ծածկելու ու գլխի վրայ բնական մազեր ունենալու միջեւ: Տէրը դիմում է Երուսաղէմի դստերը՝ ասելով, թէ նա աճել է, հասել է գերազանց գեղեցկութեան, ու մազերը փարթամացել են, բայց այս ամէնով հանդերձ՝ նա խայտառակ կերպով մերկ է. «**Ահի՛ր, քանի որ դաշտի բոյսի պէս աճեցրի քեզ: Աճեցիր եւ ուռճացար, եկար մտար քաղաքների այս քաղաքը: Ստինքներդ կազմաւորուեցին, մազերդ փարթամացան, բայց դու խայտառակ կերպով մերկ էիր**» (Եզեկ. 16, 7): Ինչ մերկութեան մասին է խօսքը: Իհարկէ, հոգեւոր մերկութեան, քանի որ խօսքն Իսրայէլի մասին է: Կայ տեսանելի յստակ տարբերութիւն բնական մազերի եւ այն քօղի միջեւ, որ ծածկում է գլխի մազերը: Հետեւաբար, փարթամ մազերը մէկ բան են, իսկ գլխի քօղը՝ ուրիշ: Եւ յետոյ Տէրը Եզեկիէլ մարգարէի բերանով շարունակում է. «**Եւ եկայ հասայ քեզ ու տեսայ, որ ժամանակդ եկել է, ինչպէս նաեւ քեզ գաղթեցնողների**

ժամանակը: Թեւերս տարածեցի վրադ ու ծածկեցի խայտառակ մերկութիւնդ: Երդում արեցի եւ ուխտ կապեցի հետդ,- ասում է Ամենակալ Տէրը,- եւ դու իմը եղար» *(Եզեկ. 16, 8): Տէրն Ինքը պաշտպանիչ ծածկոց է Երուսաղէմի դստեր համար, որ ծածկում է նրա խայտառակ մերկութիւնը: Իսրայէլը դարձաւ Տիրոջ հարսնացուն, եւ Տէրը դարձաւ նրա Փեսան: Այս նոյն հոգեւոր բանաձեւը վերաբերում է նաեւ ամուսնու ու կնոջ քրիստոնէական յարաբերութիւններին, որոնց խորհրդաւոր պատկերն են Քրիստոսի եւ Եկեղեցու յարաբերութիւնները, որոնց մասին Պօղոս առաքեալը գրում է.* ***«Դրա համար մարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը եւ պիտի գնայ իր կնոջ յետեւից. եւ երկուսը պիտի լինեն մէկ մարմին: Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ եկեղեցու վերաբերեալ»*** *(Եփես. 5, 31-32):*

Ոմանք գլխաշոր կրելու այլընտրանք յաճախ համարում են ամուսնական մատանին: Ասում են, թէ Կորնթոսում այն ժամանակ գլխաշորը կատարում էր այն նոյն դերը, ինչ որ այսօր եւրոպական երկրներում ամուսնական մատանին է կնոջ ձեռքին: Կնոջ ձեռքի մատանին արտաքին խոնարհութեան «ազդանշան» է, որ ցոյց է տալիս բոլորին, թէ կինը հաւատարիմ է ու հնազանդ իր ամուսնուն, եւ այժմ նրա իշխանութեան տակ է: Մատանին պարզապէս յիշեցնում է, թէ կինն (ինչպէս նաեւ իր ամուսինը) ազատ չէ, եւ ամէն ինչում հոգում է բարձր պահել իր ամուսնու պատիւն ու հեղինակութիւնը: Եթէ ամուսնացած կինն այլեւս չէր ցանկանում կրել ազատ չլինելու մատանու նշանը, հաւանաբար, նա աւելի շուտ ունէր այն կանանց հակուածութիւնը, ովքեր ածիլում էին իրենց գլուխները, որպէսզի ծառայեն հեթանոսական տաճարում՝ բոլորին մատչելի լինելու իրենց դերում: Ամուսնական մատանին երբէք աւելորդ չէ մեր այլասերուած աշխարհում ու կարող է երբեմն փաստել, թէ մարդն ամուսնացած է՝ չնայած ինքնին ո՛չ մատանին, ո՛չ էլ գլխաշորը չեն փրկում դաւաճանութիւնից, եթէ այդ մեղքի դիմադրութիւնը չկայ տուեալ քրիստոնեայի սրտում: Հայ եկեղեցում ամուսնական մատանու գոր-

ծածութիւնը գալիս է շատ հնուց[1]: Բայց ամուսնական մատանին, ի տարբերութիւն գլխաշորի, չունի կրօնական կամ ծիսական արժէք, թէեւ Սուրբ Պսակի խորհրդի ժամանակ ամուսնական մատանիներն օրհնւում են քահանայի կողմից: Նրանք պարզապէս խորհրդանշում են զոյգերի հոգեւոր միասնութիւնը եւ իրենց կլոր ձեւով, որը չունի սկիզբ ու վերջ, խորհրդանշում են անսահման ու յաւէրժական սէրը եւ հաւատարմութիւնը միմեանց նկատմամբ: Աստուածաշնչում ոչ մի հրահանգ չկայ ամուսնական մատանու մասին, սակայն եկեղեցում գլխաշոր գործածելն Աստծու պատուիրանն է, եւ, ըստ առաքելական հրամանի, պարտադիր հրահանգ է բոլոր կանանց համար: Առանց մատանու կարելի է եկեղեցի մտնել եւ աղօթել, բայց սա նոյնը չէ գլխաշորի պարագային:

Աստուած անհրաժեշտ համարեց օգտագործել տեսանելի նշաններ, որպէսզի մեզ յիշեցնի ամուսնու ու կնոջ յարաբերութիւնների աստուածային պատկերը: Եւ այդ տեսանելի արտաքին նշանները պէտք է լինեն կնոջ երկար մազերն ու քօղով ծածկուած գլուխը: Այն կանայք, ովքեր Սուրբ Պատարագի ընթացքում կամովին իրենց գլխին կրում են իշխանութեան այդ նշանը, արժանի են երկնային պաշտպանութեան: Ով չի ուզում երկնային պաշտպանութեան ներքոյ խաղաղ ու ապահով լինել այսօրուայ հասարակութեան մէջ: Նրանք, ովքեր հնազանդւում են Աստծու գլխաւորութեան կարգերին, տեսանելի կերպով վկայում են այդ մասին:

---

1 Եկեղեցական հին աւանդոյթ էր, երբ ամուսնացած նորընծայ քահանան ձեռնադրութիւնից առաջ իր ձեռքից հանում էր ամուսնական մատանին եւ այլեւս այն չէր կրում: Սա կարելի է բացատրել նրանով, որ նախ՝ անձը բարձրացւում է մի նոր մակարդակի: Նա խորհրդաւոր կերպով նշանւում է Եկեղեցու հետ: Երկրորդ, քահանան պէտք չէ ունենար որեւէ աշխարհիկ զարդ, նոյնիսկ եթէ այն խորհրդաւոր կերպով ցոյց է տալիս նրա ամուսնութիւնը: Հիմա, երբ քահանան մատուցում է Ս. Պատարագ, նա պարզապէս հանում է ամուսնական մատանին: Իսկ նորընծայ եպիսկոպոսի ձեռնադրութեան ժամանակ՝ իբրեւ Ս. Եկեղեցու հետ փեսայացման խորհրդանիշ եւ իշխանութեան նշան, տրւում է ոսկէօղակ ու թանկարժէք քարերով զարդարուած մատանի, որ կրում են աջ ձեռքի ճկոյթին, իսկ կաթողիկոսը՝ աջ ձեռքի մատնեմատին:

✝ ✝ ✝

«Պէտք չէ, որ տղամարդն իր գլուխը ծածկի, որովհետեւ նա պատկերն ու փառքն է Աստծու, իսկ կինը ի՛ր մարդու փառքն է. որովհետեւ ոչ թէ մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց. քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար» (Ա. Կորն. 11, 7-9):

Առաքեալն այստեղ չի փորձում նորից ամրապնդել տղամարդու գերազանցութիւնը կամ գերիշխանութիւնը: Յիշենք, թէ մենք պէտք չէ մոռանանք այս գլխի համատեքստը, որ կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլուխն ամբողջութեամբ Հաղորդութեան Սուրբ Խորհրդի մասին է: Առաքեալն ասում է, թէ տղամարդը «պատկերն ու փառքն է Աստծու» միայն մէկ պատճառով, քանի որ մեր Աստուածը՝ Յիսուս Քրիստոս, մարմնացաւ տղամարդու կերպարանքով ու պատկերով: Յետոյ նշում է, որ կինը «ի՛ր մարդու փառքն է» (կամ մարդկութեան):

*Կորնթոսի եկեղեցու անդամների միջեւ լինում էին տարաձայնութիւններ, վէճեր, կռիւ, նախանձ ու բաժանումներ: Առաքեալն ասում էր. «**Մէկն ասում է՝ ես Պողոսեան եմ, եւ միւսը, թէ՝ ես՝ Ապողոսեան...**» (Ա. Կորն. 3, 3): Եւ կանայք այդ քննարկումներում ու վէճերում շատ ակտիւ մասնակցում էին: Հակառակ դէպքում, ինչո՞ւ է Պողոս առաքեալը գրում. «**Կանայք թող լուռ մնան եկեղեցու մէջ, որովհետեւ թոյլատրուած չէ նրանց խօսել, այլ՝ հնազանդ լինել, ինչպէս օրէնքն էլ ասում է**» (Ա. Կորն. 14, 34): Այդ պատճառով Պողոս առաքեալը եփեսացիներին ուղղուած իր նամակում նորից յիշեցնում է. «**Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ ինքն է Փրկիչն այդ մարմնի: Եւ ինչպէս եկեղեցին հնազանդւում է Քրիստոսին,***

նոյնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց մարդկանց ամէն ինչում» (Եփես. 5, 22-24)։ Ամուսինն Աստծու պատկերն ու փառքն է, ինչպէս եւ՝ Քրիստոսի (Բ. Կորն. 4, 6)։ Հետեւաբար, կինը պէտք է հնազանդ լինի իր ամուսնուն, քանի որ նա իր ամուսնու փառքն է։

*Ինչո՞ւ պէտք չէ, որ տղամարդն իր գլուխը ծածկի։ Որովհետեւ նա պատկերն ու փառքն է Աստծու։ Գրուած է. «**Մէ՛կ Աստուած, Հա՛յր բոլորի, որ է բոլորի վրայ, բոլորի հետ եւ մեր բոլորի մէջ**» (Եփես. 4, 6)։ Որպէս Հայր Աստուած՝ «բոլորի վրայ» է, բոլորն Իր իշխանութեան ծածկոյթի տակ են, եւ ուրիշ աւելի բարձր իշխանութիւն չի կարող լինել։ Լինելով այդ իշխանութեան ու պաշտպանութեան ծածկոյթի պատկերը՝ ամուսինը պէտք չէ իր գլուխը ծածկի, քանի որ, հակառակ դէպքում, նա կասկածի տակ է դնում Աստծու բարձրագոյն իշխանութիւնը։ Իսկ մերժել Աստծու իշխանութիւնը նշանակում է սեփական գլխին ամօթ եւ անարգանք բերել, քանի որ անհաւատութիւնը մեղք է։ Տղամարդը կարող է գլխաբաց կանգնել, քանի որ տղամարդու իշխանութիւնը կնոջ հանդէպ արտացոլում է Աստծու իշխանութիւնն արարածների նկատմամբ։ Կնոջ դէպքում ամէն ինչ ճիշդ հակառակն է։ Կինը ներկայացնում է նաեւ իր գլուխը՝ տղամարդուն, որը մեղաւոր արարած է։ Այդ պատճառով էլ կինն Աստծու առջեւ գտնուելիս, աղօթքի պահին քօղով ծածկում է իր գլուխը։ Խօսքն այստեղ խորհրդանշանների, համապատասխան իրողութիւնը խորհրդաբար ներկայացնելու մասին է։ Լինելով իր ամուսնու փառքը, որ պաշտպանում է իրեն, կինը պէտք է իր գլխին ունենայ քօղի նշանը, որպէսզի հրեշտակները դա տեսնեն որպէս խոնարհութեան ու հնազանդութեան արտայայտութեան եւ որպէս ամուսնու իշխանութիւնն իր վրայ ճանաչելու նշան։ Եւ այս երեւելի նշանը պէտք է հրեշտակներին։*

Գլխաշորը ծածկում է «կնոջ փառքը», այսինքն՝ իր մազերը։ Մազերը ծածկելը մի արարք է, երբ կինը յայտարարում է Աստծուն, թէ իր «փառքը» Տիրոջ փառքից պակաս է, եւ այդպէս մեծարում է Աստծուն ու դրանով յիշեցնում, թէ հոգեւոր արժանիքները չեն

*կարող աճել առանց խոնարհութեան ու հնազանդութեան: Այնպէս որ, նա կամաւոր ծածկում է իր գլուխը Տիրոջը հաճոյ լինելու ու պատուիրանը կատարելու համար: Կինը գլուխը ծածկում է ոչ միայն որպէս իր հաւատքի նշանը Քրիստոսի մարմնաւորման նկատմամբ եւ ոչ միայն ցոյց տալու, թէ Քրիստոսի Եկեղեցին սուրբ է, այլեւ իր անձի «փառք»-ը ծածկելու նպատակով, որպէսզի այդ խոնարհութեան նշանով ցոյց տայ, թէ ինքը չափազանց հպարտ չէ իր կանացի գեղեցկութեամբ: Գլուխը ծածկելով Աստծու առջեւ՝ կինը յայտարարում է, թէ ոչ ոք ամբողջ աշխարհում պէտք չէ, որ իր գլուխը մերկացնի Քրիստոսի առջեւ: Իսկապէս, ոչ ոք պէտք չէ մերկացնի իր գլուխն Աստծու առջեւ, ոչ էլ պէտք է որեւէ մէկը իր սեփական կամքը, կարծիքը կամ գաղափարը առաւել համարի Քրիստոսի առջեւ: Տիրոջ ներկայութեամբ բոլորի գլուխները պէտք է ծածկուած լինեն, այսինքն՝ մեր սեփական կամքը, կարծիքներն ու դատողութիւնները պէտք է ստորադասուեն: Այսպիսով, խոստովանում ենք Տիրոջը, թէ՝ «Դու ես իմ գլուխը»: Կնոջ գլուխը ծածկուած է Աստծու առաջ, քանի որ նա ունի ներկայացուցչական դիրք ու ներկայացնում է համայն մարդկութեանը, ամբողջ տիեզերքը: Բայց, քանի որ տղամարդն է Աստծու պատկերն ու փառքը, նա իր գլուխը պէտք չէ ծածկի: Իսկ կինը, որ իր ամուսնու փառքն է (Ա. Կորն. 11, 7) եւ իր ամուսնու պսակը (Առակ. 12, 4), պարտաւոր է ծածկել իր գլուխը: Ուրեմն, եթէ կինը չի ծածկում իր գլուխը, նա չի կարող ցոյց տալ, թէ ամուսինն իր գլուխն է. «**Որովհետեւ ոչ թէ մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց. քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար**» (Ա. Կորն. 11, 8-9): Ամուսնու իշխանութիւնը ոչ թէ տիրոջ եւ ստրուկի յարաբերութիւն է, այլ հիմնականում ենթադրում է սէր ու հոգածութիւն: Քօղը խորհրդանշում եւ յիշեցնում է արարածների հանդէպ Աստծու հոգածութիւնն ու իր կնոջ նկատմամբ տղամարդու սիրոյ եւ հոգատարութեան պարտաւորութիւնը: Այսպիսով, գլխաբաց լինելն արտայայտում է անհնազանդութիւն ու մերժում է Աստծու տիրապետական տնօրինութեան իշխանական դասակարգումը:*

*Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «Ամուսինը (ասում է առաքեալը) պէտք չէ ծածկի իր գլուխը, ոչ միայն այն պատճառով, որ իր գլուխը Քրիստոսն է, այլ նաեւ այն պատճառով, որ ունի իշխանութիւն իր կնոջ վրայ: Երբ իշխանութիւն ունեցող մէկը գայ թագաւորի մօտ, նա իր վրայ պէտք է ունենայ իր իշխանութեան նշանը: Դրա համար, ինչպէս որ իշխանութիւն ունեցողներից ոչ մէկը չէր համարձակուի յայտնուել թագ կրողի առջեւ առանց գօտու եւ (իր աստիճանին համապատասխան) հագուստի, այդպէս էլ դու, առանց քո իշխանութեան նշանի, այսինքն՝ առանց բաց գլխի, չաղօթես Աստծուն, որպէսզի չանարգես եւ՛ քեզ, եւ՛ քեզ յարգողներին: Նոյնը կարելի է ասել եւ կնոջ մասին: Նրա համար էլ անպատուաբեր է չունենալ իր ենթարկուածութեան նշանները: «**Կինը ի՛ր մարդու փառքն է**»: Հետեւաբար, ամուսնու իշխանութիւնն իր կնոջ հանդէպ բնական է: Սա բացատրելով՝ նա (առաքեալը) յետոյ ներկայացնում է այլ հիմքեր ու պատճառներ, քեզ տանում է արարչութեան սկիզբը՝ ասելով. «**Ոչ թէ մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց**» (Ա. Կորն. 11, 8): Եթէ մէկի ծագումը միւսից՝ վերջինիս փառքն է, ուրեմն առաւել եւս նրանց նմանութիւնը. «**Քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար**» (Ա. Կորն. 11, 9): Սա է երկրորդ առաւելութիւնը, կամ աւելի լաւ է ասել, երրորդը եւ չորրորդը: Առաջինն այն է, որ Քրիստոս է մեր գլուխը, իսկ մենք՝ կնոջ գլուխը: Երկրորդն այն է, որ մենք Աստծու փառքն ենք, իսկ մեր փառքը՝ մեր կինն է: Երրորդն այն է, որ ոչ թէ մենք ենք կնոջից, այլ կինը՝ մեզանից: Ու չորրորդն այն է, որ ոչ թէ մենք ենք կնոջ համար, այլ կինը՝ մեզ համար*[1]*: «**Դրա համար կինը պարտաւոր էքօղ (իշխանութեան նշան) դնել գլխին**» (Ա. Կորն. 11, 10): Ինչո՞ւ է այսպէս: Բացի այն ամէնից, ինչ որ արդէն ասուել էր (ըստ պատճառների), նաեւ հրեշտակների պատճառով: Եթէ դու,- ասում է առաքեալը,- ուշադրութիւն չես դարձնում ամուսնուդ, ուրեմն, ամաչի՛ր հրեշտակներից: Այսպիսով,*

1 Վերոյիշեալ նախադասութիւններում «մենք» կամ «մեր» բառերը գործածելիս Ոսկեբերան հայրապետը նկատի ունի առհասարակ բոլոր տղամարդկանց:

ծածկոցը նշան է հնազանդութեան եւ ենթարկուածութեան։ Այն կոչ է անում նայել ներքեւ, լինել խոնարհ ու գործել առաքինութիւն, իսկ առաքինութիւնն ու ենթարկուողի պատիւը կայանում են հէնց նրանում, որ մնան հնազանդ։ Ամուսնուն նախատեսուած չէ դա անել, որովհետեւ նա պատկերն է Աստծու, իսկ կնոջ դէպքում դա ճշմարիտ է (նախատեսուած է գլուխը ծածկել)։ Ուրեմն, ի՞նքդ դատիր, թէ որքան մեծ է յանցագործութիւնը, երբ դու, արժանանալով այդպիսի իշխանութեան, ինքդ քեզ անպատուում ես՝ կնոջ տեսքն առնելով։ Դու անում ես նոյնը, եթէ, ինչպէս ստանալով թագը, այն գլխիցդ դէն նետէիր ու թագի փոխարէն հագնէիր ծառայի հագուստը»[1]։

«Դրա համար կինը պարտաւոր է քող դնել գլխին հրեշտակների պատճառով» (Ա. Կորն. 11, 10)։

Պողոս առաքեալն ասում է, թէ կինը պարտաւոր է իր գլուխը ծածկել Սուրբ Պատարագի ժամանակ հրեշտակների պատճառով։ Հրեշտակները մեզ հետ միասին մասնակցում են Սուրբ Պատարագին։ Եւ սա հաստատում է Յովհաննէս առաքեալը՝ ասելով. ***«Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ ու կանգնեց խորանի մօտ. նա ունէր ոսկէ խնկաման. եւ նրան շատ խունկ տրուեց, որպէսզի աղօթք մատուցի բոլոր սուրբերին ոսկէ խորանի վրայ՝ աթոռի առաջ»*** *(Յայտ. 8, 3, Մատթ. 18, 10)։ Հրեշտակները մշտապէս տեսնում են ամէն ինչ, որ կատարւում է Սուրբ Պատարագի ընթացքում։ Նրանք նաեւ քաջատեղեակ են եկեղեցու բոլոր աւանդոյթներին ու լաւ գիտեն դրանց իմաստն ու նշանակութիւնը։ Նաեւ լաւ գիտեն գլխաշոր գործածելու աւանդոյթը։ Լոյսի հրեշտակները տրտմում են ու զայրանում, երբ մենք անտեսում կամ հրաժարւում ենք հետեւել*

1 Свт. Иоанн Златоуст, Толкования на 1 Кор. 11:7.
Տե՛ս http://bible.optina.ru/new:1kor:11:07 (առ 11/04/2017)։

որեւէ ծիսական աւանդոյթի: «Դրա համար կինը պարտաւոր է քօղ դնել գլխին հրեշտակների պատճառով»: Հայկական ուրիշ թարգմանութիւններում գրուած է. «Այս պատճառով պէտք է, որ կինը իր գլխուն շուք դնէ հրեշտակների համար»: Այստեղ եւ գրաբար թարգմանութիւններում «քօղ» բառի փոխարէն օգտագործւում է «շուք» բառը: Յունարէն բնագրում «քօղ» կամ «շուք» բառերի փոխարէն գրուած են «իշխանութեան նշան» բառերը: Այսինքն՝ բառացիօրէն կարդացւում է այսպէս. «Դրա համար կինը պարտաւոր է իշխանութեան նշանը դնել իր գլխին հրեշտակների համար»: Գլխին իշխանութեան նշան դնելը՝ որպէս հնազանդութեան խորհրդանիշ, վկայութիւն է ոչ միայն տեսանելի աշխարհի համար, այլեւ, ինչպէս Պօղոս առաքեալն է նշում, «հրեշտակների համար» (Ա. Կորն. 11, 10): Ուրեմն, Աստծու առաջ կնոջ համար այս պատուիրանը կատարելը պարտաւորութիւն է, քանի որ այն վկայութիւն է բոլոր հրեշտակներին, երկնային անտեսանելի իշխանութիւններին եւ ամբողջ հոգեւոր աշխարհին: Ինչ է նշանակում «հրեշտակների պատճառով» կամ «հրեշտակների համար» ասուածը:

Առաջին, գլխին «քօղ դնել»-ը կամ «իշխանութեան նշան»-ի պարտաւորութեան կոչը նշանակում են չզայրացնել ու չվիրաւորել լոյսի հրեշտակներին՝ մեր անհնազանդութեամբ: Սուրբ գրութիւն-ները յստակօրէն ցոյց են տալիս, թէ կնոջ գլխի քօղը նշան է այն բանի, որ կինն իր ամուսնու իշխանութեան տակ է (Ա. Կորն. 11, 10). այսինքն՝ կինն իր գլխի քօղով ցոյց է տալիս հրեշտակներին իր կամաւոր հնազանդութիւնն իր ամուսնուն: Նա կարծես ասում է. «Ես ծածկել եմ իմ գլուխը, քանի որ չեմ ձգտում գլուխ լինել: Ես ընդունում եմ իմ ամուսնուն որպէս գլուխ, նոյնիսկ եթէ նա արժանի չէ դրան, բայց առաջին հերթին ես հնազանդւում եմ Աստծուն եւ Նրա կողմից հաստատուած նուիրապետական իշխանութեանը»: Հրեշտակները վերակացուներ են՝ նշանակուած եկեղեցիների սպասաւորութեան համար (տե՛ս Յայտ. 1, 20): Նրանք գործում են ըստ իրենց պաշ-տօնի եւ ըստ իրենց ստացած տիեզերական առաքելութեան:

Նրանք, Աստծու տնօրինութեամբ Եկեղեցու պահպանութեան վրայ կարգուած լինելով որպէս վերակացուներ, հսկում են հաւատացեալներից իւրաքանչիւրին ու միասնաբար աղօթում են մեզ հետ: Եւ, իհարկէ, երբ մեր աղօթքն ասում է գիտակցութեամբ, մտքով, հաւատքով եւ ամենայն պարկեշտութեամբ այն դառնում է մահացու հարուած թշնամի ուժերին: Ուրեմն, պէտք է ամէն ոք զգուշանայ, որ անարժան չլինի սուրբ հրեշտակներին եւ Աստծուն՝ իր սխալ վարքով: Հետեւաբար, Տիրոջ հրեշտակների ուշադրութիւնից չեն վրիպի նրանք, ովքեր ցուցաբերում են հնազանդութիւն Աստծու պատուիրաններին, երբ աղօթքի ժամանակ իրենց ֆիզիկական տեսանելի կեցուածքով արտայայտում են հոգու բոլոր նուիրական տրամադրութիւնները:

*Երկրորդ, որպէսզի ճշմարտապէս յայտնի լինի արարչութեան կարգերի՝ Աստծու տիրապետութեան ու տնօրինութեան ճշմարիտ պատկերը եւ «**որպէսզի եկեղեցու միջոցով յայտնի լինի այժմ երկնային իշխանութիւններին եւ պետութիւններին Աստծու բազմապատիկ իմաստութիւնը**» (Եփես. 3, 10), նաեւ՝ «**Աստուած նրանց յայտնեց նաեւ, որ ոչ թէ իրենց համար, այլ մեզ համար էին տրուած այդ պատգամները, որոնք այժմ պատմուեցին ձեզ նրանց միջոցով եւ աւետարանուեցին Սուրբ Հոգով, որն ուղարկուեց երկնքից. մի բան, որ կը ցանկանային հրեշտակները գոնէ աղօտ կերպով տեսնել**» (Ա. Պետր. 1, 12): Որոգինէսը՝ հին Եկեղեցու ուսուցիչներից մէկը, ասում է. «Իւրաքանչիւր հրեշտակ (նոյնիսկ նրանք, ովքեր փոքր են եկեղեցում) մշտապէս տեսնում է Հօր դէմքը, որ երկնքում է (Մատթ. 18, 10), եւ զմայլանքով դիտում են մեր Արարչի աստուածութիւնը: Նա աղօթում է մեզ հետ, իր ամբողջ կարողութեամբ գործում է մեզ հետ՝ մեզ համար ստանալու այն, ինչ մենք խնդրում ենք»[1]: Որոգինէսը շարունակում է. «Աստուածային առանձնայատուկ մի շնորհ եւ օգտակարութիւն կայ աղօթքի վայրում, ուզում եմ ասել՝ հաւատացեալների ժողովատեղում: Անտարակոյս,*

1 Որոգինէս, «Աղօթքի մասին», Էջմիածին, 2007, էջ 65:

հրեշտակների զօրութիւնները մասնակցում են հաւատացեալների հաւաքին: Այնտեղ ներկայ է մեր Տիրոջ ու Փրկչի սրբութիւնը, ներկայ են սուրբերի հոգիները, կարծում եմ, ներկայ են նաեւ ննջեցեալների հոգիները, որոնք նախորդել են մեզ, եւ, իհարկէ, սուրբերի հոգիները, որոնք ապրում են դեռ, թէեւ հեշտ չէ ասել, թէ ինչպէս են ներկայ: Ահա թէ ինչ պէտք է մտածել հրեշտակների մասին: Տիրոջ հրեշտակը պտտւում է իր երկիւղածների շուրջը ու վտանգից փրկում նրանց (Սաղմ. 34, 8)... Ուրեմն, կարող ենք հաստատել հետեւեալը բազմաթիւ եղբայրների ժողովում, որոնք հաւաքւում են Քրիստոսի փառքի համար. իւրաքանչիւրն ունի իր հրեշտակը, որ շրջապատում է իրեն, որոնք երկիւղում են Աստծուց եւ մնում նրա կողքին, ում յանձն է առել պաշտպանել ու պահպանել: Սուրբերի ժողովում հաւաքւում են երկու եկեղեցիներ՝ մարդկանց ու հրեշտակների... Եւ քանի որ հրեշտակները ներկայ են..., երբ կանայք աղօթում են, հրահանգուած է ունենալ ծածկոց իրենց գլխին այդ հրեշտակների պատճառով: Նրանք աջակցում են սուրբերին եւ ուրախանում են եկեղեցում»[1]:

*Երրորդ, Եսայու մարգարէութեան մէջ կարդում ենք. «Նրա շուրջը սերովբէներ կային, որոնցից իւրաքանչիւրը վեց թեւ ունէր. երկուսով իրենց երեսներն էին ծածկում, երկուսով՝ իրենց ոտքերը եւ երկուսով էլ թռչում էին: Ձայնակցում էին իրար եւ ասում. **«Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զօրութիւնների Տէրը, եւ ամբողջ երկիրը լի է նրա փառքով»** (Ես. 6, 2-3): Եւ եթէ Սուրբ Խորհրդի ժամանակ նոյնիսկ հրեշտակներն իրենց թեւերով ծածկում են իրենց երեսները եւ աղօթում մեզ հետ, որպէսզի ստանանք այն, ինչ խնդրում ենք, ուրեմն ինքներդ դատեցէք, որքա՜ն ամօթ է գլխաբաց աղօթել Սուրբ Հաղորդութեան ներկայութեան առաջ: Սուրբ Կիւրեղ Աղեքսանդրացին, մեկնաբանելով կորնթացիներին ուղղուած առաջին նամակը, գրում է. «Հրեշտակների համար չափազանց դժուար*

1 Origen: The Deans of the School of Alexandria, “Philosofy of Creation,” 1995, p. 553.

*է հանդուրժել, եթէ այս օրէնքը (որ կինը պարտաւոր է քօղ դնել գլխին) անտեսւում է»[1]: Անտեսանելի նուիրապետութիւնը պէտք է յարգել, քանի որ հրեշտակները ներկայ են Սուրբ Պատարագին՝ մեզ հետ սպասաւորելու եւ երկրպագելու Տիրոջը: Յովհաննէս առաքեալը գրում է. «**Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ ու կանգնեց խորանի մօտ. նա ունէր ոսկէ խնկաման, եւ նրան շատ խունկ տրուեց, որպէսզի աղօթք մատուցի բոլոր սուրբերին ոսկէ խորանի վրայ՝ աթոռի առաջ**» (Յայտ. 8, 3): Բարի հրեշտակները զայրանում են՝ տեսնելով անհնազանդութիւն Սուրբ Պատարագի ընթացքում. ճիշդ այնպէս, ինչպէս գարշում էին Հերովդէս թագաւորից, երբ նա ընդունում էր Երուսաղէմի ժողովրդի երկրպագութիւնը. «**Եւ անմիջապէս հրեշտակը հարուածեց նրան (Հերովդէսին), որովհետեւ Աստծուն փառք չտուեց. եւ որդերի կեր դառնալով՝ մեռաւ**» (Գործ. 12, 23): Այն, որ հրեշտակներն անտեսանելիօրէն ներկայ են հաւատացեալների եկեղեցու բոլոր ծէսերին, կարելի է նաեւ եզրակացնել՝ ընթերցելով Պօղոս առաքեալի այլ նամակները (տե՛ս Եփես. 3, 10: Ա. Տիմ. 5, 21: Ա Կորն. 4, 9):*

*Չորրորդ, որպէսզի չնմանուենք չար հրեշտակներին, որոնք ապստամբելով չպահեցին իրենց իշխանութիւնը եւ յաւիտենական կրակի դատաստանն ընդունելու օրինակ հանդիսացան բոլորին. «**Եւ այն հրեշտակներին, որ չպահեցին իրենց իշխանութիւնը, այլ լքեցին իրենց բնակութեան տեղը, յաւիտենական կապանքներով խաւարի մէջ պահեց դատաստանի մեծ օրուայ համար, ինչպէս Սոդոմն ու Գոմորը եւ նրանց շուրջը եղող քաղաքները, որոնք այդ նոյն ձեւով պոռնկացան՝ անբնական կրքերի յետեւից ընկնելով եւ յաւիտենական կրակի դատաստանն ընդունելու օրինակ դարձան բոլորին**» (Յուդ. 1, 6): Աստուած Եսայի մարգարէի բերանով նրանց ասում է. «**Այն, որ գաք ու կանգնէք իմ առաջ... երբ աղօթքի համար դէպի վեր բարձրացնէք ձեր ձեռքերը, երես*

1 Orthodox Christian Information Center, "On Account of the Angels: Why I Cover My Head". http://orthodoxinfo.com/praxis/headcoverings.aspx (ստ 12/04/2017):

եմ դարձնելու ձեզանից, եւ եթէ բազմապատկէք ձեր աղօթքները, չեմ լսելու ձեզ» (Ես. 1, 12-15)։ Եթէ Աստծու պատուիրաններն անտեսուեն, ապա սուրբերի ու հրեշտակների ժողովի փոխարէն կը կազմուի չար հրեշտակների մի խառնաժողով՝ ըստ այնմ. «Ունայնամիտների աթոռին ես չեմ նստի եւ անօրէնների մօտ ես չեմ գնայ։ Չարագործների ամբոխը ես ատեցի եւ ամբարիշտների կողքին չեմ բազմի» (Սաղմ. 25, 4-5)։ Նրանք, ովքեր անտեսել են օրէնքը, անտեսուել են Աստծու կողմից, պահապան հրեշտակներից ու սուրբերից, որոնք կարող էին փրկել իրենց։ Այն եկեղեցին, որը եթէ փորձութեան մէջ կորցնի առաքելական աւանդոյթները՝ զրկուելով իր կենսական ուժից, կը նմանուի այն անիծուած թզենուն, որը պտուղ չէր տուել։ Ուրեմն, պէտք է ամէն մարդ զգուշանայ, որ անարժան չլինի իր սուրբ հրեշտակին, եւ Աստծուն դառնացնող սխալ վարքով չյանձնուի խաւարի հրեշտակին։

Հինգերորդ, Մաղաքիա մարգարէն քահանաներին կոչում է «Աստծու հրեշտակներ» (Մաղ. 2, 7)։ Ոմանք կարծում են, թէ Պօղոս առաքեալը խօսում է նրանց մասին։ Սբ. Եփրեմ Ասորին գրում է. «Դրա համար կինը պէտք է իր գլխի վրայ պատիւ ունենայ հրեշտակների պատճառով, այսինքն՝ յանուն քահանաների...։ Ամէնուր է ի հնազանդութիւն քահանայապետութեան...»[1]։ Նոյնպէս Սբ. Գրիգոր Տաթեւացին է ասում. «Մկրտութիւնը քահանայի գործ է, որ կատարում է աղօթքով, իսկ կանանց սեռին աղօթելու ընթացքում առաքեալը պատուիրում է գլխին շղարշ դնել հրեշտակների համար, այսինքն՝ քահանաների համար, որոնք սուրբ գրքերում կոչւում են հրեշտակ։ Հետեւաբար, որքան ծանր դատապարտութիւն է կանանց համար յանդգնել քահանայական գործ կատարելու։ Կան նաեւ այլ բազում վկայութիւններ Սուրբ Գրքերում, որ նման հերձուածները յայտնի են դառնում որպէս սուտ ու կեղծ»[2]։

---

1 Прп. Ефрем Сирин, “Толкование на послания божественного Павла”. http://www.rusbible.ru/books/1kor.es.1.html (առ 24/03/2017)։

2 Սբ. Գրիգոր Տաթեւացի, «Գիրք Հարցմանց», Կ. Պոլիս, 1729, էջ 590։

Կայ նաեւ մի սխալ կարծիք, թէ «հրեշտակների պատճառով» խօսքերը պարզապէս յետագայում են աւելացուել Սուրբ Գրքում, բայց այս տեսակէտը չի կարող ընդունուել, քանի որ այս խօսքերը ներկայ են բոլոր հնագոյն բնագրերում: Բայց ինչո՞ւ է հրեշտակներին հարկաւոր այդ վկայութիւնը: Աստուածաշնչից արդէն գիտենք, թէ հրեշտակները ինը դասերի են բաժանուած, որոնք բնական բարձր կարողութիւններով օժտուած սպասաւոր հոգիներ են եւ ծառայում են Աստծու արքայութեան նպատակներին՝ մշտապէս փառաբանելով Աստծու մեծութիւնը: Պօղոս առաքեալի՝ եբրայեցիներին ուղղուած նամակից (Եբր. 1, 14) իմանում ենք, թէ հրեշտակները պաշտօնակատար հոգիներ են, որոնք ստեղծուած են սպասաւորելու ու ծառայելու նրանց, ովքեր պիտի ժառանգեն փրկութիւնը: Հրեշտակներից մէկը Յովհաննէս առաքեալին ասում է, թէ ինքը ծառայակից է Յովհաննէսին եւ այն եղբայրներին, որոնք ունեն Յիսուսի վկայութիւնը (տե՛ս Յայտ. 19, 10: 22, 9): Մտնելով մարդկային պատմական կեանքի մէջ՝ նրանք ծառայում են երկրի վրայ Աստծու արքայութիւնը հաստատելուն ու մարդկանց փրկութեան իրականացմանը մասնակցելուն: Սուրբ Գրքից նաեւ իմանում ենք, թէ մի անգամ երկնային նուիրապետութեան մէջ վիճար եղաւ. հրեշտակներից մեկը, որ շատ մօտ էր Աստծուն, հրաժարուեց ենթարկուել Նրան: Սատանայ[1] դարձած նախկին հրեշտակն ապստամբեց Աստծու դեմ, քանի որ նա ուզում էր հաւասար լինել Աստծուն: Հպարտութիւնը[2] նրան մղեց ցանկալու դառնալ Աստծուն հաւասար: Այլ կերպ ասած՝ հաւասար լինելու յարաբերութիւնները գերակշռեցին իր ենթակայութեան յարաբերութիւններին: Ապստամբութեան պատճառով առաջացաւ անհաւասարակշռութիւն՝ հաւասարութեան եւ գերիշխանութեան միջեւ: Այդ երեւակայական հաւասարութիւնը հաստատելու փորձն ու ձգտումը բերեցին սա-

1 «Սատանայ» նշանակում է «ապստամբ», «հակառակորդ»:

2 «Հպարտութիւն» բառը, ըստ սբ. Գրիգոր Տաթեւացու, նշանակում է հրեշտակի պարտութիւն: Այստեղ խօսքը Արիւսակ հրեշտակապետի մասին է:

*տանայի տապալմանն ու խորն անկմանը: Այլ խօսքով՝ Արուսեակ հրեշտակապետը, իր գլուխը մերկացնելով Աստծու առջեւ, հրաժարուեց հնազանդուել Նրա իշխանութեանը՝ ցանկանալով նմանուել Բարձրեալին ու գահակալ դառնալ, ինչպէս Եսայի մարգարէն է ասում. «**Արդ, ինչպէ՛ս երկնքից ընկաւ Արուսեակը, որ ծագում էր առաւօտեան. նա, ով ուղարկում էր բոլոր ազգերին, ընկաւ գետին ու խորտակուեց: Մտքիդ մէջ ասում էիր. «Երկինք կը բարձրանամ, իմ գահը կը դնեմ երկնային աստղերից աւելի վեր. կը նստեմ բարձր լեռան վրայ, հիւսիսի բարձր լեռների վրայ. կը բարձրանամ ամպերից էլ վեր, կը նմանուեմ Բարձրեալին»»* (Ես. 14, 12-14): Որպէս հետեւանք այս աղետի՝ անհնազանդ ուրիշ հրեշտակներ էլ ապստամբեցին Աստծու դէմ, ու բոլորն էլ երկնքից ցած նետուեցին՝ դառնալով «**երկնքի տակ եղող չար ոգիներ**» (Եփես. 6, 12): Այսօր սատանան եւ այդ ընկած չար հրեշտակները՝ դեւերը, հետեւելով երկրի վրայ մարդկանց անցուդարձին, տեսնում են, թէ ինչպէս Աստուած տեսաւ այդ հնազանդութիւնը ոչ միայն Իր Միածին Որդուց, այլեւ թոյլ, տկար եւ անօգնական մարդկանցից: Եւ սա չափազանց հալածում ու ստորացնում է խաւարի հրեշտակներին: Սատանան ոչ միայն ամօթահար է լինում Յիսուս Քրիստոսից՝ Իր Հօրը հնազանդ լինելու համար, այլեւ այն մարդկանցից, ովքեր կամաւոր հնազանդւում են Աստծուն՝ կատարելով Նրա կամքը: Հնազանդութեան այդ դրսեւորումներից է կնոջ հնազանդութիւնը, որի տեսանելի խորհրդանշանն է իր գլխի քողը: Այսպիսով, գլուխը ծածկելով՝ կինը խայտառակում է սատանային ու բոլոր չար հրեշտակներին, որոնք ապստամբեցին Աստծու դէմ: Նրա գլխի քողը վկայում է, թէ կինը հնազանդ է իր ամուսնուն եւ Աստծուն՝ ի տարբերութիւն նրանց, որ չկարողացան սովորել հնազանդութեան իմաստութիւնը:*

Լոյսի հրեշտակները տեսնում են հնազանդութեան այդ վկայութիւնը, որ հոգեւոր աշխարհում Աստծու յաղթանակի ուրախութիւնն է բերում ընդդէմ անհնազանդութեան: Աստուած ուղարկում է սպա-

սակրող հրեշտակներին, որպէսզի նրանք հնազանդ ու բարեպաշտ կանանց պաշտպանեն եւ ազատեն զանազան փորձութիւններից ու փորձանքներից. «**Չէ՞ որ հրեշտակները սպասաւորող հոգիներ են, որոնք ուղարկւում են ի սպասաւորութիւն նրանց, որ ժառանգելու են փրկութիւնը**» (Եբր. 1, 14)։ Այսպիսով, պարզ է դառնում, թէ ինչո՞ւ է սատանան անընդհատ բռնի ապստամբութեան ենթարկում քօղով գլուխը ծածկելու գաղափարն ու աւանդոյթը։ Ակնյայտ է, թէ քօղի նշանը խորապէս ստորացնում եւ ամօթահար է անում դեւերին, քանի որ եկեղեցու հաւատացեալ կանայք անում են այն, ինչ նրանք չեն արել։ Սա է պատճառներից մէկը, որ առաքեալը հրահանգում է. «**Դրա համար կինը պարտաւոր է քօղ դնել գլխին հրեշտակների պատճառով**» (Ա. Կորն. 11, 10)։

Եկեղեցու Հայրերը նշում էին գլխաշոր գործածելու կարեւորութիւնը։ Օրինակ՝ Տերտուղիանոսն ասում էր. «Հրեշտակների հետ կապուելու պատճառով կանայք պէտք է ծածկեն իրենց գլուխները, որովհետեւ «մարդկանց դստերի» պատճառով հրեշտակներն ապստամբեցին Աստծու դէմ»։ Իսկ հրեշտակներն ամէնուր են, նրանք շրջապատում են մեզ եւ հետեւում են մեզ ուշադիր։ Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն նշում էր, թէ՝ «Սրա համար ենք մենք ձեզ այստեղ հրաւիրել, որպէսզի այս հանդիպումը լինի առաւել հանդիսաւոր, ու տեսարանը լինի առաւել փայլուն, երբ հաւաքուել են ոչ միայն մարդիկ, այլեւ նահատակները. եւ ոչ միայն նահատակները, այլեւ հրեշտակները։ Իսկապէս, այստեղ ներկայ են նաեւ հրեշտակները։ Այսօր կազմուել է հրեշտակների ու նահատակների հաւաքը։ Եթէ դու ցանկանում ես տեսնել եւ՛ հրեշտակներին, եւ՛ նահատակներին, ապա բացի՛ր քո հաւատքի աչքերը ու կը տեսնես այս տեսարանը։ Փաստօրէն, եթէ ամբողջ օդը լցուած է հրեշտակներով, ապա որքան առաւել եկեղեցին, եւ եթէ եկեղեցին, ուրեմն յատկապէս այսօր, երբ համբառնում է իրենց Տէրը։ Եւ որ ամբողջ օդը լցուած է հրեշտակներով, լսիր, թէ ի՞նչ է ասում առաքեալը, երբ յորդորում է կանանց քօղով ծածկել գլուխները.

«Դրա համար կինը պարտաւոր է քօղ դնել գլխին հրեշտակների պատճառով» (Ա. Կորն. 11, 10)»[1]:

*Հրեշտակներն իրագործում են պաշտպանական ծառայութիւն: Երանելի Դաւիթն ասում է. «**Իր հրեշտակներին հրամայուած է քո մասին, որ պահպանեն քեզ քո բոլոր ճանապարհներին: Իրենց բազուկների վրայ պիտի վերցնեն քեզ, որ երբէք ոտքդ քարի չխփես: Դու կը քայլես իժերի ու քարբերի վրայով, ոտքով կը կոխոտես առիւծին ու վիշապին**» (Սաղմ. 90, 11-13): Երբ Հերովդէսը ձերբակալեց Պետրոսին (տե՛ս Գործ. 12, 1-11), Տէրը ճիշդ այդպիսի հրեշտակ ուղարկեց ու փրկեց նրան Հերովդէսի ձեռքից: Եւ երբ Պետրոսը եկաւ Մարիամի՝ Մարկոս կոչուած Յովհաննէսի մօր տունը, այնտեղ հաւաքուել էին շատերը եւ աղօթք էին անում: Տան դուռը բախելիս՝ Ռոդէ անունով մի աղախին, ճանաչելով Պետրոսի ձայնը, ասաց, թէ Պետրոսը դռան մօտ կանգնած է. նրանք ասացին, թէ նրա հրեշտակն է: Զգուշացնելով աշակերտներին այն գայթակղութիւններից, որոնք գործւում են այս աշխարհում, Տէրն ասում է. «**Զգո՛յշ եղէք, որ այս փոքրիկներից մէկին չարհամարհէք. ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապէս տեսնում են երեսն իմ Հօր, որ երկնքում է**» (Մատթ. 18, 10): Յիսուս ասում է, թէ պահապան հրեշտակները օգնում են ու պաշտպանում մարդկանց՝ մշտապէս տեսնելով Աստծու երեսը: Հրեշտակների այդ օգնութիւնն այնքա՜ն զօրեղ է, որ Աստծու որդիներն ու դստերը, առանց որեւէ վնասի, հոգեւոր պատերազմ պիտի մղեն աներեւոյթ թշնամու դէմ եւ ոտքով կոխոտեն առիւծին ու վիշապին՝ հոգեւոր անտեսանելի աշխարհում: Բայց երբ են իրագործւում Աստծու այս խոստումները: Իհարկէ, երբ մենք հնազանդ լինենք Տիրոջը ամէն ինչում: Իսկ երբ մենք անհնազանդ ենք Տիրոջը, այն ժամանակ չար ուժերը յարձակւում են մեզ վրայ ու վնաս հասցնում: Այս դէպքում ոչ թէ մենք, այլ առիւծն ու վիշապն են ոտնահարում մեզ: Ու բոլոր*

1 Свт. Иоанн Златоуст, "Беседа на вознесение Господа нашего Иисуса Христа". Տե՛ս https://www.ccel.org/contrib/ru/Zlat21/Voznes.htm (առ 25/03/2017):

կողմերից մեզ վրայ են յարձակւում տարբեր որոգայթներ, դիւային յարձակումներ, գայթակղութիւններ, հոգեւոր ու մարմնաւոր հիւանդութիւններ, ֆինանսական ճգնաժամ եւ այլն, ինչպէս գրուած է. **«Նրանց դէմ ուղղեց իր սաստիկ բարկութիւնը՝ սրտմտութիւնը, զայրոյթն ու նեղուածութիւնը, չար հրեշտակների ձեռքով տանջանքներ ուղարկեց նրանց վրայ»** (Սաղմ. 77, 49)։ Ինչո՞ւ Տէրն ուղարկեց չար հրեշտակներին։ Իհարկէ, նրանց անհնազանդութեան պատճառով։ Կնոջ գլխի քողը խորհրդանիշ է խոնարհութեան, հնազանդութեան, պարկեշտութեան եւ, իհարկէ, պաշտպանութեան, ինչի մասին արդէն նշել էինք։ Իսկ երբ Պօղոս առաքեալն ասում է, թէ կնոջ գլխի քօղն իշխանութեան նշան է հրեշտակների համար, ապա խօսքը ինչ իշխանութեան մասին է։ Իհարկէ, ամուսնու իշխանութեան տակ գտնուելու նշանն է, ինչպէս Քրիստոսի իշխանութեան խորհրդանիշը՝ Իր Եկեղեցու հանդէպ։ Երբ հրեշտակները տեսնում են, թէ կինը հաւատքով կրում է այդ իշխանութեան նշանը, նրանք հասկանում են, թէ հնազանդ է կինն իր ամուսնուն։ Իսկ նա խոնարհութիւն ունի՞ Աստծու առջեւ, թէ՞ ոչ։ Եթէ կինը չունի իշխանութեան տակ լինելու խորհրդանիշը, ուրեմն նա անհնազանդ է իր ամուսնուն։ Իսկ անհնազանդութիւնն ապստամբութիւն է Աստծու դէմ։ Ուր կայ աստուածամարտ ապստամբութիւն, այնտեղ են նենգաւոր սատանան ու դեւերի բանակները։ Սակայն, երբ լոյսի հրեշտակները տեսնում են քօղը կնոջ գլխին, նրանք ունենում են ամէն իրաւունք՝ պաշտպանելու դիւական յարձակումներից, թոյլ չտալով, որ չար ոգիները կնոջը շեղեն աղօթքից կամ որեւէ այլ վնաս հասցնեն։

Սողոմոն Իմաստունը «Երգ Երգոց»-ում ներկայացնում է Քրիստոսի եւ Եկեղեցու յարաբերութեան խորհրդապատկերը։ Յիշենք, թէ ինչ էր գրուած այնտեղ, երբ քաղաքի պարիսպների պահակները Երուսաղէմի դստեր վրայից հանեցին պաշտպանող քօղը. **«Ինձ գտան քաղաքում շրջող պահապանները, խփեցին եւ վիրաւորեցին ինձ, իսկ պարիսպների պահակները քօղս հանեցին իմ վրայից»** (Երգ.

*5, 8)։ Այլ կերպ ասած՝ նրա վրայից հանեցին իր պաշտպանութիւնը, քանի որ այդ քօղը պաշտպանում էր քաղաքը։ Գուցէ սա էլ պատճառ է, երբ շատ քրիստոնեայ կանայք, ովքեր տարբեր պատճառներով այսօր մերժում են գլխաշոր դնել, անհնազանդ լինելով Աստծու խօսքին եւ օրէնքներին, չեն ստանում լուծումներ իրենց անձնական մտահոգութիւններին։ Եւ ինչո՞ւ, որովհետեւ հոգեւոր աշխարհն ունի իր հոգեւոր օրէնքները, որոնց անգիտութիւնը մարդուն չի ազատում այդ օրէնքների գործող հետեւանքներից։ Մեզ բոլորիս յայտնի է այն արտայայտութիւնը, թէ «օրէնքի չիմացութիւնը չի ազատում մարդուն քրէական պատասխանատուութիւնից»։ Այս յայտարարութիւնը լիովին վերաբերում է եւ հոգեւոր աշխարհին։ Օվսէէ մարգարէն ասում էր. «**Իմ ժողովուրդը նմանուեց նրան, ով իմացութիւն չունի. քանի որ դու մերժեցիր իմացութիւնը, ես էլ քեզ կը մերժեմ**» (Օս. 4, 6)։ Հայերէն ուրիշ թարգմանութիւններում գրուած է. «**Իմ ժողովուրդս գիտութիւն չունենալուն համար բնաջինջ եղաւ։ Որովհետեւ դու գիտութիւնը մերժեցիր, ես էլ քեզ պիտի մերժեմ**»։ Եթէ մենք չգիտենք այն օրէնքները, որոնք կան հոգեւոր աշխարհում, ապա դա չի նշանակում, թէ մենք ազատ ենք նրանցից։ Նրանք ազդեցութիւն ունեն մեր կեանքում, քանի դեռ մենք գտնւում ենք այս մարմնի մէջ։ Եթէ սատանան չիմանար այդ օրէնքները, ապա ոչ մի խնդիր չէր լինի։ Բայց բանն այն է, որ նա լաւ գիտէ հոգեւոր օրէնքները եւ իր գիտելիքներն օգտագործում է Աստծու ժողովրդի դէմ։ Իսկ Տէրը ցանկանում է, որ մենք իմաստաւորուենք աստուածային գիտելիքներով ու ձեռք բերենք փրկարար հնազանդութիւն։ Յիսուս իզուր չէ, որ ասում է. «**Ինչո՞ւ ինձ «Տէ՛ր, Տէ՛ր» էք կոչում, իսկ ինչ ասում եմ՝ չէք անում**» (Ղուկ. 6, 49)։ Հետեւաբար, կինը պէտք է հնազանդուի Աստծու խօսքին ու քօղով ծածկի իր գլուխը, քանի որ գրուած է. «**Ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը. որովհետեւ այնպէս է համարւում, թէ իբր գլուխն ածիլուած լինի**»։*

Վարդապետներից մէկն ասում էր, թէ «կնոջ հաւատի նահանջը

*սկսում է գլխաշորի հրաժարումից»։ Երբ քրիստոնեայ կինը մերժում է քողով ծածկուել, այդպիսով նշանաւորում է Տիրոջից նահանջելու իր առաջին քայլը։ Գլխի քողը հանելով՝ կինը մերժում է Աստծու պաշտպանութիւնը։ Եթէ կնոջ գլխին չկայ Աստծու պաշտպանութեան ծածկոյթը, ուրեմն դա նշան է, թէ նա բաց է պիղծ ոգիների յարձակումների դիմաց, քանի որ խախտուած է Աստծու հաստատած կարգը։ Արդէն նշել էինք, թէ Պօղոս առաքեալի՝ «ածիլուած» բառը հնարաւոր է, որ վերաբերում է մարմնավաճառներին։ Եւ եթէ սա չեն հասկանում ժամանակակից որոշ քրիստոնեաներ, ապա յիշեցնենք, որ սատանան շատ լաւ գիտէ, թէ ինչի՛ մասին է խօսում առաքեալը։ Այնպէս որ, երբ կինը գլխաբաց աղօթում է եկեղեցում, սատանան ունի ամէն իրաւունք՝ մօտենալու այդ կնոջը՝ որպէս «մարմնավաճառի», ու նրա սրտում ներդնել կեղծ յայտնութիւններ, աղանդաւորական մտածումներ ու չար խորհուրդներ, թէեւ արտաքուստ ամէն բան աննկատելի կարող է թուալ։ Աստծու խօսքից արդէն յայտնի է, թէ ամէն պոռնիկ մեղք է գործում իր սեփական մարմնի դէմ. «**Ով պոռնկանում է, իր մարմնի դէմ է մեղք գործում**» (Ա. Կորն. 6, 18)։ Եւ երբ նա մեղք է գործում իր մարմնի դէմ, ապա իր սրտում դեւին իրաւական եւ օրինաւոր տեղ է տալիս։ Պօղոս առաքեալն ասում է. «**Սատանային տեղի մի՛ տուէք**» (Եփես. 4, 27)։ Իսկ Յակոբոս առաքեալն ասում էր. «**Հնազանդուեցէ՛ք, ուրեմն, Աստծուն եւ դիմադրեցէ՛ք սատանային, ու նա կը փախչի ձեզանից**» (Յակ. 4, 7)։*



«Բայց կինն առանց մարդու եւ մարդն առանց կնոջ չկան ի Տէր. որովհետեւ, ինչպէս որ կինը մարդուց է, այնպէս եւ մարդը՝ կնոջ միջոցով, եւ ամէն ինչ՝ Աստծուց» (Ա. Կորն. 11, 11-12)։

Այս հատուածում Պօղոս առաքեալը յիշեցնում է, թէ կանայք պէտք է լինեն խոնարհ, ինչպէս եւ տղամարդիկ պէտք է լինեն

խոնարհ: Նա յիշեցնում է տղամարդկանց, թէ իրենք չեն գերազանցում կանանց իրենց գլխաւորութեամբ կամ իշխանութեամբ, այլ աւելի շուտ երկու սեռերն էլ ունեն կախում մէկը միւսից, եւ որ երկուսն էլ՝ Աստծուց են: Որեւէ մէկը չի կարող միւսից աւելի լաւը լինել: Եդեմի պարտէզում կինը ստեղծուել է տղամարդուց: Բայց Եդեմի պարտէզից յետոյ տղամարդը պիտի ծնուէր կնոջից: Ոչ մի մարդ չի ծնուել առանց կնոջ: Այսինքն՝ կինը գոյութիւն չունի առանց այր մարդու ու վերջինս՝ առանց կնոջ ի Տէր. ***«որովհետեւ, ինչպէս որ կինը մարդուց է, այնպէս եւ մարդը՝ կնոջ միջոցով, եւ ամէն ինչ՝ Աստծուց»*** *(Ա. Կորն. 11, 12): Ոչ մէկը չի կարող ասել, թէ ո՞վ է աւելի մեծ, որովհետեւ ամէն բան Աստծուց է: Այնպէս որ ծածկոյթը պարզապէս նշանակում է ունենալ ամուսնու իշխանութեան նշանը: Եթէ Տէրն արարչութեան սկզբից կարգել է, որ ամուսինը պէտք է իշխի իր կնոջը, ապա այս պատուիրանը չի վերացուել նաեւ Նոր Կտակարանում: Այդ պատճառով է Պօղոս առաքեալն ասում.* ***«Ուզում եմ, որ դուք իմանաք, թէ ամէն մարդու գլուխը Քրիստոս է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած»****: Նոյնը Պետրոս առաքեալն է ասում.* ***«Այսպէս էլ դուք, կանա՛յք, հնազա՛նդ եղէք ձեր մարդկանց, որպէսզի, եթէ նրանցից ոմանք չհնազանդուեն Խօսքին, իրենց կանանց ընթացքի շնորհիւ եւ առանց խօսքի իսկ շահուած լինեն՝ նկատի ունենալով ձեր պարկեշտ ընթացքը՝ լի երկիւղածութեամբ: Թող ձեր արտաքինը զարդարուած չլինի հիւսքերով, ոսկեհուռ վարսակալներով կամ պճնագեղ զգեստներով, այլ սրտի ներսի՛ մարդը՝ հեզ եւ հանդարտ հոգու անեղծութեամբ, ինչ որ շատ աւելի արժէք է ներկայացնում Աստծու առաջ. մի ժամանակ այսպէ՛ս էին իրենք իրենց զարդարում Աստծու վրայ յոյս դրած կանայք, որոնք հնազանդւում էին իրենց մարդկանց. այդպէս էր Սառան, որը հնազանդ էր Աբրահամին եւ նրան իր տէրն էր կոչում. եւ դուք նրա զաւակները եղաք. նրանք բարեգործ էին եւ չէին սարսափում եւ ո՛չ մի բանից»***

(Ա. Պետր. 3, 1-6)։ Առաքեալը նշում է Սառային, որ հնազանդ էր Աբրահամին, ու նրան իր տէրն է կոչում։ Պողոս առաքեալը Տիտոսին գրում է, որ հասուն կանայք խրատեն դեռատի կանանց՝ սիրելու ու հնազանդ լինելու իրենց ամուսիններին, որպէսզի Աստծու խօսքը եւ վարդապետութիւնը չանարգուի (տե՛ս Տիտ. 2, 3-5)։ Երբ կինը Սուրբ Պատարագի ընթացքում աղօթելիս մերժում է քօղով ծածկել իր գլուխը՝ որպէս իշխանութեան նշան հրեշտակների համար, ապա նա անարգում է Աստծու խօսքն ու օրէնքները։ Հնազանդուել Աստծու խօսքին, որը վերաբերում է նաեւ գլխի ծածկոցին, կնոջն առաջնորդում է Աստծուն ուղիղ կերպով երկրպագելուն՝ հոգով ու ճշմարտութեամբ։ Աստուած ուզում է կնոջ աղօթքը լսել ու տեսնել գլխաշորը գլխին։ Եթէ ուզում ենք, որ մեր աղօթքները հասնեն Աստծուն, եւ հաճոյ լինենք Նրան, պէտք է կատարենք Նրա կամքը։

*Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն այս առիթով ասում է. «Քանի որ առաքեալը վերագրել է մեծ առաւելութիւն ամուսնուն՝ ասելով, թէ կինը մարդուց է, նրա համար է եւ նրա իշխանութեան տակ է, որպէսզի չփառաբանի տղամարդկանց չափից աւելի ու չնուաստացնի կանանց։ Տեսէք, թէ ինչ ուղղում է մտցնում՝ ասելով. **«Բայց կինն առանց մարդու եւ մարդն առանց կնոջ չկան ի Տէր»**։ Մի՛ նշէք ինձ, ասում է, միայն առաջնահերթ օգուտներն ու արարչութիւնը, այլ ուշադրութեամբ հետեւեցէք ու դուք կը տեսնէք, թէ նրանցից իւրաքանչիւրը կախում ունի մէկը միւսից. կամ, աւելի ճիշդ, ոչ թէ մէկը միւսից, այլ ամէն բան՝ Աստծուց։ Այս պատճառով ասում է. **«Բայց կինն առանց մարդու եւ մարդն առանց կնոջ չկան ի Տէր. որովհետեւ, ինչպէս որ կինը մարդուց է, այնպէս եւ մարդը՝ կնոջ միջոցով, եւ ամէն ինչ՝ Աստծուց»** (Ա. Կորն. 11, 11-12)։ Նա չասաց՝ մարդը կնոջից, եւ կնոջ միջոցով կինը մարդուց, որ մնում է իր ամուսնու հետ։ Սակայն այդ օգուտների նախաձեռնողն ամուսինը չէ, այլ՝ Աստուած։ Հետեւաբար աւելացնում է՝ **«եւ ամէն ինչ՝ Աստծուց»**։ Այնպէս որ, եթէ ամէն ինչ գալիս է Աստծուց, եթէ Նա դա է կամենում,*

ուրեմն, հնազանդուի՛ր ու մի՛ հակասիր»[1]:

✝ ✝ ✝

«Եւ դուք ինքնե՛րդ դատեցէք. վայե՞լ է կին արարածին գլխաբաց աղօթքի կանգնել Աստծու առաջ: Եւ բնութիւնն իսկ չի՞ ուսուցանում ձեզ, որ, եթէ մարդը երկար մազերով է, դա անարգանք է իրեն. բայց կինը, եթէ երկար մազերով է, դա պատիւ է իրեն, որովհետեւ մազերը քօղի փոխարէն են տրուած նրան» (Ա. Կորն. 11, 13-15):

Պօղոս առաքեալը կոչ է անում կորնթացիներին խորհել այս թեմայի մասին՝ ոչ միայն զուտ հոգեւոր ու պատմական դիրքերից ելնելով, այլեւ բնութեանն իսկ առաւել ակնյայտ դրսեւորումներից ելնելով: Սա այն փաստարկներից մէկն է, որ առաքեալը մէջ է բերում որպէս աջակցութիւն այն հրահանգի, որ կինը պարտաւոր է քօղով գլուխը ծածկել: Ինչ է մեզ սովորեցնում մազերի մասին բնութիւնն իսկ: Որոշ մշակոյթներում երկար մազերը համարւում են կանացիութեան նշան: Այնպէս որ, եթէ տղամարդը երկար մազեր է աճեցնում, այդ մշակոյթների համաձայն, նա կանացի տեսք է ստանում, եւ դա անարգանք է իրեն: Ըստ բնութեան՝ գիտենք, թէ եթէ տղամարդն իր մազերը չի կտրում, նրանք չեն աճում միեւնոյն արագութեամբ ու չեն հասնում նոյն երկարութեանը, ինչպէս որ կանանց մազերի դէպքում է: Սա հնուց հաստատուած, փորձով եւ գիտականօրէն ապացուցուած ճշմարտութիւն է, թէեւ ունի բացառութիւններ: Կան նաեւ կանայք՝ դանդաղ աճող մազերով ու շատ սահմանափակ երկարութեամբ, եւ հակառակը, կան տղամարդիկ, որոնց մազերը աճում են շատ արագ ու հասնում բաւական մեծ երկարութեան: Սակայն ընդհանուր առմամբ հաստատուած նշանակալից փաստ է, ինչպէս ասում է

1 Свт. Иоанн Златоуст, Толкования на 1 Кор. 11:11-12.
Տե՛ս http://bible.optina.ru/new:1kor:11:11 (առ 11/04/2017):

*Պողոս առաքեալը, որ բնութիւնն արդէն ինքն է յուշում կանանց մազերի աճի տեմպը, շքեղութիւնն ու երկարութիւնը, որ նման է բնական ծածկոյթի, ինչպէս նաեւ անհրաժեշտութիւնը քօղով գլուխը ծածկելու: Իսկ տղամարդուն, ընդհակառակը, նախատեսուած չէ երկար մազեր, բնութիւնն ինքն է թելադրում, որ իրենց գլուխները պէտք է բաց լինեն. «**Եւ բնութիւն իսկ չի՞ ուսուցանում ձեզ, որ, եթէ մարդը երկար մազերով է, դա անարգանք է իրեն. բայց կինը, եթէ երկար մազերով է, դա պատիւ է իրեն, որովհետեւ մազերը քօղի փոխարէն են տրուած նրան**» (Ա. Կորն. 11, 13-15):*

Սբ. Գրիգոր Տաթեւացին իր «Երգ Երգոցի մեկնութիւնը» գրքում մազերի մասին հետեւեալ համեմատութիւնն է անում՝ ասելով. «Իսկ վարսերը բազում յատկութիւններ ունեն: Նախ, «փառք են կնոջ համար», ինչպէս ասում է առաքեալը: Երկրորդ, ծածկոյթ է գլխի համար: Երրորդ, դէմքի պատկառանք է: Չորրորդ, երեսի պարկեշտութիւն է: Սա՝ ըստ գործի: Հինգերորդ, վարսը մեռած է եւ անզգայ: Վեցերորդ, օծուած է ու չի հեշտանում: Եօթներորդ, անխնամ թողնուելով չի տրտմում: Ութերորդ, այրուելուց ու կտրուելուց չի ցաւում: Իններորդ, դէպի վայր է իջնում: Տասներորդ, միշտ աճում է: Սրանք, ըստ նիւթի, եւ ովքեր որ այս յատկութիւններն ունեն, նրանք են եկեղեցու վարսերը, որ մեռնում են ախտերի նկատմամբ, գովեստից չեն հեշտանում եւ ոչ էլ պարսաւանքից տրտմում, եւ թէպէտ Քրիստոսի համար չարչարուի, չի ցաւում: Եւ միշտ խոնարհ է եւ հանապազ աճում է առաքինութեամբ՝ բարիքների մէջ: Նրանք են եկեղեցու փառքը, ծածկոյթը, պատկառանքը եւ պարկեշտութիւնը»[1]:

Բնականաբար, կանանց երկար մազերը, հաշուի առնելով, որ դրանք տրուած է իրենց որպէս բնական ծածկոյթ, չեն ժխտում լրացուցիչ ծածկոյթի անհրաժեշտութիւնը: Սա յստակ է այն փաստից, որ Պողոս առաքեալը չէր կարող իր նամակի նոյն էջում ինքն իրեն հակասել: Եթէ նա հաւատում է, թէ մազերը կանանց տրուած են

1 Սբ. Գրիգոր Տաթեւացի, «Երգ Երգոցի մեկնութիւնը», Անկիւնաքար, Երեւան 2007, էջ 52-53:

*որպէս ծածկոյթ, ապա ինչո՞ւ է աւելի քան տասներկու տարբեր համարներում խօսում գլուխը ծածկելու անհրաժեշտութեան ու պատճառների մասին: Ենթադրելով, թէ կանանց կամքից եւ ցանկութիւնից անկախ, նրանք մազերի բնական ձեւով իրենց գլխին արդէն իսկ կրում էին ծածկոյթը, ասում է. «**Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը**» (Ա. Կորն. 11, 5): Պօղոս առաքեալն այստեղ բաւական յստակ ուզում է ցոյց տալ, թէ բնութիւնն է ինքն է յայտնում կանանց՝ որպէս աւելի թոյլ էակների, որ պահանջւում է պաշտպանութիւն, թէ պէտք է գլուխը ծածկել: Պարզ է, թէ գլուխը ծածկելը բնութեան ստիպողական երեւոյթ չէ, այլ կամաւոր գործողութիւն: Այսպիսով, կանայք եկեղեցում ամօթահար են անում չար հրեշտակներին: Հետեւաբար, կանայք կամաւոր կերպով, հաւասար լինելով տղամարդկանց, Աստծու շնորհի առընչութեամբ, հնազանդութեամբ ենթարկւում են իրենց ամուսիններին եւ դրանով իսկ ցոյց են տալիս իրենց հնազանդութիւնը Աստծու հրամաններին:*

*Այսօր մենք բոլորս ապրում ենք կա՛մ հոգեւոր Կորնթոսում, կա՛մ էլ մեծն Բաբելոնում, որին Աստուածաշունչը կոչում է «**մա՛յր երկրի պոռնիկների եւ գարշելիների**» (Յայտ. 17, 5): Այս պոռնիկների մայրը, որի «մարմինը ծածկուած էր հայհոյալից գրութիւններով..., որը լի էր իր գարշելի եւ անմաքուր պոռնկութեամբ», նստած է բազմաթիւ ջրերի վրայ: Առաքեալն ասում է, թէ այս ջրերը ժողովուրդներ են, ցեղեր, բազմութիւններ, ազգեր ու լեզուներ (Յայտ. 17, 15): Մենք ապրում ենք երկրի ազգերի, ցեղերի եւ լեզուների մէջ, որոնց այս մեծ պոռնիկների մայրը պարտադրում է իր մշակոյթը: Գրուած է, թէ «**նրա կատաղի պոռնկութեան գինուց հարբեցին բոլոր ազգերն ու երկրի թագաւորները, որոնք պոռնկութիւն արեցին նրա հետ**» (Յայտ. 18, 2): Իսկ եթէ մէկն ընդունի այդ մշակոյթը, ապա այդ պոռնիկի հետ մէկ մարմին կը լինի, քանի որ գրուած է. «**Չգիտէ՞ք, թէ, ով մերձենում է պոռնիկին, նրա հետ մէկ մարմին է դառնում**» (Ա. Կորն. 6, 16): Աստուածաշունչը մեզ յորդորում է. «**Ելէ՛ք դրա***

*միջից, ժողովո՛ւրդ իմ, որպէսզի մասնակից չլինէք դրա մեղքերին եւ չընդունէք դրա պատուհասները» (Յայտ. 18, 4)։ Պարզ է, որ մենք ֆիզիկապէս չենք կարող դուրս գալ այդ պոռնկութեան քաղաքից, բայց կարող ենք հոգեւոր կերպով, երբ մերժենք պոռնիկների ու գարշելիների մշակոյթը՝ մերձենալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի մշակոյթին, քանի որ «ո՛վ մերձենում է Տիրոջը, մէ՛կ հոգի է դառնում Նրա հետ»։ Այնպէս որ, ինքներդ դատեցէք, թէ արդեօ՞ք մեր վիճակը աւելի լաւ է, քան երբ Պօղոս առաքեալը եկաւ Կորնթոս ու ցնցուեց՝ տեսնելով տիրող անբարոյականութեան գերակշռող մթնոլորտը։ Պօղոս առաքեալն ասում է. «**Փախէ՛ք պոռնկութիւնից... Չգիտէ՞ք, թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մէջ է... Փառաւորեցէ՛ք Աստծուն ձեր մարմինների մէջ**» (Ա. Կորն. 6, 17-20)։ Ինչպէս մեր դարաւոր ձեռագործ տաճարներն են փառաւորում Աստծուն՝ լինելով ճշգրիտ նմանութիւնը մեր երեւելի բանական բնութեան, համաձայն որի՝ նրա վրայ երեւացող իմանալի մասը նշանակ է մեր հոգու եւ շօշափելի մասը պատկերն է մեր մարմնի, այդպէս էլ մենք, դառնալով Սուրբ Հոգու տաճարը, մեր մարմիններում փառաբանում ենք Աստծուն։ Կինն իր մարմնաւոր տաճարի ու հոգու գմբէթը ծածկում է երկնքի խորհրդանիշով եւ հոգեւոր իշխանութեան տակ գտնուող խորհրդապատկեր քօղով։ Աբեղաների յատուկ ծածկհանդերձանքն էլ՝ վեղարը, եկեղեցու գմբէթի նմանութիւնն ունի, որն ունի դէպի կատարելութեան ձգտման խորհուրդը ու ներկայացնում է Յիսուս Քրիստոսի «**խոնարհութեան հագուստը**», «**փշէ պսակը**» (Յովհ. 19, 2), «**փրկութեան սաղաւարտը**» (Ա. Թես. 5, 8։ Եփես. 6, 17), «**հաւատի վահանը**» (Եփես. 6, 16), որ հանգցնում է չարի բոլոր մխացող նետերը։ Եկեղեցու գմբէթները բազմանիստ են, բայց այն սիւները, որոնք դուրս են գալիս այդ կէտերից, հատւում են մէկ կէտում, որն էլ խորհրդաբար համարւում է կատարելութեան կէտը։ Հէնց այդտեղ էլ դրուած է եկեղեցու խաչը։ Իսկ լուսեղէն խաչը մեծ քահանայապետութիւնն է ժողովրդի մէջ եւ օրինակն է Քրիստոսի մարմնացեալ պատկերի՝ Աստուածորդու քահանայապետութեան։*

*Յովհաննէս վարդապետ Արճիշեցին ասում է. «Իսկ ով չի ընդունում գլխաբաց լինելը, նա Պողոսից թող սովորի նոյնի հարկաւորութիւնը, քանի որ նա ոչ միայն օրինադրում է բանալը, այլեւ չբացողներին սաստում է՝ ասելով. «**Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը**» (Ա. Կորն. 11, 4)։ Ինչն է սրանից աւելի մեծ յանցանք, երբ չնչին բաների համար անպատուում ենք մեր փառքը հանդիսացող Քրիստոսին։ Ուրեմն այսպիսին է սրա խորհուրդը, որ մեր ամէն ինչը յայտնի եւ բաց է ծածկագէտ Աստծուն։ Դարձեալ՝ այսպէս էր Քրիստոս խաչի վրայ, եւ մենք էլ բաց գլխով, մեր ձեռքերը տարածելով՝ Նրան ենք նմանւում։ Բայց կինը պէտք չէ բանայ իր գլուխը, այլ ծածկի, յատկապէս եկեղեցում։ Իսկ որ այժմ աբեղաներն իրենց բոլոր աղօթքների ընթացքում չեն բացում իրենց գլուխները, պատճառը հետեւեալն է։ Որովհետեւ աբեղայութիւնը կրօնաւորութիւն է, իսկ կրօնաւորը պէտք է իր բոլոր զգայարանները ծածուկ պահի։ Բայց պատարագի ընթացքում, ով էլ լինի պատարագիչը՝ թէ՛ քահանայ, թէ՛ եպիսկոպոս եւ թէ՛ մէկ ուրիշը, պարտաւոր է բանալ գլուխը։ Նախ բնութիւնն է սովորեցնում քեզ այս բանը, քանզի սա բնական է, որովհետեւ բոլոր ազգերն էլ, ոչ միայն քրիստոնեաները, նոյնիսկ անհաւատները*[1] *բաց գլխով են կանգնում աղօթքի»*[2]։

Հաւատացեալ մի կին այսպէս էր խրատում եկեղեցու երիտասարդ աղջիկներին, երբ խօսում էր գլխաշոր գործածելու մասին. «Որպէս ուղղափառ քրիստոնեայ, ես միացել եմ հաւատացեալների թագաւորական քահանայութեանը եւ իմ գլխի ծածկոցով ինձ զգում եմ որպէս կանացի խորհրդանիշը թագաւորութեան ու քահանայութեան (հմմտ. Ա. Պետր. 2, 10), որ ուղեկցում է ինձ իմ հոգեւոր ճամբորդութեան ընթացքում։ Եթէ կնոջ գլխի ծածկոցը

1 Այստեղ «անհաւատներ» ասելով՝ Տաթեւացին նկատի ունի այլակրօններին, ինչպէս մահմեդականներին, քանի որ նրանք չունեն ուղղափառ հաւատք։

2 Յովհաննէս վարդապետ Արճիշեցի, «Պատարագի Մեկնութիւնը», Էջմիածին, 1999, էջ 57։

միայն նրա մազերն են, ապա ինչո՞ւ են սրբապատկերների վրայ բոլոր սուրբ կանայք պատկերուած գլխաշորով։ Ուրախ եմ, որ Սուրբ Պատարագի ընթացքում երկնքի արքայութեանը խորհրդանշականօրէն մասնակից եմ դառնում իմ գլխի ծածկոցով։ Եպիսկոպոսներն ունեն իրենց յատուկ զգեստները, քահանան հագնում է իր զգեստները, սարկաւագներն ունեն իրենց ծիսական զգեստները, խորանի սպասաւորները, դպիրները, երգչախումբը կրում են իրենց զգեստները. այնպէս որ, ըստ էութեան, բոլորը եկեղեցում ունեն ինչ-որ իւրայատուկ բան՝ Տիրոջը երկրպագելու ու ծառայելու համար։ Ես էլ մասնակից եմ սուրբ Խորհուրդին իմ պատարագային ծիսական հագուստով»։

Բայց ոմանք հակառակւում են եւ աւելորդ ու անօգուտ համարում գլխաշոր դնելու բարի սովորութիւնը, քանի որ ասում են, թէ Աստուած միայն սրտի սրբութիւնն է պահանջում, ոչ թէ արտաքին ձեւերի տեսքը։ Ասում են, թէ իրենք Աստծուն երկրպագում են հոգով, եւ ոչ մի արտաքին, նիւթական պայման կամ միջոց չեն կարող իրենց արգելք հանդիսանալ, քանի որ աղօթքի իսկութիւնն առընչուած չէ արտաքին ու նիւթական դրսեւորումներին։ Այսպիսիններին պատասխանում ենք։ Նախ, ուղղափառ վարդապետները սովորեցնում են, թէ աստուածապաշտութեան մէջ ամէն ինչ, ըստ էութեան ու նշանակութեան, միջոց են լինում ոչ թէ լոկ նիւթի կամ ձեւի արտաքին արտայայտութեամբ, քանի որ մենք հոգի ու մարմին ենք, եւ այդ իսկ մարմնաւոր բնութեամբ սահմանափակ ենք։ Ու որպէսզի մեր հաւատը լինի լիակատար, անհրաժեշտ են նաեւ հոգեւոր երեւոյթների տեսանելի, նիւթական ու մարմնաւոր այն խորհրդաւոր վկայութիւնները, որոնք յիշեցնում են այն ամէնը, ինչը կարելի է տեսնել միմիայն հոգեւոր աչքերով եւ որոնցից մեր զգայարանները բարեպաշտութեան զգացմունքներ են ստանում, որոնք հոգեւորապէս արտայայտւում են աստուածապաշտութեան մէջ։ Աստուած նիւթական առարկաներով ամէն ժամ մեզ խորհրդաւոր կերպով մօտեցնում է Իր անտեսանելի գիտութեանն

ու աստուածային զօրութեանը։ Նա տեսանելի ձեւերի միջոցով մեր մտքերում սերմանում է Իր հոգատարութեան մասին յիշողութիւնը եւ մեզ կապում է Իր սիրոյ նուիրական գաղտնիքներին։ Եկեղեցու հաւատացեալները, որպէսզի կարողանան լիակատար կերպով հաղորդակցութիւն ունենալ Աստծու հետ, անշուշտ պէտք է ունենան նաեւ արտաքին պարագայական միջոցներ՝ ծիսական առարկաներ, սպասաւորների զգեստներ ու զանազան այլ նշաններ, որոնցից, օրինակ, կնոջ գլխի քօղը հանդիսանում է հանդիսաւոր ծիսական զգեստ ու հնազանդութեան խորհրդանիշ, քանի որ աստուածապաշտական որոշ խորհուրդ է արտայայտում։ Սա եկեղեցում անհրաժեշտ պարագաներից մէկն է, որ բխում է առաքելական ճշմարիտ վարդապետութեան սկզբունքներից։ Որքան ժամանակ այստեղ՝ այս մարմնի մէջ ենք, առանց մարմնական նիւթերի եւ զգալի նշանների, անհնար է մեզ մօտենալ աննիւթ Աստծուն, ինչպէս եւ հնարաւոր չէ առանց ջրի մկրտութեան՝ մաքրութիւն, առանց միւռոնի՝ Սուրբ Հոգի ստանալ կամ առանց եկեղեցու սուրբ սեղանի, հացի ու բաժակի՝ Սուրբ Պատարագ մատուցել։ Եթէ այս բոլորը զգալի նիւթեր են՝ հարկաւոր ու պիտանի, եւ ոչ միայն սրանք, այլեւ խնկարկութիւնը, սպասաւորների աստուածաստեղծ զգեստները եւ այլն, ուրեմն նմանապէս նաեւ կնոջ գլխի քօղը՝ որպէս հանդիսաւոր ծիսական զգեստաւորում Սուրբ Հաղորդութեան տուչութեան ժամանակ, ինչպէս ասացինք, հարկաւոր են ու խորհրդին պիտանի։

Սուրբ Յովհան Օձնեցին ասում է. «Եկեղեցում ամէն բան երկնայինների օրինակն է ցոյց տալիս»։ Եկեղեցու բոլոր ծիսական նշանները հաւատացեալի հոգեւոր կեանքում կարեւորագոյն տեղն են գրաւում, որովհետեւ մարդ միաժամանակ մարմնեղէն ու հոգեղէն արարած է. հոգեւոր իրականութիւնները արտայայտում է եւ ընկալում նիւթեղէն նշաններով։ Նիւթական տիեզերքը ներկայանում է մարդու բանականութեանը, որպէսզի նրա մէջ տեսնի իր Արարչի հետքերը (Իմաս. Սող. 13, 1։ Հռոմ. 1, 19-20։ Գործ. 14, 14-17)։ Քրիստոս Իր քարոզչութեան ժամանակ յաճախ օգտագործում էր

նիւթեղէն նշաններ՝ հասկացնելու համար Աստծու Արքայութեան խորհուրդները (Ղուկ. 8, 10)։ Յիսուս նիւթեղէն նշաններով կամ պատկերաւոր արարքներով կատարում էր բժշկումներ եւ ակնարկում Իր վարդապետութեան կարեւորութեանը (Յովհ. 9, 6։ Մարկ. 7, 33-35։ 8, 22-35)։ Աստուածաշնչում կարդում ենք, թէ հրաշքներ ու բուժումներ էին կատարւում այն ժամանակ, երբ մարդիկ, հնազանդուելով Տիրոջը, գործում էին պարզ ֆիզիկական գործեր կամ օգտագործում էին որեւէ ֆիզիկական նիւթ՝ ինչպէս, օրինակ, գետնի կաւը դնելով աչքերի վրայ, լողաւազան մտնելով, մահիճը կրելով կամ երաժշտական գործիքներով քայլելով պարիսպների շուրջը (Երիքովի ճակատամարտը)։ Պէտք չէ կարծել, թէ գլխաշորի գործածումը չնչին բան է։ Հնարաւոր է, որ գլխաշոր կրելն էլ կարող է ինչ-որ կերպ օգնել հոգու բժշկութեանը։ Տէրն իմաստաւորում է նշաններն ու իրադարձութիւնները, քանի որ ճիշտ Ինքն է այդ բոլորի իմաստը։ Ուստի եւ մարդու սրբացումը իմաստաւորւում է այսպիսի զգալի նշանների միջոցով, որոնց գոյութեան իմաստը նրա մէջ է, թէ Աստուած մարդուն փրկելու համար կամեցաւ յայտնուել մարդկային բնութեանը յարմար եղանակով։ Մարդը բաղկացած է հոգու եւ մարմնի միութիւնից եւ ամէն բան ճանաչում ու ընկալում է իր զգայարաններով։ Այս իսկ պատճառով Աստուած մարդկանց հետ հաղորդակցութեան մէջ է մտնում տեսանելի եւ զգալի իրերի միջոցով։ Բոլոր նշաններն ինքնանպատակ չեն, ոչ էլ պատահական են, եւ չեն կարող հասկացուել որպէս զուտ արտաքին նշան կամ երեւոյթ, այլ որպէս ներքին իրականութեան արտայայտութիւն, խորհրդանշան։

Երանելի Օգոստինոսն ասում է. «Այլ բան է այն, ինչ տեսնւում է, այլ բան է այն, ինչ հարկ է հասկանալ»։ Հետեւաբար, մենք զգալի նշաններով, ըստ կարողութեան, մեր միտքը դէպի աստուածայինն ենք ուղղում։ Մենք չենք կարող անմիջականօրէն ամբառնալ դէպի հոգեւոր էութիւնների ճանաչումը. մենք կարիք ունենք մեր բնութեանը յատուկ ու համապատասխան միջոցների, որոնք մեզ համար հասկանալի նշաններով երեւան են հանում անտեսանելին

ու գերզգայականը, որպէսզի մենք զգայականի միջոցով բարձրանանք դէպի հոգեւորը եւ ըմբռնենք Աստծու կամքը, իշխանական տնօրինութիւնն ու օրէնքները: Հետեւաբար, եկեղեցու մէջ բոլոր խորհրդաւոր նշանները, սրբապատկերները, ծիսական բոլոր նիւթեղէն սրբութիւնները, անօթները, սպասաւորների հանդերձները եւ նոյնիսկ գլխի քօղը կամուրջ են տեսանելի-զգալի եւ անտեսանելի-հոգեւոր աշխարհների միջեւ:

Աստուած կնոջ գլուխը ծածկեց բնական մազերով: Հետեւաբար, եթէ նա ընդունում է Աստծու իշխանութիւնը, պէտք է ծածկի մազերը, այլապէս թող կտրի իր բնական մազերը, որոնք Աստուած է տուել իրեն: Աստուածաշունչը ցոյց է տալիս, թէ երկար մազերն ինքնին բաւարար չեն ու մէկ այլ ծածկոց է պէտք: Աստուած ծածկում է գլուխը բնական մազերով, իսկ քրիստոնեայ կինը պարտաւոր է իր բնական մազերը ծածկել հնազանդութեան խորհրդանիշ քօղով: Բայց շատ կանայք ո՛չ ածիլում են իրենց մազերը, ո՛չ էլ քօղով ծածկում: Ուրեմն, կա՛մ պէտք է ածիլուել, կա՛մ քօղ դնել գլխին: Այսօր ոմանք չեն պահում Աստուածաշնչի այս երկու հրահանգները: Սա կրկնակի անհնազանդութիւն է: Բայց ածիլուելն էլ ամօթ չէ մեր ժամանակներում, քանի որ կան մերկ գլխով կանայք, որոնք յետեւում են այս անամօթ նորաձեւութեանը, եւ որոնց համար ածիլուած լինելը նոյնիսկ պատիւ է:

*Աստուած յատուկ արտօնութիւն տուեց կնոջը, որ իր հնազանդութեամբ Աստծու առջեւ Քրիստոսի եւ բոլոր մարդկանց ներկայացուցիչը լինի: Առաքեալը՝ դիմելով բոլոր կանանց՝ ասում է. «**Դուք ինքնե՛րդ դատեցէք...**»: Իմանալով, թէ Աստծու տնօրինութեան իշխանական դասակարգութեան մէջ ամէն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած, եւ որ Աստուած կնոջը նշանակել է ներկայացնելու իւրաքանչիւր մարդու Աստծու առջեւ, ինչպէս նաեւ ներկայացնելու Քրիստոսին՝ արդեօք ճիշդ է, եթէ այս ամէնն իմանալով հանդերձ՝ կինը գլխաբաց աղօթքի կանգնի Աստծու առաջ: Պօղոս առաքեալը բացատրում է, թէ քանի*

որ Աստուած կնոջը երկար մազեր տուեց իր իսկ պատուի համար քօղի փոխարէն, ուրեմն, կինը եւս, բացի բնական ծածկոյթից, պէտք է կամաւոր մի այլ ծածկոց աւելացնի իր գլխին:

*Իհարկէ, եթէ կինը ծածկում է իր գլուխը, բայց միեւնոյն ժամանակ արտայայտում է հպարտութիւն եւ իշխող ոգի, անարգում է Աստծուն եւ Եկեղեցուն: Սրանով փորձւում է կանանց խոնարհութիւնը: Չէ՞ որ ընդունելով ամուսնու հեղինակութիւնը՝ ընդունում ենք նաեւ, թէ շատ անգամ կինը կարող է գերազանցել եւ՛ մտքով, եւ՛ ոգեկանութեամբ: Բայց մարմինն ապստամբում է, ուզում է «հաւասարութիւն», իսկ Քրիստոս ասում է. «**Ձեր մէջ եւս պէտք չէ այդպէս լինի. այլ ձեզնից ով կը կամենայ մեծ լինել, ձեր ծառան պիտի լինի. եւ ձեզնից ով կը կամենայ առաջինը լինել, ձեր ծառան պիտի լինի**» (Մատթ. 20, 26--27). Սա՛ է Աստծու ցոյց տուած ճանապարհը կանանց եւ բովանդակ մարդկութեան ինքնահաստատման համար: Ոմանք ցանկանում են լինել առաջինը, բայց Աստծու համար առաջնութեան բաղադրատոմս են, սէրն ու խոնարհութիւնը: Ինչը կարող է սրանցից աւելի բարձր լինել:*

*Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «**Եւ դուք ինքնե՛րդ դատեցէք. վայե՞լ է կին արարածին գլխաբաց աղօթքի կանգնել Աստծու առաջ**» (Ա. Կորն. 11, 13): Նորից առաքեալը կանանց առաջարկում է, որ իրենք դատեն, նման այն ասուածի, որ արդէն քարոզել էր կռապաշտութեան մասին իր քարոզում: Այնտեղ ասում էր. «**Ինքնե՛րդ դատեցէք, ինչ ասում եմ**» (Ա. Կորն. 10, 15): Այստեղ էլ ասում է. «**Դատեցէք ինքներդ**», ու դրանով ներշնչում է մի ահաւոր բան: Այստեղ վիրաւորանքը վերաբերում է Աստծուն, սակայն դա ասում է ոչ ուղիղ կերպով, այլ արտայայտում է ներողամտութեամբ ու ծածկաբար. «**Վայե՞լ է կին արարածին գլխաբաց աղօթքի կանգնել Աստծու առաջ: Եւ բնութիւնն իսկ չի՞ ուսուցանում ձեզ, որ, եթէ մարդը երկար մազերով է, դա անարգանք է իրեն. բայց կինը եթէ երկար մազերով է, դա պատիւ է իրեն, որովհետեւ մազերը քօղի փոխարէն են տրուած նրան**» (Ա. Կորն. 11, 13-15):*

Ինչպէս այլ տեղերում, առաքեալը միշտ օգտագործում է յայտնի ապացոյցներ, այդպէս էլ այստեղ դիմում է յայտնի սովորութեանը եւ շատ է ամաչեցնում իր ունկնդիրներին, որոնք իրենից սպասում են այն յորդորները, որ կարող էին նրանք արդէն իմանալ ընդհանուր սովորութիւնից, իսկ դա անյայտ չէ նաեւ բարբարոսներին: Եւ տե՛ս, թէ ինչ ուժեղ արտայայտութիւններ է նա օգտագործում ամենուրեք. ***«Ամէն տղամարդ, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ եւ գլուխը ծածկած պահի, անպատուում է իր գլուխը»****,- ու նորից ասում է.* ***«Իսկ եթէ ամօթ է կնոջ համար մազը կտրել կամ ածիլել, թող քօղով ծածկուի»****, եւ դարձեալ.* ***«Եթէ մարդը երկար մազերով է, դա անարգանք է իրեն. բայց կինը, եթէ երկար մազերով է, դա պատիւ է իրեն. որովհետեւ մազերը քօղի փոխարէն են տրուած նրան»*** *(Ա. Կորն. 11, 4. 6: 14-15): Սակայն, ասում ես, եթէ մազերը քօղի փոխարէն են տրուած, ուրեմն ինչո՞ւ աւելացնել ուրիշ ծածկոց: Որպէսզի ցոյց տայ ենթակայութիւնը ոչ միայն բնութեան, այլ նաեւ բարի կամեցողութեամբ: Բնութիւնը հաստատել է նախապէս, որ դու լինես գլխածածկ, իսկ դու ինչ որ բան քեզանից աւելացրու, որպէսզի չերեւայ, թէ դու խախտում ես բնութեան օրէնքները: Դիմակայել ոչ միայն մեզ, այլ նաեւ բնութեանը՝ նշան է մեծ անամօթութեան: Դրա համար Աստուած, սաստելով հրեաներին, ասաց.* ***«Տղաներիդ ու դուստրերիդ... դու զոհ մատուցեցիր ...իսկ դա աւելի սաստիկ մի բան է, քան քո բոլոր պոռնկութիւններն ու պղծութիւնները»*** *(Եզեկ. 16, 20. 22): Նաեւ Պօղոսը հռոմէացիներին ուղղուած իր նամակում, սաստելով անարգ կրքերի տրուողներին, նոյնպէս ուժեղացնում է այդ սաստումը՝ տեսնելով, որ իրենց յանցագործութիւնը գարշելի է ոչ միայն Աստծու օրէնքին, այլ նաեւ բնութեանը.* ***«Բնական կարիքները փոխանակեցին անբնական կարիքներով»*** *(Հռոմ. 1, 26): Այստեղ էլ նա ներշնչում է նոյն բանը, ու նաեւ այն, որ նա չի նախատեսում ոչ մի նոր բան, եւ որ բոլոր հեթանոսական նորարարութիւնները հակասում են բնութեանը: Նոյնն է արտայայտում նաեւ Քրիստոս,*

*երբ ասում է. «**Այն ամէնը, ինչ կը կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպէս եւ դո՛ւք արէք նրանց» (Մատթ. 7, 12)**՝ ներշնչելով, թէ Ինքը չի ներկայացնում ոչ մի նոր բան»*[1]*:*

Սբ. Կղեմես Աղեքսանդրացին իր բազմահատոր աշխատութիւններում նոյնպէս նշում էր կնոջ գլխի քողը, երբ խօսում էր կնոջ պարկեշտութեան ու համեստութեան մասին. «Պէտք է բոլորովին հրաժարուել ուրիշի մազերը գլխին դնելուց..., որովհետեւ այն ժամանակ քահանան ո՞ւմ վրայ ձեռքերը դնի, ո՞ւմ օրհնի. ոչ թէ զարդարուած կնոջը, այլ ուրիշի մազերին, եւ ուրեմն՝ ուրիշի գլխին: Եթէ ամուսնու գլուխը Քրիստոսն է, ու կնոջ գլուխը՝ ամուսինը, ուրեմն անօրէնութիւն չէ՞ արդեօք այդ դէպքում կրկնակի մեղքի մէջ ընկնել: Այդպիսի կանայք խաբում են ամուսիններին՝ փոխարինելով մազերը, ու պատուազրկում Տիրոջը, որքան որ կարող են՝ զարդարուելով հետերաների[2] *նման, որպէսզի մոլորեցնեն եւ այդպիսով աղաւաղեն գլխի ճշմարիտ գեղեցկութիւնը»*[3]*: Նաեւ ասում է. «Կինը եւ իր ամուսինը պէտք է եկեղեցի գնան պարկեշտ զգեստներով... Թող կինը հեռատես լինի: Թող նա ամբողջութեամբ ծածկուած լինի... Այդ ոճի հագուստը ծանր է, բայց պաշտպանում է աւելորդ հայեացքներից: : Նա, ով իր աչքերի առաջ դնում է համեստութիւնը եւ իր գլխին՝ քողը, երբէք չի ընկնի. ոչ էլ նա մէկ ուրիշի կը հրաւիրի ընկնելու մեղքի մէջ: Որովհետեւ սա է խօսքի ցանկութիւնը, որ առաջնորդում է նրան քողով ծածկուած աղօթելու»*[4]*:*

1 Свт. Иоанн Златоуст, Толкования на 1 Кор. 11:13-15. Տե՛ս http://bible.optina.ru/new:1kor:11:13 (առ 21/03/2017):

2 Հետերաները հին Յունաստանում ազատ կեանք վարող թեթեւաբարոյ կանայք էին:

3 Свт. Климент Александрийский, Толкования на 1 Кор. 11:15. http://bible.optina.ru/new:1kor:11:15 (առ 22/03/2017):

4 St. Clement of Alexandria, The Instructor, Book III, "Going to Church." http://www.newadvent.org/fathers/02093.htm (առ 22/03/2017):

«Իսկ եթէ մէկն ուզում է առարկել, մենք չունենք այդպիսի սովորութիւն, ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները» (Ա. Կորն. 11, 16):

Ինչի՞ մասին առարկել եւ ինչն է այստեղ վիճելին: Ո՞րն է այն խնդիրը, որ քննարկուեց Պօղոս առաքեալի՝ կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլխի 1-15-րդ համարներին: Վերոյիշեալ 16-րդ համարը, իհարկէ, վերաբերում է նախորդ 1-15-րդ համարներում: Պօղոս առաքեալն այստեղ պարզապէս նշում է, թէ սխալ է հակառակուել ու պնդել այն ամէնի մասին, ինչ որ արդէն նա հաստատում է նախորդ 1-15-րդ համարներում, երբ բացատրում էր եկեղեցում գլխաշոր գործածելու պատճառներն ու կարեւորութիւնը: Նա ցոյց է տալիս, թէ նախ՝ քրիստոնեաները չունեն վիճելու սովորութիւն. եւ երկրորդ՝ Աստծու եկեղեցիներում չկայ մէկ այլ սովորութիւն՝ գլուխը քօղով ծածկելուց բացի: Կայ միայն այն մէկը, որ ինքն է առաջարկում եկեղեցուն, որն է՝ կանանց գլխածածք եւ ամուսինների գլխաբաց աղօթելու անժխտելի կարգը: Իսկապէս, բոլոր պատմական փաստաթղթերը ցոյց են տալիս, թէ վաղ եկեղեցում բոլոր կանայք ծածկում էին իրենց գլուխները, իսկ տղամարդիկ կրում էին կարճ մազեր:

*Որոշ մարդիկ համոզուած են, թէ կինը պէտք չէ իր գլուխը ծածկի եկեղեցում: Նրանք ընդդիմանում են Պօղոս առաքեալի խօսքերին ու դէմ են այն իրողութեանը, թէ առաքեալն այս հրահանգն ստացել է Տիրոջից եւ իրենց աւանդել: Ինչ է պատասխանում առաքեալն այդ-պիսիներին: Նա ասում է. «**Մենք չունենք այդպիսի սովորութիւն**», որ կանայք եկեղեցում գլխաբաց լինեն: «Մենք» նշանակում է ինքը՝ Պօղոսը ու բոլոր առաքեալները: Չկայ այդպիսի սովորութիւն եւ բո-լոր առաքեալների համոզմամբ: Եթէ մէկը դեռ պնդում է հակառակը, ապա առաքեալի պատասխանն է՝ «**ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները**»:*

*Աստուածաշնչի որոշ թարգմանութիւններում այլ կերպ են նշուած Պօղոս առաքեալի հետեւեալ բառերը. «Մենք չունենք **այդպիսի** սովորութիւն, ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները»: Սակայն ոմանք, այս*

խօսքերը չարաշահելով, յաճախ դրանք օգտագործում են՝ ժխտելու 11-րդ գլխի՝ այդ խօսքերին նախորդող առաջին կէսի ամբողջ հատուածը: Ուրեմն առաքեալն սկզբում գովում է կորնթացիներին՝ սովորութիւնը պահելու համար ու մօտ կէս գլուխ բացատրում է այդ աստուածաբանական կարեւոր սկզբունքը, որ միայն վերջում ասի, թէ իրօք, պէտք չէ պահել այդ սովորութիւնը: Նման թիւր մեկնաբանութիւնն անհեթեթութիւն է: Պատշաճ թարգմանութիւնը հետեւեալն է. «Մենք չունենք այլ սովորութիւն»: Այստեղ առաքեալը կորնթացիներին պարզապէս ցոյց է տալիս, թէ սա է այն սովորութիւնը, որ ամենուրեք կիրառում են «Աստծու եկեղեցիները». եւ բացի այս մէկից՝ առաքեալները ուրիշ սովորութիւն չեն ընդունում:

*Պօղոս առաքեալը պատուիրեց, որ հաւատացեալները կատարեն իր բոլոր հրահանգները մինչեւ Քրիստոսի գալուստը. «**Պատուիրում եմ քեզ Աստծու ներկայութեամբ, որ դու պահես պատուիրանը անբիծ, անարատ մինչեւ յայտնութիւնը Յիսուս Քրիստոսի**»: (Ա. Տիմ. 6, 14-15): Այս հատուածը գրուել է նամակի աւարտին, որի մէջ Պօղոս առաքեալը յստակ պահանջում է, որ կանայք եկեղեցում կատարեալ հնազանդութեամբ տղամարդկանց ենթարկուածութեան տակ լինեն (Ա. Տիմ. 2, 9-15): Քանի որ Յիսուս դեռ չի եկել, պէտք է ենթարկուել այդ սահմանափակումներին: Ի դէպ, իւրաքանչիւր մարդ, որն արհամարհում կամ անարգում է ծառայողի եւ իր տիրոջ դրոյթների վերաբերեալ հետեւեալ հրահանգները, գոռոզամիտ է եւ ոչինչ չգիտէ. «**Բոլոր նրանք, ովքեր ծառայութեան լծի տակ են, նրանցից իւրաքանչիւրը թող իր տէրերին պատուի արժանի համարի, որպէսզի Աստծու անունն ու վարդապետութիւնը չանարգուի: Իսկ նրանք, որ հաւատացեալ տէրեր ունեն, թող չարհամարհեն, որ նրանք եղբայրներ են, այլ աւելի լաւ ծառայեն, քանի որ հաւատացեալներ են եւ սիրելի եղբայրներ, որոնք յանձն են առել բարերարութիւնը: Այս բանն ուսուցանի՛ր եւ յորդորի՛ր: Իսկ եթէ մէկն այլ բան ուսուցանի եւ չանսայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողջամիտ խօսքերին եւ այն վարդապետութեանը,***

որ աստուածապաշտութեան համապատասխան է, այդպիսին գոռոզամիտ է եւ ոչինչ չգիտէ, այլ բռնուած է հակառակութեան խօսքեր եւ խնդիրներ առաջացնելու հիւանդութեամբ, որոնցից առաջ են գալիս նախանձ, կռիւ, հայհոյութիւններ, չար կասկածներ, խարդախութիւններ մտքով ապականուած եւ ճշմարտութիւնից հեռացած մարդկանց միջեւ, որոնք շահի աղբիւր են համարում աստուածապաշտութիւնը: Բայց դու այդպիսիներից հեռո՛ւ պահիր քեզ» *(Ա. Տիմ. 6, 1-7): Սրանք ուժեղ խօսքեր են ու վերաբերում են նրանց, ովքեր փորձում են հակասել Պօղոս առաքեալի ուսմունքին, որը ծառայողներից պահանջում է հնազանդութեամբ ենթարկուել իրենց տէրերին: Սա վերաբերում է նրանց, ովքեր ջնջում են աշխատողների ու գործարտէրերի յարաբերութիւնների միջեւ բոլոր սահմանները: Սա վերաբերում է նաեւ նրանց, ովքեր փորձում են հակառակուել ու մերժել եկեղեցում ու տանը կնոջ՝ տղամարդուն հնազանդ լինելու առաքելական ուսմունքը: Այդպիսիները գորոզամիտ են, հպարտ, հեռու են ճշմարտութիւնից ու նրանցից անհրաժեշտ է հեռու մնալ: Տեսնում ենք, թէ որքան լուրջ է այս հարցը: Համաձայն Պօղոս առաքեալի՝ կորնթացիներին ուղղուած նամակի 14-րդ գլխում նշուած իր հրահանգները հոգեւոր փորձութիւն են: Նրանք, ովքեր իսկապէս հոգեւոր են, պէտք է ընդունեն, թէ առաքեալի աւանդած ուսմունքները Տիրոջ պատուիրաններն են.* ***«Իսկ եթէ մէկը ինքն իրեն կարծում է մարգարէ կամ տէր՝ հոգեւոր շնորհի, թող իմանայ, թէ ինչ որ գրեցի ձեզ, Տիրոջ պատուիրաններն են»*** *(Ա Կորն. 14, 37): Նրանք, ովքեր մերժում են այս ուսմունքը եկեղեցում ու տանը կանանց դերի ու դիրքի վերաբերեալ, ապացուցում են, թէ իրենք հոգեւոր չեն:*

Աստծու եկեղեցիներն իրենց աշխարհագրական դիրքով տարածուած էին շուրջ հազարաւոր մղոններ հեռու այնպիսի վայրերում, ինչպիսիք են ժամանակակից Իսրայէլը, Թուրքիան, Յունաստանը եւ այլն: Այս բոլոր եկեղեցիներն ունեցել են հրեաների, հեթանոսների ու տարբեր ազգերի մշակոյթների խառնուրդ: Բայց

*չնայած դրան՝ նրանք բոլորն էլ կիրառում էին գլխաշորը, որը եղել է քրիստոնէական հաւատի խորհրդանիշ, այլ ոչ թէ որեւէ մշակոյթի հետեւանք։ Բոլոր առաքեալները համոզուած էին, թէ կինը պէտք է քօղով ծածկուի։ Ուրեմն, եթէ այսօր որեւէ եկեղեցի չի հաւատում այս պատուիրանին, Պօղոս առաքեալի պատասխանն է. «**Մենք չունենք այդպիսի սովորութիւն, ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները**»։ Այնպէս որ այս պատասխանը բոլոր նրանց համար է, ովքեր պնդում են, թէ նման սովորութիւն չկայ։ Պօղոս առաքեալն ասում է, թէ ոչ մի առաքեալ չի հաստատի հակառակ կարծիքը։ Իսկ եթէ որեւէ մէկը ցանկանում է վիճել, ոչ մի եկեղեցի չի համաձայնի իր այդ տեսակէտին։ Հետեւաբար, եկեղեցում եւ աղօթելիս թող մեր կանայք ծածկեն իրենց գլուխները։ Ինչո՞ւ։ Որպէսզի յայտնեն, թէ Աստուած իր եկեղեցում ստանում է այն, ինչ չի կարող ստանալ աշխարհում եւ որոշ հրեշտակներից։*

Պրոֆէսոր Ռաֆիկ Նահապետեանն իր «Կինը հայոց աւանդական ընտանիքում» աշխատասիրութեան մէջ գրում է. «Հնուց ի վեր մարդկային հասարակութեան մէջ որոշուած են եղել նրա անդամների տեղն ու դիրքը, պարտականութիւններն ու իրաւունքները, որոնք տարբերուել են ըստ սեռային եւ տարիքային պատկանելութեան։ Հայ ժողովրդի սովորութային համակարգում կին թէ տղամարդ դաստիարակւում էին իրենց դերին լիարժէք ծառայելու գիտակցութեամբ։ Հայ կինը պարտաւոր էր հետեւել ընդունուած աւանդական որոշ չափանիշների՝ հնազանդութիւն, հաւատարմութիւն, տնային աշխատանքներին նուիրուելու պատրաստակամութիւն, իր նոր ընտանիքի մշակութային միջավայրին յարմարուողութիւն, եւ այլն։ Կեանքն ընտանեկան խիստ պայմանների մէջ էր մշակել որոշակի սովորութային օրէնքներ, կանոնակարգումներ, որոնց հետեւում էին սրբութեամբ։ Կինը մանկուց դաստիարակւում էր ընտանիքի շահերի պաշտպանութեան եւ հաւատարմութեան ու աւանդոյթների պահպանման, հնազանդութեան ոգով... Հայ իրականութեան մէջ դրանց պահպանմանը, անշուշտ, նպաս-

տել են սոցիալտնտեսական եւ պատմաքաղաքական իրավիճակը, սովորութային իրաւունքը, եկեղեցին... Ամուսնուն հնազանդուելը կնոջ կարեւոր պարտականութիւններից մէկն էր: Այս պարտականութեան հետ սերտօրէն կապուած էր կնոջից հնազանդութիւն պահանջելու ամուսնու իրաւունքը: Այս մասին են վկայում ոչ միայն ազգագրական նիւթերը, այլեւ եկեղեցական գրականութիւնը, ձեռագիր մատեանները[1]: Հայաստանի պատմաազգագրական գրեթէ բոլոր շրջաններում գերիշխել է ընտանիքի նահապետական կենսաձեւը: Նահապետական հայ ընտանիքում գործում էր աշխատանքի սեռատարիքային բաժանման յստակ համակարգ: Նահապետական ընտանիքում կանանց փոխհարաբերութիւնները նուիրապետական բնոյթի էին: Կնոջ հագուստում ամրագրուած արգելքները միտուած էին ընդգծելու նրա հնազանդութիւնը, քօղարկել-ծածկելու կանացիութիւնը, բարեմասնութիւնները, մարմնի՝ աչքի ընկնող հատուածները՝ նրան դարձնելով նուազ գրաւիչ: Ամուսնացած բոլոր կանայք, անկախ տարիքից, իրաւունք չունէին բաց գլխով ման գալու: Կնոջ գլուխը բաց տեսնելն ամօթ էր համարւում ու դատապարտւում հասարակութեան կողմից: Գլխաշորը, աղջկայ տարիքային հասունացման վկայական լինելուց բացի, համարուել է նաեւ նրա խորհրդանիշը: Երեսը քօղով ծածկելը նորահարսի առաջնահերթ պարտականութիւնն էր, որը ծագում էր նշանադրութեան կամ պսակի օրինականացման պահից եւ իր ուժը պահպանել է մինչեւ 20-րդ դարասկիզբը՝ առաւելապէս սովորութական իրաւունքի ուժով: Այն համապատասխանում էր կանոնական իրաւունքի ոգուն ու սկզբունքներին...[2]: Նամուսը թոյլ չէր տալիս ջահել կնոջը բաց դէմքով երեւալ տղամարդկանց: Եթէ

1 Տե՛ս Մ. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 953, էջ 194բ, 196բ եւ այլն:

2 Ղազար Փարպեցուց եւ այլ պատմիչներից, ինչպէս նաեւ ազգագրութիւնից յայտնի է, թէ նորահարսը պարտաւոր էր երեսը ծածկել քօղով, իրաւունք չունէր տղամարդկանց եւ օտարի աչքին երեւալ բաց երեսով, պարտաւոր էր պահպանել հարսնութեան ամօթը (տե՛ս Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 117-118, 240):

կնոջ վերաբերեալ ասէին՝ «երեսը բացուած կին է», նոյնն է, թէ ասէին՝ լիրբ կամ անզգամ է։ Երիտասարդ աղջիկներին ու կանանց ընդհանրապէս արգելւում էր կտրել մազերը... Մազերը թաքցնելու սովորոյթի հիմքում ընկած էր այն մտայնութիւնը, թէ հերարձակ, գլխաբաց կինը կարող էր նաեւ դժբախտութեան պատճառ դառնալ։ Փաստօրէն, հայոց մէջ ընդունուած բարոյաիրաւական օրէնքները դրոշմ են թողել ոչ միայն ընտանեկան-հասարակական յարաբերութիւններում, կնոջ վարուեցողութեան կանոններում, այլեւ ազդել են հագուկապի, արդուզարդի վրայ։ Քօղի կիրառութիւնը կապուած է կնոջ ներփակ կեանքի ու չխօսկանութեան հետ։ Թերեւս դա կապուած է նաեւ սեռական արգելքի հետ։ Հայ կանայք եկեղեցի, շուկայ գնալիս կամ, առհասարակ, փողոցով քայլելիս ստիպուած էին մինչեւ աչքերը շալերով ծածկուել, որպէսզի չնկատուէր նրանց գեղեցկութիւնը»[1]։

Ռուս Ուղղափառ Եկեղեցու նախկին Պատրիարք Ալեքսի Առաջինը սիրում էր միշտ յեշեցնել, թէ «սպիտակ գլխաշորերը փրկեցին Ռուս Եկեղեցին»։ Նա ասում էր, թէ այդ սպիտակ գլխաշորերով տատիկները Խորհրդային Միութեան անաստուածութեան ռազմատենչ տիրապետութեան տարիներին իրենց յամառ հաւատով ու գործերով պահպանեցին մեր սուրբ տաճարները։ Նրանց ընտանիքները դառնում էին իրական փոքր եկեղեցիներ, ուր երեխաները ժառանգում էին ուղղափառ հաւատի առաջին դասերը։ Այս խիզախ ու նուիրեալ տատիկներին, որոնք իրենց ցածր սոցիալական կարգավիճակով շարունակում էին գնալ եկեղեցի, Խորհրդային իշխանութիւնը խիստ չէր հետապնդում՝ յուսալով որ, ի վերջոյ, նրանք պարզապէս պիտի մեռնեն։ Բայց սերունդները փոխւում էին, ու «սպիտակ գլխաշորեր»-ը շարունակում էին լրացնել եկեղեցիները, իսկ անաստուած իշխանաւոր ուժերը ստիպուած էին այդ բանի հետ հաշուի նստել։ Նոյն բանը կարելի է ասել նաեւ Հայաստանի

1 Պրոֆէսոր Ռաֆիկ Նահապետեան, «Կինը հայոց աւանդական ընտանիքում»։ Տե՛ս http://hpj.asj-oa.am/2621/1/2009-1(71).pdf (առ 5/04/2017)։

մեր սիրելի եկեղեցասէր տատիկների մասին, որոնք անաստուածութեան տիրապետութեան տարիներին մեզ սովորեցնում էին «Հայր մեր» աղօթքը՝ լինելով մեր հաւատի առաջին քարոզիչները: Իսկապէս, սա մի կարեւոր դաստիարակութիւն էր: Ի տարբերութիւն նախորդ տարիների՝ այսօր Հայաստանի եկեղեցիներում գլխաշոր գործածող կանանց եւ աղջիկների թիւը մեծացել է: Բայց չնայած այս հանգամանքին, դեռեւս Պատարագների ժամանակ նկատւում են նոյնիսկ առանց գլխաշորի մասնակցող կանայք: Այսպէս, գլխաբաց լինելը որոշ եկեղեցիներում ընդունելի է դառնում, իսկ Արեւմուտքի մեր համայնքներում գլխաշորի սովորութիւնն արդէն գրեթէ վերացել է: Որոշ եկեղեցիներում այն ձեւականօրէն կիրառւում է միայն Սուրբ Հաղորդութեան մօտենալու ժամանակ: Սա յստակ նշան է կրօնական հոգեբանութեան փոփոխութեան ու հաւատի անկման:

Գլխաշոր գործածելու պարտաւորութեան մասին Պօղոս առաքեալի խօսքերը հեգնանքով են հնչում այն կանանց ականջներին, ովքեր չգիտեն քրիստոնէական աւանդոյթներն ու սոցիալական նորմերը: Առաքեալն ասում է. «**Եթէ կինը քօղով չի ծածկւում, թող կտրի իր մազերը**». այսինքն՝ եթէ կինը համաձայն չէ ընդհանուր այս տեսակէտին, թէ մազերը պատիւ են իր համար, եւ եթէ նա չի սահմանափակում իրեն որեւէ կանոնի արժանապատուութեամբ, եթէ իր համար միեւնոյն է, ապա թող կտրի իր մազերը կամ էլ լրիւ ածիլի իր գլուխը: Եսայի մարգարէն ասում է, թէ հրեաների մօտ կանանց կտրուած մազերը ծառայում էին որպէս ամօթի ու վշտի նշան (տե՛ս Ես. 3,16-19): Պօղոս առաքեալը, գրելով իր նամակը, շատ լաւ էր ճանաչում կորնթացիներին: Եւ նման շատ անամօթ մարդիկ կան ոչ միայն հին Կորնթոսում, որ, ինչպէս առաքեալը նշում էր, «**դէպի վատթարն են գնում ձեր հաւաքոյթները**», այլեւ՝ ամենուրեք, մինչեւ այսօր: Իսկ եթէ պնդենք, թէ Պօղոս առաքեալի նամակը վերաբերում է միայն Կորնթոսի եկեղեցուն, ուրեմն եւ այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ Սուրբ Հոգու պարգեւները, Տիրոջ Վերջին ընթրիքի կատարման

կարգը, եւ այլն, պէտք է պարզապէս թողնել միայն կորնթացիներին: Այդ դէպքում անհասկանալի է, թէ էլ ո՞ւմ է ընդհանրապէս պէտք առաքեալի այս նամակը, եթէ այն միայն կորնթացիների համար էր գրուած: Կորնթացիներին ուղղուած նամակը հասցէագրուած է բոլոր քրիստոնեաներին, որոնք ամենուրեք պաշտում են մեր Տէր Յիսուս Քրիստոսին: Առաքեալն ինքն է ասում. ***«Աստծու այդ եկեղեցուն, որ Կորնթոսում է, Քրիստոս Յիսուսին նուիրուածներիդ, սուրբ լինելու կոչուածներիդ, բոլորի հետ միասին, որոնք ամէն տեղ պաշտում են անունը մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ նրանց եւ մեր Տէրն է»*** *(Ա. Կորն. 1, 2):*

Այսօր մեծ մասամբ Արեւմուտքում շատ քրիստոնեայ կանայք կան, ովքեր Սուրբ Խորհրդի ժամանակ չեն ծածկում իրենց գլուխները, բայց սովորեցնում են կիրակնօրեայ դպրոցներում եւ ուրիշներին վկայում են Աստծու մասին: Զէք կարծում, թէ դա տարօրինակ է, երբ իրենց քրիստոնեայ կոչող շատ մարդիկ ցանկանում են մեծ գործեր անել Աստծու համար, բայց չեն ուզում կատարել երկնաւոր Հօր հրամանները: Յիշենք մեր Տիրոջ նախազգուշական խօսքը. ***«Ոչ ամէն մարդ, որ ինձ «Տէ՛ր, Տէ՛ր» է ասում, երկնքի արքայութիւն կը մտնի, այլ նա՛, ով կատարում է կամքը իմ Հօր, որ երկնքում է»*** *(Մատթ. 7, 21):*

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «Հետեւաբար դիմադրութիւնը նշան է յամառութեան, ոչ թէ խելամտութեան: Բայց այստեղ էլ մեղմ սաստում է, եւ միեւնոյն ժամանակ շատ է ամաչեցնում նրանց, ովքեր նրա խօսքերը շատ տպաւորիչ են դարձնում: Մենք, ասում է, «չունենք այդպիսի սովորութիւն», որ վիճենք, մրցենք ու հակաճառենք: Զկանգնելով այս խօսքի վրայ՝ աւելացնում է. «Ոչ էլ՝ Աստծու եկեղեցիները». ներշնչում է, թէ չհնազանդուելով՝ նրանք թշնամութիւն են անում ու դէմ են ամբողջ տիեզերքին: Բայց եթէ այն ժամանակ կորնթացիները հակասում էին այդ օրէնքին, ապա այժմ այդ ընդունել ու պահպանում է ամբողջ տիեզերքը: Այդպիսին

է խաչեալի իշխանութիւնը»[1]։

Շատերն են առարկում են, թէ գլխաշորն այսօր անհրաժեշտ չէ կնոջ համար։ Նրանք պնդում են, թէ այս ամէնը վերաբերում է միայն կորնթացիներին։ Օրինակ՝ ԱՄՆ-ում, այս կամ այն եկեղեցական սկզբունքների դէմ առարկողներից որպէս պատճառաբանութիւն յաճախ կարելի է լսել. «Սա Ամերիկա է, վնաս չունի...»։ Երեւի թէ Կորնթոսի մէջ էլ կային այնպիսիները, որոնք նոյն բանն էին պնդում. «Սա Կորնթոսն է, վնաս չունի...»։ Եւ այսպէս ասելով՝ շատ սխալներ են ծածկւում ու այսպիսով դուռ է բացւում աւելի մեծ սխալների, եւ այդ սխալները ի վերջոյ անուղղելի են դառնում։ Յակոբ սարկաւագ Տէրեանն իր գրքում յիշեցնում է լուսահոգի Տիրան Արք. Ներսոյեանի խօսքերը, որ ասում էր. «Սատանան երկու անուն ունի. առաջինը սատանայ է, ինչ որ գիտենք, ու կը խորշինք այդ անունէն..., իսկ երկրորդ անունն այնքան մեղմ է հնչում մեր ականջներում, այնքան անմեղ է թւում որ ամենեւին վտանգ չենք տեսնում նրա մէջ։ Այդ երկրորդ անունն է՝ «Վնաս չունի»[2]։ Սարկաւագը նշում է, թէ երբ սխալները ծածկւում են «Վնաս չունի»-ով, դուռ են բացում աւելի մեծ սխալների։ Եւ այնքան ժամանակ, որ այդ «Վնաս չունի»-ները շարունակուեն, այդ սխալները, աւելի պնդանում ու դառնում են անուղղելի։ Եթէ «Վնաս չունի» ասելով կամաց-կամաց ուրանանք մեր աւանդոյթները, ապա ինչ պիտի լինի մեր վերջը։ Տէր Աստուած անաչառ Դատաւոր է, որ յանդիմանում է անզգամներին։ Սարկաւագը նաեւ յիշեցնում է ուղտապանի առակը, որ հաւանաբար ծանօթ է շատերին, թէ ինչպէս ուխտը գիշերով գալիս է եւ իր գլուխը մտցնում իր տիրոջ վրանի մէջ, քանի որ դուրսը ցուրտ էր։ Այդ արտօնութիւնը ստանալուց յետոյ իր առջեւի երկու ոտքերն է մտցնում՝ նոյնպէս արտօնութեամբ։ Յետոյ՝ սապատը եւ ի վերջոյ՝ իր

---

1 Свт. Иоанн Златоуст, Толкования на 1 Кор. 11:16.
Տե՛ս http://bible.optina.ru/new:1kor:11:07 (առ 9/04/2017)։

2 Յակոբ սրկ. Տէրեան, «Ո՞ւր կ՝երթայ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին», Երկրորդ տպագրութիւն, 2013, էջ 75։

ետեւի ոտքերը, ամբողջութեամբ ներս է մտցնում իր հսկայ մարմինը: Ապա իր տիրոջը հարուածելով՝ դուրս է շպրտում՝ առարկելով, թէ վրանը շատ նեղ է իրենց երկուսի համար: Եւ ինչպէս այդ ուղտը, փուլ առ փուլ ներս մտաւ վրան՝ իւրաքանչիւր փուլին արտօնութիւն ունենալով՝ նոյնպէս էլ եւ քօղի մերժումը (եւ սրա նման շատ ուրիշ աւանդոյթներ, որոնց մասին չեմ նշում այստեղ), որ այդ ուղտի նման մուտք է գործել Արեւմտեան երկրների մեր թեմերից ներս, որի հետեւանքները բացատրելու կարիք չկայ: Քրիստոնէութեան ջատագովներից մէկը՝ անգլեացի յայտնի փիլիսոփայ, արձակագիր եւ բանաստեղծ Ջիլբերթ Քիթ Չեստերթոնը, մի առիթով ասել է. «Եթէ աշխարհը չափազանց աշխարհիկ դառնայ, այն կարող է յանդիմանուել եկեղեցու կողմից, իսկ եթէ եկեղեցին դառնայ աշխարհիկ, ապա այն չի կարող իր աշխարհիկ լինելու համար պատշաճ կերպով յանդիմանուել աշխարհի կողմից»[1]:

Ա. Պ. Լոպուխինի «Բացատրական Աստուածաշունչ»-ն այսպէս է մեկնաբանում Ա. Կորն. 11, 16 համարը. «Հարցնում են՝ առաքեալի համոզմունքը գլխաշորի մասին արդեօք պայմանաւորուած չէր տեղական ու տեւական պայմաններով: Եւ արդեօք այլ կերպ չէր մտածի առաքեալը, եթէ ապրէր մեր օրերում Արեւմտեան Եւրոպայում: Մեր պատասխանն այս հարցին բացասական է: Այն հիմքերը, որոնք բերում է առաքեալը, փոխառնուած չեն այն ժամանակի յարաբերութիւններից ու սովորոյթներից, այլ համապատասխանում են յաւէրժական եւ անփոփոխ փաստերին: Իրօք, կնոջ ֆիզիկական կազմուածքը (Ա. Կորն. 11, 13-15) եւ այսօր, եւ յետագայում միշտ նոյնը կը մնայ, ինչպէս եղել է Պօղոս առաքեալի օրերին: Այնուհետեւ, մարդու ստեղծման պատմութիւնը, որի վրայ հիմնւում է առաքեալը (տե՛ս Ա. Կորն. 11, 8-12), եւ հիմա, ինչպէս որ առաքեալի օրերում էր, քրիստոնեաների հայեացքով այն սկզբունքն է, որի վրայ է

1 G. K. Chesterton Quotes https://apprenticeshiptojesus.wordpress.com/2015/06/10/g-k-chesterton-quotes/ (առ 10/04/2017):

հիմնւում հասարակական կարգը: Աստծու եւ Քրիստոսի, Քրիստոսի ու տղամարդու, ամուսնու եւ կնոջ միջեւ յարաբերութիւնները էականօրէն չեն փոխուել (Ա. Կորն. 11, 3): Հետեւաբար, կա՛մ պէտք է անհիմն համարել առաքեալի փաստարկները, կա՛մ էլ պէտք է ընդունել դրանց կարեւորութիւնը բոլոր ժամանակաշրջանների համար: Եւ քանի որ չկայ ոչ մի պատճառ ժխտելու վերջինս, հետեւաբար, անհրաժեշտ է հաւատալ, թէ առաքեալը քրիստոնեայ կանանց այժմ եւս կ՚ասէր այն նոյն բանը, որ ասում է քրիստոնեայ կանանց՝ քննարկուող գլխում»[1]*:*

*Յիսուս իր աշակերտներին առակով խօսում է հարսանեաց ընթրիքին հրաւիրուածների մասին՝ ասելով. «**Երկնքի արքայութիւնը նմանուեց մի թագաւորի, որ իր որդու համար հարսանիք արեց... Եւ երբ թագաւորը ներս մտաւ հրաւիրուածներին նայելու, այնտեղ տեսաւ մի մարդու, որ հարսանիքի զգեստ չէր հագել, ու նրան ասաց. «Ընկե՛ր, որ հարսանիքի զգեստ չունէիր, ինչպէ՞ս այստեղ մտար»: Եւ նա պապանձուեց: Այն ժամանակ թագաւորը ծառաներին ասաց. «Կապեցէ՛ք դրա ոտքերն ու ձեռքերը եւ դո՛ւրս հանեցէք դրան, արտաքին խաւարը. այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում. որովհետեւ կանչուածները բազում են, իսկ ընտրեալները՝ սակաւ» (Մատթ. 22, 1-14): Իսկ Ղուկաս աւետարանիչը գրում է, թէ ընթրիքին հրաւիրող տէրն իր ծառաներին ասում է. «Ասում եմ ձեզ, որ այդ հրաւիրուածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի» (Ղուկ. 16, 16-24): Բայց այս առակը փոխաբերական իմաստ ունի, որում ներկայ են խորհրդանիշեր եւ այլաբանութիւն, որտեղ երկրայինը վկայում է երկնայինի մասին: Հասկանալի է, թէ այստեղ մարդն առանց հարսանեկան զգեստի պարզապէս չի համապատասխանում իր կոչմանը: Ո՞վ է այն մարդը, որ «**հարսանիքի զգեստ չէր հագել**»: Նա, ով իր վրայ չունի ողորմութեան, բարութեան ու եղբայրասիրութեան զգեստը. նա, ով ինքն*

1 А. П. Лопухин, “Толковая Библия”, Комментария на 1 Кор.11:16, Петербург, 1904-1913.

*իրեն խաբում է ապարդիւն յոյսով՝ ստանալու երկնքի արքայութիւնը. եւ նա, ով հպարտ է ու բարձր կարծիք ունի իր մասին։ Անփոյթ հիւրը նոյնպէս գիտէր, թէ արքայի ընթրիքին պէտք է պատշաճ զգեստով ներկայանալ։ Հրաւէրն ստացաւ, բայց չհագաւ հարսանիքի զգեստը, իր վրայից չհանեց չարութեան եւ ապականութեան զգեստը ու նենգութեամբ մտաւ ընթրիքին մասնակցելու, եւ իր հետ ոչինչ չբերեց Քրիստոսի պատուիրաններից ու բարի գործերից։ Նրանք, ովքեր մաքրութեամբ չեն պահպանում սուրբ Աւազանի շնորհիւ ձեռք բերուած անմեղութեան ու սրբութեան զգեստը, դատաստանի օրը կը վտարուեն, ինչպէս ասում է, «**արտաքին խաւարը, այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում, որովհետեւ կանչուածները բազում են, իսկ ընտրեալները՝ սակաւ**»։ Ովքե՞ր են առակի անարժանները։ Իհարկէ նրանք, ովքեր իրենց կեանքով մերժում են Աստծուն ու Նրա պատուիրանները։ Տէր Աստուած Իր մօտ է հրաւիրում բոլորին, սակայն քրիստոնեան պէտք է պատրաստ լինի արժանապէս մասնակից դառնալու հարսանեաց ընթրիքին, որը խորհրդանշում է Սուրբ եւ Անմահ Պատարագը։ Ընթրիքը Յիսուսի Մարմնի եւ Արեան ճաշակումն է։ Եւ ամէն մարդ պէտք է հարսանիքի զգեստ ունենայ, որը մկրտութեամբ մաքրուած ու վերածնուած հոգու զգեստն է, ինչը խորհրդանիշ է հոգու մաքրութեան։ Բայց ի՞նչ կապ ունի սա գլխաշոր կրելու հետ։ Չէ՞ որ «հարսանիքի զգեստ»-ն ունի խորը՝ հոգեւոր իմաստ, այլ ոչ թէ պարզ մարմնաւոր զգեստաւորման նշանակութիւն։ Սբ. Սիմէօն Աստուածաբանը, մեկնաբանելով առաքեալի խօսքը, գրում է. «Եւ դու կոչուած ես փրկութեան, ուստի ջանա կատարել Աստծու պատուիրանները»։ Հետեւաբար, գլխաշորի գործածումը, ինչպէս արդէն տեսանք, Աստծու պատուիրանն է, առաքելական հրաման եւ եկեղեցական օրէնք։ Այսպէս էլ գլխաշոր կրելը նոյնպէս Աստծու պատուիրանն է, իսկ այն մերժելը նշանակում է Տէրունական ընթրիքին ներկայանալ առանց հարսանեկան զգեստի։ Որքա՜ն ցնցող կը լինի, եթէ եկեղեցում տեսնենք, որ եկեղեցու պաշտօնեաներն առանց եկեղեցական զգեստների են կատարում*

ծիսակատարութիւնները։ Իսկ ինչո՞ւ չենք զարմանում, երբ տեսնում ենք կնոջը եկեղեցում աղօթքի կանգնած՝ առանց իր «հարսանիքի զգեստ»-ի, որ ցոյց է տալիս իր անհնազանդութիւնը՝ արհամարհելով Աստծու պատուիրանը։ Պատարագիչ քահանան իր զգեստաւորմամբ խորհրդանշում է Բանն Աստծու մարմնաւորումը, իսկ կինն իր գլխի քօղով խորհրդանշում է Քրիստոսի խորհրդաւոր Մարմինը՝ Եկեղեցին։

Մարդիկ այսօր ասում են, թէ կանանց գլխաշոր գործածելու, եկեղեցում լուռ մնալու եւ ուսուցանելու արգելքի հրամանները եղել են ընդամէնը առաջին դարի «աւանդոյթներ»։ Այսօր մենք ապրում ենք 21-րդ դարում ու դա մեզ պէտք չէ։ Զարմանալին այն է, թէ ինչ-որ Պօղոս առաքեալն անուանում էր Աստծու պատուիրաններ, այսօր մարդիկ կոչում են «աւանդոյթ», իսկ սեփական աւանդոյթները, որոնցով նրանք վերացնում են Աստծու պատուիրանները, համարում են սուրբգրային ճիշդ պատկերացում։ Եւ այսպիսով բացարձակապէս չի տրւում որեւէ ուշադրութիւն, որ Պօղոս առաքեալը պնդում էր, թէ այդ հրամաններն իրենը չեն, այլ Աստծու պատուիրաններն են։ Բացի դրանից, որեւէ ուշադրութիւն չի դարձւում այն հանգամանքի վրայ, թէ առաքեալը ոչ մի խօսք չի յիշատակում որեւէ «աւանդոյթ»-ի մասին՝ խօսելով աղօթքի ժամանակ կանանց գլուխը քօղով ծածկելու անհրաժեշտութեան մասին։ Նա պարզապէս մէջբերում է արարչութեան օրինակը (սկզբում ստեղծուել է մարդը եւ յետոյ կինը)։ Նաեւ ասում է, թէ կանանց գլխի քօղը նշան է հրեշտակների համար։ Ո՞ւր է այստեղ որեւէ «աւանդոյթ»-ի յիշատակում։ Աւելին, այն փաստը, որի մասին խօսում է առաքեալը, ըստ էութեան, աւանդոյթի դէմ է, քանի որ մենք պատմութիւնից գիտենք, թէ հին Հռոմում ամուսնացած կանայք ծածկում էին իրենց գլուխները, բայց Յունաստանում, որտեղ Պօղոս առաքեալը գրեց իր՝ կորնթացիներին ուղղուած առաջին նամակը, չկար ոչ մի աւանդոյթ, որ անպայման պարտադրում էր կանանց ծածկելու իրենց գլուխները։ Դա պատմական փաստ է, որն անտեսւում է ժամանակակից մեկնաբանների կողմից։ Յետոյ գրե-

լով գլխաշոր գործածելու անհրաժեշտութեան մասին՝ Պօղոս առաքեալը տալիս է բնութեան ապացոյցներ, որոնք սովորեցնում են մեզ տղամարդկանց ու կանանց տարբերութեան մասին, եւ, ի վերջոյ, նա դիմում է գլխաշորի գործածման համընդհանուր եկեղեցական գործելակերպին բոլոր քրիստոնէական եկեղեցիներում: Բայց այսօր Աստծու պատուիրանը անուանելով «աւանդոյթ»՝ կանայք եկեղեցիներում համատարած հանեցին իրենց գլխաշորերը (յատկապէս Արեւմուտքի եկեղեցիներում): Աւելին՝ այսօր կանայք որոշ եկեղեցիներում ազատօրէն ուսուցանում են եւ իշխանութիւն բանեցնում տղամարդկանց վրայ, ու նոյնիսկ դառնում են «հովիւներ»: Որքան զարմանալի է, որ հաւատքի նահանջը կատարւում է լուռ համաձայնութեամբ, եւ երբեմն եկեղեցական առաջնորդների, հովիւների, քահանաների, տղամարդկանց ու կանանց հաւանութեամբ ու մասնակցութեամբ: Ու սա ընդամէնը օրինակ է, թէ ինչպէ՛ս են քրիստոնեաներն այսօր Աստծու պատուիրանները չեղեալ համարում ու փոխարինում մարդկային աւանդոյթներով:

Ամփոփելով բոլոր փաստարկները՝ անհրաժեշտ է ընտրութիւն կատարել գլխաշորի վերաբերեալ առաքեալի ներկայացրած բոլոր պատճառների միջից. կա՛մ նրանք անհիմն են, կա՛մ էլ պէտք է նրանց ճանաչել հիմնական՝ բոլոր ժամանակների ու բոլոր ժողովուրդների համար: Ուրիշ եզրակացութիւն չի կարող լինել: Քանի որ ոչ մի փաստ չկայ, որ հաստատի, թէ այս պատուիրանը միայն տեղական ու ժամանակաւոր բնոյթ ունի. հնարաւոր է ենթադրել, թէ Պօղոս առաքեալը մեր օրերում նոյն բանը կ՚ասէր բոլոր քրիստոնեայ կանանց. «Եւ ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը» (Ա. Կորն. 11, 5): Հետեւաբար, քօղի գործածութիւնը, որ ցոյց է տալիս կնոջ հնազանդութիւնն Աստծու հրամանին, վկայութիւն է կարեւոր հոգեւոր երեւոյթների: Ջնուազեցնելով տղամարդու ու կնոջ հաւասարութեան դիրքն ու կարգավիճակը Աստծու առաջ՝ գլխաշորը հնազանդութեան վկայութիւն է, որ հոգեւոր աշխարհում տանում է փառքի, իսկ

*անհնազանդներին տանում է անպատուութեան։ Նրանց, ովքեր այսօր չգիտեն գլխաշորի գործադրման բուն խորհրդաբանութիւնը, գլխաշորի մերժումը պէտք չէ մեղք համարել ու դատապարտել, պարզապէս պէտք է բացատրել նրա իմաստն ու նշանակութիւնը։ Քրիստոնեայ կանայք, իհարկէ, կարող են տարբեր պատճառներ գտնել գլխաշոր գործածելու համար, բայց ամենակարեւոր պատճառն այն է, ինչ որ Պօղոս առաքեալն է հաստատում, թէ սա Աստծու պատուիրանն է։ Իսկ մեր Տէրն ասում է. «**Եթէ ինձ սիրում էք, կը պահէք իմ պատուիրանները**» (Յովհ. 14, 14)։ Մենք պէտք է միշտ պատրաստ լինենք ու մեր հարսանեաց քօղով սպասենք մեր Փեսային ու խոստացուած հարսանիքին. «**Ես՝ Յիսուսը, ուղարկեցի իմ հրեշտակին, որ այս բանը վկայի ձեզ՝ եկեղեցիներիդ։ Ես արմատ եւ սերունդ եմ Դաւթից, աստղը առաւօտի, Հոգին եւ Փեսան, որ գալու եմ**» (Յայտ. 22, 17), ու հետեւենք սրբուհի Մարիամ Աստուածամօր օրինակին, որ երբէք չի յայտնուել մարդկանց աչքին առանց քօղի։ Իսկ նրանց, ովքեր դեռ կարծում են, թէ գլխաշոր կրելը հնացած սովորութիւն է, յիշեցնենք, թէ «**Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան**» (Եբր. 13, 8)։*

*Սիրելի՛ կանայք, Աստուած չի ցանկանում, որ Իրեն սիրեն պարտադրանքով, ու ստիպուած լինեն գլուխը քօղով ծածկել։ Ինչ օգուտ, եթէ մարդ իր սրտում տրտնջայ, դժգոհի կամ ապստամբի։ Այս դէպքում գլխի քօղն էլ ծածկոց չի լինի, իսկ սատանան, միեւնոյն է, կը գտնի որեւէ սողանցք ներխուժելու ու վնաս հասցնելու։ Իհարկէ, Աստուած լսում է ցանկացած աղօթք. ընդ որում՝ անհրաժեշտ է մշտապէս աղօթել, նոյնիսկ այն իրավիճակում, երբ անձը չունի գլխաշոր եւ կամ հագուստ։ Բայց նոյնիսկ տանը աղօթելիս, օրինակ՝ առաւօտեան, երեկոյեան կամ գիշերային աղօթքները մրմնջելով, առաւել ցանկալի է, որ կինը գլխաշոր ունենայ իր գլխին, որովհետեւ արտաքին տեսքն ազդում է հոգու ներքին վիճակին վրայ։ Այս պատճառով կինը պէտք է իմանայ ճշմարտութիւնը։ Իսկ թէ ինչպէս վարուել՝ նա ինքը պէտք է որոշի։ «**Ամէն ինչ ինձ արտօնուած է**»,-*

*ասում է Պողոս առաքեալը,- «**բայց ոչ ամէն բան՝ օգտակար**» (Ա. Կորն. 6, 12)։*

Վերջացնելով այս ուսումնասիրութիւնը՝ կարծում եմ աւելորդ չի լինի որոշ եզրակացութիւններ անել գլխաշոր գործածելու գլխաւոր պատճառների մասին։ Քրիստոնեայ աստուածավախ կինը, երբ կենտրոնանում է երկրպագութեան եւ աղօթքի վրայ, իր գլուխը քօղով ծածկում է հետեւեալ պատճառներով.

Որովհետեւ Աստուած է սահմանել այս պատուիրանը։

Որովհետեւ առաքելական հրահանգ է։

Որովհետեւ արտայայտում է Աստծու տիրապետական տնօրինութեան կարգը երկրի վրայ։

Որովհետեւ Քրիստոսի մարմնաւորման հանդէպ մեր հաւատքի տեսանելի նշանն է։

Որովհետեւ կանանց հանդիսաւոր ծիսական զգեստաւորումն է Սուրբ Հաղորդութեան տուչութեան ընթացքում ու տեսանելի նշան է Աստծու կողմից սահմանուած անտեսանելի կարգի։

Որովհետեւ խորհրդանշում է Սուրբ Հաղորդութեան՝ Քրիստոսի ճշմարիտ, կենդանի ու կենդանարար Մարմնի եւ Արեան իսկութեան հանդէպ եկեղեցու հաւատամքը։

Որովհետեւ խորհրդանիշ է սրբութեան ու խորհրդանշում է Քրիստոսի Խորհրդաւոր Մարմինը՝ Եկեղեցին։

Որովհետեւ ունի ներկայացուցչական դիրք եւ իւրայատուկ արտօնութիւն է, որ տրւում է միայն կնոջը՝ ներկայացնելու ամբողջ հաւատաւոր ժողովուրդն ու համայն մարդկութիւնը։

Որովհետեւ ցոյց է տալիս կնոջ պատկանելութիւնը Տիրոջը։

Որովհետեւ հնազանդութեան, պարկեշտութեան եւ համեստութեան նշան է ամուսնու, հրեշտակներին ու Տիրոջ հանդէպ։

Որովհետեւ խոնարհութիւն է առաջացնում եւ հեռացնում է գայթակղութիւնները ու վանում չար դեւերին։

Որովհետեւ Եւայի շառաւիղը՝ կինը, գլխածածկ է աղօթում իր նախամօր մեղքի պատճառով։

Որովհետեւ խորհրդանիշ է հոգու ազատագրման, հոգեւոր ուրախութեան ու խաղաղութեան, քանի որ խորհրդանշում է Քրիստոսի քաւչարար Արիւնը, որ քօղարկելով սրբում է մեր մեղքերը:

Որովհետեւ ամօթալի անպատուութիւն է գլխաբաց կանգնել Աստծու առաջ:

Որովհետեւ եթէ կնոջ բնական մազերը պատիւ են իրեն, ուրեմն Աստծու առաջ նա պէտք է իր պատիւը ծածկի մէկ այլ քօղով՝ մեր փառքը հանդիսացող Քրիստոսի՝ հնազանդութեան խորհրդանիշ պատուով:

Որովհետեւ խորհրդանշում է, թէ կինն իր ամուսնու փառքն է, ով ստեղծուած է տղամարդու համար:

Որովհետեւ խորհրդանշում է մարտիրոսների հնազանդութեան հոգեւոր պսակը, շնորհների ու պսակների պատիւը:

Որովհետեւ ընդունելով սբ. Աստուածածնի սրբապատկերի նմանութիւնը՝ Քրիստոսի հետ թագակից է դառնում:

Որովհետեւ կինը պարտաւոր է գլխին քօղ դնել հրեշտակների պատճառով:

Որովհետեւ գտնւում է Աստծու եւ բարի հրեշտակների պաշտպանութեան տակ:

Որովհետեւ լոյսի հրեշտակները վանուն են, չասելու համար՝ գարշում են կնոջը գլխաբաց տեսնելով:

Որովհետեւ խայտառակում է չար հրեշտակներին եւ ամօթահար անում դեւերին:

Որովհետեւ առաքեալները եւ Աստծու եկեղեցիները չունեն այլ սովորութիւն:

ԿԱՆԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Ինչո՞ւ առաքելահաստատ եւ աւանդական եկեղեցիներում կանայք չեն կարող ստանալ քահանայութեան աստիճան։ Ֆէմինիստական շարժումները վերջին ժամանակներում քրիստոնէական եկեղեցուն առաջադրում են կանանց քահանայագործութեան խնդիրը։ Հայ եկեղեցին միշտ ժխտական պատասխան է տուել այս հարցին, մինչդեռ Անգլիկան եկեղեցին, բողոքական եւ այլ կրօնական հաստատութիւններ կանանց թոյլատրում են ձեռնադրուել։ Հայ եկեղեցու համար ընդհանրապէս խորթ է կանանց քահանայագործելու հասկացողութիւնը։ Եկեղեցու այս գաղափարի մերժման հիմքում կանանց իրաւունքները ոտնահարող որեւէ միտում կամ ստորադասում չկայ։ Այս հարցն ունի աստուածաբանական լուծում, որն առընչւում է քահանայութեան դերի ու կոչման ճիշդ ընկալման եւ գիտակցման հետ։

Ֆէմինիստները, նշելով հետեւեալ նախադասութիւնը՝ «Քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ», ասում են, թէ սա արական սեռի տիրելու անիրաւ գերիշխանութիւն է։ Ասում են, թէ տղամարդ աստուածաբանները սա աւելացրին՝ յետագայում հաստատելու տղամարդու տիրապետութիւնը։ Բայց «իշխի քեզ վրայ» ասուածը երբէք չի նշանակում կնոջը ցածրացնել կամ ստորադասել, այլ՝ սիրել, հոգալ, խնամել ու պաշտպանել։ Քահանան Աստծու Որդու՝ Յիսուս Քրիստոսի խորհրդանշական պատկերն է («իկոնա»), որը եւ չի կարող ունենալ հակառակ սեռի ներկայացուցիչը։ Սա չի նշանակում, թէ կնոջ դերը եկեղեցում սահմանափակ է եւ երկրորդական։ Սա կանանց «համարժէքութեան» կամ «ազատագրութեան» խնդիր չէ։ Ընդունելի չէ ենթադրել, թէ եկեղեցին հերքում է ու չի գնահատում

կանանց դերի կարեւորությունը քրիստոնէական դաստիարակչութեան ու հաւատի տարածման հարցում։ Կանայք միշտ կրել ու կրում են աւետարանելու բարեգործությունը, նահատակությունը, աղօթքն ու բարերարությունը։ Եկեղեցին կանանց չի պարտադրում քահանայագործութեան ծանր խաչակրութեան լուծը։ Այստեղ ոչ այնքան իրաւունքների խախտման հարցն է, որքան կանանց մասին խնամքն ու հոգատարությունը։ Հետեւաբար, տղամարդու քահանայ լինելը երբէք չի նշանակում խտրականություն կամ ստորադասում մտցնել։ Քահանայությունն Աստծու սահմանած նուիրաբաշխումն է։ Աստուած կնոջն օժդել է մէկ այլ մեծագոյն շնորհով՝ մայրությամբ։ Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանն իր «Աստուածաշունչը եւ գենդերային հաւասարությունը» յօդուածում նշում է. «Այսօր կանայք փորձում են յաղթահարել նոյնիսկ բնական անհաւասարությունը, որը, սակայն, անհնարին է։ Յաճախ հարց է ծագում, թէ ինչո՞ւ քահանայությունը կանանց չի տրւում։ Ես պատասխանում եմ հետեւեալ կերպ. «Ինչո՞ւ մայրությունը չի տրւում տղամարդկանց»։ Երբ կարդում ենք Աստուածաշունչը, պարզ երեւում է, թէ մայրությունը քահանայությանը չի զիջում ոչ մի բանով. մայրությունը նոյնիսկ աւելին է, քան քահանայությունը։ Սա նշանակում է, որ եթէ հաւատում ենք Աստուածային Նախախնամությանը, ապա տեսնում ենք, թէ երկու բարձրություն կայ մարդկությանը տրուած՝ քահանայությունը եւ մայրությունը։ Մէկը վերապահուած է տղամարդկանց, իսկ միւսը կանանց, որպէսզի այս երկու բարձրությամբ երկու անհաւասարները հաւասար դառնան։ Ինչո՞ւ քահանայությունը վերապահուած է լոկ տղամարդկանց։ Սա չափազանց խոր աստուածաբանական նշանակություն ունի, որովհետեւ տղամարդը ստեղծուեց Աստծու անմիջական միջամտությամբ, իսկ կինը ստեղծուեց այր մարդուց։ Աստուածադիր քահանայությունը երկնային հաստատություն է, որտեղ եւ կարգեր կան։ Այն տղամարդուն է վերապահուած, ու սա Աստծու ծրագիրն է, եւ պէտք չէ այստեղ անհաւասարություն որոնել ու սրա դէմ ըմբոստանալ, թէ ինչո՞ւ երկուսին էլ միաժամանակ ու

հաւասար պայմաններում չստեղծեց։ Հին Կտակարանում ոչ մի տեղ չի ասւում, թէ ինչո՞ւ է քահանայութիւնն արգելուել կնոջը, քանի որ սա չափազանց բնական է համարւում։ Ամէն ամուսին իր ընտանիքում քահանայ էր։ Եթէ կինն ամուսնական կեանքում ենթարկւում է ամուսնուն ու գտնւում նրա հոգածութեան ներքոյ, ուրեմն քահանան էլ կարող է դիտուել որպէս տէր. ուստի տէր լինելու շնորհը տրուած է տղամարդուն։ Բնական անհաւասարութիւն է սա։ Անզէն աչքով նայելիս էլ նկատւում է, թէ կինն ու տղամարդը տարբերւում են իրարից. եթէ կայ տարբերութիւն, ուրեմն չեն կարող ամէն ինչով հաւասար լինել... Ամուսինը պէտք է ղեկավարի, եւ կինը պէտք է հնազանդուի, որ ստորացնել չի նշանակում։ Լիարժէք մարդը տղամարդու ու կնոջ միութեամբ է»[1]։

Ահարոնեան աստուածադիր քահանայութիւնն իբրեւ նախատիպ սահմանուեց Մովսէս մարգարէի շնորհիւ եւ իր լրմանը հասաւ Քրիստոսով՝ ըստ Մելքիսեդեքի կարգի քահանութեան։ Քահանայ կարող էր ընտրել միայն արական սեռի ներկայացուցիչը՝ յատուկ ցեղից։ Նոր Ուխտում եւս այդ նախատիպն հաստատուեց առաքեալների ու նրանց կարգած պաշտօնեաների յաջորդականութեամբ. ըստ որում՝ Քրիստոս՝ Եկեղեցու գլուխն ու Նոր Ուխտի Միջնորդը, Աստծու ու մարդկանց միջեւ լինելով իսկական Քահանայապետն ու հաշտեցուցիչը, իր Եկեղեցու հաստատութեան ու սպասաւորութեան համար ընտրեց առաքեալներ։ Քրիստոս հաստատեց Ձեռնադրութեան սուրբ կարգը եւ Ձեռնադրութեան իրաւունքն ու խորհրդաւոր քահանայութեան շնորհը պարգեւեց Իր առաքեալներին ու նրանց իրաւայաջորդներին։ Այժմ ոչ թէ միմիայն Ահարոնեան ցեղն է սպասաւորում Աստծու փրկագործութեան սուրբ խորհրդին, այլ նաեւ, իսկական Քահանայապետը՝ Քրիստոս, որ Եկեղեցու խորհուրդները Կատարողն է՝ «ըստ Մելքիսեդեկի կարգի»,

1 Միքայէլ եպիսկոպոս Աջապահեան, «Աստուածաշունչը եւ գենդերային հաւասարութիւնը»։
Տե՛ս http://shirakcentre.org/hy/-l-r/608-shirak-centre-ngo (առ 11/04/2017)։

որ թէ՛ պատարագում է ու թէ՛ պատարագում (Եբր. 5, 1-10)։ Այժմ արական սեռի ամէն մի ճշմարիտ հաւատացող, նուիրուելով Նրան ու Նրա՝ առաքելական յաջորդականութեամբ Ձեռնադրութեան շնորհն ընդունելով, կարող է լինել Աստծու այդ սուրբ Ուխտի սպասաւորը։ Այժմ ոչ թէ միմիայն մի ընտրեալ ցեղի է վերապահւում Աստծու քահանայական պաշտօնը, ինչպէս էր Հին Ուխտում Ղեւիի ցեղին, այլ արական սեռի իւրաքանչիւր հաւատացեալ եւս կարող է, կոչումն զգալով, մտնել յատուկ սպասաւորութեան գործի մէջ (Ա. Պետ. 2, 10)։ Ուստի, եկեղեցու բնօրինակ գիտակցութիւնը բացառում է կանանց մասնակցութիւնը՝ համաձայն Տիրոջ օրինակի, Առաքելական աւանդոյթի, եկեղեցու փորձառութեան, նուիրապետական գործելակերպի ու մասնաւորապէս, համաձայն Պօղոս առաքեալի՝ տղամարդկանց ու կանանց միջեւ փոխյարաբերութիւնների ուսմունքի՝ քրիստոնէական այս նոր իրականութեան լոյսի ներքոյ (Գաղ. 3, 27-29)։ Տղամարդկանց ու կանանց միջեւ սեռային տարբերակումը՝ խորհրդաւոր քահանայութեան վերաբերեալ, գալիս է Քրիստոսի փրկութեան ծրագրի՝ «Ադամ-Քրիստոս» եւ «Եւա-Մարիամ» տիպաբանական կապի աւելի խորը հասկացողութիւններից։ Ուղղափառ աւանդութեան մէջ քահանայութիւնը երբէք եւ ոչ մի դէպքում չի համարուել որպէս եկեղեցում կանանց դերի նսեմացում։ Կանանց յատուկ դերն արտայայտւում է Եւայի ու Մարիամի տիպաբանական համանմանութեամբ ու կանանց իւրայատուկ վերաբերմունքով Սուրբ Հոգու յատուկ ներգործութեան ամբողջ փրկութեան ծրագրում։ Ադամի ու Քրիստոսի տիպաբանական յարաբերութիւնը, որտեղ Ադամը նախատիպն է Քրիստոսի, իսկ Քրիստոս՝որպէս Նոր Ադամ՝հին Ադամի պատկերը, որ ներկայացնում է մարդկային ցեղը, ամբողջ հայրաբանական աստուածաբանութեան եւ եկեղեցական կեանքի հիմքն է։ Այս առումով, այս տիպաբանութիւնը նաեւ սահմանում է կանանց ծառայութեան յատուկ բովանդակութիւնը Նոր Ադամի գլխաւորութեամբ՝ համայն մարդկային ցեղը միաւորել փրկութեան իրականացման գործում։

Կանանց յատուկ ծառայութեան ու փրկութեան իրականացման գործում կենտրոնական անձը Մարիամ Աստուածածինն է, որի միջոցով մարմնաւորւում է Աստծու Բանը: Մարիամից Եւա վերադարձի այս տիպաբանական կապն անհրաժեշտ էր՝ լուծելու Եւայի պատուիրանազանցութեան խնդիրը եւ Աստուածորդու մարմնաւորումը Մարիամ Աստուածածնից Սուրբ Հոգով: «Այն ժամանակ, երբ Եւան, պատուիրանը խախտելով, դարձաւ իր եւ ամբողջ մարդկութեան մահուան պատճառը, սբ. Կոյս Մարիամն իր հնազանդութեամբ դարձաւ իր եւ ամբողջ մարդկութեան փրկութեան պատճառը»[1]: Աստուածամայրը ներկայանում է որպէս Եկեղեցու պատկերը: Եկեղեցին, ինչպէս եւ Աստուածածինը, ընդունում է Սուրբ Հոգին, Որի ներգործութեամբ ծնւում է Քրիստոս, ինչպէս նաեւ Քրիստոսով՝ նոր մարդկութիւնը: Այսպիսով, հայրաբանական աւանդոյթը ցոյց է տալիս Աստուածածնի եւ Եկեղեցու մայրութեան միջեւ տիպաբանական կապը: «Այդ տիպաբանական կապը՝ Աստուածածնի օրինակով, հիմնաւորում է Եկեղեցու ամբողջ գիտակցական բովանդակութիւնը՝ քրիստոսակենտրոն խորհրդաւոր քահանայութեան՝ կանանց նախաձեռնութեան անհնարինութիւնը»[2]: Բայց երբ այս Եկեղեցական գիտակցութիւնը փոխւում է, այն ժամանակ առաջանում են լուրջ խնդիրներ: Այսպիսով, ըստ Եկեղեցու սրբազան Աւանդութեան՝ կանանց ձեռնադրութեան արգելքներն են, նախ՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի օրինակը, Ով ոչ մի կին չընտրեց Իր առաքեալների շարքերում, երկրորդ՝ սբ. Կոյս Մարիամի օրինակը, ով Եկեղեցում չէր զբաղւում քահանայագործութեամբ, թէեւ արժանացել էր մարմնացած Աստուածորդու մայրը դառնալու պատուին, երրորդ՝ Առաքելական աւանդութիւնը, որի համաձայն առաքեալները եւ իրենց յաջորդները, հետեւելով Տիրոջ օրինակին, երբէք կանանց չեն

1 Ириней. Против ересей. III. 22, 4. Sources chrétiennes. T. 211. 1974. C. 441.

2 Апост. Постановл. III. 6, 1-2; 9, 1-4. Sources chrétiennes. T. 329. 1986. C. 132-140; Тертуллиан. Об убранстве женщин. 9, 1. PL 1, 902; Епифаний. Против ересей. 59, 2-3. PG 42, 741-744.

ձեռնադրել քահանայագործելու համար, չորրորդ՝ Պողոս առաքեալի ուսմունքի որոշ դրոյթները՝ եկեղեցում կանանց դերի վերաբերեալ, հինգերորդ՝ համանմանութեան չափանիշները. եթէ թոյլատրուէր կանանց քահանայագործումը, ապա այդ ծառայութիւնը հիմնականում պէտք է իրականացնէր Աստուածածինը: Հետեւաբար, կինը կրում է մայրական ծառայութիւնը եւ չի կարող կրել հայրական ծառայութիւն: Չի կարելի այս երկու հասկացողութիւնները շփոթել ու փոխարինել: Բայց կանանց քահանայագործութեան ջատագովներ ասում են, թէ հրէական միջաւայրում կինը շատ ճնշուած կարգավիճակում էր, եւ սա է պատճառը, որ Քրիստոս ընտրեց տղամարդկանց: Բայց ընդհակառակն՝ Քրիստոս վերացնում է հին Օրէնքի սահմանափակումները կնոջ նկատմամբ: Յիսուս Քրիստոսի երկրային կեանքի ժամանակ կանայք Տիրոջ ամենանախանձախնդիր հետեւորդներն էին (Ղուկ. 8, 2-3): Նրանք ընդունում էին Քրիստոսին իրենց տներում, ամբողջ սրտով հաւատքով ընկալում էին Նրա Աստուածային խօսքը, Նրան հետեւում էին Գալիլիայից մինչեւ Գողգոթա՝ Աստծու Որդուն մենակ չթողնելով ո՛չ չարչարանքների, ո՛չ էլ մահուան ժամանակ (Մատթ. 27, 55): Պատահական չէ, որ Յարութեան մասին առաջին քարոզչութիւնը Փրկիչը տալիս է Մարիամ Մագդաղենացուն, այլ ոչ թէ առաքեալներին (Յովհ. 20, 17-18): Քրիստոս վերացրեց կնոջ նկատմամբ եղած հին Օրէնքի աւանդական սահմանափակումները: Նա յատուկ ուշադրութեան է արժանացնում կանանց (Ղուկ. 8, 38-40: Յովհ. 4, 6-27, Մարկ. 1, 29): Յիսուս ներում եւ պաշտպանում է օրէնքով դատապարտելի շնացող կնոջը (Յովհ. 8, 3-11) ու սրանով ցոյց է տալիս նաեւ, որ այս հարցում կնոջ պատիժն աւելի խիստ պէտք չէ լինի, քան տղամարդունը: Տէրը նոյնպէս վերացնում է տղամարդու՝ կամայականօրէն կնոջն արձակելու օրէնքն ու հաստատում է հաւասար իրաւունքներ նրանց միջեւ (Մատթ. 19, 3-9: Մարկ. 10, 2-11): Յիսուս յարութիւնից յետոյ նախ կանանց է երեւում, իսկ Նրա յարութեան լուրը հրեշտակները կանանց են յանձնարարում հաղորդել առաքեալներին (Մատթ. 28,

7-10)։ Հետեւաբար, Յիսուս երբէք չէր կարող զանց առնել այնպիսի կարեւոր հանգամանք, ինչպիսին քահանայութիւնն է։

*Եկեղեցու վարդապետներից մէկն ասում էր, թէ կինը, յանդգնելով քահանայ լինել, այդ կերպ միայն բացէիբաց ցոյց է տալիս իր անհնազանդութիւնը աստուածաշնչեան վարդապետութեանը։ Քրիստոսի քահանայական իշխանութիւնն իր շարունակական ընթացքն ունեցաւ առաքեալների միջոցով։ Յիսուս ոչ մի կնոջ չի ընտրել առաքեալ։ Բոլոր առաքեալները տղամարդիկ էին, քանի որ քահանայութեան ծառայութեան բոլոր չափանիշները վերաբերում են միայն տղամարդկանց։ Պօղոս առաքեալն ասում է, թէ հոգեւորականը կարող է լինել միայն «**մէկ կնոջ մարդ**», որն «**իր իսկ տանը լաւ վերակացու լինի**» (Ա. Տիմ. 3, 2-4։ Տիտ. 1, 6)։ Հետաքրքրական է սբ. Գրիգոր Տաթեւացու դիրքորոշումը կանանց քահանայութեան գաղափարի վերաբերեալ։ Նա համարում է, թէ դա հերձուածողութիւն է ու յանդուգն հայհոյութիւն եկեղեցու կարգերի դէմ։ Սբ. Գրիգոր Տաթեւացին մերժում է կանանց կողմից կատարուող խորհրդակատարումները, նոյնիսկ ծայրայեղ կարիքի պարագային՝ ասելով. «Հերձուածող ազգից ոմանք ասում են, թէ թէպէտ մկրտութիւնը քահանայի գործն է, բայց ժամանակի պահանջի համաձայն, եթէ քահանայ չկայ, մկրտութեան կարգը իմացող որեւէ մէկը կարող է մկրտել։ Եւ եթէ այր մարդ չկայ, ու հիւանդ տղան մահամերձ է, կինը կարող է մկրտել, եթէ գիտէ մկրտութեան կարգն այնպէս, ինչպէս Քրիստոս սովորեցրեց «յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ». ցանում է ջուրը եւ ասում՝ «մկրտուած լինի»։ Եւ սա մեծ հերձուած է ու յանդուգն հայհոյութիւն Եկեղեցու կարգերի դէմ»[1]։ Այնուհետեւ, սբ. Գրիգոր Տաթեւացին թուարկում է այդ հերձուածի դէմ լինելու իր բոլոր պատճառները. «Նախ եւ առաջ՝ որովհետեւ այդպիսի չար աղանդ գոյութիւն չունի քրիստոնէական այլ եկեղեցիներում։ Երկրորդ՝ որովհետեւ այս խորհրդի նշանը մարդկային արարածներից նախ Ադամին տուեց Աստուած, այլ ոչ*

1 Սբ. Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 588-589։

թէ կնոջը, երբ Ադամի դիմաց դրեց կենդանիներին, որպէսզի նրանց անուն դնի։ Երրորդ՝ որովհետեւ եթէ հնարաւոր էր, որ կնոջ ձեռքը տրուած լինէր շնորհը, ապա ինչո՞ւ Յորդանան գետում Աստուածածին կոյս Մարիամը ներկայ չէր իր զաւակի մկրտութեանը։ Չորրորդ՝ որովհետեւ եթէ Փիլիպպոս առաքեալին հնարաւոր լինէր մկրտել, որը եօթը սարկաւագներից մէկն էր, Հոգին չիջաւ իր վրայ, մինչեւ որ տարուեց Ազովտոս։ Եւ յետոյ Հոգին նրանից իջաւ մկրտուողի վրայ, ապա ինչո՞ւ կնոջ ձեռքով պիտի տրուեր Հոգու շնորհները՝ ջրով մաքրուելու համար։ Հինգերորդ՝ որովհետեւ եթէ կնոջը հնարաւոր էր հարկ եղած դէպքում քահանայի պաշտօն վարել, ինչո՞ւ կոյս Նունէն չկարողացաւ մկրտել որեւէ վրացու, երբ վրացիներին դարձրեց աստուածագիտութեան, այլ նրանց ուղարկեց սբ. Գրիգորի Լուսաւորչի մօտ ու խնդրեց քահանաներին՝ մկրտել նրանց։ Վեցերորդ՝ որովհետեւ եթէ կինը հարկ եղած դէպքում կարող էր մկրտել, որեւէ կնոջից շատ աւելի պատուական եղող սբ. Գրիգոր Լուսաւորիչն ինչո՞ւ հաւատացեալներից ոչ ոքի չմկրտեց, մինչեւ որ գնաց Կեսարիա՝ ձեռնադրուելու. եւ յետոյ գալով գետում մկրտեց հազարաւորների ու բիւրաւորների։ Եօթերորդ՝ որովհետեւ մկրտելը քահանայի գործ է, եւ քահանայութիւնը Աստծու սպասաւորութիւն է։ Աստծու այսպիսի սպասաւորութիւնը [նոյնիսկ] կռապաշտները չունէին՝ պատարագի ընթացքում իրենց սնոտի կուռքերին մատուցելու իրենց կանանց միջոցով։ Նման պատարագ են մատուցում բոլոր հեթանոսները։ Եթէ հեթանոսների համայնքում հարկաւոր էր բարձրագոյն պարկեշտութիւն ցուցաբերել Աստծու նկատմամբ, ապա որքա՜ն աւելի հարկաւոր է նոյնը մեր եկեղեցիներում, որ [ներկայացնում է] ճշմարիտ կարգաւորութիւնն ու սրբութեան օրէնքը։ Ութերորդ՝ որովհետեւ եթէ կանանց սեռն արտօնութիւն չունի կենդանիներ մորթելու, որ նշանակում է խտրութիւն դնել մարմնաւոր սրբութիւնների միջեւ, ապա ինչպէ՞ս արտօնել կանանց սեռին՝ մերձենալ հոգեւոր սրբութեան կարգ ընդունելու։ Իններորդ՝

*որովհետեւ մկրտութիւնը քահանայի գործ է. եւ քահանայութիւնն ազատ է, այսինքն՝ որեւէ մէկի հարկադրանքին տակ չի գտնուում: Իսկ կինը ծառայ եւ օգնական է ամուսնուն: Այս պատճառով ծառան պէտք չէ, որ Տիրոջ գործը անի, ինչպէս որ գրուած է Նիկիական կանոնում, թէ ծառային հրաման չի տրւում դառնալ եկեղեցական ժառանգորդ: Իսկ նա (ծառան) ազատ է Տիրոջ կամքով, ինչպէս Ոնեսիմոսն էր: Իսկ եթէ տղամարդը, որ ծառայում է եկեղեցուն, սուրբ հայրապետներից հրաման չունի եկեղեցական պաշտօն ստանալու, որքան առաւել կանանց համար հերձուած կը լինի, երբ Աստուած նրանց ասում է. «**Քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ**» (Ծննդ. 3, 16)՝ հրաման չտալով, որ կինը քահանայի պաշտօն առնի, որն ազատ մարդկանց համար է եւ ոչ թէ ծառայի: Տասներորդ՝ որովհետեւ մկրտութիւնը քահանայի գործ է, որ կատարւում է աղօթքով, իսկ կանանց սեռին աղօթելու ընթացքում առաքեալը պատուիրում է գլխին շղարշ դնել հրեշտակների՝ այսինքն քահանաների համար, որոնք Սուրբ Գրքերում կոչւում են հրեշտակներ: Հետեւաբար, որքան ծանր դատապարտութիւն է կանանց համար յանդգնել քահանայական գործ կատարելու: Կան նաեւ այլ բազում վկայութիւններ Սուրբ Գրքերում, որ նման հերձուածները յայտնի են դառնում որպէս սուտ ու կեղծ»*[1]:

Հին Ուխտում քահանայապետն Աստծու Յայտնութեան եւ Սրբութիւն Սրբոցի անմիջական պաշտօնեան էր. քահանան ստորադրեալ էր եւ սպասաւորում էր ղեւտացիներին: Քահանայապետն ու քահանան, որ ըստ Աստծու կամքի՝ պարտադիր տղամարդ էին, բովանդակելով քահանայ բառի իմաստը, իւրաքանչիւրն իր պաշտօնի համեմատ Աստծու ու մարդկանց միջնորդն էր, որ զոհաբերում էր, աղօթում ու քաւում էր մարդկանց մեղքերն Աստծու առաջ, ուսուցանում էր եւ Աստծու կամքը յայտնում ժողովրդին: Նոր Ուխտում եւս այդ նախատիպն իրագործուեց առաքեալների ու

1 Սբ. Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 589-590:

նրանց կարգած պաշտօնեաների յաջորդականութեամբ. ըստ որում՝ Քրիստոս Ինքը, լինելով Աստծու ու մարդկանց միջեւ իսկական Քահանայապետ, Եկեղեցու հաստատութեան ու սպասաւորութեան գործի համար ընտրեց առաքեալներ:

Ուստի, սուրբ Պատարագի ընթացքում քահանան ներկայացնում է Քրիստոսին ու քահանայագործում Նրա անունով՝ Աստծու ժողովրդի համար: Յիսուս՝ յաւիտենական Քահանայապետը «ըստ Մելքիսեդեքի կարգի», որ եւ պատարագում է, եւ պատարագւում (տե՛ս Եբր. 5), դեռ առաքեալներից սկսած քահանայական պաշտօնը շնորհում է միայն տղամարդկանց, որոնք, առաքելական յաջորդականութեամբ ընդունելով Ձեռնադրական շնորհը, դառնում են Աստծու սպասաւորներ: Սա այն անհրաժեշտ միջոցն է, որով առաքեալներն ու հիմա իրենց յաջորդները ընտրեալ ընծայացուներին աւանդում են այն շնորհը, որ պահանջւում է Աստծուն քահանայագործելու համար: Արդեո՞ք սրա մէջ որեւէ անարդարութիւն կայ կանանց նկատմամբ: Եթէ խօսքը լինէր աշխարհիկ որեւէ հիմնարկութեան մասին, որտեղ կանանց չեն թոյլատրում զբաղեցնելու բարձր պաշտօն կամ ստանալու բարձր վարձատրուող աշխատանք, որոնք կանայք կարող են իրականացնել, ապա դա իսկապէս անարդար կը լինէր: Բայց եկեղեցին հիմնովին տարբերւում է աշխարհիկ հասարակութեան հիմնարկութիւնից: Աշխարհում մարդիկ մրցում են տարբեր շահերի ու նպաստների հասանելիութեան համար, օրինակ՝ հեղինակութիւն ձեռք բերելու կամ էլ բարձր վարձատրուող շահաբեր աշխատանք ստանալու համար: Եւ, իհարկէ, առանց սեռային խտրականութեան մարդիկ պէտք է ունենան հաւասար հնարաւորութիւններ՝ հասնելու իրենց ձգտումներին: Բայց եկեղեցում քահանայի պաշտօնն առաւելութիւն չէ, որին հասնում են մարդկային մրցակցային պայքարի շնորհիւ: Քահանայ դառնալը ոչ թէ ձեռքբերում է, այլ զոհաբերութիւն: Քահանայութիւնը հեղինակաւոր պաշտօն չէ, այլ զոհաբերուող ծառայութիւն, որն առաջադրում է խիստ ու լուրջ անձնազոհութիւն:

Քահանան խորհրդանշական ու ծիսական պատկերն է Քրիստո-

սի: Խորանը Խորհրդաւոր ընթրիքի վերնատունն է: Պատարագը Խորհրդաւոր ընթրիքն է: Վերջին ընթրիքի ժամանակ Քրիստոս Ինքը բաշխեց Իր Մարմինն ու Արիւնը: Բաժակը վերցնելով՝ Յիսուս ասաց. «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ դա է նոր ուխտի իմ արիւնը» (Մատթ. 26, 28), այլ ոչ թէ սբ. Կոյս Մարիամը վերցրեց բաժակը եւ ասաց. «Խմեցէ՛ք, դա՛ է իմ Որդու արիւնը»: Մենք հաղորդւում ենք Քրիստոսի արեամբ, որ Ինքը Քրիստոս տուեց մեզ: Դա է պատճառը, որ քահանան, հաղորդութիւնը բաշխելով, պէտք է լինի խորհրդանշական պատկերը Քրիստոսի, այլ ոչ թէ՝ Աստուածամայրը: Կինը երբէք չի կարող դառնալ Քրիստոսի խորհրդանշական պատկերը: Այնպէս որ, քահանայութիւնը վերաբերում է միայն արական սեռի ներկայացուցիչներին:

Պօղոս առաքեալն ասում է. «**Կին արարածը թող ուսանի լռութեամբ, կատարեալ հնազանդութեամբ: Եւ ես թոյլ չեմ տալիս, որ կին արարածը ուսուցանի կամ էլ խօսքով իշխի տղամարդու վրայ. որովհետեւ նախ Ադամը ստեղծուեց եւ ապա՝ Եւան: Եւ Ադամը չխաբուեց, այլ կի՛նը խաբուեց եւ յանցանք գործեց**» (Ա. Տիմ. 2, 11-14): Աստուած եկեղեցում տղամարդկանց եւ կանանց համար տարբեր դերեր կարգեց: Ու սա հետեւանք է այն բանի, թէ ինչպէ՛ս է մարդկութիւնը ստեղծուել (Ա. Տիմ. 2, 13), եւ ինչպէ՛ս է մեղքն աշխարհ մտել (Ա. Տիմ. 2, 14): Աստուած Պօղոս առաքեալի նամակով սահմանափակում է կանանց ծառայութեան դերը՝ հանդէս գալու որպէս տղամարդկանց հոգեւոր ուսուցիչներ: Սա ինքնին անհնար է դարձնում կանանց քահանայագործումը, քանի որ այն իր մէջ ներառում է քարոզելու, ուսուցանելու եւ տղամարդկանց վրայ հոգեւոր իշխանութեան կամք ունենալու դրսեւորումները: Այս տեսակէտի վերաբերեալ կան բազմաթիւ առարկութիւններ: Առաւել տարածուած է այն յայտարարութիւնը, թէ Պօղոս առաքեալը սահմանափակում է կանանց հոգեւոր ծառայութիւնը, քանի որ առաջին դարում կանայք սովորաբար անուս էին: Բայց կրթութեան կարգավիճակը նշուած չէ վերոյիշեալ հատուածում (Ա. Տիմ. 2,

11-14)։ Եթէ կրթութիւնը որոշէր ծառայութեան պիտանիութիւնը, ապա Յիսուսի աշակերտների մեծամասնութիւնը բացարձակապէս ոչ պիտանի պիտի լինէին։ Երկրորդ յայտնի կարծիքն այն է, թէ Պօղոս առաքեալի խօսքերը կիրառւում են միայն Եփեսոսի եկեղեցու կանանց համար (նշուած նամակն ուղղուած էր Տիմոթէոսին, որ ծառայում էր Եփեսոս քաղաքի եկեղեցում)։ Եփեսոսը յայտնի էր իր Արտեմիս տաճարով, որտեղ կանայք, երկրպագելով յունական հեթանոսական չաստուածուհուն, ունեցել են ամենաբարձր հեղինակութիւնը։ Սակայն Արտեմիսը բնաւ նշուած չէ Տիմոթէոսին ուղղուած նամակում, եւ Պօղոս առաքեալը վերոյիշեալ հատուածում (Ա. Տիմ. 2, 11-12)՝ երբէք չի խօսում Արտեմիսի պաշտամունքի մասին որպէս սահմանափակումների պատճառ։ Երրորդ առարկութիւնն այն է, որ ասում են, թէ Պօղոս առաքեալն այստեղ գրում է միայն ամուսինների եւ իրենց կանանց մասին, այլ ոչ թէ տղամարդկանց եւ կանանց մասին ընդհանրապէս։ Իսկապէս, յունարէն բառը, որն օգտագործւում է Ա. Տիմ. 2, 11-14-րդ համարներում, կարող է վերաբերուել ամուսիններին եւ իրենց կանանց, բայց հիմնական բառերի իմաստն է տղամարդն ու կինն ընդհանրապէս։ Նոյն յունարէն բառերն օգտագործւում են նաեւ Ա. Տիմ. 2, 8-10-րդ համարներում։ Մի՞թէ միայն ամուսնացած ***«տղամարդիկ պէտք է աղօթեն ամէն տեղ, սուրբ ձեռքերը բարձրացնեն դէպի վեր՝ առանց բարկութեան եւ երկմտութեան»*** *(Ա. Տիմ. 2, 8)։ Մի՞թէ միայն ամուսնացած կանայք* ***«համեստ զարդարանքով, ակնածութեամբ եւ պարկեշտութեամբ թող զարդարուեն... բարի գործերով, ինչպէս վայել է աստուածապաշտութիւնը յանձն առած կանանց»*** *(Ա. Տիմ. 2, 9-10)։ Իհարկէ, ո՛չ։ Ա. Տիմ. 2, 8-10-րդ համարներում յստակ նշւում է ընդհանրապէս տղամարդկանց ու կանանց մասին, այլ ոչ թէ միայն ամուսինների եւ իրենց կանանց մասին։ Ոչինչ հատուածի համատեքստում չի նշանակում, թէ Ա. Տիմ. 2, 11-14 հատուածը հասցէագրւում են միայն ամուսիններին եւ իրենց կանանց։ Ինչո՞ւ կանայք չեն կարող ուսուցանել եւ*

իշխանութիւն ունենալ տղամարդկանց վրայ։ Պատճառը պարզ է, ***«որովհետեւ նախ Ադամը ստեղծուեց եւ ապա՝ Եւան։ Եւ Ադամը չխաբուեց, այլ կի՛նը խաբուեց եւ յանցանք գործեց»*** *(Ա. Տիմ. 2, 11-14)։ Աստուած նախ ստեղծեց Ադամին, յետոյ Եւային որպէս «օգնական»։ Այս արարչական կարգն ունի համընդհանուր կիրառում եւ՛ ընտանիքում (Եփես. 5, 22-23), եւ՛ եկեղեցում։ Այն փաստը, որ Եւան էր խաբուել առաջինը, նոյնպէս բացատրութիւն է, թէ ինչու կինը պէտք չէ ծառայի եկեղեցում՝ որպէս հովիւ կամ ունենայ հոգեւոր իշխանութիւն տղամարդկանց վրայ։ Հետեւաբար, Աստուած եկեղեցում քահանայագործելու իշխանութիւնը տուեց տղամարդուն։ Իսկ կանայք գերակշռում են հիւրընկալութեան, ողորմածութեան, աջակցութեան մէջ եւ այլ հոգեւոր ծառայութիւններում։ Եկեղեցում կանայք չեն սահմանափակում ընդհանրական աղօթքում (Ա. Կորն. 11, 5), այլ վերացւում է միայն տղամարդկանց վրայ նրանց հոգեւոր իշխանութիւնը։ Աստուածաշնչում ոչ մի տեղ չի ասւում, թէ կինը չի կարող օգտագործել Սուրբ Հոգու պարգեւներն ու շնորհների զանազանութիւնները (տե՛ս Ա. Կորն. 12-րդ գլ.)։ Կանայք, ինչպէս տղամարդիկ, կոչուած են ծառայելու ուրիշներին՝ ցոյց տալով Հոգու պտուղները՝ սէր, խնդութիւն, խաղաղութիւն, համբերութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն (տե՛ս Գաղ. 5, 22-23), եւ աւետարանել ու վկայել կորած հոգիներին (տե՛ս Գործ. 1, 8։ Ա. Պետր. 3, 15)։ Աստուած պատուիրեց, որ միայն տղամարդիկ քահանայագործեն եկեղեցում։ Ու սա ոչ այն պատճառով, որ տղամարդիկ որոշակիօրէն աւելի լաւ ուսուցիչներ են, կամ նրանք պիտի իշխեն կանանց, կամ էլ կանայք պակաս խելացի են։ Կանայք կոչուած են ուսուցանելու ու խրատելու դեռատի կանանց (Տիտ. 2, 3-5) եւ երեխաներին, որպէսզի Աստծու խօսքը եւ վարդապետութիւնը չանարգուի։ Միայն մէկ բան հասանելի չէ կանանց գործունէութեան համար ուսուցանել տղամարդկանց եւ հոգեւոր իշխանութիւն ունենալ տղամարդկանց վրայ։ Սա՛ է վերացնում հնարաւորութիւնը, որպէսզի կինը քահանայ*

ձեռնադրուի: Սա ոչ մի դէպքում չի նուազեցնում կանանց կարեւոր դերը, այլ աւելի շուտ ուղղորդում է նրանց՝ ծառայելու այն առանձնայատուկ պարգեւներով, որոնք Աստուած տուել է իրենց:

Կանանց քահանայագործելու ջատագովները նշում են Պօղոս առաքեալի խօսքերը, որ ասում է, թէ Քրիստոսով խտրականութիւն «**չկայ ո՛չ արուի եւ ո՛չ էգի**» (Գաղ. 3, 28): Նոյնպէս ասում են, թէ գրուած է. «**Բայց դուք ընտիր ցեղ էք, թագաւորութիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ**» (Ա. Պետր. 2, 9: Ելք 19, 6: Յայտ. 5, 10): Պարզաբանենք. նախ, ակնյայտ է, թէ չի կարելի առաքեալի վերոյիշեալ խօսքը հասկանալ որպէս սեռային հաւասարութեան հռչակում այս երկրային կեանքում: Այստեղ ընդգծւում է ոչ թէ սեռային տարբերութիւնների վերացումը, այլ բոլոր քրիստոնեաների առանձնայատուկ ներքին վիճակի տարբերութիւնը արտաքին այլ մարդկանցից: Այնպէս որ, քրիստոնեաներն ունեն նոյն ներքին բարոյական ու կրօնական համակարգը, որը տարբերում է իրենց բոլոր այլ աշխարհիկ մարդկանցից: Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «Այս տարբերութիւնն արդէն կասեցւում է ու չեղեալ է դառնում հաւատի միասնութեամբ: Սակայն տարբերութիւնը պահւում է մահկանացուների յարաբերութիւններում, եւ նոյնիսկ առաքեալներն են սովորեցնում, թէ անհրաժեշտ է այս կեանքում հաշուի առնել դա»[1]: Եթէ մենք խօսում ենք մահկանացու մարդկանց հաւասարութեան մասին, ապա հաւասարութիւն գոյութիւն չունի թէկուզ այն պատճառով, որ տղամարդիկ չեն կարող ծննդաբերել: Նրանք երբէք չեն ունենայ «իրաւունք» ծննդաբերելու կամ կրծքով կերակրելու: Իսկ կնոջ համար չկայ «իրաւունք» քահանայագործելու: Տղամարդը չի կարող մայրութիւն անել, իսկ կինը չի կարող հայրութիւն անել: Հաւանաբար, եթէ Արարիչն ուզէր նման գռեհիկ գաղափարի ֆիզիոլոգիական հաւասարութիւնը, ապա տղամարդուն ու կնոջը Նա չէր ստեղծի այդքան տարբեր: Զէ՞ որ կինը՝ որպէս մարդ արարած,

1 St. John Chrysostom, On the Priesthood, Book III.
Տե՛ս http://www.newadvent.org/fathers/19223.htm (առ 27/03/2017):

իր ծագումնաբանութեամբ, արտաքին տեսքով, մտածելակերպով ու հոգեկան աշխարհով տարբերւում է տղամարդուց, եւ կեանքում նա ձեւաւորուած է բոլորովին այլ դերի համար՝ լինելու կին ու մայր: Նրա յուզական ու հոգեբանական բնութիւնը կատարելապէս ստեղծուել է գլխաւորապէս այդ նպատակին ծառայելու համար ու բոլորովին ստեղծուած չէ գլխաւորելու եւ առաջնորդելու համար:

Երկրորդ՝ քրիստոնէական քահանայութեան երկու ըմբռնում գոյութիւն ունի. «Առաջինը քրիստոնեաների համընդհանուր քահանայական կարգն է, որ տրւում է մկրտութեամբ՝ փրկութեան եւ յաղթանակած Եկեղեցու անդամ դառնալու համար: Սրանով, իրօք, վերանում են բոլոր տեսակի սեռային, ազգային, տարիքային, դասային եւ այլ տարբերութիւնները, եւ ամէնքը հաւասարւում են փրկութեան շնորհի առջեւ: Երկրորդը պաշտօնակատար կամ սպասարկու քահանայութիւնն է, որով համընդհանուր քահանայութեան միջից ընտրուած անձինք, ձեռնադրութեամբ ստանալով առաքելաւանդ իշխանութիւնը, կոչւում են կատարելու սրբազան խորհուրդներն ու պաշտամունքային ծիսակարգերը եւ դառնալու Տիրոջ տեսանելի ու շօշափելի խորհրդանիշները: Այս երկրորդ պարագայում էլ հէնց կանանց առջեւ պատնէշւում է բնական եւ աստուածադիր արգելքը: Այսուհանդերձ յստակեցնենք, թէ տղամարդու եւ կնոջ համար հաստատուած այս կարգը երբէք էլ խտրականութիւն կամ ստորադասում չի նշանակում, այլ՝ Աստծու սահմանած նուիրաբաշխում: Աստուած կնոջը տուել է մէկ այլ մեծագոյն շնորհ՝ մայրութիւնը, որով նա կարողացաւ բարձրանալ իր ճնշուած դիրքից եւ հասնել Աստուածամօր փառքին»[1]*:*

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետը, մեկնաբանելով Պօղոս առաքեալի՝ Տիմոթէօսին ուղղուած նամակը (Ա. Տիմ. 2. 12), ասում է. «Աստուածային օրէնքը կանանց հեռացրեց այս [քահանայական] ծառայութիւնից, իսկ նրանք փորձում են ներխուժել այնտեղ,

1 Monk's blog, «Կանանց քահանայութեան խնդրի շուրջ», Տե՛ս http://777monk777.livejournal.com/952.html (առ 27/03/2017):

բայց քանի որ ինքնին չունեն իշխանութիւն, ամէն բան անում են ուրիշների միջոցով, եւ նման անհիմն կերպով իրենք իրենց իշխանութիւն են վերագրում՝ քահանաներ եւ՛ ընտրելու եւ՛ մերժելու՝ ըստ իրենց կամայականութեան: «Ոտքի տեղը գլուխ» ասացուածքը կատարւում է այստեղ գործնականում: Ղեկավարներին վերահսկում են ենթարկուողները, որ թէեւ տղամարդիկ, բայց նրանք, որոնց չի թոյլատրւում սովորեցնել: Ինչ եմ ասում՝ սովորեցնել: Նրանց սաստեց երանելի Պօղոսը, որպէսզի չխօսեն եկեղեցում (Ա. Կորն. 14, 34): Ես մի մարդուց լսել եմ, թէ նրանց թոյլ են տուել նման յանդգնութիւն, որ նոյնիսկ նկատողութիւններ են անում եկեղեցու թեմի առաջնորդներին ու նրանց հետ վերաբերւում են աւելի խիստ, քան գործատէրերը՝ իրենց ծառայողներին»[1]:

Նոր Կտակարանում չկայ որեւէ ուղղակի փաստ, որ կինը խորհրդակատար լինի: Կանայք չեն պատկանում Քրիստոսի ընտրած տասներկու, ոչ էլ նոյնիսկ եօթանասուն աշակերտների շարքերին: Տէրը կանանց չի շնորհել քահանայական պաշտօն: Առաքեալներն ու իրենց հետեւորդները ոչ մի կնոջ չէին ձեռնադրում, թէեւ քրիստոնեայ կանանց օգնութիւնը նշանակալի էր: Օրինակ՝ անցեալում կար սարկաւագուհիներ ձեռնադրելու հինաւուրց մի աւանդութիւն: Սա պայմանաւորուած էր նրանով, որ նախնի եկեղեցում մկրտութեան ժամանակ դրոշմում էին ոչ միայն մարմնի որոշ մասերը, այլ օծում էին մկրտուողի ամբողջ մարմինը: Այստեղ է, որ սարկաւագուհիների ներկայութիւնն անհրաժեշտ էր դառնում, երբ մկրտուողը չափահաս կին էր: Այս պարագայում քահանան մկրտուող կնոջ վրայ կատարում էր միայն ջրով մկրտելու արարողութիւնը եւ օծում էր նորադարձ կնոջ միայն ճակատը, մինչդեռ սարկաւագուհին օծում էր նրա ամբողջ մարմինը: Սարկաւագուհիների պարտականութիւնն անցեալում եղել է կանանց եւ երեխաների հոգեւոր դաստիարակութիւնն ու մկրտութեան ժամանակ օգտակար հանդիսանալը, որտեղ այր

1 http://www.biblioteka3.ru/biblioteka/zlatoust/tom_11_2/index.html#a3 (ստ 31/03/2017):

սարկաւագի գործը սահմանափակւում էր։ Նրանք մի տեսակ աշխարհիկ ճգնաւորներ էին, որոնց պարտականութիւնն էր համայնքի համար աղօթելը, հիւանդ խնամելն ու մահացած կանանց մարմինները լուանալը։ Նրանց խստիւ արգելւում էր քարոզչական պարտականութեան կամ խորանի սպասարկման որեւէ իրաւասութիւն։ Հետեւաբար, սարկաւագուհին չէր կարող այնպիսի արարողութիւն կատարել եկեղեցում, որ համարւում էր իրաւասութիւնը այր սարկաւագի կամ քահանայի։ Սարկաւագուհիների բոլոր փորձերը՝ շորթել չարտօնուած քահանայական աստիճան, դատապարտուել են Սուրբ Հայրերի կողմից։ Նիկիայի Տիեզերական խորհուրդը, Եկեղեցու Հայրերը, վարդապետները, ինչպէս նաեւ բիւզանդական կայսրերը կանանց եկեղեցական ծառայութիւնը որոշում էին ոչ թէ որպէս խորհրդակատարման ծառայութիւն, այլ որպէս օժանդակ օգնութիւն։ Աստուածապաշտութեան ու բարեգործական արարքների կանանց մասնակցութիւնը պայմանաւորուած էր ժամանակի կարիքների եւ արտաքին յարմարաւէտութեամբ։

Ուղղափառ վարդապետութեան՝ քահանայութեան մասին յատուկ ըմբռնումը տարբերւում էր միւս քրիստոնէական դաւանանքներից։ Ուղղափառ եկեղեցու սահմաններից դուրս, այլ դաւանանքների համակարգում, յատկապէս բողոքականութեան յարանուանութիւններում, «կանանց քահանայութիւնը» միանգամայն տրամաբանական է։ Ռուս ուղղափառ եկեղեցու սարկաւագ Անդրէյ Կուրայեւն ասում է, թէ բողոքականութեան մէջ «կանանց քահանայութեան» գաղափարին ուղղափառները դէմ չեն, քանի որ ընդհանրապէս այն բոլոր ծառայութիւնները, որոնք մատուցում են բողոքական համայնքի հովիւները, կարող են իրականացնել նաեւ ուղղափառ կանայք։ Ինչ գործառոյթներ են իրականացնում բողոքական համայնքի հովիւները։ Բողոքական հովիւը, նախ եւ առաջ, քարոզիչ է։ Բայց մեզ մօտ էլ իւրաքանչիւր փորձառու կին կարող է լինել ուսուցանել կիրակնօրեայ դպրոցում եւ աստուածաբանական կրթօջախներում։ Բողոքական հովիւը կարող է լինել հոգեւոր

խորհրդատու, որ լսում է ժողովրդի խոստովանութիւնները միայն։ Բայց նա չի արձակում խոստովանողների մեղքերը (այս խորհուրդը բողոքականութիւնը չի թոյլատրում), այլ պարզապէս հանդիսանում է որպէս մարդկային ապաշխարութեան կամ վկայութեան խորհրդատու։ Եւ մեր մայրապետները, միանձնուհիները եւ հոգեպէս փորձառու կանայք կրում են նոյն ծառայութիւնը եկեղեցական կեանքում։ Բողոքական հովիւը կազմակերպում է իր հօտի համայնքային կեանքը, բայց մեզ մօտ էլ այդ աշխատանքով զբաղւում են կանայք, որոնք ակտիւ դերակատարութիւն ունեն մեր թեմերում՝ իբրեւ տիկնանց միութեան անդամներ, կիրակնօրեայ դպրոցների եւ հայորդեաց տների ուսուցիչներ, դասաւանդում են եկեղեցական երիտասարդաց միութիւններում, եկեղեցու երգչախմբում անփոխարինելի դեր կատարում, եւ այլն։ Հայ Եկեղեցին մշտապէս առանձնայատուկ դեր է շնորհել կանանց, եւ պատահական չէ, որ մեր պատմութեան մէջ բազմաթիւ սրբուհիներ կան՝ կանայք, իշխանուհիներ, ովքեր եկեղեցիներ են կառուցել, ձեռագրեր պատուիրել, շարականներ գրել եւ այլն։ Սակայն բողոքականները՝ ո՛չ կանայք, ո՛չ էլ տղամարդիկ սուրբ Պատարագ չեն մատուցում։ Նրանք հակառակ են ընթանում առաքելական կարգերին ու վարդապետութեանը, եւ վերացնելով շնորհաբաշխական աւանդական կարգը՝ չքացնում են անգամ Եկեղեցու կոչումը, եւ իւրաքանչիւր անհատի կամայական ինքնագլխութիւն տալիս։ Այստեղից էլ ծագում են Եկեղեցու անտեսանելի լինելու մոլորութիւնը, անհատների ինքնափրկութիւնը, առաքելական յաջորդականութեան մերժելը, կանանց «քահանայի» պաշտօնն ընդունելը ու նման շատ ուրիշ ծայրայեղութիւններ։ Ըստ իրենց ուսմունքի՝ սուրբ Պատարագի խորհուրդ ու պաշտամունքային ծիսակարգեր գոյութիւն չունեն։ Ինչպէս նշում է Ադրէյ սարկաւագ Կուրայեւը, այնտեղ կայ միայն ծիսական թատրոն, որի մէջ մարդիկ ներկայացնում են աւետարանական տեսարաններն ու կիսւում իրենց «յիշողութիւններով»։ Քահանայութիւն՝ ուղղափառ հասկացողութեամբ, բողոքականները չունեն։ Այդ պատճառով

էլ իրենց հովիւները չեն կարող իրականացնել քահանայական ծառայութիւններ։ Այստեղ, իրօք, կարեւոր էլ չէ պաշտօնեայի սեռը։ Բողոքական համայնքի սպասաւորները աշխարհական դիրք են ստանում ու հռչակւում են լոկ հրապարակային մի կարգադրութեամբ, եւ ոչնչով չեն տարբերւում աշխարհականներից, այլ միայն պաշտօն ունեն ուսուցանելու (ինչպէս աշխարհական պրոֆէսորը, որ խօսում է եկեղեցական ամբիոնից) եւ զբաղուելու համայնքի վարչական աշխատանքով։ Բայց այս պարզապէս հակառակ է Աստուածաշնչի՝ քահանայական շնորհն ստանալու վարդապետութեանը[1]։ Իրօք, այս դէպքում հարց է ծագում, թէ ինչո՛ւ, ունենալով վարչական դիրք եւ պերճախօս կարողութիւն, կինը չի կարող անել այդ ծառայութիւնը։ Ուղղափառներն այլ կերպ են հասկանում քահանայագործութեան իմաստը։ Եկեղեցու իւրաքանչիւր խորհուրդ իրականացւում է Քրիստոսի միջոցով, ու ձեռնադրեած քահանան Նրա ներկայացուցիչն է ու վկան այն ամէնի, ինչ կատարում է Տէրը։ Սա մի խորհուրդ է, որ գերազանցում է մարդկային միտքը։ Սուրբ Երրորդութեան երկրորդ անձը, որ Աստծու խօսքն է, մարմնացաւ եւ ընդունեց մարդկային բնութիւն ոչ թէ որպէս Աստծու դուստր, այլ որպէս Աստծու Որդի։ Ինչո՞ւ։ Մենք չգիտենք, բայց չէ՞ որ Աստծուն ենք վերապահում աստուածատուր ազատութիւնը գործելու այնպէս, ինչպէս Նա տեսնում է մեր փրկութիւնը։ Եւ սրա մէջ կանանց ոչ մի նուաստացում չկայ։ Սրա մէջ է մեր փրկութեան տնօրէնութեան խորհուրդը։ Իւրաքանչիւր քահանայի քահանայագործութիւնը չի գալիս իր անձնական յատկանիշների եւ արժանիքների շնորհիւ, այլ Քրիստոսի քահանայութեան շնորհիւ, որը տրուած է իրեն եկեղեցուն ծառայութեան համար։ Հետեւաբար, քահանան կարող է լինել միայն այն մէկը, ով նման է Տիրոջը՝ իր արական բնութեամբ, քանի որ «այրն է տիրական» եւ ոչ՝ կինը, ծառան կամ ճորտն ու ստրուկը[2]։ Ռուս Ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսաց Սինոդն իր կարծիքն

1 Տե՛ս Ա. Տիմ. 4, 14։ Բ. Տիմ. 1, 6։ Գործ. 14, 23, 6, 3-6։ 9, 28։

2 Սբ. Գրիգոր Տաթեւացի, «Գիրք Հարցմանց», Կ. Պոլիս, 1729, էջ 589։

արդէն յայտնել է բողոքականների՝ կանանց քահանայագործութեան մասին՝ ասելով. «Մենք չենք տեսնում որեւէ հիմք առարկելու այլ կրօնական յարանուանութիւնների ցանկացած որոշումն այս հարցի վերաբերեալ, ուր քահանայութիւնը չի ճանաչւում որպէս խորհուրդ, եւ ուր, հետեւաբար, ուղղափառութեան տեսակէտից նուիրապետական քահանայագործութիւն որպէս այդպիսին գոյութիւն չունի»[1]:

Եկեղեցին չի խօսում միայն կանանց «ենթակայութեան» մասին: Պօղոս առաքեալն ասում է, թէ ամուսինները պէտք է սիրեն իրենց կանանց, փայփայեն նրանց որպէս դիւրաբեկ անօթի, քանի որ աւելի նուրբ ու փխրուն արարածներ են: Երբեմն ամուսինն իր կնոջը սիրում է յիշեցնել՝ «թող կինը վախենայ իր ամուսնուց», եւ ամէն ինչ, որ կարդացւում է ամուսնութեան սուրբ Պասակի ժամանակ, ինչ-ինչ պատճառներով մոռանում են: Սակայն, առաջին հերթին, ամուսինը պէտք է սիրի իր կնոջը: Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «[Ամուսին], նոյն խնամքը տա՛ր [կնոջդ համար], ինչպէս Քրիստոս է խնամք տանում եկեղեցու համար: Նոյնիսկ եթէ անհրաժեշտ լինի կեանքդ զոհել նրա համար, այո՛, եւ կտոր-կտոր լինել տասը հազար անգամ, այո՛, ու դիմանալ եւ ենթարկուել ցանկացած տառապանքի. ինչ էլ որ լինի, չհրաժարուես դրանից»[2]: Ամուսնու եւ կնոջ միջեւ յարաբերութեան պատկերը պէտք է լինի այնպէս, ինչպէս Քրիստոսի եւ եկեղեցու պատկերն է: Ամուսնու յարաբերութիւնն իր կնոջ նկատմամբ պէտք է լինի նոյնը, ինչպէս Քրիստոսի յարաբերութիւնն է Եկեղեցու նկատմամբ ընդհանրապէս: «Ինչպէս որ կինն իր գոյութիւնն առաւ ամուսնու կողից, այնպէս էլ եկեղեցին հիմնուեց Քրիստոսի կողից բխած ջրի ու արեան՝ սուրբ Մկրտութեան եւ սուրբ Հաղորդութեան խորհուրդների վրայ: Եւ եթէ առաջին Ադամը մեղքի ու մահուան իշխանութեան տակ ընկաւ կողակցի դրդումով, ապա

1 Послание Священного Синода о V Ассамблее Всемирного Совета Церквей и ее результатах, Журнал Московской Патриархии. 1976, № 4. с. 9.

2 St. John Chrysostom, Homily 20 on Ephesians.
Տե՛ս http://www.newadvent.org/fathers/230120.htm (առ 10/04/2017):

երկրորդ Ադամը՝ Քրիստոս, ազատեց իր «կողակցին»՝ եկեղեցուն, այդ իշխանութիւնից եւ հաստատեց անարատութեան եւ սրբութեան մէջ: Ինչպէս որ ամուսինն ու կինը մէկ մարմին են, այնպէս էլ՝ Քրիստոս եւ եկեղեցին: Քրիստոս, որ գլուխն է եկեղեցու, իրականացրեց մարդկութեան փրկութիւնն իր մարմնի խաչելութեամբ ուայրութեամբ եւ շարունակում է փրկագործութիւնը դարձեալ իր խորհրդական մարմնի՝ Եկեղեցու միջոցով: Քահանան հանդէս է գալիս ոչ թէ սոսկ իբրեւ մարմնի անդամներից մէկը, այլ խորհրդանշում է հէնց գլուխը՝ Քրիստոսը, ուստի նա պէտք է Նրան նման լինի նաեւ սեռով»[1]:

Քրիստոնէական ընտանիքում ամուսնուն են վստահուել շատ աւելի մեծ պարտականութիւններ: Պարտականութիւններ, այլ ոչ թէ գերիշխանութեան իրաւունքներ: Այսպիսով, մենք չենք կարող յստակ ասել, թէ առաջնահերթութիւնը տրւում է տղամարդուն, եւ կինը երկրորդական տեղ է զբաղեցնում: Անիմաստութեան այս նախատինքը բացայայտւում է այն անսահման սիրոյ մէջ, որ եկեղեցին տածում է սբ. Մարիամ Աստուածածնի նկատմամբ. մէկը կանանց ից, որին եկեղեցին մեծարում ու համարում է աւելի վեհ, փառայեղ ու գերազանց, քան բոլոր հրեշտակային դասերը: Այսպիսով, տղամարդու եւ կնոջ միջեւ ինչ առաջնահերթութեան մասին խօսք կարող է լինել: Հիմա աշխարհիկ հասարակութիւնն ամբողջութեամբ հիմնւում է այլ սկզբունքների վրայ եւ, հետեւաբար, դաստիարակում է այնպիսի մարդկանց, որոնք ի վիճակի չեն ընտանեկան կեանքին: Աշխարհիկ ընտանիքն այսօր անկայուն է, եթէ հաշուի առնենք ամուսնալուծութիւնների բարձր տոկոսադրոյքը: Եկեղեցու նպատակն է ամուր պահել աւանդական ընտանիքը: Եթէ կինը ձգտում է փրկութեան, ապա նա անխուսափելիօրէն գալիս է այն սկզբունքին, որն ի սկզբանէ էր սահմանուած իր փրկութեան համար: Քրիստոնէական այդ սկզբունքը դիմացկուն է արտաքին ազդեցութիւնների հանդէպ միայն այն պատճառով, որ այնտեղ

1 Monk's blog, «Կանանց քահանայութեան խնդրի շուրջ», Տե՛ս http://777monk777.livejournal.com/952.html (առ 11/04/2017):

խնամքով պահպանուել են հնազանդութեան հնագոյն սկզբունքները յանուն Աստծու՝ ի հակադրութիւն աշխարհիկ միտումների, ուր այդ սկզբունքները չեն պահպանուել: Ուստի կինը, ազատ լինելով ֆէմինիստական հասարակութեան մէջ, երբէք չի կարող լինել երջանիկ: Նա ունի բոլորովին տարբեր պարտաւորութիւն, քան տղամարդը: Նա, ունենալով անբնական հաւասար իրաւունքներ տղամարդու հետ ու գրաւելով նրա տեղն ու դիրքը, չի կարող գտնել երջանկութիւն, քանի որ կնոջ երջանկութիւնը բոլորովին այլ տեղում է: Այն որոշւում է Աստծու սահմանած տեղով ու դիրքով ամբողջ հասարակութեան մէջ ընդհանրապէս: Այսօր այս տեղից ու դիրքից կնոջը վտարում են կամ էլ ինքն իրեն է վտարում: Սա հաւատուրացութեան եւ Աստծուց հեռանալու չափանիշներից մէկն է: Կանայք կարող են բարձր պաշտօնակատար դիրքեր գրաւել, խիստ օժտուած ուսուցիչներ ու ղեկավարներ լինել, սակայն այդ պարգեւները չեն կարող իրականացուել եկեղեցում՝ տղամարդկանց վրայ իշխելու համատեքստում: Սա ճիշդ է ոչ թէ այն պատճառով, որ կանայք հոգեպէս զիջում են տղամարդկանց, այլ այն պատճառով, որ Աստծու օրէնքն է պատուիրում դա: Աստուած սահմանել է կարգ ու կանոն իր արարչական տնօրինութեան մէջ՝ օրէնք, որ արտացոլում է Իր կամքն ու բնոյթը եւ, հետեւաբար, պէտք է արտացոլուեն Իր եկեղեցում: Իւրաքանչիւր մարդ, անտեսելով կամ մերժելով Աստծու հրամանը, թուլացնում է եկեղեցին եւ անարգում Նրան:

Ամփոփելով այս ամէնը՝ կարելի է վստահութեամբ յայտարարել, թէ եկեղեցու հայրաբանական աւանդոյթի մէջ չկան բացայայտ մարդաբանական, ծիսական ու պատմական բնոյթի ցուցումներ, որոնց հիման վրայ հնարաւոր լինի խօսել եկեղեցում կանանց քահանայագործելու հնարաւորութեան մասին: Այս խնդիրն իր արմատներն ունի ոչ թէ եկեղեցական աւանդոյթի մէջ, այլ պարզապէս կապուած է ժամանակակից ֆէմինիստական ու համաշխարհայնացման (գլոբալիզացման) գաղափարների զարգացման հետ, որոնք հետապնդում են սեռային երկուութեան (դուալիզմի)

քայքայումն ու ոչնչացումը, որն արդէն իսկ կտրականապէս ազդում է ժամանակակից ընտանիքի վիճակի վրայ։ Եկեղեցու հայրաբանական աւանդոյթում այս հարցը ոչ միայն չի քննարկուել, այլ չէր կարող նաեւ ձեւակերպուել։ Բայց այսօր աշխարհում բաւական մեծ տարածում գտած ֆէմինիզմի այս գաղափարի կողմնակիցների համար, ցաւօք, այս հարցը չի կարող չէզոքանալ մօտ ապագայի օրակարգից, քանի որ «կանանց քահանայութեան» խնդրոյ առարկան արագ զարգանում է աղանդաւորական ու բողոքական լայնատարած շարժումներում։

ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՐԴԵՕՔ ՀԱՂՈՐԴՈՒԵԼ ԴԱՇՏԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այս հարցը, անշուշտ, արժանի է մանրակրկիտ ուսումնասիրութեան: Սակայն ակնյայտ է, թէ նոյնիսկ պատմական ապացոյցների մակերեսային ուսումնասիրութիւնը ցոյց են տալիս, թէ այս խնդրի հետ կապուած կան կարծիքների տարբերութիւններ: Ընդհանրական եկեղեցում հին ժամանակներից եղել են որոշակի կանոնակարգեր, որոնք քրիստոնեային օգնում էին յաջողութեամբ վարել հոգեւոր կեանքը: Որոշ կանոններ կազմեցին Եկեղեցու իրաւական կանոնագիրքը, որն իր մէջ ընդգրկեց առաքեալների ու Տիեզերական եւ տեղական ժողովների սահմանած կանոնները, որոնք պարտադիր դարձան կատարուելու համար: Իսկ մնացածը մասնաւոր կանոններ էին, որոնք պարզապէս կրում էին խորհրդական ու յանձնարարական բնոյթ: Եկեղեցու սուրբերի եւ հեղինակաւոր աստուածաբանների հրահանգներն ու խրատները տարբեր ժամանակներում նոյնպէս շատ օգտակար էին քրիստոնեաների համար: Բայց այդ հրահանգներից շատերը մնում էին որպէս այս կամ այն սուրբի անհատական աստուածաբանական կամ ուսուցողական կարծիք, այսինքն՝ ընդհանուր կանոնական իմաստով խիստ պարտադիր չէին կատարուելու համար: Ուշադիր ուսումնասիրելով Եկեղեցու Հայրերի գրուածքները՝ կարելի է նկատել, թէ որոշ հրահանգներ նոյնիսկ հակասական են: Տրամաբանական հարց է ծագում, թէ ինչպէ՞ս կարող է այդպէս լինել: Պարզապէս յաճախ Հայրերի այս կամ այն հրահանգն ու խրատն ուղղուած էր որոշակի մարդկանց խմբերին եւ իւրայատուկ պարագաներին: Ուստի այդ հրահանգները կարող էին լինել թոյլ կամ էլ ընդհակառակը՝ չափա-

զանց խիստ։ Սակայն կարեւորն այն է, թէ քանի դեռ սուրբի տեսակէտը որեւէ խնդրի վերաբերեալ չի հակասում Եկեղեցու դաւանանքին ու վարդապետութեանը, նրա հրահանգները չեն կարող լինել սխալ։ Գրութիւնները կարող են երբեմն հակասական թուալ, բայց իրականում աւելի խորն ուսումնասիրութիւն կատարելով՝ նկատում ենք, թէ նրանք լրացնում են իրար։ Ոմանց համար այս ամէնը կարող է կասկածանք յարուցել որոշ գրութիւնների արժանահաւատութեան հանդէպ։ Երբ հանդիպում ենք ենթադրեալ հակասութիւնների, չափազանց կարեւոր է յիշել, թէ աստուածաբանութեան մէջ երկու պնդումներ կարող են տարբերուել միմեանցից՝ առանց հակասական լինելու, մինչդեռ ոմանք միմեանցից չեն զանազանում տարբերութիւնը։ Այնուամենայնիւ, որքան շատ գիտելիքներ ձեռք բերուեն կասկածելի հարցերի վերաբերեալ, այնքան շատ այս խնդիրները կը լուսաբանուեն ու կը պակասեն։

Ինչ վերաբերում է կանանց «ծիսական անմաքրութեան»-ը, ապա այսօր Ուղղափառ եւ Հայ եկեղեցիներում կան տարբեր կարծիքներ այս հարցի շուրջ, որոնք տարբերւում են ծուխից ծուխ եւ առաւելապէս կախում ունեն միայն տեղի քահանայից։ Արեւմուտքի մեր եկեղեցիներում այս հարցը տարբեր է ընկալւում, եւ դաշտանի ընթացքում հաղորդուելուն ոչ մի արգելք չկայ։ Քրիստոնէութեան պատմութեան ընթացքում Ընդհանրական եկեղեցու աստուածաբանների տեսակէտներն այս հարցի վերաբերեալ տարբեր են եղել։ Այսօր մեր եկեղեցիներում այս հին բանավէճը երբեմն կրկին է առաջանում։ Հոգեւորականների մի մասը կանանց կտրականապէս արգելում է դաշտանի ընթացքում հաղորդուել, մինչդեռ միւս մասը թոյլատրում է։ Եւ այս երկու տեսակէտներն էլ ունեն իրենց պաշտպաններն ու ընդդիմախօսները։

Սուրբ Հաղորդութիւնից զուրկ մնալու հիմնական պատճառներից մէկն է անմաքրութեան վիճակում սրբութեանը մօտենալու արգելքը։ Ծիսական սահմանափակումների ամենավաղ վկայութիւնն է Աստուածաշնչի Ղեւտական գիրքը, որտեղ գրուած է. «**Այն կինը,**

որից արիւն է հոսում, եւ այդ արեան հոսումն իր մարմնից է, նա եօթն օր կը լինի իր դաշտանի մէջ: Ով որ դիպչի նրան, անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ: Ինչի վրայ որ պառկի այդ կինն իր դաշտանի ընթացքում, եւ ինչի վրայ էլ նստի նա, անմաքուր է համարւում: Ով որ դիպչի նրա անկողնին, պէտք է լուանայ իր զգեստները, իր մարմինը լուայ ջրով: Նա անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ: Ով որ դիպչի մի առարկայի, որի վրայ այդ կինը նստել է, պէտք է լուանայ իր զգեստները, լուացուի ջրով: Նա անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ» (15, 19-23): Համաձայն Ղեւտական օրէնքի՝ դաշտանի ընթացքում ոչ միայն կինն է անմաքուր, այլ նաեւ իւրաքանչիւր անձ, ով դիպչում է կնոջը, նրա անկողնուն կամ էլ այն առարկային, որի վրայ նա նստել է: Այդ ընթացքում խստիւ արգելւում են նաեւ սեռական յարաբերութիւնները. «Եթէ որեւէ մէկը դիպչի այն անկողնին, որի վրայ պառկել է այդ կինը, կամ այն առարկային, որի վրայ նստել է նա, անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ: Եթէ որեւէ մէկը պառկի նրա հետ, երբ նրա անմաքրութիւնը դեռ իր մէջ է, եօթը օր թող անմաքուր համարուի: Մինչեւ երեկոյ թող անմաքուր համարուի նաեւ այն անկողինը, որի վրայ այդ մարդը կը քնի: Եթէ մի կնոջ դաշտանն անկանոն է, եւ արիւնը սահմանուած ժամանակից աւելի երկար է հոսում, նրա այդ բոլոր օրերը թող համարուեն որպէս դաշտանի օրեր: Այդ բոլոր օրերի ընթացքում նա թող անմաքուր համարուի: Այն անկողինը, որի մէջ նա կը պառկի իր արիւնահոսութեան օրերին, կանոնաւոր դաշտանի օրերում իր պառկած անկողնի նման անմաքուր թող համարուի: Ամէն առարկայ, որի վրայ նա կը նստի այս շրջանում, թող անմաքուր համարուի, ինչպէս որ անմաքուր էր համարւում իր կանոնաւոր դաշտանի օրերին: Ով որ դիպչի նրան, թող անմաքուր համարուի: Նա պէտք է լուանայ իր զգեստները եւ իր մարմինը լուայ ջրով: Նա անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ: Երբ դադարի կնոջ արիւնահոսութիւնը, նա պէտք է հաշուի եօթը օր, ապա մաքուր կը համարուի» (Ղեւտ.

15, 24-28)։ Ըստ Ղեւտական օրէնքի՝ նոյնիսկ ծննդաբերութիւնն էր համարւում անմաքրութիւն, ու ծննդաբերող կնոջը պարտադրւում էր նմանատիպ սահմանափակումներ (տե՛ս Ղեւտ. 12)։

Ինչպէս տեսանք, արիւնահոսութեան ժամանակ անմաքրութեան վերաբերող արգելքները նշուած են Հին Կտակարանում։ Եկեղեցում այդ արգելքները ոչ ոք չի մտցրել. դրանք պարզապէս կանոնական որոշումով չեն հանուել։ Նոր Ուխտում Հին Ուխտի երկրպագութիւնը փոխարինուել է Նոր Պատարագով, առաւել լաւ ուխտով ու լաւագոյն խոստումներով (Եբր. 8, 6), բայց դա չի նշանակում, թէ Հին ու Նոր Ուխտերի միջեւ չկայ շարունակականութիւն։ Որոշ հին կանոններ մեծամասնութեամբ մի կողմ դրուեցին, սակայն կան նաեւ հին կանոններ, որոնք որոշ չափով պահպանուեցին։ Հին Կտակարանում բաւականին մտահոգութիւն կար յատկապէս արեան նկատմամբ։ Մենք տեսնում ենք, թէ նոյնիսկ Նոր Կտակարանում այդ մտահոգութիւնը չի փարատւում (Գործ. 15, 23-29։ 21, 25-26)։ Աւելին, եկեղեցին վաղ ժամանակներից հաստատել է կանոնական որոշ արգելքներ արեան հոսքի վերաբերեալ, թէեւ աստուածաբանական որեւէ բացատրութիւն ու հիմնաւորում չեն տրուել։ Բայց յիշեցնենք, թէ անմաքրութեան շրջանում հաղորդուելու արգելքը վերաբերում է ոչ միայն կանանց, այլեւ տղամարդկանց։ Ըստ կանոնի՝ կինը դաշտանի ընթացքում ոչ մի դէպքում աւելի անմաքուր չէ, քան տղամարդը սերմի ակամայ ծորման՝ երազախաբութեան ժամանակ։ Ըստ օրէնքի՝ եւ կինը, եւ տղամարդը այդ ընթացքում պէտք է խուսափեն Սուրբ Հաղորդութեանը մերձենալուց։ Այս մարմնական հոսումները մեղքեր չեն, բայց նրանք ներկայացնում են մեր ընկած բնութեան հետեւանքները։ Հին Կտակարանի Ղեւտական գիրքը նոյնպէս զգուշացնում էր տղամարդկանց անմաքրութեան մասին։ Գրուած է. **«Տէրը խօսեց Մովսէսի ու Ահարոնի հետ եւ ասաց. «Խօսի՛ր Իսրայէլի որդիների հետ ու ասա՛ նրանց. «Եթէ որեւէ այր մարդու մարմնից սերմի ծորում լինի, նրա այդ ծորումն անմաքուր է... Նա անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ։ Ով որ նստի սերմի ծորում**

ունեցողի նստած առարկայի վրայ, պէտք է լուանայ իր զգեստները, իսկ ինքը լուացուի ջրով: Նա անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ: Ով որ դիպչի սերմի ծորում ունեցողի մարմնին, նա պէտք է լուանայ իր զգեստները, իսկ ինքը լուացուի ջրով: Նա անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ: Եթէ սերմի ծորում ունեցողի թուքը դիպչի մաքուր մարդու, սա պէտք է լուանայ իր զգեստները, իսկ ինքը լուացուի ջրով: Նա անմաքուր է համարւում մինչեւ երեկոյ... Իսրայէլի որդիներին խստօրէն զգուշացրէ՛ք իրենց անմաքրութիւններից, որպէսզի իրենց մէջ գտնուող իմ խորանը չպղծեն ու իրենց այդ անմաքրութեան պատճառով չմեռնեն: Սա է կարգը սերմի ծորում ունեցողի, երազախաբութեան պատճառով անմաքուր դարձածի, արիւնահոսութիւն ունեցող կնոջ, ծորում ունեցողի, տղամարդ լինի թէ կին, ինչպէս նաեւ դաշտանի մէջ եղող կնոջ հետ պառկող տղամարդու մասին»» (Ղեւտ. 15, 1-2, 6-8, 31-33): Հայ Եկեղեցու «Կանոնագիրք Հայոց»-ում նշուած է, որ եթէ տղամարդը երազախաբ է եղել մարմնի բնական գործունէութեան եւ ոչ թէ պոռնկական խորհրդի արդիւնքում, թոյլատրւում է Սուրբ Հաղորդութեան մերձենալ:

Նշենք որոշ կարծիքներ, որոնք յայտնում են եկեղեցական հեղինակաւոր Հայրերը: Որոգինեսը հանդիսանում է առաջին քրիստոնեայ գրողը, ով ընդունում է Հին Կտակարանի տեսակէտը՝ Ղեւտական 12-րդ գլխում նշուած դաշտանն ու ծննդաբերութիւնը անմաքրութիւն համարել[1]: Իսկ սբ. Աթանաս Մեծ հայրապետն ասում է (կանոն 1). «Աստծու բոլոր ստեղծածները բարի են ու մաքուր, քանի որ Աստծու Խօսքը ոչինչ անօգտակար կամ անմաքուր չի ստեղծել: Մենք Քրիստոսի բուրմունքն ենք փրկուողների մէջ՝ ըստ առաքեալի (Բ. Կորն. 2, 15): Քանի որ տարբեր ու բազմազան են դեւի նետերը, եւ անարատ մտածողներին նա բերում է խռովութեան, եղբայրներին շեղում է սովորական վարժութիւնից՝ նրանց մէջ

1 Cat.in Ep. ad Cor. XXXIV 124: C. Jenkins (ed.), “Origen on 1 Corinthians,” Journal of Theological Studies 9 (1908) 502, 28-30.

առաջացնելով անմաքրութեան ու պղծութեան խորհուրդներ, բայց մենք մեր Փրկչի շնորհով, հակիրճ խօսքերով չար գայթակղութիւնը հեռացնենք ու պարզամիտների մտածումները հաստատենք, քանի որ ***«ամէն ինչ մաքուր է խղճմտանքով մաքուր եղողների համար, բայց պիղծերի եւ անհաւատների համար ոչ մի բան մաքուր չէ»*** *(Տիտ. 1, 5)։ Զարմանում եմ դեւի խորամանկութեան վրայ, որ թէեւ լինելով չար ու թշուառ՝ ըստ երեւոյթին, ներդնում է մաքրութեան խորհուրդներ։ Բայց նրա գործածն աւելի շատ զրպարտանք է կամ գայթակղութիւն, որովհետեւ, ինչպէս ասացի, շեղում է նուիրեալներին սովորական ու փրկարար խնամքից, եւ ամէն կերպ ջանում է յաղթել նրանց, ինչպէս նրան թւում է։ Այս պատճառով, նա այնպիսի բամբասանք է տարածում, որը կեանքին ոչ մի օգուտ չի բերում, այլ միայն դատարկ հարցաքննութիւններ ե ունայն խօսակցութիւններ, որոնցից պէտք է խուսափել։ Ուստի ասա՛ ինձ, սիրելի՛ս ու յարգելիս, եթէ մեղաւոր կամ անմաքուր է որեւէ բնական հոսում, ինչպէս օրինակ, եթէ մէկն ուզէր մեղադրել իր ռունգերի խորխի երթը եւ բերանից ելած թուքը։ Կարող ենք նաեւ աւելին ասել որովայնի հոսումների մասին, որոնք անհրաժեշտ են արարածների կենդանութեան համար։ Այդուհանդերձ, եթէ, ըստ Աստուածաշունչ մատեանի, հաւատում ենք, թէ մարդ արարածն Աստծու ձեռագործն է, ապա ինչպէ՞ս կարող էր մաքուր ուժից պղծութիւն առաջանալ. եւ եթէ մենք Աստծու զարմից ենք, ապա, ըստ Աստուածաշունչ մատեանի Գործք Առաքելոցի սուրբ գրութեան (Գործ. 17, 28), մեր մէջ ոչինչ չունենք անմաքուր, քանի որ միայն այն ժամանակ ենք պղծւում, երբ գործում ենք մեղք՝ վատագոյնը բոլոր գարշահոտութիւններից։ Իսկ երբ կատարւում է որեւէ բնական ակամայ հոսում, այն ժամանակ, ինչպէս վերը նշուեց, մենք ենթարկւում ենք այդ բնական անհրաժեշտութեանը։ Սակայն նրանք, ովքեր նախընտրում են միայն յանդիմանել Աստծու արդարամիտ խօսքերն ու ճշգրտօրէն չեն մեկնաբանում աւետարանական հետեւեալ խօսքերը, թէ՝ «Ամէն բան, որ դրսից է մտնում, չի կարող պղծել մարդուն, այլ ինչ որ դուրս է գալիս»,*

անհրաժեշտ է իրենց այդ անհեթեթությունը դատապարտել»[1]:

Սիրիական «Վարդապետություն Առաքելոց»-ը՝ քրիստոնէութեան եւ 3-րդ դարի հրէական աւանդութեան հակասութիւնների վկայութեան աղբիւրը, արգելում է քրիստոնեաներին կատարել ղեւտական օրէնքները, այդ թւում նաեւ կանանց դաշտանին վերաբերող օրէնքները: Հեղինակն այն կանանց է յորդորում, ովքեր եօթն օրերի ընթացքում զուրկ էին մնում աղօթքից, Աստուածաշնչի ընթերցումներից եւ Սուրբ Հաղորդութիւնից. «Եթէ դուք, կանա՛յք, կարծում էք, թէ զրկուած էք Սուրբ Հոգուց ձեր մաքրուելու եօթն օրուայ ընթացքում, եւ եթէ դուք մահանայիք այդ ժամանակ, ապա դուք կը հեռանայիք դատարկ եւ առանց որեւէ յոյսի»: «Վարդապերտություն Առաքելոց»-ը յետոյ կանանց համոզում է, թէ Սուրբ Հոգին ներկայ է նրանց մէջ՝ ընդունակ անելով մասնակցելու աղօթքին, Աստուածաշնչի ընթերցումներին եւ Ս. Հաղորդութեանը. «Հիմա մտածի՛ր այս բանի մասին եւ ընդունի՛ր, թէ աղօթքը լսելի է Սուրբ Հոգու միջոցով, իսկ Աստուածաշունչը՝Սուրբ Հոգու խօսքն է ու սուրբ է: Հետեւաբար, եթէ Սուրբ Հոգին ձեր մէջ է, ապա ինչո՞ւ էք ձեր հոգին հեռացնում ու չէք մօտենում Սուրբ Հոգու գործին»[2]*: Համայնքի միւս անդամներին հրահանգում է. «Դուք պէտք չէ բաժանուէք նրանցից, ովքեր դաշտանի ընթացքում են: Նոյնիսկ արիւնահոսութիւն ունեցող կինը չյանդիմանուեց, երբ դիպաւ Փրկչի զգեստի քղանցքին. աւելի շուտ նա արժանացաւ թողութիւն ստանալու իր բոլոր մեղքերին»*[3]*: Յատկանշական է, թէ այս վերոյիշեալ տեքստը կանանց յորդորում է դաշտանի ընթացքում հաղորդուել, եւ այդ յորդորն ամրացւում է Նոր Կտակարանի՝ արիւնահոսութիւն ունեցող կնոջ մասին նշուած օրինակով (տե՛ս Մատթ. 9, 20-22): Լուրջ վէճեր են ընթանում, երբ*

1 Послание Свт. Афанасия Великого к монаху Аммуну около 356 г. Տե՛ս http://mstud.org/library/canons/athanas1.htm (ստ 12/04/2017):

2 Didaskalia XXVI. H. Achelis-J. Fleming (eds.), Die ältesten Quellen des orientalischen Kirchenrechts 2 (Leipzig 1904), Seite 139.

3 Նոյն տեղում, Seite 143:

յիշում է աւետարանական այս դէպքը։ Արիւնահոսութեամբ հիւանդ կինը դիպաւ Յիսուսի զգեստին, եւ իր հիւանդութիւնն անմիջապէս բուժուեց։ Փրկիչը չմերժեց նրան, այլ, ընդհակառակը, խրախուսեց՝ ասելով. «Քաջալերուի՛ր, դո՛ւստր»։ Դա կարող է նկատուել որպէս ապացոյց, որ կինն իր «ճգնաժամային» օրերին կարող է հաղորդուել։ Բայց այս կարծիքը յաճախ հակադրւում է այն փաստարկով, որ իրեն անմաքուր համարող արիւնահոսութեամբ տառապող կինը յետեւից մօտենալով դիպաւ միայն Յիսուսի զգեստի քղանցքին, այլ ոչ թէ Նրա մարմնին։ Սա նշանակում է, թէ ամէն բան չէ, որ թոյլատրւում է «անմաքուր» կնոջը, թէեւ կարող է դիմել Տիրոջ օգնութեանն ու օրհնութեանը։

Ուղղափառ ու Կաթոլիկ եկեղեցիների սուրբը Գրիգոր Մեծ հայրապետը՝ Հռոմի պապը, նոյնպէս յիշեցնելով արիւնահոսող կնոջ մասին աւետարանական դէպքը, ասում է, թէ պէտք չէ կնոջն արգելել եկեղեցի մտնել, ու կնոջ դաշտանը անմաքրութիւն չէ, բայց եթէ կինն այդ ժամանակ չհաղորդուի մեծ յարգանքի պատճառով, ուրեմն թող նա գովելի լինի իր բարեպաշտութեան համար։ Նա գրում է. «Պէտք չէ արգելել կնոջը դաշտանի շրջանում մտնել եկեղեցի, քանի որ չի կարելի նրան մեղադրել այն աւելցուկ նիւթի համար, որ դուրս է բերւում բնութեամբ, եւ որ նա տառապում է անկախ իր կամքից։ Ի վերջոյ մենք գիտենք, թէ այն կինը, ով տառապում էր արիւնահոսութեամբ, խոնարհաբար ետեւից մօտենալով Տիրոջը, դիպաւ Նրա զգեստի քղանցքին եւ նոյն ժամին բժշկուեց (Մատթ. 9, 20)։ Ուրեմն, եթէ արիւնահոսութեամբ տառապողը կարող էր դիպչել Տիրոջ զգեստին ու բժշկուել, ապա ինչո՞ւ ամսական արիւնահոսութիւն ունեցող կանանց համար անօրինական է Տիրոջ տաճարը մտնելը... Եթէ կինը, իր վատառողջ վիճակում դիպչելով Տիրոջ զգեստին, իրաւացի էր իր համարձակութեամբ, ապա ինչո՞ւ ինչ որ թոյլ տրուեց մէկին, չի թույլատրւում նաեւ բոլոր կանանց, ովքեր տառապում են բնական թուլութեամբ. ու չի կարելի այդ ժամանակ կնոջն արգելել՝ ընդունելու Ս. Հաղորդութեան խորհուրդը։ Եթէ նա

չհամարձակուի հաղորդուել մեծ յարգանքի պատճառով, ապա նա արժանի է գովասանքի, իսկ եթէ հաղորդուի՝ չի մեղանչի... Դաշտանը մեղք չէ, այլ բնական երեւոյթ: Տրամադրէ՛ք կնոջն իր իսկ սեփական ըմբռնմանը, եւ եթէ դաշտանի շրջանում նա որոշի չմօտենալ Տիրոջ Մարմնի եւ Արեան խորհրդին, ուրեմն թող գովելի լինի իր բարեպաշտութեան համար. իսկ եթէ նա, խորհրդի սիրով լցուած, իր բարեպաշտ կեանքի սովորութեան համաձայն հաղորդուի, ապա, ինչպէս որ արդէն ասացինք, պէտք չէ խոչընդոտել նրան: Եթէ Հին Կտակարանում քննարկւում են արտաքին հանգամանքները, ապա Նոր Կտակարանում գլխաւոր ուշադրութիւնը բեւեռւում է ոչ թէ արտաքինի, այլ ներքինի վրայ, իսկ պատիժը կիրառւում է առաւել զգուշութեամբ... Քանի որ, եթէ ոչ մի ուտելիք չի փչացնում նրան, ում հոգին ենթակայ չէ վատթարացման, ապա ինչո՞ւ պէտք է անմաքուր համարել այն, ինչ մաքուր հոգի ունեցող կնոջ համար գալիս է իր բնութիւնից»[1]: Սակայն վաղ միջնադարում Գրիգոր Մեծ հայրապետի առաջարկած այս հրահանգը յետագայում դադարեց կիրառուելուց, քանի որ «դաշտանի շրջանին կանանց չէին թոյլատրում հաղորդուել, ու սովորաբար կանայք կանգնում էին եկեղեցու մուտքի մօտ: Եւ այս սովորութիւնը տարածուած է եղել Արեւմուտքում 17-րդ դարում»[2]:

Սբ. Եփրեմ Ասորին, ինչպէս որ «Վարդապետութիւն Առաքելոց»-ն է մեկնաբանում արիւնահոսութեամբ հիւանդ կնոջ դրուագը, ասում է. «Զօրութիւնը, որ բխում էր Նրանից, դիպաւ պղծուած որովայնին, սակայն այնպէս, որ չենթարկուեց պղծութեան: Ճիշդ այդպէս էլ Նրա Աստուածութիւնն է, որ չպղծուեց սրբագործուած արգանդում բնակուելով, քանի որ Կոյսը եւ՛ օրէնքով եւ՛ օրէնքից դուրս աւելի սուրբ է, քան այն կինը, որն իր արեան հոսումով

1 Цит. по: Беда Достопочтенный. Церковная история народа англов. СПб., 2001, сс. 33-36.

2 On the debate in the West as to whether menstruating women could take part in liturgical life see: J. Flandrin, Un Temps pour embrasser: Aux origines de la morale sexuelle occidentale (VIe-XIe s.) (Paris 1983), 11, 73-82.

առաջացնում էր անբարեացակամութիւն... Նրա թշնամիներն ուզում էին գայթակղեցնել Նրան՝ ասելով, թէ չգիտէ օրէնքը, քանի որ այդ կինը, անմաքուր լինելով օրէնքով, դիպաւ Նրան, իսկ Նա չմերժեց նրան... Չկայ անմաքուր բան, բացի նրանից, որ արատաւորում է ազատութեան կեանքը»[1]*:*

Շատերն են մէջբերում Հայրերի վերոյիշեալ քաղուածքները, ինչպէս նաեւ սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետի՝ տասներկու տարի արիւնահոսութեամբ տառապող կնոջ մասին մեկնաբանութիւնները, որտեղ նա գովաբանում է այդ կնոջ մեծ հաւատը՝ նշելով, թէ Քրիստոս բժշկեց նրա հիւանդութիւնը եւ ազատ արձակեց այն մեղքից, որ ըստ հրէական օրէնքի՝ համարւում էր անմաքրութիւն՝ ասելով. «Սա իսկապէս մեղք կամ անմաքրութիւն չէ»: Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետը քննադատում է նրանց, ովքեր կնոջ արիւնահոսութիւնն ու ծննդաբերութիւնը նկատում են որպէս անմաքրութիւն՝ նրանց անուանելով քրիստոնէական հաւատքի անարժաններ ու սնահաւատներ: Նա շեշտում է առաքելական հետեւեալ խօսքերը՝ ***«Ամէն ինչ մաքուր է խղճմտանքով մաքուր եղողների համար»*** *(Տիտ. 1, 15): Բայց նրա մեկնաբանութիւնները յատկապէս չեն շօշափում հաղորդութիւն ստանալու արգելքի հարցը: Բոլորն էլ նշում են, թէ անմաքուր ոչինչ չկայ, բոլոր բաները մաքուր են: Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «Աստուած ոչ մի անմաքուր բան չստեղծեց: Չկայ ոչինչ անմաքուր, բացի միայն մեղքից: Քանի որ մեղքը դիպչում է հոգուն ու պղծում այն, մնացածը մարդկային սնահաւատութիւն է: Առաքեալն ասում է, թէ պիղծերի եւ անհաւատների համար ոչ մի բան մաքուր չէ, մաքուր չեն խղճմտանքն ու միտքը: Արդեօք կարո՞ղ է մաքուրների մէջ լինել անմաքրութիւն: Իսկ ով ունի անառողջ հոգի, նա պղծում է ամէն ինչ... Երբ հոգին անմաքուր է, ապա ամէն բան համարւում է անմաքրութիւն: Իսկ որո՞նք են անմաքուր՝ մեղքը, չարութիւնը, ագահութիւնը,*

1 Преп. Ефрем Сирин. Толкование на Четвероевангелие // Творения, т.8. ТСЛ, 1995, сс.100-118.

նենգութիւնը... Դուք տեսնում էք, թէ որքա՜ն անմաքրութիւնների տեսակներ կան»: Անդրադառնալով Հին Կտակարանի փորձին՝ սբ. Յովհան Ոսկեբերանը յայտարարում է. «Եթէ կինը ծնում է, գրուած է, թէ նա անմաքուր է (Ղեւտ. 12, 2): Ասա՛ ինձ, ինչո՞ւ: Բայց չէ՞ որ Աստուած ստեղծեց սերմը եւ ծննդաբերութիւնը: Ինչո՞ւ է անմաքուր այդպիսի կինը: Արդեօք այստեղ չկա՞յ մի այլ իմաստ: Ինչն է դա: Սրանով Աստուած հոգու մէջ առաջացնում էր բարեպաշտութիւն ու կանխում էր նրան հեռու մնալ պոռնկութիւնից, քանի որ եթէ պիղծ է համարւում ծննդաբերողը, ուրեմն առաւել եւս պոռնկութիւն անողը... Շատ անմաքրութիւններ կարելի է յայտնել, եթէ թուարկենք բոլորը: Բայց հիմա այս բաները չեն պահանջւում մեզանից, այլ բոլոր մտահոգութիւնները փոխանցւում են հոգուն: Անմաքրութիւն է մեղքը. խուսափենք ու զերծ մնանք դրանից»[1]: Ըստ սբ. Յովհան Ոսկեբերանի՝ արիւնահոսութեամբ տառապող կինը չմօտեցաւ Քրիստոսին համարձակօրէն, «քանի որ ամաչում էր իր հիւանդութեան համար եւ իրեն համարում էր անմաքուր: Եթէ կինն իր ամսականի ընթացքում համարւում էր անմաքուր, ուրեմն առաւել եւս իրեն կարող էր այդպիսին համարել հիւանդութեամբ տառապողը: Այս հիւանդութիւնը, ըստ Օրէնքի, համարւում էր շատ անմաքուր»[2]: Յետագայ մեկնաբանութիւնում՝ այն հարցին, թէ ինչո՛ւ է Քրիստոս շատերին յայտնում նրա բժշկութիւնը՝ սբ. Յովհան Ոսկեբերանը ցոյց է տալիս հետեւեալ պատճառները. «Նախ, Նա ազատում է նրան վախից, որպէսզի որպէս պարգեւն առեւանգող խղճի խայթումից իր կեանքը չվատնի տանջանքի մէջ: Երկրորդ, ուղղում է նրան, քանի որ նա մտածում էր թաքնուել: Երրորդ, բոլորին բացայայտում է նրա հաւատը, որպէսզի միւսներն էլ մրցակցեն նրա հետ: Նաեւ ցոյց է տալիս, թէ Ինքն ամէն ինչ գիտէ, եւ դա այնքան մեծ

1 St. John Chrysostom, Commentary on the Epistle to Titus, Homely 2, NPNF, 13, pp. 529-531.

2 Творенія святаго отца нашего Іоанна Златоуста, Архіепископа Константинопольскаго, въ русскомъ переводе. Т. VII, кн. I, стр. 340.

հրաշք է, որքան արեան հոսքը դադարեցնելը»[1]։ Ընթերցողներին խորհուրդ ենք տալիս վերանայել Մատթէոսի աւետարանի ու սբ. Պօղոս առաքեալից՝ Տիտոսին ուղղուած նամակի բնագրերի՝ սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետի մեկնաբանութիւնները, ինչպէս նաեւ վերոյիշեալ Հայրերի մէջբերումները։ Նրանք բոլորն էլ նշում են, թէ Նոր Կտակարանի լոյսի ներքոյ կինն անմաքուր չէ դաշտանի ընթացքում, բայց չենք կարծում, թէ կը գտնուի որեւէ ուղղակի ապացոյց, ինչը նրանք ինչ-որ կերպ առաջարկում են, որ կանայք հաղորդուեն իրենց դաշտանի ընթացքում։ Պօղոս առաքեալն էլ իր նամակներում չի անդրադառնում մասնաւորապէս իգական կամ արական «անմաքրութեան» հարցին. ուստի նրա խօսքերն ընդհանուր բնոյթ են կրում (տե՛ս Հռոմ. 14, 14։ Տիտ. 1, 15։ Կող. 2, 20-3, 2)։ Մենք չենք կարող գտնել ոչ մի ապացոյց, որ սբ. Յովհան Ոսկեբերանը հակասում է հոգեւոր Հայրերի՝ դարերի ընթացքում դաշտանին վերաբերող խորհուրդներին, յատկապէս կնոջ դաշտանի ժամանակ հաղորդուելու խնդրին, որը հիմա՛ է առաջ բերւում որպէս սխալ խորհուրդ։

Սուրբգրային դիրքորոշումն այս հարցի նկատմամբ միանշանակ չէ։ Մի կողմից Հին Կտակարանի յայտարարութիւնը կանանց դաշտանի ընթացքում անմաքրութեան մասին, իսկ միւս կողմից, աւետարանական պատմութիւնն այն մասին, որ արիւնահոսութեամբ տառապող կինը դիպաւ Յիսուսին ու բժշկուեց։ Իսկ Եկեղեցու աւանդութեան մէջ, մի կողմից եկեղեցական կանոններն արգելում են, որ կանայք դաշտանի օրերին հաղորդուեն, միւս կողմից, եթէ որեւէ կին ծանր հիւանդ է ու մահանում է, եւ գտնւում է իր «կանացի» վիճակում, քահանան հանգիստ կարող է հաղորդել նրան։ Նաեւ ընդունելի եւ անհրաժեշտ է համարւում, որ կինը հաղորդուի ծննդաբերութեան ժամանակ, եթէ նա մեռնում է, թէեւ սովորաբար նրան արգելում էին հաղորդուել յետծննդաբերութեան 40 օրուայ

1 Творенія святаго отца нашего Іоанна Златоуста, Архіепископа Константинопольскаго, въ русскомъ переводе. Т. VII, кн. I, стр. 341.

ընթացքում։ Ուրեմն, ոմանք յայտարարում են, թէ կինը դաշտանի ընթացքում կարող է անել ամէն բան, ինչ որ ուզում է, քանի որ նրա մէջ չկայ որեւէ անմաքրութիւն։ Միւսներն էլ պնդում են, թէ կինը դաշտանի ընթացքում անմաքուր է, հետեւաբար չի կարող հաղորդուել, մինչեւ որ աւարտուի անմաքրութեան շրջանը։ Բոլոր նման պարագաներում անհրաժեշտ է անդրադառնալ Եկեղեցու հեղինակաւոր ու վերադաս կանոնադրութեանը։ Դաշտանի ընթացքում հաղորդուելն արգելող կանոնական որոշումներ կան Ուղղափառ եւ Հայ Եկեղեցու կանոնագրքերի՝ «Կանոն հարանց հետեւողաց» կանոնախմբի 23 կանոններում, որտեղ մասնաւորապէս նշուած է, թէ երբ մէկն ունի արիւնահոսութիւն, ապա պէտք չէ երեք օր Ս. Հաղորդութեանը մերձենայ։ Ըստ հասարակական-տարիքային կարգավիճակի փոփոխութեան հայկական հին ծէսերի՝ աղջիկների սեռական հասունութիւնն ու հիմնականում ուղղուած էին մաքրուելուն, սրբագործուելուն, ինչի համար առաջին դաշտանի աւարտից յետոյ նրանք լուացումներ էին անում եկեղեցում օրհնուած ջրով[1]։ Դեռեւս հայոց կաթողիկոս՝ Սիօն Ա. Բավոնեցի (767-775) գահակալութեան օրօք, Հայ Առաքելական եկեղեցու Պարտաւի ժողովի 24-րդ կանոնի համաձայն՝արգելւում էր դաշտանի մէջ գտնուողների պսակն օրհնել։ Ընդհանրական եկեղեցու Հայրերից Բարսեղ Կեսարացու 1052-րդ կանոնի համաձայն՝ (որը սահմանուել է նախքան 5-րդ դար), որին հետեւում է նաեւ Հայ Առաքելական Եկեղեցին, կանանց արգելւում է Սուրբ Հաղորդութիւն ստանալ նաեւ դաշտանի ընթացքում։ Հայոց Եկեղեցու պատմութեան ընթացքում տեղի են ունեցել մի շարք եպիսկոպոսական ժողովներ, որոնք պատասխանել են տուեալ ժամանակաշրջանին յուզած հարցերին՝ սահմանելով որոշակի կանոններ։ Ժամանակի պահանջն է, որ այսօր, առաւել քան երբեւէ, եկեղեցական համաժողովներ անցկացուեն, քանի որ եկեղեցում կուտակուել են բազում հարցեր, որոնք պահանջում են յստակ եւ

1 Տե՛ս http://int-heritage.am/am/age-rites-arm/ (ստ 12/04/2017)։

միանշանակ պատասխաններ։ Ժամանակակից մարտահրաւէրները, համատարած աշխարհայնացումը, հոգեւոր-բարոյական արժէքների խեղաթիւրումը, նմանատիպ եւ այլազան հարցեր յուզում են մեր ժողովրդին։ Եկեղեցին պէտք է արձագանգի առկայ խնդիրներին եւ կայացնի կոնկրետ որոշումներ, որոնք ուղենիշային պէտք է լինեն հոգեւոր դասի ու հաւատացեալների համար։ Այսօր կենսական պահանջ է, որ Հայոց Եկեղեցին իր դիրքորոշումն արտայայտի յուզող խնդիրների վերաբերեալ, քանի որ Եկեղեցու կոչումն է միշտ զգալ ժամանակի զարկերակը ու տուեալ ժամանակի լեզուով մեր ժողովրդին բացատրել աստուածային ճշմարտութիւնները։ Կարեւոր է, որ հոգեւորականները եւ հաւատաւոր ժողովուրդը յստակ գիտակցեն, թէ այս կամ այն հարցի շուրջ ինչ միասնական դիրքորոշում եւ կեցուածք ունի Մայր Եկեղեցին՝ նուիրապետական իր բոլոր Աթոռներով։

Վերջին հարիւրամեակում Հայ Առաքելական Եկեղեցին որեւէ պաշտօնական արձանագրութիւն չի կազմել այս խնդրի մասին։ Այս հարցի վերաբերեալ վերջերս որոշ պարզութիւն մտցրեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովը, որ տեղի ունեցաւ Մոսկուայում 2015 թուականին Փետրուարի 2-3-ին։ Ժողովն ընդունեց «Հաւատարիմների՝ Սուրբ Հաղորդութեան մասնակցութեան մասին» փաստաթուղթը, որն անկասկած պէտք է մեծ ազդեցութիւն ունենայ ժամանակակից ու ապագայ եկեղեցական կեանքի ձեւաւորման վրայ։ Նշուած փաստաթուղթը խորհրդային ժամանակաշրջանից ժառանգուած նման շատ խնդիրներին լուծումներ է տալիս։ Ժողովն ամրագրեց այն ընդհանուր որոշումը, որ իւրաքանչիւր բարեպաշտ կին պէտք է ձեռնպահ մնայ Սուրբ Հաղորդութիւնից՝ իր անմաքրութեան օրերին։ Որոշ քահանաներ ունէին այլ տեսակէտ, որն ունի իր որոշակի հիմքերը, բայց աւելի ճիշդ համարուեց ընդունել այն աւանդոյթը, որն արդէն ընդունուած էր հին կանոնագրութեամբ ու մեծամասնութեամբ։ Հազիւ թէ որեւէ մէկը վարում է այնպիսի հոգեւոր կեանք, որ Սուրբ Հաղորդութիւնից մի քանի օր ձեռնպահ մնալը

կարող է վնասել իր հոգուն։ Ընդհակառակը, ինքնակառավարումն ու զսպումը բարեպաշտ կնոջն աւելի են նախապատրաստում, քան եթէ նա ցանկանում է հաղորդուել այն օրերին, երբ քրիստոնեայ կանանց մեծ մասը չի համարձակւում մերձենալ Սուրբ Հաղորդութեանը։ Ըստ ժամանակակից սովորութեան՝ դաշտանի օրերին եկեղեցի մտնելը թոյլատրւում է՝ չնայած նրան, որ եկեղեցու պատմութեան ընթացքում եղել է մի շրջան, երբ կանայք դաշտանի ժամանակ առհասարակ եկեղեցի չէին մտնում։ Հիմա այս աւանդոյթը չի պահպանուել, սակայն եկեղեցին, ի դէմս իր առաջնորդների, կոչ է անում ձեռնպահ մնալ այդ օրերին Սուրբ Հաղորդութեանը մերձենալուց, եթէ, իհարկէ, դա պայմանաւորուած չէ երկարատեւ ծանր հիւանդութեամբ։

Ներկայացնենք մի հատուած Համայն Աֆրիկայի պապ, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Շենուդա Գ. հայրապետի գրքից՝ կանանց դաշտանի վերաբերեալ. «Հարցում. «Կարո՞ղ է դաշտանի մէջ եղող կինը հաղորդուել։ Եւ եթէ կարելի չէ, ինչո՞ւ. մինչդեռ այս մէկը բնական է, եւ կինը յանցանք չունի սրա մէջ։ Եւ եթէ տանը մնաց, նրան կարելի՞ է, որ աղօթի եւ կարդայ Սուրբ Գիրք եւ մասնաւոր պաշտամունքի վերաբերող բաները»։ Պատասխան. «Տանը ուզածին պէս կարող է Աստծուն պաշտել, իսկ եկեղեցում կամ դրանից դուրս հաղորդուել, այս մէկն անկարելի է։ Մարդ արարածը չի՛ կարող հաղորդուել, եթէ իր մարմնից արիւն է ծորում, լինի տղամարդու կամ կնոջ պարագային, նաեւ սեռական յարաբերութիւնից առաջացած որեւէ ծորման պարագային, եւ այս մէկը Սուրբ Գրքում յստակ է։ Սուրբգրային հատուածներն ու եկեղեցական կանոնները բազմաթիւ են, որոնք այս մէկը կը փաստեն, որ մարդկանց մտքում այլեւս բացայայտ է դարձել»։ Թերեւս ոմանք կը հարցնեն. «Սակայն տղամարդկանց հետ այսպէս չեն վարւում, որովհետեւ եթէ նրանք երազախաբութիւն ունենան կամ նրանց մարմնից որեւէ բան ծորայ, եկեղեցի են մտնում, եւ ոչ ոք չի արգելում նրանց, եւ եկեղեցու կանոնները չեն արգելում նրանց, հետեւաբար ինչո՞ւ միայն կինը»։

*Պատասխանն այն է, թէ տղամարդուն արտօնւում է եկեղեցի մտնել մարմնային մաքրութիւնից յետոյ միայն, սակայն նրան չի արտօնւում որ հաղորդուի: Հակառակ նրան, որ հիմնական մի տարբերութիւն կայ տղամարդու եւ կնոջ մարմնային ծորման միջեւ: Արդարեւ, տղամարդու պարագային անակնկալօրէն է պատահում եւ կարճ ժամանակով, իսկ կնոջ պարագային մի քանի օրեր է տեւում: Այստեղ հաւասարութիւն կարող է լինել, որ եթէ տղամարդու մօտ էլ շարունակուի, նրան եւս կ'արգելուի եկեղեցի մտնել: Մնում է այս հարցումը. «Ո՞րն է կնոջ մեղքը, եթէ այս մէկը բնական երեւոյթ է»: Պատասխան. «Ոչ մի յանցանք, սակայն Աստուած մեզանից ուզում է, որ միշտ յիշենք սկզբնական մեղքը: Եթէ յիշեցինք սկզբնական մեղքը, կը զգանք զոհագործման արժէքը, որ մեր փոխարէն վճարուած է: Մեղքի վարձատրութիւնը մահն է: Թէեւ Քրիստոս մեր փոխարէն մեռաւ, սակայն մի նշան թողեց յիշելու համար. տղամարդուն՝ «**երեսիդ քրտինքով պիտի ուտես քո հացը**» (Ծննդ. 3, 19), եւ կնոջը՝ «**ցաւերով զաւակ ծնես**» (Ծննդ. 3, 16): Յղիութեան ժամանակ կնոջ դաշտանը կտրւում է եւ սկզբնական մեղքը յիշւում է յղիութեան, ապա ծննդաբերութեան ցաւերով, իսկ յղի չեղած ժամանակ սկզբնական մեղքը յիշւում է դաշտանով, եւ անցնում է բոլոր սրբութիւններից զրկուելու արգելքների միջով, որոնք յաջորդում են դաշտանին, այլ ոչ թէ միայն հաղորդուելն ու եկեղեցի մտնելը: Իսկ տղամարդը սկզբնական մեղքը յիշում է իր կեանքի բոլոր օրերի ընթացքում իր ապրուստն ապահովելու համար ունեցած յոգնութիւնների միջոցով: Յիշելը նպատակն է, իսկ միջոցը տարբերւում է... Երանի թէ այս մէկը մեզ հոգեւոր օգուտի առաջնորդի, եւ ոչ թէ տրտնջալու...»*[1]:

Դաւիթ Ալաւկայ Որդին նշում է, թէ դաշտանը պէտք չէ պիղծ բան համարել, սակայն կինն այդ ժամանակ պէտք է իրեն հեռու պահի քահանաներին ու վանականներին սպասաւորելուց, զատուի, չմտնի

1 Pope Shenouda III, "Restricting Women from Holy Communion." http://blognews.am/arm/news/115864/karox-e-ardyoq-kiny-dashtani-orerin-ekexeci-aycelel.html (ստ 11/04/2017):

եկեղեցի, չգնայ խաչն ու քահանաների աջը համբուրելու, բայց եթէ ստիպուած է, տանը թող իր ընտանիքին սպասաւորի։ Նա իր «Կանոնական Օրինադրութիւն»-ում գրում է. «Դաշտանը պէտք չէ պիղծ բան համարել, քանի որ բնութիւնից է, իսկ քանի որ բնութիւնն ամբողջովին Աստծու ստեղծածն է, ուրեմն եւ նրա ստեղծածների մէջ արատաւորում չկայ։ Եւ այսպէս, սրանով է սնւում մանուկը մօր արգանդում ու սրանով է ապրում. նաեւ ծնուելուց յետոյ՝ մինչեւ կրծքից կտրուելը։ Կանացի բնութիւնից է, որ ամիս առ ամիս նրա մէջ աւելացած արիւնը մարմնից դուրս է հոսում օրուայ ընթացքում։ Երբ կինը յղիանում է, եւ մանուկը մօր արգանդում կենդանութիւն է ստանում, մանկամայրը ամիս առ ամիս արեան դուրս հոսելու կարիքը չունի, քանի որ նրանով է սնւում մանուկը մօր որովայնում։ Այս պատճառով է յղիութեան ժամանակ դադարում արիւնը։ Նոյնպէս եւ ծննդաբերելուց յետոյ, քանի դեռ մանուկը ծծկեր է, մայրը չի ունենում դաշտան, որովհետեւ արիւնը փողի միջով իջնում է մօր ստինքների մէջ ու փոխւում սպիտակ կաթի, որով սնւում է մանուկը։ Երբ մանկանը կրծքից կտրում են, արիւնը վերադառնում է իր նախկին բնոյթին։ Երբ հարուստ տան կանայք նորածիններին տալիս են ստնտուի եւ իրենք մանկանց կաթ չեն տալիս, ապա արիւնը, ըստ բնութեան, շուտափոյթ դուրս է հոսում... Եթէ մէկն արհամարհի աստուածային պատուիրանը եւ այդ (դաշտանի) ժամանակ մերձենայ կնոջը, մահապարտ է ու պոռնիկների շարքին է դասւում՝ լինի կին, թէ տղամարդ։ Եթէ կինը թաքցնի իր հիւանդութիւնը եւ չյայտնի ամուսնուն՝ կրկնակի պատիժ կը կրի ու կ՚անիծուի, իսկ տղամարդն անմեղ է։ Իսկ եթէ տղամարդը, կնոջ կամքին հակառակ, բռնանայ, շնացող կը համարուի, իսկ կինն անմեղ է։ Բայց կինը դաշտանի ժամանակ պէտք է իրեն հեռու պահի քահանաներին ու վանականներին սպասաւորելուց, զատուի, չմտնի եկեղեցի, չգնայ խաչն ու քահանաների աջը համբուրելու, բայց եթէ ստիպուած է,

տանը թող իր ընտանիքին սպասաւորի»[1]*:*

Ուղղափառ եկեղեցիները հիմնւում են Որոգինեսի աշակերտ Դիոնիսիոս արքեպիսկոպոս Աղեքսանդրացու[2] *(3-րդ դար) երկրորդ կանոնի վրայ, որում նշուած են կանանց ծիսական անմաքրութեան ընթացքում սահմանափակումների մասին. «Գրում եմ պարզ լեզուով, որպէսզի հասկանալի լինի: Կինն իր ճգնաժամային օրերին, ձեռնարկելով առողջապահական բոլոր միջոցները, կարող է մտնել տաճար, կարող է համբուրել սրբապատկերները, կարող է օծուել, կարող է խոստովանուել, կարող է խմել սուրբ ջուրը եւ ընդունել օրհնուած հացը: Մկրտուել ու հաղորդուել պէտք չէ, եթէ կարող է սպասել մինչեւ ճգնաժամային օրերի լրիւ աւարտը: Իսկ եթէ կայ հրատապ անհրաժեշտութիւն, ապա նա կարող է նաեւ մկրտուել ու ստանալ Սուրբ Հաղորդութիւն: Պէտք է նշել, թէ իւրաքանչիւր մարդ, ով ունի բաց արիւնահոսութիւն, չի կարող հաղորդուել ու մկրտուել (բացառութեամբ այն դէպքերի, երբ կայ կեանքի վտանգ):*

Դիոնիսիոս Աղեքսանդրացու կանոնադրութիւնը թոյլատրում է կանանց մասնակցել եկեղեցու սուրբ խորհուրդներին կամ շօշափել սրբութիւնները (ծանր ու մահացու հիւանդութեան դէպքում

1 Դաւիթ Ալաւկա Որդի, Կանոնագիրք, «Դաշտան ունեցող կանանց մասին», Երեւան, 2010, էջ 81-83:

2 Վարդան Այգեկցի, «Խրատներ», Գանձասար Աստուածաբանական կենտրոն, Երեւան, 1999, էջ 113:
12-13-րդ դարերի հայ աստուածաբան, մատենագիր, քարոզիչ, հայ նշանաւոր վարդապետ Վարդան Այգեկցին իր՝ «Կռապաշտութեան եւ կախարդութեան մասին» խրատներում յիշում է Դիոնիսիոս Աղեքսանդրացուն՝ պատմելով, թէ Աղեքսանդրիա քաղաքում կար մի մարդ, որը կուռքերի քահանայ էր ու նրանց չար օրէնքների գիտակ: Սակայն հաւատալով ճշմարիտ Աստծուն՝ հրաժարուեց կուռքերից ու դարձաւ եպիսկոպոս: Նրա անունն էր Դիոնիսիոս (ոչ թէ Աթենացին, այլ Աղեքսանդրացին): Իսկ չաստուածների քահանաները՝ նրա նախկին գործընկերները, նախատելով գրում էին նրան եւ ասում. «Ինչո՞ւ թողեցիր քո հարազատ չաստուածներին»: Իսկ նա պատասխանեց նրանց. «Դուք լաւ գիտէք, թէ սուտ է կռապաշտութիւնը, լի ամէն տեսակ աղտեղութիւններով. եւ մարդկանց որդիներին չկայ դրանից ոչ մի օգուտ, այլ միայն անբաւ կորուստ… Ասացէք ինձ, ի՞նչ աստուածպաշտութիւն են այսպիսի չար գործերը, եւ կամ ինչո՞ւ էք պարտադրում ինձ կրկին պաշտելու նրանց, որոնցից ինձ ազատեց Քրիստոս Իր գալստեամբ»:

թոյլատրւում է նաեւ հաղորդուել, իսկ անհրաժեշտութեան դէպքում, կարելի է մկրտուել՝ անկախ կնոջ ամսականներից)։ Իսկ աղօթել, ընթերցել Աստուծաշունչը եւ դիմել Աստծուն, կարող է ցանկացած վիճակում։ Սբ. Դիոնիսիոս Աղեքսանդրացին 2-րդ կանոնում նշում է. «Կանանց մասին, որ գտնւում են մաքրուելու շրջանում, աւելորդ եմ համարում հարցնել, թէ արդեօ՞ք թոյլատրելի է նրանց այդ վիճակում Աստծու տունը մտնել։ Քանի որ չեմ կարծում, թէ նրանք, եթէ հաւատարիմ են ու բարեպաշտ, այդ վիճակում համարձակութիւն ունենան մերձենալու Սուրբ Սեղանին, կամ էլ դիպչել Քրիստոսի Մարմնին եւ Արեանը, քանի որ նաեւ տասներկու տարուայ արիւնահոսութիւն ունեցող կինը բուժուելու համար դիպաւ ոչ թէ Յիսուսի, այլ միայն Նրա զգեստի քղանցքին։ Ինչ վիճակում էլ որ մարդ գտնուի, եւ անկախ իր դիրքից՝ աղօթելը, Տիրոջը յիշատակելը եւ օգնութիւն խնդրելը չեն արգելւում։ Բայց մերձենալ Սրբութիւն Սրբոցին, թող արգելուի նրան, ով ոչ այնքան մաքուր է հոգով ու մարմնով»[1]։ Տիմոթէոս արքեպիսկոպոս Աղեքսանդրացու այն հարցին, թէ կարո՞ղ է արդեօք կինը այդ օրերին մերձենալ Սուրբ Խորհուրդներին, կանոնի հեղինակը պատասխանում է. «Չի կարող, մինչեւ որ նա մաքրուի»[2]։

Հաղորդուելու արգելքի պատճառներից մէկն էլ եկեղեցում արիւնահոսութեան բացառումն է։ Եկեղեցու աւանդոյթի համաձայն՝ ընդհանրապէս ընդունուած է, որ քրիստոնէական տաճարում, ուր մատուցւում է անարիւն Պատարագ, որեւէ արեան հոսում չլինի։ Ցանկացած արիւնահոսող վէրք նոյնպէս խոչընդոտ է հաղորդուելուն, իհարկէ, եթէ այն վտանգ չէ կեանքի համար եւ արդիւնք չէ երկարատեւ հիւանդութեան։ Այնպէս որ, խնդիրը միայն կնոջ մէջ չէ, այլ քրիստոնէական տաճարում արիւն թափելու անթոյլատրելիութեան՝ Փրկչի անարիւն Պատարագի հանդէպ մեր ակնածանքի ու խորին

1 Canonical Letter of Dionisios of Alexandria in The Nicene and Post Nicene Fathers (henceforth NPNF) (Grand Rapids, Mich.: Eerdmanns, 1956), p. 600.

2 Canonical Answers of Timothy of Alexandria, in NPNF, 14, p. 613.

յարգանքի։ Գոյութիւն ունի բազմադարեայ աւանդոյթ, երբ եկեղեցում հացի ու գինու փոխակերպութիւնն օգտագործւում էր որպէս անարիւն զոհաբերութիւն։ «Անարիւն Պատարագ»-ը շեշտւում է, քանի որ Քրիստոսի Արիւնը ներկայացուած է գինու տեսքով։ Իսկ տաճարում որեւէ մարդու արիւնահեղութիւն նշանակում էր միայն մի բան՝ սրբավայրի պղծում, որն այնուհետեւ պէտք էր կրկին սրբացնել։ Նոյնիսկ եթէ տղամարդն ունի վէրքի արիւնահոսութիւն, անհրաժեշտ է դուրս գալ տաճարից եւ բուժել այդ վէրքը։ Իսկ կանանց արգելւում է եկեղեցի մտնել, քանի որ տաճարում հնարաւոր է արեան աղտոտում։ Սակայն առողջապահական յեղափոխութիւնը ներկայումս կանանց համար ստեղծել է սանիտարական բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք թոյլ են տալիս վերացնելու արեան հոսքն ու հետքը։ Դա է պատճառը, որ այսօր իւրաքանչիւր կին կարող է մտնել եկեղեցի եւ աղօթել ցանկացած ժամանակ։ Ծիսակատարութիւնների ընթացքում մարդը սրբագործւում է, ճաշակում է Քրիստոսի կենդանի ու կենդանարար Արիւնն ու Մարմինը՝ Փրկչի Արիւնը խառնելով իր արեան հետ։ Հետեւաբար, այս օրերին պէտք է լինել շատ աւելի զգայուն ու պատասխանատու սեփական անձի նկատմամբ, որպէսզի խուսափել մեր մէջ գտնուող սրբութեան պղծումից։ Այս հիման վրայ մենք չենք կարող թոյլ տալ արեան որեւէ հոսք, քանի որ մեր արեան մէջ պարունակւում է Քրիստոսի Արեան կաթիլը։ Ինչպէս նշուեց, ժամանակակից առողջապահական յարմարութիւնները գործնականում բացառում են արեան արտահոսքը։ Արդի կենցաղի նոր պայմանները ստիպում են չափազանց շատ ուշադրութիւն չդարձնել այս հարցին։ Ամէն դէպքում միշտ էլ աւելի լաւ է նախապէս դիմել քահանային, խնդրել նրա օրհնութիւնը ու հետեւել նրա խորհրդին։

Սուրբ Պատարագի ընթացքում մարմնի եւ հոգու մաքրութեան անհրաժեշտութեան մասին մեզ յիշեցնում է նաեւ քահանայի ձեռքերի լուացումը զգեստաւորումից յետոյ ու յատկապէս օրհներգի ժամանակ։ Սբ. Կիւրեղ Երուսաղեմացին ասում է, թէ սա կատարւում

է «ոչ թէ յանուն մարմնական պղծութեան..., ոչ թէ այս պատճառի համար, որովհետեւ մարմնական պղծութեամբ մենք չենք մտնում եկեղեցի։ Բայց լուացումը նշանակում է, թէ ձեզ անհրաժեշտ է մաքրուել բոլոր մեղքերից եւ անօրէնութիւններից»[1]։

Կանայք յաճախ հարցնում են. «Կարո՞ղ եմ արդեօք աղօթել դաշտանի ընթացքում»։ Այստեղ որեւէ սահմանափակումներ չկան, ընդհակառակը, վարդապետները պնդում են, թէ եթէ կինն իր ճգնաժամային օրերին չի աղօթում, ապա դրանով իսկ ակամայ ընդունում է անմաքուր ոգի։ Այնպէս որ, աղօթքին ոչինչ չի կարող խանգարել։ Եթէ կանանց դաշտանի շրջանին հաղորդուելու հնարաւորութեանը մենք նայենք հէնց ճգնաւոր ու սուրբ կանանց աչքերով, ապա կը տեսնենք զարմանալի մի իրավիճակ։ Որքան աւելի է բարեպաշտ կինը Սուրբ Հոգով լցւում ու լուսաւորւում, այնքան քիչ է նա եկեղեցու ներսում «պայքարում իր իրաւունքների համար», եւ այսպիսով արժանանում է աւելի մեծ պատուի ու յարգանքի։ Հետաքրքրական է նշել, որ սրբակեաց կանանցից ոչ մէկը դաշտանի ընթացքում հաղորդուելու անհրաժեշտութեան մասին աշխատութիւններ չի թողել. նրանցից ոչ մէկը չի ձգտել դառնալ «քահանայ» կամ էլ պարտադրել դառնալու մասնակից եկեղեցական ժողովներին։ Զէ՞ որ տարբեր ժամանակներում, տարբեր սոցիալական ու մշակութային պայմաններում, գոյութիւն ունէին հազարաւոր խստակեաց, բարեպաշտ ու սուրբ կանայք, որոնք խօսում էին տարբեր լեզուներով եւ ունեցել են տարբեր ապրելակերպ։ Որտեղից է գալիս այս լիարժէք եւ անաչառ միաձայնութիւնը։ Այստեղ, իրօք, կարող է լինել միայն մէկ համոզիչ պատասխան։ Սուրբ Հոգին թոյլ չի տուել նրանց ընկնելու ֆէմինիստական նման գայթակղութիւնների մէջ։ Սբ. Կոյս Մարիամ Աստուածածինն էլ ենթարկւում էր «ծիսական մաքրութեան» պահանջներին։ Ըստ Յակոբոսի պարականոն

1 Поученіе тайноводственное пятое. Иже во святыхъ отца нашего Кирилла, архіепископа Іерусалимскаго, огласительныя и тайноводственныя поученія. Переводъ съ греческаго. Москва, 1900.

աւետարանի տեքստի (2-րդ դար), որը նոյնիսկ ծառայել է որպէս աղբիւր մի շարք եկեղեցական մարեմական տօներին[1], երանելի Կոյս Մարիամն ապրում էր տաճարում երկուսից մինչեւ տասներկու տարեկան դառնալու հասակը, իսկ երբ Յովսէփի հետ նշանուեց, ապա ուղարկուեց ապրելու նրա տանը, ինչպէս գրուած է. «Որպէսզի նա չպղծի Տիրոջ սրբավայրը»[2]:

*Որպէս մեղքի հետեւանք՝ Աստուած ասաց կնոջը. «**Անչափ պիտի բազմացնեմ քո ցաւերն ու քո հառաչանքները: Ցաւերով երեխաներ պիտի ծնես**» (Ծնն. 3, 16): Ամէն ինչ, որ վերաբերում է արեան բնական մաքրութեանը ծննդաբերութեան ժամանակ եւ ծննդաբերութիւնից յետոյ, կարող է դիտուել որպէս մի տեսակ «պատիժ», ապաշխարանք կամ հատուցում, որի ընթացքում ոմանք զուրկ են մնում Սուրբ Հաղորդութիւնից: Կարելի է վիճել, թէ արդեո՞ք ճիշդ է սուրբգրային նման մեկնաբանութիւնը, եւ որքանո՞վ է այն արտացոլում Եկեղեցու կարծիքը: Բայց այս տեսակէտի գոյութիւնը ցոյց է տալիս, թէ առաջին հայեացքից հնացած համարուող մաքրութեան վերաբերեալ կանոնները կարող են նաեւ պարունակել առողջ աստուածաբանական արժէք: Գուցէ մէկն առարկի՝ ասելով, թէ մենք՝ քրիստոնեաներս, ազատ ենք ամէն անէծքից, քանի որ «**Քրիստոս մեզ վերստին գնեց օրէնքի անէծքից՝ անէծք դառնալով մեզ համար**» (Գաղ. 3, 13): Ճշմարիտ է, բայց սուրբգրային նմանատիպ հատուածները ոչ միշտ են մեկնաբանւում բառացիօրէն: Տղամարդիկ դեռ երեսի քրտինքով են իրենց հացն ուտում մինչեւ հող դառնալը, որից ստեղծուեցին (Ծնն. 3, 19), իսկ կանայք դեռ ցաւերի մէջ են երեխայ ծնում: Ճշմարիտ է, թէ Քրիստոս յաղթեց մահուանը, ու մեզ շնորհեց յաւիտենական կեանք (տե՛ս Հռոմ. 6, 23), սակայն ոչ ոք կոչ չի անում հնացած համարել ու չեղեալ յայտարարել յուղարկաւորու-*

1 Մարեմական - Սուրբ Մարիամ Աստուածամօրը նուիրուած:

2 Протоевангелие Иакова и Новый Завет, (VIII, 2),
M. James, “The Apocryphal New Testament” (Oxford 1926), 42. Cp. Taft, “Women” p. 47.

թեան ծիսակատարութիւնը: Ճշմարիտ է, թէ Քրիստոսով բոլորը մէկ են՝ այլեւս ո՛չ հրեայ կայ եւ ո՛չ յոյն, ո՛չ ծառայ կայ եւ ո՛չ ազատ, ո՛չ արու կայ եւ ո՛չ էգ, որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք Քրիստոս Յիսուսով (տե՛ս Կող. 3, 28): Սակայն Եկեղեցին պնդում է, թէ ամուսնութիւնը կարող է լինել միայն տղամարդու եւ կնոջ միջեւ: Իսկ ո՞վ կարող է ժխտել երկրի վրայ ապրող ազգերի զանազանութիւնը: Եկեղեցին երկրի վրայ փրկարար տապան է նրանց համար, ովքեր դեռ չեն հասել, բայց ջանում են հասնել սրբութեան ու կատարելութեան: Եկեղեցին կողմ է յաճախակի հաղորդուելուն, քանի որ սա՛ է հետեւողական եւ գերիշխող հայրաբանական ուսմունքը: Բայց նաեւ պնդում է, թէ հաղորդուելուց առաջ պէտք է պատշաճ ծոմով ու յատկապէս մտքի եւ մարմնի մաքրութեամբ պատրաստուել: Մտքի մաքրութիւնն ու մարմնի սրբութիւնն հաւասարապէս կարեւոր են, որոնք հետեւողականապէս միշտ նշւում են սուրբ Հայրերի խրատներում: Պէտք է նշել, թէ այսօր այլեւս չկան արգելքներ, որոնց դէպքում կինը չի կարող եկեղեցի մտնել ճգնաժամային օրերին: Սակայն ուղղափառ աստուածաբաններն այս հարցի վերաբերեալ չեն փոխել իրենց տեսակէտը: Կանոնները, օրէնքները եւ վարդապետութիւնները մնում են անփոփոխ ու խստութեամբ կատարւում են կրօնական ողջ ժամանակաշրջանի ընթացքում:

Հոգեւոր կեանքի հիմքը հնազանդութիւնն է: Երբ մարդ հաւատքի է գալիս, սկսում է ապրել եկեղեցական կեանքով, մասնակցել եկեղեցական խորհուրդներին, ու նրա համար բացւում է մի նոր հոգեւոր աշխարհ: Եւ յաճախ մարդն ակամայ փորձում է եկեղեցու կեանքը ընկալել, նկարագրել ու շարունակել ապրել իրեն ծանօթ հասկացութիւններով, փաստարկներով, սկզբունքներով, սովորութիւններով եւ այլն... Բնական է, թէ սկզբում շատ բաներ կարող են թուալ սխալ, անտրամաբանական, հակառակ ողջախոհութեան, հնացած, եւ այլն... Բայց եթէ ինքներս չենք փոխւում, այլ փորձում ենք «շտկել» եկեղեցու կեանքը, ապա իսկական քրիստոնեայ դառնալու հաւանականութիւնը շատ քիչ է: Այո, այս խնդիրը (ինչպէս

եւ շատ այլ նմանատիպ հարցեր) պէտք է քննարկել ու լուծել, քանի որ տարբեր կարծիքներ կան։ Գուցէ այս հարցը նորից բարձրանայ որեւէ հերթական եկեղեցական ժողովի ժամանակ։ Բայց քանի որ մինչ օրս չկայ յստակ նոր կանոնական որոշում այս մասին, ուրեմն պէտք է հաւատարիմ մնալ առաւել տարածուած աւանդոյթին ու նախկին որոշումներին։ Զաքարիա վարդապետ Բաղումեանն իր «100 հարց Ս. Հաղորդութեան մասին» գրքում, ամփոփելով դաշտանի ժամանակ կնոջ հաղորդուելու հարցը, գրում է. «Եթէ ամփոփենք վերոգրեալը, ապա պիտի արձանագրենք, որ սուրբգրային ու կանոնական առումով կինը դաշտանի ժամանակ չի կարող հաղորդուել։ Քանի դեռ նոր կանոնական որոշում կամ հայրապետական կոնդակ չկայ այս մասին, ուժի մէջ են նախկին որոշումները։ Ուստի կանայք այս հարցում պէտք է ըմբռնումով մօտենան խնդրին եւ երբէք դրա մէջ չտեսնեն որեւէ խտրականութիւն։ Մեր խորհուրդն է, որ եթէ դաշտանի մէջ էք ու խիստ կարիք ունէք հաղորդուելու, ապա նախապէս դիմէք ձեր հոգեւոր հօրը կամ պատարագիչ հոգեւորականին, եւ յետոյ Ս. Հաղորդութիւն ստացէք»[1]։

Ուղղափառ եկեղեցու անդամները պահպանում են դաշտանի ընթացքում Ս. Հաղորդութիւնից ձեռնպահ լինելու հին սովորութիւնը։ Ուղղափառ քրիստոնէական երկրներում պատմութեան ընթացքում սա եղել է բաւականին տարածուած սովորութիւն։ Բայց Եւրոպայում եւ Ամերիկայում կանանց զգալի մեծամասնութիւնը անհրաժեշտութիւն չի տեսնում պահելու այս հնագոյն կանոնը։ Ի դէպ, եկեղեցում շատ կանայք նոյնիսկ անտեղեակ են այս հին սովորութեանը, որովհետեւ այն դիտւում է պարզապէս որպէս «յետամնաց կանանց» հէքիաթ։ Արեւմուտքի երկրներում ուղղափառ քրիստոնեաներին նոյնիսկ խորհուրդ են տալիս անտեսել այս սովորութիւնը (ինչպէս նաեւ այլ եկեղեցական աւանդոյթներ), քանի որ այն կարող է դիտուել որպէս արդարացում՝ չմասնակցելու Ս. Հաղորդութեանը, եւ, ըստ էութեան,

1 Զաքարիա վարդապետ Բաղումեան, «100 հարց Ս. Հաղորդութեան մասին», Էջմիածին, 2014, էջ 53։

կարող է յուսալքել աշխարհականների մասնակցութիւնն ու ներգրաւուածութիւնը Սուրբ Պատարագին։ Եկեղեցու հովիւները պէտք է ամենայն նախանձախնդրութեամբ հսկեն, պահեն ու պահպանեն մեր դարաւոր սրբազան Աւանդութիւնը։ Իհարկէ, ոմանք էլ կարծում են, թէ այս խնդիրը խտրականութիւն է առաջացնում ու վիրաւորում մեր անձնասիրութիւնը։ Բայց դա չէ՞ արդեօք նպատակը հոգեւոր կեանքի՝ ձեռք բերել խոնարհութիւն ու հնազանդութիւն։ Սիրելի՛ կանայք, հաւատացէ՛ք, որ դուք կը ստանաք ոչ թէ պակաս, այլ աւելի մեծ շնորհ՝ հաշտուելով Եկեղեցու կանոնների ու քահանայի կարծիքի հետ, որին Աստուած ուղարկեց այս պահին հոգալու եւ հովուելու ձեր հոգեւոր կեանքը։ Դժուար է պատկերացնել դաշտանի ընթացքում կնոջ անկեղծ խոստովանութիւնը, ով գիտէ, թէ քահանաների մեծ մասն այսօր, անկասկած, հնարաւոր չի համարում այդ վիճակում խոստովանել ու հաղորդուել, ու դրանով իսկ գիտակցաբար թաքցնել այդ փաստը քահանայից (կամ խոստովանահօրից)՝ մերձենալով Սուրբ Հաղորդութեանը։ Իւրաքանչիւր ուղղափառ քրիստոնեայի համար Աստուածաշնչի, սրբազան Աւանդութեան ու եկեղեցական ժողովների կանոնական որոշումներն արդէն ամբողջովին ու բավարար իրաւական հիմք են հանդիսանում։ Իսկ նշուած որոշ հեղինակաւոր Հայրերի կարծիքներն այս խնդրի վերաբերեալ եղել են մասնաւոր կարծիքի օրինակ։ Եկեղեցու Հայրերից շատերն ունէին զանազան կարծիքներ զանազան հարցերի շուրջ, բայց դրանք բոլորը չդարձան Եկեղեցու կանոնական հիմքը։ Առաքելական կանոնները յետագայում ճշգրտուել են, սրբագրուել ու նորից հաստատուել յետագայ եկեղեցական ժողովներով։ Այնպէս որ, սիրելի՛ կանայք եւ աղջիկներ, չարժէ ուղղել «հին» կամ «սխալ» կրօնական աւանդոյթները։ Աւելի լաւ է փորձէք դրանց միջոցով ձեռք բերել հոգեւոր շահը, եւ, անշուշտ, կ՚ունենաք շատ աւելին։

«ԿԻՆԸ ԹՈՂ ԵՐԿՆՉԻ ԻՐ ՄԱՐԴՈՒՅ[1]»

Ֆէմինիստուհիներին այս խօսքը շատ է զայրացնում, իսկ որոշ տղամարդիկ, հեղինակութիւն ձեռք բերելու համար եւ անկարողութիւնից տառապելով, այս խօսքի իրենց սխալ ընկալումով հակադրւում են ընտանիքում ինքնահաստատութիւն ձեռք բերելու համար: Յաճախ են այս խօսքերն ընկալւում որպէս ամուսնու բռնատիրութեան հաւանութիւն կամ պատժամիջոց ընտանիքում: Բայց շատերը մոռանում են, թէ այս արտայայտութիւնը կտրուած է ընդհանուր իր համատեքստից, եւ միայն այդ պատճառով անհասկանալի է հնչում: Բայց ինչպէս տեսնում ենք, Պօղոս առաքեալն այստեղ ցոյց է տալիս քրիստոնէական ամուսնութեան սկզբունքը՝ պատմելով, թէ ինչպէ՛ս պէտք է լինի հաւատացեալ ամուսինների իսկական ամուսնութիւնը: Առաքեալը մինչ այդ եւ՛ տղամարդկանց, եւ՛ կանանց հաւասարապէս կոչ է արել փոխադարձ պատասխանատուութեան: Կարելի՞ է արդեօք երջանիկ ընտանեկան յարաբերութիւններ կառուցել վախի վրայ: Սա հասկանալու համար պէտք է յիշել, թէ ի՞նչ է ասում Պօղոս առաքեալը եփեսացիներին ուղղուած նամակում՝ կարդալով 5-րդ գլխի ամբողջ հատուածը: Ինչո՞ւ պէտք է, որ կինը երկնչի իր ամուսնուց: Ըստ ուղղափառ աստուածաբանների՝ ամուսնուց երկնչելը չի նշանակում, թէ կինը պէտք է ահ ու դող զգայ իր ամուսնու նկատմամբ, այլ միայն այն, թէ պէտք է վախենայ իր ամուսնուն վիրաւորելուց, վախենայ նրա պատուին նախատինք լինելուց: Դա ոչ թէ ատելութեան կամ սարսափի անասնական վախ է, այլ սիրուց բխող պաշտպանական վախ: Այդպէս են, օրինակ, երեխաները վախենում վիրաւորել ու ցաւ

1 Տե՛ս 35-36-րդ էջի ծանօթագրութիւնը:

*պատճառել իրենց ծնողներին։ Տղամարդու եւ կնոջ ամուսնութեան յարաբերութիւնները Պօղոս առաքեալը համեմատում է սիրոյ այն միասնութեան հետ, որով կապուած են Քրիստոս եւ եկեղեցին։ Կան զուգահեռ երկու հիմնական կէտեր։ Մի կողմից, եկեղեցին ենթակայ է Քրիստոսին, ինչպէս որ կինը պէտք է ենթարկուի իր ամուսնուն, միւս կողմից, Քրիստոս այնքան է սիրում եկեղեցուն, որ Իր անձը նրա համար մահուան մատնեց։ Ամուսինն էլ պէտք է իր կնոջն այնպէս սիրի, որ պատրաստ լինի իր կեանքը տալու նրա համար։ Սուրբ Պսակի խորհրդի ընթացքում ընթերցւում է Պօղոս առաքեալի կողմից եփեսացիներին ուղղուած նամակից այն հատուածը (Եփես. 5, 22-33), որը շարադրում է Յիսուսի վարդապետութիւնը ամուսնութեան վերաբերեալ. «**Դուք էլ նոյնպէս ամէն մէկդ նո՛յնն արէք, որպէսզի իւրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը, եւ կինը թող երկնչի իր մարդուց**» (Եփես. 5, 33)։ Պարզ է դառնում, թէ խօսքը ոչ թէ հոգեւոր կամ ֆիզիկական բռնութեան պատճառած վախի մասին է, այլ ամուսնու հանդէպ սէր ու յարգանք տածելու, որը պէտք է արտահայտուի հնազանդութեամբ եւ ենթակայութեամբ։ Այնպէս որ, ոչ թէ պէտք է վախենալ ամուսնուց, այլ պէտք է վախենալ նրա հանդէպ տածած սեփական անարգանքից։ Սակայն ընտանեկան յարաբերութիւններում այդպիսի ըմբռնումը ոչ բոլորի համար կարող է լինել ակնյայտ ու հասկանալի։ Ստացւում է, թէ կինը պարտաւոր է յարգել ամուսնուն ու վախենայ վշտացնել կամ նուաստացնել նրան, իսկ ամուսինը պէտք չէ՞ նոյնն անի։ Իհարկէ, ընտանիքում յարգանքը միմեանց հանդէպ պէտք է փոխադարձ լինի։ Բայց ինչպէ՞ս է դա արտահայտւում ամուսնու կողմից։ Ինչո՞ւ է հնազանդուելու ու վախենալու պատուիրանը՝ որպէս ճշմարիտ ընտանեկան սիրոյ արտայայտութիւն, վերաբերում միայն կնոջը։ Այս հարցի բարդութիւնը բոլորովին նրա մէջ չէ, թէ կան ընտանիքներ, ուր կանայք աւելի խելացի են իրենց ամուսիններից։ Խելացի կնոջ համար պարզապէս աւելի հեշտ է հնազանդուել։ Դժուարութիւններն առաջանում են այն դէպքում, երբ կինն ունի շատ յամառ եւ անզիջող*

բնաւորութիւն, իսկ ամուսինը մեղմ է ու խոնարհ։ Այս իրավիճակում ամուսնուն լսելն ու յարգելը շատ աւելի բարդ է, թէեւ արտաքուստ այդ յարաբերութիւնները կարող են աւելի քան ապահով երեւալ։ Կնոջ համար ամուսնու հանդէպ յարգանքը կորցնելը վտանգ է, առանց որի սիրոյ յարաբերութիւնները դժուար են պահպանւում, իսկ ամուսնու համար վտանգ է կորցնել իր ընտանիքի պատասխանատուութեան զգացումը, առանց որի նա դադարում է լինել ընտանիքում կատարել իր դերը։ Այս անպատասխանատուութիւնը միշտ շատ ցաւալի է, քանի որ այն ցոյց է տալիս սէրը պահպանելու եւ ընտանիքը կառավարելու անկարողութիւնը։ Ամուսնուն սա սովորեցնելու լաւագոյն միջոցն է կնոջ հնազանդութիւնը։ Եթէ տղամարդը պէտք է վախենայ անպատասխանատուութիւնից, ի դէմս իր կնոջ, ապա կինը պէտք է վախենայ անկարող լինել սիրելուց, վախենայ այդ սէրը վիրաւորելու։ Յովհաննէս աստուածաբանն ասում է հետեւեալ խօսքերը. «***Սիրոյ մէջ երկիւղ չկայ, եւ կատարեալ սէրը հեռու է վանում երկիւղը, որովհետեւ երկիւղը տանջանքի ենթակայ է, եւ ով երկնչում է, կատարեալ չէ սիրոյ մէջ***» (Ա. Յովհ. 4, 18)։ Երբ Տէրն Իր մօտ կանչի կնոջը, Նա չի հարցնելու, թէ ինչպէ՞ս էր նա ենթարկւում կամ թէ որքա՞ն էր «երկնչում» իր ամուսնուց, այլ կը հարցնի, թէ «ինչպէ՞ս էր սիրում»։ Այստեղ որեւէ հակասութիւն չկայ, քանի որ Պօղոս առաքեալը խօսում էր այն միջոցների ու պայմանների մասին, որոնցով սէրը պահպանւում է եւ աճում։ Իսկ միջոցներն են հնազանդութիւնը, վստահութիւնը եւ պատասխանատուութիւնը։ Երբ մարդիկ հասնում են այսպիսի սիրոյ, սա հեռու է վանում երկիւղը։ Երբ մարդ սիրում է, իրօք, այս ամէնը դառնում են իր սիրոյ բնական արտայայտութիւնը։ Այսպիսի սիրոյ են ձգտում քրիստոնեաները, լաւ գիտակցելով, թէ դեռեւս «անկատար» են սիրոյ մէջ, եւ հետեւաբար, այսօր պէտք է հոգ տանել, պահպանել ու «վախենալ» կորցնելու այդ մեծագոյն շնորհը՝ սէրը։ «Կինը թող երկնչի իր մարդուց» նշանակում է, որ նա վախենում է իր ամուսնուն վիրաւորելուց, ցաւ պատճառելուց, վախենում է ոչնչացնել նրա սէրը։ Իսկ պէ՞տք է արդեօք, որ ամուսինը

*երկնչի իր կնոջից։ Ամուսինը պէտք է երկնչի Աստծուց, եւ միեւնոյն ժամանակ իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը (Եփես. 5, 33)։ Սա՛ է նուիրապետութիւնը, երբ ամուսինը երկնչում է Աստծուց, կինը երկնչում է ամուսնուց, իսկ երեխաները մեծարում ու պատուում են իրենց ծնողներին։ Երեխաները փրկւում են ծնողներին յարգելով ու պատուելով, կինը փրկւում է իր ամուսնուն հնազանդուելով, եւ ամուսինը փրկւում է Աստծուն հնազանդուելով։ Պօղոս առաքեալը, դիմելով բոլոր քրիստոնեաներին, ասում է. «**Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիւղով**» (Եփես. 5, 21)։ Ըստ էութեան, ամուսինը նոյնպէս պէտք է հնազանդ լինի ու Քրիստոսի երկիւղով երկնչի իր կնոջից, որպէսզի իր վարքով ու պահուածքով ոչ մի դէպքում չձանձրացնի, չվրդովեցնի ու չվիրաւորի նրան։ Ամուսինը պարտաւոր է հոգալ ու պահպանել ընտանեկան յարաբերութիւնների խաղաղութիւնն ու անվտանգութիւնը։ Սուրբ Հայրերը, երբ խօսում են Աստծու երկիւղի մասին, խրատում են մեզ այնպէս ապրել, որ մեր մեղքերով չվիրաւորենք Քրիստոսին։ Նոյն նմանութիւնը կարելի է բերել նաեւ տղամարդկանց եւ կանանց յարաբերութիւններում, քանի որ իրենց խորհրդաւոր ամուսնութեան միութիւնը պատկերում է Քրիստոսի եւ Եկեղեցու խորհրդաւոր միասնութիւնը։ Եւ այն իմաստով, որ եկեղեցին կազմում է Քրիստոսի խորհրդաւոր Մարմինը, մենք նայում ենք Քրիստոսին՝ որպէս Եկեղեցու գլխի, եւ կինը պէտք է տեսնի իր ամուսնուն՝ որպէս ընտանիքի գլխի։ Առաքեալը շարունակում է. «**Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ ինքն է Փրկիչը այդ մարմնի**» (Եփես. 5, 22-23)։ Ուրեմն, ամուսինը պէտք է լինի գլուխն իր կնոջն այնպէս, ինչպէս Քրիստոս գլուխն է Եկեղեցու։ Եւ այս առումով է, որ ընտանեկան յարաբերութիւնների նուիրապետութիւնը, ըստ առաքեալի, ընդմիշտ հաստատուած է։ Հետեւաբար, քրիստոնէական ընտանիքում աւելի մեծ պատասխանատուութիւն է կրում ամուսինը, եւ խօսքը պատասխանատուութեան մասին է, այլ ոչ թէ իրաւունք-*

ների։

Արդեօ՞ք Աստուած ուզում է, որ ամուսինը, որպէս տան գլուխ՝ ղեկավարի իր ընտանիքը, բայց միեւնոյն ժամանակ չենթարկուի Քրիստոսին։ Իհարկէ, ո՛չ։ Անտրամաբանական է, որ կինը կուրօրէն հնազանդուի տղամարդու այն կամքին, որը թելադրում է կնոջ հաւատի մերժումն ու խղճի խայթը։ Ամէն ամուսին, երբ անդրադառնում է հետեւեալ խօսքերին՝ ***«կինը թող երկնչի իր մարդուց»*** *կամ* ***«կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն»****, պէտք է փորձի հասկանալ, թէ սրանք միակողմանի հրահանգներ չեն՝ չկենտրոնանալով միայն կանանց ենթակայութեան վրայ, այլ պէտք է Աստծու կամքի լոյսի ներքոյ յստակեցնի իր ճշմարիտ դիրքն ընտանիքում։ Նշենք, թէ այս նոյն 5-րդ գլխում արդէն տղամարդուն վերաբերեալ կայ ոչ թէ մէկ, այլ երեք հրահանգ։ Տղամարդիկ պէտք է սիրեն իրենց կանանց՝* ***«իբրեւ իրենց մարմինները»****,* ***«ինչպէս իր անձը»****, եւ* ***«ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ Իր անձը մատնեց նրա համար»****։ Եթէ տղամարդն այդպէ՛ս վերաբերի իր կնոջը, ապա հանգիստ սրտով կարելի է երկնչել այդ ընտանիքի գլխից։ Քրիստոնէական ընտանիքն ընկալւում է որպէս փոքրիկ եկեղեցի։ Եւ գլխի այս հատուածում խօսքը, անկասկած, սիրոյ հնազանդութեան մասին է.* ***«Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, ... եւ ինչպէս եկեղեցին հնազանդւում է Քրիստոսին»*** *(Եփես. 5, 22. 24)։ Եթէ ամուսինը որեւէ հարցում արդարամիտ չէ, ապա ճիշդ կը լինի, Աստծուն վստահելով, աղօթել նրա համար, փնտռել ու լսել Տիրոջ կամքը, եւ հեզութեամբ ու նրբանկատօրէն բացատրել նրան ճշմարիտը եւ օգտակարը։ Կարելի է աղօթել միասին, խօսել եւ շրջապատել նրան սիրով ու հոգատարութեամբ։ Եւ եթէ կինն ունի Աստծու Հոգին, ապա նա ուշադիր կը լինի իր խօսքերին, կը լինի խոնարհ ու հնազանդ եւ, միեւնոյն ժամանակ, իրեն կը զգայ ոչ թէ որպէս ստրուկ, այլ իր ամուսնու օգնականը եւ ուղեկիցը։ Առաքեալի խօսքի հրահանգում՝ «կինը թող երկնչի իր մարդուց», «երկնչի» բառը ստրկական կամ պատժի վախ չէ, այլ թէ*

ինչ ենք մենք զգում, երբ մտածում ենք, որ յանկարծ չվիրաւորենք մեր սիրելի մարդուն մեր գործողութեամբ: Սա նոյնն է, ինչ որ կամաւոր հնազանդութիւնը: Դասական յունարէնով «երկնչի» (յունարէն φόβηται) բառը մի քանի իմաստ ունի, իսկ երբեմն էլ այն նշանակում է «յարգանք» կամ «խնամք»: Այն, որ «երկնչի» բառն իրականում ցոյց չի տալիս կնոջ ցածրակարգ լինելու հանգամանքը, երեւում է այն ամէնից, որ առաքեալն արդէն խօսում էր սիրոյ եւ ամուսնութեան կարեւորութեան մասին:

Կեանքում առկայ բոլոր դժուարութիւններն Աստծու հանդէպ սիրոյ պակասից են, ու մարդկանց միջեւ բոլոր խնդիրները նոյնպէս միմեանց հանդէպ սիրոյ պակասից են: Խօսելով կնոջ երկիւղի մասին՝ նշենք, թէ ամուսնու հանդէպ «երկիւղ ունենալ»-ն ու «սիրել»-ը նոյն բաներն են: Իրականում Աստծու հանդէպ երկիւղածութեան մասին կան սուրբգրային եզրեր, բայց մենք հասկանում ենք, թէ Աստծու վախը Նրա հանդէպ տածած մեր մեծագոյն սիրոյ արտայայտութիւնն է, մեր մեղքերի պատճառով Նրանից հեռանալու ու Նրան կորցնելու վախն է, Նրա կամքը չկատարելու եւ Նրան վշտացնելու վախն է: Եթէ ամուսին եւ կին, ինչպէս նաեւ ծնող ու զաւակ փոխյարաբերութիւնները դիտարկենք մարդկային յարաբերութիւնների տեսանկիւնից, ապա կը տեսնենք, թէ առողջ յարաբերութիւնների դէպքում մեր սիրելիի հանդէպ մենք սխալ չենք գործում ոչ թէ նրա կողմից պատժուելու վախից, այլ նրան ցաւ պատճառելու ու վշտացնելու վախից: Յիսուս ասում էր. ***«Ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ իմ մէջ»*** *(Յովհ. 14, 10): Նմանապէս, ամուսնու եւ կնոջ միջեւ փոխյարաբերութիւնները պէտք է ունենան նոյն հոգեւոր կապը եւ, իհարկէ, այս դէպքում անհնազանդութեան հարց չի առաջանայ: Աստուածաշունչը նաեւ աւելացնում է.* ***«Իմաստութեան սկիզբը երկիւղն է Տիրոջ հանդէպ, բարեմիտ են բոլոր նրանք, որ գործադրում են այն. նրա օրհնութիւնը կը մնայ յաւիտեանս յաւիտենից»*** *(Սաղմ. 110, 10):* ***«Տիրոջ երկիւղը խրատ է եւ իմաստութիւն, եւ փառքը ծագում է դրանից»*** *(Առակ. 15, 33):*

«Տիրոջ երկիւղը կեանք է մարդու համար. ով չունի այդ երկիւղը, մոլորուած շրջում է դոներին» (Առակ. 19, 23)։

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետը, մեկնաբանելով Պօղոս առաքեալի եփեսացիներին ուղղուած նամակը, գրում է. «Կինը երկրորդակարգ իշխանութիւն է, հետեւաբար պէտք չէ պահանջի հաւասարութիւն (ամուսնու հետ), քանի որ ղեկավար ունի. իսկ նա (ամուսինը) պէտք չէ ամբարտաւանութեամբ տեսնի նրան որպէս ենթարկուող, քանի որ իր մարմինն է, որովհետեւ եթէ գլուխն սկսի անտեսել իր մարմինը, ինքը նոյնպէս կը կորի։ Ենթարկուելու փոխարէն այն պէտք է ներդնի սէր։ Ինչպէս գլուխն է, այդպէս էլ մարմինը։ Մարմինը հնարաւորութիւն է տալիս գլխին՝ ծառայեցնելու ձեռքերը, ոտքերն ու բոլոր միւս անդամները, իսկ գլուխը հոգ է տանում մարմնին՝ նրան նուիրելով իր ամբողջ գիտակցութիւնը։ Չկայ ոչինչ աւելի լաւ, քան այսպիսի ամուսնութիւնը։ Բայց թերեւս կարող են հարցնել՝ ինչպիսի՞ սէր կարող է լինել այնտեղ, ուր կայ վախ։ Ըստ էութեան, ճիշդ այնտեղ է սէրը։ Ով վախենում է, նա էլ սիրում է։ Սիրելով նա երկնչում է գլխից եւ սիրում է որպէս անդամ, քանի որ գլուխը նոյնպէս ամբողջ մարմնի անդամներից մէկն է։ Դրա համար էլ նա ենթակայ է դարձնում նրան, եւ բարձրացնում է ամուսնուն, որպէսզի խաղաղութիւն լինի։ Որտեղ կայ հաւասարութիւն, այնտեղ չի կարող լինել խաղաղութիւն, լինի դա թէ՛ ժողովրդավարական կառավարութիւն, եւ թէ՛ բոլորը հրամաններ արձակեն. անհրաժեշտ է, որ լինի մէկ ղեկավարութիւն։ Այդպէս է միշտ լինում մարմնական էակների հետ։ Եթէ մարդիկ լինէին հոգեւոր, ապա կը լինէր խաղաղութիւն։ Ժամանակին հինգ հազար հոգիներ միատեղ էին, եւ ***«նրանցից ոչ ոք չէր ասում, թէ իր ինչքերը իրենն են, այլ ամէն ինչ նրանց համար հասարակաց էր»*** *եւ ամէն ինչ կիսում էին իրար հետ։ (Գործ. 4, 32)։ Ահա՛ իմաստութեան ու Աստծու վախի նշանը։ Այսպիսով (առաքեալը) ցոյց տուեց սիրոյ պատկեր, իսկ վախի պատկեր՝ ոչ։ Տեսնո՞ւմ ես արդեօք, թէ ինչպէ՞ս է նա խօսում սիրոյ մասին, օրինակ է բերում Քրիստոսին, յիշեցնում է իր մարմինը եւ*

*ասում. «**Դրա համար մարդը պիտի թողնի իր հօրն ու մօրը**», իսկ վախը չի լուսաբանում: Ինչո՞ւ: Քանի որ ցանկանում է, որ աւելի գերակշռի սէրը: Եթէ լինի սէրը, ապա նրան կը հետեւի բոլոր մնացածը. իսկ եթէ լինի վախը՝ ապա ոչ այնքան: Նա, ով սիրում է իր կնոջը, թէեւ նա չլինի շատ հնազանդ, ամէն ինչ կը հանդուրժի, բայց եթէ (ամուսնացածները) կապուած չեն սիրոյ զօրութեամբ, ապա նրանց միջեւ համերաշխութիւնն անըմբռնելի ու դժուար է: Վախը չի առաջացնում նման գործողութիւն: Ուստի (առաքեալը) հիմնականում կանգնում է այն փաստի վրայ, որն աւելի զօրեղ է: Իսկ կնոջը, թէեւ ըստ երեւոյթի վնաս է հասցնում այն բանով, որ նրան սահմանւում է վախը, ոչինչ չի կորսնում, քանի որ ամուսնուն սահմանւում է այն, ինչը յատկապէս կարեւոր է՝ սէրը: Բայց, ասում են, իսկ ի՞նչ կը լինի, եթէ կինը չվախենայ իր ամուսնուց: Դու սիրի՛ր, դու կատարի՛ր քո պարտքը: Թող ուրիշները չկատարեն այն, ինչ պէտք է. մենք պէտք է կատարենք: Նշեմ մի օրինակ: Գրուած է. «**Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիւղով**» (Եփես. 5, 21): Ուրեմն ինչ: Թող ուրիշները չենթարկուեն, բայց դու հնազադուի՛ր Աստծու օրէնքին: Այնպէս էլ այստեղ. թէեւ ամուսինը չսիրի իր կնոջը, կինը պէտք է վախենայ նրանից, որպէսզի իրեն պարտք չմնայ: Նմանապէս եւ հակառակն է. եթէ կինը չվախենայ իր ամուսնուց, ամուսինը պէտք է սիրի նրան, որպէսզի նրան պարտք չմնայ: Իւրաքանչիւրն ունի իր անձնական պարտականութիւնները: Սա՛ է Քրիստոսի հետ «ամուսնութիւնը», որ հոգեւոր ամուսնութիւն է՝ ոչ թէ արեան, ոչ թէ ծննդեան ցաւերով: Ինչո՞ւ կնոջ համար ասուած չէ, թէ «**պէտք է միանայ իր ամուսնուն**» (Ծննդ. 2, 24): Ինչո՞ւ է այդպէս: Որովհետեւ սիրոյ մասին արդէն ասուել էր եւ ասուել էր ամուսնուն: Իսկ կնոջը (առաքեալը) ներշնչում է վախ եւ միեւնոյն ժամանակ ասում է. «**Կնոջ գլուխը՝ մարդն է**» (Եփես. 5, 23). եւ դարձեալ՝ «**Նա՛ է գլուխը մարմնի, որ եկեղեցին է**» (Կող. 1, 19): Ամուսնու հետ նա (առաքեալը) խօսում է սիրոյ մասին եւ հնարաւորութիւն է տալիս նրան այն, ինչը համապատասխանում է կնոջը: Խօսում է*

սիրոյ մասին՝ նրան կապելով եւ միաւորելով իր կնոջ հետ։ Իսկապէս, հօրը թողնելով իր կնոջ համար, եւ ապա կնոջն էլ թողնելով, որ գնայ. արդեօք կարո՞ղ է արժանի լինել որեւէ հանդուրժողութեան։ Տեսնո՞ւմ ես, թէ Աստծու կամքով ինչ պատիւ պէտք է ունենայ նա (կինը), երբ Աստուած, քեզ հօրիցդ հեռացնելով, միաւորում է նրա հետ։ «Կինը թող երկնչի իր մարդուց» խօսքը չի նշանակում ստրուկի երկիւղ, սակայն կնոջից պահանջւում է պատուել ու յարգել իր ամուսնուն՝ կարծես թէ ակնածանք ունենալով նրա հանդէպ»[1]։

1 Святитель Иоанн Златоуст, Беседы на послание к Ефесянам. Беседа 20 Տե՛ս http://www.biblioteka3.ru/biblioteka/zlatoust/tom_11_1/txt20.html (առ 29/03/2017)։

«ԿԱՆԱՅՔ ԹՈՂ ԼՈՒՌ ՄՆԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ»

Պողոս առաքեալը կորնթացիներին ուղղուած իր առաջին նամակում գրում է. «**Ինչպէս որ է Աստծու բոլոր եկեղեցիներում, կանայք թող լուռ մնան եկեղեցում, որովհետեւ թոյլատրուած չէ նրանց խօսել, այլ՝ հնազանդ լինել, ինչպէս օրէնքն էլ ասում է: Իսկ եթէ ուզենան մի բան սովորել, տանը թող իրենց մարդկանց հարցնեն. քանզի կին արարածի համար անպատեհ է խօսել եկեղեցում**» (Ա. Կորն. 14, 34-35): Այս նոյն գլխում, բայց մի քիչ աւելի վեր, Պողոս առաքեալը ցոյց է տալիս, թէ ինչ է հասկանում, երբ ասում է, թէ կանայք «թող լուռ մնան եկեղեցում»: Նա խորհուրդ էր տալիս բոլոր նրանց, ովքեր ունէին Սուրբ Հոգու պարգեւները, որ սխալ չօգտագործեն՝ ասելով. «**Եթէ չլինի մէկը, որ թարգմանի, թող լուռ մնան եկեղեցում**» (Ա. Կորն. 14, 28): Ուրեմն «լուռ մնալ»-ը 28-րդ ու 34-րդ համարներում նշանակում է նոյն բանը, այսինքն՝ արգելւում է բարձրաձայն խօսել եկեղեցում: Իսկ «**թող լուռ մնան եկեղեցում, որովհետեւ թոյլատրուած չէ նրանց խօսել**» (Ա. Կորն. 14, 34) գաղափարը կարող էր առաջանալ Եդեմի պարտէզում տեղի ունեցած այն իրողութիւնից, երբ Եւան խաբուեց ու գայթակղեց Ադամին, եւ երկուսն էլ ամօթով մնացին:

Կորնթոսի եկեղեցուն ուղղուած իր առաջին նամակում Պողոս առաքեալն անընդհատ մատնանշում է նրանց սխալներն ու մոլորութիւնները: Նա ցոյց է տալիս ամուսնութեան վերաբերեալ ողջ համայնքի խառնաշփոթ ըմբռնումը եւ եկեղեցու ծառայութեան ընթացքում ոչ պատշաճ վարքը: Եկեղեցում շատերը միանգամից մարգարէանում էին՝ աղմուկ բարձրացնելով ու միմեանց ընդհատելով: Նոյնը վերաբերում էր նաեւ կանանց: Նախքան քրիստոնէական

Եկեղեցու գոյութիւնը հրէական պաշտամունքի ընթացքում կանայք գտնւում էին վերջին շարքերում ու քանի որ նրանք հեռու էին գտնւում կամ էլ ընհանրապէս չէին երեւում, ծառայութեան ժամանակ սկսում էին խօսել միմեանց հետ կամ էլ իրենց հարցումները բարձրաձայն ուղղում իրենց ամուսիններին: Իսկ այժմ առաջին անգամ քրիստոնէական եկեղեցում կանայք սկսեցին տղամարդկանց հետ հաւասարապէս երկրպագել: Ուրեմն, «լուռ մնալ»-ը (յունարէն՝ σιγάτωσαν*), ամենայն հաւանականութեամբ վերաբերում էր այն կանանց, որոնք ծառայութեան ընթացքում աղմկում էին եկեղեցում: Այս պատճառով Պօղոս առաքեալը չէր ուզում, որ նրանք եկեղեցում խանգարեն ծառայութեան եւ ուսուցման գործընթացը: Աւելի հաւանական է, որ առաքեալի խօսքն (Ա. Կորն. 14, 33-35) այն մասին է, որ ամուսնացած կանայք բարձրաձայն չխօսեն ծառայութեան ժամանակ եւ հետեւաբար, այդկերպ խառնաշփոթ չստեղծեն եկեղեցում: Սակայն սա ոչ մի կերպ չի նշանակում, թէ կանանց արգելւում էր մասնակցել արարողութիւններին: Այս հատուածում Պօղոս առաքեալը շարունակում է իր սկսած Ա. Կորն. 11-րդ գլխի ուսուցումն ամուսնու՝ իր կնոջ նկատմամբ իշխանութեան մասին: Եթէ կինն ընդհանրապէս պէտք է հնազանդ լինի իր ամուսնուն, ապա նա այդ հնազանդութիւնը պէտք չէ խախտի եկեղեցում երկրպագութեան ընթացքում՝ որպէս մարգարէուհի կամ ուսուցչուհի, որովհետեւ նման վարքը կարող է վկայել ամուսնուն գլխաւորելու իր մտադրութեան մասին:*

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետը, մեկնաբանելով Պօղոս առաքեալի՝ կորնթացիներին ուղղուած առաջին նամակը, ասում է հետեւեալը. «Յանդիմանելով այն խանգարումները, որոնք տեղի էին ունենում լեզուների ու մարգարէութիւնների պատճառով, եւ դնելով օրէնքը, որպէսզի չլինի շփոթութիւն եւ լեզուներով խօսէին առանձին, ու մարգարէութիւն անողներից մէկը լռէր, երբ ուրիշն սկսէր, առաքեալը յետոյ անցնում է այն շփոթութեանը, որը կանայք էին առաջացնում, ու ճիշդ ժամանակին խափանում է նրանց անտե-

ղի համարձակութիւնը: Եթէ պարգեւ ունեցողներին չի թոյլատրւում խօսել առանց կարգի եւ երբ ցանկանան, թէեւ նրանք առաջնորդւում են Սուրբ Հոգու կողմից, որքա՞ն աւելի թոյլատրելի չէ կանանց անտեղի եւ առանց օգուտի դատարկախօսել: Այս պատճառով նա մեծ իշխանութեամբ է արգելում նրանց դատարկախօսութիւնն ու դրանով իսկ լռեցնում նրանց: Այստեղ նա ոչ միայն յորդորում է ու խորհուրդ տալիս, այլ ուժեղ կերպով հրահանգում է՝ առաջ բերելով հին օրէնքը: Մասնաւորապէս, ասում է. ***«Կանայք թող լուռ մնան եկեղեցում, որովհետեւ թոյլատրուած չէ նրանց խօսել, այլ՝ հնազանդ լինել, ինչպէս օրէնքն էլ ասում է»*** *(Ա. Կորն. 14, 34): Որտեղ է օրէնքն ասում այդ մասին:* ***«Քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ»*** *(Ծննդ. 3, 16): Տեսնո՞ւմ ես արդեօք Պօղոսի իմաստութիւնը, թէ նա ինչպէս մէջբերեց այդպիսի ապացոյց, որով հրամայում է նրանց ոչ միայն լռել, այլ լռել վախով. ընդ որում՝ այնպիսի վախով, որով լուռ է մնում ծառան: Դրա համար եւ ինքը «թոյլատրուած չէ նրանց խօսել» բառերից յետոյ չասաց «լռել», այլ «լռել»-ու փոխարէն օգտագործեց աւելի իմաստալից արտայայտութիւն՝ «հնազանդ լինել»: Իսկ եթէ նրանք այդպէս պէտք է լինեն իրենց ամուսինների նկատմամբ, առաւել եւս՝ իրենց ուսուցիչների, հայրերի եւ եկեղեցու ընդհանուր ժողովի նկատմամբ: Բայց դուք ասում էք, որ եթէ նրանք չեն կարող ո՛չ խօսել, ո՛չ էլ հարցնել, ուրեմն ինչո՞ւ ներկայ գտնուել: Որպէսզի լսել, թէ ի՞նչ է հետեւում, իսկ կասկածելի բաների մասին սովորել տանը ամուսիններից: Դրա համար նա շարունակում է.* ***«Իսկ եթէ ուզենան մի բան սովորել, տանը թող իրենց մարդկանց հարցնեն. քանզի կին արարածի համար անպատեհ է խօսել եկեղեցում»*** *(Ա. Կորն. 14, 35): Նրանց, ասում է, չի թոյլատրւում եկեղեցում ոչ միայն բացայայտ խօսել, այլեւ հարցնել որեւէ բանի մասին: Իսկ եթէ պէտք չէ հարցնել, ապա որքա՞ն աւելի չի թոյլատրւում զուր խօսելը: Իսկ ինչո՞ւ է նա նրանց պարտադրում հնազանդուել: Որովհետեւ կինն աւելի թոյլ, անկայուն եւ զգացմունքային էակ է: Դրա համար նրանց*

*ամուսիններին ուսուցիչներ է դարձնում եւ այդպէս երկուսին էլ օգուտ է բերում՝ կանանց համեստ դարձնելով, իսկ ամուսիններին՝ հոգատար, քանի որ նրանք պէտք է կատարեալ ճշդութեամբ փոխանցեն իրենց կանանց այն, ինչ որ կը լսեն: Բայց քանի որ նրանց մօտ պատիւ էր համարւում խօսել ժողովարաններում, նա նորից ապացուցում է հակառակը՝ ասելով. «Քանզի կին արարածի համար անպատեհ է խօսել եկեղեցում»: Սա հաստատւում է նախ Աստծու օրէնքով եւ յետոյ համընդհանուր մարդկային դատողութեամբ ու սովորոյթով, ինչպէս նա արեց այն ժամանակ, երբ խօսում էր նրանց հետ մազերի մասին, կամ էլ ասում էր. «**Եւ բնութիւն իսկ չի՞ ուսուցանում ձեզ**» (Ա. Կորն. 11, 14): Եւ ամենուր կարելի է տեսնել նրա խօսքի պատկերը, երբ սաստում է ոչ միայն աստուածային սուրբ գրութիւններով, այլեւ յայտնի սովորութիւններով»*[1]:

*Կանանց լուռ մնալու այս պատուիրանի մասին Պօղոս առաքեալը Տիմոթէոսին ուղղուած իր առաջին նամակում գրում է, որը ինչպէս կարելի է ենթադրել, եկեղեցու հետ ենթարկւում էր ճնշմանը դրսից՝ ազատամիտ կանանց կողմից: Շատ հաւանական է, թէ որոշ կանայք պահանջում էին, որ նրանք նոյնպէս հնարաւորութիւն ունենան ուսուցանել եկեղեցում: Այս բանին Տիմոթէոսը պատասխանում էր՝ վկայակոչելով Պօղոսին խօսքը, թէ դա խստիւ արգելւում է: Նամակի 2-րդ գլխում մենք տեսնում ենք այն պատճառը, որ Պօղոս առաքեալը հրահանգում է կանանց լուռ մնալ եկեղեցում, եւ այդ պատճառը պէտք է փնտռել Եդեմի պարտէզում. «**Կին արարածը թող ուսանի լռութեամբ, կատարեալ հնազանդութեամբ: Եւ ես թոյլ չեմ տալիս, որ կին արարածը ուսուցանի կամ էլ խօսքով իշխի տղամարդու վրայ, այլ թող լուռ մնայ. որովհետեւ նախ Ադամն ստեղծուեց եւ ապա՝ Եւան: Եւ Ադա՛մը չխաբուեց, այլ կի՛նը խաբուեց եւ յանցանք գործեց**» (Ա. Տիմ. 2, 11-14): Հետեւաբար, եթէ կինը լուռ չէ եկեղեցում, ապա դա անպատեհ է եւ Եդեմի մէջ տեղի*

1 Свт. Иоанн Златоуст, Толкование на Первое послание к Коринфянам, Беседа 37. Տե՛ս http://www.odinblago.ru/sv_otci/ioann_zlatoust/10_1/388 (առ 10/04/2017):

ունեցած պատուիրանազանցութեան նոյն ամօթն է։ Վերոյիշեալ հատուածը Պօղոս առաքեալի՝ Քրիստոսով փրկագործութեան նկարագրութեան (Ա. Տիմ. 2, 4-6) շարունակութիւնն է։ Յետոյ առաքեալը նշում է, թէ ինչպէ՛ս տղամարդիկ եւ կանայք պէտք է արձագանգեն Տիրոջ փրկագործութեանը, որպէսզի իրենց կեանքն աստուածապաշտութեամբ վարելով՝ հասնեն ճշմարտութեան գիտութեանը. ***«Քրիստոս տուեց Ինքն Իրեն որպէս փրկանք բոլորի համար… Ուզում եմ, որ տղամարդիկ աղօթեն ամէն տեղ… Կին արարածը թող ուսանի լռութեամբ, կատարեալ հնազանդութեամբ»****։ Քրիստոսի առջեւ հաւասար են բոլորը՝ եւ տղամարդիկ, եւ կանայք։ Սակայն տղամարդկանց պատուիրում է աղօթել հրապարակաւ, որպէսզի* ***«սուրբ ձեռքեր բարձրացնեն դէպի վեր, առանց բարկութեան եւ երկմտութեան»*** *(Ա. Տիմ. 2, 8)։ Իսկ կին արարածին պատուիրում է համեստութեամբ զարդարուել եւ ուսանել լռութեամբ ու կատարեալ հնազանդութեամբ։ Եւ դրանով ցոյց է տալիս Եւային, եւ Եւայով՝ գայթակղութիւնը եղեմում, մարդկութիւնը, ու մեր փրկութեան անհրաժեշտութիւնը՝ Քրիստոսի քաւութեան ու զոհաբերութեան յստակ գիտակցութեամբ։ Այստեղ պարզ հնչում է կանանց լուռ մնալու խիստ պատուիրանը եւ ուսուցանելու արգելքը.* ***«Եւ ես թոյլ չեմ տալիս, որ կին արարածը ուսուցանի կամ էլ իւօսքով իշխի տղամարդու վրայ, այլ թող լուռ մնայ»*** *(Ա. Տիմ. 2, 12)։ Յունարէն* «διδάσκω» *(«ուսուցանել»* [didasko]*) բառը սովորաբար օգտագործւում է, երբ խօսքը վերաբերում է Քրիստոսի եւ առաքեալների «վարդապետութեան»-ը։ Դրա ծագումը գալիս է յունարէն մէկ այլ բառից՝* «Διδαχή» *(«վարդապետութիւն»* [Didaché]*)։ Այնպէս որ, պարզւում է, թէ իսկապէս, կանանց չի թոյլատրւում ուսուցանել, որը եւ հաստատւում է այն փաստով, թէ ինչպէս է այս* («διδάσκω», [didasko]) *բառն օգտագործւում Նոր Կտակարանում։ Կան դիրքորոշումներ, երբ կինը չի կարող հանդէս գալ որպէս ուսուցիչ, սակայն կարող է ուսուցանել այլ կանանց կամ*

*անչափահասներին: Իսկ «լուռ մնալ»-ու պատուիրանը Տիմոթէոսին ուղղուած առաջին նամակի 2-րդ գլխում տրուել է այն բանի համար, որ Տիմոթէոսն իմանայ, «**թէ ինչպէս պէտք է վարուել Աստծու տան մէջ, որ կենդանի Աստծու եկեղեցին է**» (Ա Տիմ, 3, 15):*

*Շատերն են հարցնում, թէ եթէ կանայք պէտք է եկեղեցում լուռ մնան, ապա ինչ կ՚ասէք Փիլիպպոսի չորս դուստր մարգարէուհիների մասին: Որոգինէսն այսպէս է պատասխանում. «Ասւում է, թէ Փիլիպպոս աւետարանիչն ունէր չորս դուստր, որոնք մարգարէացան: Եթէ, այնուամենայնիւ, նրանք մարգարէացան, ապա ինչո՞ւ չի կարելի, ասում են նրանք, որ մարգարէանան նաեւ մեր մարգարէուհիները: Մենք պէտք է լուծենք այս շփոթը: Նախ՝ ասելով, թէ «մարգարէանան նաեւ մեր մարգարէուհիները», ցոյց տուէք նրանց մարգարէութեան նշանները: Երկրորդ՝ եթէ նոյնիսկ Փիլիպպոսի դուստրերը մարգարէացան, նրանք եկեղեցում չէին խօսում: Դա չկայ «Գործք Առաքելոց»-ում: Դա չկայ նաեւ Հին Կտակարանում: Վկայուած է, թէ Դեբորան մարգարէուհի էր. եւ «**Մարիամ մարգարէուհին՝ Ահարոնի քոյրը, իր ձեռքն առաւ թմբուկը, եւ բոլոր կանայք գնացին նրա յետեւից**» (Ելք 15, 20): Բայց դուք չէք հանդիպի, որ Դեբորան խօսի ժողովրդի առջեւ, ինչպէս Երեմիայ եւ Եսայի մարգարէները: Եւ դուք չէք հանդիպի, թէ Օղդա մարգարէուհին խօսի ժողովրդին, այլ միայն իր մօտ եկողներին»*[1]:

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետը, մեկնաբանելով Պօղոս առաքեալի՝ Տիմոթէոսին ուղղուած առաջին նամակը, ասում է. «Մեծ ակնածանք ու մեծ պարկեշտութիւն է պահանջում կանանցից երանելի Պօղոսը: Դրա համար ուշադրութիւն է հրաւիրում ոչ միայն նրանց արտաքին տեսքի ու հագուստի, այլեւ ձայնի վրայ: Ինչ է ուզում ասել մասնաւորապէս: Կին արարածը թող ուսանի լռութեամբ: «Կին արարածը թող լուռ մնայ եկեղեցում» այն նոյն

1 Ориген, Фрагменты, Толкование на первое послание к Коринфянам святого апостола Павла.
Տե՛ս http://bible.optina.ru/new:1kor:14:34 (առ 11/04/2017):

*խօսքն է, որ ասել էր կորնթացիներին ուղղուած իր նամակում՝ «**թող լուռ մնան եկեղեցում, որովհետեւ թոյլատրուած չէ նրանց խօսել**» (Ա. Կորն. 14, 34)։ Դրա պատճառն այն է, որ այդ օրէնքը նրանց ստիպում է հնազանդ լինել տղամարդկանց։ Ու նորից մի այլ տեղում նշում է. «**Իսկ եթէ ուզենան մի բան սովորել, տանը թող իրենց մարդկանց հարցնեն. քանզի կին արարածի համար անպատեհ է խօսել եկեղեցում**» (Ա. Կորն. 14, 35)։ Բայց այն ժամանակ կանայք այսպիսի խրատների պատճառով պահպանում էին լռութիւնը, մինչդեռ այսօր նրանց միջեւ նկատւում է մեծ աղմուկ՝ բարձրաձայն ճիչ, խօսակցութիւն, որը ոչ մի այլ տեղ այնքան շատ չէ, որքան եկեղեցում։ Ամէն մարդ կարող է այստեղ նրանց աւելի շատ տեսնել զրուցելիս, քան հրապարակներում եւ բաղնիքներում։ Կարծես թէ այստեղ գալիս են ազատ ժամանցի՝ անիմաստ բաների մասին զրուցելու։ Այս ամէնից առաջանում են անկարգութիւններ, ու նրանք չեն էլ ուզում հասկանալ, թէ միայն լռութիւնը պահելով կարող են մի օգտակար բան սովորել։ Ի դէպ, երբ մենք զգուշացնում ենք եկեղեցում խօսելու դէմ, ու միեւնոյն ժամանակ ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում ասուածին, ուրեմն ինչ օգուտ կարող է լինել։ Դրա համար առաքեալն ասում է, թէ կինը եկեղեցում պէտք է այնպէս լուռ մնայ, որ չխօսի ոչ միայն աշխարհիկ բաների մասին, այլեւ հոգեւոր։ Սա է նրա պարկեշտութիւնն ու համեստութիւնը եւ սա կարող է զարդարել նրան աւելի շատ, քան ցանկացած հագուստ։ Հետեւաբար, եթէ նա այդպէս վարուի, ապա հնարաւորութիւն կ՚ունենայ իր աղօթքները մեծ արժանապատուութեամբ կատարելու։ Ասում է. «**Եւ ես թոյլ չեմ տալիս, որ կին արարածն ուսուցանի**» (Ա. Տիմ. 2, 12)։ Ինչ իմաստ ունի այստեղ այս խօսքը։ Առաքեալը խօսում էր լուռ մնալու, համեստութեան ու պարկեշտութեան մասին՝ ասելով, թէ չի ուզում, որ նրանք խօսեն։ Այնպէս որ, ցանկանալով զրկել նրանց խօսակցութեան բոլոր առիթներից՝ ասում է, որ նրանք չուսուցանեն, այլ վարուեն այնպէս, ինչպէս վայել է սովորողներին, որովհետեւ*

*լութեամբ նրանք կը ցուցաբերեն հնազանդութիւն։ Բնականօրէն, այս կանացի սեռը որոշ չափով զրուցասէր է ու շաղակրատ։ Այս պատճառով առաքեալը բոլոր միջոցներով փորձում է զսպել նրանց եւ ասում է. «**Որովհետեւ նախ Ադամը ստեղծուեց եւ ապա՝ Եւան։ Եւ Ադա՛մը չխաբուեց, այլ կի՛նը խաբուեց եւ յանցանք գործեց**» (Ա. Տիմ. 2, 14)։ Սակայն, դա ներկայումս ինչ կապ ունի կանանց հետ։ Շատ մեծ։ Ասում է՝ արական սեռն օժտուած է մեծ առաւելութեամբ, քանի որ նախ նա ստեղծուեց։ Իսկ մէկ այլ տեղում նոյնիսկ աւելի բարձր է դասում նրան, երբ ասում է. «**Քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար**» (Ա. Կոր. 11, 9)։ Ինչո՞ւ է նա այս բանն ասում. որպէսզի բազմաթիւ պատճառների հիման վրայ ցոյց տայ ամուսնու առաջնութիւնը։ Ասում է, թէ տղամարդը պէտք է ունենայ առաջնութիւն առաջին հերթին այն պատճառով, որ նա առաջինն է ստեղծուել. եւ երկրորդ՝ այն հիման վրայ, թէ ինչ է տեղի ունեցել աւելի ուշ ժամանակ։ Կինը մէկ անգամ սովորեցրեց տղամարդուն ու նրան դարձրեց մեղաւոր՝ անհնազանդութեան մէջ եւ ամէն ինչ կործանեց։ Աստուած հէնց այս պատճառով նրան հնազանդեցրեց իր ամուսնուն, քանի որ նա չարիքի համար գործածեց իր իշխանութիւնը, աւելի ճիշդ՝ իր հաւասարակշռութիւնն ամուսնու հետ. «**Քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ**» (Ծննդ. 3, 16). մինչեւ այդ իրադարձութիւնները այս բառերը չեն ասուել։ Բայց ինչպէ՞ս չխաբուեց Ադամը։ Հետեւաբար, եթէ նա չէր խախտել պատուիրանը, ուրեմն չէր մեղանչել։ Ուշադիր լսի՛ր։ Կինն ասաց. «**Օձը խաբեց ինձ, եւ ես կերայ**» (Ծննդ. 3, 13), մինչդեռ Ադամը չի ասում, թէ «կինս ինձ խաբեց», այլ՝ «**նա՛ տուեց ինձ ծառի պտղից, եւ ես կերայ**» (Ծննդ. 3, 12)։ Լինել խաբուած քո ցեղակցից եւ ազգակցից, նոյնը չէ, ինչ որ գազանից, ստրուկից, ստորադասից։ Ուստի, սա է իսկապէս խաբուելը։ Այնպէս որ, միայն իր կնոջ հետ համեմատելով է, որ առաքեալը նրա մասին ասում է, թէ նա չի խաբուել, քանի որ կինն էր խաբուած ստրուկի ու ստորադասի*

կողմից, իսկ նա (Ադամը)՝ իր հետ հաւասար մէկից։ Դարձեալ՝ ոչ թէ Ադամի համար է ասում. «**Տեսաւ, որ ծառի պտուղը լաւ է ուտելու համար, ակնահաճոյ է եւ գրաւիչ՝ ընթռնելու համար**» (Ծնն. 3, 6), այլ իր կնոջ համար՝ առաւ պտուղը, կերաւ եւ տուեց իր մօտ կանգնած ամուսնուն։ Այսպիսով, նա խախտեց պատուիրանը ոչ թէ կրքից գերուած լինելով, այլ միայն հնազանդուելով կնոջը։ Կինը մէկ անգամ սովորեցրեց եւ ամէն ինչ կործանեց։ Դրա համար առաքեալն ասում է. «**Թոյլ չեմ տալիս, որ կին ուսուցանի**»։ Բայց ինչպէս է սա վերաբերում այլ կանանց, եթէ միայն նա է տուժել։ Իհարկէ, սա վերաբերում է նրանց, քանի որ այս սեռը թոյլ է եւ անկայուն։ Միւս կողմից էլ, այստեղ ասում է, ընդհանուր առմամբ, բոլոր կանանց համար։ Նա չի ասում, թէ խաբուեց Եւան, այլ՝ կինը, քանի որ այս անունը աւելի շուտ վերաբերում է ամբողջ իգական սեռին ու ոչ միայն իրեն։ Ուրեմն նրա (Եւայի) պատճառով ամբողջ իգական սեռը յանցաւոր դարձաւ։ Ճիշդ այնպէս, ինչպէս առաքեալն ասաց Ադամի մասին, թէ «**մահը թագաւորեց Ադամից մինչեւ Մովսէս նոյնիսկ նրանց վրայ, որոնք Ադամի յանցանքի նման յանցանք չգործեցին, Ադամի, որը օրինակն է նրա, որ գալու էր**» (Հռոմ. 5, 14). այդպէս էլ այստեղ է ասում, թէ պատուիրանը խախտում է իգական սեռը եւ ոչ՝ արականը։ Ուրեմն նա չի՞ ժառանգելու փրկութիւնը։ Ընդհակառակն՝ ասում է, թէ ժառանգելու է։ Ինչպէս։ Փրկութիւնը երեխաների միջոցով է։ Որովհետեւ չէր ասում միայն Եւայի համար՝ «**եթէ պարկեշտութեամբ մնայ հաւատի, սիրոյ եւ սրբութեան մէջ**» (Ա. Տիմ. 2, 15)։ Ինչ հաւատի։ Ինչ սիրոյ։ Ինչ սրբութեան ու պարկեշտութեան մէջ։ Նա կարծես այսպէս էր ասում, թէ՝ կանա՛յք, մի՛ գանգատուէք, որ ձեր սեռն է կրում մեղադրանքը։ Աստուած ձեզ շնորհեց եւս մէկ հնարաւորութիւն փրկութեան, այսինքն՝ երեխաների դաստիարակութիւնը. այնպէս որ դուք կարող էք արժանանալ փրկութեան ոչ միայն ձեզանով, այլ նաեւ ուրիշների միջոցով։ Տե՛ս, թէ որքա՜ն շատ հարցեր են առաջանում այս նոյն հարցի վերաբերեալ։ Ասում է. «**Կի՛նը խաբուեց եւ յանցանք գործեց**» (Ա. Տիմ. 2, 14)։ Ո՞ր

կինը։ Եւան։ Միթէ նա կարող է փրկուել որդեծնութեամբ։ Ո՛չ, դա չի ասում (Պօղոս առաքեալը), բայց պիտի փրկուի ողջ իգական սեռը։ Բայց չէ՞ որ մեղաւոր էր։ Իհա՛րկէ, թէեւ Եւան էր մեղաւոր, բայց պիտի փրկուի ողջ իգական սեռը որդեծնութեան միջոցով»[1]։

1 Свт. Иоанн Златоуст, Толкование над Первое послание к Тимофею, Беседа 9. Տե՛ս http://www.biblioteka3.ru/biblioteka/zlatoust/tom_11_2/txt26.html (առ 11/04/2017)։

ՅՂԻՈՒԹԵԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՎԻԺԵՑՄԱՆ ՅԱՆՑԱՆՔԸ

Քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցին իր ողջ գոյութեան ընթացքում մշտապէս դատապարտել է յղիութեան արհեստական ընդհատումը (վիժեցումը կամ աբորտը[1])՝ սովորեցնելով, թէ դա սպանութիւն է, աւելի ճիշդ՝ մանկասպանութիւն է, քանի որ յղիութիւնն Աստծու պարգեւն է, իսկ վիժեցումն «անցանկալի յղիությունից» խուսափելու կամ ազատուելու միջոց չէ, ու մայրը պարտաւոր է փայփայել եւ սիրել իր արգանդում ձեւաւորուող մանկանը, ինչպէս որ Աստուած սիրեց մեզ ու իր կեանքը տուեց խաչի վրայ՝ իւրաքանչիւրիս փրկութեան համար։ Վիժեցման ոճրագործութիւնն առաւել ծանր է «քրիստոնեայ» կոչուողի համար, որովհետեւ այսպիսին կոչուած է նմանուել Քրիստոսին ու լինել արժանի ծնող։

Յղիութեան արհեստական ընդհատումը պտղաձուի հեռացումն է յղի կնոջ օրգանիզմից անմիջական ներգործելու միջոցներով։ Այս անմարդկային տխուր արարքը մեծ տեղ է զբաղեցնում մեր հասարակական կեանքում։ Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան նոր տուեալների համաձայն՝ ամէն տարի աշխարհում յղիութեան արհեստական ընդհատումների թիւը հասնում է մօտաւորապէս 50 միլիոնի։ Սրա հետեւանքով ամէն տարի մահանում է մօտ 70 հազար կին։ Բացի դրանից՝ տասնեակ հազարաւոր կանայք տառապում են վիժեցումից առաջացած տարբեր բարդութիւններից։ Եթէ չկան բժշկի կողմից մատնանշուած եւ

1 Վիժեցումը կամաւոր կերպով կամ գիտակցաբար սաղմի կամ պտղի վաղաժամ դուրս մղելն է արգանդից, իսկ վիժումը լինում է ակամայ կամ անգիտակից վիճակում։

*ապացուցուած յատուկ պատճառներ, որոնք կարող են անյապաղ վերահաս մահ պատճառել յղի կնոջը, այդ դէպքում վիժեցումը դառնում է սպանութիւն՝ մի արարք, որը հակառակ է Աստծու կամքին: Վիժեցումը մահ է, սակայն «**Քրիստոս եկաւ յաղթելու մահուանը, որպէսզի մենք կեանք ունենանք եւ աւելիով ունենանք**» (Յովհ. 10, 10), եւ ինչպէս շարականագիր հայրապետն է ասում, «մահուամբ զմահ կոխեաց եւ Յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց[1]»:*

Վիժեցման պաշտօնական թոյլտուութիւնն աւերիչ հարուած է հասցրել կանանց ու մայրերին: Կենսատու լինելուն զուգընթաց կինը դարձել է մահաբեր: Եւ սա չի կարող չազդել ու հետեւանք չթողնել կնոջ ընդհանուր աշխարհայեացքի վրայ: Ֆէմինիստ տեսաբանները, արդարացնելով արհեստական վիժեցումը, ասում են, թէ իւրաքանչիւր կին իրաւունք ունի վերահսկելու իր մարմինը, պէտք չէ ուրիշներին պարտադրել իրենց կրօնական բարոյականութիւնը, օրինականացուած վիժեցումը անվտանգ է, պտղի սաղմը դեռ անձ չէ, յղիութիւնը բռնաբարութեան արդիւնք էր, ծնողները դէմ են երեխայի ծննդեանը կամ էլ ամուսինն սպառնում է, թէ կը բաժանուի: Նաեւ ասում են, թէ արդէն նորածինը հիւանդ էր ծնուելու, կամ էլ ծնողները հարբեցողներ են կամ թմրամոլ, եւ սրանց նման շատ այլ պատճառաբանութիւններ: Յղիութեան արհեստական ընդհատումների առկայութեան պատճառներից են մասնաւորապէս արտաամուսնական կապերը: Յղիութեան արհեստական ընդհատումը թոյլատրւում է ծայրայեղ դէպքերում՝ բացառապէս եթէ առաջանում են կեանքին սպառնացող առողջական խնդիրներ: Ֆէմինիստները սիրում են խօսել սեռային յեղափոխութեան մասին՝ որպէս միակ «անարիւն յեղափոխութիւն»-ը մարդկային պատմութեան մէջ: Սակայն 20-րդ դարում արհեստական վիժեցումն արդէն կորցրել է հարիւր միլիոնաւոր կեանքեր: Եթէ Ամերիկայի բնակչութեան առնուազն կէսը գործուն կերպով հակազդում է այս արհեստական

1 Ներսէս Շնորհալի հայրապետ, Ժամագիրք Ատենի, Տպարան Առաքելական Աթոռոյ Սրբոյ Յակոբեանց, Յերուսաղէմ, 1915, էջ 352:

վիժեցման յանցագործութեանը, ապա սարսափելին այն է, որ մենք չենք խօսում դրա մասին: Մեր երկրում՝ Հայաստանում, դժուար է գտնել մի ընտանիք, որը կեանքում գոնէ մէկ անգամ դիմած չլինի յղիութեան արհեստական ընդհատմանը: Պարզապէս մարդիկ իրենց ընտանիքների բարեկեցութիւնը կառուցում են իրենց երեխաների արեամբ:

Պատմութիւնը ցոյց է տալիս, թէ որքան շատ են բարոյապէս այլասերւում քաղաքակրթութիւնները, այնքան շատ են տուժում թոյլերն ու անպաշտպանները: Բազմիցս նկատել ենք, թէ ինչպէս են աշխարհի չար մշակոյթներն սպանում թոյլերին, ծերերին, երիտասարդներին եւ դեռ չծնուածներին: Հին Կտակարանում գրուած է, թէ ինչպէս էին չար իսրայէլացիները զոհաբերում իրենց երեխաներին հեթանոս չաստուած Բահաղին (տե՛ս Երեմ. 5 եւ էչ գլուխներ), այրում ու հազարաւոր երեխաներ էին զոհաբերում Մոլոք չաստծուն (տե՛ս Երկ. Օր. 12, 31: 18, 9-10): Այս նորածիններից շատերը, որոնք զոհաբերւում էին կրօնական պաշտամունքի պատրուակով, սոցիալապէս անցանկալի էին, հաշմանդամ էին կամ էլ ծնուած էին արտամուսնական կապերից: Երբ Հռոմը բարոյապէս այլասերուեց, հռոմէացիներն սկսեցին «մերկացնել» անցանկալի նորածիններին ու նրանց տանել անապատ, որտեղ նրանց թողնում էին՝ գիշերը սառչելով մեռնելու կամ էլ վայրի կենդանիներին կերակուր դառնալու: Ողջ պատմութեան ընթացքում չար հասարակութիւնները վայրագութիւններ էին գործում մանուկների դէմ: Շատ մարդիկ այսօր կարծում են, թէ մեր «լուսաւորութեան» դարաշրջանում մենք ունենք արհեստական վիժեցման բոլոր իրաւունքները, որովհետեւ մենք ունենք զարգացած բժշկութիւն եւ օգտակար դեղամիջոցներ: Բայց նախորդ չար քաղաքակրթութիւնների նման մենք էլ ենք արդարացնում մանկասպանութիւնը: Այսպէս կոչուած «քրիստոնեայ» բժիշկները, որոնք կատարում են արհեստական վիժեցումները, կարող են շատ բան սովորել հայն եթանոս յոյներից, որոնք հիմնադրեցին բժշկագիտութիւնը: Այս հեթանոս բժիշկները

սարսափում էին այն մտքից, թէ որեւէ մարդ, ով ձեռք է բերել բժշկական հմտութիւններ, կարող է սպանել տկար եւ անպաշտպան մարդուն: Բժշկագիտութեան հայր Հիպոկրատը (Ն. Ք. 460-377 թթ.) սահմանեց Հիպոկրատի երդումը՝ պատմականօրէն ընդունուած բարոյականութեան ու բժշկական էթիկայի սկզբունքների մի ամբողջութիւն, որով երդւում են բոլոր բժիշկները՝ բժշկական գործունէութիւնն սկսելուց առաջ: Այս երդման համաձայն՝ բժիշկները խոստանում են երբէք չկատարել վիժեցում կամ էֆթանազիա[1]: Նոյնպէս երդւում են կանանց երբէք չտալ վիժեցնող դեղամիջոցներ: Ակնյայտ է, թէ վիժեցումն ու էֆթանազիան արդէն վաղուց մեծ խնդիր էին հեթանոսական աշխարհում: Բայց մեր ժամանակներում բժիշկներն սկսել են պարզապէս չնկատել եւ ուրանալ Հիպոկրատի երդման այս կարեւորագոյն հատուածները, որոնք արգելում են վիժեցումն ու էֆթանազիան: Վերջին մի քանի տասնամեակներում շատ բժիշկներ անտեսեցին ու լքեցին իրենց բժշկական մասնագիտութեան այս հիմնարար սկզբունքը: Հիպոկրատը կը խրտնէր, եթէ, այսպէս կոչուած, մեր «լուսաւորութեան» դարաշրջանում տեսնէր այդ բժիշկներին, որոնք այսօր իրականացնում են պահանջուած մարդասպանութիւնը:

Ջնջուած երեխայի մասին վերաբերմունքը հիմնականում փոխուեց 70-ականներին, երբ գիտութիւնն սկսեց զբաղուել սաղմնագիտութեան ուսումնասիրութեամբ, որոնց արդիւնքները դարձան մի նոր մեծագոյն նուաճում բժշկութեան մէջ: Բոլոր յայտնաբերութիւններն այս ոլորտում հնարաւոր դարձան ժամանակակից նոր տեխնոլոգիաների ներդրման շնորհիւ: Առաջ ասում

1 Էֆթանազիա, էյտանազիա կամ էվթանազիա (յունարէն՝ ευθανασία - լաւ մահ). անբուժելի հիւանդութեամբ տառապող մարդուն՝ ցաւերից ազատելու համար կեանքից զրկելն է: Գոյութիւն ունեն էֆթանազիայի կամաւոր եւ ոչ կամաւոր տեսակները: Կամաւոր էֆթանազիան իրականացւում է հիւանդի համաձայնութեամբ կամ նախապէս ձեւակերպուած իրաւական պայմանաւորուածութեամբ (նախատեսուած է անդարձ կոմայի դէպքում): Ոչ կամաւոր էֆթանազիան իրականացւում է անկախ հիւանդի կամքից, եթէ նա անգիտակից է եւ անկարող է իր կամքն արտայայտել:

էին, որ գիտական տեսանկիւնից հնարաւոր չէ ապացուցել, թէ կեանքի սկիզբը բեղմնաւորման պահից է. եւ անընդհատ պնդում էին, թէ անհնար է իմանալ՝ կեանքը ե՛րբ է սկսւում արգանդում: Սակայն գիտութիւնն այսօր վերջապէս ընդունակ է պատասխանել այս հարցին: Այսօր գիտութեամբ ապացուցուած անվիճելի փաստ է այն, թէ մարդու կեանքն սկսում է հէնց բեղմնաւորման պահից, եւ այդ վայրկեանից պտուղը համարւում է մարդկային էակ: Մարդու կեանքն սկսւում է այն պահից, երբ իրար հանդիպում եւ միաւորւում են արու եւ էգ երկու սեռական բջիջները, որոնց արդիւնքում առաջանում ու ձեւաւորւում է մէկ բեղմնաւորուած բջիջ, որում ներառուած է մարդու ամբողջ կեանքը՝ սեռը, արեան բաղադրութիւնն ու տեսակը, աչքերի եւ նոյնիսկ մազերի գոյնը, եւ այլն: Կեանքը շարունակական գործընթաց է: Այն պահից, երբ կնոջ ձուաբջիջը բեղմնաւորւում է տղամարդու սերմաբջիջով, սկսւում է մարդկային կեանքը: Նորաստեղծ բեղմնաւորուած բջիջը կոչւում է «զիգոտ» (zygote): Երբ «զիգոտ»-ն սկսում է աճել, այն կոչւում է «սաղմ» (embryo): Յետագայ փուլերում սաղմն արդէն կոչւում է «պտուղ» *(fetus)*: «Զիգոտ», «սաղմ» ու «պտուղ» գիտական եզրոյթները պարզապէս նկարագրում են տուեալ չծնուած անձի զարգացման տարբեր փուլերը: Նրանք ծառայում են այն նոյն նպատակին, որին ծառայում են «անչափահաս», «չափահաս» կամ «մեծահասակ» եզրոյթները: Դրանք երբէք չեն նշանակում, թէ չծնուած երեխան դեռեւս մարդ չէ: Ինչպէս մանուկն իր զարգացմամբ տարբերւում է անչափահասից, այդպէս էլ պտուղը տարբերւում է մանուկից: Սակայն նրանք բոլորն էլ մարդկային արարածներ են: Իւրաքանչիւր բջջային սաղմ արդէն իսկ իւրայատուկ եւ չկրկնուող անձ է: Քրիստոնեաները հաւատում են, թէ մարդու հոգին ստեղծւում է բեղմնաւորման պահին: Վաղ քրիստոնէական նշանաւոր աստուածաբան եւ ուսուցիչ Տերտուղիանոսի համաձայն՝ «նա, ով մարդ պիտի լինի, արդէն իսկ մարդ է... Մովսէսի օրէնքը, իրօք, պատշաճ կերպով պատժում է այն

մարդուն, ով վիժեցում է առաջացնում [տե՛ս Ելք 21, 22]»[1]: Ի սկզբանէ սաղմում հոգու գոյութեան կողմնակից սբ. Գրիգոր Նիւսացին գրում է. «Որովհետեւ մարդու տեսակը, որ մարմնի մասերով պիտի ամբողջանայ, նրանում (սաղմում) առկա է ներունակութեամբ: Բայց այն գաղտնի է մնում այն պատճառով, որ անհնար է նրան յայտնուել անհրաժեշտ զարգացման յաջորդականութեան գոյութեան պատճառով: Այդպէս էլ հոգին՝ թէեւ անյայտ առկայ է նրանում (սաղմում), որը կը յայտնուի իրեն յատուկ բնական ներգործութեան միջոցով՝ մարմնական աճի հետ համատեղ ընթանալով: Որովհետեւ բեղմնաւորման ուժը դուրս է գալիս ոչ թէ մեռած մարմնից, այլ հոգի ունեցող ու կենդանի մարմնից: Դրա համար էլ մենք պնդում ենք, թէ արդար է մահացած եւ անհոգի չհամարել այն, ինչ որ սկիզբ է առնում կենդանի մարդուց, որը պիտի դառնայ մէկ այլ կեանքի խթան: Սկզբնական կառուցուածքային ժամանակահատուածում հոգու մէջ առաջանում է աճող ու սնուցող ուժ, ինչպէս արմատը, որ թաքնուած է հողի տակ, քանզի ընկալողի փոքրութիւնը (սաղմի) չի կարող տեղաւորել աւելի մեծը: Այնուհետեւ, երբ բոյսը դուրս է գալիս լոյս աշխարհ ու ցոյց տալիս արեւին իր ցօղունը, այնժամ ծաղկում է զգայական ներգործութիւնը, իսկ երբ հասունանայ ու հասնի համապատասխան բարձրութեան, այնժամ պտղի նման կը սկսի ներգործել բանական կարողութիւնը, որը, սակայն, միանգամից չի արտայայտւում, այլ անդամների կատարելագործման հետ համատեղ աճելով»[2]:

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ հայրապետը խօսում է մանկասպանութեան մասին՝ ասելով. «Պոռնկութեան համար բազմավնաս նենգութիւններ են նիւթում իրենց մէջ օտարների եւ ընտանիքների

1 Tertullian, De Anima 31.
Տե՛ս http://www.catholic.com/tracts/abortion (ստ 10/04/2017):

2 Святой Григорий Нисский, Об устроении человека, Санкт-Петербург, 2000, с.116-122, Святитель Григорий Нисский, Восточные отцы и учителя церкви IV века, том II, Москва, 1999, с. 138.

նկատմամբ... Կէսը որովայնում ճմլում են ու տարաժամ հանում մանուկներին, եւ կամ դեղերով ապականում են որովայնում, եւ կան էլ, որ ծնուածներին են սպանում»[1]: Նա նոյնպէս նշում է պտղի՝ ի սկզբանէ անձ լինելու հանգամանքը. «Իսկ մարդկանց ծնունդը սաղմնաւորութիւնից սկսած նորոգւում է, կեանք ստանում եւ աճում, զարգանում՝ սահմանուած օրերին ծնուելու համար: Իսկ նրանք, որ ասում են, թէ ինչպէս մանուկն է որովայնում անզգայ, բայց կենդանի, լռած ու դադարած խօսելուց ու լսելուց, գնալուց ու գործելուց, այսպէս են համարում նաեւ մարդկանց հոգիները՝ լռած ու ցածրացած. թող սա իմանան, որ սաղմնառութիւնից սկսած զարգանում է ու դառնում մանուկ յօրինուածքով՝ ըստ մարդկային կերպարանքի, եւ մանուկն սկսում է աճել մանկութեան սնունդով ծնուելու համար՝ մարմնի ու մտքի աճման հետ մէկտեղ որովայնում»[2]: Քրիստոնէական դաւանանքների ճնշող մեծամասնութիւնը հաւատում է, թէ արհեստական վիժեցումը մանկասպանութիւն է մօր արգանդում: Պտուղը, աւելի ճիշդ է ասել՝ մարդ արարածը, Աստծու շնորհով ապրելով մօր մարմնում, մի ամբողջ կեանք է այլ կեանքում: Անշուշտ, ոչ ոք, ու նոյնիսկ մայրը, իրաւունք չունի ոչնչացնելու ուրիշ կեանք՝ սպանութիւն գործելով:

Մոսկուայի Մ. Վ. Լոմոնոսովի անուան պետական համալսարանի էմբրիոլոգիայի (սաղմնային կենսաբանութեան) ֆակուլտետի դոկտոր-պրոֆէսորներ Դ. Վ. Պոպովն ու Վ. Ա. Գոլիչենկոն փաստում են հետեւեալը. «Ժամանակակից կենսաբանութեան (գենետիկայի կամ սերնդագիտութեան ու սաղմնաբանութեան) տեսանկիւնից մարդու՝ որպէս կենսաբանական անհատի կեանքն սկսւում է արական եւ իգական բջիջների սերտաճման ու մէկ կորիզ դարձած պահից, որն իր մէջ պարունակում է իւրայատուկ նիւթ: Մարդկային նոր օրգանիզմը ներարգանդային զարգացման ողջ ժամանակ չի կարող համարուել մօր մարմնի մասնիկը: Այն չի կարելի նմանեցնել

1 Սբ. Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում ճառք, Էջմիածին, 1894, էջ 81:

2 Նոյն տեղում, էջ 179, 183-184:

մայրական մարմնի որեւէ անդամի կամ անդամի մասի: Հետեւաբար, ակնյայտ է, որ յղիութեան ցանկացած փուլում արհեստական վիժեցումը մարդու՝ որպէս կենսաբանական անհատի՝ կեանքի կանխամտածուած դադարեցումն է»[1]:

Բերնարդ Նաթանսոնը (Bernard Nathanson)՝ մասնագիտացուած հիւանդանոցի նախկին տնօրէնը, իր տարիների գործունէութեան ընթացքում իրականացրել է մօտ վաթսուն հազար արհեստական վիժեցում: Խորհելով, թէ որքա՜ն անվնաս են այս գործողութիւնները, նա իրականացնում է գիտական բազում հետազօտութիւններ՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիա կամ արուեստագիտութիւն: Խիստ ու մանրակրկիտ հետազօտութիւններ անցկացնելուց յետոյ նա յայտնում է. «Այն փաստը, թէ սաղմն առանձին մարդկային արարած է՝ իրեն բնորոշ բոլոր անհատական յատկանիշներով, այսօր կասկածի տակ չի դրւում»: Իր այս բացայայտումը հաստատելու համար Նաթանսոնը պտղի սաղմի վրայ կատարում է վիժեցման ուլտրաձայնային նկարահանում: Այս յայտնի տեսաժապաւէնը, որ կոչւում է «Անձայն ճիչ», ապացուցում է, թէ ինչպէս է պտուղը կանխազգում գործիքի սպառնալիքը, որով իրականացւում է այդ ոճրագործութիւնը: Պտուղն արգանդում սկզբնապէս սկսում է անհանգիստ եւ աւելի արագ շարժուել. նրա սրտի բաբախումն աճում է 140-ից 200 զարկ մէկ րոպէում: Յետոյ պտուղը լայնօրէն բացում է իր բերանը ու կարծես թէ ուժգին բղաւում է անձայն ճիչով: Գիտական դիտարկումները, որոնք անցկացւում են ժամանակակից սարքաւորումների օգնութեան շնորհիւ, վկայում են, թէ 2,5 շաբաթ (18 օր) յետոյ պտղի մօտ արդէն զգալի է սրտի բաբախման զարկը, եւ մեկուսացման մէջ սկսում է գործել իր սեփական արեան շրջանառութեան համակարգը: Եօթը շաբաթ (50 օր) յետոյ արդէն չծնուած երեխայի մօտ արձանագրւում են ուղեղի զարկերը, ու

1 Заведующий кафедрой ембрилогии биологоческого факультета профессор, доктор биологических наук Д. В. Попов и В.А. Голиченков
Տե՛ս http://theme.orthodoxy.ru/abort/page01.html (ստ 30/03/2017):

փոքրիկ մարդն ունի լիովին ձեւաւորուած արտաքին ու ներքին օրգաններ: Տասը շաբաթ (70 օր) յետոյ երեխան ունի բոլոր այն յատկանիշները, որոնք ունեն երեխաներն իրենց ծնունդից յետոյ: Տասներեք շաբաթ (92 օր, 3 ամիս) յետոյ երեխան հասնում է զարգացման այնպիսի աստիճանի, որ շարժում է իր գլուխը, կարող է կատարել տարբեր շարժումներ ու ծամածռութիւններ, բռունցք է կծկում, գտնում է բերանը ու ծծում իր մատը:

Աստուածաշունչն ուղղակիօրէն չի անդրադառնում վիժեցմանը, բայց յայտնում է Աստծու տեսակէտն ու կամքը մարդու կեանքի վերաբերեալ, այդ թւում՝ արգանդում ձեւաւորուող պտղի կեանքի մասին: Այդ վկայութիւնները մենք կարող ենք մշակել որպէս յստակ քրիստոնէական տեսութիւն՝ արհեստական վիժեցման խնդրի մասին: Աստուածաշունչն ասում է, թէ մարդիկ ստեղծուած են Աստծու պատկերով. «Ասուած ասաց. «**Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ... Եւ Ասուած մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց**»» (Ծննդ. 1, 26-27): Առանձնայատուկ տեղ են գրաւում այն հատուածները, որոնք արտայայտում են աստուածաշնչեան վերաբերմունքը նորածին պտղի մասին, յատկապէս Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան մասին խօսքերը: Բանալին այստեղ այն է, թէ Աստծու Որդին մարմնաւորմամբ ընդունում է մարդկային բնութիւն՝ զանց չառնելով Կոյս Մարիամի արգանդում պտղի ձեւաւորման ու զարգացման ժամանակաշրջանը: Այս մասին է վկայում նաեւ Եսայու մարգարէութիւնը Քրիստոսի Ծննդեան մասին (Ես. 49, 1): Կեանքն արգանդում նկարագրուած է Յիսուսի Ծննդեան պատմութեան մէջ: Յատկապէս յստակօրէն է արտայայտւում Մատթէոս աւետարանիչը (Մտթ. 1, 20): Ըստ նրա՝ պտուղը, որ բնակւում է Կոյս Մարիամի արգանդում, արդէն Քրիստոսն է՝ Աստծու Որդին եւ մարդու Որդին: Վերջապէս, Ղուկաս աւետարանիչը վկայում է (Ղուկ. 1, 41), թէ Յովհաննէս Մկրտիչը կատարում է իր մարգարէական ծառայութիւնը արդէն մօր

արգանդում, եւ այս առումով մարդ արարած է ամբողջութեամբ: **«Մարիամը մտաւ Զաքարիայի տունը եւ Եղիսաբէթին ողջոյն տուեց, եւ երբ Եղիսաբէթը Մարիամի ողջոյնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում»**: Թարգմանուած յունարէն բնագրից «մանուկ» բառը Եղիսաբէթի արգանդում այն նոյն բառն է, որ օգտագործւում է որպէս արգանդից դուրս եկած նորածին մանուկ: Նորածին Յիսուսի համար նոյնպէս օգտագործւում է «մանուկ» բառը: Եղիսաբէթի համար սա աւելին էր, քան պարզապէս զգացմունքային մի պոռթկում. **«Եղիսաբեթը լցուեց Սուրբ Հոգով եւ բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Օրհնեա՛լ ես դու կանանց մէջ, եւ օրհնեա՛լ է քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ. որովհետեւ ահաւասիկ, երբ քո ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում»»** (Ղուկ. 1, 41-44): Աստուած մարդուն ճանաչում է դեռ նրա բեղմնաւորման պահից: Ըստ Աստուածաշնչի՝ Աստուած մեզ գիտէ դեռեւս մինչեւ մեր ծնուելը. **«Դո՛ւ ստեղծեցիր երիկամներն իմ, եւ մօրս որովայնից ինձ ընդունեցիր: Գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր, քանզի ահեղ ու սքանչելի ես դու, սքանչելի են գործերը քո, որոնք ես շատ սիրեցի: Չծածկուեց քեզնից իմ ոսկորը, որն ստեղծեցիր դու թաքուն, ոչ էլ ծածկուեց կարողութիւնն իմ երկրի խորքերում: Իմ անկատարութիւնները տեսան քո աչքերը, եւ այդ բոլորը գրուեցին քո գրքում»** (Սաղմ. 138, 13-16): **«Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ ես ընտրեցի քեզ, եւ դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ ու հեթանոսների վրայ մարգարէ կարգեցի»** (Երեմ. 1, 5): **«Նա Տիրոջ առաջ մեծ կը լինի, գինի եւ օղի չի խմի եւ մօր որովայնից սկսած Սուրբ Հոգով կը լցուի»** (Ղուկ. 1, 15): Արդէն նշեցինք, թէ Աստուածաշունչը հետեւողականօրէն օգտագործում է «մանուկ» բառը եւ՛ նորածնի, եւ՛ չծնուած պտղի համար, ու որեւէ ֆիզիկական տարբերութիւն չի ճանաչում այս երկուսի միջեւ: Սուրբ գրութիւններում չկայ որեւէ յատուկ իրադարձութիւն, թէ կոնկրետ ե՛րբ է «մարդ արարած»-ը դառնում «անձ»: Փոխարէնը, նա սկզբից էլ

նոյն մարդն է, որ աճում ու զարգանում է, ինչպէս արգանդի ներսում, այդպէս էլ նրանից դուրս: Թէ՛ ծնուածը եւ թէ՛ չծնուածը միեւնոյն անձն է: Նոր Կտակարանում «մանուկ» բառն (յունարէն՝ /βρέφος, brephos, բրեֆոս/) օգտագործւում է դեռ չծնուածին, նորածնին կամ էլ անչափահասին նկարագրելու համար: Օրինակ՝ Ղուկասի Աւետարանի 1, 44-րդ համարում «մանուկ» բառը կիրառւում է նաեւ չծնուածի համար. ***«Ահաւասիկ, երբ քո ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը*** *(βρέφος)* ***ցնծալով խաղաց իմ որովայնում»****: Այնուհետեւ, 2, 12-րդ համարում նոյն բառը նշանակում է «նորածին».* ***«Եւ սա՛ ձեզ համար նշան կը լինի. խանձարուրով փաթաթած եւ մսուրի մէջ դրուած մի մանուկ*** *(βρέφος)* ***կը գտնէք»****: Իսկ 18, 15-րդ համարում այդ բառը վերաբերում է անչափահաս երեխաներին.* ***«Մանուկներին*** *(βρέφος)* ***էլ մօտեցնում էին նրան, որպէսզի նրանց դիպչի»****: Հին Կտակարանում էլ նոյն կերպով է օգտագործւում «մանուկ» բառը (եբրայերէն דלוֹן /yeled, յէլէդ/): Ելքի 21, 22-րդ համարում «մանուկ» (կամ այլ թարգմանութիւններում՝ «տղայ») բառը նշանակում է յղի կնոջ չձեւաւորուած ու չծնուած պտուղը.* ***«Եթէ երկու տղամարդիկ կռուելիս հարուածեն մի յղի կնոջ, եւ կինը, պտուղը դեռ չձեւաւորուած, վիժի, հարուածողը թող հատուցի վնասը. ինչ որ պահանջի կնոջ ամուսինը, նա թող վճարի ըստ սահմանուած կարգի եւ տայ աղաչելով»****: Հին Կտակարանի այլ համարներում էլ այդ բառն օգտագործւում է անչափաս եւ նոյնիսկ երիտասարդ անձանց բնութագրելու համար:*

Այսպիսով, Աստուած ճանաչում է մարդուն, երբ նա տակաւին ձեւաւորւում է արգանդում: Նա գիտէ երկրի վրայ մարդու կեանքի իւրաքանչիւր օրը: Նրա սէրն ու հոգատարութիւնը միշտ մեզ հետ են մեր ամբողջ կեանքի ընթացքում: Մարդկային սաղմը, չնայած իր կենսաբանական թերի զարգացմանը, մարդ արարած է: Աստուածաշնչի համաձայն՝ ամէն մի մանուկ արգանդում եզակի մարդկային կեանք է, որ իր սիրոյ կապն ունի Տիրոջ հետ: Հետեւաբար, մանուկները մօր արգանդում պէտք է պաշտպանուած

լինեն: Աստուածաշունչը շատ բան ունի ասելու թոյլերի պաշտպանութեան օգտին, յատկապէս նրանց, ովքեր ձայն չունեն. ***«Ասածու խօսքո՛վ բաց քո բերանը եւ ողջամտութեա՛մբ դատիր բոլորին, քննի՛ր եւ տարբերի՛ր աղքատին ու խեղճին»*** *(Առակ. 31, 8):* ***«Արդա՛ր դատեցէք աղքատին ու խեղճին»*** *(Առակ. 31, 8): Մենք պատասխանատուութիւն ենք կրում խօսելու բոլոր նրանց կողմից, ովքեր չեն կարող խօսել իրենց անձերի համար, այդ թւում ներարգանդային երեխաների:*

Ակնյայտ է, թէ անպաշտպան արգանդում ապրող պտղի կանխամտածուած սպանութիւնը նոյնն է, ինչ չափահաս մարդու սպանութիւնը: Աստուածաշունչը յստակօրէն արգելում է ամէն տեսակի սպանութիւն: Պօղոս առաքեալն ասում է. ***«Բայց, երբ կամեցաւ Աստուած (նա ընտրել էր ինձ իմ մօր որովայնից եւ կոչեց իր շնորհների միջոցով)...»*** *(Դ. Թագ. 12, 21-23): Աստուա՛ծ է ստեղծում բոլոր մարդկանց, եւ ամէն մի կեանք շատ կարեւոր է Իր համար: Մովսէսի ժամանակ Աստուած սահմանեց օրէնքներ՝ առաջնորդելու Իսրայէլի ժողովուրդին: Գոյութիւն ունէին որոշ պատժական օրէնքներ տարբեր յանցագործութիւնների համար: Աստուածաշնչի «Ելք» գրքում չծնուած երեխային մահ պատճառելու համար պատժի էին ենթարկում՝ ըստ հետեւեալ սահմանուած կարգի.* ***«Թող հատուցի ըստ այս կարգի. կեանքի դիմաց՝ կեանք»*** *(տե՛ս Ելք 21, 22-25): Այլ կերպ ասած, Աստուած որպէս սպանութիւն է տեսնում այն, ինչի հետեւանքով արգանդում վախճանուել է չծնուած երեխան: Այս հատուածներին աջակցում է այն տեսակէտը, թէ չծնուած մանուկները մարդկային էակներ են եւ մնացած մարդկանց նման հաւասար կարեւորութիւն ունեն: Սաղմոսագիրքը տալիս է արգանդում գտնուող պտղի կեանքի բանաստեղծական նկարագրութիւնը.* ***«Դո՛ւ ստեղծեցիր երիկամներն իմ, եւ մօրս որովայնից ինձ ընդունեցիր: Գոհութիւն պիտի մատուցեմ քեզ, Տէ՛ր, քանզի ահեղ ու սքանչելի ես դու, սքանչելի են գործերը քո, որոնք ես շատ սիրեցի: Չծածկուեց քեզնից իմ ոսկորը, որն***

ստեղծեցիր դու թաքուն, ոչ էլ ծածկուեց կարողութիւնն իմ երկրի խորքերում: Իմ անկատարութիւնները տեսան քո աչքերը, եւ այդ բոլորը գրուեցին քո գրքում: Յերեկը դրանք մոլորուեցին, ու չկար մէկը, որ առաջնորդէր դրանց» *(Սաղմ. 138, 13-16): Այստեղ կեանքն արգանդում նորից նկարագրւում է որպէս Աստծու արարչութիւն, ուստի ունի հսկայական արժէք: Երեմիա մարգարէի գրքում Աստուած ասում է.* ***«Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ ես ընտրեցի քեզ, եւ դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ ու հեթանոսների վրայ մարգարէ կարգեցի»*** *(Երեմ. 1, 5): Նոյնիսկ նախքան Երեմիայի ծնունդը Աստուած ձեւաւորեց ու սրբացրեց մարգարէին՝ Իր կամքը կատարելու նպատակով: Սաղմոսերգուն էլ վկայում է.* ***«Չծածկուեց քեզնից իմ ոսկորը, որն ստեղծեցիր դու թաքուն»*** *(Սաղմ. 138, 15): Նաեւ՝* ***«Դո՛ւ հանեցիր ինձ արգանդից, իմ յոյսը դարձար մօրս կաթով սնուելու օրից»*** *(Սաղմ. 22, 10): Նոյն վկայութիւնն է անում Պօղոս առաքեալն իր՝ գաղատացիներին ուղղուած նամակում.* ***«Նա ընտրել էր ինձ իմ մօր որովայնից եւ կոչեց իր շնորհների միջոցով»*** *(Գաղ. 1, 15): Արհեստական վիժեցումը դիտւում է որպէս յանցանք Աստծու դէմ, իսկ մանուկները դիտւում են որպէս Տիրոջ օրհնութիւն.* ***«Տիրոջ ժառանգութիւնը նրա որդիներն են, որոնք նրա վարձն են, պտուղը նրա որովայնի: Ինչպէս նետերը հզօրի ձեռքում, այնպէս են որդիներն անկեալների: Երանի՛ նրան, ով իր ուզածի չափ կ'առնի այդ նետերից. երբ դարպասի մօտ իր թշնամիների հետ խօսելու լինի, նա ամօթով չի մնայ»*** *(Սաղմ. 126, 4-6):*

Ինքնաբեր կամ յօժարակամ վիժումը նոյնպէս նորածնի մահն է նախքան նրա ծնուելը: Մօր արգանդը մանկան համար նախատեսուած է լինել ջերմութեան եւ անվտանգութեան վայր: Այս մեղքի աշխարհն առաջացնում է սերնդագիտական (գենետիկ) խնդիրներ, գունային (կամ քրոմոսոմական) սխալներ ձուաբջջի կամ սերմաբջջի մէջ: Եթէ թերութիւնները չափազանց մեծ են, ապա պտուղը շատ յաճախ տարերայնօրէն վիժում է: Ինքնաբեր վիժումն առաջանում է արգանդի

պատի եւ պտղաձուի կապի խախտումից։ Մօր վերարտադրողական համակարգի խնդիրները կարող են նաեւ առաջացնել ծննդաբերելու ժամկէտների տեղափոխութեան խնդիրներ։ Վիժուածքն անձի մահն է (տե՛ս Սաղմ. 138, 13-16)։ Սակայն մանուկը մօր արգանդում Աստծու աչքին երեւում է որպէս մարդ էակ, որ ստեղծուած է Իր պատկերով (տե՛ս Ծնն. 1, 27)։ Ու քանի որ Աստուած իւրաքանչիւր վիժուածքին տեսնում է որպէս մարդ արարած, ուստի նոյնը եւ մենք պէտք է տեսնենք։ Լիովին տեղին է երեխային անուն տալ՝ճանաչելով նրա անհատականութիւնը եւ սգալ նրա կորստեան համար։ Անկախ այն բանից, թէ յղիութիւնը նախատեսո՞ւմ էր, թէ՞ ոչ, ցանկալի՞ էր, թէ՞ ոչ, վիժեցումը մանկան մահ է ու կորուստ։ Հանգամանքներն ու իրավիճակը կարող են դժուար ու ծանր լինել, բայց իւրաքանչիւր մանուկ, անկախ այն բանից, թէ որքան կարճ է իր կեանքը, օրհնութիւն է։ Մանկան կորուստը մշտատեւ չէ։ Երբ Դաւթի երեխան մեռաւ, նա յայտարարեց, թէ նորից տեսնելու է իր երեխային. «**Ես եմ նրա մօտ գնալու, իսկ նա ինձ մօտ չի վերադառնայ**» (Դ. Թագ. 12, 21-23)։ Մենք էլ կարող ենք մխիթարուել նման համոզումով։

Հնագոյն ժամանակներից սկսած՝ Ընդհանրական եկեղեցին համարում էր, թէ յղիութեան արհեստական ընդհատումը ծանր յանցանք է։ Հայ եկեղեցին բացարձակապէս դէմ է վիժեցում հասկացողութեանը։ Այն քննադատում ու դատապարտում է՝ համարուելով մեծագոյն մեղքերից մէկը, քանի որ հէնց Աստուածաշունչը հստակ արգելում ու դատապարտում է անմեղ անձի կեանքն առնելը։ Գրուած է. «**Մի՛ սպանիր**» (Ելք 20, 13)։ Նաեւ՝ «**Ով թափի մարդու արիւնը, նրա արեան փոխարէն թող թափուի իր արիւնը, որովհետեւ Աստծու պատկերով եմ ստեղծել ես մարդուն**» (Ծնն. 9, 6)։ Դարձեալ՝ «**Անիծեալ լինի այն մարդը, որը կաշառք կը վերցնի անմեղ մարդ սպանելու համար**» (Երկ. Օր. 27, 25)։ Աստուած ատում է «**անմեղ արիւն թափող ձեռքեր**» (Առակ. 6, 18)։ Եկեղեցու հայրերը դատապարտում են յղիութեան արհեստական ընդհատումը։ Դեռեւս առաջին դարում այս մասին

գրուած է Թադէոս առաքեալին վերագրուող եկեղեցական կանոններում. «Եթէ... որեւէ մէկը շնանալու համար որդեծնութիւնը խափանում է, այդպիսին ապաշխարողների հետ թող ապաշխարի բազում հառաչանքներով»[1]: Եկեղեցական կանոնները արհեստական վիժեցումը հաւասարեցնում են սպանութեանը: Այսպիսի գնահատումը հիմնւում է այն համոզման վրայ, թէ մարդու ծնունդն Աստծու պարգեւն է, ուստի բեղմնաւորման պահից ապագայ մարդու կեանքի ցանկացած ոտնձգութիւն յանցագործութիւն է: Եկեղեցու տեսանկիւնից դիտուած՝ մարդու կեանքը չի սկսւում ծննդեան պահից, ոչ էլ աւարտւում է մահուամբ: Սբ. Բարսեղ Մեծն իր 2-րդ կանոնում ասում է. «Նա, ով միտումնաւոր ոչնչացրել է արգանդում բեղմնաւորուած պտուղը, պէտք է դատապարտուի սպանութեան համար: Մեզ մօտ չկայ նուրբ տարբերակումը ձեւաւորուած կամ դեռ չձեւաւորուած պտղի: Այս դէպքում դա ոչ միայն այն մասին է, թէ ինչպէս է ծննդաբերութիւնը պաշտպանւում, այլեւ այն, թէ կինն ինքն իր վրայ յարձակում է գործում եւ այդ յարձակման փորձերից շատ յաճախ մահանում է: Սաղմի ոչնչացումը լրացուցիչ յանցագործութիւն է՝ երկրորդ սպանութիւն, եթէ մենք այն կատարել ենք միտումնաւոր կերպով: Բայց պէտք չէ ամբողջ կեանքը թողնել կանանց ապաշխարութեան վրայ, այն էլ տասը տարի ժամկէտով: Ու թող նրանց բուժումը ոչ թէ զուտ ժամանակով չափուի, այլ իրենց ապաշխարութեան բնոյթով»[2]: Իսկ 8-րդ կանոնում սբ. Բարսեղ Մեծն ասում է. «Արգանդի մէջ բեղմնաւորուած պտղի վիժեցման համար դեղորայք տուողները մարդասպաններ են, ու բոլոր նրանք, ովքեր ընդունում են մանկասպանութեան թոյները»: «Իսկ ովքեր վատ դեղերով սպանում են մանուկներին որովայնում եւ արգանդը կապում են դեղերով, յաճախ պոռնկանալու համար... քահանան նրանց պէտք է ապաշխարութեան կարգին բերի եւ նա եօթը տարի

1 Վազգեն Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հատ. Բ., Երեւան, 1971, էջ 33-34:

2 St. Basil the Great, Letter 188:2 or First Canonical Letter, Canon 2. Տե՛ս http://www.orthodoxchurchquotes.com/tag/abortion/ (ստ 9/04/2017):

ունկնդրի վիճակում թող մնայ, երեք տարի հսկողութեան տակ, եւ արտասուքով ու աղքատներին հատուցելով թող արժանանայ օրէնքին։ Իսկ եթէ նոյն սխալի մէջ մեռնի, ահա չար է մեղաւորի մահը, այդպիսիները կը զրկուեն սուրբ օրէնքից եւ քրիստոնեաների դիրքով թող չթաղուեն»[1]*։ Սբ. Բարսեղ Կեսարացու կանոնագրքում նաեւ գրուած է. «Գիտակցաբար արգանդի պտուղ ոչնչացնողը ենթարկւում է մարդասպանի պատժին... Մեղաւոր կինն այս դէպքում պատժւում է ոչ միայն պտուղը ոչնչացնելու համար, այլեւ իր կեանքը վտանգի ենթարկելու համար։ Շատ է պատահում, որ իրենք էլ են մեռնում դրանից»*[2]*։ Սբ. Եփրեմ Ասորին ասում է. «Ով որ մահացաւ մօր արգանդում ու կեանքը չտեսաւ, նրան Դատաւորը չափահաս կը դարձնի նոյն պահին, երբ կեանքի կը վերադարձնի մահացածներին (ընդհանուր Յարութեան ժամանակ)... Նրանք, ովքեր այստեղ չեն տեսել իրար, կը տեսնեն այնտեղ, եւ մայրը կ'իմանայ, թէ սա իր որդին է, եւ որդին կ'իմանայ, թէ սա իր մայրն է... Պոռնիկը, որ ազատուել է իր բեղմնաւորուած արգանդի պտղից, որպէսզի սա չտեսնի այս աշխարհը, Դատաւորը թոյլ չի տայ նրան տեսնելու նոր դարաշրջանը։ Ինչպէս նա (մայրը) թոյլ չտուեց իր երեխային այս դարում վայելելու կեանքն ու լոյսը, այդպէս էլ Նա (Աստուած) այն դարում նրան պէտք է զրկի կեանքից ու լոյսից։ Քանի որ նա որոշեց իր արգանդի պտուղը վաղաժամ թաքցնել երկրի մթութեան մէջ, ապա նոյնպէս եւ նա՝ իբրեւ արգանդի մեռած պտուղ, պէտք է վտարուի արտաքին խաւարը։ Այսպէս է լինելու բոլոր պոռնիկների հատուցումը, որոնք ոտնձգում են իրենց երեխաների կեանքը»*[3]*։*

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «Եւ ինչո՞ւ ես դու ցանում այնտեղ, որտեղ հողը ոչնչացնում է պտուղը, որտեղ

---

1 Վազգեն Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հատ. Բ., Երևան, 1971, էջ 151։

2 Ն. Վ. Մելիք-Թանգյան, Հայոց Եկեղեցական իրաւունքը, հ. Ա, Շուշի, 1903, էջ 237։

3 Свт. Ефрем Сирин, “О страхе Божием и о последнем суде”, изд. 1900г., ч.4, стр. 105.

անպտղութեան պատճառները շատ են, որտեղ մինչեւ ծնունդը տեղի է ունենում սպանութիւն: Այնպէս որ դու ոչ միայն թողնում ես, որ պոռնիկը պոռնկութեան մէջ մնայ, այլեւ ստիպում ես, որ մարդասպան դառնայ: Տեսնո՞ւմ ես, թէ ինչպէս է հարբեցողութիւնից առաջանում շնութիւնը, շնութիւնից՝ դաւաճանութիւնը, դաւաճանութիւնից՝ սպանութիւնը, կամ աւելի ճիշդ ասած՝ աւելի մի վատ բան, քան սպանութիւնն է: Ես նոյնիսկ չգիտեմ՝ ինչպէս դա անուանել, քանի որ այստեղ չի մեռնում ծնուածը, այլ կանխւում է հէնց ինքը՝ ծննդաբերութիւնը: Արդեօք սա չի՞ նշանակում, թէ դու չարաշահելով աղճատում ես Աստծու պարգեւը, պայքարում ես աստուածային օրէնքների դէմ, ձգտում ես անէծքին՝ իբրեւ օրհնութեան հետեւել, ծննդեան գանձարանը վերածում ես սպանութեան գանձարանի, եւ կնոջը, որ ստեղծուած է ծննդաբերութեան համար տրամադրում ես սպանութեան: Ի վերջոյ, արատաւոր կինը, որպէսզի միշտ հաճելի ու գրաւիչ լինի իր սիրահարների համար, եւ աւելի շատ գումար վաստակի, չի հրաժարւում նաեւ դա (արհեստական վիժեցում) անել, եւ այսպիսով մեծ կրակ է հաւաքում քո գլխին, քանի որ, թէեւ այդ որոշումը (յանցագործութիւնը) պատկանում է նրան, բայց դու ես դրա հիմնական պատճառը: Այստեղից առաջանում է նաեւ կռապաշտութիւնը: Շատ կանայք որպէսզի հաճելի լինեն, օգտագործում են հմայութիւն, գինարբուք, սիրոյ դեղորայքներ եւ անհամար այլ միջոցներ: Սակայն, չնայած այս խայտառակ մեծ սպանութեանն ու կռապաշտութեանը, շատերին ոչինչ է թւում վիժեցման գործը, ու շատերն էլ ունեն իրենց սեփական կինը: Ահա այստեղ է արատների ամենամեծ հոսքը: Այստեղ են պատրաստւում բժշկական դեղամիջոցները ոչ միայն պոռնկի արգանդի պտղի դէմ, այլեւ վիրաւորուած կնոջ համար: Այստեղ կան հազարաւոր չարագործութիւններ, դիւական կախարդութիւններ ու մեռելականչութիւններ: Եւ այստեղ են առաջանում ամէնօրեայ

վէճերը, անհաշտ պայքարն ու բոպէական բախումները»[1]։

*Վարդան վարդապետ Այգեկցին եւս դատապարտում է որդեծնութեան արհեստական խափանումը. «Շնութեան պատճառով որքա՜ն անբաւ արիւն է հեղւում երկրի վրայ գաղտնի ու յայտնաբար, թունաւորմամբ, պիղծ հնարներով եւ սպանութեամբ, կամ որքա՜ն մանուկ լոյս աշխարհ չի գալիս մարդկանց վախի եւ ամօթի պատճառով... Եւ հազար անգամ վա՜յ այն կնոջը, ով չար դեղերով ու հնարքներով խափանում է որդեծնութիւնը եւ ուրիշներին էլ խրատում է նոյնն անել... Իւրաքանչիւր մանկան դիմաց, որի ծնունդը խափանել են չար դեղերով, Աստուած նրանցից հասուն մարդու արիւն պիտի պահանջի ահաւոր Ատեանում»[2]։ Նաեւ նշում է. «Երբ կինը տղամարդուց յղիանում է, երեք օրում սերմը որովայնում դառնում է արիւն, իսկ վեցերորդ օրը արիւնից ծնւում է որդը՝ ըստ Դաւիթ մարգարէի, որ ասում է. «**Ես որդ եմ եւ ոչ թէ մարդ**» (Սաղմ. 21, 7)։ Եւ որովայնում քիչ-քիչ աճում է որդը, եւ ի յայտ են գալիս մարդու անդամները... Ով սրանից յետոյ որեւէ հնարով սպանի մանկանը ու վիժեցնի որովայնից, կատարեալ մարդասպան է»[3]։*

Նաեւ մէջբերենք մի հատուած սբ. Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարցմանց»-ից. «Ո՛չ հոգին է մարմնից առաջ ստեղծւում, եւ ո՛չ էլ մարմինը՝ հոգուց առաջ, այլ միասին, միաժամանակ են ստեղծւում։ Ո՛չ ժամանակով առաջ կամ յետոյ եւ ո՛չ բնութեամբ, այլ մի է սկիզբը մարդու գոյութեան։ Եւ եթէ մէկն ասի, թէ ո՞րն է մարդու գոյութեան այդ մէկ սկիզբը, պէտք է պատասխանել, թէ մարդու գոյութեան նոյն սկիզբը մեր մէջ եղած սաղմնային սկիզբն է, որովհետեւ սաղմնային զօրութիւնը սկիզբն է նաեւ նիւթական մարմնի կազմուածքի ու հոգու ծննդեան։ Եւ թէ ի՞նչ է նշանակում ասել, թէ զօրութեան մէջ

1 St. John Chrysostom, Homily 24 on Romans.
Տե՛ս http://www.newadvent.org/fathers/210224.htm (առ 30/03/2017)։

2 Վարդան վարդապետ Այգեկցի, Խրատ բոլոր քահանաներին եւ ժողովրդին, Սբ. Էջմիածին, 2001, էջ 63-64։

3 Վարդան Այգեկցի, Խրատներ, Երեւան, 1999, էջ 158-159։

երկու բան է տեսանելի, պէտք է այսպէս պատասխանել՝ մարմնական նիւթը եւ ներգործականը (ազդումը)՝ համաձայն արարչագիր այն հրամանի, որ ասաց. «**Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք**» (Ծնն. 1, 28)... Հոգին ո՛չ ժամանակով եւ ո՛չ էլ բնութեամբ յետոյ չի ստեղծուում, այլ միայն դասով ու կարգով։ Քանի որ կազմաւորող զօրութիւնը, որ նիւթի մէջ է, ազդուելով արարչագիր հրամանից, նախ կազմում եւ պատրաստում է նիւթը՝ ընդունելու համար տնկականը եւ ապա զգայականը, որից յետոյ բանականը՝ աստուածային ծագմամբ։ Եւ ժամանակով առաջ ու յետ չեն՝ երեք պատճառով։ Նախ, որ այն նիւթը իր մէջ ունի տնկականի բնական կենդանութիւնը, իսկ տնկականը զգացականի մասն է, իսկ զգացականը՝ բանականի, եւ սրանք չեն տարբերուում ընդհանուրից, քանի որ մարդու մէջ մի են բնութեամբ, թէպէտ այլ են ներգործութեամբ... Ինչպէս արեւը ծագելուց նախ նշոյլներն են երեւում եւ ապա արեգակը, այսպէս էլ բանական հոգու նշոյլներն են զգայականն ու տնկականը։ Եւ կամ ինչպէս նախ թագաւորի զօրքերն են հասնում իջեւան, սակայն ասում են թագաւորն է գալիս, թէպէտ թագաւորը յետոյ է գալիս։ Այսպէս էլ հոգու հնազանդեալ զօրքերն են զգայականն ու տնկականը, եւ հոգին նրանց հետ է մարմնում... Ինչպէս ցորենի հատիկն իր մէջ զօրութեամբ ունի խոտը, ծաղիկը եւ հասկը, ու սրանք միասնական են հատիկի մէջ (զօրութեամբ), որ որոշ ժամանակից յետոյ ըստ հերթականութեան երեւում են։ Նոյնպէս էլ իմացի՛ նաեւ հոգու մասին։ Ինչպէս հողի մէջ տնկուածը նախ դալարում է, եւ երբ հաստատուում է, ծաղկում է, եւ երբ առաւել է հաստատուում, ապա պտղաբերում է։ Այսպէս էլ հոգին անկատար նիւթի հետ է սնուում եւ երբ հաստատուում է զգայութեամբ, ծաղկում է, երբ առաւել է հաստատուում բանականութեամբ, պտղաբերում է վերնային խնամքով, ինչպէս պտուղն այն արեգակից։ Եւ կամ ինչպէս նկարիչները մինչ ոտքն ու ձեռն են նկարում, մարդու պատկերը չի երեւում, այլ՝ ոտքերի ու ձեռքերի (պատկերը), բայց երբ ձեւանում է դէմքը, նոյն պահին երեւում է իր մէջ մարդու պատկերը։ Այսպէս էլ բանական հոգին միաժամանակ է երեւում մարմնի ձեւաւորման

*հետ մէկտեղ... Այն նիւթն իր մէջ ծածկուած պահում է մարմնի մասերը՝ ձեռքերը եւ ոտքերը, միսն ու մազը, որ նրանից յետոյ են երեւում: Այսպէս էլ հոգին է նրա մէջ ծաղկեալ, եւ յետոյ յայտնւում են ըստ կարգի. նախ տնկականը, ապա՝ զգայականը, եւ ուր երեւում են սրանք Աստծու հրամանով, այնտեղ երեւում է նաեւ բանականը: Եւ կամ ինչպէս ծնուած մանուկն իր մէջ ունի պահած հոգին, բայց նա կերակրւում է, ապա՝ զգում եւ յետոյ խօսում: Այսպէս է նաեւ արգանդի ներքին կեանքը... Իմացիր նաեւ սա, ...որ նմանը եւ աննմանն է ծնւում, ինչպէս հատիկը՝ ցորենը եւ ցօղունը»... Արական եւ իգական սերմերից պանիր է լինում [պանրի պէս թանձրացած] մինչեւ 6-րդ օրը՝ ըստ Յոբի, որ ասում է. «**Մի՞թէ չեմ կաթի պէս կթել ինձ, պանրի պէս մակարդել**» (Յոբ 10, 10): Եւ այս մասին է, որ ըստ մարգարէութեան ասւում է. «Երկուսը մէկ մարմին կը լինեն», այսինքն՝ ծնողների երկու սերմերից լինում է մէկ զաւակի մարմին: Ապա կազմւում է զգայական ձեւը մինչեւ 20-րդ օրը՝ ըստ մարգարէի, որ ասում է. «**Ես որդ եմ եւ ոչ մարդ**» (Սաղմ. 21, 7): Եւ նախ սիրտն է ձեւաւորւում միւս անդամներից առաջ, քանի որ սերմի ջերմութիւնը կուտակւում է նրա մէջ, եւ կազմում է սիրտը: Եւ 21-րդ օրուանից շնչի երեւալուց յետոյ ձեւաւորւում է մարդու կերպարանքը (ձեւը)...»*[1]:

Քրիստոնէական յայտնի իրաւաբան Մարկ Ֆելիքսը գրում է. «Ձեր մէջ կան որոշ կանայք, ովքեր յատուկ թմրանիւթեր խմելով մարում են ապագայ մարդու կեանքն իրենց իսկ որովայնում եւ այդպէս սպանութիւն են գործում, նոյնիսկ մինչեւ ծննդաբերութիւնը»[2]: *Մայրերը չեն կարող փախչել կամաւոր վիժեցման այս ծանր մեղադրանքից: Ձծնուած երեխան ամբողջութեամբ վստահուած է իր մօր խնամքին, այդուհանդերձ, մայրը դաւաճանում է այդ վստահութիւնը եւ մղում է նրան արհեստական սպանութեան:*

---

1 Սբ. Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729 (ՌՃՀԸ=1178+551), էջ 251-261:

2 Mark Felix, Christian Lawyer, Octavius chap. 30 from 170 AD. Տե՛ս http://www.bible.ca/H-Abortion.htm (առ 10/04/2017):

Մեղաւոր են նաեւ այն հայրերը, ովքեր ճնշում են գործադրում մօր վրայ չծնուած երեխայից ազատուելու համար, ու չեն արգելում իրենց կանանց յղիութեան ընդհատումը: Չծնուած երեխաների սպանութեան մէջ հաւասարապէս մեղաւոր են եւ այն բժիշկները, որոնք կատարում են վիժեցումն ու զանազան դեղորայք են նշանակում վիժեցման համար: Մեղաւոր են նաեւ օրէնսդիրները, ովքեր աջակցում ու զօրակցում են արհեստական վիժեցման օրէնքներին: Վերջապէս, մեղաւոր են բոլոր նրանք, ովքեր նպաստում են սեռային հանդուրժողութեանը կամ ամենաթողութեանը, խորհուրդներ են տալիս կատարել վիժեցումը, տարածում են վիժեցման գովազդը, խօսում են վիժեցման ազատութեան մասին, արտադրում ու վաճառում են սպանութեան թունաւոր դեղամիջոցները:

Արդ՝ կարճառօտ պատասխանենք որոշ հարցերի այս խնդրի վերաբերեալ:

Ասում են. «Սա իմ մարմինն է, ու միայն ես կարող եմ վերահսկել այն եւ ունենալ ընտրելու իրաւունքը»:

Պատասխանենք. Վիժեցումն սպանում է անմեղ մարդ արարածին, որը տարբեր է իր մօրից: Մայրը չունի առաւել իրաւունք սպանել իր դեռ չծնուած երեխային, ինչպէս եւ իր ծնուած երեխային: Բեղմնաւորման պահից սկսած մայրն իր մէջ կրում է գենետիկօրէն մի իւրայատուկ ու բացառիկ մարդ արարածին: Մայրը բարոյապէս չի կարող կորցնել նոյնիսկ իր իսկ սեփական կեանքը: Մտածի՛ր այդ մասին. հայրն իրաւունք ունի՞ արդեօք սպանել իր երեխային միայն այն պատճառով, որ նա ապրում է իր տանը: Իհա՛րկէ ոչ: Նոյնպէս եւ մայրն իրաւունք չունի սպանել իր երեխային միայն այն պատճառով, որ սա ապրում է իր արգանդում:

Ասում են. «Պտուղը պարզապէս բջիջների հիւսուածքային բեկոր է»:

Պատասխանենք. Նոյնիսկ եթէ բեղմնաւորուածը մէկ բջիջ է, պտուղն արդէն ունի իր սեփական կեանքի սկզբունքն ու սեփական գենետիկան: Այս փոքրիկ բջիջների հիւսուածքային բեկորը բացա-

ռիկ ու յատակ անհատականութիւն է, որ միայն ժամանակի եւ սնուցման շնորհիւ է զարգանում ու դառնում հասուն մարդ: Պտղի եւ յիսնամեայ հասուն մարդու միակ զգալի տարբերութիւնը անցած տարիներն են ու կերակուրը: Պարզապէս այն պատճառով, որ երեխան փոքրիկ է, չի նշանակում, թէ նա մարդ արարած չէ: Մենք բոլորս մէկ անգամ եւս եղել ենք «բջիջների հիւսուածքային բեկոր»:

Ասում են. «Ծնուած երեխան անգիտակից է, նա չի կարող տրամաբանել, փոխազդել կամ համագործակցել ուրիշների հետ: Հետեւաբար, նա իսկապէս դեռ մարդ արարած չէ. այնպէս որ մենք կարող ենք նրան չէզոքացնել»:

Պատասխանենք. Իսկ ինչ ասենք այն երեխաների մասին, որոնք ծնուել են մտաւոր խանգարումներով ու չունեն տրամաբանութիւն կամ ուրիշների հետ համագործակցելու կարողութիւն: Արդեո՞ք նրանք ոչ-անձինք են, որոնց կարելի է սպանել: Իսկ ինչ ասենք կոմայի կամ մահաքնի մէջ գտնուող մարդկանց համար: Նրանք էլ չեն կարող տրամաբանել ու համագործակցել ուրիշների հետ: Արդեո՞ք նրանք դադարում են անձ լինելուց: Կարո՞ղ ենք նրանց սպանել: Այս «անձ»-ի սահմանումը կամայական է ու դէմ է ամէն սկզբունքների, որոնք յանգեցնում են այնպիսի եզրակացութիւնների, որ նոյնիսկ վիժեցման շատ համախոհներ չեն ընդունի:

Ասում են. «Պտուղը դառնում է մարդ արարած, երբ կարող է ապրել ինքնուրոյն, մօր արգանդից դուրս»:

Պատասխանենք. Իսկ նորածին կամ մի քանի տարեկան երեխաներից ովքե՞ր կարող են ապրել ինքնուրոյն՝ առանց սննդի եւ ծնողների հոգատարութեան: Նոյնիսկ լինելով տարեց՝ մենք կախում ունենք ուրիշների խնամքից եւ օգնութիւնից՝ ապրելու համար: Եթէ ուրիշներից կախում ունենալը նշանակում է մարդ չլինել, ուրեմն մանուկները, հաշմանդամները, վիրաւորները, հիւանդներն ու բոլոր տարեց մարդիկ կարող են սպանուել ըստ պահանջի:

Ասում են. «Արհեստական վիժեցումը պաշտօնապէս օրինականացուած է»:

Պատասխանենք. *Այն, որ վիժեցումն օրինականացուած է, անիմաստ է։ Պաշտօնապէս օրինականացուած էր նաեւ 20-րդ դարի Հայոց ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում եւ հրէական Հոլոքոստը նացիստական Գերմանիայում։ Վիժեցման պաշտօնական օրինականացումը ցոյց է տալիս միայն, թէ բարոյապէս ինչ անկում է ապրում տուել հասարակութիւնը։ Ցանկացած մարդկային կամ պաշտօնական օրէնք, որը հակասում է աստուածային օրէնքին, անվաւեր է ու չար։ Մեր հասարակութեան մէջ կարող է լինել պաշտօնապէս վաւերականացուած օրէնք, բայց լինել սխալ ու չար։*

Ասում են. *«Եթէ վիժեցումը դառնայ ապօրինի, ապա միեւնոյն է, այն դեռ կը շարունակուի՝ չնայած ստեղծած փակուղիներին»։*

Պատասխանենք. *Այո՛, վիժեցումը շարունակուելու է։ Նաեւ բռնաբարութիւնն է շարունակուելու՝ չնայած օրէնքը դատապարտում է այն։ Մի՞թէ դա այլեւս յանցագործութիւն չէ։*

Ասում են. *«Դուք չէք կարող օրինականացնել բարոյականութիւնը»։*

Պատասխանենք. *Բարոյականութիւնը մենք միշտ ենք օրինականացնում։ Մենք ունենք զանազան օրէնքներ ընդդէմ բռնաբարութեան, գողութեան, սպանութեան, հարբած վիճակում մեքենայ վարելու, երեխաների չարաշահման, եւ այլն։ Քանի որ այս արարքներն անբարոյական են ու սխալ, ոչ ոք չի հաւատում, թէ մենք պէտք է թոյլ տանք երեխաների գաղտնի շահագործումը մեր տներում։ Մենք ունենք տարբեր օրէնքներ մարդկանց հեռու պահելու սարսափելի բաներ գործելուց։ Վիժեցումն ահաւոր սխալ բան է, եւ մեր օրէնքները պէտք է դատապարտեն այն։*

Ասում են. *«Ես անձապէս դէմ եմ վիժեցմանը, բայց չեմ ուզում զգուշացնել ուրիշին, թէ ինչ անել».*

Պատասխանենք. *Վիժեցումն այն խնդիրը չէ, որի հանդէպ կարելի է չէզոք մնալ։ Այն կա՛մ սարսափելի սպանութիւն է, կա՛մ անվնաս բժշկութիւն։ Եթէ դա սպանութիւն է, ապա մենք չենք կարող թոյլ տալ, որ այն շարունակուի։ Պատկերացրէք, թէ դուք քայլում*

էք փողոցով ու վեր նայելով՝ տեսնում էք մի կին, ով իր նորածին երեխային ուզում է դուրս նետել երկրորդ յարկի պատուհանից: Արդեո՞ք դուք կը շարունակէք անտարբերութեամբ հեռանալ, երբ տեսնէք դա, ասելով՝ «Դէ, ես դա չէի անի, բայց ես չեմ միջամտի: Ի վերջոյ, դա իր որոշումն է»:

Ասում են. *«Ես դէմ եմ ուշ եւ երկարաժամկէտ վիժեցմանը, բայց կարծում եմ, թէ պէտք է վիժեցումը թոյլ տալ առաջին եռամսեակում՝ առաջին տասներկու շաբաթների ընթացքում»:*

Պատասխանենք. *Ամէն փաստարկ, որ օգտագործւում է արդարացնելու վաղ վիժեցումը, կարող է օգտագործուել նաեւ արդարացնելու ուշ վիժեցումը: Ամէն փաստարկ, որ օգտագործւում է արդարացնելու ուշ վիժեցումը, հաւասարապէս վաւերական է դառնում վաղ վիժեցման դէմ: Ինչն է տարբերութիւնը տասներկու շաբաթուայ պտղի, որին կարելի է սպանել, եւ միւսների միջեւ: Սա զուտ կամայական բաժանում է, որ չունի կենսաբանական, գաղափարական կամ բարոյական հիմք:*

Ասում են. *«Մենք պէտք է բացառութիւն անենք բռնաբարութեան դէպքում»:*

Պատասխանենք. *Բռնաբարութիւնը սարսափելի յանցագործութիւն է: Այն մարդիկ, ովքեր կատարում են դա, պէտք է անկասկած պատժուեն: Այնուամենայնիւ, չծնուած երեխան, որը բռնաբարութեան հետեւանք էր, անմեղ մարդ է եւ ունի նոյն կեանքի իրաւունքը, ինչպէս որ բոլորը: Ինչո՞ւ մենք պէտք է աւելացնենք սպանութեան յանցագործութիւնը այդ միւս յանցագործութիւնների վրայ: Մենք պէտք չէ երեխայ սպանենք իր հօր մեղքի պատճառով: Անմեղ մարդ սպանելը երբէք արդարացուած չէ :*

Ասում են. *«Աւելի լաւ է երեխայի արհեստական վիժեցումը, քան «անցանկալի» երեխան»:*

Պատասխանենք. *Երբ մենք որոշում ենք, թէ կարող ենք երեխա սպանել, քանի որ նա «անցանկալի» է, մենք կիրառում ենք այն նոյն տրամաբանութիւնը, որն օգտագործում էր Հիտլերը ոչնչացնելու*

հրեաների նման «անցանկալի» ազգերին։ Ձծնուած երեխաներն «անցանկալի» չեն, եւ Աստուած, որ կամեցաւ նրանց կեանք շնորհել, սիրում ու ցանկանում է, որ նրանք ապրեն։

Ասում են. *«Ես չէի կարող երեխայիս ուրիշի տալ մեծացնելու»։*

Պատասխանենք. *Երեխան միայն ծնողական խնամքի ու հոգածութեան առարկայ չէ, այլ մի մարդ է, որին պէտք է սիրել անվերապահօրէն։ Ինչ տեսակ մայր պիտի լինի, որ աւելի շուտ սպանի իր երեխային, քան նրան հնարաւորութիւն տայ երջանիկ լինելու որդեգրող ընկալունակ ընտանիքում։ Բարձրագոյն եսասիրութիւն է ասել. «Եթէ ես չեմ կարող ունենալ իմ երեխան, ուրեմն ոչ ոք չի կարող»։ Յիշենք Սողոմոն իմաստուն թագաւորի արդարադատութիւնը (տե՛ս Գ. Թագ. 3, 16-27), երբ նա յայտարարեց, թէ ո՞ր կինն է երեխայի իսկական մայրը։ Իհարկէ նա, ով պատրաստ էր զրկուել իր երեխայից, որպէսզի սա ապրի։ Մայրն ասաց. «**Լսի՛ր ինձ, տէ՛ր, կենդանի մանկանը տուէ՛ք նրան, միայն թէ մի՛ սպանէք մանկանը**»։ Իսկ միւս կինն ասաց. «**Ո՛չ իմը թող լինի, ո՛չ նրանը, մէջտեղից կիսէ՛ք նրան**»։*

Մարդկայնօրէն ասած՝ այս մեղքը չի կարող ներուել, եւ միայն Տէր Յիսուս Քրիստոս, Որին մենք խաչեցինք մեր բազմակի սարսափելի մեղքերով, լինելով ոչ միայն կատարեալ մարդ, այլեւ Ամենակարող Աստուած, կարող է Իր անապական Արեամբ մաքրել այս սարսափելի, թերեւս ամենասարսափելի մեղքը։ Նա, ով անկեղծ սրտով խոստովանում է վիժեցման գիտակցուած այս մեղքը, եթէ յանցանք էր գործել իր երիտասարդութեան տարիներին, թուլութեան, տգիտութեան, հարազատների բռնութեան կամ այլ պատճառներով, պէտք է իմանայ՝ ինչպէս ապաշխարել, որպէսզի Աստուած ների իրեն եւ ջնջի այդ յանցանքը, որպէսզի ձեռք բերենք Աստծու շնորհը մեզ եւ մեր սպանուած երեխաների համար։ Բանականութիւնն արդէն թելադրում է, թէ նրանք, ովքեր ուզում են ազատուել երեխաներից, պէտք է ապաշխարեն մանկասպանութեան մեղքի համար։ Կանայք պէտք է ծննդաբերեն, քանի որ կինն ապրում

է որդեծնութեան համար. «Բայց նա պիտի ապրի որդեծնութեան համար, եթէ պարկեշտութեամբ մնայ հաւատի, սիրոյ եւ սրբութեան մէջ» (Ա. Տիմ. 2, 14-15): Յաւօք սրտի, այս փրկարար ճանապարհն ապաշխարողների մեծամասնութեան համար այլեւս հնարաւոր չէ իրենց տարիքի պատճառով: Բայց նրանք, ովքեր իրենց կեանքում զգջում ու ապաշխարում են մանկասպանութեան մեղքի համար, երբեմն ունեն չափահաս երեխաներ, որոնց պէտք է խրատել, որպէսզի հրաժարուեն նոյն սխալը կրկնելուց: Չնայած նրան, որ ուշ է, բայց գոնէ երկրորդ սերունդն ընդհատի այդ մեղքի շարունակական շղթան: Սովորաբար մարդկանց կեանքը, ովքեր սպանում են իրենց երեխաներին դեռ արգանդում, մթագնում է տարբեր վշտերով ու տառապանքներով, միայնակութեամբ, անզաւակութեամբ, ընտանեկան խնդիրներով, երբեմն նրանց կորստեամբ, խանգարուած հոգեկան ու ֆիզիկական առողջութեամբ, աղքատութեամբ, եւ այլն... Բոլոր վշտերը կարող են դիտուել որպէս ապաշխարութիւն ու հատուցում, իսկ համբերելով, սրտի զղջմամբ եւ ապաշխարութեամբ գալիս է ներումը: Յակոբոս առաքեալն ասում է. «Եղբայրնե՛ր իմ, եթէ ձեզնից մէկը շեղուի ճշմարտութեան ճանապարհից, իսկ մէկ ուրիշը նրան յետ բերի, թող իմանայ, թէ, ով մեղաւորին իր մոլորութեան ճանապարհից յետ է բերում, կը փրկի նրա հոգին մահուանից եւ կը ծածկի մեղքերի մի ամբողջ բազմութիւն» (Յակ. 5, 20): Նաեւ գրուած է. «Փրկի՛ր նրանց, ում մահուան են տանում, եւ ոչինչ մի՛ խնայիր մահապարտներին փրկագնելու համար» (Առակ. 24, 11): Ակնյայտ է, թէ նա, ով նորածնին փրկում է վիժեցումից, փրկում է մարդկային կեանք ու դրանով իսկ ծածկում է իր մեղքերը: Նրանք, ովքեր անցեալում կատարել են արհեստական վիժեցում, կարող են ամէն կերպ օգնել երիտասարդներին՝ կանխելու այս անգութ մանկասպանութիւնը: Իսկ Տէրը, տեսնելով ապաշխարութիւն եւ ապաշխարութեան արժանի գործեր (Մատթ. 3, 8)՝ ողորմութիւն, չարչարանքներին փրկարար համբերութիւն, կարող է ներել իւրաքանչիւր ապաշխարող մեղաւորի:

ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՄՕՐԸ՝ ՎԻԺՈՒԱԾՔԻ ԵՒ ՄԱՀԱՑԱԾ ՆՈՐԱԾՆԻ ՎՇՏԻ ԱՌԹԻՒ

Յաւօք միշտ չէ, որ յղիութիւնն ընթանում է հարթ։ Հնարաւոր են այլազան բարդութիւններ, որոնք առաջացնում են ակամայ կամ բնական վիժում։ Պատճառները տարբեր են՝ արգանդի խախտումներ, յաւելումների բորբոքում, ուռուցք, պտղի թերզարգացում, որովայնի վնասուածք, թունաւորում, ֆիզիկական ուժեղ ցաւեր, հոգեկան ապրումներ եւ այլն։ Շատերը մտահոգուած հարցնում են, թէ ո՞րն է յետագայ վիճակն այն մահածինների, որոնք մնացին չմկրտուած։ Այն նորածիններին, ովքեր մահացան չմկրտուած, դեռ չի կարելի համարել փրկութիւնից զուրկ։ Տէրն ասաց Աբրահամին. **«Լինելու եմ քո եւ քեզնից յետոյ գալիք սերունդների Աստուածը»** (Ծննդ. 17, 7)։ Եթէ Աստուած նոր ուխտ է կնքել քրիստոնեաների հետ, ուրեմն հնարաւո՞ր է արդեօք մտածել, թէ Նա գալիք աշխարհում պէտք է մերժի այն վիժուած կամ մահածին երեխաներին եւ նրանց քրիստոնեայ ծնողներին, ովքեր ոչ մի բանով չեն խախտել Իր ուխտը, եւ զանազան պատճառներով մանուկները մնացել են չմկրտուած։ Պօղոս առաքեալը խօսում է այն երեխաների մասին, որոնք ծնուել են խառնամուսնութեամբ (այսինքն՝ երբ ծնողներից մէկը քրիստոնեայ է, իսկ միւսը մկրտուած չէ)՝ ասելով. **«Ապա թէ ոչ՝ ձեր որդիները պիղծ կը լինեն, մինչդեռ հիմա սուրբ են»** (Ա. Կորն. 7, 14)։ Որքան աւելի սուրբ են այն նորածինները (իհարկէ, ոչ թէ ապրած կեանքի սրբութեան, այլ ծննդեան օրինականութեան առումով), որոնք ունէին ուղղադաւան հայր ու մայր եւ որոնց նախնիներն էլ ճշմարիտ քրիստոնեաներ են եղել։ Կարելի է ասել, թէ այդ մանուկները որոշ չափով արդէն սրբագործուեցին, երբ մայրերը կրում էին նրանց իրենց արգանդում։ Պտուղն արգանդում կրելով՝ իրենց ծնողներն

ամէն օր ջերմեռանդ աղօթքներով դիմում էին Աստծու օգնութեանը, յաճախ կարդում էին Աստծու խօսքը եւ միանում էին Քրիստոսին՝ Իր Մարմնի եւ Արեան հաղորդութեան սուրբ խորհուրդով: Իսկ յղիութեան կամ ծննդաբերութեան ժամանակ Աստծուն խնդրում էին, որ ազատումը բարեյաջող լինի:

*Ինչո՞ւ մտածել, թէ այսպիսի ծնողների պտուղներն ընդմիշտ կորչելու են: Նոյնիսկ եթէ նրանցից մէկը մահանար մօր արգանդում, գոյութիւն ունէր մկրտելու ծնողների պատրաստակամութիւնը: Իսկ Տէր Աստծուն հաճելի են մեր սեփական մտադրութիւնները, եթէ, իհարկէ, նրանք սուրբ են ու մաքուր: Աւետարանում կարդում ենք Փրկչի խօսքը. «**Իմ Հօր տան մէջ բազում օթեւաններ կան**» (Յովհ. 14, 2): Արդեո՞ք այդ օթեւաններում տեղ չի լինի այն երեխաների համար, որոնց ծնողները քրիստոնեաներ են, որոնք պարզապէս չունեցան ժամանակ կամ կարողութիւն մկրտութեամբ լուսաւորելու վաղաժամ մահացածին կամ վիժուածքին:*

*Վիշտը կարող է շատ խորը լինել, բայց այն երբէք պէտք չէ չափազանցութեամբ լինի: Խոր վիշտը երբէք պէտք չէ լինի աւելի ուժեղ, քան հաւատն ու յոյսն առ Աստուած: Ինչ էլ որ պատահի, պէտք է հաւատալ մարդասէր Աստծու ողորմածութեանը: Դրա համար պէտք է մտքերը շեղել չափազանց վշտից ու տխրութիւնից՝ հոգին, միտքն ու սիրտը զբաղեցնելով ջերմեռանդ աղօթքով: Համամիտ լինելով խոնարհութեան պատուիրանին՝ գուցէ մտածում էք, թէ վիժուածքի կամ նորածնի մահով Աստուած փորձում է ձեր հաւատն ու համբերութիւնը կամ էլ մեղքերի պատճառով պատժում է: Բայց սրանք պէտք չէ յանգեցնեն անմխիթար եւ անյոյս վշտի: Սաղմոսերգուի հետ աղօթենք. «**Տէրն ինձ խրատելով պատժեց, բայց չմատնեց մահուան**» (Սաղմ. 117, 18): Ձեզ սարսափեցնում է վիժուած մանկան հոգու յետագայ վիճակը: Մտածենք, թէ որքան որ աներեւակայելի եւ անսահման է Աստծու արդարութիւնը, նոյնքան էլ աներեւակայելի եւ անսահման է Նրա ողորմածութիւնը: Հոգին, որ իր մէջ է կրում միայն նախածնողների մեղքը, այն պատճառով, որ*

հնարաւորութիւն չունէր ստանալու օգնութիւն եւ ազատութիւն այդ բեռից, իհարկէ, չի կարելի համեմատել այն հոգու հետ, որը կամովին է պատրաստում իր ճանապարհը դէպի դժոխք։

Սբ. Գրիգոր Աստուածաբանը չմկրտուած մանուկների հանդերձեալ վիճակի մասին գրում է հետեւեալը. «Ոմանք նոյնիսկ հնարաւորութիւն չունեն ընդունելու այդ պարգեւը (մկրտութեան շնորհը), կամ էլ կարող է լինել մանկութեան կամ ամբողջութեամբ իրենցից դուրս հանգամանքների պատճառով»։ Եւ յետոյ ասում է. «Վերջիններս արդար Դատաւորի մօտ չեն լինի ո՛չ փառաւորուած, ո՛չ էլ պատժուած, քանի որ թէեւ կնքուած չեն, սակայն ոչ էլ չար են, եւ աւելի շատ տուժել են, քան թէ վնաս հասցրել։ Որովհետեւ ամէն ոք չէ, որ եթէ արժանի չէ պատժի, արդէն արժանի է պատուի. ոչ էլ որեւէ մէկը, որ անարժան է պատուի, արդէն արժանի է պատժի»[1]։ Սբ. Եփրեմ Ասորին ասում է. «Ով որ մահացաւ մօր արգանդում ու կեանքը չտեսաւ, նրան Դատաւորը չափահաս կը դարձնի այն պահին, երբ կեանքի կը վերադարձնի մահացածներին (ընդհանուր Յարութեան ժամանակ)... Նրանք, ովքեր այստեղ չեն տեսել իրար, կը տեսնեն այնտեղ, եւ մայրը կ՚իմանայ, թէ սա իր որդին է. եւ որդին կ՚իմանայ, թէ սա իր մայրն է»[2]։ Առաքելական մեր Եկեղեցին սովորեցնում է, թէ մարդկային կեանքն սկսւում է բեղմնաւորման պահից։ Հետեւաբար, հայրաբանական խօսքերը հաւասարապէս վերաբերում են դեռ չծնուած, վիժուած կամ մեռելածին մանուկներին, որոնց չեն հասցրել մկրտուել։ Նման դէպքեր եղել են բոլոր ժամանակներում, բայց Եկեղեցին չի թողել մեզ որեւէ յատուկ աղօթք անանուն վիժուած հոգիների մասին։ Եկեղեցին արգելում է մահածին մանուկներին մկրտել, քանի որ Տէրն իր առաքեալներին պատուիրեց մկրտել կենդանի մարդկանց, այլ ոչ թէ մահացածներին (Մարկ. 16, 16)։ Եւ ինչպէ՞ս կարող է անկենդան դիակը լսել Աւետարանի քարոզը

1 Святитель Григорий Богослов, архиепископ Константинопольский, Собрание творений в 2-х томах, Слово 40, на Крещении.

2 Свт. Ефрем Сирин. “О страхе Божием и о последнем суде”, ч. 4, 1900 г., стр. 105.

*ու հաւատալ Նրան, Ում մասին որ աւետւում էր։ Եկեղեցական յուղարկաւորութիւնը հնարաւոր է միմիայն մկրտուած անձի համար։ Չմկրտուած մարդը եկեղեցու անդամ չէ ու չի պատկանում Քրիստոսի մարմնին՝ եկեղեցուն։ Աւետարանում ասւում է. «**Եթէ մէկը ջրից եւ Հոգուց չծնուի, չի կարող Աստծու արքայութիւնը մտնել**» (Յովհ. 3, 5)։ Բայց մահածին անմեղ մանուկների վիճակն ինչ պիտի լինի։ Արդեո՞ք նրանք արժանի են դժոխքի։ Մանուկների մեղքի պակասի պատճառով սուրբ վարդապետները բացասաբար են արձագանգում այս հարցին։ Մկրտութեան պատասխանատուութիւնը լիովին ծնողների վրայ է, եւ երեխայի փրկութիւնը կախուած է բացառապէս Աստծու ողորմածութիւնից։ Չնայած նրան, որ Եկեղեցին թաղման արարողութիւն չի կատարում չմկրտուած ու մահածին անձանց համար, բայց նրանց հանձնելով ողորմած Աստծուն՝ նոյնիսկ խրախուսւում է աղօթքը։*

Մարդկային տեսակէտից ծնողները պէտք է իրաւունք ունենան թաղելու իրենց մահածին երեխային։ Մօր արգանդում մահացած քսանութ եւ աւելի շաբաթական երեխան պէտք է թաղուի նոյն կերպ, ինչպէս թաղւում է մեծահասակ մահացած մարդը, քանի որ նրանք ունեն նոյն իրաւունքները։ Բայց եթէ ծնողները չեն ցանկանում իրենք կազմակերպել թաղումը, ապա երեխային ընդհանուր կարգով ստիպուած կը լինի թաղել բուժհիմնարկութիւնը։ Յաւալի է, եթէ որեւէ ծնող վիժման պատճառով չկարողացաւ թաղել իր երեխային։ Բայց Տէրը գիտէ, թէ որտեղ է յարութիւն տալու նրան վերջին օրը։ Մեզ մնում է միայն վստահել Աստծու ողորմութեանը՝ հաւատալով, թէ մեր ակամայ չարչարանքների մէջ թաքնուած են Աստծու շնորհն ու ողորմութիւնը, որոնք մեզ բերում են ապաշխարութեան եւ ազատում յաւերժական տանջանքներից։ Հօրն ու մօրն անհրաժեշտ են ճանաչել ու մօտենալ Աստծուն. գնալ եկեղեցի խոստովանելու, աղօթել, ապաշխարել, ապրել պահքով եւ առաքինի վարքով, ողորմութիւն բաշխել։

Որպէս վերջաբան՝ մէջբերենք մի հատուած եկեղեցական աւանդութիւնից. «Մի բարեպաշտ արքայադուստր, որի անունն անյայտ է հիմա, խորը վիշտ ունէր իր սրտում, քանի որ վիժել էր անգիտակցաբար եւ անզգամաբար. եւ աղեկտուր մորմոքով ողբում էր իր եւ մահածնի վիճակը: Իր տեսիլքի մէջ յանկարծ յայտնւում է սբ. Յովհաննէս Մկրտիչն ու մխիթարում իրեն՝ ասելով. «Մի՛ վշտացիր քո մահածնի համար: Ես այդպիսի մանուկների բարեխօսն եմ»: Այս տեսիլքը ունենալով՝ նա, Աստծուն ու Նրա սուրբին գոհութիւն մատուցելով, լիովին հանգստանում է»[1]:

1 Журнал “Душеполезное чтение”, Москва, 1866 г. ч. 2, стр. 11.

ՅՈՐԴՈՐ ԱՄՈՒԼ ԵՒ ԱՆՁԱՒԱԿ ԿԱՆԱՆՑ

Երեխայ ունենալն իսկական երջանկութիւն է։ Բայց ցաւօք շատ ընտանիքներ զրկուած են դրանից, ու միշտ չէ, որ անզաւակութիւնն իրենց անձնական մեղքով է, քանի որ գոյութիւն ունեն այլազան երկարատեւ հիւանդութիւններ, բնածին արատներ, վթարներ, եւ այլն։ Ամլութիւնը (անպտղութիւնը, անբերրիութիւնը կամ չբերութիւնը) կանանց անկարողութիւնն է պտղաբերելու, ինչպէս նաեւ բեղմնաւորելու տղամարդկանց անկարողութիւնը։ Անպտղութիւնն անկախ հիւանդութիւն չէ. աւելի շուտ այն մարմնի զարգացման գործում տարբեր անկանոնութիւնների հետեւանքն է, բնական թերզարգացումների, սեռական անդամների ժառանգական կամ ձեռքբերովի արատների, ներազդակ խանգարումների, սեռական ոլորտի սուր ու յամրընթաց հիւանդութիւնների (այդ թւում վեներական), մարմնի այլ անդամների եւ համակարգերի հիւանդութիւնների։ Անպտղութիւնը մի ախտ է, որի հիմնական պատճառներից են նաեւ յղիութեան վիրաբուժական արհեստական ընդհատումները։ Յայտնի է, թէ այս ախտով աշխարհում տառապում են միլիոնաւոր ամուսնացած զոյգեր։

Բայց հիմա չխօսենք այս աղէտի ֆիզիոլոգիական կամ բնախօսական պատճառների մասին (իւրաքանչիւր դէպքում դրանք կարող են տարբեր լինել), այլ դիտարկենք ամուսինների վարքագիծը, որն առաջարկւում է եկեղեցական աւանդոյթով։ Առաջին հերթին ցանկացած քահանայ չբերութեան դէպքում զոյգին յորդորում է, որ չյուսահատուեն։ Եւ իրօք, չկայ ոչ մի պատճառ հաւատալու (նոյնիսկ այն դէպքում, երբ մասնագէտ բժիշկը տալիս է իր վերջնական ախտորոշումը), թէ պտղի բեղմնաւորումն ամբողջութեամբ անյու-

սալի է (իհարկէ, եթէ կնոջ արգանդը չի հեռացուել վիրաբուժական գործողութեամբ)։ Կեանքի պատմութիւնը բազմաթիւ հակառակ օրինակներ գիտէ, որոնք եկեղեցական միջավայրում դիտւում են որպէս սովորական հրաշք։ Առաջին խորհուրդն այստեղ, իհարկէ, կը լինի այն, որ պէտք է բուժուել, իսկ երկրորդը՝ աղօթել։ Ի դէպ, անպտղութեան դէմ օգնութեան համար չբեր կնոջ արհեստական սերմնաւորման բժշկական գործող բոլոր մեթոդներից հաւանութիւնը տրւում է միայն ամուսնու սաղմնային բջիջների միջոցով բեղմնաւորմանը։ Այստեղ չի խախտւում ընտանիքի միաւորի ամբողջականութիւնը որպէս այդպիսին, եւ արհեստական սերմնաւորումը տեղի է ունենում ընտանեկան յարաբերութիւնների համատեքստում։ Ամուսնու սերմը, որ պահպանւում է ամուսնական յարաբերութիւնների ժամանակ, մասնագէտ բժիշկը ներարկում է կնոջ արգանդի մէջ։ Այսպիսով, բեղմնաւորումը տեղի է ունենում ամուսինների բնական յարաբերութիւններից յետոյ, եւ ընտանեկան միութեան ամբողջականութիւնը չի խախտւում, քանի որ օգտագործւում են միայ՛ն ամուսինների սերմնաբջիջները։ Իսկ ինչ վերաբերում է այն մեթոդին, որը հիմնուած է բջջային սերմի նուիրատուութեան վրայ, ապա դա համարւում է բացարձակապէս անընդունելի, քանի որ ամուսնացած զոյգի միութեան մէջ յայտնւում է ինչ-որ անանուն երրորդ գործող անձ։ Երբ ծննդաբերութեան գործընթացին միջամտում է երրորդ կողմը, նուիրատուի սերմը ներարկւում է արտաքին մեղքի տարրին։ Այս տեսանկիւնից բեղմնաւորումն ու յղիութիւնը լիովին կարող են դիտուել որպէս շնութեան կամ ամուսնական դաւաճանութեան արդիւնք։ Արտաքուստ կարծես թէ դաւաճանութեան հանգամանք չկայ, բայց ընտանիք է ներխուժում արտաքին տարր։ Սա համարժէք է նրան, որ, յանուն երեխայի ծննդաբերութեան, կինն ապօրինի ամուսնական յարաբերութիւններ ունենայ այլ տղամարդու հետ։ Թէեւ չկայ մեղաւոր յարաբերութիւնների ֆիզիկական բաղադրիչը, բայց կնոջ ձուաբջջի հետ միաձուլում է մէկ այլ անձի գենետիկական կամ սերնդագիտա-

կան նիւթը. այսինքն՝ ստացւում է արտամուսնական յարաբերութիւն պարզապէս բժշկական տեխնոլոգիաների օգնութեամբ: Գոյութիւն ունեն արհեստական սերմնաւորման մի շարք այլ մեթոդներ երրորդ կողմի միջամտութեամբ: Նրանցից ոմանք օգտագործում են մէկ այլ կնոջ նուիրատու ձուաբջիջը, որն ամուսնու սերմով բեղմնաւորումից յետոյ, ներարկւում է կնոջ արգանդի մէջ: Նման մեթոդներն ամբողջովին անընդունելի են: Նոյնիսկ կայ հոգեբանական մի երեւոյթ, երբ այն կինը, ով ընդունել է նուիրատուի սերմը, իր մարմնի մէջ զգում է «ինչ-որ անհասկանալի օտար բան», որը բնորոշ չէ իրեն:

Այսօր աւելի ու աւելի լայն տարածում են գտնում արտամարմնային (էքստրակորպորալ) բեղմնաւորման (ԱՄԲ) մեթոդները, այսինքն՝ բեղմնաւորումը տեղի է ունենում մարմնից դուրս: Այսօր այն կանանց թիւը, ովքեր յղիացել են «փորձանօթի» կամ «խողովակի» մէջ, արդէն հասել է մօտ երեք միլիոնի: Անպտղութեան խնդիրը լուծելու նման տարբերակը նոյնպէս մերժւում է Եկեղեցու կողմից, քանի որ այն պառակտում է ընտանիքի եւ ամուսնական միութեան ամբողջականութիւնը: Այստեղ բացակայում է տղամարդու ու կնոջ ֆիզիկական միացման սիրոյ կապակցութիւնը, ծնելիութեան խորհուրդը կատարւում է մարդկային մարմնից դուրս, չկայ ամուսինների՝ միմեանց նկատմամբ փոխադարձ սիրոյ նուիրուածութեան այն գործօնը, որն անհրաժեշտ է նոր կեանքի ծննդեան համար: Կեանքը ծնւում է «փորձանօթի» մէջ: Թէ ինչ է կատարւում տուեալ պահին սաղմնաբջջի հետ, որ գտնւում է մօր մարմնից դուրս, թէ այն ինչ հոգեկան ու ֆիզիկական հիւանդութիւնների է ենթակայ լինելու յետագայում, մեծ հարց է: Արտամարմնային բեղմնաւորման լուրջ խնդիրներից մէկն այն է, որ շատ դէպքերում այս մեթոդի գործնականացման համար արտադրւում են բեղմնաւորման, այսպէս կոչուած, «յաւելեալ» այն սաղմնաբջիջները կամ էմբրիոնները, որոնք արդէն իսկ նոր կեանք են: Սա նշանակում է, թէ եթէ բեղմնաւորուել է, օրինակ, չորս սաղմնաբջիջ, եւ կինը ցանկանում է ունենալ միայն մէկ երեխայ,

ապա պէտք է ներարկուի միայն մէկ սաղմնաբջիջ։ Իսկ ինչ պէտք է անել միւս երեք սաղմնաբջիջները։ Կարելի է նրանց սառեցնել ու որոշ ժամանակ անց նորից սերմնաւորել, կամ էլ պարզապէս պէտք է սպանել։ Այսպիսով, երեխան լոյս աշխարհ է գալիս միաժամանակ երկու կամ երեք չծնուած եղբայրների ու քոյրերի սպանութեան հաշուին։ Մէկի կեանքը միւսների մահուան հաշուին Եկեղեցին համարում է անընդունելի։ Հետեւաբար, սուրոգատ կամ փոխնակ մայրութիւնը ճանաչւում է որպէս անբարոյական եւ անընդունելի՝ ընտանեկան նորմալ կեանքի ընթացքում։ Եկեղեցին դէմ է «փորձանօթի» մէջ երեխայի բեղմնաւորմանը, քանի որ յանուն այն կեանքի, որն այնուհետեւ դրսից է փոխպատուաստում մօր արգանդում, սպանւում են մօտ մէկ տասնեակ «յղիացած» այլ սաղմնաբջիջներ։

Այն ամուսինների համար, ովքեր փնտռում են բժիշկների օգնութիւնն անպտղութեան բուժման համար, իհարկէ, այսօր կան տարբեր ծրագրեր, դեղորայք ու վիրաբուժական մեթոդներ։ Սակայն, բացի ամուսնական անպտղութեան ֆիզիկական պատճառներից, կան նաեւ հոգեւոր բնոյթի այլ պատճառներ։ Հին Կտակարանում եւ հեթանոսական աշխարհում սա դիտւում էր որպէս հետեւանք ինչ-որ անձնական հոգեւոր անկման եւ անկատարութեան։ Այն հարցին, թէ ինչո՞ւ է առաջանում անպտղութիւնը, Եկեղեցու Հայրերն պատասխանում են, թէ շատ դէպքերում մեղաւոր կեանք վարելու պատճառով անպտղութիւնը գոյանում է որպէս պատիժ։ Որոշ կանայք, ուշացնելով ամուսնութիւնը, իրենց երիտասարդութեան տարիներին վարում են անկարգ եւ անզուսպ սեռական կեանք։ Այսպիսիների համար գործում են ոչ միայն հոգեւոր օրէնքներ, այլ նաեւ անպտղութիւն առաջացնող բժշկական նախապատմութիւններ։ Շատ հաւանական է, որ կանանց (ու տղամարդկանց) մեղաւոր եւ անառակ ապրելակերպը զարգացնում է մի շարք վարակներ, որոնք կարող են յանգեցնել սեռական ոլորտի յամրընթաց հիւանդութիւնների՝ հասցնելով ծննդաբերութեան անկարողութեան։

Վարդան վարդապետ Այգեկցին իր՝ «Խրատ բոլոր քահանաներին եւ ժողովրդին» գրքում նշում է. «Շնութեան պատճառով որքան անբաւ արիւն է հեղւում երկրի վրայ գաղտնի եւ յայտնաբար, թունաւորմամբ, պիղծ հնարներով ու սպանութեամբ, կամ որքան մանուկ լոյս աշխարհ չի գալիս մարդկանց վախի ու ամօթի պատճառով... Եւ հազար անգամ վա՜յ այն կնոջը, ով չար դեղերով ու հնարքներով խափանում է որդեծնութիւնը եւ ուրիշներին էլ խրատում նոյնն անել... Իւրաքանչիւր մանկան դիմաց, որի ծնունդը խափանել են չար դեղերով, Աստուած նրանցից հասուն մարդու արիւն պիտի պահանջի ահաւոր ատեանում»[1]: Դաւիթ Ալաւկայ որդին իր «Կանոնական օրինադրութիւն» կանոնագրքում ասում է. «Կանանցից ոմանք, ամուլ լինելով, չբերութեան պատճառը վերագրում են իրենց ամուսիններին եւ պոռնկութեան են գնում օտարների հետ: Եթէ այդպիսին իր գործած պիղծ արարքից զղջայ, թող տասը տարի ապաշխարի մեծ առաքինութեամբ: Նոյն ձեւով էլ տղամարդիկ են լինում, որոնք վատնում են իրենց կուսութիւնը՝ փչացնելով օտարներին: Կան նաեւ դժբախտներ, որոնք իրենց կոյս կանանց փորձել են տալիս ուրիշներին: Կան տղամարդիկ, որոնք աղքատութեան եւ իրենց անճարակութեան պատճառով կաւատների պէս միջնորդ են դառնում ուրիշների եւ իրենց կանանց միջեւ: Այսպիսիներին թող շներով եւ քարերով հալածեն ու չթողնեն հաւաքուած ժողովրդի մէջ, եւ նրանց կանայք թող չապրեն նրանց հետ: Իսկ քահանան կարող է նրանց ապաշխարութեան դրդել եւ ինչպէս կամենում է, այդպէս վարուի»[2]:

Սուրբ վարդապետներն ասում են նաեւ, թէ անպտղութեան պատճառ կարող է լինել Աստծուն վստահելու անպատրաստութիւնը: Կան ամուսիններ, ովքեր ամուսնութիւնից անմիջապէս յետոյ

---

1 Վարդան վարդապետ Այգեկցի, «Խրատ բոլոր քահանաներին եւ ժողովրդին», Սբ. Էջմիածին, 2001, էջ 63-64:

2 Դաւիթ Ալաւկայ որդի, Կանոնական օրինադրութիւն, ՀԵ. «Ամուլ կանանց մասին», Երեւան, 2010, էջ 86:

ցանկանում են զաւակ ունենալ։ Եւ երբ ինչ-ինչ պատճառներով ծննդաբերութիւնը յետաձգւում է կամ ուշանում, ապա նրանք սկսում են տագնապել հոգեկան չափազանց մտահոգութեամբ։ Աստուած երբեմն միտումնաւոր դանդաղեցնում է ու թոյլ չի տալիս ամուսիններին ժամանակից շուտ երեխայ ունենալ։ Տեսէ՛ք, թէ ինչպէս Աստուած Իր սուրբերին՝ Աբրահամին եւ Սարային, Յովակիմին եւ Աննային, Զաքարիային եւ Եղիսաբէթին միայն ծերութեան տարիքում զաւակներ պարգեւեց, որպէսզի կատարի մարդկանց յաւիտենական փրկութեան Իր ծրագիրը։ Ուստի ամուսինները պէտք է միշտ պատրաստ լինեն ընդունելու Աստծու կամքը իրենց կեանքի համար։ Աստուած երբէք չի անտեսում այն անձին, ով իր կեանքն ամբողջովին վստահում է Իրեն։ Իսկ երեխաների ծնունդը կախուած չէ միայն մարդկանցից, այլ նաեւ Աստծուց։ Տեսնելով ամուսինների հաւատն ու խոնարհութիւնը, երեխայ ունենալու ցանկութիւնը կամ ծննդաբերութեան դժուարութիւնները՝ Աստուած կարող է նրանց ոչ միայն մէկ, այլ բազում զաւակներ պարգեւել, բայց երբ տեսնում է նրանց եսասիրութիւնն ու ամբարտաւանութիւնը, Նա չի ցանկանում կատարել նրանց ցանկութիւնները։

Անպտղութեան պատճառ կարող են լինել նաեւ ծնողների եսասիական այն մտածումները, երբ երիտասարդ ընտանիքը յետաձգում է երեխայի ծնունդը՝ խորհելով, թէ այդ ծննդաբերութիւնը մեծ հոգածութեան մեծ խնդիր կ՚առաջացնի։ Կարծում են, թէ առաջին հերթին պէտք է ոտքի կանգնել, աւարտել ուսումը, տուն գնել եւ այլեւայլ նիւթական բարիքներ ձեռք բերել եւ ապա արդէն երեխայ ունենալ։ Տեսնելով այսպիսի վերաբերմունքը, երբ զոյգերը անտեսում են որդեծնութեան օրհնութիւնը՝ «աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք» պատուիրանը, եւ յետոյ, երբ որոշակի ժամանակահատուածում ընտանիքն արդէն ձեռք է բերել իրեն ցանկալի նիւթական բոլոր պէտքերը՝ կարծելով, թէ հիմա է եկել ճիշդ ժամանակը, Աստուած զրկում է նրանց երեխայ ունենալուց։

Տէրը երբեմն երեխաներ չի տալիս ամուսնու ու կնոջ անպատ-

բաստութեան, անպատասխանատուութեան, երեխային դաստիարակելու անհասունութեան, ամուսիներից մէկի ամբարշտութեան, չարութեան կամ էլ փոխադարձ դաւաճանութեան հնարաւորութեան պատճառով: Օրինակ, եթէ ընտանիքն անընդհատ վէճերի, ամօթաբեր կռուի ու թոհուբոհի մէջ է, եթէ ամուսինն ու կինը եսասէր են եւ պատրաստ չեն իրենց երեխայի համար զոհաբերուել, պատրաստ չեն հոգ տանել նրա մասին ու նրան տալ իրենց ծնողական սէրը, ապա Տէրը, նախատեսելով դա, ձգձգում է ծննդաբերելու կարողութիւնն այնքան ժամանակ, մինչեւ ամուսնական զոյգը հասունանայ, եւ ամուսինն ու կինը համաձայնութեան գան: Կան նաեւ անզաւակ զոյգեր, երբ կանայք այցելում են բազմաթիւ բժիշկների ու բժշկական կենտրոններ, սակայն ոչինչ չի օգնում, իսկ ամուսինները նրանց անընդհատ նուաստացնում են, վիրաւորում ու սաստում ծննդաբերութեան անկարողութեան համար: Որոշ ժամանակ անց այդպիսի ամուսինները դաւաճանում են իրենց կանանց եւ հեռանում դէպի ուրիշ ընտանիքներ: Իսկ չբեր կանայք ամուսնանում են այլ տղարմարդկանց հետ եւ ապահով, առողջ զաւակներ ծննդաբերում: Նրանց անպտղութիւնը, պարզուեց, մտացածին եւ երեւակայական էր: Տէրը, կանխատեսելով, թէ ամուսինն ու կինը պատրաստ չեն կամ չեն ցանկանում պահպանել ամուսնական սիրոյ միութիւնը, երբեմն թոյլ է տալիս, որ երեխայ չծնուի այդպիսի ընտանիքում, քանի որ նա արդէն փոքր տարիքից դատապարտուած է «որբ» մնալ:

Անպտղութեան մի այլ պատճառ է, երբ Տէրը տեսնում է, թէ հնարաւոր է, որ ընտանիքում երեխան ծանր հիւանդ կամ հաշուանդամ լինի, ուստի Նա թոյլ է տալիս, որ այդ երեխան չծնուի: Եկեղեցու աւանդութեան մէջ յայտնի դէպքեր կան, երբ մայրերը երեխային կորցնելու վախից անդադար ու ջանասիրաբար աղօթում էին Աստծուն, իսկ Տէրն այս կամ այն սուրբի միջոցով յայտնում էր, թէ իրենց աղօթքն անընդունելի է, քանի որ այդպիսի երեխան ծնուելու է որպէս ապագայ ոճրագործ, մարդասպան, սրբապիղծ: Իսկ եթէ մայրերը չէին նահանջել, ցանկանալով ամէն գնով կատարել իրենց

կամքը, բաւարարելով մայրական եսասիրութիւնը, ապա Տէրը թոյլ էր տալիս այդ երեխաների ծնունդը, որոնք յետագայում դառնում էին ամօթանք իրենց ընտանիքին ու շրջապատին։

Անպտղութիւնը երբեմն տրւում է նաեւ որպէս հաւատի փորձութիւն։ Որդեծնութեան այն միջոցները, որոնք համաձայն չեն Արարչի ծրագրին ու մտադրութեանը, Եկեղեցին չի կարող համարել բարոյապէս արդարացուած։ Եթէ ամուսիններն անկարող են երեխայ ունենալ, իսկ անպտղութեան վերացման բժշկական ու վիրաբուժական մեթոդները չեն կարող օգնել ամուսիններին, ապա նրանք պէտք է խոնարհաբար ընդունեն անպտղութիւնն իրենց կեանքում որպէս նախախնամութեան յատուկ վիճակ։ Նման դէպքերում պէտք է հաշուի առնել երեխայի որդեգրութեան հնարաւորութիւնը՝ ամուսինների փոխադարձ համաձայնութեամբ։ Նման անպտղութիւնն այն խաչակրութիւնն է, որով ամուսնական զոյգը պէտք է ցոյց տայ համբերութիւն, հնազանդութիւն, վստահութիւն Աստծու կամքին։ Սակայն պատահում է, որ Տէրը երկար տարիներից յետոյ, ի վերջոյ, զոյգին երեխայ է պարգեւում։ Հաւատքի փորձութիւնը կարող է կարեւոր իրադարձութիւն լինել ամուսնական զոյգի համար։ Ընտանիքը ցոյց է տալիս իր հաւատարմութիւնն Աստծու նկատմամբ, եթէ չի դժգոհում Նրա դէմ, այլ նոյնիսկ շնորհակալ է ուղարկուած վշտերի համար։ Հաւատքի այս փորձութիւնը կարող է ինչ-որ պահի աւարտուել, իսկ ամուլ կինը երկար տարիների ընթացքում կարող է շատ երեխաներ ծննդաբերել։

Երբեմն Աստուած թոյլ չի տալիս ոմանց զաւակ ունենալ, որպէսզի նրանք որդեգրեն ուրիշ երեխաներ ու սիրեն նրանց որպէս իրենց հարազատը, հոգ տանեն եւ ոտքի կանգնեցնեն նրանց, որպէսզի հոգեպէս աճեն ու բարեպաշտութեան մէջ վարժուեն։ Այնպէս որ, Աստուած երբեմն չի տալիս երեխաներ ոչ թէ պատժելու նպատակով, այլ պարզապէս այդպիսով իսկ արտայայտում է Իրեն յատուկ նախախնամական կամքը, որ այդ մարդկանց միջոցով օգնութիւն ստանան ծնողներից լքուած դժբախտ երեխաները։

Իսկ այն ծնողները, ովքեր թէեւ երիտասարդ տարիքում մեղքեր են գործել, բայց, այնուամենայնիւ, իրենց երեխաներին ջանում են դաստիարակել ու մեծացնել Տիրոջ խրատով եւ ուսումով (տե՛ս Եփես. 6, 4), հասարակութեան համար օգտակար անդամներ ու բարեպաշտ քրիստոնեաներ պատրաստելով, նման միջոցներով ձեռք են բերում վստահութիւն ու մեծ մխիթարութիւն երկրի վրայ, եւ կ՚արժանանան երկնային պարգեւների: Երեխաների հանդէպ պատասխանատուութեան մասին մի հին ասացուածք կայ. «**Լաւ է մեռնել անզաւակ, քան ունենալ ամբարիշտ որդիներ**» (Սիր. 16, 3-4): Ի դէպ, որդեծնութեան միջոցով փրկութիւնը ոչ մի կերպ ընդհանուր չէ բոլորի համար: Կը փրկուեն նաեւ կոյսերը, եթէ պահպանեն իրենց կուսութիւնն ու բարեպաշտութեամբ շարունակեն վարել հոգեւոր կեանք: Յայտնի են այրիներ, որոնք ծոմապահութեամբ եւ աղօթքով գիշեր-ցերեկ ծառայում էին Աստծուն (տե՛ս Ղուկ. 2, 33): Ջամուսնացած եւ անզաւակ մարդիկ կարող են Աստծուն հաճեցնել՝ ուրիշ մարդկանց զաւակներին կամ ծնողազուրկ երեխաներին որդեգրելով, մեծացնելով, դաստիարակելով եւ այլ բարի գործեր կատարելով:

Անզաւակ ամուսինները յաճախ են զգում, թէ իրենց կեանքում բացակայում է ինչ-որ շատ կարեւոր բան: Այո՛, երբ ընտանիքը չունի երեխայ, սա պայմանաւորուած է մարդկային մեծ վշտով: Կարո՞ղ են արդեօք ամլութիւնն ու անզաւակութիւնը լինել Աստծու պատիժ: Կարո՞ղ է արդեօք դա մեկնաբանուել որպէս նախատինք Հին Կտակարանի իմաստով: Ոչ միշտ: Քրիստոնէութեան մէջ կայ նաեւ Աստծու նախախնամութեան հասկացողութիւնը, որը մենք ընկալում ենք միայն այն ժամանակ, երբ հետադարձ հայեացքով հասկանում ենք, թէ այն, ինչ որ մեզ համար ցաւ ու վիշտ, զրկանք ու աղէտ էր թւում, ըստ էութեան, ունեցել է մէկ այլ նպատակ: Այսպիսի զարմանալի եղանակով էր, որ Աստծու նախախնամական կամքը մեզ առաջնորդեց սարսափելի, ծանր եւ անտանելի փորձութիւնների միջով. եւ յանկարծ այս ամէնի միջոցով բացայայտեց Իր սէրն ու

խնամքը մեր հանդէպ։ Վարդապետներն ասում են՝ եթէ Աստուած Սէր է, ապա բոլորովին սարսափելի չէ Նրան չհասկանալը. մենք կարող ենք վստահել Նրան չհասկանալով էլ։ Մենք չենք կարող մեր սահմանափակ մտքում տեղաւորել ու հասկանալ Աստծու Նախախնամութիւնը, բայց եթէ մարդը հասկացել է, թէ Աստուած սէր է, ապա նա կը կարողանայ Տիրոջ ձեռքից ընդունել ցանկացած վիշտ, այդ թւում նաեւ ամլութիւնն ու անզաւակութիւնը՝ որպէս խաչակրութիւն, որպէս անձի փրկութեան մի այլ ձեւ կամ մի այլ ճանապարհ։ Սիրոյ եղանակներն ու հնարաւորութիւնները շատ են։ Օրինակ՝ սիրոյ մէկ այլ արտայայտութիւն կարելի է գտնել ուրիշ երեխայի դաստիարակութեան մէջ։ Մարդիկ երբեմն վախենում են իրենց ընտանքում ուրիշի երեխայ որդեգրել՝ մտածելով, թէ այդ դէպքում երեխան իրենց սեփականութիւնը, միեւնոյն է, չի դառնայ։ Բայց պէտք է սիրել երեխային՝ լինի արիւնակից, թէ որդեգրուած։ Երեխային պէտք է տեսնել ոչ թէ որպէս իրենը, այլ Աստծունը՝ փախչելով նրա հանդէպ սեփականատիրութեան կամ արիւնակցական զգացմունքներից։ Եւ միայն այ՛ն ժամանակ կարելի կը լինի իսկապէս սիրել, ու չի լինի որեւէ վախ որդեգրութեան հարցերում։ Եթէ կինը չի կարող ծննդաբերել, ապա նա կարող է փրկել նրան, ով ծնողներ չունի, եւ դրանով իսկ մոռանալ իր ամլութեան կամ անզաւակութեան ցաւը։ Հաւանաբար, Տէրն այնպէս է ուզում անել, որ ծնողները, ովքեր չունեն երեխաներ, եւ երեխաները, ովքեր չունեն ծնողներ, գտնեն միմեանց։ Մենք չգիտենք, թէ ինչո՞ւ ոմանց ինչ-որ բան շատ է տրուած, իսկ միւսներին ոչինչ. ինչո՞ւ որոշ մարդիկ ծնւում են հարուստ, իսկ միւսներն՝ աղքատ. ոմանք առողջ են, իսկ ուրիշները՝ հիւանդ։ Բոլոր իրավիճակներում անհրաժեշտ է վստահել Աստծուն, եւ խոնարհութիւն ցուցաբերել Աստծու նախախնամական կամքի հանդէպ ու սովորել ապրել այնպէս, ինչպէս Աստուած է մեզ համար նախատեսել։

Սուրբ վարդապետներն ասում են, թէ անզաւակ բարեպաշտ ամուսինների կեանքն աւելի մօտ է առաքելական սխրագործու-

թեանը։ Վանականների, առաքեալների ու մեր սուրբերի առանձնական ու մենակեաց ողջ ապրելակերպի իմաստն ի փառս Աստծու էր։ Առանց զաւակների մենակեաց կեանքը հնարաւոր է դարձնում ամբողջութեամբ նուիրուել ու բոլորանուէր ծառայել Աստծուն։ Ի վերջոյ մենք գիտենք, թէ երբեմն ընտանիքի մասին հոգալը որոշ չափով հեռացնում է Տիրոջից։ Պօղոս առաքեալն ասում էր, թէ կ՚ուզէր, որ բոլորն իր նման լինէին. «**Ամէն մարդ լինի այնպէս, ինչպէս ես եմ... Սակայն ամուրիներին եւ այրիներին ասում եմ. լաւ է նրանց համար, եթէ մնան այնպէս, ինչպէս ես եմ**» (Ա. Կորն. 6, 7-8)։ Իսկ ինքն ամէն ջանք թափում էր, որ առանց մեղքի ապրի, եւ ինչպէս յայտնի է, նա անզաւակ մարդ էր։ Աւելին, նա ասում է, թէ ամուսնացած կինը հոգում է աշխարհայինի մասին, թէ ինչպէս հաճելի լինի իր ամուսնուն, իսկ ով կին ունի, նոյնպէս աշխարհայինի մասին է հոգում, թէ ինչպէս հաճելի լինի իր կնոջը. «**Ուզում եմ, որ դուք առանց հոգսի լինէք. որովհետեւ, ով կին չունի, հոգում է, թէ ինչպէս հաճելի լինի Տիրոջը։ Իսկ ով կին ունի, աշխարհի մասին է հոգում, թէ ինչպէս հաճելի լինի իր կնոջը։ Եւ այսպէս տարբերւում են իրարից ամուսնացած կինը եւ կոյսը. քանի որ կոյսը հոգում է Տիրոջ գործերի մասին, որպէսզի սուրբ լինի մարմնով եւ հոգով։ Իսկ ամուսնացած կինը հոգում է աշխարհի մասին, թէ ինչպէս հաճելի լինի իր մարդուն։ Եւ սա ձեր օգտի համար եմ ասում. ոչ թէ ձեզ ճնշելու համար, այլ պարկեշտութեան եւ Տիրոջը բոլորանուէր ծառայելու համար**» (Ա. Կորն 7, 32-35)։

Իհարկէ, զաւակներ ունենալու պայմանը կարեւոր է ընտանեկան ուրախութեան համար ու կարեւոր է նաեւ փրկութեան համար։ Բայց նրանց բացակայութիւնը չի նշանակում, թէ պէտք է տրուել յուսահատութեան։ Բայց միւս կողմից, հակառակը, ամլութիւնն ու անզաւակութիւնը նոյնիսկ պէտք է ընդունել որպէս պարգեւ Տիրոջից։ Այս պարագային անզաւակ ամուսիններն ազատ են ու կարող են դաստիարակել հոգեւոր զաւակներ՝ ընդունելով բոլոր մանուկներին, բոլոր նրանց, ովքեր կարօտ են սիրոյ, խնամքի,

ջերմութեան. եւ պէտք չէ սահմանափակուել միայն արիւնակից հարազատներով։ Եկեղեցական կեանքի համընդհանուր մարմնում ընտանիքը միայն մէկ բջիջն է։ Երեխաների բացակայութիւնն ամենեւին չի նշանակում, թէ ընտանիքը բացառուում է Քրիստոսի մարմնից՝ Եկեղեցուց։ Ընդհակառակն, անզաւակ ընտանիքը յարաբերաբար իր ազատ կեանքով կարող է բերել մեծագոյն նպաստ Եկեղեցուն։ Այդ նպատակի համար անհրաժեշտ է նուիրուել երեխաների դաստիարակութեանը, որոնց Ինքը՝ Տէրն է տալիս անզաւակ ծնողներին որդեգրելու, խնամելու կամ հովանաւորելու համար։ Ի վերջոյ, Սուրբ Հաղորդութեան խորհրդի շնորհիւ բարեպաշտ ամուսինները հնարաւորութիւն ունեն վերանորոգուելու ու նմանուելու մանուկներին՝ իրենց բնաւորութեամբ եւ ընկալմամբ. ***«Եթէ չդառնաք ու չլինէք մանուկների պէս, երկնքի արքայութիւնը չէք մտնի»*** *(Մատթ. 18, 3)։ Ծնողները մանուկների նման են դառնում, ամուսինները միմեանց ընկալում են որպէս մանուկ եւ փորձում են համապատասխան կերպով միմեանց օգնել, աջակցել ու դաստիարակել, որպէսզի ամէն մէկն ազատուի իր մեղքերից, թերութիւններից ու թուլութիւններից։ Այսպէ՛ս պէտք է լինի միմեանց հանդէպ ամուսինների ապրելակերպը՝ որպէս միամիտ մանուկների։ Սա օգնում է անցնել բոլոր փորձութիւնների միջով ու դիմանալ բոլոր դժուարութիւններին։ Ամուսիններն ընկալուում են որպէս Աստծու որդիներ ու դուստրեր եւ Տիրոջ առաջ դառնում են մանուկների պէս, միմեանց սիրելով ապրում են բնական ու բարի ընտանեկան կեանքով։*

Հաւատացեալների կեանքից յայտնի են դէպքեր, երբ անպտղութեան ախտորոշումից յետոյ նրանք, սուրբ վայրեր այցելելով, հրաշագործ խորհրդանիշերի, սրբապատկերների ու սուրբերի մասունքների շնորհիւ, հակառակ բոլոր բժշկական ցուցումների, որպէս խորը հաւատի եւ աղօթքի պտուղ՝ զաւակներ են ունեցել։ Նոյնիսկ եթէ ամուսիններին ինչ-ինչ պատճառներով չի ստացուել զաւակ ունենալ, ապա նորից հաւատացեալը պէտք է խոնարհաբար

ընդունի Աստծու նախախնամութիւնը եւ արժանապէս կրի իր անզաւակութեան խաչը։ Շատ զոյգեր իրենց սէրն են արտայայտում երեխաների նկատմամբ, երբ ամուսինը, դառնալով կնքահայր, իր կնոջ հետ օգնում է ուրիշ ծնողներին՝ նրանց երեխաների քրիստոնէական դաստիարակութեան գործում կամ էլ կատարում են յատուկ սխրագործութիւն՝ որդեգրելով որբ մանուկներին։ Որպէս կանոն՝ նման ամուսինները շատ շուտ են մոռանում, որ երեխան որդեգրուած է՝ նրան իրենց հարազատը համարելով։ Ընդհանուր առմամբ, ամէն դէպքում, թէեւ բժիշկները դատապարտում են անպտղութիւնը, որպէս հաւատացեալ մարդ՝ պէտք է հնազանդութեամբ կրել սեփական խաչը։

Միակ բանը, որ ամուսիններին մնում է յուսալ զաւակ ունենալու համար, հաւատն ու աղօթքն է։ Եկեղեցու աւանդութեան մէջ կան բաւական թուով սուրբեր, ովքեր կարող են օգնել անպտղութեան դէմ։ Խօսքը, իհարկէ, բարեխօսական հրաշագործ աղօթքի աջակցութեան մասին է։ Հնագոյն բարեպաշտ անզաւակ ամուսինների օրինակներն այս դէպքում մեզ սովորեցնում են աղօթքի մէջ օգնութիւն գտնել։ Աղօթքը մեծ զէնք է։ Որպէս ուշագրաւ օրինակ են ծառայում Աբրահամն ու Սառան, ովքեր մօտ 90 տարի աղօթեցին զաւակ ունենալու համար։ Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն ասում է. «Տե՛ս, թէ որքա՜ն հեռու էին նրանք (Աբրահամն ու Սառան) ամէն կրքից։ Նրանք ունեցել են միայն մէկ նպատակ՝ չմեռնել անզաւակ։ Սակայն, միեւնոյն ժամանակ, նրանք փորձում էին մխիթարել միմեանց ու փրկել ընտանեկան խաղաղութեան անխզելի միութիւնը։ Արդ, խորհի՛ր նախահօր մեծագոյն համբերատարութեան եւ զարմանալի հեզութեան մասին։ Անպտղութեան համար նա չատեց իր կնոջն, ինչպէս որ անում են որոշ անմիտներ, եւ չնուազեցրեց իր սէրը նրա հանդէպ։ Դուք գիտէք, թէ ինչպէս է դա (այսինքն՝ անպտղութիւնը) շատ ու շատ մարդկանց համար ատելութեան պատճառ դառնում իրենց կանանց հանդէպ. եւ հակառակը, որպէս շարժառիթ աւելի մեծ սիրոյ՝ ծառայում է բազմազաւակութիւնը։

Բայց անփութաբար եւ անխոհեմաբար մարդիկ իրենց կանանց են վերագրում թէ՛ անզաւակութիւնը եւ թէ՛ բազմազաւակութիւնը՝ չիմանալով, որ ամէն ինչ կախուած է մեր բնութիւնն Արարողից. եւ որ ինքնին ոչ մի կենակցութիւն եւ ոչ մի այլ բան չի կարող յանգեցնել երեխաների ծննդեանը, եթէ չաջակցի Բարձրեալի ձեռքը՝ յաջողեցնելով այդ բնութեան ծնունդը: Լաւ իմանալով սա՝ արդար Աբրահամը չէր մեղադրում իր կնոջը չբերութեան համար, այլ միշտ նրան ցուցաբերում էր պատշաճ պատիւ: Ահա՛ թէ ինչու նա, փոխադարձաբար յարգելով իր ամուսնուն ու ցանկանալով արտայայտել, թէ որքան մեծ սէր ունի նրա նկատմամբ, չէր մտածում ինքն իր մասին, այլ խորհում էր միայն այն մասին, թէ չբերութեան մէջ ինչպէ՛ս պէտք է նրան մխիթարի»[1]:

Աղօթքով խիզախ Իսահակը յաղթահարեց մարմնի բնութիւնը, քանդեց վնասուած բնութեան կապանքները: Ինչպէ՞ս նա արեց դա: Սուրբ Գիրքն ասում է. ***«Իսահակն աղաչեց Տիրոջը իր կին Ռեբեկայի համար, որովհետեւ սա ամուլ էր: Ատուած լսեց նրան, եւ նրա կին Ռեբեկան յղիացաւ»*** *(Ծնն. 25, 21): Սա աղօթքի զօրութեան ապացոյցն է: Սամուէլի մօր՝ Աննա մարգարէուհու համար անհնարին էր համակերպուել ամուլ լինելու մտքին: Նա վշտահար հոգով ու յարատեւ ջանասիրութեամբ աղօթում էր Աստծուն.* ***«Իսրայէլի Տէ՛ր Ատուած, զօրութիւնների՛ Տէր, եթէ կամենաս տեսնել քո աղախնի տառապանքները, ինձ յիշես ու արու զաւակ տաս քո աղախնին, մինչեւ նրա մահուան օրը Քեզ կը նուիրեմ նրան»*** *(տե՛ս Ա. Թագ. 1, 9-20): Նա խոստանում էր նուիրել իր զաւակին Տիրոջը: Աղօթելիս Աննայի շուրթերը դողում էին, եւ նա հեկեկում էր: Նրա ձայնը լսելի չէր, բայց Տէրը լսեց նրան, եւ երբ ժամանակը հասաւ, որդի պարգեւեց: Աննան իր որդու անունը Սամուէլ դրեց եւ ասում էր, թէ* ***«նրան զօրութիւնների Տէր Ատծուց եմ խնդրել»***: *Աղօթելու հարցում Աննան հրաշալի օրինակ է բոլոր հաւատացեալների համար*

1 Свт. Иоанн Златоуст. Быт. 16, 1. Беседа 37.
Տե՛ս https://azbyka.ru/otechnik/Ioann_Zlatoust/tolk_01/38 (առ 11/04/2017):

(տե՛ս Ա. Թագ. 1, 9-20)։ Ահա այսպէ՛ս պէտք է աղօթեն նաեւ անզաւակ ամուսինները, եւ Տէրը կը լսի նրանց աղօթքները։ Բայց ոմանք ասում են. «Աղօթում ենք, բայց ակնյայտ է, թէ Աստուած այդպէս էլ չի ընդունում մեր աղօթքները»։ Այդ դէպքում պէտք է աւելի շատ աղօթել. եւ եթէ աղօթքը կարճ ու թերի է, ապա պէտք է այն լրացնել։ Ինչպէ՞ս լրացնել. Տիրոջը նուիրելով ձեր աղերսած զաւակներին եւ այնպէս, որ ոչ թէ երկրային ուրախութիւնների ու հաճոյքների համար էք դուք զաւակներ աղերսում, այլ վերջիններին Նրան յանձնելով՝ շարունակէք Տիրոջ ծառայութիւնը։ Ինչպէս տեսնում էք, օգտակար են այսպիսի խոստումնաւոր աղօթքները զաւակներ խնդրելու համար։ Հետեւաբար, Տիրոջը խոստացէք, որ եթէ Նա օրհնի ձեզ որդեծնութեամբ, ապա դուք պէտք է երեխաներին դաստիարակէք Աստծու վախով, ուղղափառ հաւատով եւ եկեղեցասիրութեամբ։ Բայց մենք, նախանձախնդիր լինելով մեր աղօթքներին, պէտք է գումարենք նաեւ մեր բարեպաշտ եւ առաքինի կեանքը։

*Զաւակ ունենալու համար առաւել ընդունուած է դիմել սբ. կոյս Մարիամի ծնողներին՝ Յովակիմին եւ Աննային։ Պատճառը բաւական ակնյայտ է։ Հէնց այս զոյգն էր, որ պատուով անցաւ ամուսնական անպտղութեան փորձութեան միջով. եւ իրենց աղօթքների շնորհիւ ստացան «ծննդաբերութեան» այնպիսի մի պարգեւ, ինչպիսին էր Մարիամը, որ դարձաւ Աստուածածին՝ Քրիստոս Աստծու Մայրը։ Զաքարիան եւ Եղիսաբէթը նոյնպէս այն սուրբերից են, որոնց բարեխօսութեանն ընդունուած է դիմել նման խնդրի համար։ Մինչեւ հասան ծերութեան, նրանք այդպէս էլ չկարողացան զաւակ ունենալ. ու խոնարհութեամբ ընդունել էին անզաւակութեան փորձութիւնը։ Բայց Աստուած լսեց Զաքարիայի եւ Եղիսաբէթի աղօթքը, ու հրեշտակը յայտարարեց. «**Մի՛ վախեցիր, Զաքարիա՛, որովհետեւ քո աղօթքը լսելի եղաւ. քո կինը՝ Եղիսաբէթը, մի որդի կը ծնի քեզ, եւ նրա անունը Յովհաննէս կը դնես։ Նա քեզ համար ուրախութիւն եւ ցնծութիւն կը լինի, եւ շատերը կ՚ուրախանան նրա ծննդով**» (Ղուկ. 1, 13-14)։ Աստծու ողորմութեամբ Եղիսաբէթը*

*յղիացաւ ու ծնեց Յովհաննէս Մկրտչին, որի համար Քրիստոս Ինքը, ընդունելով Իր մկրտութիւնը նրանից, ասաց. «**Ճշմարիտ եմ ասում ձեզ, կանանցից ծնուածների մէջ Յովհաննէս Մկրտչից աւելի մեծը չի եղել**» (Մատթ. 11, 11)։*

*Ի սկզբանէ անզաւակ, բայց յետոյ Աստծու կողմից օրհնուած Աբրահամն ու Իսահակը, Սամսոնն ու Սամուէլը, Յովակիմն ու Աննան, Զաքարիան եւ Եղիսաբէթը՝ բոլորն էլ բարեպաշտ մարդիկ էին։ Ահա նրանցից է պէտք օրինակ վերցնել. եւ բոլոր դէպքերում լաւ է վստահել Աստծուն եւ միշտ աղօթել. «**Թող Քո՛ կամքը լինի...**» (Մատթ. 6, 10)։ Սողոմոն Իմաստունն ասում է. «**Թող քո սիրտը չնախանձի մեղաւորներին, այլ միշտ Տիրոջ երկիւղը պահի՛ր սրտիդ մէջ։ Եւ եթէ պահես, դու զաւակ կ՚ունենաս եւ քո յոյսը չի կտրուի**» (Առակ. 23, 14)։*

Այն կանանց կեանքը, ովքեր մինչեւ ամուսնութիւնն անցել են այնպիսի փորձութիւններ, ինչպիսիք են արհեստական վիժեցումն ու պոռնկութիւնը, բայց յետոյ զղջացել, խոստովանել եւ ապաշխարել են, սուրբ Պսակի խորհրդով այդպիսիների կեանքը ծածկւում է Աստծու սիրով։ Այժմ միասին նրանք պէտք է մտածեն ապագայի մասին եւ ջանան ամբողջ կեանքի ընթացքում Աստծու շնորհով եւ իրենց բարի գործերով արժանի դառնալ քաւութեան ու մեղքերի թողութեան։ Դրա համար Տէրը նրանց միացրեց, որպէսզի նրանք միասին իրենց բարեպաշտ համատեղ կեանքով ազատուեն ծանր մեղքերի բեռից, այդ թւում՝ յղիութեան արհեստական ընդհատումից ու շնութիւնից։ Անպտղութեան խնդիրը լուծելու համար շատ կարեւոր է եկեղեցու սուրբ Պսակի խորհուրդը։ Պսակադրութեան խորհրդակատարութեան ընթացքում քահանան աղօթում է հետեւեալ բառերը, որոնց մէջ առկայ է Աստծու օրհնութիւնը կնոջ համար, որպէսզի նա պտղաբեր լինի. «Ո՛վ Տէր, յաւիտենական Աստուած, Դու որ անքակտելիօրէն միմեանց ես միացնում իրար համար սահմանուած ամուրիներին, օրհնի՛ր Քո այս ծառայիդ եւ աղախնիդ՝ ինչպէս Իսահակին եւ Ռեբեկային օրհնեցիր՝ ցոյց տա-

լով, որ Քո խոստումներիդ ժառագորդներն են նրանք...»։ Իսկ երկրորդ Պսակի արարողութեան ժամանակ քահանան աղօթում է. «Քո ողորմութեամբ որդեծնութիւն պարգեւիր նրանց։ Ների՛ր նրանց կամայ եւ ակամայ գործած մեղքերն ու յանցանքները։ Ընդունի՛ր նրանց աղօթքն ու խնդրանքները։ Սուրբի՛ր նրանց հոգին ու մարմինը, որպէսզի այս աշխարհի մէջ բարի գործերով ապրեն իրար հետ։ Օրհնի՛ր նաեւ, Տէ՛ր, նրանց ծնուելիք զաւակներին, որպէսզի Քո՛ կամքի համաձայն լինեն, ո՛վ մեր Արարիչ Աստուածը. որովհետեւ Դո՛ւ ես, որ օրհնում ու սրբում ես մեզ՝ բոլորիս։ Քեզ են վայելում փառքն ու իշխանութիւնը յաւիտեաններում. ամէն»։ Անհաւատ ամուսինները երբեմն անտեսում են այս կարեւոր խորհուրդը, եւ Տէրը թոյլ չի տալիս, որ կինը դառնայ մայր, քանի դեռ ամուսնական միութիւնը սրբացուած չէ եկեղեցական սուրբ Պսակի խորհրդի շնորհով։ Բացի դրանից կան դէպքեր, երբ այն կանայք, ովքեր ախտորոշուել էին «անպտղութեամբ», երկար տարիներ պաշտօնապէս գրանցուած ապրելով իրենց ամուսինների հետ, սակայն պսակադրուած չլինելով եկեղեցում, սուրբ Պսակի խորհուրդը ընդունելուց մի քանի օր յետոյ արդէն յղիացել են։

*Արդ, մէջբերենք որոշ քաղուածքներ սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետի ճառից՝ անզաւակութեան դէպքում աղօթքի զօրութեան մասին. «Աղօթքը մեծ զէնք է ու մեծ պաշտպանութիւն... Դուք երէկ լսեցիք, թէ ինչպէ՛ս երեք կապուած երիտասարդներ կոտրեցին կրակի զօրութիւնը, թէ ինչպէ՛ս ոտնատակեցին բոցը, թէ ինչպէ՛ս գերազանցեցին ջեռոցի վառարանին եւ յաղթանակեցին տարրերքի գործողութեանը։ Այսօր կրկին լսեսէ՛ք, թէ ինչպէ՛ս խիզախ ու մեծ Իսահակն աղօթքով յաղթահարեց մարմնի իսկ բնութիւնը։ Նրանք յաղթանակեցին կրակի զօրութեանը, իսկ սա (Իսահակը) այսօր քանդեց վնասուած բնութեան կապանքները։ Գիտցի՛ր, թէ ինչպէս է նա դա արել։ «**Իսահակն աղաչեց Տիրոջը**,- ասում է Սուրբ Գիրքը,- **իր կին Ռեբեկայի համար, որովհետեւ սա ամուլ էր։ Աստուած լսեց նրան, եւ նրա կին Ռեբեկան յղիացաւ**» (Ծնն. 25, 21)։ Սրա*

մասին այսօր ձեզ ընթերցուեց։ Երէկ խօսքը աղօթքի մասին էր, իսկ այսօր՝ կրկին աղօթքի զօրութեան ապացոյցը։ Տեսնո՛ւմ էք, թէ ինչ-պէ՛ս է Հոգու շնորհը դասաւորել, որպէսզի այսօրուայ ընթերցումը համապատասխանի երեկուայ ասուածին։ Սուրբ Գիրքն ասում է. **«Իսահակն աղաչեց Տիրոջը իր կին Ռեբեկայի համար, որովհետեւ սա ամուլ էր։ Ասուած լսեց նրան, եւ նրա կին Ռեբեկան յղիացաւ»։** Առաջին հերթին պէտք է պարզել, թէ ինչո՛ւ էր նա անպտուղ։ Ե՛ւ ինքը ե՛ւ իր ամուսինն ապրում էին հրաշալի եւ ողջախոհութեամբ լեցուն կեանքով։ Մենք չենք կարող, անդրադառնալով այս արդարների կեանքին, ասել, թէ անզաւակութիւնն արդիւնք էր մեղքի։ Եւ նա (Ռեբեկան) չէր միակ ամուլը, այլ նաեւ նրա (Իսահակի) մայրը՝ Սառան, ով նրան ծնեց. եւ ոչ միայն նրա մայրն ու կինն էին ամուլ, այլեւ հարսը՝ Յակոբի կին Ռաքէլը։ Իսկ ինչ է նշանակում ամուլների այս թիւը։ Սրանք բոլորն արդարներ էին, բոլորն ապրում էին առաքինութեամբ, բոլորը հաստատուեցին Աստծու կողմից, քանի որ նրանց մասին էր Նա ասում. **«Ասուած Աբրահամի, Ասուած Իսահակի եւ Ասուած Յակոբի»** (Ելք 3, 6)։ Նրանց մասին Պօղոսն է նաեւ ասում. **«Հետեւաբար, Ասուած չի ամաչում նրանց Ասուածը կոչուել»** (Եբր. 11, 16)։ Բազում գովասանքներ կան նրանց մասին Նոր Կտակարանում, շատ են գովասանքները նաեւ Հին Կտակարանում։ Բոլոր առումներով նրանք հաճելի ու գերազանց էին, ու բոլորի կանայք ամուլ էին եւ երկար ժամանակ ապրում էին անզաւակ։ Ուստի, երբ տեսնում ես, թէ ամուսինն ու կինն առաքինի կեանք են վարում, երբ տեսնում ես, թէ նրանք սիրում են Աստծուն ու նուիրուած են բարեպաշտութեանը, բայց տառապում են անզաւակութեամբ, մի՛ կարծիր, թէ անզաւակութիւնը հատուցում է մեղքերի համար։ Բազմաթիւ են ճանապարհներն Աստծու տնօրէնութեան, որոնք մեզ անյայտ են։ Եւ ամէն բանի համար պէտք է շնորհակալ լինել ու խղճալ միայն նրանց վրայ, ովքեր ապրում են ամբարշտութեան մէջ, այլ ոչ թէ նրանց վրայ, ովքեր չունեն զաւակներ։ Աստուած միշտ անում է օգտակարը,

բայց մենք չգիտենք այն բանի պատճառը, ինչ որ արւում է: Հետեւաբար, ամէն ինչում պէտք է զարմանալ Նրա իմաստութեան վրայ եւ փառաբանել Նրա անասելի մարդասիրութիւնը: Այս խօսքերը կարող են մեզ խրատել բարոյապէս: Բայց պէտք է ասել նաեւ պատճառի մասին, թէ ինչո՛ւ էին այդ կանայք ամուլ: Ո՞րն է այդ պատճառը. այն է, որ երբ դու տեսնես մեր սբ.Կոյսին, ով ծնել է մեր բոլորի Տիրոջը, չլինես անհաւատ: Այսպիսով դու վարժեցրու քո միտքը՝ խորհելով ամուլների արգանդի մասին, որպէսզի յետոյ, երբ տեսնես, թէ վնասուած ու կցուած արգանդը բացւում է Աստծու շնորհով ծննդաբերութեան համար, դու չզարմանաս՝ լսելով, թէ Կոյսը ծննդաբերեց: Կամ աւելի լաւ է ասել, զարմացի՛ր ու հիացի՛ր, բայց անհաւատ մի՛ եղիր հրաշքին: Երբ հրէան քեզ ասի, թէ ինչպէ՞ս Կոյսը ծնեց: Դու նրան հարցրո՛ւ, իսկ ինչպէ՞ս ծնեց ամուլն ու ծերացածը: Այն ժամանակ երկու խոչընդոտներ կային՝ ծերութեան տարիքը եւ բնութեան անկարողութիւնը, իսկ Կոյսի մօտ ընդամէնը մէկ խոչընդոտ կար. այն որ նա ներգրաւուած չէր ամուսնութեան մէջ: Այդպէս ամուլը ճանապարհ է նախապատրաստում Կոյսին: Եւ որպէսզի դու համոզուես, թէ ամուլները նախորդեցին այն բանի համար, որ հաւատան Կոյսի ծննդաբերութեանը, լսի՛ր Գաբրիէլի (հրեշտակապետի) ասած խօսքերը, երբ նա եկաւ ու նրան ասաց. «Եւ ահա՛ դու կը յղիանաս եւ կը ծնես մի որդի ու նրա անունը Յիսուս կը դնես» (Ղուկ. 1, 31): Կոյսը զարմացաւ եւ ասաց. «Ինչպէ՞ս դա կը պատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում» (Ղուկ. 1, 34): Իսկ ինչ պատասխանեց հրեշտակը. «Սուրբ Հոգին կը գայ քեզ վրայ» (Ղուկ. 1, 35): Մի՛ պահանջիր, ասում է նա, բնական կարգը, երբ այս իրադարձութիւնը գերբնական է: Մի՛մտածիր ամուսնութեան ու ծննդեան ցաւերի մասին, երբ ծննդեան այս եղանակը վեհ է ամուսնութիւնից. «Ինչպէ՞ս դա կը պատահի ինձ»,- ասում է նա,- «քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»... Ես ուզում էի աւելին ասել ու ներկայացնել ձեզ այլ պատճառներ, որոնցով ամուլ էր Ռեբեկան ու Ռաքէլը, բայց թոյլ չի տալիս ժամանակը՝ ստիպելով շտապեցնել

աղօթքի զօրութեան մասին խօսքը։ Եւ այս բոլորն ասացի այն բանի համար, որ դուք իմանաք, թէ ինչպէս Իսահակի այդ երկարատեւ աղօթքը լուծեց իր կնոջ անպտղութիւնը։ Սուրբ Գիրքն ասում է. **«Իսահակն աղաչեց Տիրոջը իր կին Ռեբեկայի համար, որովհետեւ սա ամուլ էր։ Ատուած լսեց նրան, եւ նրա կին Ռեբեկան յղիացաւ»** (Ծնն. 25, 21)։ Մի՛ կարծիր, թէ նա կանչեց Աստծուն եւ անմիջապէս լսելի եղաւ։ Նա երկար ժամանակ աղօթում էր Աստծուն։ Եթէ դուք ուզում էք իմանալ, թէ որքա՜ն ժամանակ, ես ձեզ ճշգրտութեամբ կ՚ասեմ եւ դա։ Քսան տարի նա անցկացրեց Աստծուն աղօթելով։ Ո՞րտեղից է սա երեւում։ Խօսքի իսկ յաջորդականութիւնից։ Յանկանալով ցոյց տալ արդարի հաւատն ու իմաստութիւնը՝ Աստուածաշունչը չլռեց այդ ժամանակի մասին, այլ այդ մասին ասում է, թէեւ գաղտնի, ու չի թողնում անյայտ, որպէսզի արթնացնի մեզ անհոգութիւնից։ Ուրեմն լսի՛ր, թէ ինչպէս է այն գաղտնի կերպով մեզ ցոյց տալիս ժամանակը. **«Իսահակը քառասուն տարեկան էր, երբ ամուսնացաւ Ասորական Միջագետքում ապրող ասորի Բաթուէլի դուստր Ռեբեկայի հետ»** (Ծնն. 25, 20)։ Տեսնո՞ւմ ես, թէ քանի՛ տարեկան էր նա, երբ ամուսնացաւ։ Սուրբ Գիրքն ասում է՝ քառասուն տարեկան էր, երբ կնութեան առաւ Ռեբեկային։ Իմանալով, թէ քանի տարեկան էր, երբ ամուսնացաւ, կը տեսնենք յետոյ, թէ ե՛րբ նա հայր դարձաւ ու քանի տարեկան էր, երբ ծնեց Յակոբին։ Եւ այսպիսով, կարող ենք տեսնել, թէ որքա՜ն ժամանակ նրա կինն ամուլ մնաց, եւ այն փաստը, որ այդ ողջ ժամանակ նա աղօթում էր Աստծուն։ Իսկ քանի՞ տարեկան էր նա, երբ ծնեց Յակոբին։ **«Անդրանիկ որդին ծնուեց բոլորովին շէկ, թաւամազ մորթով, եւ հայրը նրան կոչեց Եսաւ։ Ապա Եսաւի գարշապարից բռնած ծնուեց նրա եղբայրը։ Սրան էլ կոչեց Յակոբ։ Իսահակը վաթսուն տարեկան էր, երբ Ռեբեկան ծնեց նրանց»** (Ծնն. 25, 25-26)։ Հետեւաբար, եթէ նա, երբ կնութեան առաւ Ռեբեկային, քառասուն տարեկան էր, իսկ երբ որդիներ ծնեց, վաթսուն տարեկան էր, ապա ակնյայտ է, թէ նրա

կինը քսան տարուայ ընթացքում ամուլ մնաց, եւ այդ ամբողջ ժամանակ Իսահակն աղօթում էր Աստծուն: Իսկ մենք չենք ամաչում եւ չենք երկմտում՝ տեսնելով, թէ ինչպէ՛ս արդարը քսան տարի սպասեց ու չէր դադարում աղօթելուց: Իսկ մենք առաջին կամ երկրորդ խնդրանքից յետոյ, յաճախ թողնելով աղօթքը, զայրանում ենք: Մինչդեռ նա ունէր մեծ համարձակութիւն Աստծու առաջ, բայց, այնուամենայնիւ, չէր զայրանում պարգեւի դանդաղութեան ուշացման համար, այլ մնում էր համբերատար: Իսկ մենք, մեր անթիւ մեղքերով ծանրաբեռնուած լինելով, անմաքուր խիղճ ունենալով եւ ոչ մի բարեհաճութիւն չունենալով Տիրոջ հանդէպ, եթէ լսելի չլինենք մինչեւ մեր խնդրանքի կատարումը, հոգեպէս տրտմում ենք, յուսահատւում, թողնում աղօթքը, եւ այդ պատճառով է, որ մենք միշտ ձեռնունայն ենք հեռանում Աստծուց: Մեզանից ո՞վ քսան տարի աղօթեց Աստծուն մի բանի համար, ինչպէս այդ արդարը, կամ աւելի լաւ՝ ո՞վ միայն քսան ամիս»[1]: «Սակայն ուշադիր եղէք, քանի որ առարկան, որի մասին խօսուելու է, խորն է: Մենք ուզում ենք ասել, թէ ինչպէ՞ս է Սառայի արգանդն իր անպտղութեամբ ուղղորդում մեզ Յարութեան հաւատին: Իսկ ինչպէ՞ս է այն ուղղորդում մեզ: Ինչպէս որ նրա արգանդը, լինելով մեռած, Աստծու շնորհով յարութիւն առաւ եւ աճեցրեց Իսահակի կենդանի մարմինը, այդպէս էլ Քրիստոս մեռնելով, իր սեփական ուժով Յարութիւն առաւ: Իսկ որ այս խօսքերի մէջ չկայ ոչ մի չափազանցութիւն, լսի՛ր հէնց Պօղոսին, ով Աբրահամի մասին ասաց, թէ՝ «Նա չերկմտեց իր հաւատի մէջ, թէպէտ նայեց իր մարմնին արդէն իբրեւ մեռած մարմնի,- քանի որ հարիւր տարեկանի մօտ էր,- եւ Սառայի մեռած արգանդին: Բայց Աստծու խոստման վրայ չերկմտեց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատով, փառք տուեց Աստծուն» (Հռոմ. 4, 17-19). այսինքն՝ որպէսզի

1 Свт. Иоанн Златоуст, Том 3, Книга 1, “Беседа о том, что не должно разглашать грехов братий и молиться о вреде врагам”.
Տե՛ս https://azbyka.ru/otechnik/Ioann_Zlatoust/beseda_o_grehah_bratii/
(ստ 11/04/2017):

մեռած մարմիններից ծնուի կենդանի որդի (Հռոմ. 4, 19-20)։ Նա, յետոյ մեզ առաջնորդելով այն հաւատից դէպի այս հաւատը, աւելացնում է. «**Արդ, միայն Աբրահամի համար չէ, որ գրուած է, թէ այս բանը նրա համար արդարութիւն համարուեց. այլ համարուելու է եւ մե՛զ համար, որ հաւատում ենք Նրան, որ մեռելներից յարութիւն տուեց Յիսուսին՝ մեր Տիրոջը**» (Հռոմ. 4, 21-22)։ Նրա խօսքերի իմաստը հետեւեալն է. ինչպէս որ Իսահակին (Աստուած) կանգնեցրեց մեռած մարմիններից, այդպէս յարութիւն տուեց եւ Իր Որդուն՝ նախապէս մահացած։ Իսկ ուզո՞ւմ ես իմանալ, թէ անպտղութիւնը նախատիպ էր նաեւ այլ իրադարձութեան։ Եկեղեցին ծնել է բազում հաւատացեալներ. հետեւաբար, որպէսզի դու անհաւատ չգտնուես, թէ ինչպէ՛ս այդ ամուլը, անզաւակն ու անպտուղը ծննդաբերեց, նրան նախորդեց ամուլն ըստ բնութեան՝ իր կամքով չբերի ճանապարհը հարթելով. եւ Սառան դարձաւ եկեղեցու նախապատկերը։ Ինչպէս նա, ամուլ լինելով, ծննդաբերեց ծերութեան ժամանակ, նոյնպէս եւ սա, ամուլ լինելով, ծննդաբերեց վերջին ժամանակներում։ Իսկ որ սա ճշմարիտ է, լսի՛ր Պողոսին, որ ասում է. «Մենք ազատի որդիներ ենք»։ Քանի որ Սառան եկեղեցու նախապատկերն էր ու նա ազատ էր, այդ իսկ պատճառով նա (առաքեալը) աւելացրեց, թէ «**աղախնի որդիներ չենք, այլ՝ ազատի**» (Գաղ. 4, 31)։ Նաեւ՝ «**Խոստման որդիներ ենք Իսահակի նման**» (Գաղ. 4, 28)։ Ինչ է նշանակում՝ «խոստման»։ Ինչպէս որ նրան ոչ թէ ծնեց բնութիւնը, այդպէս էլ մեզ ծնեց ոչ թէ բնութիւնը, այլ Աստծու շնորհը։ Եւ դարձեալ՝ «**Իսկ Վերին Երուսաղէմը, որը մեր բոլորի մայրն է, ազատ է**» (Գաղ. 4, 26)։ Իսկ սա Եկեղեցին է, որովհետեւ «դուք մօտեցել էք Սիոն լերանը եւ կենդանի Աստծու քաղաքին, երկնային Երուսաղէմին, հրեշտակների բիւրաւոր բանակներին, երկնքում գրուած անդրանիկների հանդիսաւոր ժողովին» (Եբր. 12, 22-23)։ Հետեւաբար, եթէ Եկեղեցին է Վերին Երուսաղէմը, եւ Սառան խորհրդատիպն է Վերին Երուսաղէմի, ինչպէս ասուած է՝ երկուսն էին (երկու կին). մէկը՝ «**ծնուած ծառայութեան համար, դա Հա-**

*գարն է» (Գաղ. 4, 24), իսկ Վերին Երուսաղէմը «**մեր բոլորի մայրն է, ազատ է**» (Գաղ. 4, 26), ապա ակնյայտ է, թէ Սառան խորհրդատիպն էր Վերին Երուսաղէմի իր ծննդեամբ եւ անպտղութեամբ: Կինն ամուլ էր այն բանի համար, որ դու գիտենաս ամուսնու բարոյականութիւնը, քանի որ նա չմերժեց նրան (Սառային), թէեւ ոչ մի օրէնք դա չէր արգելում այն ժամանակ, ոչ էլ ուրիշ կին վերցրեց այս ազատի հետ, ինչպէս շատերն են անում ծննդաբերութեան պատրուակով՝ բաւարարելով սեփական անզսպութիւնը, որոշ կանանց հեռացնելով, միւսներին ընդունելով, իսկ ուրիշները՝ նրանց հակադրելով հարճերով (վարձակներով) ու տները լցնելով բազմաթիւ տարաձայնութիւններով:*

*Գիտեմ, թէ այս խօսքերը խորն են, բայց եթէ մենք ջանանք, ապա աստուածից ոչինչ չի մնայ անհասկանալի: Այս խօսքերը խորհրդաւոր են ու պատկանում են դաւանութիւններին, իսկ եթէ ուզում էք, ես միեւնոյն ժամանակ կ՚ասեմ նաեւ իրենց բարոյական կողմի մասին: Այդպէս չվարուեց այս արդարը (Աբրահամը), այլ շարունակում էր սիրել իր աստուածատուր կնոջը, բնութեան Տիրոջը աղօթում էր քանդել բնութեան կապերը, ու չէր նախատում իր կնոջը: Իսկ ո՞րտեղից է երեւում, թէ նա չէր նախատում նրան. հէնց Աստուածաշնչից: Եթէ նախատէր, ապա Աստուածաշունչը կ՚ասէր այդ մասին ու չէր լռի, որովհետեւ այն խօսում է ինչպէս արդարների արժանիքների, այնպէս էլ թերութիւնների մասին, որպէսզի մենք խուսափենք վերջիններից, իսկ առաջիններին ընդօրինակենք: Այսպէս, երբ իր որդու առաջ նրա հարսնացու Ռաքէլը լալիս էր, եւ նա (Յակոբը) նախատեց նրան, Աստուածաշունչը նշեց եւ՛ սա, եւ՛ դա, ու չթաքցրեց: Երբ նա (Ռաքէլը) ասաց. «**Ինձ զաւակնե՛ր պարգեւիր, այլապէս կը մեռնեմ**» (Ծնն. 30, 1), ապա նա ի՞նչ պատասխանեց նրան. «**Մի՞թէ Աստծու փոխարինողն եմ ես, որ զրկել է քեզ ծննդաբերելուց**» (Ծնն. 30, 2): Պահանջը կանացի է եւ անխոհեմ: Ամուսնուդ ասում ես՝ ինձ զաւա՛կ պարգեւիր, ու բնութեան Տիրոջը չե՞ս դիմում: Այդ պատճառով էլ նա, յանդիմանութեամբ նրան պատասխանելով,*

դադարեցրեց նրա անխոհեմ պահանջն ու սովորեցրեց, թէ Ումի՛ց է պէտք խնդրել։ Բայց այդպէս չէր վարւում Իսահակը։ Նա ոչ մի նման բան չէր ասում, եւ նրա կինը չէր լալիս նրա դիմաց ու չէր բողոքում։ Այստեղից մենք սովորում ենք ողջախոհութիւն ու հաւատ։ Այն փաստը, թէ նա աղօթում էր Աստծուն, ցոյց է տալիս իր հաւատը։ Այն, որ նա չլքեց իր կնոջը, մեզ յայտնում է իր ողջախոհութիւնը, իսկ այն փաստը, թէ նա չէր նախատում նրան ու չէր յուսահատւում, ապացուցում է իր համբերութիւնը, իմաստասիրութիւնը, մեծ հեզութիւնն ու սէրն իր կնոջ հանդէպ։ Ոչ այնպէս, ինչպէս հիմա շատերն են գործում այդպիսի հանգամանքներում՝ դիմելով թմրանիւթերին ու կախարդութիւններին։ Նա չէր փորձում օգտագործել այդ դատարկ, անօգուտ, վնասակար ու հոգու համար կործանարար միջոցները, բայց թողնելով այդ ամէնը ու մերժելով բոլոր մարդկային նպաստները՝ ապաւինեց բնութեան Տիրոջը, Ով միայն Ինքը կարող է ուղղել այդպիսի թերութիւնները։ Լսեցէ՛ք սա, ամուսիններ, սովորեցէ՛ք կանայք, բոլորս ընդօրինակենք արդարին։ Կնոջ համար թող ոչինչ աւելի թանկ չլինի իր ամուսնուց, իսկ ամուսնու համար ոչինչ առաւել ցանկալի՝ իր կնոջից։ Մեր բոլորիս կեանքի ամրոցը նրանում է, որ կինն իր ամուսնու հետ միասիրտ լինի։ Սրանո՛վ է պահպանւում ամէն ինչ ողջ աշխարհում»[1]։

1 Свт. Иоанн Златоуст, Том 3, Книга 1, “Беседа о том, что никому не должно отчаиваться, ни молиться о вреде врагам, ни падать духом, не получая просимого; также к мужьям о сохранении мира с женами".
Տե՛ս https://azbyka.ru/otechnik/Ioann_Zlatoust/beseda_otchayanie/
(ստ 13/04/2017):

ՊԷՏՔ ՉԷ ՏՐՏՆՋԱԼ ԲԱԶՄԱԶԱՒԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Սուրբ Գիրքը սովորեցնում է, թէ բազմազաւակութիւնը ծնողների համար Աստծու օրհնութիւնն է։ «**Տիրոջ ժառանգութիւնը նրա որդիներն են, որոնք նրա վարձն են, պտուղը նրա որովայնի։ Ինչպէս նետերը հզօրի ձեռքում, այնպէս էլ որդիներն են անկեալների։ Երանի՛ նրան, ով իր ուզածի չափ կ՚առնի այդ նետերից, երբ դարպասի մօտ իր թշնամիների հետ խօսելու լինի, նա ամօթով չի մնայ**» (Սաղմ. 126, 4-5)։ Երանելի Դաւիթն ասում է. «**Երանի՛ բոլոր նրանց, ովքեր վախենում են Տիրոջից եւ ընթանում նրա ճանապարհներով։ Դու քո ձեռքի վաստակը պիտի ուտես. երանի՛ քեզ, դա լաւ պիտի լինի քեզ համար։ Կինդ պիտի լինի վայելուչ որթատունկի պէս քո տան անկիւնում, որդիներդ՝ նորատունկ ձիթենու պէս քո սեղանի շուրջ։ Ահա այսպէ՛ս պիտի օրհնուի ամէն մարդ, որ վախենում է Տիրոջից։ Քեզ պիտի օրհնի Տէրը Սիոնից կեանքիդ բոլոր օրերին դու պիտի տեսնես բարութիւնը Երուսաղէմի։ Դու պիտի տեսնես քո որդիների որդիներին**» (Սաղմ. 127, 4-7)։ Իսկ Սողոմոն իմաստունն ասում է. «**Ծերերի պսակն իրենց որդիների որդիներն են**» (Առակ. 17, 6)։ Հին Կտակարանում որդեծնութեան օրհնութիւնն այնքան բարձր էր գնահատւում, որ չբերութիւնը մեծ դժբախտութիւն էր համարւում եւ համընդհանուր նախատինք էր բերում անզաւակ ամոլներին (տե՛ս Ծնն. 16, 2։ 30, 1։ Ա. Թագ. 1, 6։ Ես. 47, 9։ Օսէէ 9, 14։ Ղուկ. 1, 25)։ Սակայն ոչ բոլորն են գնահատում որդեծնութեան աստուածային այս օրհնութիւնը։ Կան մայրեր ու հայրեր, ովքեր ոչ միայն շնորհակալ չեն Տիրոջը, որ իրենց երեխաներ ու թոռնիկներ է պարգեւել, այլ երբեմն

տրտնջալով՝ իրենց դժգոհութիւնն են յայտնում Աստծուն՝ հառաչելով այն բանի համար, որ շատ երեխաներ ունեն, եւ իրենց վրդովմունքն ու դժգոհութիւնը թափում են իրենց երեխաների վրայ: Եւ այսպիսի դժգոհ ծնողները հիմնականում պատահում են աղքատ մարդկանց մէջ, որոնց համար ուժերից վեր է ապահովել մեծ ընտանիքը, երեխաներին տալ պատշաճ նիւթական ապահովուածութիւն եւ յաջողակ ապագայ կերտելու հնարաւորութիւն:

Բազմազաւակութեան համար Աստծու դէմ տրտնջալը մեծագոյն մեղք է: Դժգոհելով ու յուսախաբուելով բազմազաւակութիւնից՝ ծնողները վիրաւորում են Աստծուն՝ չգնահատելով Նրա օրհնութիւնները, ողորմածութիւնն ու գթութիւնը: Բողոքելով ու սրտնեղելով՝ նրանք նաեւ խիստ անարդար են գտնւում իրենց երեխաների նկատմամբ: Արդեօք մեղաւո՞ր են մանուկները, որ լոյս աշխարհ են գալիս: Ինչ լաւ բան կարելի է ակնկալել մանուկներից, ովքեր չհասկանալով իրենց մեղքը, միայն լսում են մեղադրանքներ ու հայհոյանք, տեսնում անտարբերութիւն ու չարակամութիւն: Բազմազաւակութեան համար տրտնջալով, վիրաւորելով ու բարոյապէս վնասելով մանուկներին՝ դժգոհ ծնողները շատ անզգոյշ են գտնւում իրենք իրենց նկատմամբ: Նա, որ «**ուտելիք է տալիս անասուններին եւ ագռաւի ձագերին, որոնք դիմում են իրեն**» (Սաղ. 146, 9) երբէք չի թողնի առանց խնամքի Իր ողջամիտ արարածներին, եթէ միայն Նրան դիմենք աղօթքով: Տէրը, որ շատ երեխաներ է պարգեւում ծնողներին, տալիս է նաեւ կենսամիջոց ու սնունդ՝ պահպանելով նրանց բարեկեցութիւնը, եթէ միայն ծնողները փնտռում են Նրա օգնութիւնը: Խնամատար բազմազաւակ ծնողները, օգտուելով իրենց երեխաների սիրուց, չեն կարող չսփոփուել այն յոյսով, որ երբ ի վերջոյ ծերութեան ժամանակը գայ, երեխաների մէջ կը գտնեն իրենց հոգատար խնամակալներին: Բացի այս նիւթական նպաստից՝ ծնողներն իրենց երեխաներից արդարացիօրէն կարող են ակնկալել նաեւ հոգեւոր բարիքներ: Որքան շատ են երեխաները, այնքան շատ են Աստծու առաջ իրենց աղօթարարները: Սուրբ

Գիրքը նշում է, թէ կինը որդեծնութեան համար է ապրում եւ որդեծնութեամբ է փրկւում։ Ո՞ր դէպքում. եթէ ինքն ու իր երեխաները պարկեշտութեամբ մնան հաւատի, սիրոյ եւ սրբութեան մէջ (տե՛ս Ա. Տիմ. 2, 15)։ Բաւական տարօրինակ կը լինէր, եթէ «որդեծնութիւն» բառը հասկացուի որպէս պարզ «բազմացում», քանի որ այդ դէպքում ստացւում է, թէ փրկարար է նաեւ որեւէ հեթանոսական բազմացումը, որ հիմնուած է միայն սերնդագործութեան շարունակականութեան վրայ։ Թէեւ, իհարկէ, բազմազաւակութիւնը լաւ է, բայց տեսնել այն որպէս կնոջ փրկութեան միակ հնարաւոր եւ անհրաժեշտ հոգեւոր գործօնը, ոչ միայն սխալ է, այլ նոյնիսկ վտանգաւոր։ Ի վերջոյ, բոլոր մարդիկ էլ տարբեր են, եւ մարդկային հնարաւորութիւնները շատ սահմանափակ են. ոմանց համար բազմազաւակութիւնն իրօք իրագործելի է, իսկ ուրիշների համար գերծանրաբեռնուածութիւն է ու բոլորովին անհնարին։ Բազմազաւակութիւնը լաւ է, երբ այն իմաստաւորուած է, երբ լցուած է ծնողական սիրով ու միեւնոյն ժամանակ հոգեւոր եւ ֆիզիկական ուժով ու կարողութեամբ։ Բայց ցաւօք, պատահում է, որ բազմազաւակ ընտանիքներում երեխաները զրկուած են լինում ծնողական լիարժէք հարկաւոր սիրուց, հոգատարութիւնից եւ ուշադրութիւնից։ Եւ յաճախ սա ոչ թէ այն պատճառով է, որ ծնողները վատն են, այլ պարզապէս նրանց ուժերն ու կարողութիւնները բաւարար չեն։ Ուրեմն, ինչ նկատի ունէր Պօղոս առաքեալը, երբ ասում էր, թէ կինը փրկւում է որդեծնութեամբ։ Նա ասում է, թէ այդ կինը, որպէս քրիստոնեայ մայր, պէտք է հնարաւորինս մեծ ուժ ու խնամք ներդնի իր երեխաների հոգեւոր դաստիարակութեան մէջ։ Անկախ նրանից՝ մէկ զաւակ ունի, թէ շատ, նա պատասխանատու է նրանց համար Աստծու առաջ ու պէտք է նրանց պարգեւի իր մայրական սիրոյ ողջ լիութիւնը պարգեւի։ Բայց ինչպէս է այդ դէպքում փրկւում ամուլ եւ անզաւակ կինը։ Նա փրկւում է Քրիստոսին հետեւելով, Նրա պատուիրանները, ամէնից առաջ սիրոյ պատուիրանը կատարելով. ճիշդ այնպէս, ինչպէս փրկւում է տղամարդը։ Բայց ոմանք սխալ են մեկնաբանում

Պողոս առաքեալի խօսքը (Ա. Տիմ. 2, 15)՝ կարծելով, թէ կանայք դեռ պէտք է պարտադիր ծննդաբերեն։ Սա անհեթեթութիւն է եւ երբէք չի կարող մեկնաբանուել այն իմաստով, թէ կինը պէտք է բացառապէս «վերարտադրողական մեքենայ» լինի, եւ իբր սրանում է Աստծու առաջ իր հիմնական վաստակը։ Այնպէս որ բազմազաւակ ընտանիքների մայրերը պէտք չէ տրտնջան, այլ ընդհակառակը՝ ուրախանան ու շնորհակալութիւն յայտնեն Տիրոջը, որ որդեծնութեամբ իրենց հնարաւորութիւն է տրուած հասնելու անձնական փրկութեանը, քանի որ մանուկներին առաջնորդելով դէպի ճշմարիտ հաւատ եւ յաւիտենական փրկութիւն՝ նրանց միջոցով նախապատրաստում են իրենց փրկութիւնը։ Հետեւաբար, որդեծնութիւնն ու մանուկների դաստիարակութիւնը սխրագործ արարքներ են, որոնք տանում են փրկութեան։ Ծնողական սիրով եւ անձնազոհութեամբ, ինչպէս նաեւ մեր զաւակների աղօթքներով մարդասէր Տէրն Իր շնորհով եւ ողորմութեամբ մեր մեղքերին թողութիւն կը պարգեւի։

ԱՅԼԱՓԱՌՆԵՐԻ ՀԵՏ ԽԱՌՆԱՄՈՒՍՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ար ժամանակների զանգուածային արտագաղթի պայմաններում միջէթնիկ, միջմշակութային եւ միջկրօնական խառնամուսնութեան խնդիրն աւելի քան երբեւէ շոշափելի է եւ արդիական։ Քրիստոսի Եկեղեցին այսօր գտնւում է բազմազան մարտահրաւէրների առաջ, որոնցից ծագում են մի շարք խնդիրներ, որոնք կրում են ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ աշխարհիկ բնոյթ։ Դրանցից մէկն էլ հաւատացեալ եւ եկեղեցացած մարդու՝ այլափառի[1] հետ ամուսնանալու խնդիրն է։ Այս հարցը, որ հաւասարապէս վերաբերում է եւ կնոջը, եւ տղամարդուն, այսօր երիտասարդների մէջ մեծ հետաքրքրութիւն է առաջացնում։ Փորձենք այս ամէնը հասկանալ աստուածաշնչական եւ հայրաբանական ուսուցումների տեսանկիւնից։

Յաւօք, իրականում յաճախ է պատահում, երբ հաւատացեալ կինը կամ տղամարդը, այլափառի հետ ամուսնանալով, շուտով աշխարհիկանում է, քանի որ փրկութեան եռանդն ու նախանձախնդրութիւնը պարզապէս փոխարինւում են յարմարուողութեամբ եւ որոշ դէպքերում էլ ուղղակի հաւատալքութեամբ։ Առաջանում են յուսահատութիւն, ուխտադրժութիւն եւ ի վերջոյ հաւատուրացութիւն։ Որքա՜ն աղջիկներ կան այսօր, որոնք ուղղակի ընդունում են այլափառութիւնը։ Եւ հակառակ օրինակներ մենք գրեթէ չենք տեսնում։ Եկեղեցական ծառայութիւնների փոխարէն այսպիսիներն սկսում են այցելել տարբեր զուարճալի վայրեր, միայն թէ հաճելի

1 «Այլափառ» ասելով՝ հասկանում ենք այլ հաւատք ունեցող, տարբեր դաւանանքի տէր, այլակրօն, այլակրօն, չարափառ, սնափառ, աղանդամոլ կամ էլ անհաւատ մարդ։

լինեն իրենց ամուսնուն կամ կնոջը։ Նման ծնողների երեխաներն էլ աճում են անհաւատ միջավայրում։ Սակայն պէտք չէ կարծել, թէ այս ամէնը միայն այսօրուայ անբարոյական դարի արդիւնքն են։ Ինչո՞ւ են դրանք տեղի ունենում։ Ինչո՞ւ է այլափառների հետ խառնամուսնութիւնը յանգեցնում նման աղետալի հետեւանքների։

Դեռեւս «Առաքելական կանոններ»-ում նշւում է. «Կարգեցին առաքեալները եւ դրեցին հաստատութեամբ, թէ ինչպէս սկզբից Աստուած ամուսնութեամբ զուգել էր տղամարդուն ու կնոջը, դարձրել միմեանց օգնական եւ օրհնել նրանց, նոյնպէս եւ սահմանուած ու հաստատուած է առաքելական հրամանը՝ նոյն սրբութեամբ միաւորել ամուսնութիւնը՝ օրէնքով ու քահանայութեան աջի օրհնութեամբ զարդարուն։ Եւ ինչպէս որ Արարիչ Աստուած պատուիրեց Մովսէսին, թէ՝ «Պատուիրի՛ր Իսրայէլի որդիներին, Ես եմ ձեր Տէր Աստուածը, եւ դուք իմ պատուիրանների մէջ զգոյշ մնացէք եւ եգիպտացիների կրօնի ետեւից մի՛ գնացէք, որտեղից որ դուրս էք եկել, եւ քանանացիների ընթացքի նման գործեր չգործէք»[1]։ Երրորդ դարում սբ. Կիպրիանոսը գրել է, թէ մեծ քանակով հաւատուրացութեան պատճառն այն է, որ «ամուսնական դաշինքներ են կնքւում անհաւատների հետ... Քրիստոսի անդամներին առաջարկում են հեթանոսներին»[2]։

Աստծու խօսքը, հակառակ շատերի կարծիքին, միանշանակ դատապարտում է խառնամուսնութիւնը ուղղադաւան քրիստոնեաների եւ այլափառների միջեւ։ Աստուածաշնչից յայտնի է, թէ Աստուած Իր հաւատարիմներին մարդկային գրեթէ ամբողջ պատմութեան ընթացքում զգուշացնում է, որ չխառնուեն նրանց հետ, ովքեր արհամարհում են ու չեն կատարում Իր կամքը։ Արդէն աշխարհի ստեղծման սկզբին տեղի ունեցաւ ջրհեղեղի մեծագոյն աղետը,

---

1 Կանոնագիրք Հայոց, «Կանոնք Առաքելականք», ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1964, էջ 47 (մէջբերումը ներկայացուած է թարգմանաբար)։

2 Киприан, епископ Карфагенский, Книга о падших. Տե՛ս http://lib.pravmir.ru/library/readbook/661 (առ 21/03/2017)։

*որ պայմանաւորուած էր այն բանով, որ «**Աստծու որդիները**[1], **տեսնելով, որ մարդկանց դուստրերը գեղեցիկ են, կին առան նրանց, ում ընտրեցին: Տէր Աստուած ասաց. «Իմ ոգին յաւիտեան թող չմնայ այդ մարդկանց մէջ, որովհետեւ նրանք մարմնաւոր են»»** (Ծնն. 6, 2-3): Աւանդական մեկնաբանութիւններն ասում են, թէ Աստծու այդ որդիները Տիրոջ հաւատարիմ Սէթի սերնդից են, իսկ մարդկանց դուստրերը՝ քանանացիներն են: Այդ երկուսի խառնակութիւնը նաեւ հին աշխարհի կործանման պատճառը դարձաւ: Զմոռանալով ու յիշելով այս սարսափելի իրադարձութիւնը՝ հաւատքի հայր Աբրահամը պահանջում է, որ իր ծառան երդում տայ Աստծու անունով, որ նա իր որդի Իսահակի[2] համար քանանացի դուստրերից կին չվերցնի, քանի որ նրանք չէին պաշտում ճշմարիտ Աստծուն. «**Զեռքդ դի՛ր իմ ազդրի տակ եւ քեզ երդուեցնեմ Տիրոջ՝ երկնքի Աստծու եւ երկրի Աստծու անունով, որ իմ որդի Իսահակի համար կին չես առնի քանանացիների դուստրերից (որոնց մէջ եմ բնակւում ես), այլ կը գնաս այն երկիրը, որտեղ ծնուել եմ՝ իմ տունը, եւ այնտեղից իմ որդի Իսահակի համար կին կ՚առնես»** (Ծնն. 24, 2-4): Իսահակն իր հերթին արգելեց Յակոբին կին առնել քանանացիների դուստրերից. «**Իսահակը կանչեց Յակոբին, օրհնեց նրան ու պատուիրեց՝ ասելով. «Քանանացիների դուստրերից կին չառնես: Գնա՛ Ասորիների Միջագետք, քո մօր հօր՝ Բաթուէլի տունը, եւ այնտեղից քո մօրեղբայր Լաբանի դուստրերից քեզ կին ա՛ռ: Իմ Աստուածը թող օրհնի քեզ, աճեցնի քեզ, բազմացնի քեզ,**

1 Ընդհանրական Եկեղեցու մի խումբ անուանի Հայրեր՝ Կղեմես Աղեքսանդրացին, Կիպրիանոսը, Յուստինոս Փիլիսոփան, Տերտուղիանոսը, Իրինէոս Լիոնացին (Լուգդունացին), Աթենագորաս Փիլիսոփան, ինչպէս նաեւ Որոգինեսն ու շատ ուրիշներ, համարում են, թէ «Աստծու որդիները» ընկած հրեշտակներն են, որոնցից առաջացան խառնածին ազդահաները, հսկաները կամ չար ոգիները: Եկեղեցու մէկ ուրիշ խումբ Հայրեր՝ Յովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին, Կիւրեղ Աղեքսանդրացին, Կիւրեղ Երուսաղէմացին, Օգոստինոսը եւ շատ ուրիշներ, համարում են, թէ «Աստծու որդիները» Սէթի սերնդի ժառանգներն են:

2 Համաձայն խոստմանը՝ ընտրեալ որդին, տե՛ս Գաղ. 4, 22-28; Եբր. 11, 17-18:

բազում ժողովուրդների նախահայր լինես: Նա քեզ եւ քեզնից յետոյ գալիք քո սերունդներին թող տայ իմ հայր Աբրահամի օրհնութիւնը, որպէսզի ժառանգես քո պանդխտութեան երկիրը, որ Աստուած տուել էր Աբրահամին... Յակոբն էլ, անսալով իր հօր ու մօր խօսքերին, գնացել էր Ասորիների Միջագետք, համոզուեց, որ քանանացիների դուստրերը իր հայր Իսահակի աչքին հաճոյ չեն, ուստի գնաց Իսմայէլի մօտ եւ ի յաւելումն իր ունեցած կանանց՝ կին առաւ նաեւ Աբրահամի որդի Իսմայէլի դուստր Մայելէթին՝ Նաբէութի քրոջը» (Ծնն. 28, 2-9):

Այն բանից յետոյ, երբ Աստուած Իր ընտրած ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսից եւ ուիտ կնքեց նրա հետ, ամբողջութեամբ արգելեց խառնամուսնութիւնները հեթանոս ժողովուրդների հետ, որոնք շրջապատում էին Իսրայէլին. «Դու նրանց ու նրանց չաստուածների հետ ուիտ չդնես: Նրանք քո երկրում պիտի չբնակուեն, որպէսզի իմ նկատմամբ յանցանքի չմղեն քեզ, որովհետեւ, եթէ ծառայես նրանց չաստուածներին, նրանք գայթակղութիւն կը լինեն քեզ համար» (Ելք 23, 32-33): Նաեւ՝ «Զգո՛յշ եղիր, ուիտ չկապես այն երկրի բնակիչների հետ, ուր մուտք ես գործելու: Չլինի թէ գայթակղուէք» (Ելք 34, 12): Աստծու մտահոգութիւններն անհնազանդութեան ու խառնամուսնութեան աւերիչ հետեւանքների մասին բազմիցս ներկայացուած են Հին Կտակարանի վկայութիւններում: Այն, ինչին Իսրայէլի թշնամի՝ Մովաբի արքայ Բաղակը չէր կարող հասնել իսրայէլացիների դէմ Բաղաամի ուղղակի անէծքի միջոցով (տե՛ս Թուեր 22-24), կարողանում է հեշտութեամբ հասնել իսրայէլացիների եւ մովաբացիների միջեւ խառնամուսնութիւնների միջոցով (տե՛ս Թուեր 25, 1-6) մինչեւ որ Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդի Փենեէսն իր գործողութեամբ վերացնում է իսրայէլացիների նկատմամբ ունեցած Աստծու զայրոյթն ու դադարեցնում իսրայէլացիների կոտորածը (տե՛ս Թուեր 25, 7-8): Նաւէի որդի Յեսուի մահից յետոյ Իսրայէլի ժողովուրդները իրենց խառնամուսնութիւններով չարիք

գործեցին Աստծու դէմ: Սրա հետեւանքը եղաւ այն, որ նրանք մոռացան Աստծու պատուիրանները, բնակուեցին ու խառնուեցին հեթանոս օտար ազգերին՝ քանանացիներին, քետացիներին, ամորհացիներին, փերեզացիներին, խեւացիներին, յեբուսացիներին եւ գերգեսացիներին ու սկսեցին պաշտել նրանց չաստուածներին ու կուռքերին. «**Նրանց աղջիկներին իրենց համար կին առան եւ իրենց աղջիկներին տուին նրանց տղաներին, պաշտեցին նրանց չաստուածներին: Իսրայէլացիները չարիք գործեցին Տիրոջ առաջ, մոռացան իրենց Տէր Աստծուն եւ պաշտեցին Բահաղին ու անտառները: Տէրը սաստիկ բարկացաւ իսրայէլացիների վրայ եւ նրանց մատնեց Միջագետքի ասորեստանցիների արքայ Քուսարսաթեմի ձեռքը, եւ իսրայէլացիները նրան ծառայեցին ութ տարի**» (Դատ. 3, 6-8): Իսկ Սողոմոնը, որ բոլոր մարդկանցից առաւել իմաստուն էր (Գ. Թագ. 4, 29-34), չկարողացաւ դիմակայել այլ ազգերին պատկանող բազմաթիւ օտար կանանց կործանարար ազդեցութեանը. «**Սողոմոն արքան կնամոլ էր. նա կնութեան առաւ շատ օտար կանանց. փարաւոնի աղջկան, սովաբացի, ամոնացի, եդոմայեցի, ասորի, քետացի, ամորհացի եւ այլ ազգերի պատկանող բազմաթիւ օտար կանանց, որոնց մասին Տէրն ասել էր իսրայէլացիներին. «Չիաւոնուէ՛ք նրանց հետ, նրանք էլ թող չիաւոնուեն ձեզ հետ, որպէսզի չլինի, թէ ձեր սրտերը մոլորեցնեն իրենց կուռքերին դարձնելով»: Սողոմոնը յարեց նրանց՝ սէր տածելով: Նա եօթը հարիւր կին եւ երեք հարիւր հարճ ունէր, եւ կանայք խոտորեցրին նրա սիրտը**» (Գ. Թագ. 11, 4-11):

Նոյնպէս Եսաւին մերժելու պատճառներից մէկն էլ այն փաստն էր, որ նա քետացի կանայք առաւ, Յուդիթին եւ Մասեմաթին, «**որոնք վշտացնում էին Իսահակին եւ Ռեբեկային**» (Ծնն. 26, 34-35): Ռեբեկան Իսահակին նոյնիսկ ասաց. «**Յոգնել եմ Քետի ցեղի դուստրերից: Եթէ Յակոբը կին առնի Քետի ցեղի դուստրերից՝ ա՛յս երկրի դուստրերից, էլ ինչո՞ւ եմ ապրում ես**» (Ծնն. 27, 46): Խառնամուսնութեան՝ Աստծու անմիջական արգելքը

հեթանոս ազգերի հետ՝ որպէս գրաւոր կանոն, արձանագրուած է Աստուածաշնչի «Ելք» գրքում: «Չլինի, թէ ձեր մարդիկ ուխտ կապեն այդ երկրի բնակիչների հետ եւ նրանց աստուածներին պաշտամունք մատուցելով՝ պոռնկանան, զոհեր մատուցեն նրանց աստուածներին եւ նրանց հրաւէրն ընդունելով՝ չլինի, թէ դու էլ ուտես նրանց զոհաբերած անասունների մսից, քո տղաներին ամուսնացնես նրանց դուստրերի հետ, քո դուստրերին կնութեան տաս նրանց տղաներին, քո դուստրերը նրանց աստուածներին պաշտամունք մատուցելով՝ պոռնկանան ու պոռնկացնեն նաեւ քո՛ տղաներին՝ աստուածներին պաշտամունք մատուցելով» (Ելք 34, 15-16): Աստուած այս արգելքի մասին Իր ժողովրդին յիշեցնում է նախքան Աւետեաց երկիր մուտք գործելը. «Նրանց հետ ուխտ չդնես եւ նրանց չխնայես: Նրանց հետ խնամութիւն չհաստատես. քո աղջկան նրա որդուն չտաս, նրա աղջկան քո որդու համար կին չառնես, որովհետեւ քո որդուն իմ դէմ կ՚ապստամբեցնեն. նա օտար աստուածներ կը պաշտի, եւ Տէրը սաստիկ կը բարկանայ ձեզ վրայ ու անմիջապէս կը կոտորի ձեզ» (Երկ. Օր. 7, 2-4): Եւ իսկապէս, խառնամուսնութեան այս սպառնալիքը վրայ է հասնում նրանց, ովքեր խախտում են Տիրոջ ուխտը: «Մովաբացի կանայք իսրայէլացիներին հրաւիրեցին իրենց կուռքերի պատուին զոհ մատուցելու ծէսին: Իսրայէլացիները կերան մովաբացիների մատուցած զոհերից եւ երկրպագեցին նրանց կուռքերին... Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդի Փենեէսը, տեսնելով դա, վեր կացաւ ժողովրդի միջից եւ իր ձեռքն առնելով տէգը՝ այդ տղամարդու յետեւից մտաւ անառակ կնոջ սենեակն ու խոցեց երկուսին էլ՝ իսրայէլացի տղամարդուն ու այդ կնոջը՝ իր արգանդից: Այդ ժամանակ էլ դադարեց իսրայէլացիների կոտորածը: Այդ կոտորածից քսանչորս հազար մարդ մեռաւ: Տէրը խօսեց Մովսէսի հետ եւ ասաց. «Փենեէսը՝ Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդին, վերացրեց իսրայէլացիների նկատմամբ ունեցած իմ զայրոյթը, քանի որ նա նրանց նկատմամբ նոյնքան

*անհաշտ էր, որքան ես: Եւ ես իսրայէլացիներին իմ բարկութեամբ չոչնչացրի»» (Թուեր 25): Դեռեւս սկսած Բէլփեգորին յարած իսրայէլացիների սարսափելի այս կոտորածից, երբ քսանչորս հազար մարդ մեռաւ (տե՛ս Թուեր 25), եւ յետոյ դատաւորների կառավարման ժամանակ, երբ Սամսոնը մեռաւ մի փղշտացի կնոջ՝ Դալիլայի պատճառով՝ այլ ազգերին մատնուելով (տե՛ս Դատ. 16), ու մինչեւ իմաստուն Սողոմոն թագաւորի անկումը, ում սիրտը գայթակղեցրին այլ ազգերի պատկանող բազմաթիւ օտար կանայք (տե՛ս Գ. Թագ. 11, 3), շարունակւում է խառնամուսնութեանը վերաբերող Աստծու պատուիրանի գործադրման այս պայքարը: Աստուած անմիջապէս պատժում էր նրանց, ովքեր խախտում էին Իր հրամանը: Այս պատուիրանը յատկապէս կարեւոր էր Եզրայի եւ Նէեմիի համար, ովքեր պայքարում էին, որ ընտրուած ժողովուրդը չխառնուի անհաւատ այլազգիների կամ օտարերկրացիների հետ: Նէեմին այսպիսի խառնամուսնութիւններն ուղղակիօրէն կոչում է «մեծ չարիք» եւ «մեղանչում Աստծու առաջ»: Նէեմիի շուրթերով Աստուած զգուշացնում է. «**Արդ, չլսե՛մ, թէ ձեզանից մէկն այսպիսի մեծ չարիք գործի՝ Աստծու առջեւ մեղանչի եւ այլազգի կին առնի**» (Նէեմ. 13, 27): Իսկ Եզրաս քահանան՝ Տիրոջ Օրէնքի մեկնիչը, այդպիսի խառնամուսնութիւնը «մեղք» է անուանում: Նա յայտարարում է. «**Դուք մեղք էք գործել, կին էք առել այլազգիների աղջիկներից եւ անօրէնութիւն էք աւելացրել Իսրայէլի վրայ: Արդ, խոստովանեցէ՛ք եւ փա՛ռք տուէք մեր հայրերի Տէր Աստծուն, կատարեցէ՛ք նրա կամքը, զատուեցէ՛ք եւ բաժանուեցէ՛ք երկրի բոլոր հեթանոսներից եւ ձեր այլազգի կանանցից**» (Ա. Եզր. 9, 7-9):*

Իւրաքանչիւր դէպքում այս արգելքի մասին Աստուած բացատրում է, թէ այլակրօն ու հեթանոս ազգերի հետ խառնամուսնութիւնը սպառնում է նրանով, որ ընտրեալ ժողովուրդը կը հեռանայ ճշմարիտ Աստծուն երկրպագելուց ու կը սկսի երկրպագել հեթանոս չաստուածներին: Այդկերպ նա Աստծուց կը ստանայ իր արդար

պատիժը. «Շա՛տ զգոյշ եղէք ձեր նկատմամբ, որ սիրէք ձեր Տէր Աստծուն: Իսկ եթէ ետ դառնաք, ձեր մէջ մնացած ազգերին յարէք, նրանց հետ խնամութիւն անէք, խառնակուէք նրանց հետ, եւ նրանք էլ ձեզ հետ, իմացած եղէք, որ Տէրն այլեւս չի կոտորի այն ազգերին ձեր առաջ, եւ նրանք ձեզ համար որոգայթ ու գայթակղութիւն կը լինեն, խոչընդոտ՝ ձեր գարշապարների համար եւ նետեր՝ ձեր աչքերի համար, մինչեւ որ կորչէք այս բարի երկրից, որ տուեց ձեզ ձեր Տէր Աստուածը» (Յեսու. 23, 11-13): Մաղաքիա մարգարէն նոյնպէս յայտարարում է. «Յուդան նենգութիւն արեց: Լքուեց Յուդայի երկիրը, գարշելի բաներ արուեցին Իսրայէլում եւ Երուսաղէմում, որովհետեւ Յուդայի երկիրը պղծեց Տիրոջ սրբութիւնները նրանց ձեռքով, ում սիրեց, եւ յարեց օտար աստուածներին[1]: Տէրը պիտի կործանի այն մարդուն, որն այդպէս կ՚անի, մինչեւ որ նա հալածուի Յակոբի տնից» (Մաղ. 2, 11-12):

Աստուածաշունչը սովորեցնում է, թէ խառնամուսնութիւնը ոչ թէ այլափառին է մօտեցնում Աստծու սիրոյն, այլ հակառակը՝ հաւատացեալն է գայթակղում եւ հեռանում Աստծուց. «Շա՛տ զգոյշ եղէք ձեր նկատմամբ, որ սիրէք ձեր Տէր Աստծուն: Իսկ եթէ ետ դառնաք, ձեր մէջ մնացած ազգերին յարէք, նրանց հետ խնամութիւն անէք, խառնակուէք նրանց հետ, եւ նրանք էլ ձեզ հետ, իմացած եղէք, որ Տէրն այլեւս չի կոտորի այն ազգերին ձեր առաջ, եւ նրանք ձեզ համար որոգայթ եւ գայթակղութիւն կը լինեն, խոչընդոտ՝ ձեր գարշապարների համար եւ նետեր՝ ձեր աչքերի համար, մինչեւ որ կորչէք այս բարի երկրից, որ տուեց ձեզ ձեր Տէր Աստուածը» (Յեսու 23, 11-13):

Խառնամուսնութեան արգելքը հոգեւոր եւ կրօնական անհամատեղելիութեան հարց էր, այլ ոչ թէ ազգային կամ ռասսայական տարբերութիւնների խնդիր: Այս պատուիրանը որեւէ կերպ կապ-

1 Ուրիշ թարգմանութիւններում գրուած է՝ «եւ օտար աստծու աղջկանը այր եղաւ»:

ւած չէ արիւնակցական մաքրութեան հասկացողութեան հետ։ Այլազգերին պատկանող հեթանոսները, ընդունելով հաւատն առ ճշմարիտ Աստուած, կարող էին լիովին ներգրաւուել հրէական հասարակութեան մէջ։ Կային բացառութիւններ։ Օրինակ՝ Մովսէսի եթիոպուհի կինը՝ Սեփորան, Հռաքաբն ու մովաբացի Հռութը, ովքեր հրաժարուեցին ու լքեցին կեղծ չաստուածներին, ոչ միայն ընտրեալ ժողովրդի անդամները դարձան, այլեւ յիշւում են Տէր Յիսուս Քրիստոսի նախնիների ազգաբանութեան մէջ (տե՛ս Մատթ. 1, 5; Եբր. 11, 31)։ Կարելի է յիշել Յովսէփին, որի մասին գրուած է, թէ փարաւոնը Յովսէփին կնութեան տուեց քուրմ Պետափրէսի դուստր Ասանէթին (Ծննդ. 41, 45)։ Իսկ Եսթերը հեթանոս Արտաշէս թագաւորի կինը դարձաւ (Եսթ. 2, 1-18)։ Արդեօք կարո՞ղ են նրանք ընդհանուր օրէնքից բացառութիւն լինել։ Ոմանք խօսելով, «յաջողուած» խառնամուսնութիւնների մասին, պահանջում են զիջողութիւն այս հարցում իրենց կամ էլ իրենց երեխաների նկատմամբ։ Ակնյայտ է, որ թէ՛ Յովսէփը եւ թէ՛ Եսթերը չէին ամուսնացել իրենց անձնական նախաձեռնութեամբ։ Պէտք է նկատի առնել նաեւ այն փաստը, որ Յովսէփի՝ Եգիպտոսում մնալու ժամանակ (Ք. ա. 19-18-րդ դդ.), Հիքսոս գերդաստանի օրէնքները, որոնք ունեցել են սեմիտական ծագում, եւ ինչպէս հրէաները, հաւանաբար Յովսէփը ժառանգել էր ճշմարիտ Աստծու մասին գիտելիքները։ Աւելին, Յովսէփն իր ամուսնութեան պահին իր վկայութեամբ հասաւ նրան, որ փարաւոնն ու նրա շրջապատն սկսեցին հնազանդուել ճշմարիտ Աստծուն։

*Վերոյիշեալ օրինակները չեն հակասում Հին Կտակարանի խառնամուսնութիւնների ընդհանուր վարդապետութեանը։ Նրանք միայն վկայութիւնն են այն բանի, թէ Աստուած երբէք չի թողնի Իր ողորմածութիւնը նրանց հանդէպ, ովքեր, հակառակ իրենց կամքին, գտնւում են դժուարին ու ծանր հանգամանքներում։ Սա լիովին համապատասխանում է Նոր Կտակարանում հաւատացեալ ամուսիններին ուղղուած Տիրոջ այն պատուիրանին, որ չթողնեն անհաւատներին, եթէ իրենց հաճելի է ապրել նրանց հետ, «**որով-***

հետեւ անհաւատ մարդը իր կնոջո՛վ սուրբ է. սուրբ է եւ անհաւատ կինը իր մարդո՛վ» (Ա. Կորն. 7, 14)։ Կեանքի փորձն արդէն ցոյց է տալիս, թէ իւրաքանչիւր «յաջողակ» ամուսնութեան դիմաց գոյութիւն ունեն բազում անյաջող ամուսնութիւններ, որոնց զոհերը եկեղեցի են վերադառնում հոգեկան ծանր վիճակով եւ յաճախ կոտրտուած ընտանեկան կեանքով։ Ամուսնութիւնը «յաջողակ» այ՛ն դէպքում է, երբ զոյգերը գտնւում են ներդաշնակ համակեցութեան ու բարգաւաճ գոյակցութեան ճանապարհին, որը չի կարող կտրուել կարճ ժամանակի ընթացքում։ Սակայն որպէս յաջողակ ամուսնութեան չափանիշ է հանդիսանում առողջ հոգեւոր կեանքն ու համատեղ ծառայութիւնը Տիրոջը։ Զարժէ մոռանալ, որ նոյնիսկ նման զոյգերի ամուսնութեան համեմատաբար դրական փորձը չի կարող լինել արդարացում՝ խախտելու Տիրոջ այս բացայայտ արգելքը։ Ճշմարիտ հաւատացեալի համար այլափառի կամ անհաւատի հետ ամուսնական խառնակութիւնն ակնյայտօրէն անհնազանդութեան արարք է հանդիսանում Աստծու բարի ու կատարեալ կամքի դէմ։

*Նոր Կտակարանում Աստուած շարունակում է ձեւաւորել Իր ընտրեալ ժողովուրդին, այսինքն՝ Քրիստոսի խորհրդական մարմինը հանդիսացող եկեղեցուն, որը ճշմարիտ Երուսաղէմն է։ Իսարայէլի համար սահմանուած հինկտակարանեան աստուածադիր օրէնքները հաւասարապէս կիրառելի են Նոր Կտակարանի եկեղեցում։ Նոր Ուխտի ժամանակներում Մովսէսի ընդունած օրէնքներին գերազանցեց Աւետարանի շնորհը, սակայն ուժի մէջ մնաց Տիրոջ պատուիրանն ամուսնութեան վերաբերեալ։ Պօղոս առաքեալն ասում է. «**Մի՛ խաբուէ՛ք. չար ընկերակցութիւններն ապականում են լաւ բարքերը**» (Ա. Կորն. 15, 33)։ Եթէ նոյնիսկ հաւատացեալը մտադրութիւն ունի փոխելու անհաւատին, շատ աւելի յաճախ տեղի է ունենում հակառակը։ Ակնյայտ է, թէ Պօղոս առաքեալն ամուսնութեան հարցում ենթադրում է քրիստոնեայ զոյգերի հոգեւոր ու կրօնական միասնութիւնը։ Ուրիշ առիթով էլ ասում է. «**Միթէ իշխանութիւն չունե՞նք մեզ հետ ման ածելու մեր հաւատացեալ**

կանանց[1], ինչպէս որ միւս առաքեալները, Տիրոջ եղբայրները եւ Կեփասը անում են» *(Ա. Կորն. 9, 5)։ Այս թելադրութիւնը պէտք է հիմք լինի իւրաքանչիւր քրիստոնեայի համար.* ***«Երկու մարդ միասին կը գնա՞ն երբեւէ, եթէ չճանաչեն իրար»*** *(Ամոս 3, 3)։ Նոյնպէս ասում է.* ***«Կինը կապուած է իր մարդուն մինչեւ այնքան ժամանակ, որ իր մարդը կենդանի է։ Իսկ երբ նրա մարդը մեռնի, ազատ է ամուսնանալու՝ ում հետ ուզենայ, բայց միայն Տիրոջով»*** *(Ա. Կորն. 9, 5)։ «Բայց միայն Տիրոջով» ասելով՝ Պօղոս առաքեալն ուսուցանում է, թէ վերամուսնութիւնը հնարաւոր է ամուսնու մահից յետոյ, բայց միայն թէ այն պէտք է լինի հաւատացեալի հետ։ Իհարկէ, եթէ այս սահմանափակումը վաւերական է առաջին ամուսնու մահից յետոյ, ապա սա նաեւ վերաբերում է ամուսնութեանն ընդհանրապէս. հակառակ դէպքում դա պարզապէս ոչ մի իմաստ չի ունենայ։*

Այլափառների հետ ամուսնութեան դէպքում անհնար է հոգեւոր միասնութիւնը։ Ամուսնական կեանքի քրիստոնէական արժէքները բացարձակապէս նոյնը չեն անհաւատի համար։ Հետեւեալ հատուածը «ամուսնութիւն» բառը չի յիշատակում, սակայն Պօղոս առաքեալը Սուրբ Հոգու միջոցով հաւատացեալներին զգուշացնում է այնպիսի միութեան կամ հաղորդակցութեան դէմ, որտեղ կայ պարզ հոգեւոր ու կրօնական անհամատեղելիութիւն։ Առաքեալն ասում է. ***«Անհաւատներին լծակից մի՛ եղէք, որովհետեւ ինչ կապ ունի արդարութիւնը անօրէնութեան հետ. եւ կամ ինչ յարաբերութիւն լոյսի եւ խաւարի միջեւ. եւ կամ ինչ միաբանութիւն Քրիստոսի եւ Բելիարի միջեւ. կամ ինչ առընչութիւն ունի հաւատացեալն անհաւատի հետ. կամ ինչ նմանութիւն ունի Աստծու տաճարը մեհեանների հետ։ Արդարեւ, կենդանի Աստծու տաճար էք դուք, ինչպէս ասաց Աստուած. «Պիտի բնակուեմ նրանց մէջ ու պիտի ընթանամ նրանց միջով եւ նրանց Աստուածը պիտի լինեմ, եւ նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը։ Դրա համար դո՛ւրս եկէք***

1 Ուրիշ թարգմանութիւններում «կանանց» փոխարէն գրուած է՝ «Քրիստոսով քոյր-կիներ»։

նրանց միջից եւ հեռո՛ւ մնացէք,- ասում է Տէրը»,- եւ մի՛ դիպչէք պիղծ բաներին: Եւ ես պիտի ընդունեմ ձեզ: Եւ ես պիտի լինեմ ձեզ համար հայր, եւ դուք պիտի լինէք ինձ համար որդիներ եւ դուստրեր»,- ասում է Ամենակալ Տէրը» *(տե՛ս Բ. Կորն. 6, 14-7, 1; Եփես. 2, 1-3): Խօսքն այստեղ անհաւատ մարդկանց հետ յարաբերութիւն ունենալու մասին չէ, այլ այդ յարաբերութեան վրայ ստանձնած պարտաւորութիւնների:*

Քրիստոնեան, ամուսնանալով այլափառի հետ, պէտք է գիտակցաբար ընդունի այն հաւանականութիւնը, որ իր ամուսինը կամ կինը կարող է երբէք չընդունի Տիրոջ փրկարար շնորհը: Նա կա՛մ ստիպուած կը լինի ապրել հաւատի մշտական փոխզիջման մէջ, կա՛մ էլ պայքարել՝ փոխելու իր ամուսնու կամ կնոջ համոզմունքը: Իր մէջ մշտապէս կը լինի դժգոհութիւն, որը նա ի վիճակի չէ ազդելու իր ամենամօտիկ անձի վրայ: Նման մարդն ինչպէ՞ս կարող է ներկայ պահին վայելել երջանիկ յաւէրժութիւնը, երբ իր կողակիցը կարող է գտնուել յաւիտենական դժոխքի տանջանքների վայրում:

Հաւատքի ու կեանքի հարցերում ամուսինների մտածողութեան երկակիութիւնը կա՛մ թոյլ չի տայ, որ նրանք լրջօրէն վերաբերուեն հաւատի որեւէ համակարգին, կա՛մ էլ կը դառնայ մշտական վէճերի ու մրցակցութեան պատճառ: Խառնամուսնութիւններն ամենայն հաւանականութեամբ կը յանգեցնեն չկամութեան կամ դժկամութիւն՝ խորանալու հաւատի մէջ: Այդպիսի մթնոլորտում մեծացող երեխաները մշտապէս ընտրութեան առաջ են կանգնում, թէ ծնողներից որին հետեւեն: Խառնամուսնութիւնն աւելի շուտ երեխաներին տրամադրում է անզօրութեան, դժգոհութեան՝ խորանալու հաւատի հարցերում: Մեծ հաւանականութիւն կայ, որ խառնամուսնութիւններից ծնուած երեխաները կը հեռանան Աստծուց. ***«Նրանց հետ խնամութիւն չհաստատես. քո աղջկան նրա որդուն չտաս, նրա աղջկան քո որդու համար կին չառնես, որովհետեւ քո որդուն իմ դէմ կ՚ապստամբեցնեն. նա օտար աստուածներ կը պաշտի, եւ Տէրը սաստիկ կը բարկանայ ձեզ***

վրայ ու անմիջապէս կը կոտորի ձեզ» (Երկ. Օր. 7, 3-4; հմմտ. Նէեմ. 13, 23-27)։

Նախնի քրիստոնեաների համար միշտ ակնյայտ է եղել այլափառների կամ անհաւատների հետ համուսնանալը՝ չնայած այն հանգամանքին, որ քրիստոնէական համայնքները շատ փոքրաթիւ էին։ Երուսաղէմում առաքելական ժողովը հեթանոս նորադարձներին պատուիրեց հեռու մնալ պոռնկութիւնից (տե՛ս Ա. Գործ 15, 29), ըստ որի՝ աստուածաբան մեկնիչները ենթադրում են, թէ Հին Ուխտի ամուսնական օրէնքներն ու արգելքները վաւերական են նաեւ քրիստոնեաների համար։ Պօղոս առաքեալը նոյնիսկ թոյլ է տալիս կնոջն ամուսնանալ երկրորդ անգամ, եթէ ամուսինը մահացել է, բայց աւելացնում է՝ «միայն Տիրոջով»։ Յաւօք, մեր ժամանակներում շատերը չեն ընդունում, որ այլափառի հետ ամուսնութիւնը համարւում էր պոռնկութիւն, քանի որ Եկեղեցին չի օրհնում այդպիսի ամուսնութիւնը։ Էլ չեմ ասում այսօր որքա՜ն ժամանակակից է հնչում անօրինական՝ չգրանցուած համակեցութիւնը, այսինքն՝ այսպէս կոչուած «քաղաքացիական ամուսնութեան» երեւոյթը, որը մի տեսակ տուրք է դարձել ժամանակակից նորաձեւութեան եւ լայնօրէն գովազդւում ու հաւանութեան է արժանանում բազմաթիւ հասարակական եւ նոյնիսկ քաղաքական գործիչների կողմից, մանաւանդ՝ Արեւմուտքում։ Մարդիկ, ովքեր ապրում են այդ «ամուսնական» կապով, ըստ եկեղեցական կանոնների, չեն կարող մօտենալ եկեղեցական խորհուրդներին, մինչեւ որ կանգ չառնեն շնացող կենակցութիւնից եւ ապաշխարեն։ Իսկ եթէ պնդում են իրենց այդ երեւակայական «քաղաքացիական ամուսնութեան» ապրելակերպի իրաւունքի մասին, ապրելով մեղքի կեանքով, քահանան պէտք է մերժի սուրբ Հաղորդութիւն ստանալու նրանց ցանկութիւնը։ Յաճախ մարդիկ չեն ընկալում մերժման պատճառը։ Բայց սա քահանայի կամ Եկեղեցու մեղքը չէ։ Եկեղեցին ոչ մի դէպքում չի կարող փոխզիջման գնալ մեղքի հետ։ Եկեղեցին չի կարող ընկերակցել նրան, ով եսասիրական ցանկութիւնները բաւարա-

*բելու համար պատրաստակամօրէն դառնում է Աստծու թշնամի: Այս մասին է սովորեցնում Յակոբոս առաքեալը. «**Շնացողնե՛ր, չգիտէ՞ք, որ աշխարհի հանդէպ՝ թշնամութիւն է Աստծու դէմ, քանի որ ով ուզում է աշխարհը սիրել, Աստծուն իրեն թշնամի կ՚անի**» (Յակ. 4, 4): Քրիստոնէութեան մէջ ամուսնութիւնը հասկացւում է որպէս երկու մարդու՝ մէկ միաւորի գոյաբանական այն կապը, որը հաստատւում է Աստծու շնորհիւ եւ անհրաժեշտ է կատարելութեան ու Աստծու արքայութեանը հասնելու համար: Ամուսինների հաւատի ընդհանրութիւնը, ովքեր Քրիստոսի խորհրդաւոր Մարմնի անդամ են, իսկապէս խիստ կարեւոր պայման է քրիստոնէական եւ եկեղեցական ամուսնութեան համար: Միայն երբ ամուսիններն ունեն միեւնոյն հաւատը, այդժամ ընտանիքը կարող է դառնալ «**առտնին եկեղեցի**» (տե՛ս Հռոմ. 16, 5: Փիլ. 1, 2), որտեղ ամուսինը, կինն ու իրենց երեխաներն աճում են հոգեւոր կատարելութեամբ եւ աստուածային գիտելիքների շնորհով: Հաւատի միաձայնութեան եւ համատեղութեան բացակայութիւնն անշուշտ լուրջ սպառնալիք է ամուսնական միութեան ամբողջականութեանը: Հէնց այս պատճառով է, որ Պօղոս առաքեալն իր պարտքն է համարում զգուշացնել ու կոչ անել բոլոր հաւատաւորներին, որպէսզի ամուսնանան «**միայն Տիրոջով**» (Ա. Կորն 7, 39), այսինքն՝ նրանց հետ, ովքեր կիսում են իրենց քրիստոնէական համոզմունքները:*

*Պօղոս առաքեալը հաւատացեալներին խորհուրդ է տալիս չբաժանուել, եթէ արդէն ամուսնացած են անհաւատի հետ. «**Բայց միւսներին ես եմ պատուիրում, ոչ թէ Տէրը. եթէ մի եղբայր անհաւատ կին ունենայ, եւ նրան հաճելի լինի ապրել նրա հետ, նրան թող չթողնի: Եւ մի կին, եթէ անհաւատ մարդ ունենայ, եւ նա ուզենայ ապրել նրա հետ, իր մարդուն թող չթողնի**» (Ա. Կորն. 7, 12-13): Եւ երկրորդ, պէտք է ապրել խոնարհ եւ արդար կեանքով, որպէսզի, եթէ հնարաւոր է, պարկեշտ ընթացքի շնորհիւ անհաւատին Տիրոջով շահել. «**Անհաւատ մարդն իր կնոջո՛վ է սուրբ. սուրբ է եւ անհաւատ կինն իր մարդո՛վ. ապա թէ ոչ՝ ձեր որդիները պիղծ***

կը լինեն. մինչդեռ հիմա սուրբ են: Իսկ եթէ անհաւատն ուզում է բաժանուել իր կողակցից, թող բաժանուի. քանի որ այսպիսի դէպքում հաւատացեալ եղբօր կամ քրոջ վրայ հարկադրանք չկայ. քանզի Աստուած մեզ խաղաղութեան կոչեց: Ի՞նչ գիտես, դո՛ւ, կի՛ն, թէ քո մարդուն փրկելու ես. կամ ի՞նչ գիտես, դո՛ւ, մա՛րդ, թէ քո կնոջը փրկելու ես» (Ա. Կորն. 7, 14-16): «Այսպէս էլ դուք, կանա՛յք, հնազա՛նդ եղէք ձեր մարդկանց, որպէսզի, եթէ նրանցից ոմանք չհնազանդուեն Խօսքին, իրենց կանանց ընթացքի շնորհիւ եւ առանց խօսքի իսկ շահուած լինեն՝ նկատի ունենալով ձեր պարկեշտ ընթացքը՝ լի երկիւղածութեամբ» (Ա. Պետր. 3, 1-5):

*Շատերն են արդարացնում իրենց ամուսնութեան որոշումը՝ պնդելով, թէ Աստուած ասում է, որ ամուսինն ու կինը մէկ մարմին են (տե՛ս Ծնն. 2, 24) կամ էլ շեշտում են առաքեալի հետեւեալ խօսքերը. «**Անհաւատ մարդն իր կնոջո՛վ է սուրբ. սուրբ է եւ անհաւատ կինն իր մարդո՛վ**» (Ա. Կորն. 7, 14): «**Ի՞նչ գիտես, դո՛ւ, կի՛ն, թէ քո մարդուն փրկելու ես. կամ ի՞նչ գիտես, դո՛ւ, մա՛րդ, թէ քո կնոջը փրկելու ես**» (Ա. Կորն. 7, 16): Սա առաւել տարածուած փաստարկ է, որ դրդում է եւ աջակցում այլափառների կամ անհաւատների հետ խառնամուսնութեանը: Դեռեւս երկրորդ դարում էին այսպէս պատճառաբանում այն մարդիկ, ովքեր հրաժարւում էին հնազանդուելու ու կատարելու Տիրոջ խօսքը: Ահա՛ թէ ինչպէս է առաքեալի խօսքերը փայլուն կերպով վերլուծում վաղքրիստոնէական նշանաւոր աստուածաբան Տերտուղիանոսը. «Տեսնելով, թէ ինչպէս է քրիստոնեայ կինն այսօր ամուսնանում հեթանոսի հետ, եւ յիշելով նախկին նմանատիպ դէպքերը՝ զարմանում եմ նրանց համարձակութեանն ու իրենց խորհրդատուների կեղծաւորութեան վրայ, քանի որ Աստուածաշունչը դա ոչ մի տեղ թոյլ չի տալիս: Ես հարցնում եմ, թէ արդեո՞ք նրանք գայթակղւում են կորնթացիներին ուղղուած նամակի առաջին գլխի այն համարից, որն ասում է. «**Քայց միւսներին ես եմ պատուիրում, ոչ թէ Տէրը. եթէ մի եղբայր անհաւատ կին ունենայ, եւ նրան հաճելի լինի***

*ապրել նրա հետ, նրան թող չթողնի: Եւ մի կին, եթէ անհաւատ մարդ ունենայ, եւ նա ուզենայ ապրել նրա հետ, իր մարդուն թող չթողնի. որովհետեւ անհաւատ մարդն իր կնոջո՛վ է սուրբ. սուրբ է եւ անհաւատ կինն իր մարդո՛վ. ապա թէ ոչ՝ ձեր որդիները պիղծ կը լինեն» (Ա. Կորն. 7, 12-13): Սովորաբար այս օրէնքը որոշ քրիստոնեաներ մեկնաբանում են բառացիօրէն՝ հասկանալով որպէս անհաւատների հետ ամուսնանալու թոյլտուութիւն: Բայց բաւական պարզ է, որ այս տեքստը վերաբերում է միայն այն քրիստոնեաներին, ովքեր դարձի եկան արդէն իսկ ամուսնացած լինելով, որն ապացուցւում է հետեւեալ խօսքերով. «**Եթէ մի եղբայր անհաւատ կին ունենայ**»: Նա չի ասում. «եթէ անհաւատ կին է առնում»: Ուզում է ասել, թէ ով որ արդէն ամուսնացել է անհաւատի հետ եւ ապա դարձի եկել, պէտք է մնայ իր կնոջ հետ: Այլ կերպ ասած, նորադարձները պէտք չէ մտածեն, թէ պարտաւոր են թողնել իրենց կանանց, որոնք իրենց հաւատին խորթ են դարձել: Նա նոյնիսկ աւելացնում է հետեւեալ հիմնաւորումը՝ ասելով. «**Ատուած մեզ խաղաղութեան կոչեց**», եւ՝ «**Ի՞նչ գիտես, դո՛ւ, կի՛ն, թէ քո մարդուն փրկելու ես. կամ ի՞նչ գիտես, դո՛ւ, մա՛րդ, թէ քո կնոջը փրկելու ես**» (Ա. Կորն. 7, 15-16): Վերջապէս այս մեկնաբանութիւնը հաստատւում է նաեւ վերջում. «**Ատուած ինչպէս որ կանչեց, թող նա այնպէս էլ ընթանայ**» (Ա. Կորն. 7, 17): Սակայն, կարծում եմ, կանչում են հեթանոսներին, այլ ոչ քրիստոնեաներին: Եթէ նա խօսէր նրանց մասին, ովքեր քրիստոնեայ են դարձել նախքան իրենց ամուսնութիւնը, ապա թոյլ կը տար, որ վերջիններն ամուսնանան որեւէ մէկի հետ, բայց սրան կը հակասէին նրա յաջորդ խօսքերը. «**Իսկ երբ նրա մարդը մեռնի, ազատ է ամուսնանալու՝ ում հետ ուզենայ, բայց միայն Տիրոջով**» (Ա. Կորն. 7, 39): Այս խօսքերի իմաստը ոչ մի կասկած չի թողնում, որ մենք չչարաշահենք «**ազատ է ամուսնանալու՝ ում հետ ուզենայ**» խօսքերը (Ա. Կորն. 7, 14. 16), այլ նաեւ աւելացնում է՝ «միայն քրիստոնեայի հետ»: Այսպիսով, սուրբ առաքեալը, ով ցանկանում է այրիներին ու չամուսնացածներին*

ամուրիութիւն, եւ իրեն դնում է մեզ որպէս օրինակ, թոյլ է տալիս նորից ամուսնանալ միայն քրիստոնեայի հետ։ Սա է միակ պայմանը, որ նա առաջ է քաշում։ Ասում է՝ «միայն քրիստոնեայի հետ», եւ «միայն» բառն ունի օրէնքի մեծ ուժ եւ իշխանութիւն՝ դարձնելով այն բացարձակ անհրաժեշտութիւն։ Այս բառը հրամայում է, համոզում եւ յորդորում, պարտաւորեցնում եւ սպառնում։ Առաքեալի կարծիքն այնքան պարզ ու պերճախօս է իր կարճութեամբ, ինչպէս աստուածային ամէն մի խօսք, որ հնազանդութիւն է պահանջում»։ Արդեօք ակնյայտ չէ՞, թէ, ըստ առաքեալի նախատեսած արգելուած ամուսնութիւնների պատճառով որքա՜ն վտանգներ են սպառնում հաւատացեալին։ Առաջին հերթին, քրիստոնեայի մարմինը պղծելու վտանգն է՝ դիպչելով անհաւատի մարմնին։ «Բայց,- մէկն ասում է,- քրիստոնէութեան մէջ մտած հեթանոսի եւ ամուրի քրիստոնեայի միջեւ կարո՞ղ է արդեօք լինել այնպիսի տարբերութիւն, որպէսզի նրանք խուսափեն պղծումից, որպէսզի մէկին արգելուած լինի ամուսնանալ անհաւատի հետ, իսկ ուրիշին թոյլատրուի ապրել իր ամուսնացած կնոջ հետ։ Սուրբ Հոգու օգնութեամբ պատասխանում եմ։ Տէրը նախընտրում է, որ ամուսնութիւնը չիրականացուի, քան որ թողնել ամուսնալուծութիւնը։ Նա արգելում է ամուսնալուծութիւնը՝ բացառութեամբ, երբ կինը շնանում է (Մատթ. 19, 9). եւ ուղղակիօրէն խրախուսում ժուժկալութիւնը։ Այնպէս որ, առաջինը պարտաւոր է մնալ իր հեթանոս կնոջ հետ, իսկ երկրորդն իրաւունք չունի ամուսնանալ հեթանոսի հետ։ Ըստ Սուրբ Գրքի՝ այն հեթանոսները, ովքեր հաւատքի եկան ամուսնութիւնից յետոյ, ոչ թէ պղծւում են նախկինում ամուսնացած կանանց հետ միութեամբ, այլ կարող են նաեւ սրբացնել նրանց, հետեւաբար, պարզ է, որ այն տղամարդիկ, որոնք հաւատացին նախքան ամուսնանալը, չեն կարող սրբացնել այն հեթանոսներին, որոնց հետ ամուսնանում են, քանի որ Աստծու շնորհը սրբագործում է միայն նրանց, ում գտնում է ամուսնացած, իսկ այն, ինչ մի շնորհը չի սրբագործում, անմաքուր է, եւ անմաքրութիւնը չունի բաժին սրբութեան մէջ. այն ինքն իրենով

է պղծում եւ կործանում։ Այնպէս որ այն քրիստոնեաները, ովքեր ամուսնանում են հեթանոսների հետ, մեղաւոր են շնութեան մէջ ու պէտք է առանձնացուեն եւ չխառնակուեն հաւատացեալների հետ՝ ըստ առաքեալի այն խօսքի, որը նոյնիսկ արգելում է այդպիսիների հետ հաց ուտել (տե՛ս Ա. Կորն. 5, 11)։ Արդեօք համարձակութիւն ունե՞նք կանգնելու Տիրոջ դատաստանի առջեւ ամուսնական այդպիսի համաձայնագրով։ Ինչպէ՞ս կարելի է Նրա արգելածն անուանել օրինական ամուսնութիւն։ Մի՞թէ պոռնկութիւն չէ արգելուած ամուսնութիւնը։ Մի՞թէ Աստծու տաճարը չի պղծւում նրա մէջ գտնուող հեթանոսի ներկայութեամբ, եւ Քրիստոսի մարմինը՝ դիպչելով պոռնիկի մարմնին։ Մենք չենք մեր անձի տէրը, այլ գնուած ենք Տիրոջ Արեամբ։ Պղծելով մեր մարմինը՝ մենք պղծում ենք Նրան։ Աստուած յստակ արգելեց ձեզ ամուսնանալ հեթանոսների հետ, որպէսզի չպղծուի Քրիստոսի մարմինը, եւ յատկապէս առաւել ծանր է կամաւոր մեղքը։ Որքա՜ն աւելի հեշտ է խուսափել նրանից, այդքան աւելի յանցանք է զիջել նրան։ Եկէք այժմ տեսնենք, թէ առաքեալը յետագայ ի՜նչ վտանգներ կանխատեսեց ոչ միայն մարմնի, այլ նաեւ հոգու համար։ Անհաւատների հետ մեր ամէնօրեայ շփումն արդեօք աստիճանաբար չի՞ թուլացնում մեր հաւատը։ Եթէ վատ մարդկանց հետ շփումը վնասակար է եւ ապականում է լաւ բարքերը (Ա. Կորն. 15, 33), ապա ինչի՞ն կը յանգեցնի նրանց հետ կենակցութիւնը։ Իւրաքանչիւր քրիստոնեայ կին պէտք է հաճելի լինի Աստծուն։ Ինչպէ՞ս կարող է նա երկու տիրոջ ծառայել՝ Աստծուն եւ իր ամուսնուն, այն էլ՝ հեթանոսին։ Վերջապէս, հեթանոսին հաճոյ լինելով՝ նա կամայ թէ ակամայ անխուսափելիօրէն հեթանոս է դառնում արտաքին տեսքով, զարդարուելու [ու շպարուելու] ցանկութեամբ եւ ինքն իրեն հոգ տանելով։ Ի վերջոյ, [հեթանոսն] անկողնում անամօթ յանդգնութեամբ [բաւարարում է սեփական բնազդները], մինչ դեռ ճշմարիտ քրիստոնեան կատարում է ամուսնական իր պարտականութիւնները՝ յարգելով իր իսկ [կողակցի բնական] անհրաժեշ-

տութիւնը, համեստօրէն եւ առանց ծայրայեղութեան, կարծես թէ Աստծու առջեւ։

Նման ամուսինը որքա՜ն քիչ համատեղելի է քրիստոնեայի պարտականութիւններին։ Ի վիճակի՞ է արդեօք կինը կատարելու իր քրիստոնէական պարտականութիւնները՝ իր ձեռքի տակ ունենալով դեւի ծառային, որին վերջինս յանձնարարել է խոչընդոտել այդ պարտականութիւնները կատարելուց։ Պէտք է գնալ հսկումի. այդ պահին ամուսինը ժամադրութիւն կը նշանակի բաղնիքում։ Երբ ծոմ պահելու օրը գայ, հէնց այդ օրն ամուսինը ընկերներին կը հրաւիրի խնջոյքի։ Ուխտագնացութեան օ՞ր է. հէնց նոյն օրը աւելի քան երբեւէ շատ աշխատանքներ կը լինեն տանը։ Արդեօք նա թոյլ կը տա՞յ կնոջը՝ շրջանցել գիւղերն ու աղքատ խրճիթներն՝ այցելելու եղբայրներին։ Ո՞ր ամուսինը կը ցանկանայ գիշերը կնոջը թողնել, որ գնայ [հոգեւոր] եղբայրների հետ աղօթելու գիշերային հաւաքների ժամանակ։ Արդեօք նա կարո՞ղ է դիմանալ, եթէ կինը գիշերն անցկացնի Զատկի տօնակատարութիւնը։ Արդեո՞ք նա հանգիստ հոգով կը թողնի նրան մասնակցելու Տիրոջ ընթրիքին (Ա. Կորն. 11, 20), որը, ըստ հեթանոսների, վատ համբաւ է վայելում։ Կարո՞ղ է արդեօք համբերել, երբ կինը գաղտնի բանտ գնայ եւ համբուրի նահատակի շղթաները։ Համբուրելով ողջո՞յն տայ եղբայրներին, հաւատացեալների ոտքերը լուանալու համար ջո՞ւր մատուցի, նրանց հետ Ընթրիքի, հացին ու գինուն հաղորդակի՞ց լինի, ժամանակը ծախսի խոկումի եւ աղօթքի համա՞ր։ Եթէ [իր տուն] գայ մի օտարական, ապա ինչպիսի՜ ընդունելութիւն կը սպասուի նրան ուրիշի տանը։ Իսկ երբ անհրաժեշտ լինի հաց բաշխել աղքատներին, շտեմարանի դռները կողպուած կը լինեն։ «Բայց,- մէկն ասում է,- կան նաեւ այնպիսի հեթանոսներ, ովքեր ամէն կերպ աջակցում են քրիստոնեաներին»։ Աւելի վատ։ Հեթանոսները պէտք չէ իմանան մեր բարի գործերի մասին, եւ մենք պէտք չէ բարի գործեր կատարենք իրենց հովանաւորութեան ներքոյ։ Հովանաւորը գիտէ,

թէ ինչ ենք մենք անում. եթէ մենք թաքնւում ենք նրանից, երբ նա մեզ չի հովանաւորում, ապա վախենում ենք նրանից: Ու քանի որ Աստուածաշունչը սահմանում է բարի գործեր կատարել՝ դրանց մասին ուրիշներին չտեղեկանացնելով եւ առանց վախի, ուրեմն, դու կը խախտես կա՛մ այն, կա՛մ ուրիշ արգելք: Կա՛մ տեղեակ կը պահես ամուսնուդ, եթէ նա տեղեակ է քո գործերի մասին, կա՛մ էլ պէտք է վախենաս նրանից ու վախեցած կերպով բարեգործութիւն անես: ***«Մի՛ տուէք սրբութիւնը շներին. եւ ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցէք, որպէսզի դրանք ոտքի կոխան չանեն եւ դառնալով ձեզ չպատառոտեն»*** *(Մատթ.7, 6): Իսկ «ձեր մարգարիտները» քրիստոնեայի կրկնուող բարի արարքներն են իւրաքաչիւր օր: Որքա՜ն շատ դուք թաքցնէք դրանք, այդքան հեթանոսների մօտ աւելի ուժեղ հետաքրքրասիրութիւն կը գրգռէք: Կարո՞ղ ես արդեօք գաղտնի խաչակնքել մահճակալիդ մէջ կամ էլ լքել որեւէ անմաքրութիւն: Եթէ դու գիշերն աղօթես, արդեօք քեզ կախարդ նա չի՞ համարի: Մի՞թէ ամուսինդ չի նկատի, որ դու իւրաքանչիւր կերակրից առաջ գաղտնօրէն ինչ-որ բան ես ուտում: Եւ երբ իմանայ, թէ դա պարզապէս հաց է, ապա ինչ կը մտածի քո մասին իր տգիտութեամբ: Արդեօք նա չի՞ դժգոհի նման գաղտնիքների համար եւ նոյնիսկ չի՞ կասկածի, թէ փորձում ես թունաւորել իրեն: Նրանք աջակցո՞ւմ են եւ պաշտպանո՞ւմ: Այո՛, պաշտպանում են, որպէսզի յետոյ ոտնատակ անեն, ծաղրեն իրենց կանանց՝նրանց գաղտնիքները պահելով միայն այն նպատակով, որ օգտագործեն միայն նրանց դէմ, երբ վերջիններս դժբախտութիւն ունենան հաճելի չլինելու իրենց: Այո՛, պաշտպանում են, որպէսզի ստանան նրանց օժիտը, ինչը որ նրանց մոռանալ է տալիս քրիստոնեայ անունը. եւ լռել, մինչեւ որ ցանկանան տիրել հարստութեանը՝ իրենց կանանց մատնելով դատավարութեան: Այս պատճառով է, որ շատ կանայք չէին ուզում հաւատալ, մինչեւ որ չզգացին այս ամէնն իրենց սեփական տխուր փորձով, մինչեւ որ խոշտանգումների պատճառով ուրացան հաւատը: Ուրեմն, Աստծու

աղախինը պէտք է ապրի օտար դեւերի՝ պահպանիչ-ոգիների[1] հետ՝ նշելով հեթանոսական տօներն ու թագաւորների ծննդեան օրերը, կուլ տալով բուրաւէտ ծուխը տարուայ սկզբին եւ ամէն ամիս: Նա ստիպուած տնից դուրս է գալիս այն դարպասներով, որոնք զարդարուած են դափնիներով ու լապտերներով, կարծես թէ դա հասարակաց տուն է: Ամուսնու հետ մասնակցելով [հեթանոսական] տօներին եւ գինարբուքներին, նա, որ սովոր է ծառայել սուրբերին, երբեմն ստիպուած պիտի լինի ծառայել ամբարիշտներին: Որպէս իր ապագայ դատապարտութեան նշան՝ արդեօք չի՞ ընդունի այն, որ հակուած է նրանց, ում ինքը նախկինում դատապարտում էր: Ո՞ւմ ձեռքերից նա պէտք է ընդունի կերակուրը: Ո՞ւմ գաւաթից պէտք է ըմպի: Ինչ երգեր պէտք է լսեն միմեանցից: Դրանք կը լինեն թատերական, գինետնային, պանդոկային մեղեդիներ: Արդեօք նրանց մէջ կը նշուեն յիշատակումներ Աստծու մասին, խնդրանքներ Քրիստոսին ուղղուած, մտորումներ՝ ոգեշնչուած Սուրբ Գրքի ընթերցմամբ, հոգեւոր մխիթարութիւն եւ Աստծու օրհնութիւն: Նրանց մէջ ամէն ինչ խորթ է, թշնամական, ոչ պիտանի, շեղուած՝ փրկութեան ճանապարհից:

Այս ամէնը կարող են նաեւ տեղի ունենալ որեւէ ամուսնացած քրիստոնեայ կնոջ հետ, բայց նրան արդարացնում է Աստծու պատուիրանը, որ պէտք չէ բաժանուել իր ամուսնուց՝ յուսալով նրան հաւատի բերել: Եթէ Աստուած հաշտւում է նման միութեան հետ, ուրեմն, անշուշտ, կ՚օգնի հաւատարիմ կնոջն ու կը փրկի նրան իր երկիմաստ անյարմարութեան վիճակից: Թերեւս նա հեթանոս ամուսնուն իր հանդէպ այնքան մեծ յարգանք կը ներշնչի, որ նրա մէջ չի գտնի ո՛չ բռնակալ, ո՛չ էլ դաւաճան: Նա կը սկսի զարմանալ իր կնոջ բարի գործերով, կը տեսնի, թէ շատ առումներով նա իրենից

1 Տան օջախի պահպանիչ-ոգիներին, որոնց երկրպագում էին օրացոյցի իւրաքանչիւր ամսուայ օրերին եւ ընտանեկան տօնակատարութիւններին, երիտասարդ կանայք զոհ էին մատուցում անմիջապէս հարսանիքից յետոյ, երբ ամուսնու տուն էին մտնում:

առաւել արժանաւոր է. եւ գուցէ իր մէջ աճող յարգանքը կարող է դարձի բերել նրան։ Բայց այլ բան է տեղի ունենում այն կնոջ հետ, ով գիտակցաբար մտնում է արգելուած ամուսնութեան մէջ։ Այն, ինչ Աստծուն հաճելի չէ, վիրավորում է Նրան։ Իսկ ինչը որ Նրան վիրաւորում է, դժբախտութիւն է բերում։ Ընդ որում, հեթանոսներից ոչ մէկը չի լինում այդքան բարի քրիստոնեաների նկատմամբ, որքան նրանցից առաւել ամբարիշտներն են։ Դրա համար գտնւում են այնպիսիները, որոնք պատրաստ են ամուսնանալ նրանց հետ։ Սա է այն բանի լաւագոյն փաստարկը, թէ հեթանոսի հետ միութիւնը չի կարող երջանիկ լինել։ Դեւն այն հաստատում է, իսկ Աստուած արգելում... Բացի դրանից, ինքներս մեզ հարցնենք, թէ արդեօք օրէնքին նա չի՞ հակասում, եթէ մենք Աստծու պատուիրանների ճշմարիտ յետեւողներն ենք։ Ի վերջոյ, չէ՞ որ հեթանոսների խիստ տէրերն էլ թոյլ չեն տալիս, որ իրենց ծառաներն ամուսնանան ոչ իւրայինների հետ, որպէսզի նրանք չգայթակղուեն, չքեն իրենց պարտականութիւնները, իրենց տէրերի գաղտնիքները բերաններից դուրս չթռցնեն օտարներին։ Արդեօք նրանց չի՞ պատժի իրենց տէրը, ասելով, թէ նրանք, չնայած արգելքին, ծանօթութիւններ են հաստատում ուրիշ ստրուկների հետ։ Մի՞թէ երկրային արգելքները երկնայիններից աւելի խիստ են։ Եթէ հեթանոս կինը, ամուսնանալով հեթանոսի հետ, կորցնում է իր ազատութիւնը, մի՞թէ քրիստոնեայ կինը, ամուսնանալով դեւի ծառայի հետ, կը մնայ ազատ։ Իհարկէ, նա կը ժխտի, թէ Տէրն առաքեալի միջոցով արգելել է նրան, բայց միակ պատճառն իր հաւատի թուլութիւնն է եւ աշխարհիկ հաճոյքների համար պատրաստակամութիւնը... Ինչպէ՞ս նկարագրել ամուսնութեան պարգեւած երջանկութիւնը՝ Եկեղեցու խորհուրդներով եւ իր աղօթքներով սրբագործուող, երկնքում հրեշտակների աւետումով եւ Հայր Աստծու օրհնութեամբ։ Զէ՞ որ երկրի վրայ երեխաները չեն ամուսնանում առանց հայրերի համաձայնութեան։ Որքա՜ն հաճելի պէտք է լինի միեւնոյն յոյսով, ծառայութեամբ եւ հաւատով նուիրագործուած երկու սրտերի

միացումը։ Իրօք, նրանք երկուսը մէկ մարմին են։ Ուր որ մէկ է մարմինը, այնտեղ մէկ է հոգին։ Նրանք աղօթում են միասին, ծնկի գալիս միասին, ծոմ պահում միասին, հաստատում եւ աջակցում են միմեանց։ Նրանք հաւասար են Աստծու Եկեղեցում եւ Աստծու ընթրիքին, ինչպէս նաեւ իրար հետ կիսում են հալածանքներն ու հանգիստը, ոչինչ իրարից չեն թաքցնում, միմեանցով չեն ծանրանում։ Նրանցից իւրաքանչիւրին հիւանդութեան ժամանակ կարելի է ազատ այցելել, իսկ եթէ կարիքաւոր է, նաեւ աջակցել գումարով։ Իրենց համար ողորմութիւն տալու նեղուածութիւն չկայ, սուրբ խորհուրդների արարողութիւններին ներկայ գտնուելու վտանգ չկայ, ամէնօրեայ պարտականութիւնները կատարելու խոչընդոտներ չկան, գաղտնի մկրտուելու ու շշուկով աղօթքներ մրմնջալու կարիք չկայ։ Նրանք միասին են երգում սաղմոսներ եւ օրհներգութիւններ՝ փորձելով իրար գերազանցել Աստծուն գովաբանելով։ Տէրն ուրախանում է՝ տեսնելով իրենց միաբանութիւնը, խաղաղութիւն է ուղարկում իրենց օջախին ու բնակւում նրանց մէջ։ Իսկ որտեղ Նա է, այնտեղ չի մտնի չարութեան ոգին։ Ահա՛ թէ ինչ է սովորեցնում մեզ առաքեալը։ Խորապէս մտածի՛ր այս ամէնի մասին, որպէսզի չհետեւես որոշ կանանց օրինակին...»[1]։

1 Тертуллиан, К жене. Книга вторая.
Տե՛ս http://www.tertullian.org/russian/ad_uxorem_rus.htm (առ 30/03/2017)։

ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅՈՐԴՈՐԸ ԿԱՆԱՆՑ[1]

Աստուած պատուիրում է ձեզ խուսափել աղմուկից եւ աւնայնութիւնից, որպէսզի աղօթէք տան լռութեան մէջ, քանի որ առանձնացած ու չար մարդկանց հասարակութիւնից հեռու մնալը մեծ օգուտ է բերում: Նաւը, որի վրայ փոթորիկը չի ազդում, լողում է ապահով, այդպէս էլ հոգին, երբ հանրային գործերով չի զբաղուած, գտնւում է նաւահանգստում: Այնպէս որ, կանայք պէտք է լինել աւելի իմաստուն, քան ամուսինները, քանի որ նրանք մեծ մասամբ զբաղուած են տնային ներքին գործերով: Ահա թէ ինչո՛ւ Յակոբը խորամանկ չէր, քանի որ ապրում էր տանը եւ ազատ էր արտաքին տագնապներից: Սուրբ Գիրքն իզուր չէ, որ յայտնում է, թէ նա տնակեաց էր (Ծննդ. 25, 27): Բայց ասում ես, թէ տան մէջ էլ շատ անհանգստութիւններ կան: Դա այն պատճառով է, որ ինքդ ես դա ուզում եւ ինքդ քեզ շրջապատում ես բազմաթիւ մտահոգութիւններով: Ամուսինը, որոշ ալիքների պէս, շրջապատուած է հոգսերով, իսկ իր կինը, տանը նստած, ինչ-որ իմաստութեան է ապաւինում: Եւ ինչպէս անապատներում ապրողները ոչ մէկին չունեն, ով կարող է իրենց անհանգստացնել, այդպէս էլ կինը, տանը գտնուելով, կարող է շարունակաբար վայելել լռութիւնը: Եթէ ձեզ անհրաժեշտ լինի դուրս գալ տնից, ապա նոյնիսկ այդ ժամանակ ձեզ համար չկայ անհանգստութեան պատճառ: Սակայն ժամանակի մեծ մասը նա ծախսում է տանը: Այնպէս որ, նա կարող է մնալ լռութեան մէջ ու դիմաւորելով յուսահատ ամուսնուն՝ կարող է մխիթարել ու հանգստացնել նրան, ցրել նրա անհարկի եւ ծանր

1 Свт. Иоанн Златоуст, Беседы на Евангелие от Иоанна, Беседа 61. Տե՛ս http://www.agape-biblia.org/prpakety/zlatoust/Ioan061a.htm (առ 11/04/2017):

մտքերը, ապա նրան տնից ճանապարհել, հիմա արդէն առանց այն անհանգստութիւնների, որոնք նա իր հետ բերեց, այլ բարի կամքի միտումով, որը նա ձեռք բերեց տանը: Ճշմարիտ է, թէ բարեպաշտ ու խելամիտ կինը, ամենայն հաւանականութեամբ, կարող է ազդել իր ամուսնու վրայ ու տրամադրել նրա միտքը ըստ իր կամքի: Քանի որ նա չի լսի ո՛չ ընկերներին, ո՛չ ուսուցիչներին, ո՛չ խրատողներին այնպէս, ինչպէս իր կնոջը, երբ նա յորդորում է իրեն ու խորհուրդներ տալիս: Այդ յորդորն իրեն պատճառում է նաեւ որոշակի հաճոյք. այնպէս որ նա շատ է սիրում իր խորհրդատուհին: Եւ ես էլ կարող եմ մատնանշել բազմաթիւ ծանր ու անսանձելի ամուսինների, ովքեր մեղմացել են այդ ձեւով: Որովհետեւ կինն իր ամուսնու հետ մասնակից է ե՛ւ սեղանին, ե՛ւ անկողնում, ե՛ւ երեխաների ծննդեանը, ե՛ւ բացայայտ ու քօղարկուած գործերին, ելումուտին, եւ շատ ու շատ այլ բաներում: Կինն ամէն ինչում հաւատարիմ ու կապուած է նրա հետ այնպէս, ինչպէս մարմինն է միացուած գլխին: Եւ եթէ նա լինի ողջամիտ եւ աշխատասէր, ապա կը գերազանցի ու կը յաղթի բոլոր միւսներին իր ամուսնու հոգածութեան մէջ: Հետեւաբար, կոչ եմ անում ձեզ՝ կանանցդ. սա համարէք պարտականութիւն ու պատշաճ խորհուրդներ տուէք ձեր ամուսիններին: Կինն ունի ինչպէս առաքինութեան, այնպէս էլ արատի մեծ զօրութիւն: Իսկ ինչպէ՞ս մենք կարող ենք սովորեցնել նրան գործերով: Դու նրան կը սովորեցնես այն ժամանակ, երբ նա տեսնի, թէ դու չարամիտ չես, շքեղութեան չես ձգտում, զարդարանքներ չես սիրում, աւելորդ դրամական եկամուտ չես պահանջում, այլ բաւարարւում ես նրանով, ինչ կայ: Այս դէպքում նա, իհարկէ, կը լսի քո խորհուրդները: Իսկ եթէ դու իմաստակես խօսքով, բայց իրականում սկսես գործել հակառակը, ապա նա քեզ կը մեղադրի մեծ դատարկախօսութեան մէջ: Իսկ երբ խօսքերիդ հետ միասին նաեւ գործերովդ խորհուրդ տաս նրան, ապա նա կը գովաբանի քեզ եւ աւելի շուտ կը լսի: Դա կը լինի, օրինակ, երբ դու սկսես փնտռել ոչ թէ ոսկի, մարգարիտ կամ թանկարժէք զգեստներ, այլ սրանց փոխարէն փնտռես խոնարհութիւն եւ ինքդ

այդպէս վարուելով՝ դրանով նոյնը կը պահանջես նաեւ նրանից։ Եթէ, այնուամենայնիւ, պէտք է ինչ-որ ձեւով հաճոյանալ ամուսնուն, ապա անհրաժեշտ է հոգին զարդարել, այլ ոչ թէ մարմինը, եւ ոչնչացնել սրան։ Ոչ այնքան ոսկին, որով դու զարդարւում ես, քեզ սիրալիր ու հաճելի կը դարձնի նրա համար, որքան բարոյականութիւնն ու ջերմութիւնը նրա նկատմամբ, եւ քո ամուսնու համար մահանալու պատրաստակամութիւնը։ Սա է հիմնականում գերում ամուսիններին։ Արտաքին զարդարանքը հաճելի չէ ամուսնուն, քանի որ դա իր սեփականութիւնը յանգեցնում է նեղուածութեան ու պահանջում է մեծ ծախսեր եւ մտահոգութիւններ։ Եւ այն, ինչ որ վերը նշուեց, ամուսնուն կապում է իր կնոջը, որովհետեւ ջերմութիւնը, ընկերութիւնն ու սէրը չեն բերում ոչ մտահոգութիւններ ու ոչ էլ ծախսեր. բայց ամէն ինչ հակառակն է առաքում։ Մինչ հանդերձները սովորութիւնից դառնում են անտարբեր, հոգու զարդարանքը ծաղկում է ամէն օր ու բորբոքում սիրոյ ուժեղագոյն բոցը։ Այնպէս որ, եթէ ուզում ես հաճոյանալ ամուսնուդ, հոգիդ զարդարի՛ր բարոյականութեամբ, բարեպաշտութեամբ ու տան հոգածութեամբ։ Այսպիսի գեղեցկութիւնն աւելի հմայիչ է եւ երբէք չի դադարում։ Այսպիսի գեղեցկութիւնը ո՛չ տարիքն է խափանում, ո՛չ էլ հիւանդութիւնը ոչնչացնում։ Եւ մարմնական գեղեցկութիւնն ու ժամանակի տեւողութիւնն է խաթարում, եւ հիւանդութիւնն է ոչնչացնում, եւ շատ այլ բաներ է կործանում. բայց որ հոգին զարդարում է, սա ամէն բանից բարձր է։ Բացի դրանից՝ այդ գեղեցկութիւնը նախանձ է արթնացնում ու խանդ է բորբոքում. իսկ սա մաքուր է այդ հիւանդութիւններից եւ զերծ է ցանկացած ինքնահաւանութիւնից։ Այսպիսով, ամէն ինչ ե՛ւ տան մէջ աւելի լաւ կը լինի, ե՛ւ եկամուտն առատ կը լինի, երբ ոսկին պառկած չի լինի քո մարմնի շուրջ ու չի կապի քո ձեռքերը, այլ կարող է օգտագործուել անհրաժեշտ կարիքների համար, ինչպիսիք են երեխաների խնամքի եւ այլ իրական կարիքները։ Բայց եթէ դու այդպէս չվարուես, եթէ մարմինը լինի զարդարուած ոսկով, իսկ անհրաժեշտ կարիքները

*բոլոր կողմերից լինեն աչքերի առջեւ՝ ծանրաբեռնելով սիրտը, ապա ինչ պիտի անես: Ինչ օգուտ սրանից: Սրտի տխրութիւնը թոյլ չի տալիս տեսնել այն, ինչով սովորաբար գերւում են աչքերը: Դուք էլ գիտէք, թէ երբ որեւէ մէկը կին է տեսնում, նոյնիսկ բոլորից աւելի լաւ զարդարուած, նա չի կարող նրա մէջ գտնել հաճոյք, եթէ նրա հոգին հիւանդ է: Որովհետեւ ով ցանկանում է գտնել հաճոյք, առաջին հերթին նա պէտք է ուրախ լինի եւ ուրախութեան հակուած լինի: Մինչդեռ, եթէ ոսկին ծախսուած է իր կնոջ մարմնի զարդարման համար, իսկ տան մէջ աղքատութիւն է, ապա ամուսնու համար չկայ ոչ մի հաճոյք: Հետեւաբար, եթէ ուզում էք հաճելի լինել ձեր ամուսիններին, նրանց բերէ՛ք հոգու հաճելի տրամադրութեան: Ես դա ասում եմ՝ մաղթելով, որ դուք զարդարուէք ճշմարտութեան գեղեցկութեամբ, որը պատուիրում է Պօղոս առաքեալը. «**Նոյնպէս եւ կանայք, համեստ զարդարանքով, ակնածութեամբ եւ պարկեշտութեամբ թող զարդարուեն. ոչ թէ մարգարտով ընդելուզուած ոսկեայ հիւսքերով կամ պճնազարդ զգեստներով, այլ՝ բարի գործերով, ինչպէս վայել է աստուածապաշտութիւնը յանձն առած կանանց» (Ա. Տիմ. 2, 9-10)*: *Եւ ժողովրդից կը լինի մեծ գովասանք, եւ Աստծուց մի մեծ պարգեւ: Ուստի, նախանձախնդիր լինենք ներքին գեղեցկութեանը, որպէսզի այստեղ էլ ապրենք անվտանգ եւ հասնենք ապագայ բարիքներին, որոնց մենք բոլորս արժանանանք մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհով եւ մարդասիրութեամբ, որին փա՜ռք յաւիտեանս. ամէն:*

ԲԱՐԵՊԱՇՏ ԿՆՈՋ ՆԿԱՐԱԳԻՐՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉՈՒՄ

«Եւ Աստուած մարդուն ստեղծեց Իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց» (Ծննդ. 1, 27)։

«Տէր Աստուած ասաց. «Լաւ չէ, որ մարդը միայնակ լինի։ Նրա նմանութեամբ մի օգնական ստեղծենք նրա համար»» (Ծննդ. 2, 18)։

«Այդ իսկ պատճառով տղամարդը, թողնելով իր հօրն ու մօրը, պէտք է միանայ իր կնոջը, եւ երկուսը պէտք է լինեն մի մարմին» (Ծննդ. 2, 24)։

«Եւ Ադամն իր կնոջ անունը դրեց Կեանք, որովհետեւ նա է բոլոր մարդկանց նախամայրը» (Ծննդ. 3, 20)։

«Մարգարէների որդիների կանանցից մէկն աղաղակում էր Եղիսէէին եւ ասում. «Իմ ամուսինը՝ քո ծառան, մեռաւ։ Դու գիտես, որ նա Տիրոջ երկիւղած ծառան էր, եւ ահա պարտատէրը եկել է, որ իմ երկու որդիներին որպէս ստրուկ տանի իր մօտ»։ Եղիսէէն նրան ասաց. «Ինչ անեմ քեզ։ Ասա՛ ինձ, թէ ինչ կայ քո տանը»։ Նա ասաց. «Քո աղախնի տանը ոչինչ չկայ, բացի այն իւղից, որով օծւում եմ»։ Եղիսէէն ասաց. «Գնա՛ եւ քո բոլոր դրացիներից դատարկ ամաններ խնդրի՛ր ոչ քիչ քանակով։ Ապա մտի՛ր տունդ, դռները փակի՛ր քո եւ քո որդիների վրայ, իսկ քո ունեցած իւղը լցրո՛ւ բոլոր ամանների մէջ ու լցուածը մի կո՛ղմ դիր» (Դ. Թագ. 4, 1-4)։

«Իմ ժողովրդի բոլոր ցեղերը գիտեն, որ դու զօրաւոր կին ես» (Հռութ 3, 11)։

«Իմ մէջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստուա՛ծ, եւ արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում։ Մի՛ գցիր ինձ, Տէ՛ր, քո երեսից եւ սուրբ Հոգիդ մի՛ հանիր ինձնից» (Սաղմ. 50, 10-11)։

«Ով ապրում է Բարձրեալի աջակցութեամբ, երկնքում կը հանգչի Աստծու հովանու տակ։ Տիրոջը կ՚ասի. «Դու ես ինձ ընդունողը, ապաւէն իմ Աստուած, որի վրայ եմ դրել իմ յոյսը»։ Նա ինձ կը փրկի որսորդի թակարդից ու խռովեցուցիչ խօսքերից։ Իր ծոցում կը պահի, կը պաշտպանի քեզ, եւ դու ապահովութիւն կ՚ունենաս նրա թեւերի հովանու տակ։ Նրա ճշմարտութիւնը որպէս զէնք քո շուրջը կը լինի։Դու չես վախենայ գիշերուայ զարհուրանքից եւ ոչ էլ ցերեկուայ սլացող նետից, խաւարում շրջող բանից, եւ կէսօրին դեւի գայթակղութիւնից» (Սաղմ. 90, 1-6)։

«Ամբողջ սրտով յոյսդ դի՛ր Աստծու վրայ եւ մի՛ հպարտացիր քո իմաստութեամբ» (Առակ. 3, 5)։

«Ինչպէս ոսկէ գինդը խոզի դնչին, նոյնպէս էլ գեղեցկութիւնն է չարաբարոյ կնոջ համար» (Առակ. 11, 22)։

«Իմաստուն կանայք շինում են իրենց տները, իսկ անզգամ կանայք կործանում են դրանք իրենց ձեռքով» (Առակ. 14, 1)։

«Լաւ է բնակուել անապատում, քան թէ անզգամ, լեզուանի եւ բարկացկոտ կնոջ հետ» (Առակ. 21, 19)։

«Համբերատարութեամբ թագաւորը յաջողութիւն է գտնում, մեղմ լեզուն փշրում է ոսկորները» (Առակ. 25, 15)։

«Ամուսնու սիրտը վստահ է նրա հանդէպ, եւ իր ունեցածը երբեք քամուն չի տրուի: Ողջ կեանքում նման կինը գործակից է լինում ամուսնուն բարիքների եւ ոչ թէ չարիքների մէջ» (Առակ. 31, 11-12):

«Ուժ ու վայելչութիւն զգեցած՝ նա պիտի ուրախ լինի իր վերջին օրերին: Նա չափով եւ իմաստութեամբ է բացում իր բերանը եւ սահման է դնում իր լեզուին: Պարկեշտ են նրա տան ճանապարհները, եւ նա դատարկապորտութեամբ հաց չի կերել: Իր ողորմածութիւնները ոտքի են կանգնեցնում իր որդիներին եւ մեծացնում: Նրա ամուսինը գովում է նրան՝ ասելով. «Շատ դուստրեր հարստութիւն ձեռք բերեցին, շատերն էլ սխրագործութիւններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց եւ անցար բոլորից: Քո մէջ կանացի կեղծ բարեհաճութիւն չկայ եւ ոչ էլ սին գեղեցկութիւն»: Արդարեւ, իմաստուն եւ բարեպաշտ կինը պիտի օրհնուի: Նա պատիւ է տալիս Աստծուց երկիւղ կրողներին, դուք էլ նրա շուրթերի պտղից պատի՛ւ տուէք նրան, եւ թող նրա ամուսինը գովաբանուի դրսում. քանզի եթէ մարդուս ճամփան բաց է նրա հայեացքի առջեւ, ապա նա յաջողութիւն պիտի գտնի յաւիտեանս յաւիտենից» (Առակ. 31, 25-31):

«Ինչպէս շուշանն է փշերի մէջ, այնպէս էլ իմ սիրելին է դուստրերի մէջ» (Երգ 2, 2):

«Երանելի է բարի կնոջ ամուսինը, եւ բազում է նրա օրերի թիւը: Բարեգործ կինն ուրախացնում է իր ամուսնուն եւ նրա տարիները լցնում խաղաղութեամբ: Բարի կինը մի բարի բաժին է, որ Տէրը տալիս է իրենից երկնչողներին. հարուստ թէ աղքատ՝ նրանց սիրտը գոհ է նրանից, եւ նրանց դէմքը միշտ ուրախ է» (Սիր. 25, 1-4):

«Կնոջ շնորհը հրճուանք է նրա ամուսնուն, եւ նրա ողջախոհութիւնը զօրացնում է նրա ոսկորները: Խոնարհ կինը Տիրոջ

պարգեւն է. անփոխարինելի է առաքինի հոգին։ Շնորհների վրայ շնորհ է ամօթխած կինը, եւ համարժէք կշիռ չկայ նրա զուսպ հոգու համար։ Տիրոջ բարձունքներում ծագող արեգակ է բարի կնոջ գեղեցկութիւնն իր տան յարդարանքի մէջ։ Ինչպէս լուսատու ճրագն է մաքուր աշտանակի վրայ, այնպէս էլ երեսի գեղեցկութիւնն է հանդարտ հասակի վրայ։ Ինչպէս ոսկեղէն սիւներն են արծաթեղէն խարիսխների վրայ, այնպէս էլ գեղեցիկ ոտքերն են խոնարհ գարշապարների վրայ» (Սիր. 16, 23)։

«Դրա համար տղամարդը պիտի թողնի հօրը եւ մօրը ու պիտի գնայ իր կնոջ յետեւից. եւ երկուսը մէկ մարմին պիտի լինեն։ Ապա ուրեմն՝ ոչ թէ երկու, այլ մէկ մարմին են։ Արդ, ինչ որ Աստուած միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. 19, 5-6)։

«Այդ օրերից յետոյ նրա կինը՝ Եղիսաբեթը, յղիացաւ։ Հինգ ամիս նա թաքցնում էր ինքն իրեն եւ ասում. «Այս ինչ բանն արեց Տէրն ինձ իմ այս օրերին, երբ նայեց ինձ վրայ՝ վերացնելով իմ նախատինքը մարդկանց միջից»։ Վեցերորդ ամսին Գաբրիէլ հրեշտակն Աստծու կողմից ուղարկուեց Գալիլիայի մի քաղաքը, որի անունը Նազարէթ էր, մի կոյսի մօտ, որ նշանուած էր Յովսէփ անունով մի մարդու հետ՝ Դաւթի տնից։ Եւ այդ կոյսի անունը Մարիամ էր։ Եւ հրեշտակը, գալով նրա մօտ, ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տէրը քեզ հետ է»։ Իսկ նա այս խօսքերի վրայ խռովուեց եւ մտքում խորհում էր, թէ ինչ բան էր այս ողջոյնը։ Եւ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետեւ Աստծուց դու շնորհ գտար։ Եւ ահա՛ դու կը յղիանաս եւ կը ծնես մի որդի ու նրա անունը Յիսուս կը դնես։ Նա մեծ կը լինի եւ Բարձրեալի որդի կը կոչուի։ Եւ Տէր Աստուած նրան կը տայ նրա հօր՝ Դաւթի աթոռը, եւ նա յաւիտեան կը թագաւորի Յակոբի տան վրայ, ու նրա թագաւորութիւնը վախճան չի ունենայ»։ Իսկ Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպէ՞ս դա կը պատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»։ Հրեշտակը պատասխանեց եւ նրան

ասաց. «Սուրբ Հոգին կը գայ քեզ վրայ, եւ Բարձրեալի զօրութիւնը հովանի կը լինի քեզ, որովհետեւ նա, ով քեզնից է ծնուելու, սուրբ է եւ Աստծու որդի կը կոչուի: Եւ ահա քո ազգական Եղիսաբեթը՝ նա եւս յղի է իր ծերութեան մէջ, եւ սա՝ յղիութեան վեցերորդ ամիսն է նրա, որ ամուլ էր կոչուած. որովհետեւ Աստծու համար անկարելի բան չկայ» (Ղուկ. 1, 24-37):

«Եւ երբ Եղիսաբեթը Մարիամի ողջոյնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, եւ Եղիսաբեթը լցուեց Սուրբ Հոգով եւ բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Օրհնեա՜լ ես դու կանանց մէջ, եւ օրհնեա՜լ է քո որովայնի պտուղը: Որտեղից ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրն ինձ մօտ գայ. որովհետեւ ահաւասիկ, երբ քո ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում: Եւ երանի՜ նրան, որ կը հաւատայ, թէ Տիրոջ կողմից իրեն ասուածները կը կատարուեն» (Ղուկ. 1, 41-45):

«Դրանից յետոյ Յիսուս շրջում էր քաղաքներում եւ գիւղերում, քարոզում էր եւ աւետարանում Աստծու արքայութիւնը: Եւ նրա հետ էին տասներկուսը եւ մի քանի կանայք, որոնք բժշկուել էին չար ոգիներից ու հիւանդութիւններից՝ Մարիամը, որ կոչւում էր Մագդաղենացի, եւ որից եօթը դեւ էր դուրս եկել, Յովհաննան՝ Հերովդէսի վերակացուի՝ Քուզայի կինը, եւ Շուշանն ու շատ ուրիշներ, որոնք իրենց ունեցուածքից մատակարարում էին նրան» (Ղուկ. 8, 1-3):

«Եւ մի հիւանդ կար, Ղազարոս անունով, Բեթանիայից՝ Մարիամի եւ նրա քոյր Մարթայի գիւղից: Սա այն Մարիամն էր, որ իւղով օծեց Տիրոջը եւ իր մազերով սրբեց նրա ոտքերը... Յիսուս սիրում էր Մարիամին, նրա քրոջը՝ Մարթային, եւ Ղազարոսին... Մարթան նրան ասաց. «Գիտեմ, որ յարութեան ժամանակ վերջին օրը յարութիւն կ'առնի»: Յիսուս նրան ասաց. «Ես իսկ եմ յարութիւնը եւ կեանքը.

ով հաւատում է ինձ, թէպէտ եւ մեռնի, կ՚ապրի. եւ ով կենդանի է ու ինձ հաւատում է, յաւիտեան չի մեռնի։ Հաւատո՞ւմ ես այս բանին»։ Նա ասաց նրան. «Այո՛, Տէ՛ր, ես հաւատում եմ, որ դո՛ւ ես Քրիստոսը՝ Աստծու Որդին, որ աշխարհ էիր գալու»» (Ղուկ. 11, 1-27)։

«Եւ Յոպպէում աշակերտ եղած մի կին կար՝ Տաբիթա անունով, որ թարգմանաբար կոչւում է Այծեմնիկ. սրա կեանքը լի էր բարի գործերով եւ ողորմութիւններով, որ նա կատարում էր։ Պատահեց, որ այն օրերին նա հիւանդացաւ ու մեռաւ. նրան լողացրին եւ դրեցին վերնատանը։ Եւ Լիւդդան Յոպպէին մօտիկ էր։ Երբ աշակերտները լսեցին, թէ Պետրոսն այնտեղ է, երկու մարդ ուղարկեցին նրա մօտ՝ աղաչելու, որ անյապաղ իրենց մօտ գայ։ Եւ Պետրոսը վեր կացաւ ու եկաւ նրանց հետ։ Երբ հասաւ, նրան վերնատուն բարձրացրին։ Ու բոլոր այրիները շրջապատեցին նրան. լալիս էին եւ ցոյց տալիս, թէ որքան հագուստներ եւ զգեստներ էր կարել տուել Այծեմնիկը իրենց համար։ Պետրոսը, բոլորին դուրս հանելով, ծնրադրեց, աղօթք արեց եւ դառնալով մարմնին՝ ասաց. «Տաբիթա՛, յանուն Տէր Յիսուս Քրիստոսի վեր կաց կանգնի՛ր»։ Եւ նա բացեց իր աչքերն ու Պետրոսին տեսնելով՝ ուղիղ նստեց» (Գործ. 9, 35-39)։

«Եւ նստած խօսում էինք հաւաքուած կանանց հետ։ Եւ Լիդիա անունով աստուածավախ մի կին, որ Թիւատիր քաղաքից էր եւ ծիրանի զգեստներ վաճառող, լսում էր. եւ նրա սիրտը Տէրն ինքն էր բացել՝ անսալու Պօղոսի խօսքերին։ Եւ երբ որ մկրտուեցին ինքը եւ իր տունը, նա աղաչեց եւ ասաց. «Եթէ ինձ Տիրոջ հաւատացող էք համարում, իմ տունը մտէ՛ք եւ օթեւանեցէ՛ք»։ Եւ ստիպելով՝ մեզ տարաւ» (Գործ. 16, 13-15)։

«Բայց գիտենք, թէ ամէն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն, որոնք եւ կանչուեցին նրա նախասահմանումով» (Հռոմ. 8, 28)։

«Հաղորդակի՛ց եղէք սուրբերի կարիքներին. հետամո՛ւտ եղէք հիւրասիրութեան» (Հռոմ. 12, 13)։

«Զգեստաւորուեցէ՛ք Տէր Յիսուս Քրիստոսով եւ մարմնին խնամք մի՛ տարէք ցանկութիւնները գոհացնելու համար» (Հռոմ. 13, 14)։

«Յանձնարարում եմ ձեզ, որպէսզի Փիբէին՝ մեր քրոջը, որը սպասաւորն է Կենքրայի եկեղեցու, Տիրոջ անունով ընդունէք նրան, ինչպէս վայել է սուրբերին, եւ հոգ տանէք նրան, ինչ կարիքների համար էլ դիմի ձեզ. քանզի ինքը եւս հոգատար եղաւ շատերին եւ ինձ էլ» (Հռոմ. 16, 1-2)։

«Ողջունեցէ՛ք Պրիսկէին եւ Ակիւղասին՝ իմ գործակիցներին ի Քրիստոս Յիսուս, որոնք իմ անձի համար վտանգեցին իրենց գլուխը, եւ որոնցից միայն ե՛ս չէ, որ շնորհակալ եմ, այլեւ՝ հեթանոսների բոլոր եկեղեցիները։ Ողջունեցէ՛ք եւ նրանց առտնին եկեղեցին։ Ողջունեցէ՛ք Եպենտոսին՝ իմ սիրելիին, որ ասիացիների պտուղն է ի Քրիստոս։ Ողջունեցէ՛ք Մարիին, որ բազում յոգնութիւններ կրեց ձեզ համար։ Ողջունեցէ՛ք Անդրոնիկոսին եւ Յունիային՝ իմ ազգականներին եւ բանտակիցներին, որոնք երեւելիներ են առաքեալների մէջ եւ որոնք ինձնից առաջ իսկ դարձան ի Քրիստոս։ Ողջունեցէ՛ք Ամպղիային՝ իմ սիրելիին ի Տէր։ Ողջունեցէ՛ք Ուրբանոսին՝ իմ գործակցին ի Տէր, եւ Ստաքէսին՝ իմ սիրելիին։ Ողջունեցէ՛ք Ապեղէսին, որ ընտրեալն է ի Տէր։ Ողջունեցէ՛ք նրանց, որ Արիստաբուղոսի ընտանիքից են։ Ողջունեցէ՛ք Հերոդիոնին՝ իմ ազգականին։ Ողջունեցէ՛ք նրանց, որ Նարկէսի ընտանիքից են ի Տէր։ Ողջունեցէ՛ք Տրիփոսին եւ Տրիփոնին՝ Տիրոջ գործի համար վաստակ ունեցողներին։ Ողջունեցէ՛ք սիրելի Պերսիդէին, որ Տիրոջ համար բազում յոգնութիւններ կրեց։ Ողջունեցէ՛ք Ռուփոսին՝ ընտրեալին ի Տէր, եւ նրա մօրը, որ իմ մայրն էլ է։ Ողջունեցէ՛ք... Ներէոսին ու նրա քրոջը եւ Ողիմպիային ու այն բոլոր սուրբերին, որ նրանց հետ են։ Ողջունեցէ՛ք միմեանց սուրբ

համբոյրով։ Քրիստոսի բոլոր եկեղեցիները ողջունում են ձեզ (Հռոմ. 16, 2-16)»։

«Փախէ՛ք պոռնկութիւնից։ Ինչ մեղք էլ որ գործի մարդ, դա իր մարմնից դուրս է. իսկ ով պոռնկանում է, իր մարմնի դէմ է մեղք գործում» (Ա. Կորն. 6, 18)։

«Թող մարդը կնոջ հանդէպ իր պարտքը կատարի, նոյն ձեւով եւ կինը՝ իր մարդու հանդէպ. որովհետեւ կինն իր մարմնի տէրը չէ, այլ՝ մարդը։ Նոյնպէս եւ՝ մարդը իր մարմնի տէրը չէ, այլ՝ կինը» (Ա. Կորն. 7, 3-4)։

«Ուզում եմ, որ դուք իմանաք, թէ ամէն մարդու գլուխը Քրիստոսն է, կնոջ գլուխը՝ մարդը, եւ Քրիստոսի գլուխը՝ Աստուած» (Ա. Կորն. 11, 3)։

«Ամէն կին, երբ աղօթքի կանգնի կամ մարգարէանայ գլխաբաց, անպատուում է իր գլուխը, որովհետեւ այնպէս է համարւում, թէ իբր գլուխն ածիլուած լինի. քանզի, եթէ կինը քօղով չի ծածկւում, թող կտրի իր մազերը։ Իսկ եթէ ամօթ է կնոջ համար մազը կտրել կամ ածիլել, թող քօղով ծածկուի» (Ա. Կորն. 11, 5-6)։

«Կինը ի՛ր մարդու փառքն է. որովհետեւ ոչ թէ մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց. քանզի մարդը չստեղծուեց կնոջ համար, այլ կինը՝ մարդու համար» (Ա. Կորն. 11, 7-9)։

«Կինը պարտաւոր է քող դնել գլխին հրեշտակների պատճառով... եւ դուք ինքնե՛րդ դատեցէք. վայե՞լ է կին արարածին գլխաբաց աղօթքի կանգնել Աստծու առաջ... Բայց կինը, եթէ երկար մազերով է, դա պատիւ իրեն» (Ա. Կորն. 11, 10. 13. 15)։

«Իսկ եթէ ուզենան մի բան սովորել, տանը թող իրենց մարդկանց հարցնեն. քանզի կին արարածի համար անպատեհ է խօսել եկեղեցում» (Ա. Կորն. 14, 35)։

«Ոչ թէ մենք մեզ ենք քարոզում, այլ՝ Յիսուս Քրիստոսին՝ Տիրոջը, իսկ մեզ՝ որպէս ծառաներ ձեզ՝ Քրիստոսի համար» (Բ. Կորն. 4, 5)։

«Քրիստոսի հետ խաչը ելայ. կենդանի եմ այսուհետեւ. բայց ոչ թէ ես, այլ իմ մէջ ապրում է Քրիստոս։ Իսկ հիմա որ կենդանի եմ մարմնով, Աստծու Որդու հաւատո՛վ եմ ապրում, որ սիրեց ինձ եւ իրեն մահուան մատնեց ինձ համար» (Գաղ. 2, 20)։

«Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու. եւ ինքն է Փրկիչն այդ մարմնի։ Եւ ինչպէս եկեղեցին հնազանդւում է Քրիստոսին, նոյնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց մարդկանց ամէն ինչում» (Եփես. 5, 22-24)։

«Բայց ասում եմ ձեզ. Հոգո՛վ ընթացէք եւ մարմնի ցանկութիւնը մի՛ կատարէք» (Գաղ. 5, 16)։

«Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը, որովհետեւ մարդն է գլուխը կնոջ, ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցու... Մարդի՛կ, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար...» (Եփես. 5, 22-23, 25)։

«Դուք էլ նոյնպէս ամէն մէկդ նո՛յնն արէք, որպէսզի իւրաքանչիւր ոք իր կնոջն այնպէս սիրի, ինչպէս իր անձը, եւ կինը երկնչի իր մարդուց» (Եփես. 5, 33)։

«Վստահ եմ այն բանում, թէ ով որ ձեր մէջ սկսեց բարի գործերը, աւարտին կը հասցնի մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1, 6)։

«Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ առատութեան մէջ լինել։ Ամէն ինչում, բոլոր պայմանների տակ, սովորել եմ թէ՛ կուշտ լինել, թէ՛ քաղցած մնալ, թէ՛ առատութեան մէջ լինել, թէ՛ զրկանք կրել» (Փիլիպ. 4, 12)։

«Կանա՛յք, հնազանդ եղէք ձեր մարդկանց, ինչպէս որ վայել է ի Տէր» (Կող. 3, 18)։

«Արդ, ամէնից առաջ աղաչում եմ աղօթք անել, խնդրել, պաղատել, գոհութիւն մատուցել բոլոր մարդկանց համար, մանաւանդ թագաւորների եւ բոլոր իշխանաւորների համար, որպէսզի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարենք մեր կեանքը, կատարեալ աստուածապաշտութեամբ եւ սրբութեամբ» (Ա. Տիմ 2, 1-2)։

«Պառաւ կանայք նոյնպէս լինեն զգաստ եւ սուրբերին վայել վարմունք ունենան. ոչ բանսարկու, ոչ գինեմոլ, այլ՝ բարեխրատ, որ խրատեն դեռատի կանանց՝ սիրելու իրենց մարդկանց, լինելու որդեսէր, խոհեմ, մաքրակենցաղ, տնարար, բարեգործ, հնազանդ իրենց մարդկանց, որպէսզի Աստծու խօսքը եւ վարդապետութիւնը չանարգուի» (Ա. Տիտ. 2, 3-5)։

«Նոյնպէս եւ կանայք համեստ զարդարանքով, ակնածութեամբ եւ պարկեշտութեամբ թող զարդարուեն... բարի գործերով, ինչպէս վայել է աստուածապաշտութիւնը յանձն առած կանանց։ Կին արարածը թող ուսանի լռութեամբ, կատարեալ հնազանդութեամբ» (Ա. Տիմ. 2, 9-11)։

«Եւ ես թոյլ չեմ տալիս, որ կին արարածն ուսուցանի կամ էլ խօսքով իշխի տղամարդու վրայ, այլ թող լուռ մնայ. որովհետեւ նախ Ադամն ստեղծուեց եւ ապա՝ Եւան: Եւ Ադամը չխաբուեց, այլ կինը խաբուեց եւ յանցանք գործեց: Բայց նա պիտի ապրի որդեծնութեան համար, եթէ պարկեշտութեամբ մնայ հաւատի, սիրոյ եւ սրբութեան մէջ» (Ա. Տիմ. 2, 12-15):

«Մի մեծ տան մէջ ոչ միայն ոսկեայ եւ արծաթեայ անօթներ են լինում, այլ նաեւ՝ փայտեայ եւ խեցէ: Կան այնպիսիք, որոնք պատուաւոր գործածութեան համար են, կան էլ, որ ոչ պատուաւոր գործածութեան համար են: Եթէ մէկն ինքն իրեն մաքրի այդպիսի բաներից, կը լինի պատուաւոր անօթ՝ սրբագործուած եւ պիտանի իր Տիրոջը՝ պատրաստուած ամէն բարի գործի համար» (Բ. Տիմ. 2, 20-21):

«Այրիների թւում կը համարուի այն այրին, որ ...բարի գործերով է վկայուել, որ երեխաներ է մեծացրել, որ հիւրեր է ընդունել, որ սուրբերի ոտքերն է լուացել, որ նեղութեան մէջ գտնուողներին է հասել, որ ամէն բարի գործի հետամուտ է եղել» (Ա. Տիմ 5, 10):

«Բայց դու հաստա՛տ մնա այն բանի մէջ, որ սովորեցիր եւ որին հաւատարիմ եղար. գիտես, թէ ումից ես սովորել, որովհետեւ մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել քեզ փրկութեան համար այն հաւատի միջոցով, որ Քրիստոս Յիսուսի մէջ է: Աստծու շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը եւ պատրաստ՝բոլոր բարի գործերի համար» (Բ. Տիմ. 3, 14-17):

«Ուրեմն, դէ՛ն գցելով ամէն չարութիւն, ամէն նենգութիւն, կեղծաւորութիւններ, նախանձ եւ ամէն չարախօսութիւն, որպէս

նորածին երեխաներ, մի՛շտ փափագող եղէք բանական եւ անխարդախ կաթին, որպէսզի նրա միջոցով աճէք փրկութեան համար, քանի որ արդէն ճաշակել էք, որ քաղցր է Տէրը: Մօտեցէ՛ք նրան՝ կենդանի Վէմին, որը, թէպէտ մարդկանցից անարգուած, բայց Աստծու առաջ ընտրեալ եւ թանկագին է: Եւ դուք, իբրեւ կենդանի վէմեր, կառուցւում էք որպէս հոգեւոր տաճար, որպէս անարատ քահանայութիւն, որպէսզի Յիսուս Քրիստոսի միջոցով մատուցէք հոգեւոր պատարագներ, որոնք հաճելի լինեն Աստծուն» (Ա. Պետր. 2, 1-2):

«Ամուր պահենք անխախտ յոյսի դաւանութիւնը, քանի որ հաւատարիմ է նա, ով խոստացաւ» (Եբր. 10, 21):

«Լսեցէ՛ք ձեր առաջնորդներին եւ հնազանդուեցէ՛ք նրանց, որովհետեւ նրանք հսկում են ձեր հոգիների համար, քանի որ հաշիւ են տալու ձեր փոխարէն. եւ նրանք ուրախութեամբ թող անեն այդ բանը եւ ո՛չ հոգոց հանելով, քանի որ այն ձեր օգտի համար չէ» (Եբր. 13, 17):

«Այսպէս էլ դուք, կանա՛յք, հնազանդ եղէք ձեր մարդկանց, որպէսզի, եթէ նրանցից ոմանք չհնազանդուեն Խօսքին, իրենց կանանց ընթացքի շնորհիւ եւ առանց խօսքի իսկ շահուած լինեն» (Ա. Պետր. 3, 1):

«Թող ձեր արտաքինը զարդարուած չլինի հիւսքերով, ոսկեհուռ վարսակալներով կամ պճնագեղ զգեստներով, այլ սրտի ներսի՛ մարդը՝ հեզ եւ հանդարտ հոգու անեղծութեամբ, ինչ որ շատ աւելի արժէք է ներկայացնում Աստծու առաջ» (Ա. Պետր. 3, 3-4):

«Մի ժամանակ այսպէ՛ս էին իրենք իրենց զարդարում Աստծու վրայ յոյս դրած կանայք, որոնք հնազանդւում էին իրենց մարդկանց:

Այդպէս էր Սառան, որը հնազանդ էր Աբրահամին եւ նրան իր տէրն էր կոչում. եւ դուք նրա զաւակները եղաք. նրանք բարեգործ էին եւ չէին սարսափում եւ ո՛չ մի բանից» (Ա. Պետր. 3, 5-6):

«Քանի որ Քրիստոս մարմնով չարչարուեց մեզ համար, դուք եւս զինուեցէ՛ք նոյն մտքով. որովհետեւ ով մարմնով չարչարւում է, դադարում է մեղանչելուց, որպէսզի մարմնի մէջ մնացած ժամանակ այլեւս ոչ թէ ըստ մարդկային ցանկութիւնների, այլ ըստ Աստծու կամքի ապրի» (Ա. Պետր. 4, 1-2):



Ո՛վ աստուածասէր քրիստոնեայ, երբ կարդաս այս գիրքը,
քո աղօթքներում յիշի՛ր այս գիրքը պատրաստողներին
ու նրանց ննջեցեալների հոգիների համար
հանգստութիւն խնդրի՛ր։

Հեղինակի հրատարակած այլ գրքեր

Աստուածաշունչին մէջ ո՞ւր է գրուած,
Ս. Էջմիածին, 2011 (Արեւմտահայերէն):

Մխիթարութիւն սգաւորներուն եւ յուսադրութիւն վշտահարներուն,
Ս. Էջմիածին, 2011 (Արեւմտահայերէն):

«Հայր Մեր»-ի մեկնաբանութիւնն ըստ Ս. Գրիգոր Տաթեւացու,
Ս. Էջմիածին, 2012, (Գրաբար, Արեւմտահայերէն եւ Անգլերէն):

Քրիստոնէական քննական տեսութիւն դիակիզման մերժումի մասին
Ս. Էջմիածին, 2013 (Արեւմտահայերէն):

St. John Chrysostom, “How To Forgive the Offense?”,
Ս. Էջմիածին, 2014 (Անգլերէն):

Свт. Иоанн Златоуст, Избранные беседы, “Как простить обиду?”,
Ս. Էջմիածին, 2014, (Ռուսերէն):

Աստուածաշնչի մէջ որտեղ է գրուած,
Ս. Էջմիածին, 2015 (Արեւելահայերէն):

Մխիթարութիւն սգաւորներին եւ յուսադրութիւն վշտահարներին,
Ս. Էջմիածին, 2015 (Արեւելահայերէն):

Քրիստոնէական քննական տեսութիւն դիակիզման մերժման մասին
Ս. Էջմիածին, 2016 (Արեւելահայերէն):

Հեղինակի էլ. փոստի հասցէն՝ gevork.sarkavag@gmail.com

ԿԻՆԸ ՆՈՐ ՈՒԽՏԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

Խմբագրեց եւ սրբագրեց՝ Ե. Խաչատրեանը
Էջադրումը, շարուածքն ու շապիկը՝ Գ. սրկ. Գէորգեանի

Տպաքանակը՝ 400
Չափսը՝ 60x84 1/16

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2017

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարան